Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ԱԼԻՇԱՆ

ՀԱՅԱՊԱՏՈՒՄ

Կ. Հ.

1783

9(47.925)
Ա-31

Վենետիկ

1901

2004

ՀԱՅԱՊԱՏՈՒՄ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՀԱՏՈՐ Ա·



12012

(10)

ՅԻՇԱՏԱԿ ՀԱՐԵԼԻՆԻ
ԵՐԿՀԱՐԻՒՐԱՄԵՂԱՑ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄՐԱՆՈՒԹԵԱՆ
8 ՍԵՊՏ. 1701–1901 ՍԵՊՏ. 8

5587 հատ

Գիտական գրադարան
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
Ա. ԱԲԱՍԵԼԻԱՆԻ ԱՆՎԱՆ

1093-69

9(47.925)
Հ-31

ՀԱՅԱՊԱՏՈՒՄ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՅՕՐԻՆԵԱՑ

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. Մ. ԱԼԻՇԱՆ

ՀԱՏՈՐ Ա.



ՎԵՆԵՏԻԿ – Ի ՎԱՆՍ Ս. ՂԱԶԱՐՈՒ

1901



ՀԱՅԱՊԱՏՈՒՄ

Ա.

ԾԱԳՈՒՄՆ ՀԱՅՈՑ, ՅՈՐԴՈՒՈՑ ՅԱՒԵԹԻ

(ՅՈՎՀԱՆՆԷՍ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ)

ԵՏ երկնասահանաց հղեղաց և անդընդապատոյտ չրահղձն լինելոյ բոլոր չնչականաց, և յետ ակամայ[1] կամաւ նաւարկութեանն Նոյի՝ և ի ցամաք ելանելոյ ի Հայս[2] ըստ հրամանի Տեառն, որդւովք և կանանմբք հանդերձ, և այլով եւս ընդ նոսին անբան կենդանեօք. ակիզբն ապա դարձեալ առնաւ աստուածային այցելութեամբն՝ աճելութիւն ծննդոց երկրի։ Եւ ի մերոյն

1. Ակամայ կամաւ ըսելն իմանալու է՝ հարկաւ, ամպրուելով պէտք եր որ ելնէ։

2. Հնագոյն ազգային աւանդութիւն է տապանին կենալն ի Լերինս Հայոց, որոյ վկայեն Ս. Գիրք, եթէ Աբրահամայ անուամբ իմանանք նոյն լեռները։

Յաբեթէ՝ նախ ծնանի որդի և անուանի Գամիր[1], ուստի ի նորուն անուն աշխարհ կալուածոց նորա կոչեցաւ Գամիրք։ Ձկնի ծնանի զՄագոգ, և սերունդք Մագոգայ՝ կեղտոք և Գաղատացիք[2]։ Եւ ապա զՄադա, որ զաշխարհ տոհմի իւրոյ յիւր անուն Մարս անուանեաց[3]. և ապա զԹորեղ, յորմէ Թետալք[4] ազգն անուանիւր. և զՄոսոք, որ պայազատէր ըզԼիբիկիա[5]։ Իսկ վեցերորդ՝ զԹիբրաս՝ յորմէ մերն իսկ Աւքաւազ, և զԹորգոմ[6]. որ զմիապետեալն իւր զաշխարհ՝ յիւր անուն յորջորջէր Թրակացիս. և զԲիտիխիմ՝ որ զՄակեդոնացիս նուաճէր ընդ ինքեամբ։ Իսկ որդիք Թիբրասայ՝ Աւքաւազ, յորմէ Սարմատք, և Բիփատ յորմէ Սաւրոմատք, և Թորգոմ, որ ըստ Եբեմիայ զԱշքանազեանս գունդ յիւր անուն նուաճէր, Տոհմ Թորգոմայ. զի նախ Աշքա-

1. Անդրանիկն Յաբեթի կոչուի ի Ս. Գիրս Գամիր կամ Գաւեր, և ըստ Հայոց Գռներ. Գոմերի անուամբ կոչուած երկիրն Գամիրք՝ ըստ Յունաց և այլոց, յետոյ կոչեցաւ Կապպադովկիա։ Ըստ ոմանց՝ ասոր սերունդք են և Կիմմերեանքն Յունաց, Սեւ ծովու աբեւելեան հիւսիսային կողմերու բնակիչք, և այլ հեռու։ — Յաբեթի ուրիշ որդւոց և թոռանց ցեղաբանութիւնն մեր ազգին չվերաբերելով՝ չեմք քններ այս տեղ։

2. Անոնք ըստ Լատինաց Celti և Galli.

3. Հայոց Մարք կոչածը՝ արեւմտեայք Medi կ՚անուանեն. բայց երկու անուանքն համաձայն չեն։

4. Կամ Թեսաղացիք. երկու կերպով այլ կոչեն Յոյնք, որոց երկրին մանաւանդ է, Θεσσαλία, Θετταλία.

5. Ιλλυρία, Illyria. Խոռւաթիայ և Սերպիոյ կողմերն։

6. Ըստ մեր Ս. Գրոց՝ Թորգամ որդի է Գոմերայ, և ըստ մերոց պատմչաց՝ թոռն է Գոմերայ և որդի Թիբրասայ՝ որդւոյ Գոմիրայ կամ Գոմերի. սորա անդրանիկն էր Աշքանազ, զոր նոյնպէս Հայոց նախահաւ համարին մեր նախնիք, և Աշքանազեան երկիր և ազգ կոչեն զիրենք. իսկ օտարք՝ այն անուամբ ճանչնան Սեւ ծովու և Հայաստանի միջոց բնակիչքը, և աւելի հիւսիս–արեւելեանքը։

նագ իսկ էր յիւր անուն սահմանեալ զմերազնեայս, ըստ երիցութեան սակի։

Եւ վասն զի զԹրակացիս՝ ինքեան անձին աւանձին Թիրաս պայազատէր, պարտ վարկաւ զի զայլ եւս վիճակեալն իւր սահմանս՝ յերիս հատուածս բաժանեալ՝ տացէ ի կալուածս որդւոց իւրոց։ Ուստի ապա իմաստն զգործն կատարէր. և Աշքանազեայ՝ որ նախ զմերազնեայսն[1] յիւր անուն Աշքանազեան անուանեաց, զԱւրոմատս նմա պայազատէր. իսկ Բիփատայ՝ զՍորոմատս[2]. իսկ Թորգոմայ՝ զմերազնեայս սեպհականեալ, յորում տիրեալ՝ զԱշքանազեանն նախ անուանեալ՝ յիւր անուն նուաճէր Տոհմ Թորգոմայ։

Արդ, այսպէս իմ Աշքանազեան զմեզ և Տուն Թորգոմայ. և այսպէս քեզ հաւատարմացին որ վասն նահապետութեան ազգիս մերոյ է բան. թէպէտ և ոմանք այլազգաբար, և ոմանք այլաբանաբար զրուցացն վէպս տան։ Իսկ եթէ աստուածայինն Մովսէս՝ զմերոց աստի զմիոյ միոյ ոչ վերագրէ գործմանակս, անարժանս իմն համարեալ բանի պատմութեան, սակայն ընդ ազգաբանութեանն Եհմայ զմերն Յաբեթի կշռադատեալ, գտանին մինչեւ ցԹորգոմ և ցսկիզբն պայազատութեան որդւոյ նորա Հայկայ՝ ամք չորեք հարիւր. իսկ Յաբեթէ մինչեւ ի նահանի մարդն Ադամ՝ ամք ՍՄԽԲ[3] (2242)։ Արդ, որպէս վերագոյն ճառեցաւ, աստուածայինն գիրք մինչեւ ցմերն Թորգոմ մեզ բացատրեալ ըզ-

1. Ո՞վ էին վերագնեայքն՝ յառաջ քան զՀայկն. ընելու էր, թէ՝ Աշքանազ նախ քնարհած ըստ այդ յետոյ Հայկայ անուամբ կոչուած երկրում, և իր որդիքն իր անուամբ Աշքանազեանք կոչած։

2. Հեղինակս վանապատնէ երկու ցեղ, Սորմատ և Սաւրոմատ, բայց չատ ընդունելի չէ, թէ և այլեւայլ հիւղեր բաժնուած են այդ ցեղէն։

3. Այս թուականն իմանալու է Ադամայ մինչեւ ի ջրհեղեղն։

պատմութիւնս, անարժան վարկաւ զյիշատակ ծնընդոց նորա՝ բանիւ տարօրինել, թէ որով կամ ուսմբ, կամ զիտրդ, կամ ոչ՛ք սմանք տիրեցին աշխարհիս Հայոց, կամ ուստի Նախարարութիւնք սորա միապետեցան։

Բ

ՋՐՈՒԱՆ ԵՒ ՏԻՏԱՆ

(Մ. ԽՈՐԵՆ. Ա. Զ. ԸՍՏ ՍԻԲԻԼԱՑ)

Յառաջ քան զբուրգն[1] և զբազմաբարբառն լինելոյ ձայնի ազգի մարդկան, և զկնի նաւարկութեանն Քսխուրթրեայ[2] ի Հայս, Զրուանն և Տիտանն և Յապետոսբէ[3] լինէին իշխանք երկրի. որ ինձ թուին Սեմ, Քամ և Յաբեթ։

Եւ ի բաժանել սոցա զամենայն տիեզերս ընդ իւրեանց իշխանութեամբ, հարստացեալ[4] տիրէ ի վերայ երկոցունցն եւս Զրուանն։ Զոր՝ աստ ուրեմն, Զրադաշտ մոգ արքայ Բակտրիացւոց, որ է Մեդաց[5], սկիզբն և հայր աստուածոցն ասաց լինել. և բազում այլ ինչ զնմանէ առասպելեաց, զոր անտեղի է մեզ այժմ երկրորդել։

Արդ, ի բանանալն, ասէ, Զրուանայ, ընդդիմացան նմա Տիտանն և Յապետոսբէ, ի մարտ պատերազմի ընդ նմա զրգռելով. վասնզի թագաւորեցուցանել զորդիս իւր ի վերայ ամենեցուն խորհէր։ Եւ յայսպիսում խառն՝[1] յափշտակեաց, ասէ, Տիտանն զմասն ինչ ի ժառանգութեան սահմանացն Զրուանայ։ Աստ ի մէջ անցեալ քոյր նոցա Ադղիկ[2], համոզեալ դադարեցուցանէ զաղմուկն. և յանձն առնուն թագաւորել Զրուանայ. բայց դաշինս ուխտից և երդմանց ի միջի հաստատեն, սպասնանել զամենայն արու՝ որ ծնանիցի Զրուանայ, զի մի ազգաւ ի վերայ նոցա թագաւորեսցէ[3]. ուստի, և արս հզօրս ի Տիտանացն ի վերայ ծնընդոց կանանց նորա կարգէին։ Եւ սպանեալ զերկուս սմանս՝ վասն երդման ուխտին հաստատուն կալոյ, խորհի այնուհետեւ քոյրն նոցա Ադղիկ՝ հանգերձ կանամբք Զրուանայ, հաւանեցուցանել զոմանս ի Տիտանացն՝ ապրեցուցանել զայլ մանկունս, և յարեւմուտս կոյս յուղարկել, ի լեառն՝ որ անուանեալ կարդային Դիւցընկից[4], իսկ այժմ կոչի Ոլիմպոս։

---

1. Աշտարակն Բաբելոնի. պոռձ, ըստ Աբաբայ։
2. Այսպէս անուանած են Բաբելացիք զՆոյ։
3. Ըստ առասպելից Յունաց՝ այդ երիքն այլ որդիք էին Ուրանոսի (երկնից) և Կեայ (երկրի). սմանք զՏիտան իբրեւ նախահայր մարդկան համարին, գոնէ հնագոյն ցեղից կ'ըսեն զՏիտանեանս։ Ըստ նոցա՝ Զրուանն է Ոսնոս կամ Ջեւս Յունաց, ըստ մեզ Աստղ։ Երրորդ անուան վերջի մասնիկն քէ, սեռականիւ կապած է, և է յուշարկեն զե, որ՝ եւ նշանակէ. այսինքն Զրուան, Տիտան եւ Յապետոս (Ιαπετος). սորա կինն կոչուէր Ասիա։
4. Նշանակէ զօրացեալ, բռնացեալ։
5. Մեդք են Մարք ըսինք, սահմանակիցք Հայոց։

Բակտրիա շատ աւելի հեռու է, Կասպից ծովու հիւսիս-արեւելեան կողմը։

1. Այս հակառակութեան և չիմութեանց սահն։
2. Ըստ վերոյիշեալ առասպելից Յունաց՝ այդ երից դիւցազանց քոյրն կոչուէր Ռէա կամ Հռիա. զոր Հայք այս տեղ իրենց Աստղիկն զուգեր են։
3. Զըլլայ որ ցեղով, այսինքն որդիէ որդի թագաւորին Զրուանի զաւակքն։
4. Իբր թէ Զրուանայ դիւցազն զաւակներն այն լերան վրայ ընկենլով (ձգուելով) Դիւցընկից կոչեցաւ լեառն։

Գ.

ՀՍԿԱՅՔՆ ԵՒ ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹԻՒՆ

(ԽՈՐԵՆ. Ա. Բ. ԸՍՏ ՄԱՐ–ԻՒԱՍԱՑ)

Ահեղք և երեւելիք առաջինքն ի դիցն, և աշխարհի մեծամեծ բարեաց պատճառք, որ և սկիզբն աշխարհի և բազմամարդութեան: Եւ ի սոցանէ հատեալ գտան ազգ սկայիցն, անհեղեղք, յաղթանդամք մարմնով և վիթխարիք. որք յղացեալ ամբարտաւանութեամբ ծնան զամբարիշտ խորհուրդ աշտարակաշինութեանն, և ի նոյն լինէին ի գործ անկեալք: Ցոր՝ հողմն ահագին իմն և աստուածային՝ չնչեցեալ ի դիցն ցասմանէ, ցրէ զամբարտակն. և մարդկանն անկուր բարբառս իւրաքանչիւր ումեք բաշխեալ, աղմուկ չիմացի ի մէջ արկանէին: Ցոյց մի էր և յապեռոսթեանն[1] Հայկ, անուանի և քաջ նախարարն, կորովաձիգ և հաստատուղղն:

Դ.

ՆՈՅՆ ԲԱՆ

ԸՍՏ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ[2] (ԳԼ. ՀԴ)

Արդ, ի ժամանակսն յայնոսիկ յառաջինն՝ յետ ջրհեղեղին, իբրեւ բազմացան մարդիկ ի վերայ երկրի, վայելէին ի պարարտութեան խնամոցն Աս-

1. Ինչպէս վերեւ յիշեցինք՝ աւելորդ է թ տառն յանուան Յաբեթի:

2. Ս. Լուսաւորչի վարդապետութենէն է առ նոր. հայս:

տուծոյ. և ճարպոյ եկեալ զակամբ՝[1] յայլայլութիւն մտաբերէին, անգիտացեալք յիմարեցան: Եկեալ ի մի վայր, խորհուրդ առեալ՝ անոտնմաց խորհուրդ, չինել ի պաշտօն մեհենից՝ աշտարակ իմն բարձր անհնարին. կոթողեցին ի դաշտն Սենեաար՝ յերկրին Աւորեստանեայց: Արդ, չինել չինէին ի պաշտօն գիւաց, անձանց անուն Մեհենաչէն կապել[2], առ իւրեանց որդիս թողուլ. պարծեցեալ հպարտացեալ՝ զանձինս ի գործ կացուցեալ կաւագործութեանն, վաստակասէր անօրէնութեանն. աշխատէին իրրու պարշաւ խերշեւտանաց[3] չարութեան զաւակաց ազգացն, զկնի իւրեանց եկելոցն թողուլ խնդրէին, այն անմիտ ազգն առաջին:

Տէր Աստուած նայեցեալ ի նոցա պակասութիւնն[4], խառնեաց արբոյց նոցա զխառնակութիւն լեզուացն բաժանման. անդէն ի նմին տեղւոջ զնոսա ընդ միմեանս խառնակեաց. ուստի և նոյն տեղին խառնակութեան՝ դիաբէլ անուն ժառանգեաց: Եւ նոքա ցրուեալք ի միմեանց՝ մեկնեցան. չլուեալ այնուհետեւ այր ընկերի բարբառոյ, այսպէս քակեալք ի միմեանց անջատեցան. և լքումն (եղեւ) գործոյն՝ զոր առաջի արկեալ միմեամբք տանէին: Եւ արբեալք[5] իւրաքանչիւր լեզու՝ ուսեալք յամենահաստիչ

1. Աչուքնին զարձած, ինչպէս կ'ըսուի առակօրէն, խելագարած:

2. Իմաստն է. Աշտարակին չինողքն զայն իբրեւ չաստուածոյ տուն կամ տաճար կ'ուզէին կանգնել, և իրենց որդւոց յիշատակ թողուլ, պարծելով՝ Մեհենաչէն (դից տաճար չինող) կոչուելու:

3. Թուի ըսել, չինէին անպիտան (խելքերանք) բաներու պաշար (համբար) մի թողուլ իրենց ապագայ զաւակաց: Բայց, թերեւս Պարշար՝ եթէ սխալ գրուած չէ, նշանակէ այն իմաստով՝ զոր Սարգիս Շնորհալին (ի Մեկնութեան Ա. Թղթ. Յովհ.) գրէ. «Պարշաման և խռովութեան իրք»:

4. Ըսելի է պակասաւտութիւնն:

5. Թուի սխալ գրուած բառ մի, կամ պակաս:

արարչէն, խառնակեալք և ցրուեալք բաժանեցան ի միմեանց։

Եւ հուր աշագին հոգմախառն՝ չոգի Հոգւոյն Աստուծոյ, որ սովոր է զմարդիկ յուղղութեան ճանապարհն հաստատել, և ի զուբաւաստակ[1] ճանապարհացն խափանել, ուղղել յարդարութիւն և հաստատել զամենեսեան, այն հուր անկեալ ի վերուստ՝ կործեալ զաշտարակն՝ վերուստ ի վայր փլուզեալ հոսեաց, տապաստ դաշտացն ցան և ցիր կացուցանէր։ Աւդ, իբրեւ այս նոցա նորացոյց համբարշտութեանցն խափան լինէր, ցրուեալք ընդ վիճակս իւրաքանչիւր՝ ըստ կամացն Աստուծոյ՝ ի վերայ երկրի սփռեցան. եւթանասունն և երկու նահապետք լեզուաց[2] կացեալ, բաժանեցան ընդ երկիրս, հաստատեալք յիւրաքանչիւր սահմանս։

Աւդ, փոխանակ բարձրաբերձ և վաղաւեր աշտարակին՝ խաչն ճշմարտութեան կանգնեցաւ. որոյ զօրութիւնն մշանջենական է, և փառքն նորա՝ Աստուած. որպէս և ասէ գիտողն[3]. «Ի քեզ՝ Տէր յայտնեցայ, և փառք նորա զքեզ ծածկեացեն. զբնաւացն թագաւորք ի լոյս քո, և հեթանոսք ի ծագել լուսոյ քո»։

1. Փուճ, պարապ տեղ աշխատանք. սովորաբար զրուէլ զրաւաստակ։

2. Նոյի որդւոց և թոռանց անուանքը համբերով. ոտմկաց մէջ այլ յաճախ յիշուի այս թիւս։

3. Թերեւս Դիտողն գրելու էր. ըսաղն է Եսայի մարգարէն։

Ե

ԹՈՐԳՈՄ ԵՒ ՈՒԹ ՈՐԴԻՔ ԻՒՐ

(ՋՈՒԱՆՇԻՐ, ՎՐԱՑ ՊԱՏՄԻՉ)

Յիշատակ արասցուք այժմ, զի Հայոց և Վրաց և Ոանաց և Մովկանաց և Հերանաց և Լեկաց և Կովկասեաց և Եգերաց, հայր՝ մի էր սոցա[1], Թորգոմ կոչեցեալ, որդի Թիրասայ, որդւոյ Գամիրայ, որդւոյ Յաբեթի, որդւոյ Նոյի։ Եւ էր նա այր քաջ և հսկայ։ (Սա) յայտ կործանման աշտարակին և բաժանման լեզուացն, և ի սփռելն մարդկան ի վերայ երկրի, եկն բնակեցաւ ի մէջ լերանց Մասեաց և Աւրագածու. որոյ էին բազում կանայք. և ծնան նմա ուստերք և դստերք, և որդւոց և դստերաց նորա. և եկայ ամս վեց հարիւր. և չբաւէր երկիրն բազմութեանն ազգի[2] նորա։ Վասն որոյ տարածեցան և ընդարձակեցին զահմանս իւրեանց ի ծովէն Պոնտոսու մինչեւ ի ծովն Հերեթայ[3] և Կասպից, և առ լերամբքն Կովկասու։ Եւ ընտրեցան յորդւոց նորա արք ութ արիագոյնք և անուանիք Աւ. Հայկն. Բն. Քարթլոս. Գն. Բարգոս. Դն. Մովկան. Են. Լեկան. Զն. Հերոս. Էն. Կովկաս. Ըն. Եգրէս։

1. Ըստ աւանդութեան Վրաց՝ քան Հայոց, ութ որդիք էին Թորգոմայ, յորոց առաջինն էր Հայկն, որոյ բնակած երկրին հիւսիսակողմն՝ կամարաձեւ պատեցին սփռեցան եղբարքն, և անոնց անուամբ կոչեցան այդ յիշած երկիրներն. միայն առաջինն՝ յեա Հայկայ՝ որոյ երկիրն Վրաստան կոչեմք և ազգը Վիրք, իրենք Քարթլոս և Քարթուլի անուանեն։

2. Սատցուածքն, Հանդերձ անասնօք։

3. Հերեթայ ծովն այլ նոյն Կասպից կամ Վրկանաց ծովն է, իբր Հերոսի անուամբ կոչուած։ Գուցէ Պարսկահայոց Հէր գաւառն այլ անոր անունէն ըլլայ։

Եւ Հայկն առաւել էր ուժով և քաջութեամբ, որ չեղեւ նման նմա ի վերայ երկրի, ոչ յառաջ քան զնորհեղեն և ոչ յետոյ, մինչեւ ցայսօր ժամանակի: Սոցա բաժանեաց Թորգոմ զաշխարհն իւր, եւ զկէսն Հայկին և զկէսն եւթանց որդւոցն, ըստ արժելոյ նոցա. զծմակային[1] աշխարհ հիւսիսոյ եւ Քարթլոսոյ, յարեւելից Բերդահողոյ[2] գետոյն, և յարեւմտից Պոնտոսի ծովն, և ի ծմակային կուսէ առ լերամն Կովկասու, առ Կլարջովք և Տայովք[3] մինչեւ ցԼեխս: Եւ Բարդոսոյ եւ ի նոյն գետոյն Բերդահողոյ առ կողմամբն Կուր գետոյ՝ մինչեւ ցծովն, ուր մտանեն ի նա Երասխ և Կուր գետ՝ միաւորեալք: Սա նախ չինեաց զքաղաքն Պարսաւ[4] անուամբն իւրով: Իսկ Մովկանայ եւ ի Կուր գետոյ առ կողմամբն հիւսիսոյ՝ գլխովն Ալազանոյ[5] մինչեւ ցծովն մեծ[6]. և նա չինեաց ըզՄովկանէթ քաղաք: Եւ եւս Հերոսոյ ի գլխոյն Ալազանոյ մինչեւ ցլիճն Մայրոյ, որ այժմ կոչի Գաղգաղա[7]. և նա չինեաց քաղաք ի խառնուրդս երկուց գետոց, և յանուն իւր անուանեաց Հերեր. և անուն տեղւոյն այժմ ասի Թորաւնիթա: Իսկ Եգրոսոյ եւ յականջս[8] ծովուն առ Լեխաք մինչեւ

1. Այս բառին արմատն թուի ծուռ, և նշանակէ չուք և խառնուածեղ, ուսկից և հիւսիսային: Բժշկարանք յիշեն «Ծռմռալ և կռմռել արեան»:

2. Կամենիս և Տփղիսոյ գետոյն միջոց գետակ մի:

3. Կղարջեթի՝ Գղարջեթի ըստ Վրաց, Հայոց Գուգարք նահանգին մէկ գաւառն համարուէր: Տայք՝ ամբողջ Հայոց նահանգ կամ աշխարհ մի էր, որոյ հիմայ անունը պահէ Թաւռուսիական գաւառն կամ վիճակն, մօտ յՕլթի (Ուլթաթ), Նարիման, և այլն:

4. Պարսաւ հիմայ այլ կոչուի Պերտէ, և առեւնօք մայրաքաղաք էր Աղուանից:

5. Ալազան յետ Կուր գետոյ՝ անոր օժանդակ մեծ գետն է ի վրաստան:

6. Մեծ ծով՝ Կասպիցն երեւի այս տեղ:

7. Ըստ Վրաց՝ Թբէ–Թպա և Կուլիուլա:

8. Այսինքն ուսկից որ ծովն անկիւն մի ձեւացընէ, Լիխ լերանց մօտ:

ցծովն արեւմտից, առ գետովն Թազարէթոյ[1] ցՈւրանօր կցի ծովն՝ Կովկասու: Սա չինեաց անուամբ իւրով քաղաք զԵգրիս, որ և այժմ ասի Բեդիա: Իսկ լեառն Կովկասոյ՝ մինչեւ ցգետն մեծ Ղուռմէկ՝[2] էր անմարդաձայն. եւ զայն երկուց որդւոց իւրոց՝ Կովկասայ և Լեկանայ, որք և անուամբ նոցա կոչեցան մինչեւ ցայսօր[3]: Իսկ Հայկն զհասարակն ժառանգեաց Հայրենիս ասացեալ սահմանաւքն. և էր իշխան եւթանցն եղբարց. և կայրն ի ժառանգութեան Ներրովթայ հսկայի, որ նախ թագաւորեաց ամենայն երկրի[4]:

Զ

ՀԱՅԿՆ

(ԽՈՐԵՆ. Ա. Ժ. ԸՍՏ ՄԱՐ–ԻՒԱՍԱՅ)

Այս Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստատազուկ. սա ի մէջ սակաւից քաջ և երեւելի լեալ, ընդդիմակաց ամենեցուն՝ որք ամբառնային զձեռն՝ միապետել ի վերայ ամենայն սակաւից և դիւցազանց: Սա խրոխ-

1. Ըստ Պրոսէքի՝ Քուպան գետն է:

2. Չիմայ Թերեք կոչուի այդ Ղումէկ գետն:

3. Լեկան կամ Լեկաց երկիրն՝ հիմայ Տաղստան կոչուի:

4. Վարդան պատմիչ մեր՝ համառօտ յիշէ այս Թորգոմեանց սերունդը, ըստ Ջուանշէրի. «Կայ ի գիրս» եթէ Թորգոմ՝ ունի որդւովքն եկն յԱյրարատ գա» ւառն, զկնի ջրոյն մեծի. և երեք յորդւոցն նորա» նախագահք եղեն. Հայոսն, Քարթլոսն և Կովկա» սոսն, և սերեցին աշխարհաց, և իւրեանց անուամբն կոչեցին Հայս և Քարթլ և Կովկաս. և սերեցին ի» Ծովէն Պոնտոսի մինչեւ ի Ծովն Կապբից»:

տացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեան Բելայ, ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի, ի մէջ բազմակոյտ ըստկայիցն, անհուն խօլաց[1] և ուժաւորաց: Քանզի, անդ մոլեգնեալ այր իւրաքանչիւր՝ սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով, չանային տիրել ի վերայ միմեանց. ուր՝ պատահմունք ի դէպ ելանէին Բելայ՝ բռնանալ ունել զամենայն երկիր: Որում՝ ոչ կամեցեալ Հայկայ՝ հնազանդ լինել Բելայ, յետ ծննանելոյ զորդի իւր զԱրմենակ ի Բաբելոնի, չու արարեալ գնայ յերկիրն Ասորեստայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք և դրստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք՝ թուով իբրեւ երեք հարիւր, և այլովք ընդոծնօք, և եկաք յաթեցելովք ի նա, և բոլոր ազխիւ: Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուեալոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ, չինէ անդ տուն բնակութեան կալուածոյ, և տայ ի ժառանգութիւն կադմեայ որդւոյ Ասրամանեկայ: Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս[2]:

Եւ ինքն խաղայ, ասէ, այլով ազխիւն ընդ աբեւմտեան հիւսիսոյ, գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում. և անուանէ զանուն լեռնադաշտակին՝ Հարք[3]. այս ինքն թէ, հարք են աստէն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ. չինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուն Հայկաչէն: Ցիչի և աստանօր պատմութիւնս. հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ առ երկայնաձիգ միով լերամբ բնակեալ յառաջագոյն արք սակաւք, ինքնակամ հնազանդել դիւցազնին: Ապրեալացուցանէ և այս զասացեալ զրոյցս անգիրս:

Ի

ՊԱՏԵՐԱԶՄՆ ՀԱՅԿԻՆ ԵՒ ԲԵԼԱՅ

(ԽՈՐԵՆ. Ա. ԺԱ. ԸՍՏ ՄԱՐ–ԻՒԱՍԱՑ)

Ի հաստատել տիրանեանն Բելայ զթագաւորութիւն իւր առ ամենեսեան, առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ումն յորդւոց իւրոց առ Հայկ, արամբք հաւատարմօք, գալ նմա ի հնազանդութիւն և կեալ խաղաղութեամբ: Բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան[1] սառնամանեաց, այլ չեռուցեալ մեղկեա զցրտութիւն սառուցեալ քո հալարտացեալ բարուդ, և հնազանդեալ ինձ՝ կեայց ի հանդարտութեան, ոչ հաճոյ է քեզ յերկրիս խմում բնակութեան: Եւ ի բաց դարձուցեալ Հայկայ զպատգամաւորսն Բելայ, խաւսեալ պատասխանեաց: Զառնայ առաքեալն անդրէն ի Բաբելոնի:

Ապա զօրաժողով լինի ի վերայ նորա Տիտանեանն Բէլ՝ ամբոխիւ հեռաւոր զօրաց. գայ հասանէ ի հիւսիսի՝ յերկիրն Ասրարատայ մերձ ի տունն Կադմեայ. փախստական լինի Կադմոս առ Հայկ, քաջընթացիկս առաջի իւր առաքէ. Գիտեա, ասէ, ոմ մեծդ դիւցազանց[2], զի դիմեալ գայ ի վերայ

1. Ենթէրք և յանդուգն գործող, անճոռնի մարդիկ:
2. Անշուշտ այդ զրոյցներէն կազմուած են և այդ գլեակքդ:
3. Գաւառ մի է Տուրուբերան նահանգի, և իբր Հայկայ առաջին բնակարան պատուեալ. երեւի որ այս պատճառաւ Ս. Լուսաւորիչ այլ՝ Հայոց եպիսկոպոսաց նախապատիւ կարգեց զՀարքայն:
4. Երեմիա եղբայր երանելւոյն Կամիտասայ՝ թուրքաբէն թարգմանելով զայս բանս՝ Հայրապատ կոչէ:

1. Նշանակէ հին աւեններէ հռչակեալ Հայաստանի ցրտութիւնը, երկրին բարձրութեան պատճառաւ:
2. Տարակուսիմք թէ այդ աւեն դիւցազանց գազափար ունէին, որպէս և Յաւերժ քաջերու և Յաւերժ հարսանց:

քո Բէլ՝ յաւէրժիւք քաջօք, և երկայնապիղօք հաւատակօք սկայիւք մրցողօք. և խմացեալ իմ զմերձ լինելն նորա ի տուն իմ, փախեայ, և գամ աւազսիկ տագնապաւ: Արդ, աճապարեա խորհել որ ինչ գործելոց ես:

Իսկ Բէլն, յանդուգն և անճոռնի գօրութեամբ ամբոխին՝ որպէս յորձան ինչ սաստիկ ընդ գառ ի վայր հեղեալ, փութայր հասանել ի սահմանս բնակութեան Հայկին[1]. ի սիրտ և ի մարմին վատահացեալ արանց գօրաւորաց: Այս, ուշիմ և խոհեմ սկայն, քաջագանգուրն և խայտակն, աճապարեալ հաւաքէ զորդիս իւր և զթոռունս, արս քաջս և աղեղնաւորս, թուով յոյժ նուազունս, և գայլս եւս որ ընդ իւրով ձեռամբ, հասանէ յերդ ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն, մանուկս ունելով ձկունս յինքեան[2]. և կոչեցեալ զգօրս իւր՝ ասէ ցնոսա. «Ձեզանէդն մեր հանդէպ ամբոխին Բէլայ, դիպել չանասցուք տեղւոյն՝ ուր անցեալ կայ ի մէջ խառն քաջացն՝ Բէլ. զի, կամ մեացուք, և աղխ մեր ի ծառայութիւն Բէլայ կացցէ, կամ զաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ, ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութիւն սատացեալք»:

Եւ յառաջ կոյս անցեալ բովանդակ առաջարէզս, հասանեն ի մէջոց ինչ գաշտաձեւ լերանց բարձրադունից. և յայմէ չուրցն հասանաց՝ ի բարձրաւանդակումն կուռ կալով ի տեղոջ. ի վեր զերեսս ամբարձեալ՝ երեւեցաւ նոցա բազմութիւն անկարգ հրոսակի[3] ամբոխոյն Բէլայ, ցան և ցիր յանդուգն

1. Մեր ազգապետն երբեմն Հայկ կոչուի երբեմն Հայկն. երբ Արիոն համառաւելութիւնը նշանակէ՝ միշտ Հայկն գրուի: Իբեն ընծայուած և կրկնուած մակդիրքն՝ յայտնեն ազգային հին վիպասանից երգեր կամ գովասանք:

2. Թուի Հառչակայ լիճն, վանայ ծովուն արեւելեան հարաւակողմը:

3. Խառն ի խուռն վազող զօրք. սեալ է քանի մ՚օրինակաց մէջ հոսակ գրուածն. վասն զի Հրոս, հրոսել, և այլն, գրուին յաճախ.

յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով: Իսկ Բէլ յեց[1] և հանդարտ ամբոխիւ մեծաւ՝ ի ձախմէ ջուրցն ի վերայ ոստոյ[2] միոյ՝ իբրեւ ի դիտանոցի: Ծանեաւ Հայկ դիտումբ վառելոյ Ջոկատին, յորում Բէլ առաջի ամբոխին եկեալ հասեալ ընտրիւք և վառելովք ոմամբք[3]. և երկար միջոց ճանապարհին ընդ նա և ընդ ամբոխն. և ինքն զլխանոց ագուցեալ երկաթի, նշանաւորօք վերջօք, և տախտակս պղնձիս թիկանց և լանջաց, և պահպանակս բարձից և բազկաց. գօտեւորեալ զմէջն, և յահեկէ զրաուին՝ երկասայրի[4]. և նիզակն սրի[5] ի ձեռին իւրում աջոյ, և յահեկումն վահան, և ընտիրք յայմմէ և ի ձախմէ: Եւ տեսեալ Հայկին զՖիտանեանն կուռ վառեալ, և զարս ընտիրս ընդ նմա աջինս և ահեկինս, կարգէ զԱրմենակ՝ երկու եղբարբք ընդ աջմէ, և զԿադմոս և զայլս երկուս յորդւոց իւրոց՝ ի ձախմէ, զի արք կորովիք էին յազեղն և ի սուսեր. և ինքն առաջի, և զայլս հրոսակին՝ զկնի իւր կարգեաց. երեքանգիւնի իմն[6] կարգեաց ձեւով, հանդարտ յառաջ մատուցանելով:

Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ի միմեանս, ահագին դղրդիւն ի վերայ երկրի առնէին չահատակելովն, և ահա պակուցանողս տարապուռ յարձակմանցն զմիմեամբք արկանէին[7]: Անդ, ոչ

1. Ցեց՝ պարզապէս կռթընած նշանակէ, բայց հօս կամ ուրիշ բան, կամ հնգ, ինչպէս գրեն օրինակք. ուրիշ ոմանք այլ գրեր են հեց:

2. Բլրի մի վրայ:

3. Խմբաւ, ըստ ուրիշ ձեռագրաց:

4. Զոլս ծընկէն վեր՝ երկբերան սուր կախած:

5. Աբի(քամ) մարդկան վայլեն և զէնք արի. բայց թուի թէ անարի գրելի էր, որ երբեմն հակառակ ընծայեան իմաստին՝ նշանակէ չատ մեծ կամ անճոռնի:

6. Եռանկիւնին սուր կամ առջեւի ծայրը՝ ինքն Հայկն կենալով:

7. Իբրեւ guerilla ըսուած կէս իրաւ կէս սուտ յարձակմունք:

սակաւք յերկոցունց կողմանց ակայիցն՝ արք յաղթանդամք՝ բերանով սրոյ դիպեալք, տապալ յերկիր կործանէին. և մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի: Զայսպիսի անակնուն[ելի] դիպուած տարակուսանաց տեսեալ արքային տիտանեան՝ զարհուրեցաւ, և ի նոյն բլուր ուստի էջն՝ վերջոյանեալ ելանէ. քանզի խորհէր ի միջոցի ամրանալ ամբոխին, մինչեւ հասցէ բովանդակ զօրն, զի միւսանգամ ճակատ յօրինեսցէ: Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ, յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքային. լի քարշէ պինդ զայնալիճն, դիպուցանէ զերեքթեւեանն[1] կրծից տախտակին, և չեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր անկանի սլաքն. և այսպէս ոճխացեալն տիտանեան՝ կործանի, յերկիր զարկուցեալ, և փչէ զոգին: Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեան, փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց:

Բայց զտեղի ճակատուն չինէ դաստակերտ, և զանունն կոչէ Հայք, վասն յաղթութեան պատերազմին. այսօրիկ ազգաւս և գաւառն այժմ անուանի Հայոց ձոր[2]: Իսկ բլուրն՝ ուր քաջամարտ

1. Երեքսայրի ըսել է, նետին ծայրը երեք երեսով դամի պէս ազուցած սլաքն:

2. Եւ մինչեւ հիմայ այսպէս կոչուի, յարեւելեան Հարաւակողմն Վանայ: Այլ և օտարազգիք մի դիտողութեամբ և անունը արտաբերելով տեղագրէլն և ընծայէլն՝ արժանի է ընդունելութեան. La Vallée dans laquelle nous descendons, est parsemée tout entière de villages arméniens: elle porte du reste le nom de *Vallée-Arménienne* ou *Haïguelzor*. C'est là que Haïk serait venu s'établir et aurait fondé l'Arménie; lorsque construisant la Tour de Babel, il se sépara de Bélus, avec lequel on ne pouvait s'entendre. Les habitants contribuent à Haïk un château, dont les ruines s'élèvent dans la vallée, non loin de l'endroit où nous passons; mais il date à peine de 7 à 8 siècles. — BINDER, *Kurdistan*. p. 152.

1093-69

կօքն անկաւ Բէլ, անուանեաց Հայկ՝ Գերեզմանս. որ այժմ ասին Գերեզմանք[1]: Բայց զդիակն Բէլայ պատուհասեալ իմն դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանել ի Հարք, և թաղել ի բարձրաւանդակ տեղւոջ, ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց[2]: Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք:

Ը

ՆՈՅՆ ԲԱՆ

(ԸՍՏ ԱՆԱՆՈՒՆ ՀԻՆ ՀԵԳԻՆԱԿԻ)

Զուտաց խաղաց գնաց Հայկն ի Բաբելոնէ՝ կընաւն և որդւովքն, և ամենայն աղխիւն Հանդերձ. և չոգաւ բնակեցաւ յերկիրն Արարադայ, ի տանն որ ի լեռնոտինն, որ գառաջինն չինեալ էր Զրուանայ հօրն՝ եղբարքն Հանդերձ. և ապա ետ զնա Հայկն կալուած ժառանգութեան Կադմեայ Թոռին իւրոյ որդւոյն Արամանեկայ. և ինքն չուեաց գնաց անտի եւս ի հիւսիսակողմն. և չոքաւ բնակեցաւ ի բարձրաւանդ դաշտավայրի միոջ, և կոչեցաւ անուն դաշտին այնորիկ Արտ, յանուն Հարցն. իսկ երկիրն ըստ նմին պատշաճի կոչեցաւ անուն Հայք, որ են Հայ ազամրք Հանդերձ: Եւ արդ, Հայկ հզօր զօրութեամբ և բարի անձամբ և կորովի աղեղամբ, և մարտիկ յոյժ:

1. Այլ օրինակք Գերեզմանաձայ գրեն:

2. Գեղեցիկ և ճարտար համառօտութիւն երկար վիպասանութեան, որ հաւանօրէն հիւսուած էր ի հին Հայկազանց. ըստ սովոյ օրինակագիր յոյն և լատին մեծ քերդողաց՝ մեր Բա[illegible] այլ յօրինեց իր Հայկ Դիցազն

ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ
Гос. Библиотека
ZUUՐ-Арм.ССР
им. А. Мясн[illegible]
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Յայնմ ժամանակի թագաւորեաց ի Բաբելոն որսորդ հսկայ Բէլն Տիտանեան, ձոխն չաստուա-ծացեալ. որոյ հզօր զօրութեամբ և սատիկ յոյժ ջեղ պարանոցի իւրոյ. և էր իշխան ամենայն ազգաց՝ որ ապրեցան ի վերայ երեսաց ամենայն երկրի. որոյ արարեալ առ աչօք կախարդութեամբ հնարս և հրամանս թագաւորականս՝ ամենայն ազգաց. և հպարտութեամբ ամբարտաւանութեան իւրոյ կանգնեաց զպատկերն իւր, և ետ երկիր պաշտանել իբրեւ աստուծոյ, և զոհս մատուցանել: Եւ վաղվաղակի կատարէին ամենայն ազգքն զհրամանս նորա: Բայց մի ոմն՝ Հայկ անուն՝ նահապետ ազգացն, ոչ հնազանդեցաւ ի ծառայութիւն նորա. և ոչ կանգնէր ի տան իւրում պատկեր նորա. և ոչ մեծարէր զնա աստուածօրէն չքով[1]: Եւ էր անուն նորա Հայկ. ընդ որում ծնաւ արքայի Բելայ սխրութիւն մեծ. և զօրաժողով լինի Բէլ արքայ ի Բաբելոն, և դիմէ գնայ ի վերայ Հայկայ, սպանանել զնա:

Գայ հասանէ յերկիրն Արարադայ, ի տունն որ էր նոցա հայրենի, զոր չինեալն էր ի լեռնոտին. և Կադմոս փախստական գնաց ի Հարք, առ հայր իւր, ազգ առնել նմա, և ասէ. Դիմեալ գայ Բէլ արքայ ի վերայ քո, և եկն եհաս մինչեւ ի տուն անդր. և ես կնաւ իմով և որդւովք աշաւասիկ գամ փախստական: Առնու Հայկն զԱրամենակ և զԿադմոս զորդի իւր, և զորդիս նոցա և զորդիս եւթանեցունց դստերաց իւրոց[2], արս հսկայս և նուաղունս թուով: Եւ ի դիմի հարկանի Հայկն Բելայ արքայի. և ոչ կարաց զդէմ ունել բազմութեան արանց հսկայից սպատազինաց. անդ ի դիմի հարկանի Հայկն Բելայ. և կամեցաւ ըմբըռնել զնա Բէլ ի բուռն իւր. խոյս ետ Հայկն յերեսաց նորա, և գնայր նա փախստական[1]. և Բէլ զհետ նորա երթայր պնդապոյն՝ հանդերձ զինակրաւն իւրով:

Ջտեղի կալաւ Հայկն, և ասէ ցնա. Ջի՞ պնդեալ գաս զհետ իմ. զարձիր անդրէն ի տեղի քո, զի մի՛ մեռանիցիս այսօր ի ձեռաց իմոց. քանզի ոչ վրիպի նետ իմ իմիք: Պատասխանի ետ Բէլ, և ասէ. Վասն այնորիկ՝ զի մի՛ անկցիս ի ձեռս մանկըտուոյ իմոյ և մեռանիցիս. այլ ևկ ի ձեռս իմ, և կեաց ի տան իմում խաղաղութեամբ. ունելով ի գործ զմանկունս ի տան իմոյ զօրականս[2]: Պատասխանի ետ նմա Հայկն և ասէ. Շուն ես դու, և յերամակէ չանց դու և ժողովուրդ քո. և վասն այնորիկ թափեցից իսկ այսօր ի քեզ զկապարճս իմ: Եւ արքայն Տիտանեան սպառազինեալ և վտահացեալ էր ի կուռ սպառազինութիւն անձին իւրոյ: Եւ Հայկն ցաբեթեան մերձենայր. և ունէր ի ձեռին իւրում զաղեղն՝ որպէս հեծան հզօր մայրափայտեայ: Եւ Հայկին զտեղի կալեալ՝ պատրաստի ընդդէմ նորա աղեղամբ. և կանգնէ զկապարճն ի գետնոյ ընդ ինքեան՝ յաղեղն ակայօրէն կամարին[3]. և ընդ գիրկս մտեալ՝ զօրութեամբ հարկանէ նետիւ զսախստական երկաթիս. և ընդ պղնձի վահանն ի թափ անցուցանէ ընդ մեղջէն արձանն[4], յերկիր խարխեալ վտարեալ նետն. և

1. Աչքեւայլ պատմիչներէ ժողված կ'երեւի բանս, զի կցկտուր է, կայ հատարակ ըսուածց, կայ և վերոյ:

2. Այս պատմիչս երկու անգամ յիշէ Հայկայ ելթն դստերքը, Խորենացին և ոչ մի անգամ:

1. Մար-Իբաս կամ Խորենացի չեն ըսեր այս մասը, որ աւելի պատմական կ'երեւի:

2. Հայկայ պատասխանէն գուշակուի՝ որ Բէլ ըսած ըլլայ չռենս՝ փոխանակ մանկանց, կամ երկուքն այլ: Շատ սխալտ է այս գրուածս:

3. Մուխ կամ խառնակ բան. թուի թէ կապարճը գետնէն վերցընելով՝ զօտիէն կախեր է, կամ մտեցուցեր է իր հսկայավայել աղեղան:

4. Շատ մեծ ըլլալով Բէլ նմանցըւի մըսէ արձանի, մեծ քարի, ինչպէս Գողիաթ՝ կոչուած է մեղջէն բլուր:

վաղվաղակի յերկիր կոթծանեալ չաստուածակար-ծեալ հսկայն: Եւ զօրք նորա փախստական լինէին. և նոքա զհետ մտեալ՝ թափեցին ի նոցանէ երամակս ձիոց և ջորեաց և ուղտուց:

Եւ Հայկն դարձաւ ի տեղի իւր. և չոքաւ կալաւ Հայկն զերկիրն Արարադայ. և բնակեցաւ անդրէն ազգաւ իւրով մինչեւ ցայժմ: Եւ ի ժամանակի մահուան իւրոյ՝ ետ գնա կալուած ժառանգութեան Կադմեայ թոռին իւրում, որդւոյ Արամենակայ, եղբայր Հարմայի[1]: Եւ Արամանեկայ հրամայեաց երթալ ի հիւսիսակողմն՝ ուր ինքն իսկ գադարեաց գառաջինն: Եւ եղեւ յետ մահուան Հայկայ՝ սա Արամենակ զորդիս իւր և զդստերս իւր և զարս նոցա, և զբորս եւթանեւթին, և զարս նոցա, զուստերս և զդստերս նոցա, և զամենայն ազխ իւր. և չոգաւ բնակեցաւ անդէն յառաջնումն գաւառին, զոր կոչեցին յանուն Հարց իւրեանց Հարք:

Թ

ԴԱՐՁԵԱԼ ՆՈՑՆ ԲԱՆ

(ԸՍՏ ՋՈՒԱՆՇԻՐԻ)

Ի մի հաւաքեաց Հայկն զեղբարս իւր, և ասաց նոցա. Լուարուք ինձ, հարազատք իմ. ահաւասիկ ետ մեզ Աստուած զօրութիւն և ժողովուրդ բազում. և արդ, վասն ողորմութեան Աստուծոյ որ ի վերայ մեր, մի՛ ծառայեսցուք օտարի, այլ Աստուծոյ ճշմարտի: Եւ հաւանեցան ամենեքեան. ապըստամբեալ չետուն զհարկն, արկեալ յինքեանս գՀըր-

1. Հարմա որդի Հայկայ չի յիշուիր ի Խորենացւոյ, այլ Արմենակայ թոռան թոռն այնպէս կոչուի:

ջակայ ազգն: Եւ լուեալ Ներրովթայ բարկացաւ, և արար ամբոխ բազում հսկայից և խառնաղանճից, և դիմեաց ի վերայ նոցա, և եկն յԱտրպատական աշխարհն[1]: Եւ Հայկն կայր իւրայովքն առ ոտն Մասեաց. և առաքեաց Ներրովթ վաթսունն հսկայ յոլովից բազմութեամբ. և խառնեալք ի միմեանս՝ ահագին և ասպարիկ բախմամբ իրրեւ զձայն որոտման ամպոց. և եղեն կատարած յերկոցունց կողմանցն՝ անթիւ և անհամար: Եւ Հայկն կայր յետուստ կողմանէ իւրոցն, և սրատապնդեալ քաջալերէր. և ինքն իրրեւ զկայծակն ասպատակէր չուրջանակի, և ընկենոյր զհսկայսն վաթսուն՝ զօրքն իւրեանց՝ մինչեւ խաւար. եօթանեքին հարատաւովքն ողջ մնացեալ չնորհօքն Աստուծոյ. և փառք տային փրկողին իւրեանց ամենակալի[2]: Եւ լուեալ Ներրովթ խառվեցաւ յոյժ, և դիմեաց ինքնին ի վերայ Հայկին. իսկ նա ոչ ունելով զօրս իրրեւ զնորայն, ամրանայր ի դերբուկս ձորոցն Մասեաց: Իսկ Ներրովթայ սպառազինեալ կուռ վառեալ յերկաթոյ՝ յօտիցն մինչեւ գգլագլխն, ելանէր յոստ մի բլրոյ. կոչէր զՀայկն յառաջին հնազանդութիւն: Իսկ Հայկն ոչ ետ պատասխանի նմա, այլ ասէ ցեղբարսն իւր. Ամրացուցէք զիս յետուստ կողմանէ, և իջանեմ ես առ Ներրովթ: Եւ ինքն երթայր և մերձենայր առ նա, և նետիւ հարկանէր ի վերայ տախտակաց սրտին, և չեչտակի անցուցանէր թափ ի լուսանցոյցս արեգակնացայտս[3]. և չրջեալ[4] առ ժամայն փչէր զչունչն.

1. Պատերազմին տեղը փոխէ պատմիչս, որ և աւելի պատմաբան է քան վիպասանական:

2. Յայտնէ քրիստոնեայ գրիչն՝ որ չէ հեռեւած վիպասանից:

3. Թուի ըսել, սրտին կողմէն նետը մանելով և կռնակէն ելնելով՝ ծակ մի բանայ, ուսկից արեւուս լոյսն կ'անցնի:

4. Կռնկի վրայ գլորելով ընկնելով:

և անկեալ բոլոր բանակն իւր: Եւ տունն Թորգոմայ յանհոգս եղեալ հանդչէին. և թագաւորէր Հայկն եղբարց իւրոց և ամենայն եղբականացն ազգաց:

Ժ

ՆՈՅՆ ԲԱՆ

(ԸՍՏ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՅԳԵԿՑՈՅ[1])

Հայկն, որոյ անուամբ մեք Հայք կոչեցաք, որ է յորդւոցն Յաբեթի. Հայկն, ցանկալին և գեղապաշաճն, հաստաբազուկն և յայնաձակատն[2], Հայրն մեր, խարտեաշն և գանգրահերն: Քանզի, յորժամ բաժանեցան լեզուքն և փլաւ աշտարակն, Բէլ չինեաց զԲաբելոն աթոռ թագաւորութեան, և ինքն միայն կամեցաւ թագաւորել ի վերայ որդւոց մարդկան. և հայրն մեր Հայկն՝ առեալ զազգն մեր և զլեզուս, ոգիս մօտ ի չորեքհարիւր[3], զի սակաւք էին նախնիքն մեր, և փախեաւ ի Բեւլայ, և ամրացաւ ի կողմն հիւսիսոյ, ի Վերին Հայք՝ զոր Մեծ Հայք կոչեն: Եւ ոչ կարաց Բէլ որ նստէր ի Բաբելոն՝ բերել զՀայկն ի հաւանու-

1. Վերջին գլուխներուն վրայ գրած խոշոր տառերով մի վերջ՝ առ խնդրող բանին յիշատակարան մի ընելով, գրած է գլխ, վկայելով որ ամփոփ կամ պարզաբար գրէ. և ինչպէս երեւի՝ չատ հմուտ եղած է, բայց ծերութեան առեն գրած է: Ձեռագրին մէջ Հայկն միշտ ք տառիւ գրուած էր:

2. Սաորագծեցի այս Հայկայ կերպարանքը, որուն չատ հաւնած երեւի Վարդան, վասն զի կրկնէ զայն և յետոյ. խարեներեայ յիշած յատկութեանց մէջ չկայ այս. ուրիշ հին գրագէ առած կ'երեւի:

3. Հարիւր մի աւելցուած է թիւն՝ քան զխոշոր-ցուցն, յետոյ հազարի հասնի:

թիւն իւր: Եւ յայնժամ ոչ էին ուսեալք ի վերայ ձիոյ պատերազմել և կռուել[1]. և ժողովեաց Բէլ յիսուն հազար հետեւակ արանց պատերազմողաց, և գայր բարկութեամբ իբրեւ զալիս ծովու, զի ըմբռնեսցէ զազգս մեր. և սակաւ մի աճեցին ազգն մեր: Եւ Հայկն ել ընդ առաջ նորա միով հազարով, և թէ կային սակաւ մի աւելի. բայց արք քաջք էին: Եւ յառաջեաց Բէլ, և եկն կռնախազոյն քան զզօրս իւր, և իւր գնդաւն միայն. և ել Հայկն իւր գընդաւն միայն ընդդէմ նորա: Եւ էր Բէլ կրկին երկայթ պատեալ յետոյ և յառաջոյ՝ նման տախտակաց. զի գիտէր Բէլ զթափ բազկին հօրն մերոյ. և ունէր սոսկալի նիզակ խիչու[2] ի ձեռին իւրում: Եւ հայրն մեր Հայկն՝ գայր լայնալիճ պընդակազմ ազեղամբն. և Բէլ գոչեաց ի վերայ Հայկին, քանզի սկայ էր. յարձակեցաւ, և որպէս վիշապ չար կամէր կլանել զՀայրն մեր. և Հայկն թափ տուեալ բազկին, լայնաձակատ հայրն մեր, և զնեցքթեւեան նետն արձակեաց ի լայնալըճէն, և եհար ի կուրծսն Բելայ, և եթաց պատուհան[3]. և անցեալ (նետն) հարաւ ի գետինն, յոյժ զօրաւոր, ոչինչ արգելեալ զնա թանձրութիւն երկաթին: Եւ անկեալ սատակեցաւ Բէլ հսկայն և մսաբլուրն. և ազատեցան ազգքն մեր: — Ոչ արկաք ընդ գրով, թէ զինչ արարին Թորգոմ, և այլքան ազգք[4] և թոռունք Հայկին. զի Հայք՝ որդիք և տուն կոչեցան Թորգոմայ, վասն քաջութեան նորա զոր արար:

1. Յարմար խորհրդածութիւն:

2. Նոյն նիզակի նշանակութիւնն ունի. և ուրիշ նախնի գրուածոց մէջ այլ գործ:

3. Պարզ Ջուանշիրի լռռաւելցոյց բառիդ:

4. Կարելի է ընդգրին մէջ Ազաթանգեղոսի գրուած էր՝ փոխանակ այսքան ազգքին:

ԺԱ.

ՈՐԴԻՔ ԵՒ ԹՈՌՈՒՆՔ ՀԱՅԿԱՑ ԵՒ ԲՆԱԿՈՒԹԻՒՆ ՆՈՑԱ

(Մ. Խորեն. Ա. ԺԲ)

Զկնէք այսորիկ գառնալ ասէ (Մար–Իբաս) Հայկին՝ ի նոյն տեղի բնակութեան. և կադմեայ թոռին իւրում բազում ինչ յանկածէ պատերազմին պարգեւեաց, և յիւրոյ ընդօծնացն այս անուանիս։ Հրամայէ զնոյն տեղի բնակութեան ունել նմա՝ գառաչնոյ իւրոյ տանն. և ինքն երթեալ դադարէ յանուանեալ տեղին Հարք։ Սա կեցեալ ամս[1], ծնաւ զԱրմենեակ ի Բաբելոնի, որպէս վերագոյն ասացաք. յետ որոյ կեցեալ և այլ եւս ամս ոչ սակաւս՝ մեռանի, յանձն առնելով զրօվանդակ ազնն Արմենեակայ որդւոյ իւրոյ։

Իսկ նորա թողեալ երկուս յեղբարց իւրոց՝ զԽոռ և զՄաւնաւազ՝ ամենայն ազխին իւրեանց՝ ի կոչեցեալն Հարք, և զորդի Մանուազայ զԲազ. յորոց՝ Մանուազ ժառանգէ զՀարք. իսկ որդի նորա Բազ՝ յարեւմտից հիւսիսոյ զերդ ծովուն աչեայ, և զգաւառն և զծովն անուանէ իւրով անուամբն[2]։ Եւ ի սոցանէ սակս լեալ զնահապետութիւնս Մաւնաւազեան և զԲզնունեաց, և Որդունիի անուանեալ. որք առ ուրեմն յետ Արբայն Տրգատայ՝ բարձեալ ասին ի միմեանց՝ պատերազմաւ[3]։ Իսկ Խոռն ի կողմանս

1. Ս. Գիրք՝ նահապետաց տարիքըք նշանակելով՝ կ'ըսեն, կեցեալ այսչափ ամս՝ ծնաւ իր անդրանիկը, նշանակելով տարիներու թիւերն եւս. մեր պատմիչն այլ անանց հետեւի. բայց թիւերն չկան։

2. Բզնունեաց ծով, որ է Վանայ ծովն կամ լիճն։

3. Մէկզմէկ չարգելով կու նուազին այս երեք ցեղերն, զոր գարձեալ յիշէ Խորեն. Գ. բ։

հիւսիսոյ բազմանայ, կարգէ զչէնս իւր. և ի նմանէ ձգեալ ասի մեծ նախարարութիւն ազգին Խոռխոռունեաց[1]. որք քաջք և անուանիք, որպէս և որք առ մեզ են այժմ երեւելիք։

Իսկ Արմենակայ առեալ զամենայն բազմութիւնն՝ խաղայ յարեւելս հիւսիսոյ. և երթեալ իջանէ ի խորին դաշտավայրի մի՝ ի բարձրագագաթանց պարսպեալ լերանց, գետոյ կարկաչաոսահից ի յարեւմտից ընդ մէջ անցանելով, և զդաշտն արեւելեայ գոգցես իմն իբր որսայսեալ[2], ձիգ յաբեգակն կոյս զերկայնութիւնն պարզեալ. և առ առորոտով լերանցն բազում ականակիտ բղխեալ աղբերք, որք ի գետոց հաւաքումն եկեալ հեզաբար առ սահմանօք նոցա. ծնեալք լերամբք և հզերօք դաշտին՝ պատանիք ոմանք իբրեւ առ երիտասարդուհեօք ձեմիցին։ Այլ հարաւային արեգակնահեմ լեառն[3] սպիտակափառ ունելով զագաթն, ուղղորդ ի յերկրէ բուսեալ, երեքօրէիւ, որպէս ասաց ոմն ի մերոցն, քալագօտւոյ առն չրջապատեալ ճանապարհաւ, և առ փոքր փոքր ի չեչտումն անկեալ, ծեր ոմն արդարեւ լեառն ի մէջ երիտասարդացեալ լերանց։ Յայսմ խորութեան դաշտի բնակեալ Արամենակայ, չինէ զմսան ինչ ի հիւսիսոյ կողմանէ դաշտին, և զոտն լերինն ի նոյն կողմանէ. և զլեառն անուանէ յանգագոյն յիւր անուն Արագած. և զկալուածան՝ Ոտն Արագածոյ[4]։

1. Որոց բնակութիւնն էր վանայ ծովուն արեւմտեան հիւսիսային կողմը։

2. Վեր ի վայր, կամ ցած ու բարձր երեսով դաշտ՝ բնիկ Արարատա նահանգին. որոյ պայծառ չրից մէջ լերանց ձեւերն իբր երիտասարդ մանչ ու աղջիկ թեւ թեւի առածներու նմանցընէ։

3. Լեառն է Մասիս, որոյ չրջապատն՝ առորոտքն աւժով քայլուղի մի իբր երեք օր քշէ, կ'ըսէ։

4. Սովորաբար Արագածոտն կ'ըսուի. բայց ասոր և Արմենակայ անուանց մէջ չկայ այնքան նմանութիւն՝ որչափ պատմիչն գոնէ։

Բայց աքանչելի ինն ասէ պատմագիրն. թէ, ի յոլով տեղիս գոյն բնակեալ ի մարդկանէ՝ յերկրիս մերում ցան և ցիր սակաւք, յառաջ քան զգալոստ բնկին մերոյ Նախնւոյն Հայկայ:

Այս Արմենեակ կեցեալ ամս, ծնաւ զԱրմայիս. և յետոյ կեցեալ ամս շատ, մեռաւ: Իսկ որդի նորա Արմայիս չինէ իւր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եղերբ գետոյն. և անուանէ զնա յիւր անուն Արմաւիր. և զանուն գետոյն յաՆուն թոռին իւրոյ Արամայ՝ Երասխ[1]: Եւ զորդի իւր զՇարա՝ զյոլովածին և զչատակեր, առաքէ ամենայն ազխիւ իւրով ի դաշտ մի մծտաւոր, արգաւանդ և բարի, յորում գնան չուրք ոչ սակաւք, ի թիկունս հիւսիսոյ լերինն, որ անուանեցաւ Արագած. յորոյ անուն և զգաւառն ասեն անուանել Շիրակ[2]: Վասն որոյ արդարանալ թուի առասպելին, որ ասի ի մէջ գեղկաց. «Թէ քո Շարայի որկորն է, ասեն, մեր՝ Շիրակայ ամբարքն չեն»: Այս Արմայիս կեցեալ ամս՝ ծնանի զորդի իւր զԱմասիա, ի վերայ որոյ կեցեալ և այլ եւս ամս, մեռաւ:

Ամասիա բնակեալ յԱրմաւիր՝ յետ ամաց ծնանի զԳեղամ. և յետ Գեղամայ զփառոխ արի և զՅոզակ: Եւ յետ ծնանելոյ զսոսա՝ անցանէ զգետովն մերձ ի լեառնն հարաւոյ. և չինէ անդ առ խորչիւք լեռնոտինն՝ մեծապէս ծախիւք՝ երկուս տուներ. զմին յարեւելս կոյս մծտ յակունս ազբերցն՝ որ առ ստորոտով լերինն ելանեն. իսկ զմիւսն յարեւմուտս կոյս նորին տանն, բացագոյն իրր մեծօր

1. Վերնոյն նման՝ Արամայիսի և Արտաշայ և իրենց չէնքերուն անուանքն յարմար չեն. հին ձեռագրաց մէջ սխալ գրուած երեւին. բայց չէնքն Արմաւիր՝ Ելրոյ մի վրայ՝ յայտնի է հիմայ:

2. Ծանօթ է ինչուան հիմայ գաւառս իր հին անուամբն, բայց յետ Խուսաց սիրելուն՝ Թէ գաւառն և Թէ քաղաքն՝ Ալէքսանդրապոլ կոչուեցաւ:

հառաբակօրոյ միոյ հետեւակագնացի առն ճանապարհի. և ետ զնոսա ի ժառանգութիւն երկուց որդւոց իւրոց, արւոյն Փառոխի[1] և կայտառին Յոզակայ. յորս բնակեալ՝ յիւրեանց անուն զաՀին կոչեցին, ի Փառոխայ՝ Փառախտ, և ի ՅոԼակայ՝ Յոզակերտ: Բայց զկառանն Ամասիայ անուանէ իւր անուամբ Մասիս. և ինքն դարձեալ յԱրմաւիր, եկաց ամս սակաւս, և մեռաւ:

Իսկ Գեղամ յետ ամաց անցանելոյ ծնաւ զՀարմա յԱրմաւիր. և թողեալ զՀարմա յԱրմաւիր՝ հանդերձ որովք բնակէր, և ինքն գնաց զմիւս լերամբն արեւելեան հիւսիսոյ, յեզր ծովակի միոյ: Շինէ զեզր ծովակին, և թողու անդ բնակիչս. և յիւր անուն և սա զկառանն անուանէ Գեղ, և զչէնսն՝ Գեղաքուղի, որով կոչի և ծովիւ[2]: Ասա ծնաւ զորդի իւր զՄհասակ, զայր սէգ և անձնեայ, բարեգեղ, կորովարան[3] և գեղեցկազեղն. սա զմեծ մասն յընչից իւրոց տուեալ և ծառայս՝ անձինս բազումս, սահմանս հաստանէ նմա ժառանգութեան՝ ի ծովէն ընդ արեւելս մինչեւ ցգաշտ մի, ուր գետն Երասխ հատեալ զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խոխոմս ձիգս և նեղս, աշագին դընդընչմամբ իջանէ ի դաշտն: Ասա բնակեալ Սիսական՝ լնու չինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ, և զաշխարհն կոչէ իւրով անուամբ Սիւնիք. այլ Պարաք յսահակագոյն իսկ Սիսական կոչեն: Ի սորա ծննդոց աստ ոսրեմն վաղարշակ, որ առաջին ի Պարթեւաց արքայ Հայոց, գտեալ արս առնուանիս, տեառս աշխարհին կարգէ, որ է Սիսա-

1. Անկայտ է Փառոխի արի կոչուելու պատճառն. ոչ անուան վերջի տառն այլ հայկական չնորհք չուներ:

2. Հիմայ միջի կղզւոյն անուամբ՝ Սեւանայ ծով, որոյ արեւմտեան կողմն է լեռն ու գաւառն:

3. Պատմական փափագելի ատենդութիւն մի, որ գուշակէ Սիսակայ Կորովարան՝ այսինքն ճարտար խօսող կոչուիլն:

կանդ ազգ. և զայս առնէ վաղարշակ՝ ի պատմու-
թենէն սաւգեալ: Այլ այս թէ որպէս է՝ յիւրում
ժամու պատմեացուք[1]:

Բայց ինքն Գեղամ դառնայ անդրէն ի դաշտ
անդր. և առ ոտամբ նորին լերինն՝ ի ձորակի միում
ամրոյ՝ չինէ ձեռակերտ մի. և կոչէ զանուն նորա
Գեղամի, որ յետոյ ի Գառնիկայ թոռանէ նորա ա-
նուանեցաւ Գառնի: Ի սորա ծնընդոց՝ ասա ուրեմն
առ Աբրահամիս թոռամբ վաղարշակայ, ոմն վաթժ
անուն պատանի՝ լեալ աղօղ յորս եղկերուաց, այ-
ծեմանոյ և վարազուց, դիպաձգութեամբ[2] նետից
կորովի. զսա ի վերայ որսոց արքունեաց կարգէ,
և չէնս պարգեւէ նմա առ եզերբ գետոյն, որ ա-
նուանեալ կոչի Հրազդան[3]. և ի սմանէ ասեն
լինել զտունն Վաթաժնունեաց: Այս Գեղամ՝ որպէս
ասացաք, յետ ամաց[4] կենաց իւրոց ծնաւ զՀար-
մա. յետ որոյ և այլս եւս, և մեռաւ: Եւ հրա-
մայեաց որդւոյ իւրում Հարմայ բնակել Այրա-
ւիէր:...

Իսկ Հարմայ կեցեալ ամս՝ ծնաւ զԱրամ: Ար-
մայ բազում գործք քաջութեան պատմին մար-
տից նահատակութեան, և ընդարձակել զսահմանս
Հայոց յամենայն կողմանց. յորոյ անուն՝ և ամե-
նայն ազգք զաշխարհս մեր անուանեն. որպէս,
Յայնք՝ Արմեն, և Պարսիկք և Ասորիք՝ Արմենիք:
Բայց զընդարձակութիւն պատմութեան սորա և ըզ-
գործս քաջութեան, թէ զիարդ կամ որով ժամա-
նակաւ, թէ կամիցիս՝ արտաքոյ այսորիկ գրոցս կար-
գեսցուք, և կամ թողցուք, ապա թէ ոչ՝ ի սմին[5]:

1. Կամ տեղւոջ, տես Բ. ը:
2. Ուրիշ օրինակ գրած էր գեղեցկաձգուբեաւրբ:
3. Յայլազգեաց Ջենկի չայ կոչուի:
4. Չօա այլ պատմիչն փափագեր է գտնել Գեղամայ
տարիքին թիւը, ինչպես ուրիշներուն:
5. Կ'երեւի որ հեղինակն զայս գրելու առեն՝ գեռ
չէր որոշած թէ ինչ չափ տայ իր պատմագրութեան,
կարճ թէ աւելի ընդարձակ:

ԺԲ

Ա. ԲԱՄ

(Մ. Խորենն. Ա. ժգ)

Հաւանեցաք անցանել առակաւուք և ընդ կարգ
բանից պատերազմաց՝ որ ի հայկեանն Արամայ:
Սա այր աշխատասէր և հայրենասէր[1] եղեալ, որ-
պէս ցուցանէ նոյն պատմագիր[2], լաւ համարէր զմե-
ռանելն ի վերայ հայրենեացն՝ քան թէ տեսանել
զորդիս օտարածնաց՝ կոխկռտով զսահմանս հայրենիս,
և հարազատից արեան նորա՝ տիրել արանց օտա-
րածնաց:

Այս Արամ, առակաւուք ամօք յառաջ քան զծի-
րեղն Ninոսի՝ Ասորեստանեաց և Նինուէի, նեղեալ
յազգացն՝ որ չուրջ զիւրեաւ, ժողովէ զրազմու-
թիւն ընդանի արանց քաջաց և ազեղնաւորաց, և
որք ի տէգ նիզակի կամակարդք, նորատաք և
հարուստք[3] յոյժ, և ի յաղողաձեռնութիւն իսկ և
երեսաւորք[4], ի սիրտ և ի պատրաստութիւն պա-
տերազմի. իբր թէ բիւրս հինգ: Պատահէ Մե-
դացւոցն երիտասարդաց, որոց առաջնորդէր Նիւ-
քար[5] ոմն՝ ասացեալ Մադաս[6], այր հպարտ և
պատերազմասէր, որպէս ցուցանէ նոյն ինքն

1. Առաջին անգամն է ի մեր պատմութեան՝ որ
լսուի՝ այս պանծալի, այլ և նորափառ կոչուին՝ Հայ-
րենասէր:
2. Որ է նոյն ինքն Մար–Իբաս:
3. Ուժեղք, զօրաւորք:
4. Թուի ըսել՝ վայելուչ կերպարանօք:
5. Նիւքեր نوكر պարսկերէն նշանակէ պաշտօնեայ.
բայց և այս անուամբ թագաւոր մի յիշեն Պարսիկք:
6. Անշուշտ Մեդացի նշանակէ, որ է Մար:

պատմագիրն, յեզերս սահմանացն Հայոց: Որոց միանգամ քուչանաբար[1] հինիւ ամբակակոխ արաբեալ[2] զսահմանս Հայոց, ծառայեցոյց ամս երկուս: Որում յանկարծօրէն ի վերայ հասեալ Աբրամ՝ յաղաչ քան զծագել արեգականն, սատակեաց զրազմութիւն ամբոխիցն. և զնոյն ինքն զՆիւքարն կոչեցեալ Մադէս՝ ձերբակալ արարեալ՝ ածէ յԱրմաւիր. և անդ ուրեմն ի ծայրս աշտարակի պարսպին՝ ցից վարեալ երկաթի ընդ ճակատն՝ յորմն վարեալ հրամայէ, ի տեսիլ անցաւորաց և ամենայն եկելոց անդր[3]. և զաչխարհն նորա մինչեւ ցլեառն անուանեալ Զարասպ[4], ի ծառայութիւն հարկի կալաւ, մինչեւ ցթագաւորութիւնն Ներնոսի ի վերայ Ասորեստանի և Ներնուէի: Իսկ Ներնոս թագաւորեալ ի Ներնուէ, յիշատակ քինու զնախնոյն իւրոյ զԲելայ ունէր ի մտի, ի գրուցաց ուսեալ. և զայս խորհէր հատուցանել ցամս ձիգս. նկատել որպէս զյաղողութիւն աւուրց, բառնալ չնչել զամենայն ճետ սերմանեալ յարանց քաջին Հայկայ: Այլ երկիւղ կասկածանաց խարդաւանակ լինելոյ իւրոյ թագաւորութեանն՝ զայսպիսիս համարեալ իրագործութիւնս, ծածկէ զչարութիւնն. և հրամայէ նմա (Աբրամայ) զնոյն իշխանութիւն անկասկածաբար ունել, և համարձակութիւն տայ նմա

1. Բարբարոսք, Սկիւթացիք, հաւանօրէն Քամայ որդւոյ Քուշի անուամբ:

2. Մարք ձիերով կամ ձիու պէս կոխկրտեր էին Հայոց երկրին սահմանները: — Ձեռ 3000 տարիներու մէջէ այնպէս չէն ըներ անոնց յետաձիացքն՝ նա և այս մեր օրերուն:

3. Ինչպէս ըրաւ Հայկն Բելայ, նոյնպէս և սա իր թշնամւոյն. այն հին ժամանակներ այսպէս կ'ընեն երեր յաղթողք, թշնամիներն զամել կամ կախել տալով բարձր չէնքերու վրայ՝ որ ամենքն տեսնեն:

4. Մարաց մայրաքաղաքի Եկբատանի (Համատան) մօտերը համարուի այս լեռս, զուցէ հիմայ Էլվէնտ կոչուածն:

վարտակալ[1] ածել մարգարտէ, և երկրորդ նորա կոչիլ: Այլ այս չատասցի ասել այսչափ. քանզի չմոռացուցանէ զմեզ որ առաջիկայս է իր՝ յեզերսումն յամել այսր պատմութեան:

Կարգեսցուք գոյգն յիշատակօք բանից՝ և որ ինչ զկնի այսորիկ սորա գործք քաջութեան պատմի յարեւմուտս, ի նոյն մատենի, և որ ընդ Ասորեստանեայս կռիւն. զպատճառս և զզօրութիւն իրացն միայն յայտնելով, և զերկարաբութիւն գործոյն համառօտ բանիւ յանդիման կացուցանել[2]: Նոյն այս Աբրամ՝ յետ վճարելոյ ճակատոյն որ ընդ արեւելեայս, խաղայ նոյն գօրութեամբ զկողմամբք Ասորեստանի. գայնէ և անդ զոմն ապականիչ երկրին իւրոյ՝ չորիւք բիւրովք վառելովք հետեւակօք և հինգ հազար հեծելազօրու[3], Բարշամ[4] անուն, յազգէ սկայից. որոյ սատակագոյն նեղեալ հարկաց խստութեամբ՝ անեպատ զբովանդակ շրջակայն իւր առնէր: Սմա ճակատու պատերազմի ի գիմի հարեալ Աբրամ՝ հալածական ընդ մէջ կորդուաց ի գաշտն Ասորեստանի արկանէ, զբազումս ի նոցանէ սատակելով. իսկ Բարշամ առաջի գինակրացն նորա պատահեալ՝ մեռաւ: Եւ զայս Բարշամ՝ վասն արութեան իւրոյ բազում գործոց՝ սատուածացուցեալ պաշտեցին Ասորիք ժամանակս յոլով: Իսկ զմեծ մասն գաշտացն Ասորեստանի՝ կալաւ ի ծառայութեան հարկի Աբրամ՝ բազում ժամանակս:

1. Մինչեւ այնչափ հին է այս սովորութիւնս՝ արչափ պատմիչն ցուցընէ այս տեղ:

2. Եթէ զրուսոր պատմութեան աւանդութիւն ըլլայ և եթէ վիպասանութիւն, երեւի որ մեծ յիշատակներ թողած է Աբրամ ի Հայս:

3. Առաջին անգամ է մեր պատմութեան մէջ յիշատակ ձիաւորի:

4. Քսա լեզուի յիշեալ կաղմանց երկրին՝ այդ անունդ նշանակէ արդի արեգական, կամ Արեւորդի:

Այլ որ ինչ յարեւմուտս կոյս ընդ Տիտանեանցն է սորա գործ քաջութեան, ասել կայ մեզ առաջի: Ասա յարեւմուտս չարժեալ ի վերայ առաջնոյն, չորիւք բիւրու հետեւակաւ զօրու և երկու հազար հեծելովք, հասանէ ի կողմանս Կապպադովկացւոց, ի տեղի մի՝ որ այժմ ասի Կեսարիա: Եւ քանզի զարեւելեայն և զհարաւային նուաճեալ՝ ի ձեռն յանձնեալ էր երկուց ցեղից այսոցիկ, Միսացկեանցն[1] զարեւելս, և որք ի Կազմեայ տանէն՝ զԱսորեստանին, ոչ ինչ այնուհետեւ կասկած չիւթից ուսուեալք ունէր:

Վասն որոյ յերկարեալ ժամանակս լինել յարեւմուտս, պատահէ նմա Պայապիս Քաղեայ[2] տիտանեան՝ պատերազմաւ, որ բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց, զՊոնդոսն և զՎկիանոս[3]: Որում ի դիմի հարեալ՝ վանէ, փախուցտական արկանելով ի կղզի ինչ ասիական ծովուն: Եւ ինքն թողեալ զոմն Մշակ անուն՝ յապգէ յիւրմէ, և բիւր մի ի զօրաց իւրոց ի վերայ աշխարհին, ինքն գառնայ ի Հայս: Բայց հրամայն տայ բնակչաց աշխարհին ուսանել զիւսս և զչեզուս հայկականի[4]. վասն որոյ մինչեւ ցայսօր ժամանակի անուանեն զԿլիմայն զայն՝ Պառտին Արեւելեան[5], որ թարգմանի Առաջին Հայք: Եւ զդաստակերան՝ զոր չինեաց յանուն իւր Մշակ կողմնապետան Արամայ՝ փոքրա-

1. Միւնեաց երկրին նահապետաց:

2. Անծանօթ անձն, թէ պատմական ըլլայ թէ առասպել. Խորէն. յիշէ իբր Նինոսի պապ Քայաղ մի, որոյ մեծ պապն այլ Քաւ կոչուի. երկու անուանքն եւս այլեւայլ կերպ հնչմամբ՝ նման են այս տեղ յիշուած երկու անուանց:

3. Միջերկրական ծովն:

4. Վերսյիշեալ Հայրենասիրութեանն հետեւանք է:

5. Πρότη Αρμενία. արդարեւ այդ կողմերն՝ դարերով յետ Փրիաոսի այլ այսպէս անուանէին. ինչպէս և մեր Շարականն երգէ.

«Ի կեսարիա՝ Հայքն Առաջին»:

գունիւք պարսպեալ որմովք, անուանէին հինք աշխարհին՝ Մաժակ, որպէս ոչ կարելով ուղղախօսել[1], մինչեւ յետոյ յոմանց ընդարձակագոյն չինեալ՝ անուանեցաւ Կեսարիա: Ըստ նմին օրինակի, ի տեղացն այնոցիկ մինչեւ ցլուն իւր սահմանան, զրաւում անբնակ երկիր ելից բնակչօք, որք Երկրորդ և Երրորդ անուանեցան Հայք[2], այլ և Չորրորդ: Այս է առաջին և ճշմարիտ պատճառն վասն անուանելոյ զարեւմտեան մեր կողմն Առաջին և Երկրորդ, այլ և Երրորդ և Չորրորդ Հայք: Իսկ որ այլ ի յոմանց ասի ի յունական կողմանն[3], մեզ ոչ է հաճոյ, այլոց որչափ կամք իցեն:

Արդ, այսպէս հզօր և անուանի եղեալ, յանուն սորա մինչեւ ցայսօր, որպէս ամենեցուն յայտնի է, որ չուրջ զմեզ ազգք՝ զաշխարհս մեր անուանեն: Բազում և այլ գործք քաջութեան ի սմանէ գտանին կատարեալ, այլ մեզ բաւական լիցի ասացեալս:

Բայց, թէ ընդէր այսոքիկ ի բուն մատեանս թագաւորացն կամ մեհենից՝ ոչ յիշատակեցան, մի ոք ընդ այս երկրայացեալ տարակուսեսցի: Մի, զի յառաջ քան զՆինոսի ժամանակս թագաւորութեան է, յորում ոչ ոք այսպիսի իրաց փոյթ յանձին ունէր. երկրորդ, զի ոչ հարկ ինչ և ոչ պէտք կարեւորք էին նոցա՝ զազգաց օտարաց և զաշխարհաց ի բացեայ, և զհամբաւս հինս և զզրոյցս նախնականս՝ յիւրեանց թագաւորաց կամ մեհենից մատեանս գրել. մանաւանդ զի և ոչ պարծանք ինչ

1. Յայնք ժ զիր չունենալով, թլուսաս լեզուով Մազակա Μάζακα, կ՚անուանեն, յորմէ Մաժաք:

2. Ա, Բ և Գ Հայք՝ բուն Մեծ Հայաստանէն գուրս են, յարեւմտակողմն, իսկ Դ Հայք Մեծ Հայոց նահանգ մի է, որ և Ծոփք կոչուի:

3. Այսինքն, Բիւզանդիոյ կայսերք ուրիշ կերպով Ա, Բ, և այլն, բաժնեցին այս փոքր Հայոց կողմերը, որոյ չի հաւանիր մեր պատմիչն:

նոցա և կամ բարգաւաճանք՝ օտար ազգաց քաջութիւն և գործք սրութեան[1]: Բայց, թէպէտ և ոչ ի բուն մատեանն, սակայն որպէս Մար–Աբաս Կատինայ պատմէ, ի փոքունց ամանց և յանկնա-նից սրանց ի գուսանականէն այս գաւանի ժողովեալ՝ ի գիւանի արքունեաց: Աս և այլ իմն պատճառս նոյն այր. թէ, որպէս ուսայ՝ հպարտ և անձնասէր գոլ Նինոս, կամելով զինքն միայն աշխարհակալութեան և ամենայն քաջութեան և լաւութեան ցուցանել սկիզբն, հրամայէ զրագրել մատեանս և զզրոյցս առաջնոցն՝ ըստ տեղեաց տեղեաց և ուրուք ուրուք գործոց քաջութեանց՝ այրել[2], իսկ որ առ իւրովք ժամանակաք՝ դադարեցուցանել, և որ ինչ վասն իւր միայնոյ՝ գրել: Աչ զայս աւելորդ եղեւ մեզ երկրորդել: Բայց Աբրամ յետ[3] ամի կենաց իւրոց ծնաւ զԱբրայն. զկնի որոց և այլս բազումս կեցեալ ամաց, մեռաւ:

1. Այս խօսքերով Խորեն. կ'ուզէ ըսել, թէ օտար ազգաց փայլի չէր գրել մեր քաջերուն պատմութիւնը. մանաւանդ թէ կ'ամաչէին գրել իրենց յաղթութիւը. բայց վիպասաններ և ռամիկ երգահանք պահեցին և հասուցին մեզ այս յիշատակներս:

2. Շատ զարմանալի էր, եթէ սոյդ ըլլար Նինոսէ առաջ և իր առեն պատմագրողներ գոյութիւն:

3. Այս տեղ այլ և յետոյ, որպէս և առաջ՝ պատկառ տարիքին թիւը ըսել է թէ գոնէ աւանդութեամբ յիշուէր, կամ Խորենացին յուսայր գոնել զայն:

ԺԹ

ԱՐԱՅՆ ԳԵՂԵՑԻԿ

(Ա. Խորեն. Ա. ԺԸ)

Աբա՝ սակաւ ամօք յառաջ քան զվախճանիլն Նինոսի՝ խնամակալեաց իւրոց հայրենեացն, նոյնպիսում չնորհի արժանացեալ ի Նինոսէ՝ որպէս և հայրն իւր Աբրամ: Բայց վաւաչն այն և բորբոքիտոնն[1] Շամիրամ՝ ի բազում ամաց լուեալ զգեղեցկութենէ նորա, ցանկայր հաւանել[2]. այլ ոչ ինչ յայտնապէս զայսպիսիս իշխէր գործել[3]: Իսկ յետ վախճանելոյն կամ փախստական լինելոյ Նինոսի ի Կրիտէ, որպէս հաւանեալ եմ, համարձակ պատուելով Շամիրամայ գախան, առաքէ հրեշտակս առ Աբրայն Գեղեցիկ, ընծայիւք և պատարագօք, բազում ազաչանօք խոստմամբ պարգեւաց, գալ առ նա ի Նինուէ, կամ առնուլ ի կնութեան և թագաւորել ի վերայ ամենայնի՝ որոց տիրէր և Նինոս. և կամ կատարել զկամս ցանկութեան նորա և գառնալ մեծաւ պարգեւօք և խաղաղութեամբ ի տեղի իւր:

Եւ ի բազում անգամ երթեւեկութիւն հրեշտակագնացութեանն լինելոյ, և ոչ հաւանել Աբրայի, ի սաստիկ ցասման լեալ Շամիրամայ, ի վախճանել պատգամաւորութեանն՝ առնու զրազմութիւն զօրաց իւրոց, և փութայ երթալ հասանել յերկիրն Հայոց, ի վերայ Աբրայի: Բայց որչափ դիմաց էր

1. Յայն բառ Βορβορώδην, պիղծ, գարշելի, որովայնապաշտ:

2. Ուրիշ օրինակի մէջ գրուած է՝ տեսանել:

3. Յայտնի վիպասանական աւանդութիւն. այլ միթէ չէ՞ ծագած որ և է սուտգութենէ:

նշանակել[1], ոչ այնչափ ինչ ի սպանանել զնա և ի հալածել փութայր, քան թէ ի նուաճել կամ զբռամբ ածել, զի լցցէ զկամս ցանկութեան իւրոյ. զի առ յոյժ ցանկականի մոլեգնութեան, ի բանն՝ որ զնմանէ՝ որպէս ի տեսութիւն շամչութեամբ[2] վառեալ էր:

Գայ հասանէ տագնապաւ ի Գաշտն Ա֊րայի, որ և յանուն նորա անուանեալ Ա֊յրարատ[3]: Եւ ի լինելն ճակատուն՝ պատուէր տայր զօրապետաց իւրոց, թէ դէպ լինիցի՝ հնարել սպրեցուցանել զԱ֊րայն: Իսկ ի լինել մարտին՝ հարկանի զօրն Ա֊րայի. մեռանի Ա֊րա ի պատերազմին՝ ի մանկանցն Շամիրամայ: Դիակապուսս առաքէ սրիկինն՝ յետ յաղթութեանն՝ ի տեղի ճակատուն, խնդրել ի մէջ դիականց անկելոց զըղձալին իւր և զտաբփածուն: Գտանեն զԱ֊րայն մեռեալ ի մէջ քաջամարտիկացն. և հրամայէ դնել զնա ի վերատանն[4] ապարանից: Իսկ ի զրգռել միւսանգամ զօրացն Հայոց ի մարտ պատերազմի՝ ընդ սրիկնոջն Շամիրամայ, քինախնդիր լինել մահուան Ա֊րայի, ասէ. Հրամայեցի աստուածոցն իմոց[5] լեզուլ զվէրս նորա, և կենդանասցի: Միանգամայն և ակն ունէր դիւթութեամբ վհկութեան իւրոյ կենդանացուցանել զԱ֊րա, ցնորեալ ի տափական ցանկութենէ: Իսկ իրրեւ նեխեցաւ դի նորա, հրամայեաց ընկենուլ ի վիհ մեծ և ծածկել. զմի ոմն ի հռամանեաց իւրոց

1. Ինչ որ կ'երեւէր, գուշակուէր:

2. Կամ շամբշռութիւն, ի շամբռուշ բառէ, որ է մալի, ազաւղի:

3. Ոմանք առասպանած են զանունս Ա֊րայի արտ. այլք՝ յերանից յերինից, և այլք՝ պէսպէս. հետաքննողք կըրնան դանել Ս. Գրոց մեկնութեանց կամ բառգրոց մէջ՝ զկարծիս գիտնոց և տգիտաց:

4. Կամ ի վերայ տանն, կամ վերնատանն:

5. Ո՛վ յիմարուհի, ինչ աստուածք են՝ որոց դու հրամայես:

զարգարեալ ունելով ի ծածուկ, համբաւէ զնմանէ այսպէս. Լիցեալ աստուածոցն զԱ֊րա և կենդանացուցեալ՝ լցին զփափագ մեր և զհեշտութիւն. վասն որոյ առաւել յայսմ հետէ պաշտելիք են ի մէնջ և փառաւորեալք, իբրեւ հեշտացուցիչք և կամատարք[1]: Կանգնէ և նոր իմն պատկեր յանուն դիւաց, և մեծապէս զոհիւք պատուէ. ցուցանելով ամենեցուն, իբր թէ այս զօրութիւն աստուածոցն կենդանացուցին զԱ֊րայ. և այսպէս համբաւեալ զնմանէ ի վերայ երկրիս Հայոց, և հաւանեցուցեալ զամենեսեան, դադարեցոյց զթագմն:

Եւ որ ինչ յաղագս Ա֊րայի՝ կարճառօտիւ և այսչափ շատ լիցի յիշատակել: Սա կեցեալ ամս... ծնաւ զԿարդոս:

ԺԴ

ՇԱՄԻՐԱՄԱԿԵՐՏ

(ՐՐ. ԽՈՐԵՆ. Ա. ԺԶ)

Իսկ զկնի այսպիսեաց իրաց աչողութեանց՝ դադարեալ Շամիրամայ աւուրս ինչ սակաւս ի դաշտին, որ անուանեալ կոչի յանուն Ա֊րայի՝ Ա֊յրարատ, ելանէ ի լեառնակողմանս երկրին հարաւակողմանն, քանզի ժամանակ ամառնային էր, զբօսնուլ կամելով ի հովիտս և ի դաշտս ծաղկաւէտս: Եւ տեսեալ զդեղեցկութիւն երկրին և զօդոցն մա-

1. Ծանօթ է Ա֊րաւիզի կամ Քարաւիզի աւանդութիւնն, իբրեւ զԱ֊րայն լզող չունք կամ ուրիշ կենդանիք, և ըստ Շամիրամայ՝ իրեն վայել աստուածք: — Զարմանք է որ Հայք պատրաստուած վրէժ խնդրելու Ա֊րայի մահուան, Շամիրամայ սուտ խօսքով հաւատան Ա֊րայի աղջննալուն. և ինչո՞ւ չեն ուզեր տեսնել և զարձընել իր տեղը:

քրութիւն, և զաղթերացն յատակագոյն բղխմունս, և զկարկաչասահանութիւն գետոց բարեգնացից. Պարտ է մեզ, ասէ, յայսպիսում բարեխառնութեան օդոց և մաքրութեան ջուրց և երկրի, քաղաք և արքունիս չինել բնակութեան, որպէս զի գլորդոդ մասն ի բոլորմանէ տարւոյն, որ է ամառնային եղանակ, ըստ ամենայն բարեվայելչութեան անցուցանեմք ի Հայս. և զայլն եւս երիս որոշմունս օդոցն[1] զովութեան տածեցեմք ի Նինուէ:

Եւ անցեալ ընդ բազումս ի տեղեաց, գայ հասանէ յարեւելից կողմանէ յեզր ծովակին աղւոյ[2]. և տեսեալ առ եզերբ ծովուն երկայնաձեւ բլուր մի, որոյ ներսն երկայնութեանն ի մուտս կոյս ածրեգականդ՝ սակաւ ինչ առ ի կողեալ ի հիւսիսոյ. իսկ ի մէջօրէ կողմանէ՝ դէպ ուղիղ առ երկին հայելով, քարանձաւ կանգուն անչեղ. և ի սմանէ զհարաւով բացագոյն հովիտ իմն գաշտաձեւ երկայնաձիգ, և յարեւելից կողմանէ լերինն՝ իջանելով յեզր ծովուն ընդարձակ և գեղեցիկ ձորաձեւ. որոց ընդ մէջն հոսանք ջուրց բարեհամաց՝ ի լեռնէն իջանելով, ի ծործորոց և ի հովտաց ծորեալք, և ի հիմանց փեղկից լերանց միաւորեալք[3], ի ծաւալումն գետոց պերճանային. և չէնք ոչ սակաւք ի հովտաձեւ ձորակին, յաջմէ և յահեկէ ջուրց յօրինեալք. ի յարեւելից կողմանէ հանեցեալ բլոյն լեառն մի փոքրագոյն:

Աստ իմն ակնկառոյց լեալ այրասիրան և կաթուն Շամիրամ, հրաման տայ բիւրուց և երկու հազար (12,000) արանց անարուեստից գործաւորաց յԱսորեստանեաց և յայլոց իշխեցելոց, և վեց հարիւրոց[4] ընտրելոց յամենայն արուեստաւոր գործ-

1. Ա յսինքն, գարուն, աշուն և ձմեռն:
2. Որ է ծովն Վանայ կամ Բզնունեաց:
3. Լերանց վարի կողմերն՝ ուր անկիւն ձեւացընեն, երկու կամ աւելի բաժնուած:
4. Սկսալ է ուրիշ օրինակաց գրածն վեց հազար իշխաց կամ բիւրոց:

ծաւորաց քարի և փայտի, պղնձոյ և երկաթոյ, ոլք ամենեքին կատարեալք իցեն ի յարուեստագիտութեան, ածել անխափան ի փափագեալ տեղին: Եւ գործն հաւասար հրամանին առնոյր զկատարումն. և վազվազակի ածեալ լինէին բազմութիւն խառնիճաղանճ գործաւորացն և բազմարուեստից հանճարեղաց իմաստնոցն: Եւ հրամայէ նախ զամբարտակ գետոյն ապառաժիւք և մեծամեծ վիմօք շինել[1], կրով և աւազով մածուցեալս, անբաւ լայնութեամբ և բարձրութեամբ. որ կայ հաստատուն, որպէս ասեն, մինչեւ ցայսօր ժամանակի: Եւ ի պատառուածս նոյն ամբարտակի գետոյն՝ այժմ, որպէս լսեմք, մարդիկ ի հէն և ի գաղթականս՝ փախստեամբ ամրանան, իբր ի ծայրս քարանձաւաց լերանց ամրացեալք: Եւ թէ զփարձ առնուլ դէպ ուներ՝ չինէցի, և ոչ իբր պարսատկաց քար մի արժանաւոր՝ ի չինուածոյ ամբարտակին խլել ոք զօրեսցէ, թէ և մեծաւ աշխատութեամբ չնայցէ: Եւ ի հեղուածս արուեստին՝ որ զքարամբք հայեցեալ ուրուք, որպէս ճարպոյ ինչ հեղման հայեցուածն երեւեցուցանէ կարծիս[2]: Եւ այսպէս ընդ բազում առպարէզս անցուցեալ զամբարտակն, հասուցանէ ի նկատեալ տեղի քաղաքին:

Անդ հրամայէ զամբոխն ի բազում դասս որոշել. և ի վերայ իւրաքանչիւրոց դասուց ընտիրս ի ճարտարաց վարդապետս կարգել. և այսպէս ի սահմանի ճգնութեան պահեալ, յետ սակաւ ամաց կատարել զհրաշալին ամրագունիւք պարսպօք, հանդերձ դրամբք պղնձակերտիւք: Շինէ և ընտիր ընտիրս և բազում ի մէջ քաղաքին ապարանս՝ ի պէս

1. Վանայ գետակին եզերքը քարայատակ չինել տուեր է, իբրեւ ամրութիւն և քայլելի. բայց այս չէնքիս հիմայ նշան չերեւիր:
2. Քարերն այնպէս իրարու կպած միակերպ երեւնային, ինչպէս թէ ըոլոր չէնքին երեսն ողորկած և եղի պէս հալած կամ եղով ծեփած ըլլար:

պէս քարանց և ի գունից զարդարեալս, կրկնայարկս և եռայարկս. և ըստ պատեհի իւրաքանչիւր՝ արեգակնակս[1], և գեղեցիկ գունիւք և ընդարձակ փողոցիւք՝ զկողմանս քաղաքին որչելով: Շինէ և զքաղաղս ամանս և զզարմանալոյ արժանաւորս ըստ պիտոյից՝ ի միջոցս քաղաքին՝ լուալիս: Եւ զմասն ինչ գետոյն ընդ մէջ քաղաքին բաշխեալ՝ գնացուցանէր ի պէտս ամենայն պիտոյից, և յարբուցմունս բուրաստանաց և ծաղկոցաց. և զայլն՝ զերդր ծովակին յաջմէ և յահեկէ քաղաքին և բազմադակ չրջակային յարբուցումն: Եւ զամենայն արեւելեան և զհիւսիսային և զհարաւային կողմանս քաղաքին՝ զարդարէ դասաւակերտօք, և սաղարթիւք ծառոց վարսաւորաց, զանազանեալք ի պտուղս և ի տերեւս. և բազում բազմաբերս և զինէբերս ի նմա անկեաց հովիտս[2]: Եւ ամենայնիւ հոյակապ և հռչակաւոր զպարսպեալն յօրինէր. և անթիւ բազմութիւն մարդկան ի ներքս բնակեցուցանէ:

Իսկ զծայր քաղաքին և որ ինչ ի նմանէ գործոյ հրաշակերտութիւնք, բազմաց ի մարդկանէ ոչ հասու լեալ և ոչ պատմել է կարողութիւն: Զորոյ պարսպեալ զգագաթն՝ զժուարամուտս ամանս[3] և զժոխելանելս ի նմա յօրինէ չինուածս արքայանիստս և ծածուկս իմն ահագինս: Որոյ որպիսութիւն դրութեանն յօրինուածոյ ոչ ի լսելիս մեր հասեալ ճշմարտութեամբ յուսեքէ, և ոչ մեք ի պատմութիւնս հիւսել հաւանիմք. այլ ասեմք միայն, թէ ամենայն թագաւորականաց գործոց, որպէս լուաք, առաջին և վեհագոյն համարեալ. Իսկ զընդդէմ

1. Երեսաբաց, արեւ տեսնող չէնք. (կիւրեղչիկ ըստ թուրքաց):

2. Պաղոց պարտէզ և այգիներ:

3. Կայ ձեռագիրը սուր գրուած է ժժռռարաւռռու առնաանս: — Յետ իբր 3 կամ 4000 տարիներու՝ մեր օրերում այսպիսի փորուածոց հետք կու գտուին:

արեգական կողմն անձուկն, որ և ոչ գիծ մի երկաթոյ այժմ ոք վերագրել կարէ, զայսպիսի կարծրութիւն նիւթոյ՝ պէս պէս տաճարս և տեղեակս օթից և տունս գանձուց և վիհս յերկարս, ոչ գիտէ ոք՝ թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտաց[1]: Իսկ զամենայն երեսս քարին իբր գրչաւ զմամ հարթեալ, բազում գիրս ի նմա գրեաց. որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ: Եւ ոչ այս միայն, այլ և ի բազում տեղիս աշխարհին Հայոց՝ արձանս հաստատեալ նովին գրով յիշատակ ինչ հրամայէ գրել. և ի բազում տեղիս տահմանս նովին գրով հաստատէր[2]:

Այդ, որ ինչ յազգս Շամիրամայ գործոց որ ի Հայս, տասցեալ է:

1. Նայնպէս մինչեւ հիմայ կան և երեւին այդ փորուած և կոկած քարայրք. բայց չի գիտցուիր ինչ բանի համար չինուած են: Թուցա մէկն համարելու է և հիմայ Մհէների դուռն կոչուածն ի ռամկաց և առասպելուել:

2. Առաջին և գեղեցիկ վկայութիւն թուեռագիր կամ սեպագիր կոչուած գրութեանց, որոց վրայ շատ աշխատողք կան կարդալու. զամանս Ասորեստանի թագաւորաց գրուած համարին, զամանս յատուկ Հայ թագաւորի, կամ Արտաշեան կամ ուրիշ անուամբ ազգի: Շամիրամայ անուն կամ նշան չկայ քնաւ և յուսալի ալ չէ: Գիտնականքն ոչ այնքան հին՝ իբր 2000 տարիներու, այլ 1000 տարուան համարին Ն. Փ: Բայց, թէ հիմակուան Հայաստան ազգի նախնիք չկան եղեր այն գրութեանց տաեն, ինչպէս հետաքրքրդք ոմանք կամ չատք կ'ըսեն, այս խորհուրդ զարմանքէն աւելի զարմանալի է:

ԺԵ

ՊԱՐՈՅՐ. ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ

(Մ. ԽՈՐԵՆ. Ա. ԺԴ)

Վերջին սոցա (նահապետաց Հայոց) որք առ Աւորեստանեաց թագաւորութեամբն, և որք ի Շամիրամայ կամ թէ ի Նինոսէ, զմերն ասեմ Պարոյր[1] առ Սարդապաղու: Սա՝ ոչ փոքր ինչ օգնականութիւն գտեալ ի վարչակայ Մարէ, բառնալով զթագաւորութիւնն ի Սարդանապաղայ:

Եւ այժմ ահա զուարճացայց՝ ոչ փոքր ինչ կրեալով խնդութիւն, հասանելով ի տեղիս մերում իսկ բնկի նախնւոյն, յորում՝ սերունդք՝ թագաւորութեան հասանեն յաստիճան: Վասն որոյ արժան է մեզ աստանօր մեծ գործ կատարել, և բազումս ասել առարկութիւնս ճառից. զորոց մեզէն իսկ հիմունս այսպիսեաց բանից ընթեռնուլ արժանաւորեցաք, ի չորս Հագիներգոչիւնս, զարգասաւորին ի բանս և զիմաստնոյն իսկ և զ'ի մէջ իմաստնոցն իմաստագուռնի[2]:

Քանզի Վարբակէս՝ գաւառաւ մեդացի, ի փոքուէ կոզմանց ծագաց գաւառին ամրագունեի, խո-

1. Իբրեւ հասարակ անուն՝ Պարոյր, պարռոյրել, նշանակէ՝ ամէն կողմէ ժողոված, պլլած, բղխրած:

2. Շատ փափագելի էր գոնէ գիտնալ, թէ ո՛վ էր այդ իմաստնոց իմաստնագոյնն, որ հաւանօրէն համերանման չորս մասն վիպասանական երգեր գրած էր, Վարբակայ և Պարոյրի միաբան յաղթութեանն ի վերայ Աւորեստանեայց. գուցէ Դաւիթն այն (նոյնպէս անծանօթ), որ այսպիսի գործոյ հեղինակ կ'անուանի՝ մեր հին Քերականի մեկնութեանց մէջ: Խորենացին այլ տեղ (Ա. զ) Դաւիթ փիլիսոփայ մի՝ հմուտ հին աւանդութեանց, որ թուի ուրիշ Անյաղթն Դաւիթ:

բամանկագոյն ի կենցաղավարութեան և ի մարտն երեսաւոր[1], ծանուցեալ զանմարդի բարս և հեշտասէր թուլամտութիւն յուլութեան Թոնոյն Կոնկողիոյ[2], խաւացուցանէ բարուցն և ձեռացն առատութեամբ՝ ի քաջացն և ի պիտանեաց արանց՝ բարեկամս. որով և աչխարհակալութիւնն Աւորեստանի՝ առ այնու ժամանակաւ վարիւր յայտնապէս մեծաւ հաստատութեամբ: Ցինքն և զքաջն մեր նախարար յանդուգնանէ զՊարոյր, թագաւորութեան ձեւ և չուք խոստանալով նմա. և բազմամբոխ յարի արանց, և որ ի տէգ նիզակի և յաղեղն և ի սուսեր աղողաձեռք: Եւ այսպէս զթագաւորութիւնն ի Սարդանապալայ յինքն առեալ՝ տիրէ Աւորեստանի և Նինուէի[3]. բայց այլ վերակացուս կարգեալ Աւորեստանի, փոխէ զթագաւորութիւնն ի Մարս:

Այլ այս եթէ առ այլս այլազգաբար պատմի, մի ինչ աքանչանար. զի որպէս վերագոյն ուրեմն յառաջին ճառն ամբաստանեցաք՝ զառաջին նախնեացն մերոց անխմաստասէր բարուց ախորժակս, այս հանդիպի և աստանօր: Քանզի և որք ի հօրէն Նարուգոդոնոսորայ գործք՝ գրեցան յիբրեանցն յիշողութեանցն վերակացուաց[4]. իսկ մերոցն ոչ այսպիսի ինչ խորհեցեալոցն, միացին[5] նշանակեալ

1. Թուի յաջող բաղդաւոր, քաջանշան:

2. Խորենացւոյ չատ օրինակաց մէջ գրուած է թուղոյն, իբր թէ Սարդանաբաղ թոյլ վատ մարդ էր. բայց հաւանական է որ իր յուներէն անունն ըլլայ, Տուլվելով Թոնոյն Կոնկողոռոյ:

3. Այս Մարաց և Հայոց ազատ իշխանութիւնն և թագաւորութիւնն ինչ կերպով այլ եղած ըլլայ, քիչ աւելի կամ պակաս՝ Քրիստոսէ 700 տարի առաջ եղած է:

4. Թագաւորաց գործոց յիշատակները գրուած իբրեւ ժամանակագիրք:

5. Թերեւս պէտք էր կարդալ, « Մնաց աննշանակեալ ». մեր թագաւորաց գործերն աննշանակ եղան

ի վերջինն: Այս եթէ ասիցեն, ուստի՞ մեզ և զնախնեացն մերոց բազմայ այսպէս գտանել զանուանս և զգործս, ասեմ. ի հնոցն դիւանաց Քաղդէացւոց, Ասորեստանեաց և Պարսից, վասն մտելոց անուանց և գործոց նոցա ի քարտէս արքունի, իբր գործակալաց և վերակացուաց աշխարհիս ի նոցանէ կացելոց, և մեծաց կողմնակալաց:

ԺԶ

ԹԱՐԴԱԽԱՆՔ ԲԱԽԱՐԴԱՆԱՅ

(ԹՈՒՂԹՔ ԳՐ· ՄԱԳԻՍՏՐՈՍԻ)

Բաւարդան ոմն (ի կողման) արեւելեան հարաւային կալով պետութեանն Մարաց, ի ժամանակին վաթսակայ, խոստանայր նմա յաղագս քոհականն[1] լեռնայնոցն, հանդերձ զօրու նորա՝ ասպատակել և յափշտակել զամրացն. կարծիս կասկածանաց կալեալ, իբրու թէ յաղագս մահանայ նախատան ելուզակութեամբ[2] արշաւանացն՝ որ ի Մարս՝ ի նմանէն եղեալ: Իսկ զի նա ի չերմակեան գետնի[3] ապաստժի բնակէր, գուցէ ի ցնորս ինչ ցնդեալ, անկոյս ի ձեռն լեռնականացն քոհական, և ինքն հաղոպրեսցի ի յայսպիսի փորձութեանց: Աւրդ, առեալ զզօրս Մարաց՝ չոգաւ ի վերայ Փո-

իբենց յետնոց. իսկ միւսգեալն գտաւած է այն արեւելեան ինքնակալութեանց դիւանաց մէջ, որոց՝ քիչ շատ հպատակ համարէին Հայք: Այս է Խորենացւոյ ըսածն:

1. Քոհականն՝ լեռնական նշանակէ ըստ հին պարսիկ լեզուի: — Հետաքննելի է Մագիստրոսի այս պատմութեան ազբիւրն. զոր ինքն իր սովորական խրթին աճով աւանդէ, և գժուար է առուգելն:

2. Աւազակութիւն, աւարառութիւն:

3. Ի ձեռագրին՝ գետի գրուած էր:

հականացն[1], և ապղեալ ի ծածուկ՝ պատրաստէ զնոսա յերդ անձուկ ձորակին. և յայսպիսի խաղախ[2] ծպտեալ՝ և ի ծերպս անձաւին մուծանէր. և նշանակի արարեալ զոր յառաջ զգուշացուցեալ էր, արկանէր[3] զնոսա, մնայր ինքն կենդանի, զոր և զկնի հասուցանէր նմա զպարտիսն: Քանզի սա անկեալ ի ձեռն Մարիկ կոչեցեալ խորհրդակցի արքային, զկնի անցեալ ժամանակաց, և յաղագս այսպիսի մահանաց նենգութեան ընդվզեալ՝ մեռուցանէր զնա. և առ նոյն ինքն եկն գետոյն Գարմիան[4] կոչեցեալ՝ հանդէպ ապարանից նորին՝ կաշկառեալ վիմօք ի տեսիլ անցաւորաց թողեալ զնա:

ԺԷ

ՏԻԳՐԱՆ ԵՐՈՒԱՆԴԵԱՆ ՀԱՅԿԱԶՆ

(Մ· ԽՈՐԵՆ· Ա· ԻԴ)

Անցցուք այսուհետեւ և որ ինչ յաղագս Տիգրանայ, և որ ի նմանէ գործք: Քանզի սա ամենեցունց թագաւորացն մերոց հարատագոյն և խոհեմագոյն, և արանց այնոցիկ և ամենեցուն քաջ: Որ և Կիւրոսի աշակերտել՝ զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն. և զՅոյնս՝ ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեւ նուաճեալ[5] հնազանդէր: Եւ զահմանն մերոյ բնակութեանս ընդարձակեալ՝ ի

1. Ինչուան հիմայ Պարսից ազբութեան մէկ աշխարհն կամ նահանգն կոչուի Քռհիստան:

2. Այս բառս՝ որ ի բառգիրս չէ մտած, երեւի գաղտուկ կամ կոշտ տեղ նշանակէ, որ և կրնայ խաղտիք երկրին (Պանտոսի կողմանց) նշմար ըլլալ:

3. Թերեւս պէտք էր գրել հարկաւեր:

4. Այս անուամբ՝ կերմիան՝ կոչուի և հիմայ գետն:

5. Անշուշտ Փոքր Հայոց կողմերը բնակող Յոյներն:

հինան մեր հասուցանէ յեզերս ծայրից բնակու-
թեանց. և ամենեցունց՝ որ առ իւրովքն էին ժա-
մանակաւք՝ նախանձելի, և յետնոցս ըղձալի ինքն
և ժամանակ իւր[1]: Զի ո՞ ոք ի ճշմարիտ արանց,
և որոց ի բարս՝ արուեստից և խոհականութեան
սիրելութիւն կայցէ, սորա յիշատակաւքն ոչ զուար-
ճասցի, և յորդորիցի այսպիսի այր լինել: Ապանց
կացեալ գլուխ, և արուեստիւն ցուցեալ, զազգս մեր
բարձրացոյց. և գ'ընդ լծով կացեալս՝ լծադիրս և
հարկապահանջս կացոյց բազմաց. մեծս ոսկւով և
արծաթով և քարանց պատուականաց և զգեստուց
և պէսպէս գունոց և անգուածոց՝ արանց հասա-
կաց և կանանց միանգամայն՝ բազմացոյց. որով՝
տգեղագոյնքն իբրեւ զգեղաւորս երեւէին աքանչե-
լիք, և գեղաւորքն ըստ ժամանակին առհասարակ
պիւցաղնացեալք: Հեռեւականարարքն՝ ի վերայ ու-
սոց ձիոց բերեալք, և պարսաւորքն՝ առհասարակ
դիպազեղունք, և չերտաւորքն՝ ի սուսեր և ի տէգ
նիզակի վառեալք[2]. մերկքն՝ վահանօք և զգեստիւք
երկաթով պարածածկեալք: Որոց ի մի վայր հա-
սելոց՝ բաւական էր տեսիլն միայն, և որ ի նո-
ցայցն պահպանակաց[3] և գինուց փայլմունք և չո-
րունք՝ զիշնամիսն արտահալածել: Խաղաղութեան
և չինութեան բերող, իւղով և մեղու գհասակս
ամենեցուն պարարեալ:

Զայս և որ այլ այսպիսիք բազումք՝ երեր մերոյ

1. Այս և վերը գրած գովեստքն՝ անշուշտ առ-
նուած են Հայոց վիպասաններէն. զորս՝ նար սեով
և կերպով յարմարցընելով, կամ վերոյիշեալն կամ
ուրիշ Դաւիթ անի, գրեր և կուշեր է Պատերազմն
Հայոց ևս Մարաց. Կիւրոսի փառքը սեփականելով
իր ազգային Հայ դիւցազնին: Այդ զրուածէն հոգիս
մի երկու տող յիշեն մեր հին մեկնիչք Քերականի:

2. Տապար կամ կացին՝ փայտ կտրելու գործիք
բանեցընողքն՝ սուր ու նիզակ գործածել սկըսին:

3. Մեռաղէ թիթեղներով կամ թելերով կազմած
զրահք, մարմինը պաշտպանելու համար:

աշխարհիս, խարտեաշս այս[1] և աղեղնակ ծայրիւ հե-
րաց Երուանդեանս[2] Տիգրան, երեսաք գունեաւն և
մեղուակն, աւնձնեայն, և բիկնաւեան, առոյգաբարձն
և գեղեցկատես. պարկեշտն ի կերակուրս և յըմպե-
լիս, և ի խրախճանութիւնս օրինաւոր. զորմէ ասէին
ի հինան մեր որք բամբռամբն երգէին, լինել սմա
և ի ցանկութիւնս մարմնոյ չափաւոր. մեծիմաստ
և պերձախոս, և յամենայն որ ինչ մարդկութեան
պիտանի[3]: Եւ զի՞նչ ինձ ի գիրս յայս արդեօք
իցէ բան սիրելի, քան թէ որ յաղագս սորա էին
գովեստք և պատմութիւնք՝ յերկարել: Արդարա-
գատ և հաւասարասէր կշիռս ունելով յամենայնի,
զամենայն ուրուք զկենցաղ՝ մտացն լծակաւ կշռէր.
ոչ ընդ լաւագոյնն խանդայր, և ոչ զնուաստսն
արհամարհէր, այլ ամենեցուն հասարակաց հնա-
րէր զխնամոցն իւրոց ի վերայ տարածել զգեստս[4]:

Սա՝ նախ յառաջագոյն դաշնաւոր եղեալ Աժդա-
հակայ որ ի Մարաց էր, տայ նմա զքոյր իւր Տի-
գրանուհի կնութեան, ըղձիւք խնդրելով զնա Աժ-
դահակայ[5]: Քանզի ասէր, կամ ի ձեռն այսպիսւոյ

1. Հիմայ Հայոց ընատիպ կերպարանաց յատկու-
թիւն մի համարուի սեւամազ ըլլալն, բայց հին հե-
դինակք՝ աւելի գեղնագոյն կամ ոսկեգոյն մազով
նկարագրեն զՀայս, որ է խարտեաշ:

2. Տիգրան որդի էր Երուանդայ, որ Մահաւակեաց
կոչուի, այսինքն կարճ կեանք կամ թագաւորութիւն
ունեցող. պէտք է նշանաւոր պատճառ մ'ըլլայ երգ-
չաց կամ պատմչաց զայս յիշելու:

3. Այսքան յատկանիշք կերպարանաց և բարուց
Տիգրանայ՝ յայտնի ցոյցք են հին վիպասանութեանց:

4. Թէ սասյդ թէ անասյդ ըլլան այսքան գովեստք
Տիգրանայ, յիշելու է որ յառաջ քան զՄար–Իբաս
և զՍոսրենացի՝ Քաղնոփոն եւս սոյնպէս գովելի ցու-
ցընէ զՏիգրան:

5. Աժդահակ քան Աշդահակ՝ հին Մարապարսից
լեզուաւ նշանակէ չար կամ գազան օձ, իբրեւ իժ
դահիճ, հայերէն կամ հայացեալ բառերով: Եթէ Տի-

վերձաւորութեանն՝ սէր հաստատուն առ Տիգրան ունել, կամ զիւրաւ այսպէս գաւաճանել զնա ի սպանուելն. զի էր նմա խէթ կամաց իւրոց՝ մարդաբէութիւն իմն, յոչ կամաց լեալ նմա առաջի-կայ դիպուածն իւր։

ԺԸ

ԵՐԱԶՆ Ա Ժ Դ Ա Հ Ա Կ Ա Յ

(Ս. ԽՈՐԵՆ. Ա. ԻԶ)

Էր, ասէ, յաւուրսն յայնս ոչ սակաւ ինչ վտանգ՝ որ ի Մարացն Ա Ժ դահակայ, ի միաբանութենէ Կիւրոսի և Տիգրանայ. վասն որոյ և ի սաստկութենէ ծփանաց խորհըրդոցն լինել նմա ի տեսլեան երազոյ երեւութանալ ի քուն գիշերոյ, զոր ոչ երբէք յարթնութեան ետես աչօք, և ոչ ի լուր ականջաց լուաւ։ Ուսոյի և ընդօսա ի քնոյն լինելով, ոչ յամէ ըստ սովորութեան կարգին ի ժամ խորհըրդականութեանն. այլ այն ինչ գիշերոյն ժամս ունելով ոչ սակաւս, ձայնէ զխորհըրդակիցսն, և արտաւմ երեսաց յերկիր հայելով՝ ի խորոց սրտին մռնչէ յողոց հանութեամբ։ Եւ ի զ'վասն էրն ի խորհըրդակցացն հարցանին, յերկարէ ժամս ինչ զպատասխանեան. և ուր ուրեմն հեծութեամբ ըստկիզբն արարեալ՝ յայտնէ զամենայն որ ի ծածուկ սրտին խորհուրդ և կասկած. ընդ նմին և զերս ահագին տեսլեանն։

Էր ինձ, ասէ, ով սիրելիք, լինել այսօր յերկրի անծանօթում, մերձ ի լեառն մի երկար յերկրէ բարձրութեամբ[1], որոյ գագաթն սաստկութեամբ

գրանայ վրայ գրուածքն առասպելախառն են, եւս առաւել Ա Ժդահակին։

1. Մասիս կամ Տէմավէնտ լերան կ'ակնարկէ։

սառնամանեաց թուէր պատեալ. և ասէին զոգեհս յերկրին Հայկազանց զայս լինել։ Եւ ի նայել ինձ յերկարագոյն ի լեառն, կին ումն ծիրանագգեաստ՝ երկնագոյն ունելով զիւրեաւ տեռ, նստեալ երեւեցաւ ի ծայրի այսպիսւոյ բարձրութեան, աչեղ, բարձրահասակ և կարմրայտ, երկանց ըմբռնեալ ցաւով։ Եւ ի յերկարագոյն նայելն իմ յայսպիսի երեւումն և ի հիացման լինել, ծնաւ կինն յանկարծ երիս կատարեալս ի դիւցազանց՝ հասակաւ և բնութեամբ։ Առաջինն՝ զերանոն ածեալ ի վերայ առիւծու՝ սլանայր յարեւմուտս. և երկրորդն՝ ի վերայ ընձու՝ ի հիւսիսի հայելով. իսկ երրորդն՝ զվիշապն անարի սանձեալ, ի մերոյս վերայ չարհատակեալ յարձակեր ահրութեանս[1]։

Եւ ի մէջ այսպիսեաց խառն երազոյ, թուէր ինձ կալ ի վերայ տանեաց իմոց արքունեացս, և զնոյն ինքն վերին երեսս յարկացս՝ տեսանել զեզիկ և բազմագոյն չարութեանց[2] զարգարեալ, և զպատկառն զմեզ զդիսն մեր՝ հրաշատեսիկ տեսլեամբ ի վերայ կացեալ. և զիս՝ ձեռք հանդերձ՝ զնոսա պատուեալ զոհիւք և խընկովք։ Եւ յանկարծ ի վեր նայեցեալ, զայն որ ի վերայ վիշապին հեծեալ կայր, արծուանման սլացեալ թուէք տեսի յարձակեալ. որ մօտ հասեալ՝ խորհէր կործանել զդիսն։ Իսկ ես Ա Ժդահակ՝ խորոց ընդ մէջ անկեալ՝ յիս զայնպիսի եղեալ յարձակումն ընկալայ, մարտ ընդ աքանչելւոյն առնելով զիւցազանն։

1. Ահիւծու վրայ հեծնողն Կիւրոս պիտի ըլլայ, վիշապին՝ Տիգրան, ընձուս վրայ հեծնողն ալ է. միթէ Կրիւսո՞ս։

2. Պէսպէս գունով կատեղէն վարագոյրք և զարդք։ Ս. Բարսղի գրոց մեկնիչն՝ այս բառիս համանիշ գրէ՝ ներքինց, սատր. յայտնի է որ թէ շատրեվան և թէ սատր՝ պարսիկ բառեր են. բայց երկրորդն (սատիրէ) նշանակէ ճիշդ մեր պատմչին ըսած՝ արքունեաց վերնատունն և վերին երեսը, սամկօրէն երեսբաց։

Եւ նախ ի տէգ նիզակաց զմարմինս երկաքանչիւրոցս յօշելով, վտակս արեան ի վայր հոսեցուցաք. և զարեգակնատես երեսս ապարանիցս՝ արեան հոսեալ ցուցաք ծով, այսպէս և զկնի այլովք զինուք՝ ժամս ոչ սակաւս: Բայց զի՞նչ օգուտ ինձ և խօսից երկարութիւն. զի վախճան գործոյն՝ իմն էր կործանումն. ուստի և ի քրտան սաստիկ վտանգի եղեալ, փախեաւ յինէն քուն. և այսուհետեւ ոչ թուխմ կենդանի: Զի ոչ այլ ինչ նշանակէ երեւութիցս չարժումն, եթէ ոչ որ ի հայկազեանն Տիգրանայ հասանելոց է մեզ բռնութեան յարձակումն: Բայց, ո՛վ արդեաք, յետ աստուածոցն օգնականութեան, բանիւ և գործով մեզ յօգուտ խորհելով, ոչ զինքն կարծիցէ թագաւորակից մեր լինել:

Եւ բաղում ինչ ի խորհըրդակցացն լուեալ օգտաւութեան մտածութիւն, չնորհակալութեամբ պատուէ զնոսա:

ԺԹ

ՊԱՏԵՐԱԶՄՆ ՏԻԳՐԱՆԱՅ ԵՒ ԱԺԴԱՀԱԿԱՅ

(Մ. ԽՈՐԵՆ. Ա. 2)

Ի հաստատել Աշդահակայ զՏիգրանուհի ի տիկնութիւն, ոչ ինչ առանց կամաց նորա ի թագաւորութեան իւրում գործէր. այլ բերանով նորա կարգէր զամենայն, և հրամանի նորա՝ ամենեցուն հնազանդ լինել հրամայէր: Եւ յօրինեալ զայս այսպէս, սկսանի մեղմով մատուցանել նմա պատրանս. Ո՞չ գիտես, ասէ, եթէ եղբայր քո Տիգրան՝ խանդացաւ զտիկնութիւնդ քո ի վերայ Աբեաց, ի կնոջէ իւրմէ ի Զարուհեայ գրգռեալ: Եւ զինչ լինիցի այն. եթէ ոչ՝ նախ ինձ մեռանել, և ապա լինել

զՋարուհի ի վերայ Աբեաց, և զաստուածուհեաց ունել զտեղի: Բայց արդ, ընտրելի է քեզ այժմ զմի յայսցանէ. կամ լինել եղբայրասէր և կործանումն խայտառակելի յանդիման Աբեաց յանձն առնուլ, և կամ զանձին խմանալով զբարի՝ խորհուրդ օգտակար ի մէջ բերել և յաղագս առաջիկայիցն հոգալ: Բայց, էր ի մէջ այսպիսւոյ խորամանկութեան թագուցեալ և զվեառնելն Տիգրանուհեայ, եթէ ոչ ինչ ըստ կամաց խորհեացի Մարապարացոյն[1]: Այլ, իմացեալ խորագիտոյ գեղեցկին՝ զայսպիսի գաւառանութիւն, պատասխանէ սիրոյ բանս Աշդահակայ. և արագագոյն ի ձեռն մտերմաց՝ պատմէ եղբօրն զնենդութիւնն:

Եւ ձեռնարկէ այնուհետեւ ի գործն՝ ի ձեռն պատգամաւորութեան, գալ նոցա ի միաբանութիւն տեսութեան, ի տեղի միջոց սահմանաց երկոցունց թագաւորութեանց, իբր բան ինչ և գործ հարկաւոր հասեալ, որ ի ձեռն գրոյ և հրեշտակութեան կատարել ոչ է կարողութիւն, եթէ ոչ և դէմք երկոցունց հանդէպ լինիցին: Այլ գիտելով Տիգրանայ զառաքելոյ իրին կատարումն, ոչ ինչ յորոց խորհէր Աշդահակ՝ ծածկէր, այլ ի ձեռն գրոյ յայտնէ որ ինչ ի նորայն խորութեան սըրտին: Եւ ի յայտնել այսպիսւոյ չարութեանն, ոչ ինչ այնուհետեւ էր բան և խորամանկութիւն՝ որ զայսպիսի առագաստէր գչարութիւն, այլ յայտնի այնուհետեւ գրգռէր խաղմն:

Եւ ժողովէ արքայն Հայոց ի սահմանաց Կապադովկացւոց, և որչափ ընտիրք վրաց և Աղուանից աշխարհին, և զամենայն ընտիրս Հայոց Մեծաց և Փոքունց. և խաղայ ամենայն զօրութեամբ իւրով զկողմամբք Մեդացւոց: Վտանգ հասանէ այնուհետեւ Աշդահակայ՝ պատահել պատերազմաւ Հայկազինն՝ ոչ փոքր ինչ ամբոխիւ: Եւ երկայնէր հա-

1. Այսինքն՝ Աժդահակայ, որ էր թագաւոր Մարաց և Պարսից:

կառավարչութիւնն մինչեւ ցամիսս հինգ. քանզի հիւանդանայր գործն արագ և առողջ, յորժամ զմբուռւ ածէր Տիգրան՝ յաղագս քեռն իւրոյ սիրելւոյ. և այսպէս զելս իրացն հնարէր յարդարել, զի ապրելոյ ձար լինի Տիգրանուհեայ: Ի պատահման այսորիկ և ժամ մարտին մերձենայ: Բայց, զովեմ զքաջահաւասկն զիմ և զնիզակաւորն և զամենեւին բոլոր աւիդաւօք հաւեւատն և ի գեղեցկութիւն աւարտեալ հասակի. քանզի առոյգ ամենայնիւ ըստ իրեարս պատչաճեալ, և ուժով ոչ զոք իւր ունելով զոյգ[1]: Եւ զի[2] երկայնեմ զբանս. քանզի ի լինել պատերազմին, նիզակաւ որպէս զնուր հերձեալ զերկաթի ամուր հանդերձն, չամիրէ զԱչդահակ յընդարձակ տէգ նիզակին, և յամիրափել միւսանգամ զձեռն՝ արտաքս զկէս մասն թոքիցն հանդերձ զինեան՝ ի դուրս բերէ: Բայց մարտն էր աքանչելի. զի քաջք դիպեալ քաջաց՝ ոչ վաղվազակի թիկունս իմիւեանց դարձուցանէին. վասն որոյ յերկարեալ քարշէր գործն պատերազմի ժամս ձիգս: Իսկ վախճան գործոյն առնէր մահն Աչդահակայ: Եւ այսպիսի դիպուածս ի բարեբախտութիւն յաւելեալ, յաճախէր փառս Տիգրանայ:

Ի

ՆՈՑՆ ԲԱՆ

(ԸՍՏ ԹՈՎՄԱՅԻ ԱՐՔՐՈՒՆԻՈՑ)

Պատերազմ յուզեալ Աչդահակայ Մարաց թագաւորի՝ ընդ մեծին Տիգրանայ Հայկազնոյ, որպէս ցուցանեն մեզ առաջինք ի պատմագրացն, և այր-

1. Աչքաւոր կրկնութիւնք Տիգրանայ բարեկազմութեան վրայ՝ լաւ եւս հասատատեն վիպասանիցդ զոյգքդ:

ուձի կազմեալ գալ մատնել յաչխարհս Հայոց, առնել որպէս նիւթեաց գչարիսն, ազգ եղեւ մեծին Տիգրանայ՝ պատրաստ պնդութիւն Աչդահակայ:

Եւ ժողովեալ ազգք ազգք յընտրելոց զօրավարաց՝ արանց քաջամարտից, զզօրս Կապուտկաց-ւոց, զՎրաց և զԱղուանից, և զԱլբարատեան գառանամարտիկ[1] անճոռնի զօրսն, և զբոլոր բովանդակեալ գունդս զօրացն, և զորդիսն Սենեքերիմայ՝ ամենայարդար պատրաստութեամբ անհուն բազմութեամբ, աճապարել երագել անյապաղ լինել, նախ քան զԱժդահակայ դիմեցումն. զի մի քաջասրտագոյն կարծիցի Մարն քան զՀայկազնեայն: Եւ վազս առեալ փութացան մտին ընդ կողմն Մականայ[2], բանակեցան ի դաշտավայրին Մեդիացւոց. և անդ ոչ սակաւ վտանգ հասանէր Աժդահակայ, վասն հասանելոյ ի վերայ նորա Տիգրանայ՝ զօրու ծանուս: Նա և բազմախոհեմն Կիւրոս Պարսիկ՝ խաղայ գայ իւրով հեծելազօր մարտակցովքն՝ գալ օգնել Տիգրանայ. քանզի էին բարեկամացեալ ընդ միմեանս Կիւրոս և Տիգրան, յամենայնի համանմանքն, համակամքն, միասիրտքն, քաջախոհեմքն և բազմապրուատքն: Բայց, մինչդեռ չեւ առ միմեանս հասեալ Տիգրան և Կիւրոս, յղէ Աչդահակ պատարագս Կիւրոսի, և խոստանայ տալ նմա զաէրութիւնն, զչորրորդ մասն Սենեքերիմանցն՝ զկողմամբքն Ենինուէի, զՏմորիա՝ ամրոցաւն որ ի նմա[3]. և զայն ոչ միանգամ, այլ

1. Կամ գազանի պէս ուժով կռուէին կամ նաեւ գազանաց հետ:

2. Մական կամ Մռահաւ՝ վիճակ մ'է կրման նահանգի Պարսից:

3. Սենեքերիմ Ասորեստանեայց թագաւորին որդւոց (Ադրամելեքի և Սանասարայ)՝ հայրերնին սպանելով ի Հայաստան գալուն՝ Ս. Գիրք եւս վկայեն, եսայի, Տովբիթ. անոնցմէ ծագեցան Սանեցիք մեր և

յոլովակի՝ մի զմիոյ կնի ընթացուցանէր դեսպանս հրովարտակօք և պատարագօք : Զայս իմացեալ խորհըրդականութիւն՝ փաերքսես (որ) յԱդրամելեայ և Սանասարայ յորդւոցն Սենեքերիմայ, ապա գան առ Տիգրան Հայոց թագաւոր, և զհնուցանեն նմա զան որոյ խորհի Աչդահակ. քանզի որդիքն Սենեքերիմայ մեծաւ ցասմամբ և անզրաւ հաչտմամբ ընդ Աչդահակայն լինէին, յաղագս գոլ գնա սեռաւնդ Վարբակայ Մարի, որ երբ՛ զթագաւորութիւնն ի Սարգանապալեայ՝ հաւուցն Սենեքերիմանցն :

Յայնժամ առեալ հրովարտակ Սանասարեանց ի Տիգրանայ՝ պատարագօք գնացին առ Կիւրոս, և առեալ գնա գան առ Տիգրան. և անյապաղ փութով զգործ պատերազմին վճարեալ, քաչք ընդ քաչս ելեալ, յետուստ կողմանէ ածապարեալ Փերսերքսէս՝ բուռն հարեալ զդիակաց[1] պղնձակուռ վարպանին Աչդահակայ՝ ի վերայ թիկանցն՝ զգաւակաւ երիվարին սրկեալ. և Տիգրան առ երագութեան ձեռինն՝ հարեալ նիզակաւ ընդ սրտադուրան, ի բաց կորզեր զթռչակէնն. և Կիւրոսի զհետ մտեալ գօրուն՝ ոչ սակաւ սատակմունս առնէր, մինչեւ միահաղոյն զզօրսն Աչդահակայ վտանեալ սուսերաւ, տիրէ Մարաց և Պարսից :

Բայց, երկուք ոմանք ի գաւակէ Աչդահակայ՝ ձերբակալ արարեալ Տիգրանայ, առեալ ածէ ի Հայս, և կացուցեալ զնոսա ի կարգի ստրկութեան. որոց զթիլթ հպատակութեան ցուցեալ՝ կարգէ զնոսա ի գործ ծառայութեան, կրել արծուիս և

Արծրունիք. Թուի՞մս այդ Սենեքերիմեանց ցեղաբանութիւնը գտած՝ կ՛ուզեն, իբրեւ Արծրունեաց ցեղի նահապետաց. որոմէ էր, կ՛ըսէ, Փաերքսէս՝ այս պատերազմիս առեն :

1. Հեղինակիս ամեն ձեռագիր օրինակաց մէջ այլ այսպէս գրուած է այս բառս, և թուի նշանակել՝ վարպապետին (գինուորական գեհսուն) փեչը :

բազէս՝ ի գինարբուն, ի տեղի մատռուակութեան, յառաջացուցեալ՝ ի գահ նախարարութեան ձգեալ կացուցանէ. և բնակեցուցանէ զնոսա ի գաւառն Աղբագ[1], յետ բնակեցուցանելոյն զնոսա ի Զողամել, ի վրընջունիս և ի Խրամի[2], տեւեալ մինչեւ ի ժամանակս ինչ. քանզի յառաջագոյն տուեալ էր զնոսա ի ծառայութիւն քեռ իւրոյ Տիգրանուհեայ՝ կնոջ Աչդահակայ, յասացեալ տեղիս բնակեցուցանելով :

Զայս գործ լուեալ Լիւդէացւոց թագաւորին Կրոսոսեայ, բազմաչփոթ յուզմամբ ամբոխ զօրս բազմեմս դումարեալ, եկ տալ պատերազմ ընդ Կիւրոսի. զորոյ զօրաժողով լինելն իմացեալ Կիւրոսի, գրե առ Տիգրան՝ զօրս յօգնականութիւն առաքել նմա. զոր անյապաղ փութով զզօրսն հարաւային և հիւսիսայինս տուեալ ի ձեռս Փաերքսեայ և Արշեղայ որդւոյ Նորուն Փաերքսեայ՝ զի փութով անդր հասցեն :

1. Վանայ արեւելեան հարաւային կողմն, յայլազգեաց Էլպաղ կոչուած :

2. Թէ այս տեղւանքն թէ գրուածն չատ ատյգ չեն, այլ թուին Այրարատ և Սիւնեաց աչխարհաց միջոց, երասխ գետոյ մօտեր. Խրամն, եթէ արդարեւ այսպէս գրուած է, Սիւնեաց Նախճաւան գաւառին վերաբերի :

ԻԱ

ՎԱՀԱԳՆ[1]

(Մ. ԽՈՐԵՆ. Ա. 31ա)

Հաւաստի պատմեալ զբուն և զառաջին Տիգրանն, և որ ինչ ի նմանէ գործք, սիրելի՝ որպէս ինձ պատմողիս ի մէջ բանից իմոց՝ որ ինչ յաղագս երեւանդեանս Տիգրանայ բանք, եղիցի և քեզ ընթերցողիդ. որպէս այնն և գործք, նոյնպէս և վնասանք բանք: Վասն որոյ սիրեմ կոչել այսպէս՝ ըստ քաղաքութեան, Հայկ, Արամ, Տիգրան. քանզի ըստ իմ՝ Քաղաց ազգք՝ քաղքն[2]. իսկ միջոցքն՝ որպէս դէպ ումեք թուիցի կոչել: Բայց ըստ դիւցազնութեանն կարծեաց՝ ճշմարիտ է և ասելս մեր. ոչ Արամազդ ոք, այլ ի կամեցողսն լինել Արամազդ, չորից եւս այլոց անուանելոց Արամազդ, յորոց մի է և Կուռդ ոմն Արամազդ[3]: Այսպէս և բազումք անուանեալ Տիգրանք, մի է և միայնակ ի Հայկազանցս, որ զԱշդահակ ապան և գտուն նորա ի գերութիւն վարեաց, և զՆոյն մայր վիշապաց. օժանդակ կամաք և յօժարութեամբ զԿիւրոս ուղեղով, վիշտանութիւն Մարաց և Պարսից յինքն յափշտակեաց:

Սորա որդի Բաբ, Տիրան, Վահագն, զորմէ ասեն առասպելք.

« Երկնէր երկին, երկնէր երկիր,
» Երկնէր և ծիրանի ծովիւ.
» Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր.
» Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր.
» Եւ ի բոցոյն խարտեաշ պատանեկիկ վազէր.
» Նա հուր հեր ունէր.
» Բոց ունէր մուրուս[1].
» Եւ աչկունքն էին արեգակունք »:

Զայս երգելով ամանց բամբռամբ՝ լուաք իսկ ականջօք մերովք: Յետ որոյ և ընդ վիշապաց ասէին յերգն՝ կռուել նմա և յաղթել, և կարի իմն նմանագոյնս զՀերակլեայ նահատակութեանց նմա երգէին: Այլ, ասէին զսա և աստուածացեալ, և անդ յաշխարհին Վրաց զորա չափ հասակի կանգնեալ՝ պատուէին զոհիւք[2]:

1. Այս երկու վերջին տողից միջոց ապա՝ թէ զբուածն՝ խորենացւոյ խօսքն է, և նշանակէ թէ՝ անկէ առքի տաղէն վերջը՝ վիպասանք աւելցընէին բոցկղէն մուրուքը: Մեր հին հեթանոս վիպասանից երգոց միացորդնեբուն ամենէն երկար կտորն է այս կտորս, բայց գուցէ և սա համառօտած է ի մեր պատմչէն:

2. Անան. Շիրակացի յԱստեղաբաշխութեան գիրն՝ ուրիշ առասպել մ՚այլ յիշէ Վահագնի վրայ. « Ոմանք
» յառաջնոցն Հայոց՝ ասացին, թէ ի խիստ ձմերանի՝
» Վահագն նահանի Հայոց, գողացաւ գյարդ Բաբշամայ
» Ասորւոց նահանգ: Զար և մեք առաջերեցաք ընդհանուր
» թեամբ Յարդզոդի հետ անուանել »: Ըստ այսմ և Թուրքք կոչեն, Յաման հօղուզ. և է երկնից երեք տասնածաւած այն աստղերն կամ փայլն՝ որ կ՚ըսուի եւս Ծիր կաթին (la Voie lactée) ըստ յունական առասպելաբանութեան: Բայց, հայկական առասպելն Վահագնի ունի շատ նմանութիւն Հնդկաց Ագնիի՝ հրոյ կամ հրաթռիչ գից: Զինք եւս ունին Բռնաւոր անուն չատաւած մի, զոր նկարագրեն ամենեւին նման Վահագնի՝ եղեգէ մը գաւրս եկած, ճառագայթաձակ կերպարանօք: Մեր վարդապետաց մէկն՝ արեւ համարի զՎահագն, ըսելով. « Ոմանք զԱրեգակն պաշտեցին » և Վահակն կոչեցին »: (Այսպէս կ տառիս գրուած է անուանն):

Եւ սորա են զարմք վահնուհիք[1]. ի սորա կրտսեր որդւոյն Առաւանայ՝ Առաշաւեանք: Սորա Առաշաւ, սորա Ղեւրսեհ, սորա Զարեհ. ի սորա զարմից և Զարեհաշաւանից որ կարդան ապք: Իսկ առաջին սորա՝ Արմոգ[2], սորա Բագամ. սորա վահ. սորա Վահէ. սա ընդվզեալ, մեռանի յԱղեքսանդրեայ Մակեդոնացւոյ:

Յայսմ հետէ մինչեւ ցթագաւորութիւն Վաղարշակայ ի Հայս՝ ոչ ինչ ճշմարտագոյնս ունիմ պատմել քեզ. քանզի չիտի իմն ամբոխից լեալ, այլ զարամբ ելանէին տիրել աշխարհիս. և վասն այսորիկ դիւրամուտ ի Հայս լեալ Արշակ Մեծ, թագաւորեցուցանէ զեղբայր իւր Վաղարշակ՝ ի վերայ աշխարհիս Հայոց:

ԻԲ

ԱՐՇԱԿՈՒՆԻՔ

(ԸՍՏ ԵՊԻՓԱՆԻ)

Յետ մեռանելոյ Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, զօրացեալ եղեն Հայկազունքն, տիրելով բազում ազգաց և ազանց. և երեւեցաւ ի մէջ նոցա Արշակ քաջն՝ յորդւոցն Յարեթեանց[3]. օն անդր, և մեծաւ յաղթութեամբ և սաստիկ պատերազմաւ, բազում և Աքեմենեան զօրաք բախեաց զբռնակալ

1. Շիտակն վահագնունիք ըսելու էր:
2. Ըստ սմանց իմանալու է Ար-մոգ. իբր թէ ընիկ անունն է Ար կամ Էր, գործն՝ մոգութիւն:
3. Պարսիկք և Պահլաւիկք՝ յորոց Արշակունիքն են՝ յաբեթեական ցեղին վերաբերին. բայց Մ. Խորեն. (Բ. ա) սեմական համարի, յԱբրահամէ և իր թեւառրա կնոջմէ առաջ եկած:

արքայն Աննտիոքայ՝ զԱնտիոքոս, և սպան զնա սրով իւրով, և առ զմեծն Անտիոք և զԲաբելոն, օն իսկ՝ և զաշխարհն ամենայնիւ, զկղզիս որ ի ծովս, և տիրելով համայնից ի կամս բարձրելոյն Աստուծոյ, որ կացոյց զնա թագաւոր ամենայն ազգաց և ազանց, նա և զորդիս նորա յետ մահուան նորա՝ զամս բազումս: Այլ և, որպէս ունի սեփական ամենաթագաւորն Քրիստոս՝ առնել յիւրում անհասանելի մեծութեան զոր ինչ և կամի, զարձեալ նուաճեաց զթագաւորն Հայոց և Պարսից և զարեւելեանս ամենայն, և զարձեալ զօրացեալ եղեն Մակեդոնացիքն. և որպէս ընդ սէրս լինէին նմա Հայկազունքն և Պարք և արեւելեանք, թէ և հնազանդ իսկ: Իսկ ապա յայնմ նուագին, ի զաւակաց առաջնաքայլին Արշակայ ծնեալ եղեւ յառաջ գոլով մանուկ հզօրագոյն և համանուն հօրն իւրոյ նախնոյն Արշակայ. ուստի և ի նախնի ժամանակագրացն ընթերցեալ զիւրոց հարցն և զհաւուցն զարարսն քաջութեան, և իսկոյն զօրացեալ խրախուսելով ի բաց եկաց ի Մակեդոնացւոյն, իբրեւ նչկահեղով զթագաւորս նոցա. և անդէն հրամայեաց զօրավարացն, զամենայն հեծեալսն և զհետեւակս զօրաց իւրոց զումարել ի մի վայր. և եղեալ յաշխարհէն իւր սեփական, և բնակէր յերկիրին Մաց և Պարսից և Քուշանաց և Աստուց և Ելիմացւոց. և հաւանեալ զամենայն, որպէս ի վերինն օգնականութենէն զօրացեալ: Եւ տեսեալ գիտուցն զչնորհս նորա, և մանկապրեցին կոչել զնա Պարթեւ[1] Արշակ. և ետ նմա Աստուած որդի, և

1. Մականուն գրին Պարթեւ, զոր սմանք ի մեր նախնեաց կ'ուզեն մեկնել իբր Պարաթեւ, ամեն կողմ թեւերը տարածած. իսկ հին օտար պատմիչք՝ դաղթական կամ վռընտուած (ի Սկիւթացւոց) նչանակէ կ'ըսեն: Հին Պարսից և Հնդկաց գրոց մէջ Պարդոռ կամ Պարադա կոչուին:

անուանեաց զնա Տիգրան[1]: Եւ մեռաւ հայրն նորա Պարթեւ Արշակ արքայ Հայոց, և անգէն առ ըստ թագն և զթագաւորութիւն նորա որդի նորա Տիգրան Պարթեւ Արշակունի: Եւ յետ ամաց անցեալոց ժողովեաց զօրս բազումս, որպէս և ունէր ընդ ձեռամբ իւրով հնազանդեալ թագաւորութիւնս վեց՝ հօրն իւրոյ նուաճեալ, որպէս և կանխեալ առաջաք, զՄարաց և զՊարսից, զՔուշանաց[2] և զԱսորւոց այլ և զելիմացւոց, նա և զիւրն սեփական՝ որ և Հայաստանեայցն ամենայն: Եւ յառաջ խաղացեալ գայր խրոխտ և մեծաւ յաղթութեամբ, ոսկիապատ կառօք և սպիտակ երիվարօք լծելովք և ծածկեալ ոսկեթել դիպակօք. որ և առ տեսութիւն՝ ահաւոր երեւեալ և զարհուրելի: Եւ առ վազվազակի զմեծն Բաբելոն և զամենայն աշխարհ նորա՝ յարքայէն Արշաւրեայ, կոտորելով զնա և զզօրս նորա: Եւ հրամայեաց չինել քաղաքս երկու, զՈւռհա և զԱմիդ, ի վիճակս Սեմայ որդւոյ Նոյի անդրանկի և եղբօր Յարեթի կրտերոյ. և նախնոյ՝ հօր–(եղբօր իւրոյ, յորոց և ինքն Տիգրան, իսկա- պէս յորդւոցն Յարեթի) որ և նախնի հայրն Հայկ- ազեանց[3]:

1. Պատմիչս համաձայն չէ մեր խոսրենացւոյ. կամ Ա. Արշակ Պարթեւն այլ միանգամայն Տիգրան կ'անուանէ: Պարսիկք առանց բ տառի՝ Էշք և Էշքենիան կ'անուանեն զԱրշակ և զԱրշակունիս: Եւթրպացի պիտանական մի ուղեց Էրուչան սուտպատանել, իբրեւ Արեաց թագաւոր, բայց չեղաւ ընդունելի:

2. Հոնաց մեծ ազգին մէկ ցեղն են, ինչպէս յիշած եմք առաջ:

3. Շփոթութիւն մի երեւի վերջին տողից մէջ:

Իգ

ՎԱՂԱՐՇԱԿ, ԵՒ ՅՕՐԻՆՈՒԱԾ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ· ՏՈՀՄԻՔ ՀԱՅՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԵԱՅՔ

(ԽՈՐԵՆ· Բ· գ· ը)

Ի ժամանակին յայնմիկ թագաւորեցուցանէ (Արշակ Պարթեւ) զեղբայր իւր Վաղարշակ՝ մերոյ աշխարհիս, զհիւսիսի և զարեւմուտս տալով նմա սահմանս: Սա, որպէս յառաջնում մերում մատենին գրեցաք, այր քաջ և խոհեմ՝ ընդարձակեաց ի վերայ սահմանաց իւրոց. և կարգս կենցաղականս, որչափ մարթ էր, սահմանեաց աշխարհիս. և նախարարութիւնս, և նոցին նախարարութեանցն՝ նահապետութիւնս հաստատեաց՝ զորս պիտանիս, որ ի գաւակաց նախնոյն մեր Հայկայ և յայլոց:

Քանզի յետ սանձահարելոյ զՄակեդոնացիս և դադարելոյ պատերազմացն, սկիզբն առնէ բարեգործութեանց՝ Պարթեւն քաջ. նախ և առաջին՝ փոխարէն բարեաց հատուցանելով առնն զօրաւորի և իմաստնոյ, որ ի Հրէից՝ Շամբայ Բագարատ. տալ նմա իշխանութիւն ազգաւ թագաւիր լինել Աբշալկունեաց. և որ ի նմանէ ծնեալ ազգ՝ լինել յանուն նորա կոչմամբ Բագրատունի, որ ևայժմ մեծ նախարարութիւն ի մէջ աշխարհիս: Քանզի այս Բագարատ նախաձեռն ընծայ ըստ կարաց մատոյց զինքն Վաղարշակայ[1], յառաջ քան զպատերազմն Աբշակայ ընդ Մակեդոնացիան. և սա ի դրան արքունի. իսկ ի ծայրս հայերէն խօսից՝ կոչնակալ իշխան բիւրուց և հազարաց յարեւմտից կուսէ[2]:...

1. Ինքզինքն ընծայեց Վաղարշակայ՝ ծառայելու:

2. Այսինքն, զառ իր ցեղին Բագրատունեաց նա-

Եւ այս այսպէս կատարեալ, կարգէ զկողմանս Մաժաքայ[1] և զՊոնդացիս և զԵգերացիս[2], դառնայ առ ստորոտովն Պարխարայ[3] ընդ մէջ Տայոց, ի գիշին և ի մառախլուտ տեղիս մայրեացն և ի լօռաւէտս. գեղեցիկ իմն կարգելով զերկիրն, հաւասարելով զեռնայինն և զվերմահոան ի բարեխառն և ի զուգագեղեցիկ վայելչութիւն իւրոյ թագաւորութեանն, ամառնային ժամանակին հովանոցս պատրաստելով, յորժամ զհիւսիսով երթիցէ: Գոմս վերկուս տափարակն անտառախիտս հանդերձ լերամբքն կազմելով, և որսոց տեղիս. և զվերմութիւնն կողայ[4] ի մարմանդս այգեաց և բուրաստանեաց: Այլ խարեմ ասա վասն սիրելի առնն յայտնի գրել զամենայն և մանրապատում. զի անցի միայն զտեղիսն նշանակելով, զհաւաստին և զոճն ի բաց թողեալ, վասն զկապ սիրոյ զհրաշալեացն անխզելի պահելոյ[5]:

Եւ ասա կոչեցեալ զվայրենի եկամուտ ապգն, որ ի դաշտին հիւսիսոյ և որ զատորոտով մեծի լերինն Կաւկասոյ, և որ ի հովիտս կամ ի ձորս երկայնագոգս խարացեալս, ի լեռնէն՝ որ զհարաւով՝ իջեալ մինչ ի դաշտաբերանն մեծ, պատուէր տալով զաւազակութիւն և զմարդագաւութիւն ի բաց քեցել յինքեանց, և հրամանաց և հարկաց արքունի հպատակ լինել. որպէս զի միւսանգամ տեսեալ զնոսա, առաջնորդս

խարար կամ նահապետ կարգելէին, նա և Հայոց զօրացն արեւմտեան գնդին 11000 զօրաց՝ գլխաւոր գրաւ:

1. Ա. Հայք կոչեցած նահանգն ի փոքր Ասիա: Տես յէջ 32, ծան. 3:
2. Հիմայ Զէրքէզ կոչուածքն:
3. Հիմակուան Իւուսաց արեւմտեան Ասիոյ և Օսմանեանց արեւելեան հիւսիսային սահմանաց միջօգի լեռներն:
4. Հիմայ կեօղէ վիճակն, Կուր գետոյ աղբիւրավայրն:
5. Շարադրութեան գեղեցիկ ոճը չեմ ուզեր կ'ըսէ երկայնաբանութեամբ աւրել:

և իշխանս հանդերձ գեղեցիկ կարգօք հաստատեցէ. և արձակէ զնոսա հանդերձ արամբք իմաստնովք և վերակացուօք յիւրմէ: Եւ ինքն արձակեալ զարեւմտեայ բազմութիւնն, իջանէ ի տեղիս խոտաւէտս մերձ ի սահմանն Շարայի, զոր հինքն Ալճիայտ և վերին Բասեան կոչէին[1]. իսկ յետոյ վասն հաստուածին Վրկնդուր Բուղկարայ Վրնդայ՝ բնակելոյ ի տեղիս, յանուն նորա անուանեցաւ Վանանդ[2]. և անուանք չինիցին յանուն եղբարց և զարմից նորա անուանեալ կոչին մինչեւ ցայժմ: Իսկ ի ցրտանալ հիւսիսոյ ի դառնալոյ, խաղայ իջանէ (Վաղարշակ) ի դաշտն Մեծ[3]. և անդ զամառն Մօրին Մեծի բանակի ի տեղւոջ, ուր գետն Մեծ ի ծովակէն հիւսիսոյ սկիզբն առեալ՝ իջանէ և խառնի ի Մօրն Մեծ: Եւ անդ կարգեալ զգօրս աշխարհիս, և թողեալ յինքենէ վերակացուս, և իւր առեալ զամենայն գլխաւորսն՝ չուէ ի Մծբին[4]:

Ասյս գրուակ մեծ և հաւաստի պատմութեամբ լի և արժանի բանից ոգւորկագունից և յոյսվից,

1. Շիրակայ արեւմտակողմն, որ և Այրարատ նահանգի արեւմտեան մասն է:
2. Վռնդի՝ Բուղղարաց Վալանդուր կամ Ողընդուր ցեղի գլխաւորին անուամբ՝ վերին Բասեն գաւառն Վանանդ կոչուի:
3. Դաշտին և գետոյն անուանքն յատկապէս Մեծ կոչուած են. հիւսիսային ծովակն այլ՝ Պաղակացիս կոչուածն է ըստ Վրաց, և թուրքերէն Զրլտըր կ'ասի, ուսկի կ'ելնէ գետն և խառնուի ի Մօր Մեծ, որ թուի կարսի գետն:
4. Հայաստանի թագաւորանիստ քաղաք ըլլալու յարմար չերեւիր Մծբին, բայց եթէ հարաւային սահմանները պաշտպանելու համար, ուսկից որ վախ կար Ասորւոց իշխողներէն, և անով բոլոր Հայաստան պաշտպանուէր: Ուշադիր Տիգրանակերտցի՝ Շամբի և Մծբնայ միջեւ յիշէ Գարա-տէրէ անուամբ մեծ բերդ մի՝ Վաղարշակայ աթոռ եղած:

քանզի բազում ինչ առա կարգաց և յօրինուածոց, տանց, ազգաց, քաղաքաց, չինից, գաւառակերտաց, և համայն ասել օրէն թագաւորութեան, և որ ինչ չուրջ զթագաւորութեամբն, զօրաց, զօրապետաց, կողմանց կողմնակալաց, և որ նման այսոցիկ[1]:

Արդ, նախ և առաջին օրինադրէ թագաւորն՝ զինքն և զտուն իւր, սկիզբն առնելով ի գլխոյն իւրմէ և ի թագէ: Եւ զկոչեցեալն Բագարատ՝ որ ի Հրէից, չնորհակալութիւն նմա վասն յաւազգոյն անձնաւորս ձեռնաուութեան առ թագաւորն և մխամտութեանն և քաջութեանն, զյաւազգուա-գեալ տանուտէրական պատիւն ազգին պարգեւ-լով, և իշխել նմա թագ ի գլուխ դնել թագաւո-րին, և կոչել Թագադիր և Ասպետ[2]. և առանց ոսկւոյ և ականց զկրասեր մարգարիտն երեքտա-կէն՝ վարսակալ ածել, յորժամ յարքունիս և ի տան թագաւորին հրկիցի[3]:

Եւ զգեցուցանողս իւր զձեռս[4] ի զաւակաց Գա-

1. Բայ մի պակսի այս տեղ, որպէս եղ օրենս, կամ առնմանեաց օրենս, և այլն:

2. Առաջ ըստ ձմա (Խորեն. Բ. գ) Բագրատ-տայ իշխանութիւն կու տայ թագաւորին գլուխը թագ դնելու. զարձեալ, կ'անուանէ զնա Ասպետ, այսինքն ձիաւորաց գլուխ:

3. Իրաւունք տայ իրեք կարգ փոքր մարգարտօք պատած մանկապ զարդ մի դնել՝ ինքն իր գլխոյն:

4. Առաջին տպագրողն Խորենացւոյ (Թովմաս Վա-նանդեցի յԱմստերդամ, 1695) դրած է, «զզեցուցանողս «իւր զձեռս», իմացընելով՝ ձեռքերը հագուեցընող: Ոմանց յաւուկ անուն կարծուած է Զեռս, խորհի՝ Հայ ականջի, յարմար գտանացաւոյ: Բայ պատմու-թեան Խորեն. (Ա. ժբ) և Եւսեբիոսի, Խորայեզացւոց Յեհուս գաւառաբին ձեռքէն՝ նախնիք այդ ցեղիդ փախ-չելով եկած էին ի Հայս, և իրենց գլխաւորն՝ Գա-ւեանիդաս կոչուէր, որոյ անուամբ Վաղարշակ Գրի-գորեան կոչէ զցեղը, թէ և քերականօրէն յարմար չեն Գնթունեան և Գանձակեցի:

նանացւոց, անուն կոչէ ազգին Գնթունիս: Եւ թիկ-նապահս իւր՝ զինու հանդերձ, ի զաւակացն Թո-ռայ Հայկազնոյ՝ արս ընտիրս և քաջս, նիզակաւորս և սուսերաւորս. և գլուխ նահապետ նոցա զՄաղ-խազ անի. բայց անուն ազգին գնախնականն պա-հէ[1]: — Իսկ զԴատ ի զաւակէ Գառնիկայ, որ ի Գեղամայ, ի վերայ որոց արքունականաց կարգէ. որոյ արգի եղեալ Վարժ, յանուն նորա անուանի ազգն (Վարժունիք կամ Վարաժունիք). բայց այս գինի, յաւուրս Արտաշիսի: — Եւ զԳաբաղ անի ի վերայ կուտից[2]. և զԱբէկ՝ սպասաւար և գահաւոր[3]. և չէնս պարգեւէ նոցա, յորոց և անուն կոչին, ասպէս և նախարարութիւնքն Աբեղեան և Գաբեղեան:

Եւ զԱրծրունիսդ՝ գիտեմ ոչ արծրունիս, այլ Աբծիւ ուանիս[4], որք արծուիս առաջի նորա կրէին: Թողում զառասպելեացն բաշատանս, որ ի Հադա-մակերտին պատմին, մանկան նիրհելոյ՝ անձրեւ և արեւ հակառակեալ, և հովանի թռչնոյ պատանւոյն

1. Այսինքն, Խորխոռուանիք կոչուին, որ և Մաղ-խազուանիք. այս մականուամբ ինչուան հիմայ կան ազգայինք, ոչ միայն ի Հայս, այլ և ի Լեհս. ի մեր վանքս այլ յամին 1870 վախճանեցաւ Եղբայր մի Բազիշեցի (Նիկոլ.) այդ ցեղէն, 98 տարուան:

2. Թագաւորական ձիոց հոգացող:

3. Թագաւորին սեղանը և գահոյքը պատրաստող:

4. Մեծ ցեղ Հայոց են Արծրունիք՝ Ասորեստանի Սենեքերիմ թագաւորի զաւակներէն, վանայ կողմե-րու իշխողք և թագաւորք. այս ցեղիս անուամբ այլ գաւառն հիմայ ազգայինք: Իրենց սիրած երկիրն Հայոց ընդարձակագոյն նահանգաց մէկն էր, վաս-պուրական, որ հիմայ այլ լսուի, և հօն էր Հադա-մակերտ աւանն: Այս ցեղիս և Սանեքերիմ նահա-պետքն էին որդիքն Սենեքերիմի Ասորեստանի թա-գաւորին, Ադրամելեք և Սանասար, որք սպանելով իրենց հայրը փախան եկան ի Հայաստան. այս բա-նիս վկայեն և Ս. Գիրք. (Եսայի, Լ. 38.—Դ Թագր. ԺԹ. 37):

թալկացելոյ։ — Գիտեմ զԳնուռնիսպ Գիլի–ոռնիս, որ առաջի թագաւորին պատրաստէր զըմպելիսն. որ աքանչելի ինն գիպեալ եղեւ ըստ գործոյն և անունն. քանզի պատրաստէր զըմպելիսն արքայի յընտիր և համեղ գինեաց, ունէր և կոչումն անուանն Գիլի. ընդ որ կարի զուարճացեալ, ասեն՝ Վաղարշակ, կարգէ ի թիւ նախարարութեան ազգաց մեծապէս[1]։ Եւ են այս երկու տունքս ի պահակ Անեկերիմայ, Աբծրունիս և Գնունիս։

Աւեմ և զՄպանդռնիսպ ի վերայ զենարանաց. և Հաւենռնիսպ՝ բազէակիրս և բազէակալս, յազգս ի մայրիս բնակելոյ[2]։ Եւ եթէ առ ցօփս ոչ ունիցիս[3], զՀաւենականդ՝ ամարայնոցաց պահակս և ձիւնակիրս, և յ'առաջադիմութենէ ազատացեալս, որպէս ընտանիք թագաւորաց։

Եւ զունդս և պահապանս գրան արքունի պատրաստէ զչորս, զմի մի իւրաքանչիւր վաեւլովք, ի նոյն հին գարմից թագաւորացն՝ որ ի Հայկայ, որ ընդ ժամանակս ժամանակս ժառանգութեան[4] ի հարանց սատարեալ գեղջ և դաստակերտս։ Իսկ առ ուրեմն՝ Պարսից թագաւորութեանն, որպէս լսեմ, յայլոց յարուցեալ[5] զունդս և Ղատաւն անուանել. ոչ գիտեմ թէ վասն սպառելոյ ազգին առաջնոյ, թէ վասն ընդդիմութեան իւիք լինելոյ՝ չկամեալ[6] և ի բաց ընկեցեալ զազգն, զայլս ի տեղիս նոցա յարուցին զունդս՝ անուամբ արքունի։ Այլ

1. Պատշաճ էր ազգաց մեծաց ըսել, կամ մեծապէսը վեր առնիլ միացընել կարի բառին հետ։
2. Իբր՝ թռչուն բռնողք կամ թագաւորին արտոյ Բազէները կրողք և գարմանողք։
3. Եթէ ծիծաղելի կամ կատակ չես համարիր ըսելս։
4. Պէտք էր գրել ժառանգորդութեամբ։
5. Պարսից տիրապետութեան առեն փոխանակ այն չորս Հայկազնեայ պաշտօնէից, տասը ցեղերէ կարգեցան։
6. Կապաեալ, խլեալ՝ ի Հայկազանց։

առաջինն հատատ ի գարմից թագաւորացն առաջնոց. որպէս և այժմ՝ ի վրաց աշխարհին, որ Մեսխոռղն[1] կոչի։

Եա և ներքինիս հրամայէ ի նոյն ազգէ խզել. և նահապետ նոցա զՀայր[2] իչխանն մասին՝ յԱտրպատականէ մինչեւ ցՃուաշ և Նախճաւան։ Բայց թէ որպէս է և ուր սորա իրք անցին անյիշատակելի, ես ոչ գիտեմ...

Բայց յետ կարգելոյ զառն թագաւորին, երկրորդ թագաւորութենէն լինէր ի զաւակէ Աշդահակայ՝ Մարաց եղելոյ թագաւորի, որ այժմ Մոռրացանդ[3] կոչեն. քանզի ոչ ասեն նահապետի ազգին՝ Մոռրացան տէր, այլ Մարացւոցն տէր. և թողու ի վերայ նորա զամենայն չէնս՝ որ ի գերութենէն Մարաց։ — Եւ յարեւելից կողմանէ՝ զեզերք հայկական խոսից՝ կողմնակալս, զերկու ցեղից նահապետութեանցն, Սիսակեան և Կապմեայն, զորոց զանուանսն յառաջնում ճառին կարգեցաք։

Յետ սորա մեծ և անուանի և բազմաբիւր զարեւելից հիւսիսոյ կողմանն կարգ կողմնակալութիւն, զայր անուանի և յամենայն գործ մտաւո-

1. Մեսխոռղի ըստ Վրաց նշանակէ թագաւորազն. մեր Ձեռագրաց մէջ գրեթէ ամենքն այլ սխալ գրեն Մեսխոռղք։ Բայց այս յետին անուան մտ՝ Սկիւդտոռնի կոչէ Սարաքոն քերտողեան Վռափորի կողմանց իչխանները, Σκηπτοῦχοι, որ նշանակէ Մականակիրս, գաւազան կրող։
2. Աբբունի ներքինեաց զլխաւորն կոչուի Հայր մարդպետ, և յետոյ Ձեւանայ ցեղ մի Մարդպետական կոչուելով, որոյ իչխանութեան երկիրն կոչուի Ծատան և տարածուի Այրարատ, Սիւնիք և Արտազատականի նահանգաց միջեւ։
3. Հակառակ իմաստին կ'երեւի չարագրութիւնդ, և ըսելի էր, ոչ ասեն Մարացւոց տէր՝ այլ Մուրացան տէր։ իսկ ինչ՞ւ այսպէս կոչուեր է. լեզուի ծռութեամբ թէ ծաղրածութեամբ։

բութեան և հանճարոյ առաջին՝ զԱրան[1], առ մեծ գեառին, որ հատանէ զդաշտն Մեծ՝ որ անուանի կոչի: Բայց զայս գիտեա, զի զցեղս զայս մեծ և անուանի՝ մոռացումն եղեւ մեզ յառաջին մատենին[2] յիշատակել, զգունդս Միսական, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից, և զեառնակոզին նոքին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչեւ ցամուրն՝ որ ասի Չնա(րա)կերտ[3]. և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա կոչեցաւ Աղուանք[4]. զի Աղու ձայնէին զնա: Եւ ի սորա ծննդոց այս Արան առնուանի և քաջ՝ կարգեցաւ ի պարթեւէն Վաղարշակայ՝ կոզմնակալ բիւրաւոր: Ի սորա զաւակէ ասեն սերեալ զազգ Ռշտունացոց[5] և Գարդմանացոց և Ծոփիքացոց և Գարգարացոց իշխանութիւնն[6]:

Իսկ Գուգարայ, որ յորդւոցն Շարայի, ժառանգեաց զեառն Մրիի, որ է կանգարդ, և զկէս մասինն Ջաւախայ, զկողբ, զԾոր, զՁոր՝ մինչեւ ցա-

1. Փափագելի էր զիտնալ ասոր Հանճարեղութեան հաւասարքը:

2. Այսինքն պատմութեան Ա. գրոց մէջ:

3. Կարը և Երասխ գետոց խառնուրդին մէջոց էր այդ ամրոցդ, որ երեւի Չռշևար անուամբ մէկէ մի չինուած և կոչուած. հիմայ Կոտրած կարմրոջ կոչուի, թուրքարէն Սրնըգ քեօփրի:

4. Աղուանից երկիրն Մեծ Հայոց արեւելեան կողմն է, և այդ յիշեալ կոզմնակալին անուամբ չատ հեղ Արան կոչուած է. իսկ այդոր անուշ բարուց համար՝ որ Հայերէն ադոռ կ'ըսուի, երկիրն այլ հասարակօրէն Աղուանք ըսուեր է: Սակայն, այս ոչ թէ առայդ, այլ զրոյց:

5. Ռշտի՝ Հայոց 15 աշխարհաց մէկն էր, մէնաերն այլ անոր և Աղուանից մատեր: Ծանօթ է և յայն աշխարհագրաց, Ջղղոյ կոչմամբ:

6. Ասանք Հայոց Գուգարք նահանգին մեծ ու փոքր մասեր են, առհմանակից Վրաց, և երբեմն ասոնց իշխանութեան տակ. լաւ եւս ծանօթ էր Յունաց, Γωγαρηνέ.

մուրն Հնարակերտ: Բայց պետրութիւնն Աղոցայ, և զեպհականութիւնն Տաշրայ՝ կարգէ Վաղարշակ ի զաւակացն Գուչարայ հայկազնոյ: Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ՝ կոզմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ և զհզօր ազգն, և նահապետութեանն անուն կարգայ՝ Բդեշխ Գուգարաց. որ էր լեալ ի զաւակէ Միհրդատայ՝ Դարեհի նախարարի[1], զոր ածեալ Աղէքսանդրի՝ թողեալ իշխան ի վերայ զեբութեան ի վերիացւոց[2] ազգացն, զորս էած Նաբուզոդոնոսոր, որպէս Աբիւդենոս[3] պատմէ, այսպէս ասելով Մեծազօրն[4]. «Նաբուզոդոնոսոր բըռ» նագոյն էր քան զԵրակլէս Լիբիացւոց. զօրաժողով » լեալ հասանէր ի Վերիացւոց աշխարհն, և վանեալ » խորտակեալ ընդ ձեռամբ նուաճէր. և զմանն մի ի » նոցանէ յայկազոյն Պոնդոս Ծովու յարեւմտեաս » տարեալ բնակեցուցանէր »:

Իսկ ի հովտին մեծի Բասենոյ՝ կարգէ նահապետութիւն զՊրդուհին, որ ի զաւակացն Հայկայ: Իսկ զայր խոժոռագեղ և բարձր և կոպտարանձն[5]

1. Այս տեղ չփոթի է գրուածն, Թերեւս և պակաս. ինչպէս նախարարին անուն՝ եթէ չէ Գուգար, ուսկից համանուն ազգն կամ ցեղն: Յիշեալ Դարեհն է վերջին հին Պարսից թագաւորն, որուն յաղթեց Աղէքսանդր:

2. Վերիացւոց ազգն՝ Սպանիոյ բնակիչք էին. Խորենացւոյ օրինակ մի բացատրած է. « Եւ է վերին » այն՝ յերդ երկրի յարեւմտեաս »: Ուրիշ գրուածոց մէջ այլ, Սպանիա՝ եղր կամ արեւմտեան ծայր երկրի կոչուի. ամանք կարծեցին զվրաստան:

3–4. Աբիւդենոս յայն պատմիչ, որոյ ժամանակն յայտնի չէ. բայց երեք չորս դար յառաջ է քան զԲրիսթոսոս: Իսկ Մեծազօրն՝ որ իբր Նաբուզոդոնոսորի ածական գրուած է, պէտք է իմանալ ուրիշ յայն պատմիչ մի, Մեգասթենես անուամբ, որ արդարեւ Մեծազօր նշանակէ, և Աղէքսանդրի առաջին յաջորդաց ժամանակակից է:

5. Կոպիտ, ազեղ կերպարանօք:

և տափաքիթ, խորակն և գժնահայեաց, ի զաւակէ Պարթամայ[1] ի Հայկակայ թոռնէ, Տորք[2] անուն կոչեցեալ, որ վասն առաւել ժահագիմութեանն՝ ձայնէին Աւգեղեայ[3], վիթխարի հասակաւ և ուժով, հաստատէ կուսակալ արեւմտից, և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Աւգեղ տոհմ[4]: Բայց եթէ կամիս՝ առեմ և ես յաղագս նորա անյայլ[5] և փցուն, որպէս Պարսիկք վասն Թաւոմայ[6] Սագճկի՝ հարիւր և քսան փղոց այժ ասեն ունել. քանզի կարի իմն անյարմար թուէին նմա երգ բանիցն, վասն ուժեղութեանն և սրտեայ լինելոյն. որում ոչ Սամսոնի և ոչ Երսկևայ և ոչ Սագճկին յարմար են այս զրոյցքս: Քանզի երբէմն նմա բուռն հարկանել զորձաքար վիմաց՝ ձեռօք, ուր ոչ գոյր գեղութիւն, և ձեղքել ըստ կամաց՝ մեծ և փոքր, և քերել ըզընգամիքն իւրովք՝ արծուիս և այլս այսպիսիս[7]: Եւ յեզերս ծովուն Պոնդոսի դիպեալ նաւաց թշնամեաց, դիմէ ի վերայ. և ի

1. Հայկայ որ որդւոյն որդին էր Պասքամ, չէ յիշուած:

2. Ըստ ձեռագրաց ոմանց՝ Տոչրք:

3. Աւգեղեայ և ազեղ նոյն իմաստն ունին:

4. Մեծ Հայոց հարաւ–արեւմտեան կողմն, Ի Հայոց նահանգի մէջ է այդ երկիրդ:

5. Անյարմար, սուտ, ուռուցմուտ:

6. Ինչպէս՝ Պարսից Սեհեսատան գաւառէն, որոյ վրայ առասպելած են: — Առաքել Սիւնեցի (Լծմ. Սահմանաց) փոխանակ Թոսատմայ՝ մերինին համար կ'ըսէ. « Թոժոռադեմ Տորքն՝ որ 120 փղոյ ուժ ուներ » նէր »: Եւսեբեայ Քրոնիկոնն յիշէ ի Մեհ ալմաղիգի (Քրիստոսէ իբր 200 տարի առաջ) զՄոսկոս, յաղթող մի, որ մեր Թարգմանութեան մէջ կոչուած է « Տորքոս » Կողոբոնացի, յաղթէ ի մանկութեան ի չրջանակաւ » խապին ». ժամանակն եւս յարմար է մեր Տորքի մանկութեան:

7. Ըստ այսմ՝ ոմանք կ'ուզեն կարծել, թէ Տորք եղած ըլլայ առաջին քանդակագործ Հայոց:

խաղալն նոցա ի խորն իբրեւ առապարէզս ութ[1], և սա ոչ ժամանեաց նոցա. առնուլ, ասեն, վէմս բըլրաձեւս. և ձգէ զկնի. և ի սաստիկ պատառմանէ ջուրցն՝ ընկղմին նաւք ոչ սակաւք, և ամբարձումն ալեացն որ ի պատառմանէ ջուրցն՝ վարէ զմնացեալ նաւսն բաղում մղոնս: Ո՞հ. կարի է առասպելս, այլ և առասպելից առասպել: Բայց քեզ զի է. քանզի էր արդարեւ ոստահիկ հզօր, և այսպիսեաց զրուցաց արժանի:

Բայց զկնի գորա հաստատէ զմեծ նահապետութիւնն Ծոփից[2] ի Զորրորդ կոչեցեալ Հայս: Այլ և զնախաթարաւթիւնն Ապահունեաց և զՄաւնւազեանն և Բզնունեանն[3] ի նոյն գաւառացն Հայկայ, ի բնակչաց գտեալ պերճագոյն տեարս, կարգէ յաջորդն չինից և գաւառաց կոչելով:

Այլ մոռացաք և զդժնեայ Այաքն անուանեալ այր. զոր ոչ կարեմ հաւաստեալ ասել ի Հայկայ եթէ յառաջագունից քան զնա եղելոց յաշխարհին, զոր հին զրոյցքն[4] պատմեն լինել. բայց էր այր քաջ: Զսա կարգէ սակաւ արամբք պահել զլեառնն, որոյ զքաշան. որք անուանեցան Այկոռնիք[5]: Այս-

1. Իբր մէկուկէս քնամղոն (քիլոմեթր): Տեղս և Տարքայ Անգեղեայ անունն՝ յիշեցընեն Աբբիանոս պատմչի տեսածը՝ այս կողմերուս, Պիւտանիս գետոյ քովերը, Աւգիաձեւս թագաւորի պալատը, որ Յունաց առասպելաբանք մի է. ըստ նոցա՝ կայր և Աւգիասի՝ գետառ Յարեթիի:

2. Գլխաւոր գաւառին անուամբ Ի Հայք նահանգն Հայոց՝ կոչուի եւս Ծոփք, որ և երկու մասն էր, Մեծ և Փոքր Ծոփք:

3. Վանայ ծովուն արեւմտակողմը, Խլաթայ մօտերը:

4. Վիպասանութիւնք կամ երգք Հայկազանց:

5. Կամ Սղակ և Սղկոռնիք ըսելու է, կամ Սլաք և Սլաքռնիք: Տարօնոյ և Սասնոյ կողմերն են: — Ներսէս Պալենց՝ փոխանակ վայրի այծուց (քօշք) արտալուծ՝ կարդայ, « պահել զլեառն որ Սալք կոչի »: Ամառերեսամուտ տպագիրն այլ գիշաւևսն գրէ:

պէս և ի նոյն իրս և զՄիհանդակն անգառնալի[1]. և ի սմանէ Մանդակունիք:

Բայց յորդւոցն Վահագնի գտեալ արս, որք ինքնակամ խնդրեցին զմեհենիցն պաշտամունս, պատուէ մեծապէս, ի ձեռն տալով նոցա զքրմութիւնն. և կարգէ ընդ առաջին նախարարութիւնն, և անուն կոչէ Վահունիս: Սապէս և զԱռաւելեանն[2] և Զարեհաւանեանն՝ գտեալ ի զարմից ասորւոյն թագաւորացն, կարգէ ի նոյն անուանս աւանս:

Եւ զՇարաշաւն ի տանէ Սանասարայ՝ հաստատէ բդեչխ մեծ և կուսակալ յարեւմտից հարաւոյ, յորոց սահմանացն Ասորեստանի, առ ափն Տիգրիս գետոյ. գաւառս պարգեւելով զԱրձն (և) որ չուրջ զնովաւ, և զԱեառն Տաւրոս, ուր և Սիւռ, և զկրօղեսուրն[3] ամենայն:

Իսկ զՄոկացին[4] ի նոյն գաւառէ գտեալ այր, որ ունէր ընդ իւրեաւ սրիկայս բազում, նախարարութիւնս հաստատէ: Ընդնապէս և զկորդուացիս[5], զԱնձեւացիս, զԱկացիս[6] ի նոյն գաւառաց: Իսկ զԻշխտունիս և զԳողրնեցիս՝[7] գտի պատմեալ՝ ի Սիսականէն արդարեւ հաստատ. ոչ գիտեմ, թէ յանուն արանցն զգաւառն անուանեն, եթէ յանուն գաւառացն զնախարարութիւնն կոչեցեալ:

1. Ի՞նչ նշանակէ անդառնալին. մինչ առանց յաղթութեան չէր գառնար ի պատերազմէ:
2. Հաւանօրէն Առաւելեան պիտէր:
3. Յունական բառով, κλείσουρα, որ նշանակէ լերանց միջեւ գոց կամ նեղ ճանապարհ:
4. Մանօթ է Մոկաց նահանգն Վանայ ծովու արեւմըտեան հարաւակողմը:
5. Մոկաց սահմանակից և դէպ ի հարաւ է աշխարհն Կորդուաց կամ Կորճայք, որոց անունը կրեն այժմեւ Քուրդք:
6. Անձեւացիք կամ մանաւանդ Անձաւացիք և միւս գաւառներն՝ վասպուրականն նահանգի վերաբերին:
7. Գողրն նախ նահանգ կամ աշխարհ մի համարուէր, յետոյ Սիւնեաց մասն եղաւ:

Իսկ յետ այսր ամենայնի՝ մեհեան չինեալ Ամրմաւիր[1], անդրէն հաստատէ Աբեգեան և Լուսանի և իւրոց նախնեաց: Եւ տղերսեալ որ ի Հրէիցն Շամբայ Բագարատ, որ և թագադիր և տապետ, հանդերձ հարկեցուցանող բանիւք, թողուլ զօրէնս հրէութեան և պաշտել զմեհեանս. զոր չառեալ յանձն, ըստ կամաց թողու զնա արքայն Վաղարշակ:

Հրաման տայ և զքաղաքն Շամիրամայ[2] նորոգել. և յայլ բազում տեղիս չինել քաղաքս բազմաբնակս և չէնս գլխաւորս և մարգախիտս:

Եւ օրէնս իմն հաստատէ ի տան թագաւորութեան իւրոյ. և ժամս որոշէ ելեւմտից[3] և խորհըրդոյ և խրախճանութեանց և զբօսանաց. և կարգս պինաւորութեանց, և նոցունց առաջինս և երկրորդս և երրորդս, և որ ի կարգին: Եւ ցիշեցուցանողս երկուս՝ ի ձեռն գրոյ. այլ ոմն զբարի յիշողութիւնն առնելով, և այլ ոմն զվրէժխնդրութեանցն. և բարւոյ յիշեցուցանողին հրաման տայ՝ ի բարկութեան արքայի և յանիրաւ հրամանս՝ յիշեցուցանել զիւրան և զմարգախրելն: Իրաւարար ի տան արքունի, իրաւարար ի քաղաքս և յաւանս: Հրաման տայ քաղաքացեաց մարդկան արգոյ և պատիւ լինել[4] քան զգեղկաց[5], և գեղկաց պատուել զքաղաքացիս՝ որպէս զիշխանս, և քաղաքացեաց մի կարի առ գեղկաքն պերճանալ, այլ եղբայրաբար վարիլ, վասն բարեկարգութեան և աննախանձոտ կենաց, որ է չինութեան և խաղաղութեան կենաց պատճառք. և որ ինչ նման այսոցիկ:

1. Հայկազանց մայրաքաղաքն էր յԱյրարատ, տեղն յայտնի է. հին չինուած չկայ, բայց կայ բեւեռագիրը:
2. Այսինքն է Վան, որ այդ Շամիրամակերտ եւս կոչուի:
3. Աւրքունիքը մանելու եղնելու ժամերը: Ուրիշ մաքով հիմայ եղեւմուտք կ'ըսուի տէրութեան եկամուտն, գանձն և ծախքն:
4. Պիտէր ըսել պատուհասի կամ նախատպատիժ:
5. Պատուասոր համարուիլ քան զղեկացիները:

Եւ քանզի բազում ունէր ուստերս, պատշաճ վարկաւ ոչ ամենեցուն առ իւր կալ ի Մծբին. վասն որոյ առաքէ զնոսա բնակել ի գաւառս Հաշտենից[1], և ի ձորն նորին սահմանակալ, որ է արտաքոյ Տարօնոյ. ի նոսա թողլով զչէնս ամենայն, հանդերձ յաւելուածով մաքի առանձինն և առճկաց կարգելոց յարքունուստ. և միայն զառաջինն որդին իւր՝ որ կոչէր Աբրակ՝ պահէ առ իւր, ի համար թագաւորութեան. և զնորին ուստր՝ զոր անուանեաց Աբռաշէս, և յոյժ սիրեցեալ. քանզի էր արդարեւ ազգն կայսուս և հզօր մարմնով. որպէս զի կարծիս հայեցողացն առ՝ որ ի նմանէ ածելոց էին արուեստիւք: Եւ եղեւ այս յայնմ հետէ և առ յապայ օրէնք ի մէջ Աբշակունեաց. միոյ որդւոյ բնակել ընդ արքայի, փոխանորդ լինել թագաւորութեանն, և այլ ուստերաց և զաւերաց գնալ ի կողմանս Հաշտենից՝ յազգին Ժառանգութիւն:

Բայց Վաղարշակ յետ այսպիսեաց արուեստանց և բարեկարգութեանց՝ մեռանի ի Մծբին, թագաւորեալ ամս քսան և երկուս:

ԻԴ

ՊԱՏԵՐԱԶՄՆ ՎԱՂԱՐՇԱԿԱՅ ԸՆԴ ՄՕՐՓԻԼԻԿԵԱՅ

(Մ. ԽՈՐԵՆ. Բ. Ը)

Որմն Մօրփիւղիկեայ[2] միաբանեալ զաստացեալ կողմանն (հիւսիսային Փոքր Ասիոյ), զրգռի ի պատերազմ ընդ Վաղարշակայ. բայց պատահէն մի-

1. Դ Հայոց գաւառ, Տարօնոյ արեւմտակողմը:

2. Անտարակոյս անուն մի, կէս ասորի կէս յոյն լսուի: Եւրոպացի գիտնական զրամագէտք ոմանք՝ փոքրիկ

մեանց առ բարձրաւանդակի միով բլրով քարաքաղաքինիւ, որ այժմ ասի Կողոնիա[1]. և մօտաւորք ի միմեանս՝ ձիգ ասպարիզօք միջոցացն, ամրանան երկոքին կողմանքն բուանդակ աւուրս: Զկնի անցանելոյ բազում աւուրց ամրանալոյ կողմանցն երկոցունց, զրգռի պատերազմ ի մերմէ կողմանէս դիմեալ. վասն որոյ յարդարէ կամաւ կամ ակամայ և Մօրփիւղիկեայն զիւրոյ կողման ճակատն. հասանէ յանդուգն յարձակմամբ: Քանզի այր սրտեայ էր, և անդամովք երկար և ընդ իրեարս պատշաճ. զոյգ մարմնոյն և այժ սաստիկ ունելով, ամրացեալ պղնձով և երկաթով. և այլովք ընտիր վառելովք, ոչ սաստիկ ինչ թուով, տապատառ յերկիր արկանէր արս ընտիրս և քաջս ի մանկանցն Վաղարշակայ. և չանայր անցանել հասանել յարքային Հայոց՝ ի մէջ խմբի մեծի և զինուս ամրացելոյ: Եւ մօտ անցեալ՝ աչողեցաւ ձգել զսուրնն. քանզի էր կոթովի և երկայնաձիգ. հեռի զաչէսն արձակեալ՝ որպէս ի թափչս սրաթեւ հաւուց: Այլ ոչինչ կարի յամեցին ընդ մէջ անցանել արք քաջք և անուանիք՝ ի զարմից Հայկայ և առաջնորդացն Աենեքերիմայ. և աչէիւ հարեալ առատակեն զքաջն, և զզօրսն առաջի արկեալ՝ ի փախուստ դարձուցանէին. բազում վտակս արեան հեղեալ, զերկիրն ոռոգանէին, իբրեւ հեղեղք անձրեւաց: Եւ յայնմ հետէ դադարեալ խաղաղեր երկիրն, նուաճեալ ընդ ձեռամբ Վաղարշակայ. և Մակեդոնացւոցն դադարեալ գոան[2]:

պղնձէ զրահի մի վրայ այդ անուան նմանութիւն տեսանելով՝ երեն կ՚ընծայեն, զոր և կարծեն ոմանք արդի Զահրատաղ (կամ Զարեհատրոդ) Ծովեայ թագաւորի. երկուքն այլ անհաւանականք:

1. Colonia. այսպէս կոչեցաւ՝ Հռովմայեցւոց գաղթականի տեղ ըլլալով. հիմնական Շիպին–Գարահիսար կոչուած քաղաքն է:

2. Կամ Մօրփիւղիկէն այլ Աղեքսանդրի յաղորդներին համարուէր, կամ Անտիոքոյ Ասորւոց թագաւորքն:

ԻԵ

ԱՐՇԱԿ Ա·

(ԽՈՐԵՆ· Բ· Թ)

Արշակ՝ որդի վաղարշակայ թագաւորէ ի վերայ Հայոց ամս երեքտասան. նախանձաւոր և հետեւող հայրենի առաքինութեանցն լեալ, բազում կարգս ուղղութեանց գործեաց, պատերազմելով ընդ Պոնդացիս. և նշանակ եթող յեզեր ծովուն մեծի՝ ըզնիզակն իւր զրոլորատէգ, որ էր արեամբ զեռնոց մխեալ. ձգեալ ի հետեւակուց՝ խորագոյնս նստոյց յերկանաքար արձանին, զոր կանգնեաց ի ծովեզերն: Զայս արձան՝ բազում ժամանակս պատուեցին Պոնդացիք[1], որպէս զ'աւս ի յաստուածոց գործ. իսկ ի գոռալն Արտաչիսի[2] միւսանգամ ընդ Պոնդացիս, ընկեցեալ սակն զարձանն ի ծով:

Ի սորա աւուրս ազմուկ մեծ լեալ ի գօտիս մեծի լերինն Կաւկասու, յաշխարհին Բուլղարաց, և բազումք ի նոցանէ հատուածեալք եկին յաշխարհս մեր, և բնակեցան ի ներքոյ Կողայ[3], յարգաւանդս և ի հացաւէտ տեղիս, բազում ժամանակս:

Ի սմանէ նեղեալ որդիք Բագարատայ՝ վասն դիւռս պաշտելոյ, երկու ի նոցանէ սրովկատարեցան արիաբար, ի վերայ հայրենի օրինացն. զորս ոչ պատկառեմ ասել հետեւող լինել Անանիանցն և Եղիազարանց. բայց այլքն յանձն առնուն այս-

1. Փոխան Պոնտացւոց՝ Շնորհալին մեր կ'ըսէ
« Զար՝ և Յունացըն զայն տեսեալ,
» Իբր Աստուծոյ երկրըպագեալ »:
2. Որ է որդին Արշակայ, Արտաշէս Ա.:
3. Յիշեցինք ուրիշ տեղ՝ որ Տայոց նահանգին մէջ է, կարնոյ արեւելակողմը:

չափ միայն, ի չարաթոյր հեծանել յորս և ի պատերազմունս, և զմանկունս թողուլ անթլփատս, յորժամ լինիցին. քանզի անկին էին: Եւ հրամայեցաւ յԱրշակայ՝ մի տալ նոցա կանայս յամենայն նախարարութեանցն, եթէ ոչ ուխտ պայմանի հաստատեսցեն՝ թողուլ զթլփատութիւնն: Զորս յանձն առնուն՝ զերկուսս զայս միայն, այլ ոչ զերկրըպագութիւն կռոցն:

ԻԶ

ԱՐՏԱՇԷՍ Ա ԱՇԽԱՐՀԱԿԱԼ[1]

(ԽՈՐԵՆ· Բ· Ժգ)

Հրաման տայ Արտաշէս զոր յարուցանել յաբեւելից և ի հիւսիսոյ՝ բազում յոյժ, մինչեւ ոչ գիտել նմա զհամարն, այլ յանցս և յիջեւանս՝ քար ըստ մարդաթուի կարկառ՝ նշան բազմութեանն թողուլ[2]: Խաղայ յարեւմուտս, և ձերբակալ արարեալ զԿրիւսոս[3] թագաւոր Լիւդացւոց:

Եւ գտեալ յԱսիա պղնձաձոյլ ոսկեզօծ պատ-

1. Յոյն և լատին հեղինակաց պատմածներն Տիգրանայ՝ Արտաշէսի որգւոյն վրայ, հաւատալի կ'ընեն հօրն աշխարհակալութիւնը, թէ և պարագաներն անծանօթ: Յոյն հատուածոց այլ կողմանէվ ի Հայս բերեալն՝ մեծ հաւատալիք եղաւ մեր օրերուս, Մեծ և Փոքր Հայոց ահմանամէջ Սատաղ քաղաքի հողց ներքեւ՝ Արտեմիսի կամ Անահտայ պղընձէ դեղեցիկ արձանի դլուխ և ձեռք գտուիլն:
2. Այդ բազմութեան վախճանը յիշելով Արտաշէս, գուշած է, կ'ըսեն. Աւաղ փառացս անցաւորի:
3. Պատմիչս յետոյ կ'իմացընէ, թէ ոչ Կիւրոսի տեսն եղոյ Կրեսոսն է, այլ անուանակից մի. գուցէ դիպաւածներուն նմանցուցեր են անունն այլ:

կերս, զԱրտեմիդեայ և զՀերակլեայն և զԱպողոնի, տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցեն յԱրմաւիր: Զոր առեալ քրմապետացն, որ էին յազգէ Վահունեաց, զԱպողոնին և զԱրտեմիդային՝ կանգնեցին յԱրմաւիր. իսկ զՀերակլային զառնապատկերն, զոր արարեալ էր ի Սկիւղեայ[1] և ի Դիպինոսէ կրետացւոյ, զվահագն իբրեանց վարկանելով նախնի, կանգնեցին ի Տարօն, յիբրեանց սեփհական գիւղն յԱշիշատ, յետ մահուանն Արտաշիսի:

Բայց Արտաշիսի նուաճեալ զյամաքս միջոցաց ծովուցն երկոցունց, լնու զՄիկիանոս[2] բազմութեամբ նաւաց, ծառայեցուցանել կամելով զբոլոր արեւմուտս: Քանզի մեծ յոյզ խռովութեան եղեալ ի Հռոմէ, ոչ ոք ընդդիմանայ նմա հզօրապէս: Այլ ոչ գիտեմ ասել՝ յորպիսի ազգմանէ ահագին ինն ազուկ լեալ չիսթիէ, բազմութեան զօրացն զմիմեանս կոտորեալ. իսկ Արտաշէս փախուցեալ մեռանի, որպէս ասեն[3], յիւրոց զօրաց. թագաւորեալ ամս քսան և հինգ[4]:

1. Ժամանակն անյայտ՝ բայց անուամբն ծանօթ է Սկիւղաբա, Σκύλαξ, ոչ իբրեւ արձանագործ այլ քանդակագործ, մանր և ազնիւ քարերու բանող:

2. Միջերկրական ծով:

3. Խորենացւոյ Աշխարհագրութեան նշանաւոր օրինակ մի կ'իմացընէ, որ Արտաշէս՝ Եւրիտ կամ Եւրտոպոս (Էյրիպօզ) մեծ կղզւոյն մօտ՝ Ատալանդ կըղզեկի մէջ մեռեր կամ սպանուեր է, ուր որ իր զօրաց պաշարը պահէր. և «զոր (զկղզին) ասեն գառել զօրացն » Արտաշէսի Հայոց արքայի, զի մի նաւք ռոճկացն » յամիցեն, մինչեւ պաշարեցն էր զկղեակն զար» մանալի »: Ո՞ր է այդ զարմանալի դղեակդ, եթէ չէ Ամիէնք՝ զոր առաւ Միհրդատ, որոյ հետ թերեւս մեր պատմիչն միացընէ զԱրտաշէս:

4. Վերջի դարերու Հայոց պատմութիւն դրող մի այսպէս կ'ըսէ Արտաշիսի համար. «Տիրեաց բոլոր » ցամաքի և ծանց յայնկոյս ովկիանոս և եհաս մին-

» չեւ ի Սպանիա... առանց թնդոյ սուսերով զզօրան. » և յերկրորդ անգամ գնաց յարեւմուտս՝ մեռանի » ի ծովն »:

1. Փոքր Ասիոյ քնակչաց:

Բայց և յԱլլադայ առեալ պատկերս գԴիոսի, զԱրտեմիդայ, զԱթենայ, զԵփեսոսու, զԱփրոդիտեայ, տայ բերել ի Հայս. որ ոչ ժամանեալ միջամուտս լինել յաշխարհս, լսեն զբօթ մահուանն Արտաշիսի. և փախուցեալ ընկենուն զպատկերսն յամրոցն յԱնի. և քուրմք գնացին զհետ լինելով, դադարեն առ նոսա:

Ի Է

ՏԻԳՐԱՆ Ա· ԱՐՇԱԿՈՒՆԻ

(ԹՈՐՆ· Բ· ԺԱ)

Ցետ Արտաշիսի առաջնոյ թագաւորել Տիգրան որդի նորա, յինն եւ տասներորդ ամի Աբչականայ թագաւորի Պարթից: Եւ ժողովեալ զզօրս Հայոց՝ ընդդէմ երթայ զօրացն Յունաց[1]. որք յետ մահուանն Արտաշիսի հօրն իւրոյ և ցրուելոյ զօրացն՝ հետամուտ լեալ դիմեալ գային յաշխարհս մեր: Որոց ընդդէմ պատահեալ Տիգրանայ, արգելեալ ի վերջ նահանջէ. և ի քեռայր իւր Միհրդատ հաւատացեալ զՄաժաք և զհոգս մեծերկրայցն, և զօր բազում թողեալ նմա, դառնայ յաշխարհս մեր: Առաջին գործ զմեհեանն չինել կամեցաւ. իսկ քրմացն, որ եկեալ էին ի Յունաց, զմտաւ ածեալ՝ զի մի ի խորագոյն Հայս վարիցին, պատճառեցան ըղձութիւնս, իբր թէ գիքն անդէն կամին զբնակիչն: Որում հաւանեալ Տիգրան՝ կանգնեաց զոլմպիական պատկերն Դիոսի՝ յամուրն յԱնի, և

1. Փոքր Ասիոյ քնակչաց:

զԱթենաս՝ ի Թիլ, և զԱբեմիդայ զհեւս պատկերն Յերիզայ, և զԵփեսասն՝ ի Բագայաւինջ[1]։ Բայց զԱփրոդիտայ զպատկերն իբրեւ Երակղեայ տաբիաւորի՝ առ նորին պատկերին Երակղեայ հրամայեաց կանգնել Յաշտից տեղւոյն. և ցաւուցեալ ընդ Վահունիան, եթէ ընդէր յիւրեանց սեպհականին իշխեցին կանգնեցին զպատկերն Երակլի՝ առաքեալ ի նորին հօրէ, ընկենու զնոսա ի քրմութենէ և զգեզմն յարքունիս առնու, յորում պատկերքն կանգնեցան։ Եւ այսպէս մեհենաս չինեալ, և առաջի մեհենիցն բագինս կանգնեալ, զհս ամենայն նախաբարացն հրամայէ մատուցանել, հանդերձ երկրպագութեամբ. զոր չառեալ յանձն ազգին Բագրատունեաց, զմիոյ զլեզուն հատեալ, որում անուն էր Աստղ[2], վասն պատկերացն անարգութեան, և ոչ այլ իւիք խոշտանգէ. քանզի յանձն առին ուտել ի զհիցն և զմիս խոզի, թէպէտ և ոչ ինքեանք զհիցն երկրպագութեամբ։ Վասն որոյ առնու ի նոցանէ ի բաց զիշխանութիւն զօրուն, բայց միայն զթագակապ ասպետութիւնն ոչ հանէ։ Ինքն իջանէ ի Միջագետս, և գտեալ անդ զԲարշամինայ պատկերն[3], զոր ի փղոսկրոյ և ի բիւրեղէ կազմեալ էր արծաթով, հրամայէ տանել կանգնել յաւանին Թորդան։

Եւ նոյն հետայն գիմէ յաշխարհն Պաղեստինացւոց[4] վրէժ պահանջել ի Պաղամայիդ Կղէոպատրայ[5] յաղագս Դիոնիսի որդւոյ նորա առ հայր

1. Այս տեղեաց չատերն Բարձր Հայոց նահանգին եկեղեաց գաւառին մէջն են։
2. Յետոյ և հիմայ Աշտ կոչուի այդ անունը։
3. Աւելի կարծուի արեւու առաւաւածակերպ պատկեր, քան Բարշամայ՝ որոյ յաղթեց Աթամ։
4. Այս գեպքս յիշէ և Յովսեպոս Հրեայ հեղինակն (Հնախաս. Հբր. ԺԹ. դ. և Պատերազմն Հրէից, Ա. դ)։
5. Այսինքն՝ Հղէոպատրա՝ գաւառ Պաղամեսի, Ասորւոց երկրի թագաւորին։

իւր յանցանաց[1]։ Առեալ գերի բազում ի Հրէիցն, նաեւ չուրջ զՊաղամայիդ քաղաքաւ. իսկ դէսոյն Հրէից Աղեքսանդրիա որ և Մեսալինա, որ էր լեալ կին Աղեքսանդրի՝ որդւոյ Յոհաննու, որդւոյ Շմաւունի, եղբօր Յուդայ Մակաբէի, որ զմեծաժամանակաւ ունէր զթագաւորութիւնն Հրէից, ինչս բազում տալով՝ դարձոյց զնա անտի։ Քանզի էր լուեալ և համբաւ, թէ Վայկոռն ոմն անուն յելուզակ՝ խռովէ զերկիրն Հայոց, զլեառն ամուր կալեալ, որ և այժմ յանուն յելուզակին կոչին Վայկոռնիք[2]։

1. Ո՞վ էր այս Դիոնիսիոս, և ի՞նչ յանցանք կամ նախատինք ըներ էր Տիգրանայ հօր՝ Արտաշիսի, չատ փափագելի էր գիտանալ։
2. Վայկունիք կամ Վակունիք՝ Արցախ նահանգի գաւառ մ՚էր, Գանձակայ մօտերը. մէկ մասն՝ Վերին Վայկոռնիք կոչուէր։ Յովսեպոս՝ Տիգրանայ գառնալուն պատճառ դրէ, Լուկուլլոսի առաջնորդութեամբ Հռովմայեցւոց ի Հայաստան մտնելը. այս է իր ըսածն, ըստ թարգմանութեան Սաեփ. Լեհացւոյ. «Ընդ » այն ժամանակս՝ լուեալ եթէ Տիգրան արքայն Հայոց՝ » եկեալ զբօք ի Պաղամայիս՝ պաշարէր զԱղեքսպատր, » առաքեալ զեռապետս բազում ընծայիւք, ուխտ խա» զաղութեան ընդ նմա հաստատեաց։ Որ՝ լուեալ եթէ » Պոմպիոս զօրապետն Հռովմայեցւոց մտեալ էր յեր» կիրն Հայոց, վասն երկիւղի խռովութեանց աշխար» հին իւրոյ՝ անդէն յետս դարձաւ »։

ԻԸ

ՇԻՆՈՒԹԻՒՆ ԱՄԱՍԻԱՅ ՔԱՂԱՔԻ[1]

Ի ժամանակին յորում մակեդոնացին Աղեքսանդր Փիլիպպեան կոչեցեալ, բազմաբիւրով անաստուածութեանն տիեզերակալեաց, Ամասիա անն եղբայր Նեքտանեբեայ հօր Աղեքսանդրի՝[2] հաստատեալ յԵգիպտոսէ, եւ ի Մէմֆերկրեայ ի կողմն Գամբրան Պտնատոսի առ երկրորդն կոչեցեալ Հայովք, առ որով հասի Գայոն[3] գետ, ընդ մէջ քարանձաւաց լերանց անցանելով յանդըդնագոյնս, եւ այնպէս իջանէ ի Պտնատս Պոլեմոնական[4], ընդ թեւ-վիակիւռեան դաշտ, յանուանաթիռ ծովեզերին, որ առ գետեզերբն ժամանէ ի տեղին որ կոչի Մարմառիդոն[5], ակիզբն առեալ ի Պտնատոսէ ի քարալերանց: (Ասա) դադարեալ ազգ առնելով Աղեքսանդրի, հրամանն ընդունի բնակել ի նմին տեղւոջ. զոր քաղաք չինեալ՝ իւրովք ծառայիւք և ժողովրդովք բնակէր, յիւր անուն կոչեցեալ Ամասիա:

Իսկ յետ բազում ժամանակաց՝ Միհրդատ քեռայր Տիգրանայ Հայոց արքայի, կողմնապատ գոլով անեղեայ իւրոյ ի Միժակ քաղաքի՝ որ այժմ կոչի Կեսարիա, գայ ունի զԱմասիա, ի Հայս զրաւեալ,

1. Ս. Թէոդորոս Զօրավարի վկայաբանութեան ըստկիզբն է, որ Խորենացւոյ լեզուն լսեցընէ:
2. Առասպելեալ հայրն Աղեքսանդրի:
3. Իսիս (Եչիլ ըրմագ) գետոյ մէկ ճիւղն է, որոյ մօտ էր Թեմիսկիւռիա գաշտն և քաղաքն:
4. Սեւ ծովու հարաւային կողմանց մէկ մասն է, Պոլեմոն թագաւորի մ՝անուամբ այսպէս կոչուած:
5. Փոքր Ասիոյ Պափլագոնիա աշխարհին մէջ՝ Սեւ ծովու եղերքն է, Մարմարիդիա կոչուած ի Յունաց:

տիեզերատարածմանակալ քաղաք յարդարեաց. ընդարձակագոյնս պարսպեաց առ կատարով լերանցն, յերկոցունց կողմանց գետոյն. չինեալ և զարքունեան ըստ հիւսիսոյ կողման գետոյն, առ ստորոտով քարալեռնակին. և նախ ապառաժիւք մեծամեծ հաստատիրդ կանգնեալ վիմօք, և ի վերայ զարքունեան կանգնեալ. և յարեգակնային դիմի անձաւին՝ չիրիմս քարակոփս և ճանապարհս սանդղաձեւս, տունս և քարայրս գանձուց կատարեալ յորինեալ, համանման ձեւակերպացն Շամիրամայ որ ի Վան և ի Խաղնաթիկեփայս[1]: Զորս լցեալ գանձիւք՝ տիրեաց ոչ սակաւ ամս, մինչեւ ի գալն Պոմպէի. ընդ որում մարտուցեալ և պարտեալ Միհրդատայ, և անկեալ ի Պտնատոս՝ մեռանի ի Սինոպ: Իսկ Պոմպէի առեալ զգանձն յԱմասիայէ և գյաղթս ի բնակչացն փոխեալ՝ չինէ քաղաք յիւր անուն կոչելով Պոմպէոպոլիս: Բայց և զԱմասիա կալեալ ի նախագահութեան Ելեսպոնտոսի մեծապոլիս արարեալ[2]. որ լի էր ամենայն չարեօք և պաշտամամբք սատանայի, մինչեւ ի կենարար քարոզութիւն առաքելոցն, որում բազումք հաւատացին ի Տէր:

1. Որ է հիմայ Հրեսի–քէյֆ կոչուած քաղաքն, Տիգրիս գետոյ մօտերը, քիչ հեռի Հայոց սահմաններէն: Սակայ քարափոր չէնքերն ծանօթ չեն՝ ինչպէս յիշեալքն Ամասիոյ և Վանայ, որ մեռամբ մինչեւ այսօր երեւին և զարմացընեն. արժանի է հետազննութեան և Հրանքէյֆ:
2. Այսինքն մայրաքաղաքի պատիւը պահեց Ամասիայի:

ԻԹ

ԱԲԳԱՐ

(ԸՍՏ ԵՊԻՓԱՆԻ)[1]

Տայ (Տիգրան) զերկու քաղաքան՝ զԱմիթ և զՆեդեսիա՝ Աբգարայ որդւոյ իւրոյ[2], ասնելով և զնա թագաւոր, որպէս ինքն ի հօրէ իւրմէ. ի կատարումն ասացելոցն աստուածահաճոյ հօրն մերոյ Նոյի, որ և օրհնեաց զՅաբեթի՝ ասելով. Ընդարձակեա, Տէր, Յաբեթի, և բնակեսցէ ի տան Սեմայ եղբօր իւրոյ. և եղիցի Քանան ծառայ նոցա. ուստի և այն իսկապէս եղեալ վճարեցաւ։ Քանդի Բաբելոն վիճակ էր Քամայ, և նոքա ծառայեցին բազում ամս որդւոյն Յաբեթի՝ Տիգրանայ, որդւոյ Աբշակայ Հայոց արքայի, զամենայն աւուրս կենաց իւրոց։ Եւ բնակէր արքայն Հայոց Աբգար՝ ի քաղաքին Ուռհայ. և հրամայեաց լինել անդ ի ներքս ի քաղաքն Ուռհա՝ երեք բիւրս հեծելոց[3],

1. Անվաւեր անսոյգ պատմութեանց գրող մի, որոյ ժամանակն այլ անտոյգ է, կարծեաւ Ը–Ժ դարու միջոց. ըստ սմանց՝ Բիւզանդացի մի. բայց այս հայերէն գրուածն՝ ասորերէնէ թարգմանած և աւելցուցած կ'երեւնայ։

2. Մեր Խորենացւոյ ազգաբանութեան համեմատ չէ Աբգարու որդիութիւնն. երկու հեղինակաց ըստծն այլ չէ ատյգ. զի Աբգարու ցեղն ասորի էր, և քանի մի դար տեւած է իշխանական կամ թագաւորական յաջորդութեամբ. և իրրեւ սեփական անուամբ ամենքն այլ Աբգար կոչուած են կամ Աբգարեանք, ինչպէս մեր Աբշակունիքն այլ Աբշակք։ Եպիփան չանայ կերպով մի միացընել զՀայս և զԱսորիս։ Ըստ օտար պատմչաց՝ Աբգարեանք թագաւոր չէին կոչուեր, այլ անուանէին Տեղակալք կամ Դեհիպետք, Toparcha.

3. Հետեւակ զօրքերէն զատ 30,000 ձիաւոր բնակեցընել Ուռհա, չափազանց երեւի։

տամբք և որդւովք, ուրոյն ի հետեւակ զօրաց, Հայկազուն սեպհական, որպէս նորատունկս ածել և սերանալ անդրէն. բայց և բնակիչք քաղաքին և ամենայն Միջագետաց՝ Խորին Ասորիք էին, ուստի և զօրանայր խօսն և լեզուն ասորի, սակս յաճախութեան ի տուր և յառս վաճառացն. այլ և հարկահանք ժողովոյն բազումք յԱսորւոց եւս էին, որք ի դիւանի անդ նստեալ պահանջէին զրով ասորի. նա և մանկունքն խաղալով ի հրապարակս՝ նոյնպէս ասել և լսել էին։ Օ՞ն իսկ, և Հայկազունք յարքունեաս և ի պաշտամունս պարապեալ պատրաստէին. զի բազում եւս էր[1] երկու եւս կողմանց, յԱթուրացւոցն[2] և ի Քաղթեացն, հանապազ ի սուր և ի սով լինելով? Արդ, այսու պատճառաւ Հայ օրէնն ամենայն և մեծամեծ աւագանին ամենայն, և որդիք նոցա եւս և որդւոց որդիք նոցա ի տուր և յառ, օ՞ն իսկ, և զօրքն ամենայն զվճարս թոշակացն ի հարկահանացն Ասորւոց առեալ, ի խօսս և ի գիրս ասորի հարկէին, և անգէն ի նոյն կրթեալ և ուսեալ եւս լինէին. որպէս և Իսրայէլ ի Բաբելոն՝ մոռացաւ զիւր սեպհականն, և ամենեքեան զՔաղդէացւոցն ուսեալ խօսէին, ծնեալք ի հաւատս և ի յազգ Եբրայեցի. իսկապէս և Հայկազունքն ծնացին յազգ իւրեանց, և սովորական գոյան ի լեզուս ասորի։

1. Բառս մի պակսի, բաբեկամութեան և գործակցութեան նշանակութեամբ, կամ անոր հակառակն։

2. Ասորւոց կամ Ասորեստանեայց։

Ի.

ԲԵՐՈՒԻՄՆ

ԳԱՍՏԱՌԱԿԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԵՊԵՍԻԱ

(ԵՊԻՓԱՆ)

Ի մտանելն իւրում (Անան գեսպան Աբգարու) ի տան Գամալիէլի՝ հաւատարիմ վարդապետի, և նա որպէս ուսեալ ի մանկանոցն՝ գնաց ընդ առաջ Տեառն Յիսուսի. և ունէր գաստառակ վուշ, մեծագոյն որպէս զրկաչափ մի, պատուական և սպիտակ որպէս ձիւն, յօրինեալ ծայրօք որպէս թագաւորական ծիրանի, մեառաքս կարմիր և կանաչ, փողեալ[1] ոսկւով. և տարածեաց զայն առաջի Տեառն՝ Որդւոյն Աստուծոյ, արարչին արարածոց, Յիսուսի Քրիստոսի, փրկչին մերոյ: Եւ Տէրն մեր խոնարհեալ ամբարձ զայն՝ երկու եւս ձեռօքն. և որպէս լուացեալ եւս էր, արկ խաչանման գաստառածայինն պատկերաւն՝ վերուստ ի վայր բերելով. օ՜ն անդր, և նկարեցաւ ի գաստառակն՝ պատկերն արարչագործ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, իսկապէս. և տայ ի Թումա: Եւ տեսեալ ամենեցուն՝ երկրպագեցին աստուածայինն նկարեալ պատկերին. և Թումա ծալեալ զթուղթն և զուարք գաստառակն՝ և պահեալ ի վարշամակի, որ և այն (էր) գեղեցիկ և սպիտակ յոյժ, և տայ յԱնանէ և յորս ընդ նմա: Եւ նոքա անդրէն խոնարհ երկիր պագանելով արարողին Յիսուսի, մեծաց չնորհաց ունելով զոհացողական բանիւ, և ելեալ գային փութանակի մեծաւ խնդութեամբ՝ ի փառս Քրիստոսի թագաւորին երկնաւորի: Եւ հասեալ ի քաղաքն Մանսպատ, որ և

1. Թուի թէ պիտի ըլլար փողփողեալ, փայլփայլեալ, ոսկիօրէն փայլփլալ, պլպլալ:

այսօր կոչի Մծղհ, և մտեալ ի քաղաքն սակս պիտոյից, և ոչ կամեցան զայն մուծանել ի քաղաքն, որպէս խնամատարեալ՝ թէ գուցէ մաքսատացն գիտացեալ զայն և ապդ առնեն յարքունիս, և լինի յափշտակեալ առ ի մէնջ. և անդէն իրրեւ ի պահարանի ամրացուցին զսուրբն զայն նկարագիր, գնելով ի մէջ երկու փոքրագոյն աղիւսաց, զոր և արուեստաւորք եղեն հրով, որ և արդ ասի կղմինտր: Եւ առ Անանէ զանխլաբար ի ներքոյ վերաբկուին, և գնէ ի պատուհանս պարսպային նեաւագին և արտաքոյ քաղաքին[1]. և ոչ ժամանեցին ելանել, զի կանխեալ փակեցան դրունք քաղաքին: Օ՜ն իսկ, և զգիչերն ամենայն պահապանք քաղաքին տեսանէին զլոյսն գերագանց՝ զի ճառագայթեալ փայլէր ի վերայ պարսպացն, երեք բուրգն ընդ մէջ լինելով և աւելի, և ոչ կարէին հնչգրտել զտեղին, զի պահեալ եւս լինէր յԱստուծոյ: Եւ առ վաղիւն ինքն իսկ Անանէ արդէն ի չքմեղս լինելով, և առեալ գնայր զճանապարհս իւր, ընդ նմին և այլքն, բազում խնդութեամբ:

Եւ իրրեւ մերձ եղեն ի քաղաքն իւրեանց, որ և հասին, գալով փութանակի յաւուրս երկրատասան, և պատկեր աւուրն ուրբաթ, և յինն ժամուն և յանկարծ սաստիկ ձայն անկեալ արչաւանաց և ասպատակի. և նոցա երկուցեալ, օ՜ն անդր, և փութացեալ ընկեցին զսուրբն զայն ի ջրհորն՝ որ մերձ էր առ նոսա, և էր հեռի ի քաղաքէն հինգ կամ վեց ասպարիզօք. և անդէն չտապով հասին ի քաղաքն փութացեալ երիվարօք: Եւ ամանց խնդութեամբ եկեալ՝ աւետիս տալով, և պատմեցին արքային վասն գալստեան սրանցն. և նա ուրախա-

1. Կասկածելով որ գուցէ գաստառակին համար մաքս ուզեն, չմտուցին ի քաղաք. այլ երկու աղիւսի կամ կղմինտրի մէջ ծածկեցին, և քաղքին պատերուն վրայ՝ նեռ արձրկելու խորշի կամ ծակի մի մէջ դրին, որ երբ ելնեն քաղքէն՝ առնուն տանին:

ցեալ յոյժ, և հրամայեաց գալ առ ինքն. և մեծաւ պատուով ընկալեալ ողջունէր զնոսա: Եւ նոքա զոր լուան ի Տեառնէ Յիսուսէ՝ պատմեցին առաջի արքային և մեծամեծ աւագանոյն. հաուն և զիբրն. և առեալ զայն յոտանաւոր՝[1] համբուրէր (ի վերայ) յաչացն և յերեսացն եդեալ, և ի վերայ գլխոյն բարձրացուցեալ. և ապա ի վայր խոնարհութեամբ երկիր պագանէր. և առեալ առենադպրին ընթեռնոյր, և արքայն՝ յոտանաւոր ամենայն մեծամեծօքն կալով, և ունկնդրութեամբ լսէին: Եւ ի վճարս ատուածային բանիցն՝ անգէն թագաւորն և ամենայն մեծամեծ նախարարքն հանդերձ ռամիկ ամբոխիւն՝ որ յարքունիս ժողովեցան յայնմ հանդիսի, դարձեալ երկրպագեցին, փառս ի վեր առաքելով անուանն Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ: Եւ բազմեալ արքայն և արժանաւորքն, և մեծարեալ զԱնանէ և զորս ընդ նմա, բազմեցոյց մերձ ի յաթոռ թագաւորութեան իւրոյ: Եւ իսկոյն յարուցեալ Անանէ ասաց զիբացն եղելոց. և նա վերստին ուրախացեալ յոյժ և խնդալր հանդերձ ամենեքումբք, որպէս և լուաւ սակս կենդանագրեալ պատկերին տէրունական: Եւ յայնմ աւուր ոչ կարացին ելանել, քանզի և նահմացեալ եւս էր. և առ վաղիւն որ է շաբաթ, հրամայեաց ամենայն բազմութեան քաղաքին պատրաստ լինել, արանց և կանանց, ծերոց և տղայոց. և ասաց կազմել զքաղաքն և զպարիսպն և զիրողոցամէջս ամենայն և զհրապարակս, ոսկեհուռն դիպակօք և կանաչացեալ և ծաղկեալ ոստովք՝ ի պղպեղոց ոստոց. նոյնպէս ամենայն ուխք ի մեծաց մինչեւ ի փոքունն՝ պայծառանալ հանդերձիւք, մինչեւ յաղթաս, և խրախանալ ի փառս Յիսուսի Քրիստոսի. ունելով մեղէնս գունակ գունակ և ծխանելիս և կնդրուկս, որպէս վայել էր թագաւորի և որդւոյ Աստուծոյ:

1. Ոտից վրայ կանգնելով:

Օ՜ն իսկ, և արքայն ինքն Աբգար յարքունի տանէն հրամայեաց առնել մեծագոյն մոմեղէնս երեք հազար, ի գոյնս երեք, սպիտակ, կարմիր, կանաչ, և ոսկեզարդ. և ասաց բառնալ զայն մեծամեծ աւազանն, և այլ մանրագոյն երկոտասան բիւր (120,000) առնուլ ռամիկ զօրացն. և կրակարանս ոսկիս լի հրով, և ծխանելիս և կնդրուկս. և զամենայն փողս կռածոյս և զերգարանս խնդութեան և զբօսանաց: Եւ յերեք ժամ շաբաթ աւուրն այնպիսի պատրաստութեամբ ելին ի քաղաքէն. և գային հանդարտութեամբ և երգարանօք և քնարիւք, գովէին զամենաթագաւորն Քրիստոս:

Եւ ինքն արքայն ի ծայրս մատանց ոտից և ձեռացն առաւել եւս ունէր զգաւն, և ոչ կարէր ըստ կամս գնալ. այլ որպէս կառս յօրինէր, և արք երիտասարդք բարձեալ տանէին զնա զգուշութեամբ: Եւ էր անդ յայնմ աւուր տեսանել զմայրաքաղաքն՝ ունայն յամենայն բնակչաց իւրոց, ուրոյն ի ծննդականաց և ի հիւանդաց: Եւ հասեալ ի տեղին, և արս ճարտարս և հաւատարիմս իջուցեալ ի ջրհորն. և հանեն զաստառած անկարեալ գաստառակն, և զմի աղիւսանման կղմինդրն. և միւսն այլ մնաց անդրէն ի կամն Յիսուսի Քրիստոսի, առնել բժշկութիւն յաւիտեան, անուամբ Թաչկինակին[1]:

Օ՜ն անդր, և տեսեալ արքայն զԴաստառակն պատեալ սպիտակ և սուրբ վարշամակաւն, և անցս մաք[2], ոչ ունելով հիւթ ջրոյ, և այնու զարմացեալ տայր փառս Աստուծոյ: Եւ ասաց Անանէի՝ բառնալ ուր և պահել էր. և առեալ առաջի արքային ակաւ բանալ. և անդէն հոտ անուշութեան բուրեցաւ. մինչեւ ասաց արքային ի բաց տանել զամենայն ծխելիս և զկնդրուկս. զի այս է հոտն կեն-

1. Որ է նոյն իսկ Դաստառակն:
2. Չարիկ էր ասել և այլն ցառաք:

դանութեան՝ որ հաւատան զՔրիստոս՝ աստուած և տէր կենդանեաց և մեռելոց. և հայէր արքայն մեծաւ զգուշութեամբ և երկիւղիւ: Եւ յորժամ պարզէր Աղանէ զաստուածանկար դաստառակն՝ ընդդէմ արքային, ճառագայթեաց լոյս համասփիւռ, մինչեւ ծածկեալ եղեւ լոյս արեգականն, իսկ անհամար մամեղենաց և ջահիցն բնաւ ոչ երեւէին. օ՛ն իսկ, և ոչ զօրէին տեսանել զմիմեանս. այլ և ի ձայն բարձր օրհնէին զերկնաւոր թագաւորն զՔրիստոս՝ ազգի ազգի երգարանօք և քնարիւք: Եւ մերձ կացեալ թագաւորն երկիւղիւ երկիր պագանէր. և առեալ երկու եւս ձեռաքն պատրաստարար[1], և արկանէր զերեսաքն. և արտասուէր յոյժ առ այնչափ խնդութեանն: Եւ անգէն ազգեալ առ նա Հոգին Աստուած, և սկսաւ առել զաղմոս զայս խորհրդական՝ ողբաձայն եղանակաւ. Տէր իմ և Աստուած Յիսուս Քրիստոս, յերեսաց քոց իրաւունք ինձ եղեն, և աչք իմ տեսցեն զուղղութիւն. և լուսով երեսաց քոց տեսանել զլոյս հաւատով ի փրկութիւն: Եւ թագաւորս՝ ծառայ քո և մահկանացու՝ ըստ գրեցելոյն, ունկնդիր եղէց քեզ թագաւորիդ անմահական. զի օրէնք ի քէն ելցեն և դատաստանք քո լոյս հեթանոսաց. և եղից զաստուածային նկարագիր քո պատկերիդ՝ որպէս էր պատկ պարծանաց, և առաւել բարձրագոյն քան զթագ անցաւորիս՝ ի վերայ գլխոյ իմոյ, ի փառս ինձ լինել և օգնութիւն, ընդդէմ երեւելի և աներեւոյթ թշնամւոյն. ըստ այնմ որ ասէն. Դիր խայր ի գլուխ քո ի փառաց յաւիտենականին Աստուծոյ՝ Յիսուսի Քրիստոսի. և որպէս ծագէ արեգակն ի բարձանց, և լուսաւորեցեր զնստեալս ի խաւարի և ի ստուերս մահու: Եւ արդ, տէր իմ Յիսուս Քրիստոս, ուղղեա զգաս իմ ի ճանապարհս խաղաղութեան. և քեզ փառք յաւիտեան եղականացս:

1. Այսինքն՝ զգուշութեամբ:

Եւ ի կատարման մաղթանացն խորհրդական մարգարէութեանն, իսկոյն յօնք և արտեւանունք աչաց բուսեալ եղեն կարի եւս լաւագոյն, և ծայր մատանց ձեռացն և ոտիցն որ կոճոպեալ եւս էին ի գառնագոյն և ի դըժնեայ ցաւոցն, ամրացեալ կազմեցան ըղընդամբք և պճղամբքն, և թէ և[1] մեծ մասն ցաւոցն բուժեալ եղեւ յամենայն մարմինն: Եւ տեսեալ առ ինքն զողորմութիւն Աստուծոյ, ի ձայն բարձր՝ որ և այն նուագեալ էր, պարգեւեցաւ նմա փառաւոր (առնել) զաստուածային պատկերն՝ գոհացողական օրհնութեամբ, հանդերձ ամենայն բազմութեանն. որ և միաբան ասացին զԱմէնն՝ մեծաւ ուրախութեամբ, և երկրպագութեամբ փառաւորելով զփրկական անունն Յիսուսի Քրիստոսի և զնկարագիր պատկերի նորա: Եւ ունէր Աբգար զսուրբ Աստուածակն ի վերայ գլխոյ և թագին արքայական. օ՛ն անգր, և ասաց ուրախալից բարբառով հնչեցուցանել զամենայն փառս կատարած և եղծութեան, զոր և Աղանէ բերեալ եւս էր յարքայէն Հռոմայ. այլ և զամենայն երգարանս և զուրախարարս, որպէս և օրէնն էր թագաւորաց առնել՝ ի մտանել և ելանելն իւրեանց յարքունական քաղաքս, և առաւել՝ իրրեւ յաղթելով թշնամեացն և գառնան յաթոռ թագաւորութեան: Օ՛ն իսկ, և այնու հանդիսիւ եմուտ արքայն ի քաղաքն իւր, պայծառացեալ աչօք և լուսափայլ երեսօք և ազնացեալ ձեռօք, և ամրացեալ ոտիւք. բառնալով զնկարագիր պատկերն ի վերայ թագին և գլխոյն, գայեմ՝ որ երբարձ զմեզս աշխարհի ի վերայ սուրբ խաչին. և այժմ բառնայ հանապազ պատարագելով ի վերայ սրբոյ սեղանոյն, ի ձեռն քահանայապետից և քահանայից: Այլ և օ՛ն անգր, անպատմելի փառաւորութեամբ մտին ի քաղաքն. որ և էր լցեալ յամենայնէ բերկրալից ուրախու-

1. Աւելորդ թուի թէ և, կամ բան մի պակաս է:

թեամբ. և ընկալաւ զանմահ փեսայն նկարեալ (ի) թաշկինակ՝ յառագաստ իւր սուրբ. և տարեալ յարքունիս և բազմեցոյց արքայն զսուրբն գայն, նախ յարքունական գանձարանին. կարգեաց արս երկիւղածս ի սպասաւորութիւն, չահիւք և խնկօք անսպառ, ի տուէ և ի գիշերի, պահպանել ոսկեզարդ վարագուրջք. և ամենայն հաւատացեալ բազմութեամբ խնկապէս ի Քրիստոս. և երկրպագեալ գնացին չահիւք և լապտերօք և մոմեղինօք լուցեալ օք խնդութեամբ, փառաւորելով զՔրիստոս՝ զորդին Աստուծոյ, չնորհ ունելով և արքային, ի հաստարակ գիշերոյ միաշաբաթին: Եւ մնաց անդէն մեծաւ փառաւորութեամբ խնկապէս առհաւատչեայ քաղաքին Եդեսիոյ, մանաւանդ և ամենայն ազգի մարդկան, ճշմարիտ հաւատոյն՝ որ ի Հայր և յՈրդի և ի Սուրբ Հոգին:

Լ.Ա.

ԱՌԱՔԵԱԼՔ ՔԱՐՈԶԻՉՔ Ի ՀԱՅՍ

(ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ)

Մահն ի Հայք Աւաքեալքն Բարդողոմէոս և Թադէոս և Յուդա Յակոբեան. բայց զԲարդողոմէոս՝ վասն այն եղի սկիզբն, զի ոմանք զԹադէոս յԵօթանասնից ասեն, և զԲարդողոմէոս ասեն յերկոտասանից. Թադէոս՝ զոր աւետարանն պատմէ թէ յառաջ կոչէր Ղեբէոս, և ի Տեառնէ անուանեցաւ Թադէոս: Յուդա Յակոբեան, որ և սա յերկոտասանից վկայի, և կայ յՈրմի քաղաք Հայոց[1]:

1. Թաղուած է յՈրմի քաղաքի՝ որ յարեւմտեան կողմն Համանուն ծովակին:

Եւ Եղիշէ և Թադա[1] երկուք յԵօթանասնից են. և գնացին ի կողմանս Աղուանից՝ հրամանաւ Թադէոսի, և անդ կատարեցան:

Թէոփիլոս առաջին ձեռնադրածն Թադէոսի՝ ի Կեսարիա[2] Հայոց, ի Կապադովկիա: — Այդ կերպասագործն Աբգարու թագաւորին, զոր կացոյց ի Մծխեթա՝ յԱռահայ քաղաքի: — Զաքարիա[3], զոր ձեռնադրեաց յարեւելս փոխանակ ինքեան և ասաց. Զսա ետու ձեզ վարդապետ, զոր եցոյց ինձ Հոգին Սուրբ: — Դադիոս, մի յԵօթանասնից, որ գնաց հրամանաւ Թադէոսի՝ ի Մեծն Հայք և ի կողմանս հիւսիսոյ. և լուեալ զմահն Աբգարու՝ և դարձեալ եմուտ ի փոքր Սիւնիս[4], և կրօնաւորեալ՝ անդէն ծածկաբար վախճանեցաւ. և տեղին չինեցաւ վանք և յանուն նորա կոչեցաւ:

Լ.Բ

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ Ս. ՍԱՆԴՈՒՏՈՅ[5]

Եկեալ սուրբն Սանդուխտ առ սուրբ Աւաքեալն, և անկեալ յոտս նորա համբուրէր և ասէր. Տէր իմ, խորհէի ի մտի իմում, եթէ զինչ առնիցէ Քրիստոս յօգն իմ. և իրրեւ եղէ ես ի քուն յայսմ

1. Եղիշէ և Թադա (որ ասորի անուն մ'է) յայն հեղինակաց ցանկին մէջ չեն գտուիր, և Թուին զատ Եօթանասունն Աշակերտներէն՝ հին քարոզիչք քրիստոնէութեան ի Հայս:

2. Աղթային աւանդութիւն է, օտարք չեն ճանչնար:

3. Ս. Թադէոսի վկայաբանութեան մէջ մանրամասնաբար յիշուի սա:

4. Որ և Աղուանք Հայոց. ծանօթ է հիմայ այլ վանատեղիք:

5. Հեղինակ քանիս ասորագրէ զինքն Սահռեի

դիչերի, լոյս ծագեալ յերկնից տեսի ի վերայ իմ. և ի մէջ լուսոյն այր մի լուսապզեաց, զորոյ ոչ կարէի առնուլ զնմանութիւն, յառաւել լուսոյ ճառագայթիցն: Զայնեաց զանուն իմ և ասէ. Սանդուխտ, արի, փութա, և զգեցիր զլոյս իմ. և ես յարտասուս եղեալ՝ ասեմ. Տէր իմ, չեմ արժանի: Եւ սաստեալ յիս, զզեցայց զլոյսն որպէս զվերարկու, և զպսակ լուսեղէն եդ ի վերայ գլխոյ իմոյ. և զարդարեաց զիս լուսեղէնն զարդուք. և ես զարմացեալ կայի: Եւ ասէ ցիս. Խնդա և ուրախ լեր, Սանդուխտ, զի ոչ Թողից զքեզ: Եւ յանկարծակի եղեւ Թնդիւն ահեղ, և զարթայ զիս. և ես զարԹուցեալ փառաւորեցի զԱստուած, որ արժանի արար զիս այնպիսի սքանչելի տեսլեան:

Եւ իբրեւ լուաւ սուրբ Աւաքեալն, խնացաւ եթէ այսօր փոխի յաշխարհէս և զգենու զփառս լուսեղէն զգաւազն, և առնու զպսակն լուսեղէն ի գլուխ իւր. և յարտասուս եղեալ սուրբ Աւաքեալն՝ ասէ. Երանի՛ է քեզ Սանդուխտ, զի այն որ երեւեցաւ քեզ՝ ինքնին է Քրիստոս միածին Բանն Աստուած. վասն զի և ետես զվերմեռանդն գութ սիրոյ քո որ առ ինքն. վասն այսորիկ երեւեցաւ քեզ՝ զի առաւել հաստատեսցէ զքեզ ի լոյս աստուածաբեթեան հաստատեսցէ զքեզ ի լոյս աստուածաբեթեան իւրոյ: Եւ լոյսն որ զզեցոյց զքեզ իբրեւ զվերարկու և պսակն լուսեղէն ի գլուխ քո, վասն զի Թողցես զԹանձրամած մարմին քո, և զզեցցիս զլոյսն երկնաւոր. և զպսակն յաղԹութեան մարտիրոսական՝ լիցես արժանի առնուլ ի գլուխ քո, և զարդարել վերագոյն լուսովն, և բնակել ի լոյս աստուածաբեթեան. և հանապազ կայցես ի խնդութեան և յառաքեալ վերին լուսոյն: Եւ որ ասացն՝ խնդա և ուրախ լեր, ոչ Թողից զքեզ, վասն զի անմեկ-

եպիսկոպոս, և պատուիրէ որ կարգան առաջին Հայք· յորմէ երեւի Թէ ըստ կաԹողիկոս, կամ Շամուէլն հակառակաԹոռ Ս. Սահակայ Մեծին, կամ Սամուէլ՝ յաջորդն Բաբգենայ, ի սկիզբն Ձ դարու:

նելի է Քրիստոս ի սիրոյ իւրոյ, և ուրախ առնէ զամենեսեան որք բեւեռեալ են ի սէր աստուածաբեթեան նորա:

Եւ իբրեւ լուաւ Սուրբն Յանդուխտ զայտմաԹիւնս այս սքանչելի տեսլեանն, յարտասուս եղեալ անկանէր յոտս սուրբ Աւաքելոյն, և համբուրէր զսուրբ գաւազանս նորա, և ասէր. Երանի է քեզ, հայր իմ, որ ծնար զիս ի զիրկս քո, և ուսուցեր ինձ զկենդանի լոյս Քրիստոս. զի դու եղեր ճանապարհ կենաց, և աղ անհամաբեթեան իմոյ: Արդ, խնդրեա ի Քրիստոսէ՝ լուսոյն իմմէ, զի փութով ժողովեսցիմ առ ինքն: Եւ ասէ սուրբ Աւաքեալն. Ահա փութով հասանես ի լոյսն կենդանի, որում անձկասդ: Եւ ասէ Սանդուխտ. Տէր իմ, ազաչեմ զքեզ, զի մինչեւ փոխիմ՝ մօտ կայցես առ իս, զի ոչ կարեմ տեւել ի սիրոյ հոգւոյ քո: Եւ յարուցեալ ազօԹէին. և ամբարձեալ զձեռս իւր սուրբ Աւաքեալն՝ ասէր. Տէր Յիսուս Քրիստոս միածին որդի Աստուծոյ, յիշեա զաղախին քո, և առ համբերաբեթիւն ի պատերազմիս՝ այսօր, և արա յամօԹ գչար Թշնամին. զի գիտացեն և ծանիցեն Տեառն հաւատացեալք, եթէ դու միայն ես Տէր յերկինս ի վեր և յերկիր ի խոնարհ: Եւ դարձեալ առ Սուրբն Սանդուխտ՝ օրհնեաց զնա, և ասէ. Պինդ կաց, և զօրացուսցէ զքեզ Քրիստոս:

Եւ ահա յանկարծակի հասին բարբարոս իշխանքն բազում զօրականաք՝ առ Սուրբն: Իսկ սուրբ Աւաքեալն եղեալ գնաց ընդ մէջ նոցա. և նոքա ոչ տեսանէին. և բազում խնդիր լինէր վասն Աւաքելոյն: Իսկ նոցա կալեալ զՍուրբն Սանդուխտ, ասեն. Փոխանակ զի դու Թողեր զաստուածս մեր և արհամարհեցեր զԹագաւորն մեր՝ զհայրն քո, և եղեր Թշնամանս Հայոց աշխարհիս, արդ չարամահ սպանցուք զքեզ: Իսկ Սուրբն Սանդուխտ հայեր յերկինս արտասուաք հանգերձ, ազաղակեր և ասէր. Տէր իմ Յիսուս Քրիստոս, Աստուած իմ, հաս յօգնականաբեթիւն, և տուր ազայաբեթեան իմոյ համ-

բերութիւն ի պատերազմիս. ընկալ զիս և խառնեա ի գունդս Սրբոց քոց: Կայր սուրբ Ա՛ռաքեալն մօտ և մխիթարէր զնա. և Սրբոյն տեսեալ զնա՝ զօրանայր: Եւ ասէ ցԱ՛ռաքեալն. Հայր իմ, մի թողուր զիս մինչեւ կատարեցից զընթացս իմ: Ա՛ռ սուրբ Ա՛ռաքեալն. Պինդ կաց, և զօրացուսցէ զքեզ Ք՛րիստոս:

Եւ անօրէնն բարբարոսքն ոչ կարէին տեսանել զԱ՛ռաքեալն. և այնպէս տարան ի տեղի սպանմանն: Ա՛ռ Սուրբն Սանդուխտ. Համբերեցէք սակաւ մի, զի այժ առից. և հայեցեալ յերկինս՝ ասէ. Հայր տեառն մերոյ Յիսուսի Ք՛րիստոսի, հայեաց յաղաւթին քո, և ընկալ զիս ի հոտ անուշիդ. և սրա զիս արժանի երկնաւոր լուսոյ ատենաժառանգութեան քո: Եւ հրաժարեալ ի սուրբ Ա՛ռաքելոյն՝ ընկալաւ զօրհնութիւն ի նմանէ. ասէ. Ա՛րդ կատարեցէք զկամս հօր ձերոյ սատանայի: Եւ մատուցեալ զպարանոցն կամուրջարար: Եւ առեալ դահիճն զսուրն՝ կամէր սպանանել զսուրբ կոյսն. եհար զդահճապետն և սատակեաց զնա: Իսկ բարբարոսքն առեալ եւս զրգռեալ ի չարէն, առեալ զսուրն դիմեցին ի վերայ նորա. և անդէն զիրեարս հարեալ սատակէին: Իսկ ազախինն Ք՛րիստոսի կայր ի ծածուկ յաղօթս, և ասէր. Տէր Յիսուս, Ա՛ստուած իմ, ընկալ զիս: Եւ յարուցեալ պատանի մի՝ ա՛ռ սուր, և հարեալ մօտ ի սրինս կուսին, և եղ անտի արիւն. և նա տւանդեաց զոգին: Եւ բուրեաց հոտ անուշութեան. և ծագեաց լոյս յերկնից իբրեւ զսիւն հրոյ, և եկաց ի վերայ սուրբ մարմնոյն՝ զերիս սիւս և զերիս գիշերս: Եւ հաւատացին յաւուրն յայնմիկ ոգիք իրրեւ երկու հազար՝ ընդ այր և ընդ կին, և ոչ մնկնեցան ի տեղւոյն: Եւ եկեալ սուրբ Ա՛ռաքեալն մկրտեաց զնոսա ի գիշերի. և ապա առեալ զմարմին Սրբոյն Սանդըխտոյ՝ եդ ի նոյն տեղւոջ, և արար զդերեզմանն՝ երեւելի, լուսաւորել չնորհօք. և աղօթեալ զնաց առ աշակերտսն իւր. և հաստատէր զհաւատացեալս՝ բանիւ սուրբ աւետարանին:

Լ Գ

ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ Ս· ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍԻ Ի ԳՈՂԹՆ

(ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐՊԷԼԵԱՆ, Ա· Զ)

Ի գառնալն Բարթողիմէոսի ի Պարսից՝ անցեալ ընդ Ա՛տրպատական՝ գայ իւրովք աշակերտօքն, և անցեալ ընդ գեան Երասխ՝ մտանէ ի սահմանս Սիսականաւ, և սկիզբն արարեալ քարոզութեանցն յՕրդուատ[1] ի գիւղ՝ և յԱրեւելս գաւառ, և ի տուն Բաղաց և ի Գողթն[2], որք ընկալեալ զքարոզութիւն աւետարանին լուսաւորեցան մկրտութեամբ աւազանին, ի ձեռն Բարթողիմէի: Իսկ սուրբ Ա՛ռաքեալն չինէ եկեղեցի ի Գողթն, յարեւմտից եզերն[3] ի վերայ վիմի մեծի, յիւրեանց հանգստեան տեղւոջն, ուր վանքն էին կալեալ. և անուն կոչեցին Տէառնառաջ: Եւ արարին նշանս մեծամեծս. քանզի էր չուր մեծաւակար ի Յորդվատ գետ, որ ոռոգանէր յամենայն ամի զամենայն անդաստանս և զայգիս. և աղօթեցին, և յանկարծակի կորուսին զչուրն. որ և տեղին յայտ է մինչեւ ցայսօր:

Եւ էր իշխան գաւառին Շաբ, և որդի իւր խոտրոյ, և թոռն իւր Վահան, և կին իշխանին Նշնա: Ա՛պա կացուցանէ նոցա տեսուչս, զի մի՛ վերստին մոլորեսցին ի կռապաշտութիւն, զոմն յաչակերտաց իւրոց՝ կռւիսի անուն, ձեռնադրեալ զնա եպիսկոպոս. և ինքն յանձն արարեալ գնա Սուրբ Հոգւոյն, գայ ի վահանիդ գետ. և մի յաչակերտացն անդ վաղճանեցաւ, Լուսիկ անուն. զոր ի նմին տեղւոջ եդին ի հանգստի, և չինեցին փո-

1. Գրուի և Որդվատ. ըստ այլազգեաց Օրտուպատ:
2. Երեքն այլ Սիւնեաց գաւառներ են:
3. Հաւանօրէն Գողթան գետակին եզերքը:

քրիկ մատուռն մի ի վերայ. և կատարի մեծամեծ աքանչելիք բժշկութեան մինչեւ ցայսօր. և զամեհիս[1] յայժ հնազանդեցուցանէ հող գերեզմանին: Էր և անդ բագին մի, կօթանեաց և զայն, և շինեաց ի տեղին խրթին[2] եկեղեցի, և կոչեաց յանուն Սրբոյն Թովմայի. և անդ լինին բազում նշանք: Իսկ ոսկրք Աւաքեայն եղեալ անտի գնաց ի մայրաքաղաքն Հայոց Դուին: Յետ այսորիկ վաղճանեցաւ Կումսի. և նոքա ոչ կամեցան առանց առաջնորդի մնալ, և այլ ուրեք ոչ ունէին ակնկալութիւն:

Ապա կացուցանեն իւրեանց զԽուժիկ ոմն[3] Բաբիայ անուն. գինի ապա քաջալերեալք ի Սուրբ Հոգւոյն, առաքեն առ Սուրբն Թադէ զոմն մի Մոյսէ անուն, որ և ոչ կարաց անդրէն գառնալ. այլ սոքա կացին մնացին անտերունչք բնակեալ այսր անդր, և ոմանք զօղեալք ի լերինն Գարռուայ[4], միայնաւորութեամբ զկեանս իւրեանց վարէին. զրպաւմս ուսուցանելով յոյով ժամանակօք, մինչ ի գալ մեծի Լուսաւորչին ի Հայս և լուսաւորելոյ զամենայն աշխարհս Հայոց. ապա գնացեալ սոցա խնդրեցին իւրեանց առաջնորդ, և եւս նոցա այր մի Տարօնացի՝ Մովսէս անուն. և յետ սորա Յահակ Տարօնացի, և ապա զՕրդուանիդատ, և ապա Ստեփանոս, և ապա զՅովհաննիկս. և այսպէս ի կարգ անկեալ մի զմի փոխանորդելով մինչեւ ցայժմ:

1. Հիւանդութեամբ կատղածք, կամ գազաններ:
2. Պղտիկ, անշուք, անզարդ:
3. Պարսկատանի խուժատան նահանգէն, ուսկից էր և Վէռանդեանց նահատակութիւնը տեսողն:
4. Տուգէ ըլլար Գարռուայ:

ԼԴ

ՀՈԳԵԱՑ ՎԱՆՔ

(Ս. ԽՈՐԵՆ· ՊԱՏՄ. ՊԱՏԿԵՐԻ ՏԻՐԱՄՕՐՆ)

Եկեալ ի Հայս (Ս. Բարթողիմէոս), գնաց յերկիրն Մոգուց և Պարսից. և հասեալ ի քաղաք թագաւորութեան նոցա, որոյ այժմ ասի Խորասան՝ բարբառովն իւրեանց. և արար ընդ մէջ կրակատանին՝ սիւն լուսոյ հրեղէն, և կալեալ զսուրբ պատկերն ընդդէմ արեգականն, և արդել զճառագայթս նորա, և խաւարեցոյց զվեց ժամն. և ոչ հաւատացին, բայց միայն ութ ի մոգուցն յայնցանէ, որք երկրպագեցին Փրկչին, և եկեալ մկրտեցան յառաքելոյն. զորս հանեալ ընդ իւր ի միջոյ ամբարշտացն՝ և բերեալ ի Հայս: Եւ եկեալ յաշխարհն Աղձաւացեաց[1], ի համբաւ քարի միոջ, քանզի դեւք բազումք բնակեալ էին անդ, և պատրէին զմարդիկ տեղւոյն, տուեալ յայնմ տեղւոջէ՝ դեղս ախտականս առ ի կատարել զպղծութիւնս ախտից, կանանձայնս դարբնաց ահաւոր հրաշիւք՝ արհաւիրս գործէին. յորս մարդիկ աշխարհին սովորեալք, անդ առ քրային[2] դիգերէին. առեալ ի չաստուածոցն ծրարս թարախածորս ի պատիր ախտիցն, որպէս զծրարան Կիպրիանոսի[3] առ ի

1. Վանայ արեւելեան հարաւային կողմն, շատ քարեր և քարայրներ ունենալով՝ այսպէս կոչուած է. հիմայ մեկ մասն Գաւաշ կոչուի:
2. Դարբնաց կրակարան և հալոցն է, որ կ'ըսուի քուրայ կամ քրայ. բայց թերեւս այս տեղ քրայինը կարդալու էր քարայրին:
3. Զսա սմանք համարին հռչակաւոր հեղինակ սուրբ Հայրապետաց, այլք՝ նոյն անուամբ կախարդ մի

պատիր Յուստինեայ կուսին. և անուանէին զա-
նուն տեղւոյն այնորիկ Դարբնաց քար: Հասեալ
սուրբ Աստաքեան Աստուծոյ անդ, հալածեաց զզ-
դարբինան զգործօնեայս չարին, և վկուսան փըչ-
րեաց, որ յանուն Աննահատ էր: Յոր ժողովեալ
բազմութիւն դիւացն ի վերայ լերինն բարձու՝ ի
հիւսիսոյ կողմանէ, քարաձիգս առնելով անթիւ
բազմութեամբ յոյժ, և ձայնս և ճիչս և գոչիւն
սաստիկ արձակէին: Իսկ սուրբ Աստաքեան տեսու-
նագրեաց խաչ մի փոքրիկ, և կանգնեաց ի վերայ
քարի լերինն. և անդէն դեւքն չիք լինէին: Զոր՝
յետոյ սուրբ հայրապետն Գրիգորիոս՝ վանաչն առա-
քելական ընդ իւր շրջեցուցանէր, մինչեւ ի թողուլ
նոցա զաշխարհս. իսկ յետ ժամանակի եղեալ ի
վերայ գերեզմանին Տրդատայ արքային Հայոց:

Եւ է տեղին այն յորում դեւքն էին՝ լեռնամէջ
վիմաց, ի վերայ գետոյն մեծի՝ որ կոչի Տիգրիս,
հուպ ի բերդն ամուր որ կոչի Կանգուար, և մի-
սոյն Աղձաւաց քար, ուստի ջուրք բազումք հոսին
ի լերանց ամրոցին՝ ըստ գարնանային մատանցն[1],
գան անցանեն ընդ հիմունս տաճարի Տիրուհւոյն,
խառնեալ օժանդակեն զգետն մեծ Տիգրիս: Անդ
հիմնարկեալ սուրբ Աստաքեան զհիմն տաճարի Սըր-
բուհւոյն՝ իւրովք իսկ ձեռաքն, չինեալ եկեղեցի
փոքրագոյն, և անուանեաց զնա Մոտրս Աստուա-
ծածին[2], և եդ ի նմա զպատկեր Տիրուհւոյն, և տայ
զնա սուրբ կանանց. և զլուսի կացուցանէ անդ
գքոյր Յուսկանն, և զքոյրն Արմզդանայ և զՄա-
քովտրի, և զայլ կանայսն ընդ ձեռամբ նոցա կա-

ափրիկեցի, որ կ'ուղեր մոլորցընել զկոյս Յուստինէ, բայց ինքն անկէ յաղթուեցաւ և քրիստոնեայ ու նահատակ եղաւ:

1. Գարնան եղանակին՝ ջուրքն աճին և յորդին:

2. Ըստ այսմ՝ հնագոյն եկեղեցի կ'ըսէ՝ Ս. Աստուածածնի նուիրուած. բայց շատ քննութեան կարօտ է ատենաբանութիւնն, և յետոյ յիշուած անձինքն:

ցուցանէ: Շինէ խրճիթս վանիցն, և տեսուչս հրա-
մայէ լինել հաւատացելոցն. և քահանայ կացու-
ցանէ անդ յիւրոց աշակերտացն, և անուանէ ըզ-
տեղին՝ Հոգեաց վանս[1], յանուն Տիրամօրն և Սուրբ
Կուսին, զի բազում աքանչելիս կատարէր Աստուած
ի ձեռն Սուրբ Կուսին յայնմ տեղւոջ:

Եւ ինքն սուրբ Աստաքեան ելեալ աւետարանել
ի Հայս, և կատարեցաւ յԱրբաւնս[2] քաղաքի, ի
Բարւնա անուանեալ տեղւոյն յանուն Աստաքելոյն:
Իսկ զոյր Յուսկանն Մարիամ կոչեցեալ՝ անցանէր
յայնկոյս գետոյն մեծի, չինէր իւր խրճիթ առ
ստորոտով քարին փոքրագունի, և մխայնացեալ
կատարեցաւ: Եւ ի նմին տեղւոջ կացուցանէ տե-
սուչս տեղւոյն՝ զքոյրն Արմզդատայ և Մաքով-
տրի, զԱննա և զՄարթա: Իսկ Աննա չինէր իւր
խրճիթ յայնկոյս ձորոյն որ Գարբնաքարն կոչեն.
միայնացեալ անդ կատարեցաւ, տուեալ գտես-
չութիւն տեղւոյն՝ Մարթայի. և բազում նշանս
և աքանչելիս կատարէր Աստուած ի ձեռն սուրբ
կանանցն: Զոր, եկեալ յետոյ Սրբոյն Գրիգորի,
վանս հաստատեաց գտեղին, չինեալ եկեղեցիս.
բայց գտաճար Սրբուհւոյն ոչ քակեաց, զի ձեռա-
գործ առաքելական էր, թողեալ զնա ի փառս և ի
պատիւ Աստուածամօր Երրորդութեանն, և կայ մին-
չեւ ցայսօր ժամանակի. յորում բժշկութիւնք բա-
զումք լինին, և ուրախութիւնք ոչ սակաւք, և լու-
սաւորէ զախտացեալս ամենայն, որ գան առ նա
հաւատով և յուսով, ունելով բարեխօս զծնող
միածնի Բանին՝ առ ծնեալն ի նմանէ տէրն իւր և
Աստուած բոլորեցուն, պարգեւօք և ողորմութեամբ
Հոգւոյն Սրբոյ:

1. Անուանի ուխտատեղի, ծանօթ մինչեւ հիմայ, բայց կողոպտուած և կեղտոտած:

2. Կամ Արեբաւնս. որմիոյ ծովակին արեւմտա-կողմն է:

Լ Ե

ՆՈՅՆ ԴԷՊՔ ՎԻՊԱՍԱՆԵԱԼ

(ՆԵՐՍԷՍ ՄՈԿԱՑԻ)

Ապա զեղբարան ողջունեալ[1],
Ընդ արեւելս կրկին դիմեալ,
Ի վիճակն պարտ էր գընալ՝
Յոր Անանտրուկ զթագէ սպանեալ.
Զանդրժելի գանձըն բարձեալ՝
Ընդ միջերկրայս տարակացեալ,
Զվիճակաւն այնու զանցեալ,
Ընդ Մոգաստանս գընայր դարձեալ,
Մինչ ի քաղաքըն Խորասան
Աթոռ նոցա արքայութեան.
Ուր և չիջոյց ըզկրակարանն
Եւ լոյս կանգնեաց հրոյն փոխան.
Եւ զլուսաւուն մարդկան հոգւոց՝
Աբեգականն ընդգէմ կացոյց,
Զակըն լուսոյ այս փորուածոյս՝
Երեք ժամու խաւարեցոյց:
Բայց ապառաժն անպըղտական
Ոչ աճեցոյց ըստ սուրբ սերման[2].
Միայն յութիւ որք ընտրեցան
Եւ ի նմանէ մկըրտեցան:
Նոքօք դառնայ ի նոցանէ,
Կրկին ի Հայս դարձիւ[3] դիմէ.
Ի Գողթ գաւառըն մըտանէ,

1. Բարթողոմէոս առաքեալն:
2. Ա.յսինքն, իբրեւ քարի վրայ ցանուելով, քրիստոնէութեան սերմն չի բուսաւ այդ տեղ. միայն ութ հոգի հաւատացին ի Քրիստոս:
3. Պէտք էր ըլլալ դարձեալ:

Զբազումս ի Տէր դարձուցանէ.
Զամբիծ հաւատն անդ հաստատեաց.
Զարսըն՝ նոցա գըլուխ կարգեաց,
Ապեալ զամանս որք ի կանանց:
Եկեալ յերկիրն Անձեւացեաց,
Ա.ւ ի համբաւ քարի միոջ՝
Յոր էր աղաւէսն ամրացեալ յորջ[1],
Ընդ Անահտայ բնակէր սիկնոջ[2],
Մարդախաղոչ կըռանադոչ[3].
Քանզի փայլակն ի վայր անկեալ
Ի դարբընաց քըրայս արկեալ.
Զդեղն որ կազմէր՝ ախտիւ խառնեալ,
Յուսութուլունս մակարդացեալ[4].
Որպէս և ճառըն պատմական
Ա.ւսուցանէ մեզ միաբան.
Եւ զվիշապին հին մեքենայն,
Կիպրիանոս այր սրբազան.
Զի հին վիշապն անդրը բունէր
Եւ կրռանին համաձայնէր.
Բախամամբ թնդմանն ահ արկանէր.
Զնոսա յուշոյ միշտ խափանէր[5].
Իսկ արք տեղւոյն զերդ խելագար
Անդ խանէին դեգերաբար,
Թարախածոր առեալ ծըրար.
Եւ կոչէին Դարբընաքար:
Յայս վայր հասեալ Ա.ւաքելոյն՝
Փութով խափան առնէր գործոյն,
Դարբընական բախման թնդոյն,
Որ գործօնեայքն էին նենգոյն.

1. Խաբեբայ սատանայն:
2. Հայք զԱնահիտ իրենց Տիկին կոչէին:
3. Դարբնաց զարկած կռաններուն ձայնը յիշեցընէ:
4. Հմայեալս ալիսիմներ պիղծ բաներով:
5. Սատանան խենթեցընէր զմարդիկ՝ այն ձայներով և դեղերով:

Եւ զդիցամայրըն խոթտակեաց,
Ըզբռնութիւն եկեալ դիւաց՝
Քարանձաւէն յայն հալածեաց,
Եւ սրբութեան տեղիք գործեաց։
Իսկ չար զինուորք գունդ առնէին
Ընդ հիւսիսի բարձու լերինն,
Վիրգս ի վիմացն յայն հոսէին,
Ընդ այն և ձիս արձակէին։
Բարդուղիմոս զայն տեսանէ,
Բարձրաւանդակ լեառն ելանէ,
Խաչ փոքրիկ անդ օծանէ.
Քարիւ ըզքաջքն արտահանէ։
Զոր և յետոյ Սուրբըն Գրիգոր
Զարձանն[1] առեալ պահէը ընդ իւր.
Մինչ Տրդատայ մահուանն յաւուր՝
Երեքին եդ պըտակաւոր.
Կանգնէ և անդ կրկին նըշան,
Յըստորոտով լերինըն յայն
Կարկառակոյս մի սուզական[2]
Զեռնադրեալ ի մեծ արձան։
Եւ է տեղին յոյժ լեռնափակ
Պատեալ վիմաք երկնադիտակ,
Իսկ ժէչ ծոցոյն հարթայատակ՝
Հոսանահերձ վըհաքատակ.
Զի Տիգրիսին մեծի կայլակ՝
Որ յԱգենայ քառորդ վըտակ[3],
Յատմամբ խազայ միշտ համարձակ
Ընդ գոգ հովտին արագարագ.
Մերձ կանգնաւոր մեծ ամրոցին
Որ Ագռաւոց քար կոչէին.
Ուստի լերանցըն ջուրք հոսին
Եւ գետանան՝ ստ գարնան մասին.

1. Խաչը՝ իբր յիշատակի բան՝ արձան կոչէ։
2. Խոր տեղ մի, որոյ վրայ քարեր գիզեն։
3. Ջրոց հոսանքն՝ վխտալով կ՝անցնին այն անդունդի նման քարոտ տեղէն։

Գայ զառ ի վայր առապարին
Անցեալ ընդ հիմըն տաճարին.
Ընդ արքային չիրմով պարին[1],
Ապա ի մի խառնեալ յարին։
Հիմն արկանէ անդ հաւատոյ
Ընդ խորանին կառուցելոյ.
Շինեալ յանուն Կուսին հոգւոյ
Եւ պատկերին որ անդ սըրբոյ։
Արդ, Առաքեալ Բարդուղիմին
Կառուցանէ իւրով ձեռին՝
Փոքրը ձեռով զեկեղեցին,
Եւ անուանէ Աստուածածնին.
Զտեղին Հոգւոց վանք անուանէ,
Եւ ի քըրեր կանայս յանձնէ.
Խրճիթ փոքրիկ նոցա չինէ
Եւ ի գերբուկըս բաժանէ[2].
Կացուցանէ զքոյրն Յուսհատայ
Մայրապետ կրօնից գլուխ նոցա,
Զքոյրն Աւրմզդայ և Մաքովտայ,
Եւ զայլ կանայսըն յետ նոցա։
Եւ ինքն ի Հայս դարձեալ երթայ
Ի յԱւրբանիս քաղաք Բարմայ,
Որ այժմ Աղրակ կոչի նորա.
Յովրիանոս[3] անուանի նա,
Վասըն սրբոյ Առաքելոյն
Որ չարչարեալ եղեւ ի նմայն,
Քըքով հարեալ յերկարագոյն.
Քան այամ կոչի անուն տեղւոյն,
Զի զկըտիճըս դառնագոյն
Զոր ոչ կըրեաց մարդ աք ըղնոյն.

1. Տրդատ թագաւորի գերեզմանին քովէն կ՝անցնէին ջուրքն։ Երբ բերուած էր Տրդատայ մարմինն կամ մէկ մասն՝ այս տեղ. զի առաջ թաղուած էր յԵկեղեաց գաւառի Բարձր Հայոց։
2. Իբր փոքրիկ խըցիկներ քարայրներու մէջ։
3. Անծանօթ անուն և աւանդութիւն։

Զի անդ հանաւ մարթն ի մարմնոյն,
Ինքըն չրջէր կենդանագոյն։
Եւ անդ հաւատաս ընծայեցաւ
Եւ նորահրաշ ինչ յայտնեցաւ.
Զի սպամարթ[1] մարդըն կեցաւ,
Ապա սըրով կատարեցաւ։

Լ Զ

ԿԱՏԱՐՈՒՄՆ Ս· ԲԱՐԹՈՂԻՄԵԱՅ ԱՌԱՔԵԼՈՑ

(ՁԱՒՔՆՏԻՔ)

Բայց Բարթողոմէոս գնացեալ եմաստ ի Հէր և ի Զարեւանդ[2] գաւառ Հայոց, և արար նշանս և արուեստս ի վերայ հիւանդաց, և դեւս բազումս եհան. և լուսաւորեալ անդ զրազումս և մխիթարեալ բանիւ վարդապետութեամբ սուրբ աւետարանին, և եղեալ նոցա վկայութիւն՝ զի կացցեն հաստատուն ի հաւատոն զոր ընկալան, և հաւատարիմ եղեն։ Եւ եղեալ միոյ միոյ ձեռն՝ յանձն արար զնոսա չնորհացն Աստուծոյ։ Եւ ինքն գնացեալ եկն յԱլբրանաս քաղաք Հայոց. և գայրն առ նա ամենայն նեղեալք որ ի պէսպէս ցաւս և ի տանջանս. և բժշկեաց զնոսա զամենեսեան, և լուսաւորեաց մկրտութեամբ սուրբ աւազանին։ Լուաւ զնմանէ Ագրիպ[3] քոյր թագաւորին Անտարիոյ, որ էր որդի քեռ Աբգարու, և եկն առ նա ի ծածուկ, և լուեալ ի նմանէ զբանն կենաց՝ հաւատաց ի Տէր Յիսուս Քրիստոս, ինքն և իւրքն ամենայն. և զգեցեալ հանդերձ կուսութեան, ի

1. Կաչին քերած հանած մարդն՝ Բարթողիմէոս։
2. Պարսկահայոց գաւառները, Խոյ և Սալմաստ։
3. Ըստ սմանց Աբագարի։

բաց մերկացեալ զիւառս աշխարհի, և աշակերտեալ Առաքելոյն՝ չրջէր զհետ նորա։ Եւ լուեալ թագաւորին զիրան որ եղեւ, և զայրացեալ մեծաւ ցասմամբ իբրեւ զգազան կատաղեալ արիւնարբու, յղեաց զհազարապետան Թեոտիկա[1], և որք ընդ նմա. և իբրեւ եկն առ նա հազարապետն՝ ըստ հրամանի թագաւորին, և տեսեալ զսուրբն Աստուծոյ՝ գթացաւ ի նա. և նա սկսաւ նմա քարոզել զաւետարանն արքայութեան. և Տէր հրաց զմիտս նորա՝ անսալ բանից նորա։ Եւ ինքն անկեալ էր յախտ բորոտութեան. և առեալ զնոսա սուրբ Առաքելոյն՝ ի գիշերին մկրտեաց. և ահա ամս լուսաւոր հովանի եղեւ ի վերայ տեզւոյն, և լոյս հրոյ չուրջ փակեալ[2] զաւազանն սրբարար։ Եւ եղեւ ընդ ելանել նորա ի ջրոյն՝ անկաւ ի նմանէ մորթն խաւացեալ իբրեւ զկեղեւ ծառոյ և իբրեւ զտերեւ որթոյ. և լոյս զգեցաւ իբրեւ զհանդերձ. և տեսեալ զաքանչելիսն որ եղեն՝ բազումք հաւատացին ի Տէր։ Եւ եղեւ իբրեւ եհաս լուր աքանչելեացն այն առ թագաւորն, առաւել զայրացեալ անհանդուրժելի բարկութեամբ, և փութացեալ յղեաց զայլ ոմն ի նախարարացն, զի փութով զրաւ արասցէ նոցա և մի թուլացին մնալ տեւեալ անսալ նոցա։ Եւ առեալ զսուրբ Առաքեալն հանդերձ կուսիւն և հազարապետովն և այլովք աշակերտելոք՝ ածին յատեանն. և տանջեալ զսուրբ Առաքեալն քրքոջ[3] իբրեւ ժամ մի՝ արք վեց, և համարեցին զնա մեռեալ, և քարշեցին ընկեցին զնա արտաքոյ քաղաքին. բայց սուրբ Առաքեալն կայր կենդանի՝ զօրութեամբ և ուժով Տեառն իւրոյ՝ յոր յուսացեալն էր։ Եւ իբրեւ ժամս երիս այսպէս անկեալ դներ, և չուրջ զնովաւ յոյժ բազմութիւն ի քաղաքէն և յամենայն սահմանաց նորա. և յետ անցանելոյ

1. Անսովոր և օտար անուն, այլ և անտասդ։
2. Գուցէ փարեալ ըլլար։
3. Փշոտ գաւազան։

երից ժամուցն՝ խլրտեաց ձեռամին. և ձգեալ բուռն հարին զնմանէն, և յարեաւ նստաւ կանգուն. և համբարձեալ զձեռս իւր յերկինս, ասէ. Տէր Աստուած, հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, մի թողուր ի ձեռանէ զվիճակս զայս, խընդրուածովք Թադէոսի և Թոմայի և Յուդայի, և իմ Բարդողմէոսի, որ հոգացաք վասն աշխարհիս այսորիկ. և մի առնիցեր լիցի ի թշնամւոյն. այլ տուր սոցա զշնորհս ողորմութեան, և զարձցին յերկրպագութենէ կռոցն սնոտեաց, որ զուր և տապարտ մոլորեալ են ի տգիտութենէ անհաւատութեան: Եւ տուր սոցա հովիւ և առաջնորդ, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս. և զիս ընկալ, Տէր, և զհաւատացեալսդ ի քեզ՝ պահեա: Զայս իրրեւ ասաց՝ չարժեցաւ տեղին, և ահա կամար լուսեղէն եկեալ եկաց ի վերայ Սրբոյն. և նորա հայեցեալ ի վեր յերկինս, աւանդեաց զհոգին, և բուրեաց հոտ անուշահոտութեան: Եւ սուրբ Առաքեալն Թադէոս՝ իրրեւ այն թէ մարմնաւոր տեսլեամբ գայր ընդ առաջ նորա[1]. և դարձաւ ուսոի եկն սուրբն Աստուծոյ Թադէոս: Եւ ահ կալաւ զամենեսեան. և հաւատացին յաւուր յայնմիկ ոգիք երկու հազար. և ամենեքեան փառաւոր առնէին զԱստուած՝ ի վերայ եղելոցն. և եկաց լոյն կամարաձեւ ի վերայ մարմնոյն աւուրս երկոտասան:

Իսկ վերանելին Ագոհի, և զհազարապետն՝ սպան սրով, և զայլս բազումս ընդ նոսա: Եւ առեալ զմարմին սրբոյ Առաքելոյն՝ փոխեցին ի հանդիստ՝ ի նմին տեղւոջ, նոյնպէս և զայլոց վկայիցն, ի փառս Աստուածոյ երրորդութեան: Իսկ իրրեւ եղեւ որոտումն, լուան խուլքն և բժշկեցան, տեսին կոյրք՝ լուսաւորեցան, և համերքն խօսեցան,

1. Կ՚իմացուի թէ երկընքէն կու գար՝ իր մարմնաւոր կերպարանօքն երեւնալով:

և ամենեքեան յիբրաքանչիւր ախտից բուժեցան, որք հաւատացին ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, ի ձեռն սուրբ Առաքելոյն Բարթողոմէոսի. և համբարձեալ զձեռս իւրեանց միաբան հաւատացեալքն՝ ի մի բերան փառաւորէին զՏէր մեր Յիսուս Քրիստոս:

ԼԼ

ՋԱՆ ԵՐՈՒԱՆԴԱՅ

Ա. Ի ԿՈՐՈՒՍԱՆԵԼ, ՋԱՐՏԱՇԷՍ

(Մ. ԽՈՐԵՆ. Բ. ԼԲ)

Երուանդայ զմտաւ ածեալ՝ թէ որպիսի՛ չար թագաւորութեան նորա սնանի ի Մարս, խէթ սրտի լեալ՝ ոչ հեշտալի էր նմա քուն. հանապազ ի յարթնութեան յայն հոգալով, նա և ի քուն՝ անուրջս ահագինս նմին իրի տեսանէր: Վասն որոյ ի ձեռն հրեշտակաց և պատարագաց՝ խնդրէր հաշտեցուցանել զարքայն Պարսից, տալ ի ձեռն զԱրտաշէս. ասելով, թէ, Արիւն իմ և հարազատութիւն, ընդէր սնուցանես զՄար՛դ Արտաշէս՝[1] հակառակ ինձ և իմոյ թագաւորութեանս. լսելով բանից Սմբատայ[2] յելուզակի, որ ասէ, թէ որդի է Արտաշէս Սանատրկոյ. և զորդի հովուաց և զանդորդաց ջանայ առնել արշակունի, արիւն քո և հարազատութիւն համբաւելով զնմանէ. նա չէ որդի Սանատրկոյ, այլ ընդ խաբս գտեալ Սմբատայ զմար

1. Երուանդ կ՚ուզէր հաւատացընել՝ թէ Արտաշէս՝ Հայոց թագաւորի որդի չէ՝ այլ Մար, այսինքն Քըրդի մի զաւակ:

2. Այս Սմբատ զօրավար չատ հռչակուած կ՚երեւի մեր հին վիպասաններէն, և Այրարատ կոչուած, իբրեւ պիւցաղն:

ամն տղայ, բայազի: Նոյնպէս և առ Սմբատ յղէր բազում անգամ, թէ՝ ընդէր այդ քո մնասի աչխատութիւնդ. խաբեալ ի սուընտուէդ, մնուցանես զորդի Մարիդ հակառակ ինձ: Եւ լսէ ոչ սիրելոյ բանս պատասխանեաց: Յայնժամ առաքէ Երուանդ և սատակէ զքաջսն ի Բայբերդի[1]. գերեալ զդըստերան Սմբատայ՝ պահէ յամրոցին Անի[2], ոչ վատթարապէս: Բայց թիկունս առնելով Երուանդայ զՀաւոմայեցիս՝ ոչ ինչ վանգի ի թագաւորութենէն Վեսպիանոս և Տիտոսի. թողուլ ի նոսա զՄիջագետս: Եւ յայնմ հետէ բարձաւ իշխանութիւն Հայոց ի Միջագետաց, և հարկս առաւելագոյնս տայր Երուանդ ի Հայոց:

ԼԸ

ԴԱՍՏԱԿԵՐՏՔ ԵՐՈՒԱՆԴԱՑ

(ԽՈՐԵՆ. Բ. լթ, իև.)

Յաւուրս սորա (Երուանդայ) փոխին արքունիքն Աբմաւիրն անուանեալ բլրոյն. քանզի էր հեռացեալ գետն Երասխ, և յերկարել ձմերայնոյն, և ի դառնահոտ հնչմանէ հիւսիսոյն՝ պաղացեալ ձուլեալ վտակն, ոչ ուստեք արբուցումն բուսական թագաւորականին գտանէր տեղւոյ: Ընդ որ նեղեալ Երուանդայ, եւս և ամրագունի տեղւոյ եղեալ ի խնդիր, փոխէ զարքունիսն յարեւմուտս կոյս՝ ի քարակատուր մի բլուր, զորով պատ առեալ Երասխայ՝ ընդդէմ Ախուրեանն հոսի գետ. պարսպէ զբլուրն, և ի ներքսագոյն քան զպարիսպն՝ ընդ բազում տեղիս կոըս-

1. Հիմակուան Ծանօթ Բաբերդ (Պայպուերթ) քաղաքն, որ այն առեն Բագրատունեաց ձեռքն է եղեր:
2. Ոչ Շիրակայ Անին, այլ բերդ մի Կամախայ մօտ:

բեալ զքարինան մինչեւ ի յատակ բլրոյն՝ հաւասար գետոյն ի փորուածն, յրմպելեաց պատրաստութիւն[1]: Զմիջնաբերդն ամրացուցանէր բարձր պարսպօք, և դրունս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին, և ելանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչեւ ցդուռնն. և ի նմա որոգայթս ծածուկս ընդ մէջ սահիճանացն. որպէս զի ըմբռնեսցի՝ թէ ոք գաղտ ելանելով դաւել կամիցի զարքային: Եւ էր, ասեն, երկդիմի. որպէս զի մինն լիցի սպասաւորացն արքունի և ամենայն ելեւմտից ճանապարհ տուընկենային, իսկ միւսն զիշերային և մարդադաւաց:

Քաղցր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի[2], զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքնաղ յօրինուածօք: Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ չինուածօք, լուսաւոր որպէս ականի բիբ. իսկ չուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց և հոտաբանաց կազմութիւն, որպէս չուրջ զբբոյնն զայլ բոլորակութիւն ականի. իսկ զբազմութիւն այգեստանոյ՝ իբր զարտեւանաց խիտ և գեղեցիկ բիբ. որոյ հիւսիսային կողման դիր կարակնաձեւ՝[3] արդարեւ գեղաւոր կուսից յօնից դարեւանդաց համեմատ. իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ ծնօսից

1. Շինողին անուամբ Երուանդաշատ կոչուի իր նստաց քաղաքն. որոյ մնացեալ փիչ աւերակք մօտ են հիմայ Հաձի Պայրամիոյ կոչուած գիւղի: Մեր պատմչաց ամանք չէնքին գիրքը նկատելով՝ Երուանդարար անուանած են:
2. Երուանդակերտի տեղն չատ յայտնի չէ. բայց Երուանդաշատայ հարաւակողմն և Ախուրեան գետոյ ձախ կամ արեւելակողմն յայտարի: Անչուշտ վիպասանք նմանցուցեր են չէնքը՝ կուսի մի կերպարանաց:
3. Թուի թէ հիւսիսային կողմն այգիներն կիսաբոլոր ձեւով՝ չէնքերը պատեն եղեր, զոր նմանեցընէ կոյս ազգկան մի կամարանման ընդունելոյս:

պարզութեան գեղեցկութիւն. իսկ գեան բերանաց եալ գարեւանդօք ափանցն՝ վերկիթերթիան նչանակէ չրթուն: Եւ այսպիսի գեղեցկութեան վէր՝ անքթթելի իմն զգոյս ի բարձրաւանդակ թագաւորանիան գհայեցուածն ունի[1]. և արդարեւ բերրի և թագաւորական դաստակերտն:

Ջայս ամենայն զգօրթեցեալսն Երուանդայ՝ պարգեւէ Մեծն Տրդատ՝ մարդկան ազգին Կամսարականաց, որպէս զմեհեանաց և արեան կցորդաց ազգին Արշակունեաց:

ԼԹ

ՊԱՏԵՐԱԶՄՆ ԵՐՈՒԱՆԴԱՅ ԵԻ Ք· ԱՐՏԱՇԻՍԻ

(ԹՈՒՆՆ· Ք· ԽԶ)

Ամրատ հանդերձ մանկամբն Արտաշիսիւ եղանէ առ ափն ծովուն Գեղամայ[2], զթիկամբք Արագածն կոչեցեալ լերինն. աճապարէին հասանել ի բանակն Երուանդայ, առ ոչինչ համարեալ զրազմութիւն զօրաց նորա. միայն կասկածէին ի Մուրացանէն Աղգամայ[3], զի այր քաջ էր և բազմաց տէր սիգաւորաց: Եւ ճամբարն Երուանդայ էր բացադոյն ի քաղաքէ նորին աւելի քան երեքհարիւր տապարիսաւ[4], ի հիւսիսոյ ի վերայ գետոյն Ախուրեան:

1. Իբր թէ Երուանդակերտ անշարժ սիրահար աչօք՝ կուռ գիտէ զԵրուանդաչատ:

2. Հիմայ Սեւանայ ծով կամ լիճ. յանուն իր միջի կղզւոյն. այն այլ հաւանօրէն Սեւաւ անուն նահապետին, յորմէ և Սիւնիք կոչուէր է ցեղն և նահանգն:

3. Հայկազն Տիգրանայ գերի բերած Մարաց ազնուականներուն ցեղէն:

4. Իբրեւ 25 բնամղան քիչ աւելի կամ պակաս:

Ջայս իբրեւ լսեր Երուանդ՝ հանէր ընդ առաջ զրազմութիւն զօրացն, և ճակատեր ոչ հեռի յիւրմէ բանակէն: Իսկ Արտաշիսի առաքեալ պատգամ առ Աղգամ նահապետ Մուրացանաց, հանդերձ բազում երգմամբք, թողուլ ի վերայ նորա զօր ինչ գտեալ է յԵրուանդայ, և կրկին այլ յաւելուլ, միայն զի զԵրուանդ թողեալ ի բաց գնասցէ:

Եւ իբրեւ հանդէպ ճակատուն Երուանդայ ելին նչանք Արտաշիսի, Աղգամայ առեալ զրազմութիւն հեռեւակացն՝ ի կողմ ելանէր. և Ամրատ հրամայէր զիմաստն պղնձիս հնչեցուցանել. և յառաջեալ զճակատն իւր՝ իբրեւ զարծիւ յերամս կաքաւուց՝ խոյանայր: Իսկ նախարարքն Հայոց՝ որ յայլ և յայլ հեռաւ էին, ի նա խառնեալ միանային. և զօրքն Վրաց՝ հանդերձ արքային իւրեանց փարատմանաւ. թէպէտ և յանդուգն յարձակմամբ յառաջեալ բախէին, արագապէս դառնային ի միւս կողմն փախուցեալ. և անդ էր տեսանել կատարած անհնարին զդնդին Երուանդայ և զզօրաց Միջագետաց[1]: Եւ ի խառնակել այսպիսի ճակատուց, պատահէն Արտաշիսի՝ արք քաջք Տաւրացիք[2], որոց զոգիս ի բաց եդեալ, Երուանդայ պայմանեալ, սպանանել զԱրտաշէս: Որոց դիպեալ հետի՝ ընդ մէջ անցանէր Գիսակ՝ որդի առնտուին Արտաշիսի, և սատակեալ զնոսա, ուր և զկէս գիմաց նորա ի վայր բերեալ սուսերաւ[3], զյաղթութիւն ստացեալ՝

1. Ենթադրելով թէ Աբգար Հայոց թագաւոր էր, իր երկիրն այլ որ ի Միջագետս էր, Հայոց իշխանութեան տակ ըլլայ. բայց Խորեն. (Բ. ղը) ըսած է թէ նոյն ինքն Երուանդ՝ ապահով Հայոց թագաւորելու համար՝ Հռոմայեցւոց թողեր էր զՄիջագետս:

2. Տօրսս լերանց կողման քնիկներ, կամ Հպատակք Երուանդայ կամ վարձկան զօրք, որք խոստացեր էին իրեն՝ ինչուան իրենց մահը յանձն առնուլ՝ զԱրտաշէս սպաննելու համար:

3. Տաւրացիքն կռուին մէջ Գիսակայ երեսին կէսը

մեռանի ի վերայ այսպիսեացս. մնացեալ զօրքն ի փախուստ դառնային: Իսկ Երուանդ ձիավն իւրով բովանդակ ասպարէզս անցեալ, ելանէ ի խառն կարգեալս[1] ի բանակէն իւրմէ ի քաղաքն իւր, հեծեալ ի նոր ձիս՝ հանգոյց ի հանգուցէ փախչել: Եւ քանզի Սմբատ զհետ մտեալ, սաստկագոյն վարբէր զնա ի գիշերի՝ մինչեւ ցդուռն քաղաքին: Եւ Մարաց զօրացն անցեալ ի կոզմն երուանդական գնդին, նահմաւ[2] ի վերայ դիականցն բանակէին: Իսկ Աբտաշէսի հասեալ Երուանդայ, ընդ չրջապատեալն առագաստ ի կաչւոյ և ի կտաւէ պարբսպին[3] էջ, և ի խորանս նորա բնակեցաւ զայն գիշեր. և այգուն եղելոյ՝ տիրաբար արարեալ, զբսպանեալսն թագել հրամայեաց, և անուանեաց ըզհովիան՝ ուր ի վերայ դիականցն բանակեցաւ, Մարաց մարգ. և զտեղի ճակատուն՝ Երուանդավան[4], որ կոչի մինչեւ ցայսօր ժամանակի. այս ինքն, եթէ յայմ տեղւոջ վանեաց զԵրուանդ: Եւ ինքն չուեաց ի քաղաքն Երուանդայ. յառաջ քան զմիջօրեայ հասեալ ի դաստակերտն Երուանդայ, և միսրան զոչմամբ հրամայեաց ազդակել զօրացն՝ Մար առնմա, որ թարգմանի[5] Մարս եկն. յիշեցուցանելով զթշնամանսն, զոր յղէր Երուանդ առ թագաւորն Պարսից և առ Սմբատ, Մար զնա կոչելով. յայմ ի սոյն ձայն անուանեցաւ[6] դաս-

կարեն. այս պատճառաւ իր ցեղն կոչուի Դիմակիանեան, կէսերես. սովորաբար գրուի Դիմաքսեան:

1. Խմբվանք կամ պանդոկք, և ձիարան: Հանդոյցն այլ գրեթէ զնոյն նշանակէ, իբր զադրելու կամ ձիանքը փոխելու տեղ:
2. Մօթի գիշեր առեն:
3. Երուանդ իր վրանին բոլորը կաշիով և կտաւով պատեր էր՝ իբրեւ պարիսպ:
4. Երուանդայ յաղթուած կամ վռնտուած տեղ:
5. Պարսից լեզուաւ:
6. Փոխան Երուանդաշատ անուան:

տակերտն՝ Մարմետ, իբր ի կամաց Աբտաշէսի, բառնալ զանուն Երուանդայ ի տեղւոջէն, այս պատճառ է անուանակոչութեան դաստակերտին:

Բայց Սմբատայ գիշերային զհետ Երուանդայ եկեալ, սակաւ վաշտակաւ[1], զդուռն քաղաքին պահէր մինչեւ ի գալն Աբտաշէսի և զօրացն ամենեցուն: Եւ ի մարանչէն քաղաց ընդ ամրոցին, անձնատուրք եղեն մարգիկ ամրոցին, և բացին զդուռն քաղաքին: Իսկ մի ոմն ի զինուորացն մտեալ երկար վաղերբ[2] զգլուխն Երուանդայ, և ցրուեաց զուղեղն ի յատակս տանն. և այսպիսի չխամամբ վախճանեցաւ, կալեալ զթագաւորութիւնն ամս քսան: Բայց Աբտաշէսի յիշեալ՝ թէ խառնուած արշակունւոյ է Երուանդ, հրամայէ զդի նորա թաղել մահարձանօք[3]:

Խ

ԱՐՏԱՇԷՍ, ՍԱԹԻՆԻԿ ԵՒ ԱԼԱՆՔ

(ԽՈՐԵՆ. Բ. Ժ)

Զայսու ժամանակաւ միաբանեալ Ալանք[4] լեռնականաքն ամենայնիւ, յինքեանս ալկանելով և զկէս Վրաց աշխարհին, մեծաւ ամբոխիւ տարածեալ ընդ աշխարհս մեր: Ժողովէ և Աբտաշէս զիւրոյ զօրացն բազմութիւն. և լինի պատերազմ ի

1. Փոքր վաշտ, սակաւաթիւ զունդ զօրաց:
2. Կարճ թուր:
3. Սակ քարերով կամ քանդակներով և գրերով գերեզման:
4. Ոմանք Աղուանից հետ չփոթած են զԱլանս. բայց սոքունք Կովկաս լերանց պարսն մէջ տեղւանք բնակէին, և անոնց նեղ բացուածքէ մի՝ կ'իջնէին

մէջ երկրին՝ երկոցունց ազգացն քաջաց և ազեղնաւորաց: Ապաւ ինչ տեղի տայ ազգ Աղանաց, և գնացեալ անցանէ ընդ գետն մեծ Կուր, և բանակի առ եղերբ գետոյն ի հիւսիսոյ. և հասեալ Աբտաշիսի՝ բանակի ի հարաւոյ, և գետն ընդ մէջ նոցա: Բայց քանզի զորդի Աղանաց արքային ձերբակալ արարեալ զօրացն Հայոց ածեն առ Աբտաշէս, զխաղաղութիւն խնդրէր արքայն Աղանաց, տալ Աբտաշիսի զինչ և խնդրեսցէ. և երդմանեալ և դաշինս ասէր հաստատել մշանջենաւորս, որպէս դի մի եւս մանկունք Աղանաց ասպատակաւ հինիցն ելցեն յաշխարհն Հայոց: Եւ ի չառնուլ յանձն Աբտաշիսի՝ առ ի տալ զպատանին, զայ քոյրն պատանւոյն՝ յաին գետոյն ի դարաւանդ մի մեծ. և ի ձեռն թարգմանչաց ձայնէ ի բանակն Աբտաշիսի. «Ինձ ասեմ, այր քաջ Աբտաշէս, որ յաղթեցեր քաջ ազգին Աղանաց. եկ, հաւանեաց աշաւ գեղոյ գաւառս Աղանաց[1], տալ զպատանիդ. զի վասն միոյ քինու՝ ոչ է օրէն դիւցազանց՝ զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն, կամ ծառայեցուցանելով և ի ստրկաց կարգի պահել, և թշնամութիւն յաւիտենական ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել»: Եւ լուեալ Աբտաշիսի զայսպիսի խմաստուն բանս, գնաց յեզր գետոյն. և տեսեալ զկոյն գեղեցիկ, և լուեալ ի նմանէ բանս խմաստութեան, ցանկացաւ կուսին: Եւ կոչեցեալ զդայեակն իւր Սմբատ, յայտնէ նմա

չաւ հեղ ի հարաւակողմն, ի Վրաստան և Հայաստան. և իրենց անուամբ նեղուցն կոչուէր Դռռան Աղանաց, յորեւէլեայց այլ մինչեւ հիմայ նոյնպէս Տարի-Աղան: Աղանաց սերունդ կամ ազգակիցք են այժմու Օսք կամ Օսաբի:

1. Անշուշտ Սաթինկայ որդին Վրայր և ուրիշ վիպասանք իրենց անոյշաչուն մօր և թագուհւոյ բերան դրած են այդ համարձակ խօսքը, որ աւելի զօրաւոր եղաւ քան Աբտաշիսի զէնքերն:

զկամս սրտի իւրոյ, առնուլ զօրիորդն ի կնութիւն իւր, և դաշինս և ուխտ հաստատել ընդ ազգի քաջացն, և զպատանին արձակել ի խաղաղութիւն: Եւ հանդոյ թուեցեալ Սմբատայ, առ արքայն Աղանաց յղէ, տալ զտիկին օրիորդն Աղանաց զՍաթինիկ՝ ի կնութիւն Աբտաշիսի: Եւ ասէ արքայն Աղանաց. Եւ ուստի տացէ քսին Աբտաշէս՝ հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրոց՝ ընդ քաջազգւոյ կոյս օրիորդիս Աղանաց:

Զայս տեղի առասպելաբանելով վիպասանքն՝ յերգելն իւրեանց ասեն.

«Հնծաւ արի արքայն Աբտաշէս ի սեաւն գեղեցիկ.
և, » Հանեալ զոսկեօղ չիկափոկ պարանն[1],
և, » Անցեալ որպէս զարծուի սրտիթեւ ընդ գետն,
և, » Զգեալ զոսկեօղ չիկափոկ պարանն՝
» Ընկէց ի մէջք օրիորդին Աղանաց.
և, » Շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
» Աբտազ հասուցանելով ի բանակն իւր »:

Որ և ճշմարտութեամբ ունի այսպէս. Քանզի պատուեալ է առ Աղանաց մօրթ կարմիր, լայքա[2] չատ և ոսկի բազում տուեալ ի վարձանս, առնու զտիկին օրիորդն Սաթինիկ. այս է ոսկեօղ չիկափոկ պարանն: Դոյնպէս զհարսանեացն առասպելեալ երգեն, այսպէս ասելով.

« Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Աբտաշիսի,
» Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկան »:

Քանզի սովորութիւն իսկ էր թագաւորացն մերոց, փեսայութեամբ ի դուռն տանջարին հասանել, դահեկանս ճապաղել, իբրեւ զհիւպատեանն Հռոմայեցւոց[3]. ապէս և թագուհեացն յառագաստին՝ մարգարիտ: Այս է ճշմարտութիւն բանիցս:

1. Կարմիր կաշիէ գօտի կամ չուան, որ սովորաբար ճօպան կ'ըսուի:
2. Հաւանօրէն չեօք, կարմիր ներկող նիւթ:
3. Իբր թէ երբ Հռովմայեցի մի հիւպատոս կ'ըլլար,

Սա առաջին եղեալ կանանցն Աբրաշխի՝ ծնանի նմա զԱբրաւազդ և այլս բազումս, զորս ոչ կարեւոր համարեցաք այժմ անուամբ թուել, բայց զկնիան յորժամ ի գործ ինչ հասանիցեմք։

ԽԱ.

ԶԱՐԳ՝ ԱՄԱՐԱՆՈՑ ՍԱԹԻՆԻԿՆ ՏԻԿՆՈՋ ՅԱՐՏԱՄԷՏ

(ԹՈՎՄԱ ԱՐՏՐՈՒՆԻ)

Իբրեւ յաջողեցաւ թագաւորութիւնն Աբրաշէսի ամենայարգար պատրաստութեամբ և աշխարհալիւն հոգաբարձութեամբ, որպէս բացայայտեն գիրք պատմագրացն, և յառնուլ զԱթինիկ տիկին կնութեան Հայոց, յիշէ զնդեհանալն՝ իւր ի վիմաՄէջն, զոր վերագոյն գրեցաք. գայ դարձեալ ի տեղին՝ զբօսնուլ ի նմա. և հաճոյ թուեալ յաչս նորա, չինէ զքարարլուրն ապարանս արքայանիստ աշնանային պայծառայարդարս՝ գեղեցկայարմարս, պարսպաւորս, ընդդէմ ծիծաղելով ծովուն ի հիւսիսի նայեցուածով, արեգակնային ի վերայ խառզալով ճառագայթադիպ ձեմականացն, յելս և ի մուտս, ձկան ինն թուելով ի վերայ մկանանց աւետացն խաղալով[2]. ընդդէմ նայեցածն ունելով զմեծ

այսպէս ժողովրդեան զրամ սփռէր։ Մինչեւ հիմայ յարեւելք այս սովորութիւնս կայ. զրամ չասնողն այլ սփռէ թուղ, չամիչ, շաքար։

1. Երասանդ բանաւորէն փախչելով՝ այս (վանայ հարաւային) կողմեր գալն։

2. Երբ արեւն ելնելու մտնելու առեն՝ ճառագայթները վանայ ծովուն ալեաց վերայ զարներ, կարծես թէ լուսաւոր ձկներ լուղային։

լեառն Արափք[1] կոչելով, բարձրագագաթն ձիւնալիր սպիտակափառ, իբր զթագաւոր մեծավայելուչ պատուական ալեօք զուարճացեալ ի մէջ ճոխ նախարարութեանց, առաջի տեսանելով զկապուտակ ծիրանափայլ դաշտաձեւ ծովն. զաստակերտս մեծամեծս չուրջ զեզերքն անտառախիտ ծառովք և դիւներբեր որթովք և զանազան պտղովք, զչէնս պատրաստեալ, և չուրջ զամրոցաւն տնկախիտս բուրաստանս ծաղկաւէտս և անուշահոտս ի զանազան ծաղկանց. ոչ միայն ի տեսիլ խաղտման աչաց և ի զուարճացուցն հոտոտելեաց, այլ և ի կազմութիւն դեղոյ բժշկական հնարագիւտ իմաստասիրութեանց կազմեալ՝ Ասկեպեայ վարժմամբն[2]: Իսկ չուրջ զբերդանման ապարանօքն՝ պարսպէ զրլուրն չուրջանակի յապառաժուտ տաշելոյ քարանց, քաղաք ամենալից զհովիտն ամրացուցանելով: Իսկ ի վերայ բղխեալ աղբերն՝ դարձեալ պարսպէ զքարբլուրն ի պահպանութիւն ջրոյն՝ ամրագունիւք չինուածովք, և չէն մարգարիտ[3] զքարարլուրն յօրինէ պարսպաւոր, անկասկածելիս անմատչելի ձեռաց պատերազմողաց, հեչտալիր առ զգուշութիւնն՝ ի խորագոյն ծովուն զպարիսպն յօրինեալ կազմէ: Իսկ ի մէջ երեքարմատեան գոգաձեւ հովտին փոքու՝ որ յերից բլրոցն խոնարհի, չինէ աշտարակ բարձրաբերձ փորուածոյ միջոցաւ, և ի վերայ նորա կանգնէ զԱստղիկն պատկերն, և մօտ նորա զտուն գանձու պաշտպանութեան կոյսն.

1. Ոչ ի Աբրահամեանն Մասիս, այլ Միփան լեառն ի հիւսիսակողմն Վանայ ծովուն, որ կ'ըսուի և Ցիպան. նայն անուամբ կղզեակ և վանք մ'այլ կայ, հիմայ ջրով ծածկուած. մեր երկրին բարձրագոյն լեռանց մէկն է։

2. Ըստ յունական առասպելեաց՝ բժշկութեան պաշտպան դիւցազն, երբեմն ինքն այլ բժիշկ։

3. Հաւանօրէն վարդահիւտ պիտի ըլլայ, բազմամարդ նշանակելով։

կարգէ և յօրինէ ի նմա փողոցս վաճառոցս ամենալիցս և բաւականս։ Գտանէ և ի վերագոյն լերինն անդր ի հարաւոյ կողմանէ՝ աղբիւր սահաւարուղս, որոյ ջրմուղ կազմեալ ածեալ՝ հոսուցանէ ի մէջ հովտին։

Իսկ ըստ բաւականութեան աշաց տեսութեանց դաշտավայրին՝ ի մուտս կոյս և առ եզերբ ծովուն պարսպաւորս յօրինէ զգոգն, ընդ այգեստան անկախիտ պատրաստութեամբ, ականախիտ վայելչութեամբ։ Եւ իբրեւ կատարեաց զյօրինուած շինուածոյն քաղաքին և անմատչելի անկասկածելի զամրոյն պատրաստեաց, կոչեաց զանուն ամրոցին Ջարդ, այսինքն պայծառութիւն ի վերայ պայծառայարգար շինուածոյն։ Եւ ածեալ զտիկինն Սաթինիկ զբօսնուլ յաչնանային յեզանակս յամարաստան գեղեցկաշէն յապարանս զարդարեալ բերդին։ Իսկ զանուն քաղաքին կոչեցին Արտամատ, որ թարգմանեալ ստուգաբանի Արտաշէսի ձեռակերտ, կամ թէ Արտաշէսի եկք, զի ըստ Պարսից ձայնի՝ Մատ՝ եկք թարգմանի. զի ի գնալ Արտաշէսի յայսմ տեղւոջէ, ոչ եւս յաւել ձեռն երբեմնադայ տագնապել զնա. բայց ի գնալ ասպի ի Մարս և ի Պարս, զարձեալ զառնայ ուժով մեծաւ և թագաւորական ճոխութեամբ, տիրէ Հայոց Մեծաց. և ըստ բարբարոսական հմայիցն պատուէ զտեղիս այս, որպէս ի նմանէ սկսանելով՝ զփոփոխումն առնու ի խնամարհագունիցն ի բարձրագոյնն։

ԽԲ

ՍՄԲԱՏ ԱՅՐԱՓԱՋ

(ԽՈՐԵՆ. Բ. ԺԲ.)

Սիրելի է ինձ ասել և վասն առնն քաջին Սմբատայ. քանզի արդարեւ ըստ առասպելին՝ ոչ ինչ կարի հեռի ի ճշմարտութենէն[1]. որ ունէր հաւասակ անդամոց համեմատ քաջութեանն, և առաքինութեան ոգւոցն որսարդ, և գեղեցկութեան ալեօք վայելչացեալ. սակաւ ինչ արեան նիչ ունելով յաչսն՝ որպէս զրակոնտիկոն[2] ի վերայ ոսկւոյ և ի մէջ մարգարտոյ ծագէր. և ի վերայ չոյտ անձին և մարմնոյ՝ զգոյշ յամենայնի. և տուչութիւն յաղուածոց ունէր ի մարտս՝ առաւել քան զամենայն ոք։ Չի յետ այնչափ արութեանց, օգնական Սաթինկայ եղբօրն՝ յաշխարհն Աղանից հանդերձ զօրու երթայ, հրամանաւ Արտաշիսի. քանզի մեռաւ հայր Սաթինկան, և այլ ոմն բռնացեալ թագաւորեաց աշխարհին Աղանից, և հալածէր զեղբայրն Սաթինկան. զոր վանեալ հերքէ Սմբատ, և տիրացուցանէ ի վերայ ազգին զեղբայրն Սաթինկան, և զերկիր հակառակորդացն աւերէ. զամենայն միահամուռ ածէ գերի առատիկ յԱրտաշատ։ Եւ հրամայեալ Արտաշիսի՝ բնակեցուցանել զնոսա ի հա-

1. Սմբատայ վրայ ըսուած առասպելներն ճշմարտութեան մօտ էին։ Թովմայի Արծրունեայ քով գըտուին քանի մի յիշատակք Սմբատայ վրայ։

2. Δρακόντιον, Draconitus, տեսակ մի ազնիւ քարի, որ ըստ յոյն ձայնին թարգմանութի վիշապաքար. վասն զի, կ'ըսուի թէ օձու գլխու մէջ գտանայ։ Մեր ձեռագրաց և տպագրաց մէջ գ և ղ տառից չփոխութեամբ՝ սխալ գրուած է գրակոնտիկոն։

բաւոյ յարեւելից կուսէ Մասեաց, որ կոչէր Շաշարշական[1] գաւառ, ի վերայ պահելով զբնիկ անունն Արտազ. քանզի և աշխարհն՝ ուստի գերեցանն՝ Արտազ կոչի մինչեւ ցայսօր ժամանակի։

ԽԳ

ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՇԻՍԻ Բ.

(ԽՈՐԵՆ. Բ. Կ.)

Գնեցեալ իմն պատմէ և Աբիատեն փեղլացի[2] յաղագս մահուանն Արտաշիսի։ Քանզի, ի ժամանակի որպէս ապստամբեցին Հրեայք յԱդրիանոսէ հռովմայեցւոց թագաւորէ, և եռաւն պատերազմ ընդ Ռուփոսի եպարքոսի, առաքինութեամբ առն ուրումն աւագակի, որոյ անուն էր Բարքոբայ, այսինքն Աստեղ որդի, որ էր գործովք չարագործ և սպանող, բայց անուամբ իւրով մեծապանեալ պարծէր, որպէս թէ յերկնից ծագեաց նոցա փրկիչ՝ իբր նեղելոց և գերեաց։ Եւ այնքան սաստկացոյց զմարտն, մինչեւ ի նա հայելով ի բաց կացին ի հարկելոյ Հռովմայեցւոց՝ Ասորիք և Միջագետք և Պարսք ամենայն. քանզի էր և լուեալ՝ եթէ եմուտ յԱդրիանոս սխալ ուրկութեան. բայց մերն Արտաշէս ոչ երկմտեաց ի նմանէ[3]։

1. Յանուն գաւառին և Շաւարշանն, չէնք և դաշտ մի. որ և Աշարայր, ուր Ս. Վարդանանց հռչակաւոր պատերազմն և նահատակութիւնն. զուցէ անուամբ Հայկազն պայազատաց մեկուն, որ կոչուէր Շաւարշ։

2. Պաղեստինու Պելլա քաղքէն էր հելլենացեալ հրեայ, քրիստոնեայ եղած՝ Հրէից ապստամբութեան պատմութիւնը գրեց, Ադրիանոս կայսեր առեն. որոյ միայն քանի մի կտորք մնան։

3. Այսինքն, հաւատարիմ մնաց դաշնակցութեանն կամ հպատակութեան։

Եւ եղեւ ընդ այն ժամանակս հասանել Ադրիանոսի ի Պաղեստինէ, և սատակել զապստամբսն[1] պաշարմամբ ի քաղաքի մի փոքր՝ հուպ Երուսաղէմ. վասն որոյ և ամենայն ազգին Հրէից հրամայեաց մերժել ի հայրենի աշխարհէն, որ և ոչ ի բազում հեռաստանէ հայեացին Երուսաղէմ։ Եւ ինքն չինէր զԵրուսաղէմ զաւերեալն ի Վեսպիանոսէ և ի Տիտոսէ և յիւրմէ. և անուանեաց Ելիա՝ յիւր անուն, որպէս և կոչէրն իսկ Ադրիանոս՝ Ադրեգակի[2]։ Բնակեցոյց ի նմա հեթանոսս և քրիստոնեայս, որոց եպիսկոպոս էր Մարկոս ոմն։

Ընդ այն ժամանակս առաքեաց զօր ծանր զկողմամբք Ասորեստանեաց. և մերոյն Արտաշիսի հրամայեաց երթալ ի Պարսս՝ հանդերձ իւրովք զինուորօք[3]. զորոյ գնացս քարտուղարութեամբ լեալ այս այր, որ զայս պատմութիւնս ետ մեզ, հանդիպի Արտաշիսի ի Մարսս, ի Մոհուզդ անուանեալ տեղւոջ[4]։

Պատմի և հիւանդանալ նմա ի Մարաւիդի[5] ի բակուրակերտ աւանի. և զԱբեղեայ զոմն նահապետ Աբեղենից տոհմին, զայր շոյտ և զչզմարտ և սուտակասպաս[6], ի նորին խնդրոյ՝ արձակէ յԵկե-

1. Գրեթէ 600,000 մարդ ջարդուեր են ի Հրէից, այս իրենց ապստամբութեան առեն։

2. Յունարէն Իդիոս նշանակէ արեգակն, արեւ. իսկ քաղաքն կոչուեր է Aelia Capitolina.

3. Շօրօստեանց յունարէն նշանակէ կշռապետ, կշիռքները քննող պաշտօնեայ։ Ուշքեան Ստեփ. վարդապետ՝ իր համբաւաւոր բառգրոց մէջ համարի՝ թէ զօրականաց թիւակ տալու գրամը կշռողքն ըլլան։

4. Յանուն Սիւհենա լերին, Հայաստանի սահմանակից Ասորեստանեան երկրին մէջ։

5. Մարանդ՝ Սիւնեաց նահանդին մէջ ծանօթ է, բայց աւանն Բակուրակերտ՝ ոչ։ Շինողին (Բակուր) անուամբ՝ Սիւնեաց քանի մի իշխաններ յիշուին ի պատմութիւնն։

6. Այս ածականներն այլ ի վիպասանից երեւին։

զեաց՝ Յերիպայ[1], ի մահեանն Աբտեմիդայ, խնդրել ի կառոյն բժշկութիւն և զբաղում կեանս. որոյ ոչ ժամանեալ գառնալ, հասանէ վախճան Աբտաչիսի: Եւ գրէ[2], եթէ ո՛րչափ ամբոխութիւնք մեռան[3] ի մահուանն Աբտաչիսի, սիրելի կանայք և հարք և մաերիմ ծառայք. և որպիսի չուք բազմադիմիս արարին առ ի պատիւ դիոյն, քաղաքական կարգօք, և ոչ որպէս զբարբարոսս: Գագաղքն էին ոսկեզնիք, գահոյքն և անկողինքն բեհեզեայ, և պատմուճանն որ զմարմնովն՝ ոսկեթել. թագ կապեալ ի գլուխն, և զէնն ոսկւով առաջի եդեալ. և զգահոյիւքն չուրջ՝ որդիքն և բազմութիւն ազգականացն. և առ այսքիւք պաշտօնէիցն զինուորութիւնք, և նահապետքն և նախարարութեանցն դունդք, և միանգամայն զօրականացն վաշտք. աճմենեքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ձակատիցին. և առաջի՝ պղնձիս հարկանելով փողս, և զկնիան՝ ձայնարկու կուսանաք սեւազգեստք[4] և աշխարող կանայք. և զհետ՝ բազմութիւն ռամկին:

Եւ այսպէս տարեալ թաղեցին. և չուրջ զդերեզմանատն լինէին կամաւոր մահուանք, որպէս վերագոյնն ասացաք: Եւ սորա այսպէս սիրելի եղեալ աշխարհիս վերոյ, թագաւորեալ ամս քառասուն և մի[5]:

1. Հիմակուան Եզընկան (Երզինճան) կամ անոր մօտերը. ուր Ս. Աբտաչիսի Յունաստանէն բերած կուռքերն կային:

2. Արիստոն է գրողն:

3. Կամաւոր մահուամբ մեռած իմանալու է, որ չարդարացըներ այդ գործը բարբարոսութիւն ըլլալէն, թէ և ուրիշ հանդէսքն և զարդք՝ վայելուչ և չքեղ եղած ըլլան:

4. Սգաւոր լալկան և լացընող կանայք:

5. Եթէ Հրեից ազատամբութեան և Յարդին առնն հանդիպած է Աբտաչիսի մահն, թագաւորութեան սկիզբն այլ կ'ըլլայ իբր յամի Փրկչին 83–4. մեր պատմչէս հաշուով քանի մի տարի առաջ եղած է:

ԽԴ

ԱՐՏԱԽԱԶԴ Բ. ԵՒ ՔԱԶՔՆ ՄԱՍԵՑԻ

(ԽՈՐԵՆ. Բ. կա)

Յետ Աբտաչիսի թագաւորէ Աբտաւազդ որդի նորա, և հալածէ յԱյրարատեայ զամենայն եղբարս իւր՝ ի գաւառս Աղիովտայ և Աբերանոյ[1]. ի մի բնակեսցին յԱյրարատ՝ ի կալուածս արքայի. բայց միայն զՏիրան պահէ փոխանորդ իւր, զի որդի ոչ դայր նորա: Որ յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն իւրոյ, անցեալ գհամբլաւ Աբտաչատ քաղաքին՝ որտալ կինճս և իշավայրիս զակամբք Գիճայ[2], աղմկեալ իմն ի ցնորից խելագարանաց, ընդ վայր յածելով երիվարաւն, անկանի ի խոր իմն ձիձ, և խորասոյզ լեալ՝ անհետի:

Ջամանէ երգիչքն Գողթան առասպելաբանեն այսպէս. եթէ, ի մահուան Աբտաչիսի բազում կատարածք լինէին, ըստ օրինի հեթանոսաց. գժուարի, ասեն, Աբտաւազդ, ասելով ցհայրն. « Մինչ դու » գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, » ես աւերակաց որպէս թագաւորեմ »: Վասն որոյ անիծեալ գնա Աբտաչիսի՝ ասաց այսպէս. եթէ՝ « Գու յորս հեծցիս ի յԱզատն ի վեր ի Մասիս[3]. » Ձքեզ կալցին Քաջք, տարցին յԱզատ ի վեր ի (Մասիս, » Անդ կացցես, և զյոյս մի տեսցես »:

1. Մեկն Տուրուբերան (Տարօնոյ կողմանց) նահանգի մէջ, միւսն Վասպուրականի:

2. Փոքր առուակ մի՝ որ Մասիս լերան կողերէն կ'իջնէ:

3. Մեր հին վիպասանից հնագոյն աւանդութեան կոչումն է արուած իրենց մեծ և սրբազան լերին: Նոյն

Զբուցեն զամանէ և պառաւունք, եթէ արգելեալ կայ յայրի միում՝ կապեալ երկաթի չղթայիւք. և երկու չուանք հանապազ կրծելով զչղթայն՝ ջանայ ելանել և առնել վախճան աշխարհի. այլ ի ձայնէ կառնարկութեան դարբնաց՝ զօրանան, ասեն, կապանքն. վասն որոյ և առ մերով իսկ ժամանակաւ՝ բազումք ի դարբնաց զհետ երթալով առասպելին, յաւուր միաշաբաթուոջ երից կամ չորից բախեն զապն, զի զօրասցին, ասեն, չղթայքն Աբտուազդայ։ Բայց է ճշմարտութեամբ այսպէս, որպէս ասացաքս վերագոյն։

Այլ ոմանք ասեն և ի ծնանելն զան՝ դիպեալ պատահարաց իմն, զոր համարեցան կախարդել զսա կանանց զարմից Աշղահակայ. վասն որոյ զնոսա բազում չարչարեաց Աբտաշէս։ Եւ զայս նոյն երդիչքն յառասպելին ասեն այսպէս. եթէ, վիշապազունք գողացան զմանուկն Աբտաւազդ, և գնեւ փոխանակ եդին։ Բայց ինձ արդարացեալ թուի լսելն այն, թէ ի ծննդենէն եւեթ մոգութեամբ լեալ, մինչ նովիմբ և վախճանեցաւ։ Եւ առնու զթագաւորութիւնն Տիրան՝ եղբայր նորին։

ԽԵ

ՆՈՑՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ ԸՍՏ ՅԱՅՍՄԱՒՈՒՐԱՑ

Թագաւոր մի կայր Հայոց՝ Աբտաւազդ անուն, և ունէր որդի մի խելագար՝ Շիդար[1] անուն. և ի մեռանել Աբտաւազդայ՝ ոչ ետ զթագաւորութիւնն Շիդարայ, զի խելագար էր, վասն որոյ աշխարհս

հին աւանդութեան կամ հաւատոց ծնունդ են և քաջքն, աւելի չար քան բարի հոգիք։

1. Թուի թէ այս անունս այլ խելագարի նշանակութիւն ունեցած ըլլայ, զոր ոմիկք իբրեւ զսա

վրդովեցաւ և աւերումն լինէր ոչ սակաւ։ Եւ յաւուր միում հեծեալ Շիդարն ի ձի, և ետ փող հարկանել թէ կամիմ թագաւորել. և ել գնաց ընդ իր հեծելովք ի զբօսանս։ Եւ ելեալ ի վերայ կամրջի գետոյն՝ վասն անցանելոյ, և անդէն չարժեալ գնա այսոյն պղծոյ, անկաւ ի գետն և կորեաւ։ Եւ հեծելազօրքն համբաւեցին՝ թէ աստուածքն Շիդարայ յափշտակեցին զնա և եդին ի Մեաւ լեառն. որ է Ասւագ Մասիս. և անդ կայ չղթայած. և երկու չուն, մի սպիտակ և մի սեաւ՝ լիզեն հանապազ զչղթայն Շիդարայ. և ի տարելիցն՝ ի մի մազն գայ, որ թէ կարի՝ նա ելանէ և գաշխարհս անցուցանէ։ Վասն այսորիկ կարգեցին կախարդքն առասպել դիմօք, թէ ի տարեմուտն՝ ի նաւասարդի մին՝ ամենայն գործաւոր գիւր գործն գինչ և իցէ՝ կոփէ երեք անգամ. գարբինն՝ զսայն հարկանէ կռանաւն գատարկ. այսպէս հանդերձագործն, նոյնպէս և այլքն. զի կապ Շիդարայ ի մազն եկեալ է[1] և կտրիլ, գարձեալ հաստանայ և ամրանայ, որ ոչ ելնէ Շիդարն գաշխարհս անցուցանէ[2]։ Այսպիսի առասպել դիմօք վարէին Հայք, մինչեւ ի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր. որ խափանեաց զայն, և կարգեաց ոտնել ի մին նաւասարդի՝ Սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթոռանգինեայ հայրապետին. զի սուտն և գարշելին խափանեսցի, և սուրբն և ճշմարիտն՝ հաստատեսցի[3]։

անձ մի՝ Աբտաւազդայ սրդեզրեր են։ Այսպէս իմանայ և վանական վարդապետ, որ գրէ. « Աբտաշէս » բարեմիտ էր, և սրդի մի էր նորա Աբտաւազդ ա- » նուն, բախած ի մանկութենէ, զոր շիդարն կոչեն »։

1. Մաշելով հագիւ մազի մի չափ հաստ մնացեր է։

2. Ըր ըստ նոր տօմարի հինայ օգոստոս ամսոյ 11 կամ 12 է։

3. Այս առասպելս աւելի հին առասպելէ առած են Հայք, որ է Բիւրատպի Աժդահակայ վրայ ըսուածն, զոր յիշէ Խորենացի իր պատմութեան Ա գրոց վերջը։

Թ.Զ

ԱՐՏԱՇԻՐ ՍԱՍԱՆԵԱՆ ԵՒ ԽՈՍՐՈՎ Ա·

(Ա.Գ.Ա.Ն.Գ.Ե.Ղ.Ո.Ս)

Ընդ նուաղել ժամանակի թագաւորութեանն Պարթեւաց, ի բառնալ տէրութեանն յԱրտաւանայ որդւոյ Վաղարշու, ի սպանանել զնա Աշտաշրի որդւոյ Սասանայ, որ էր նախապար ումն ի Յետնոր դաւառէ[1], որ եկեալ միաբանեաց զզօրս Պարսից, որք լքին խոտեցին մերժեցին անարգեցին զտէրութիւնն Պարթեւաց, և հանեցան հաւանութեամբ ընտրել զտէրութիւնն Աշտաշրի որդւոյ Սասանայ: Արդ, իբրեւ յետ մահուն՝ հասանելոյ գուժիս այ-

ոչ Տիգրանայ հակառակորդ Մարաց թագաւոր Աժդահակն՝ այլ Նեբրովթայ ժամանակ, ըստ Պարսից, որոյ անդիմօրէն զմարդիկ չարդելուն համար՝ Հրուզեն (Ֆէրիտուն) զիւղացն՝ բռնէ, կապէ զնա, և Դեմբաւղնդ (Տէմավէնտ) լերան քարայրի մի մէջ փակէ. և այլն: Ինչ որ Նիզարայ զրոյցն ազդեր է Հայոց վրայ՝ մինչեւ Եղնկայ և Խորենացւոյ օրերուն, Աժդահակայն (Զօհաք) այլ՝ իբրեն մերձաւոր արեւելեայց: Պատմեն Արաբացի հեղինակք, թէ ամիրապետն Մամունն ի սկիզբն Թ դարու՝ ուզելով սուզել այս բանս, 130 հեծեալ խաւրէ ի Տէմավէնտ՝ որ քննեն, ծերունի մի վկայէ՝ թէ սոյգ է, բայց չատ գժար է այն տեղ երթնելն. սակայն կ'առաջնորդէ, և այս այն կարմ պատրաստել զօրքերն և երթալ վրընտել զԱրտաշէր: Զգաթանգեղ՝ այս տեղ Հայոց սեփական համարի այդ երկրորդ պահակը կամ կապանը, որ է Հռչակաւոր Տէրպենտն կամ Դարբանտ, որ և Պահակ Հոնաց, եւս՝ Ճոր. մինչեւ այս տեղ հասնէր հիւսիսարեւելեան սահմանն մեր Արշակունեաց տէրութեան:

սորիկ առ Խոսրով թագաւորն Հայոց, որ էր երկրորդ տէրութեանն Պարսից, — զի որ Հայոց թագաւոր էր՝ նա էր երկրորդ Պարսից տէրութեանն, — այլ թէպէտ և վաղ լուեալ զբօթն, ոչ ինչ ժամանեաց հասանել յամբոխ գործոյն պատերազմի իրացն պատրաստութեան[1]: Յետ այնորիկ դարձեալ լինէր յիրացն եղելոց մեծաւ տրտմութեամբ, զի ոչ եհաս նմա գործել գործ. ի մեծ տրտմութենէն և յիրացն վճարելոյ՝ դարձեալ անցեալ եկեալ լինէր յայլխարհ իւր:

Արդ, ի միւս եւս ի գլուխ տարւոյն՝ սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց գունդ կազմել և զօրս բովանդակել, գումարել զզօրս Այրարատեայ և Վրաց, և բանալ զԴրունս Ալանաց և զիւրոյ պահակին[2], հանել զզօրս Հոնաց. ապաստակ գնել ի կողմանս Պարսից, արշաւել ի կողմանս Ասորեստանի, մինչեւ ի դրունս Տըսբոնի: Ասար առեալ զերկիրն ամենայն՝ յապականութիւն դարձուցանէր զշինանիստ քաղաքացն և աւանացն գանկալից. զշէն երկիրն ամենայն՝ թափուր և աւերակ թողայր. չնչել ի միջոյ ի բաց կորուսանել, խլել քակել, հիմն ի վեր չանայր առնել. համարէր բառնալ զօրէնս տէրութեանն Պարսից: Ուխտ եդեալ միանգամայն վրէժ խնդրել մեծաւ քինութեամբ՝ զանկանէն իւրեանց ի տէրութենէն. ապաապուռ չանայր զվրէժ խնդրել մեծաւ քինու նախանձաբեկ լինելով, մեծամեծս վքայր՝ ի բազմութիւն զօրացն ապաստան եղեալ, և ի քաջութիւն զօրացն յուսացեալ: Վազվազակի

1. Խոսրով լսելով իր ցեղակից Պարթեւաց թագաւորին սպանուիլը, կ'ուզէ՝ բայց չի կըընար չուտով պատրաստել զօրքերն և երթալ վրընտել զԱրտաշիր:

2. Զգաթանգեղ՝ այս տեղ Հայոց սեփական համարի այդ երկրորդ պահակը կամ կապանը, որ է Հռչակաւոր Տէրպենտն կամ Դարբանտ, որ և Պահակ Հոնաց, եւս՝ Ճոր. մինչեւ այս տեղ հասնէր հիւսիսարեւելեան սահմանն մեր Արշակունեաց տէրութեան:

ի Թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր և քաջ առնեւձիոյ և բուռն կազմութեամբ՝ Աղուանք, Լփինք և Ճիղպք, Կասպք[1], և այլ եւս որ ամին կողմանց, զի զվրէժ արեանն Արտեւանայ խընդրեսցեն:

Զի թէպէտ և էր ինքն ի մեծի արամութեան, վասն բնութեան եղբայրութեան ազգասոհմին, զի հնազանդեցան և ի ծառայութիւն մտին համբաւեալոյ թագաւորութեան Սահրացւոյն, և ընդ նմին միամտեցան. զի էր խոսրովու և դեսպան արաբեալ՝ զի իւրեանց տոհմայինքն ի Թիկունս եկեսցեն, և նոցա ընդդէմ կայցեն ընդ նորա թագաւորութեանն. անտի ամա ձեռն տուեալ ի կողմանց Քուշանաց, և յայնմ մարդէ և յիւրեանց ի բուն աշխարհէն, և ի քաջ ազգաց և մարտիկ զօրացն, զի ի Թիկունս հասցեն. սակայն, տոհմքն և ազգապետքն և նախարարքն և նահապետքն Պարթեւաց՝ ոչ լինէին ունկնդիր, զի միամտել և հաւանեալ և նուաճեալ էին ի տէրութիւնն Արտաշրի, քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին և եղբայրութեանն:

Սակայն, առեալ խոսրովու զբազմութիւն զօրաց իւրոց, և որ ուստեք ուստեք եկեալ հասեալ էին ի Թիկունս օգնականութեան՝ նիզակակիցք զործոյն պատերազմի: Իսկ իբրեւ ետես թագաւորն Պարսից զայն ամբոխ կազմութեան գնդի, զի մեծաւ ուժով եկեալ դիմեալ հասեալ էին ի վերայ նորա, եւ նա ընդ առաջ նոցա ի պատրաստութիւն պատերազմի. բայց սակայն ոչ կարաց ունել զդէմ նորա, վախեալ լինէր առաջի նոցա. գնդեալ մըտեալ կոտորէին զամենայն զօրսն Պարսից, և դաշտացն և ճանապարհացն ցիր դիակաւալ կացուցանէին, և չարախտաւոր վատնէին, և անհնարին հարուածս ի վերայ հասուցանէին: Եւ թագաւորն Հայոց դառնայր ի մեծ կոտորածէն՝ մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ և ցնծալից ուրախութեամբ՝ ի կողմանն Հայոց, յԱյրարատ գաւառ, ի վաղարշապատ քաղաք, մեծաւ ուրախութեամբ և բարի անուամբ և բազում աւարաւ:

Ապա հրաման տայր ընդ կողմանս կողմանս արձակել, հրովարտակս առնել, յԵօթն Բագինս մեհենից[1], ուխտաւոր լինել պատկերաց կուռց դիցն պաշտամանն: Ապիտակ ցլուք և ապիտակ նոխազօք, ապիտակ ձիովք և ապիտակ ջորովք, ոսկեզէն և արծաթեզէն զարգուք ի վերչաւորս փողփղալս, նշանակապ պարարակապ մետաքսիւքն և ոսկովք պսակօք և արծաթի զոհարանօք. յանօթս ցանկալիս ակամբք պատուականօք, ոսկով և արծաթով, ի հանդերձս պայծառս և ի զարդս դեղեցկիս. զիւր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր: Նա և հինգերորդ եւս հանէր յամենայն մեծամեծ աւարացն ածելոց, և մեծամեծ պարգեւս քրմացն չնորհէր: Իսկ զօրացն որ դիւրեաւն էին՝ ետ պարգեւս և արձակեաց յիւրմէ:

Իսկ ի գալուստ ամին միւսոյ՝ զօր բազում կուտէր յոյժ, գումարտակ առնէր, զնոյն զօր կոչէր, և եւս բազում քան զնոյն՝ ասպատակ սփռեալ զկողմամբքն Ասորեստանի. մանաւանդ զի և զօրք Տաճկաց[2] ի Թիկունս եկեալ էին. աւար առեալ զամենայն երկիրն, քաղութեամբ դառնային յիւրաքանչիւր տեղիս: Եւ ամն ամն ատեպ ատեպ զայս օրինակ աւար առեալ, աւերէին զամենայն երկիր տահմանացն՝ որ ընդ Պարսից թագաւորութեամբ և իշխանութեամբ էր:

1. Շատ անգամ յիշուած ազգաց վերայիչեալ Պարքանաւոյ պահակին երկու կողմերու և Կասպից ծովու հիւսիս–արեւմտեան կողմանց:

1. Թուի այն ժամանակին, Հայոց գլխաւոր հօթն մեհեանքն Տարօնոյ և Եկեղեցեաց գաւառաց մէջ:

2. Արաբացիներն:

Թ

ԳԱԽԱՃԱՆՈՒԹԻՒՆ ԱՆԱԿԱՅ

(Ա. ԹԱՆԳԵԳՈՍ, ԲՑ. Գ)

Իբրեւ զայն ամենայն չարիս եառես թագաւորն Պարսից՝ որ եկին հասին ի վերայ Նորա, նեղեցաւ, տագնապեցաւ, տարակուսեցաւ, վարաներ յանձն իւր. աս ինքն կոչէր զամենայն թագաւորս և զկուսակալս և զնախարարս, և զզօրավարս և զպետս և զիշխանս իւրոյ տէրութեանն. ի խորհուրդ մտանէին. ազաչէր զամենեսեան հնարս ինչ մարթել խնդրել գտանել. ազգի ազգի պարգեւս խոստանայր. թերեւս ոք միայն գտցի. ասէ, որ զվրիժուց հատուցումն խնդրել մարթասցէ. յերկրորդական գահ իւրոյ տէրութեանն մատուցանել խոստանայր, թէ միայն նախանձու մեծի ձեռն արկեալ՝ հատուցէ ոք, բայց միայն աթոռովս ես ի վեր եղէց քան զնա. եթէ կարի յանարգաց ոք իցէ կամ ի պատուականաց, ազգի ազգի պատիւս և պարգեւս և վարձուց հատուցմունս չնորհել խոստանայր:

Արդ, ումն ի միջոյ խորհրդեանն՝ զխաւսր նահապետ էր Պարթեւաց տէրութեանն, որոյ անուն էր Աբնակ[1], յառն կացեալ՝ ի մէջ անցեալ, յիւրմէ ազգէն իբրեւ ի թշնամւոյ վերայ խոստանայր վրէժխնդրել: Խօսել սկսաւ ընդ նմա թագաւորն և ասէ. Եթէ միայն զայդ նախանձ խնդրեացես միամտութեամբ, զբնակութիւնն պարթեւական՝ զձեր սեփական Պալհաւն՝ ի ձեզ դարձուցից[1], և քեզ թագ եդեալ փառաւորեցից, և երեւելի և փառաւոր ի թագաւորութեանս իմում արարից, և երկրորդ ինձ կոչեցից: Պատասխանի ետ Պարթեւն և ասէ. Զնացարդս ազգի իմոյ կեցուցանես դու. այլ ես և եղբայր իմ հարազատ այսօր հրաժարեսցուք ի քէն:

Յայնմ ժամանակի հանդերձեցաւ կազմեցաւ Պարթեւն եղբարբն իւրով, հանդերձ ընտանեօք, կանամբք և որդւովք և ամենայն ազխէս իւրեանց. չու արարեալ յուղի անկեալ, դէտ ակն կալեալ ճանապարհացն, ելեալ երթայր հատուածի պատճառաւ ի կողմանս Հայոց, իբրու թէ ապստամբեալ իցէ յարքայէն Պարսից: Եկեալ յանդիման եղեւ թագաւորին Խոսրովու՝ յՈւռհայ գաւառի, ի խաղաղ քաղաքի[2], ի ձմերոցս արքայութեանն Հայոց:

Իբրեւ եառես թագաւորն Հայոց, ցնծացեալ եղ ընդ առաջ նորա, և մեծաւ խնդութեամբ ընկալաւ զնա. մանաւանդ իբրեւ կեղծաւորութեամբ և դաւով սկսաւ խօսել ընդ նմա, և զիւրոյ գալոյն հաւատարմութիւն ցուցանել. վասն այնորիկ եկի ես առ քեզ, ասէ, զի հաւատարակ զհաւատարակաց վրէժ խնդրել մարթասցուք:

Արդ, իբրեւ եառես թագաւորն զայրն՝ զի զիմեալ եկեալ էր առ նա ամենայն ընտանեօքն հանդերձ, և միամտութեամբ հաւատաց ի նա. յայնժամ տայր նմա պատիւ՝ ըստ օրինաց թագաւորաց, և հանէր նստուցանէր զնա յերկրորդ աթոռ թագաւորութեանն. և զամենայն ժամանակ ձմերայնոյն ուրախութեամբ զաւուրս ցրտաշունչ հոմայշունչ սառամանեացն անցուցանէին:

1. Պահլաւաց երկրին՝ որ է Բալխ. իբրեւ ինքնիշխան տէր ըլլալ՝ խոստանայ:

2. Արդ գաւառի կլիմային բարեխառնութեան համար՝ Հայոց թագաւորքն այն տեղ կ'անցընէին ձմեռը, Խաղխաղ կոչուած քաղաքում. որոյ անունը կ'երեւի թէ հին պահէ Խալխալանդը գիւղն:

1. Օաարազդի քննագաւաք ամանք տարակուսին թէ Աբնակ ումն Պարթեւ՝ ըլլայ Հայր Գրիգորի Լուսաւորչի մերոյ. տարակուսական է անոր ազգական ըլլալն Յակոբայ Մծբնացւոյ հօր, ինչպէս պատմէ Ջենովբ:

Իսկ իբրեւ եկին հասին աւուրք ջերմոտ հարա-
ւահողմին գարուն դրանցն բանալոյ, համբարձաւ
Թագաւորն ի կողմանցն յայնցանէ. եկին իջին յԱյ-
բարատ գաւառ, ի վաղարշապատ քաղաք. և մինչ-
դեռ ուրախութեամբ հանդուցեալ էին, ի միտ առ
Թագաւորն. գումարտակ առնէր անդրէն արշա-
ւել ի կողմանս Պարսից:

Իբրեւ զայն լսէր Պարթեւն (Անակ), զերդուման
ուխտին յիշէր որ ընդ Պարսից արքային ուխտեալ
էր. և զխոստմանն յիշէր զպարգեւացն, և ի բուն
աչխարհն փախագէր՝ որ Պալհաւն կոչէր. և վատ
խորհուրդ ի միտ արկանէր. առնոյր զԹագաւորն
մեկուսի, նա և եղբայր իւր հարազատ, իբրու ի
պատճառս ինչ զբօսանաց, իբրեւ խորհուրդ խոր-
հելոյ ընդ նմա. և զսուսերսն պողպատիկս թե-
րաքամեալս ունէին. յանկարծ յեղակարծումն ժա-
մանակի՝ զէնս վերացուցեալ՝ զԹագաւորն զխթեալ
կացուցեալ յերկիր կործանէին: Անդուստ ուրեմն
իրազգած եղեն իրացն որ եղեն, գոյժ ազաղակի ամ-
բոխին Թանձրանայր. մինչ այս մինչ այն, նոքա հե-
ծեալ յիւրաքանչիւր երիվարս՝ փախստական լինէին:

Իսկ իբրեւ զայն գիտացին նախարարք հայա-
կոյտ զօրացն, գունդ գունդ հատանէին, զկնի լի-
նէին. ոմանք ընդ ցամաքն ածապարեալ հասանել
ի խելս կամրջացն՝ առ դրունս Արտաչատ քաղաքի.
զի գեան երասխ յարուցեալ գայր դարիւ և դարիւ,
սառնահալ, ջրակուտակ, ձիւնաոյզ, ձիւնախաղալ
բազմութեամբն՝ յաւուրս իւրոյ պղտորութեանն.
կէսքն անցեալ ընդ կամուրջն վաղարշապատ քա-
ղաքի՝ զոր և Կամուրջ Մեծամօրի կոչեն, ածապա-
րէին հասանել յառաջ մի՝ ի խելս կամրջին Ար-
տաչատու: Ի կիրճս ճանապարհացն արգելին զնո-
սա, ի մէջ արարեալ զնոսա, ի Ցափերական կա-
մրջացն[1] գետավէժ առնէին զնոսա. և ինքեանք

1. Թուի թէ գետոյն եզերքն (ափք) բարձր ըս-
լալուն համար, այսպէս կոչուէր է կամուրջն:

անդրէն դարձեալ վայիւք, ճչովք և ողբովք. և ա-
մենայն երկիրն ժողովեալ՝ զԹագաւորն աչխարէին:

Եւ մինչդեռ չերմ ոգիքն ի ծոցոյն չեւ էին թա-
փեալ, և չունէր վախճանին չեւ էր հասեալ, հրա-
ման տայր (Խոսրով) զազգատոհմին (Անակայ) սա-
տակել: Յայնժամ սկսան սատակել և կոտորել. և
ոչ թողին յերիտասարդաց մինչեւ յայն՝ որ բնաւ
զալ և զձախ ոչ գիտէր. նա և զիպական տոհմն
մաչէին ի սուր սուսերի իւրեանց: Բայց միայն
երկուս մանկունս փոքրկունս յորդւոցն Պարթեւին
պրծեալ՝ ոմն ապրեցուցանէր ի ձեռն գայեկաց
ուրումն. զմին ի կողմանս Պարսից, և զմին ի կող-
մանս Յունաց առեալ փախչէին:

ԽՐ

ՇԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ՏՐԴԱՏԱՅ

(Մ. ԽՈՐԵՆ. Բ. հթ. ձև)

Պատմէ[1] զնահատակութեանցն Տրդատայ. նախ
ի մանկութեանն յերիվար կամակոր աչտանակեալ,
և զէնս չարժեալ յաչոզակաբարս, և այլ պատե-
բազմական ուսանել ախորժակս. ապա, ըստ Պե-
զոպոնեսացւոց մեհենական հրամանին Հեփիտեայ[2],
ի մրցանակս ազոնին առաւելեալ քան զկղիդոս-
արացոս[3] Հռոդացի, որ զվզէ եւեթ կալեալ յաղթէր.

1. Փերմիլիանոս եպիսկոպոս Կեսարիոյ է պատմողն,
զոր առաջ յիշած է Խորեն. (Բ. հէ). բայց անոր գրած
պատմութիւնն կորսուած է:

2. Պիւթիայ պատգամախօսն կարծուի:

3. Եւսեբիոսի Քրոնիկոնին մէջ յիշուածքն են, ի
« ձԽՐ (ոգմպիադին) ի մարտի՝ Կղիսոսոսարատոս
» Ռոդացի, որ զվզէ և եթ կալեալ՝ յաղթէր »: Անկէ

դարձեալ և զկերասոս արդիացի. զի նա զկնդակ եգին Թափեաց, իսկ սա զերկուց ցլուց վայրենեաց միով ձեռամբ կալեալ զեղջերէն, Թափեաց հանդերձ ընդվզեալ ջախջախմամբ: Եւ ի ձիրնթացս մեծի կրկինն կառավարել կամեցեալ, ի հմտութենէ հաւակագործին ոստուցեալ յերկիր անկաւ, և բուռն հարեալ արգել զկառան. ընդ որ ամենեքին զարմացան: Եւ ի պատերազմելն Պոռոսայ ընդ Գաւթա, եղեւ սով աստուիկ. և յոչ գտելոց չտեմարանաց՝ յարեան զօրքն ի վերայ և սպանին զնա. նոյնպէս և ի վերայ ամենայն իշխանացն դիմեցին: Իսկ Տրդատ միայն ընդդէմ կացեալ, չէթող զաք մտանել յապարանն Լիկիանոսի, առ որում ինքն Տըրդատ էր:

Բայց Կարոս հանդերձ որդւովքն՝ Կամենիանոսիւ՝ թագաւորեաց. և զօրաժողով եղեալ ետ ճակատ ընդդէմ Պարսից արքային, և յաղթեալ դարձաւ ի Հռոմ: Վասն որոյ բազում ազգս ի սատարութիւն կալեալ Աբտաշրի, Թիկունս արարեալ զանապատն Տածկաստանի, դարձեալ ետ ճակատ ընդ զօրս Հռոմմայեցւոց կրկին, ոստի և անտի Եփրատաւ, յորմէ սպանաւ Կարոս ի յԱխնոմի, նոյնպէս և Կառինոս, որ ի վերայ Կոռնակայ[1] չոգաւ յԱնապատ, ընդ որում և Տրդատ. և սատակեցաւ նա և զօրն, և ինացեալքն ի փախուստ դարձան: Յորում և Տրդատայ վիրաւորեալ երիվարն՝ ոչ առապարեաց ընդ փախստեայն, այլ առեալ զդէնս իւր և զկազմած ձիոյն, ի լուզ ընդ յայնատարած խորայատակն անցանէր ընդ Եփրատ, ի բուն զօրսն իւրեանց ուր Լիկիանոսն էր:...

Իսկ թագաւորն Տրդատ ամենայն Հայաստանօք իջեալ ի դաշտն Գարգարացւոց[1], պատահէ հիւսիսականացն՝ ճակատու պատերազմի. և ի խառնել երկոցունց կողմանցն՝ յերկու ձեղջէ զամբոխ թըշնամեացն, սկայաբար չահատակելով: Ոչ կարեմ ասել զերագութիւն ձեռինն, որպէս անբաւք ի նմանէ յերկիր անկեալ թաւալագլոր խաղային. օրինակ իմն, ի զեղեցիկ ցուցմունդ լի ձկամբք յերկիր թափեալ ցանցոյն, կայտաէին յերեսս երկրին: Զօր տեսեալ թագաւորին Բասլաց, մտա սանձ յաղքայն. և հանեալ յատպազինէն զներդեալ քելխատպատ պարանն[2], և կորովաբեմամբ ձգեալ յետուստ կողմանէ, ճարպ դիպեցուցանէ յուս ձախակողմանն և յանութ ազակողմանն. զի էր վիրացուցեալ զձեռն՝ ածել ումեք սուսերաւ. և ինքն վառեալ վերս պահպանակօք[3], ուր ոչ գծէին նետք: Եւ քանզի ոչ կարաց չարժել ձեռամբ զհնակայն, զանձիւք առ երիվարին. և ոչ այնչափ ինչ չուեթափեաց մարակել զերիվարն, քան թէ ահեակ ձեռամբն ի ներդեալն աճապարեալ սկայնին, և սատկութեամբ ուժոյն զիւրեաւ ցանգեալ, ի ճահ դիպեցուցանէր զերկայրին, և ընդ մէջ կարէր զայրն և ընդ զոյգ պարանոցին զգլուխ երիվարին: Իսկ զօրացն ամենայնի տեսեալ զթագաւորն իւրեանց և զզօրավարն միջակտուր յայնպիսի ահաւոր բազկէ լեալ, ի փախուստ դառնային. զորոց զհետ մտանել Տրդատ՝ վարէ մինչեւ յայրարէն Հռոմայ:

առաջ ի ձի ոգոմպ. «Կերասոս Արդիացի, որ զկնդակ » եգինն Թափեաց». յայնն կերաս կոչէ:

1. Պոռոսի վերջի պատերազմին և մահուան դիպուածն՝ այլեւայլ կերպ պատմուած և առյզ չէ, նոյնպէս և Խիւնիկն տեղն: Անտարդ է և կռռնակն զոր՝ մեր պատմչաց մէկն կ'ըսէ զօրավար Խոսրովու՝ Հօրն Տրդատայ, և 460 տարի ապրած ըլլայ: Արտաշայ է և Խոսրենացւոյ փռանկերէն Թարգմանչի ըսածն, թէ Հայք՝ յունարէն Κεραυνὸς կերաւնոս բառը՝ որ նշանակէ կայծակ (որոյ Հարուածով մեռաւ Կարոս) չիւթած ըլլան կամ առեղծած զկռռնակ:

1. Աղուանից երկրին դաշտային գաւառ մի, Կուր և Երասխ գետոց և Կասպից ծովու միջոց:

2. Ձիոյն գրահից միջէն հանելով՝ ջիղերով և կաշիով զուգած չուանը (ճապան), Եարպիկուխթամբ կ'անցընէ Տրդատ՝ Բասլաց Թագաւորին ուսին վրայ:

3. Ամուր հիւսուած:

ԽԹ

ՏՐԴԱՏ ԵՒ ԳՈԹԱՑ ԹԱԳԱՒՈՐՆ (ՀՌՉԷ)

(Ա.ԳԱՆԹԱՆԳԵՂՈՍ, Դ)

Ցաւուրս ժամանակացն այնոցիկ զօրաժողով լինէր իշխանն Գթաց[1]. և բազում գունդս զօրաց ժողովեալ՝ գայր տալ մարտ պատերազմի ընդ իշխանին Ցունաց[2]: Պատգամս յղէր օրինակաւս այսուիկ. եթէ, ընդէր բնաւ ելանեմք խառնամբոխ ի պատերազմ՝ սպառել զզօրս մեր, և վտանգ և տագնապ միանգամայն աշխարհի հասուցանեմք. ես աւասիկ ախոյեան ելանեմ քեզ՝ ի մերոց զօրաց ասպի, և դու ինձ ի յունականաց այսի. հասցուք եկեսցուք ի մարտ տեղի. եթէ ես զքեզ յաղթահարեցից՝ Ցոյնք ինձ հնազանդեսցին և ծառայութիւն. և թէ դու ինձ յաղթեսցես, մեր կեանքս քեզ նուաճին և հնազանդին. և առանց արեան և կոտրածոյ լինելի շինութիւն կողմանց երկուցունց:

Եւ իրրեւ զայն լուաւ թագաւորն Ցունաց՝ երկեաւ. քանզի օրինօք կռմութեամբ՝ գունդ առ գունդ ճակատել ոչ առնոյր յանձն. և ըստ պատգամին պատչաճի՝ ոչ կարէր ունել յանձին. քանզի տկար[3] յօսկերաց զօրութեամբ, սրատթափ եղեալ զարհուրեցաւ. քանզի ոչ գիտէր զինչ տացէ բանին պատասխանի:

Ցայնմ ժամանակի թագաւորն հրաման տայր հրովարտակս և դեսպանս առնել առ իշխանս և զօրս զօրութեան իւրոյ, զի ուր և իցեն՝ առ նա հա-

1. Գթից ազգն, Ասիոյ և Եւրոպիոյ սահմանակից հիւսակողման բնակիչք էին:
2. Հռոմայեցւոց կայսրն, Վիսկէտեաննոս Համարուի:
3. Այս տեղ պակասի բայ մի, եր կամ գոլով:

սանիցեն վաղվաղակի. յայնմ ժամանակի իշխանք և զօրք և նախարարք առ նա հասանէին վաղվաղակի: Ասեալ և Լիկիանէ[1] զբուն գունդն որ ընդ իւրով ձեռամբն էր, փութայր հասանէր ի տեղի պատերազմին՝ յանդիման թագաւորին:

Եւ մինչդեռ գային գունդք զօրացն և Տրդատէս ընդ նմա, դէպ եղեւ նոցա գալ մտանել ի նեղադոյն տեղի մի՝ յառուամէջս այգեստանոյն, ի փողոցամէջս համբարոցացն, առ զբուն քաղաքին. քանզի զբուն քաղաքին ախեալ էր՝ զի ժամ էր հասարակ գիշերոյ: Իրրեւ ոչ գտաւ խար երիվարաց զօրուն բազմութեան դարման կերակրոյ՝ մինչեւ ի մէջ գիշեր, հայեցեալ տեսանէին ի զուարթափակ քաղաքորմի միոջ[2] զի խոտահամբար մթերեալ էր. և ոչ ոք կարաց ձգել գնեան իւր վասն տեղւոյն բարձրութեան: Ցայնժամ Տրդատէս ելեալ և իջեալ՝ հասէր ընկենոյր բարդս բարդս ի մէջ զօրացն, մինչ ի լիութիւն բաւականի. նա և զհամբարապանն և բազում իշեան՝ յայնկոյս որմոյն ընկենոյր ի մէջ զօրացն, և ինքն անդրէն ելեալ իջանէր: Զայն ամենայն ոյժ պնդութեան տեսեալ Լիկիանէս՝ զարմացաւ: Իրրեւ այդն զառաւօտն մերկացաւ, զբուն քաղաքին բացան, և զօրքն առ հասարակ ամենայն ի ներքս մտանէին. և Լիկիանէս յանդիման լինէր թագաւորին, և ամենայն մեծամեծքն և սպարապետքն և զօրագլուխքն և իշխանքն:

Ասպա կաց պատմեաց թագաւորն իշխանացն՝ զամենայն պատգամն թագաւորին Գթաց: Խօսել սկսաւ Լիկիանէս ընդ արքային, և ասէ. Մի՛ ինչ

1. Որ է Լիկինէոս, յետոյ կայսերութեան պատիւ ընդունող, և Կոստանդիանոսի հետ հռոմէական ինքնակալութեան բաժանորդ. այլ հալածող քրիստոնէից, անհաւատարիմ և առ Կոստանդիանոս, վասն որոյ և հրամանաւ սորա սպանուած:
2. Եզանց կովուց գոմ և ախոռ, պատերով պատած:

զարհուրեացի սիրտ տեառն իմոյ. զի գոյ առ այր մի ի դրան քումմ, զի իրթդ այդ նուաճու վճարին. Տրդատէս, ի տոհմէ թագաւորին Հայոց աշխարհին: Եւ կաց պատմեաց զերեկոյին գործ քաջութեան նորա: Յայնժամ հրաման եհան, և ածին զՏրդատիոս յանդիման թագաւորին. և պատմեաց նմա կարգաւ զամենայն: Յայնժամ եհան կազմութիւն մարտի, առ ի ժամ վաղուի՝ զմիմեանս տեսանել պատերազմաւ:

Իսկ ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն՝ հրամայեաց արկանել ծիրանիս, և զարդարեցին զՏրդատ ի զարդ կայսերական, արկեալ զնուաճ զնչան թագաւորութեանն. և ոչ աք գիտէր վասն նորա. հրաման եղ ամենեցուն թէ ինքն կայսրն իցէ: Եւ նա առեալ զգունդն զօրաց բազմութեան՝ ի ձայն փողոյ տագնապաւ յառաջ մատուցանէր մինչեւ յանդիման թշնամեացն: Իբրեւ յանդիման եղեն միմեանց կայսերակերպն և թագաւորն, մըրտակ ի կուշտ արարեալ երիվարացն՝ ի միմեանս հասանէին. անդ յաղթահարէր կայսերակերպն զթագաւորն. ձերբակալ արարեալ՝ յանդիման առաջի թագաւորին կացուցանէր [1]:

1. Խորենացի չի յիշէր այս գործս. Ագաթանգեղոս այլ Գոթից թագաւորին ոչ անունը յիշէ և ոչ բնութիւնն վերջը ինչ ըլլալն: Զենովբ (քան այլեւայլ ձեռագրաց) Հրալէ և ըստ ոմանց Հռչէ անուանէ. և չատ օտարաթի իմն անար ցեղը. իբր թէ Անակայ քոյրն (Լուսաւորչի հօրքոյր) Խոսրովուհոի կոչուած՝ Հեփթաղաց Զուանչեր թագաւորի կին ըլլայ, և ծնանի զՏիրան, զոր զրկեն ի թագաւորութենէ. ասոր որդին կ'ըլլայ ծանօթ Ս. Յակոբ Մծբնացին. որ՝ իբր Սագդեն քոյրը կ'առնու կ'երթայ առ Գոթս. ասոնց խնամեծալով սա (Սագդեն) կ'ունենայ որդի մի՝ զոր անուանեն Հռչէ, և Գոթք՝ հաւնելով իրեն՝ թագաւորեցընեն իրենց վրայ. և սա կ'ըլլայ զԳեղակղեաիանոս ի մենամարտ հրաւիրողն և ի Տրդատայ բռնուողն: Ս. Գրիգորի եղբայր Սոռբեն այլ կ'երթայ ի կողմանս Հենաց և թագաւորէ: Շատ մէջէ մէջ օգակաւոր վիպասանութիւն:

Յայնժամ մեծացոյց յոյժ թագաւորն զՏրդատիոս, և մեծամեծ պարգեւս եհան նմա. թագ կապեալ ի գլուխն նորա, և ծիրանեօք զարդարեալ մեծացոյց զնա, և կայսերակերպն զարդու չքեղացուցեալ մեծարեաց զնա. և գումարեաց ի ձեռն նորա զօրս բազումս յօգնականութիւն նմա, և արձակեաց յիւրական աշխարհն Հայոց:

Ծ

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ Ս. ԱԻՐԵՆԴԻ ԵՒ ԵՂԲԱՐՑՆ [1]

(ՅԱՅՍՄԱԿԻՈՆ)

Յետ մահուան Պիսկղեսիանոսի արքային՝ [2] թագաւորեաց Մաքսիմիանոս անօրէնն. և ելին ազգք բարբարոսաց յարեւմտից՝ ի սահմանս Հռոմայեցւոց, որք էին Մաւրիտանիք և Սիկաք (կամ Սկալաք [3]). և յոյժ աւերէին զնչիրակ [4], զՄակեդոնիա և զայլ արեւմտից գաւառան: Եւ գրեաց

1. Փառնակ, Հերոյ, Փիրմոս, Փիրմին, Կիւրակոս և Լանգինոս:

2. Տրդատայ մենամարտութեան և ժամանակին, միանգամայն և ազգայնութեան նմանութեամբն յարմար համարուեցաւ կարգել այս տեղ՝ այս եօթն եղբարց՝ կրօնական քան ծնողական եղբայրութեամբ՝ նահատակութիւնը: Յաւնաց Յայսմաւուրք վկայեն որ Աբեւելեայք էին, և յետ պատերազմական հանդիսին զրկուեցան ի մարտիրոսականն, ի Սատաղ, ծանօթ քաղաք միջագետից Մեծ և Փոքր Հայոց. իբրեւ գոնէ ատենց Հայութեանն այլ վկայեն անուանքն, Փառնակ և Աբեղեդ կամ Որեմոտ գրեալ, որ շատ հաւանօրէն էր Հրաւոտ. Հերոյ հոս չէ օտար:

3. Յայն ընդարձն միայն Սկիւթացէք կ'ըսէ:

4. Թրակիա, կ. պօլսի մօտ սահմաններէ:

Մարմարովք[1] բարբարոսաց արքային առ Մաքսիմիանոս, զի ելանիցէ մեծամարտել ընդ նմա, կամ ինքնին կամ զայլ ոք առաքեսցէ. և որ յաղթէ՝ հնազանդեսցի նմա միւս կողմն: Եւ ի տարակուսի լեալ Մաքսիմիանոս՝ ոչ գիտէր թէ զինչ առնիցէ. քանզի յայժ երկնչէր ի Մարմարովթայ, վասն զօրաւոր և հզօր գոլոյն, զի անձամբն որպէս հակայ էր և քաջ պատերազմող. և յիշխանաց և ի զօրավարաց իւրոց ոչ ոք գտաւ որ ելանէր մեծամարտել ընդ Մարմարովթայ: Եւ ազդեցուցին նմա վասն Սրբոյն Աբրենդի, եթէ զօրեղ զօրական է և հզօր պատերազմող: Կոչեաց զնա առաջի իւր. և տեսանէ՝ զի էր երիտասարդ այր ազդակ և գեղեցիկ տեսլեամբ. հաճոյ թուեցաւ նմա, և առաքեաց ընդդէմ թշնամւոյն: Եւ Սուրբն Աբրենդիոս և վեց եղբարք իւր ազօթեցին առ Աստուած: Եւ մեռեալ ի մարտ ինքն միայն՝ յաղթեաց հակայազօր պատերազմողին և սպան զնա. և հատեալ զգլուխն՝ տարաւ առ Մաքսիմիանոս արքայն: Եւ հնազանդեցան նմա անթիւ զօրքն բարբարոսաց. և աղաղակեաց մեծաւ բարբառով Մաքսիմիանոս արքայն, զոհութիւն մատուցանէր կռոցն՝ գովասանութեամբ, թէ ի նոցանէ տուաւ նմա յաղողութիւնն, և նոքա զօրացուցին զԱբրենդիոս, և ետուն նմա զքաջութիւնն: Իսկ իբրեւ լուաւ սուրբ վկայն՝ աղաղակեաց համարձակութեամբ և ասէ. Ձինչ ասես, ո՛վ թագաւոր, ընդէր զզօրութիւն իմ որ ի Քրիստոսէ՝ անչունչ կռոցդ տաս. Քրիստոս զօրացոյց և եւս զյաղողութիւնն, և օգնեաց ինձ, և ոչ աստուածքն քո: Եւ թագաւորն ամաչեաց ի նմանէ, զի յայժ ուրախացոյց զնա. և առժամայն ոչ ինչ արար նմա չար. այլ մանաւանդ մեծարեաց ի վեհագոյն պատիւ, և բազում տուրս պարգեւեաց նմա. և Սուրբն ոչ ինչ կամեցաւ առնուլ ի նմանէ. բայց

1. Յայնն Մարովք զրէ:

միայն խնդրեաց զդօսին՝ Մարմարովթայ արքային, զի յայժ պատուական մեծագին էր. և չնորհեաց նմա:

Եւ յետ աւուրց կոչեաց առ ինքն, և բազում աղաչանօք և խոստմամբ ողոքէր և խրատ տայր ուրանալ զՔրիստոս և զոհել կռոցն. և ոչ կարաց հաւանեցուցանել. և հրամայեաց զօրականացն զի զՍուրբն Աբրենդիոս և զվեցեսին եղբարսն իւր աքսորեսցեն ի հեռաւոր երկիր[2]. և ըստ հրամանի նորա տարան զնոսա ի քաղաքն Տրապիզոնդի. և զվեց եղբարսն ցրուեցին ի յԱպհազս, ի Ճքերս[3] և ի Զալիկի. և անդ ի սովոյ և ի մերկութենէ հանգեան ի Քրիստոս՝ բարի խոստովանութեամբ: Եւ ի Սրբոյն Աբրենդիոսի պարանոցն կախեցին վէմ մի մեծ և ընկեցին ի ծով. և հրեշտակապետն Ոսափայէլ եհան զնա կենդանի ի ցամաքն, և կացոյց ի վերայ վիմի. և անդ ազօթելով աւանդեաց զհոգի իւր առ Աստուած. և երեւեցաւ Սուրբն քրիստոնէից. և երթեալ առին զմարմինն և թաղեցին պատուով, ի փառս Քրիստոսի[4]:

1. Ձինուորական զօսին՝ ուսկից թուրը կախէին, Baltheum ըստ Լատինաց:

2. Յայն ընագիրն կ'ըսէ՝ աքսորեցին զանոնք ի Սատագուց քաղաքն Հայոց:

3. Ափխազք հիմայ այլ ծանօթ են. փոխանակ Ճքերի կամ Ճկաց՝ յայնն գրէ Ζιχχω. փոխան Զալիկի՝ Ζαχαι քաղաք Լազից, Ζαχάνεων, ուր վախճաներ է Ս. Կիւրակոս. մեկայլ ընկերքն այլեւայլ տեղեր. զլնաւորն Աբրենդ՝ ի Ռիզէ տարաւած ի ծով ձգուած է: Լատինաց Յայսմաւուրքն միանգամայն ի Սատագ նահատակուած գրէ զասոնք: Քաղքիս անունը նման գանելով Միլանցի Septala տոհմի, 1631ին իրենց Ս. Սենատոր եպիսկոպոսի վարքը հրատարակելով, թէ գնա թէ գիրենք՝ այս Սատագացի Սրբոց ցեղէն հռչակեցին, որ աւելի քան զտարակուսական է:

4. Վասլի կայսեր կոչուած յաւնարէն Յայսմաւուրքն՝ իւրաքանչիւր Ս. Վկայիցս մահուան կերպն՝ ատանաւոր տողերով նշանակէ, այսպէս:

ԾԱ.

ՎՐԷԺԸ ՏՐԴԱՏԱՅ Ի ՊԱՐՍԻՑ

(ԱԳԱԹԱՆԳ. ԺԱ.)

Իսկ թագաւորն Տրդատ զամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանն՝ աւերէր քանդէր գերկիրն Պարսից թագաւորութեանն. զաչխարհն Ասորեստանի աւերէր, և հարկանէր ի հարուածս անհնարինս: Վասն այսորիկ պատչաճեցան բանքս այս ի բանս կարգի առակաց. « Ըր սիգալոնն աւերեաց » զթումբս գետոց, և ցամաքեցոյց իսկ ի սիգալ իւ» րում զյորձանս ծովուց »: Վասն դի, սէգ իսկ էր առ հանդերձ, և այլ աւժով պնդութեան հաստատութեամբ, բուռն ոսկերօք և յաղթ մարմնով, քաջ և պատերազմող անհնարին, բարձր և լայն հասակաւ. որ զժամանակս կենաց իւրոց պատերազմեալ՝ և առնէր մարտից յաղթութիւն: Մեծ անուն պարծանաց քաջութեան անձին սատանայր, և զհոյակապ չքեղութիւն յաղթութեան ընդ ամենայն աշխարհ կացուցանէր. հարկանէր ի հարուածս զթշնամիսն, և խնդրէր զքէնս վրիժուց իւրոց հայրենեացն. առնոյր աւար բազում ի կողմանցն Ա-

» Խարատուզեալ կենդանւոյն յալբս ծովու՝
» Ի ցամաքի հանդեաւ Հրանտ յուղ երկնաչուս:
» Ըզկենցաղոյս թօթափեալ զաղաքս՝ փառնակ՝
» Պարէ ի յարկս երկնից՝ յաղթող նահատակ:
» Հերոյ՝ հարեալ յերեսկան զեղոյն տեսս,
» Իբր ի զարուն վըւարճ՝ ճեպի յայն հանդէս:
» Են հագեալ զահագը փերթիմ և փերթմին,
» Հաճոյական հանգիստաք երկնից արքային:
» Հրեշտակակերպք եղև Լանդին և Կիւրակ՝
» Փառս յԱստուծոյ ընկալան՝ զալ ըզյդ հրեշտակք »:

ռաքուց, և թափէր կողոպուտ սաստիկ անհնարին ի նոցանէն: Արկանէր ի սուր զզօրս Պարսից, և թափէր զկողոպուտ անհնարին. լինէր առաջնորդ առնեաձիոյ զօրացն Յունաց, և մատնէր նոցա զբանակս նոցա. հանէր զզօրս Հռնաց սաստիկ յոյժ, և գերէր զկողմանս Պարսից:

ԾԲ.

ՄԱՆՈՒԿՆ ԳՐԻԳՈՐ ԵԻ ԵՂԲԱՅՐՆ ՍՈՒՐԷՆ

(ՋԵՆՈՊԲ ԳԼ. Ա)

Իբրեւ սպան Անակ զԽոսրով, և գեա յոգւոջ էր, հրաման տայր թագաւորն զազգատոհմին Անակայ ի սուր սուսերի մաշել: Իսկ Բռշդպա[1] իբրեւ լուաւ զայս հրաման ի թագաւորէն, փութացեալ եմուտ առ Որոճի կինն Անակայ, և առեալ զԳրիգորդոր ի զրկաց նորա, և եա գնա ցկինն իւր Սոփէ: Իսկ զմիւս եղբայրս նորա, որ կոչէր Սուրէն, մանկաբարձքն փախուցին ի գուռն Պարսից, և անդ անաւ առ հօրաքեռն իւրում, որ էր կին թագաւորին Ջուանշիրի Հեփթաղի. որ իբրեւ զարդացաւ. գնաց յերկիրն Ճենաց յետ մահուն Խոսրովուհեայ. և կացեալ անդ ամս տասն՝ թագաւորեաց անդ ի վերայ երկրին Ճենաց ամս իննեւտասն: Զոր ոմանք համարեան՝ թէ Զգօն ասեն եղբօրն Գրիգորի, որ է Յակոբ[2]. բայց ոչ գիտեն զատոյգն, զի Յակոբն այն հօրաքեռորդի էր Սրբոյն Գրիգորի. և անուն

1. Ըստ պատմութեան Ջենովբայ Բռշդպար կամ Բռշնտաս պարսիկ մ'էր, Անակայ հետ եկած ի Հայս, և յետոյ ի Կապադովկիա երթալով՝ Եւթաղ անուամբ քրիստոնեի մի քոյրը՝ Սոփի՝ կին առեր էր:

2. Մագբնայ Հայրապետան:

մօրն նորա Թոսրովուհի: Իսկ յօրժամ մեռաւ մայր նորա, և զթագաւորութիւնն բարձին ի հօրէ նորա Տիրանայ, զի եապան գնա ի պատերազմի արքային Լփնաց Ռեգես, ապա Յակոբ հանդերձ քերբն իւրով Սակդևիհ[1] մնաց անդ: Եւ յետ ժամանակաց քեռորդի նորա գնաց յաշխարհն Գթաց, և անդ թագաւորեաց. զոր յետոյ Տրդատ ըմբռնեաց, մինչ առ արքայն Յունաց էր: Զի սա էր որ եկն ի պատերազմ ի վերայ Դիոկղետիանոսի արքային Յունաց, որպէս Ագաթանգեղոս պատմէ զայսոսիկ:

Եթէ ատուգիւ կամիս գիտել զայսոսիկ, ով երանելիդ Բեկտոր, ընթերցիր զթագաւորութիւն Հեփթաղինեակայ հեղինացի գրով, և կամ զթագաւորութիւն ձենաց, զոր գտանես յԱւհա քաղաքի առ Բարդայ պատմագրի:

Իսկ Բուրդար առեալ զկին իւր և զմանուկն Գրիգոր, գնաց գկնի աներոյն իւրոյ Խզրաղայ՝ յաշխարհն Կապադովկացւոց. և առեալ գնա ի գպրոց, ուսուցանէր ասորի և հելլենացի դպրութիւն և լեզու. և վարժեալ լինէր ատուածպաշտութեամբ: Իբրեւ եղեւ երկոտասանամեայ, այր ոմն ատուածպաշտ՝ որ կոչէր Դաւիթ՝ ամուսնացուցանէր գնա ընդ դստերն իւրում՝ որ կոչէր Մարիամ: Արդ, իբրեւ եղեն նմա երկու որդիք, անուն անդրանկին Վրթանէս և կրտսերոյն Ներսէհ, մայրն եմուտ ի վանս կանանց, և կրտսերն գնաց գհետ ձգնաւորի մի՝ որում անուն էր Նիկիբարոս. իսկ անդրանիկին մնաց առ դայեակն իւր, և յետոյ ամուսնացաւ:

Եւ հայրն անցեալ գնաց առ Տրդատ՝ զհօրն պարտսն հատուցանել[2]. և մնաց առ նմա, մինչեւ

1. Իմա Ասկդևն:

2. Իր հօր Անակայ անիրաւութեան՝ փոխարէն ընդել՝ կամաւոր ծառայութեամբ առ Տրդատ:

նա թագաւորեաց ի տեղի հօրն իւրոյ: Եւ վասն ոչ զոհելոյ կռոցն՝ ի մեծամեծ տանջանս մատնեաց գնա. իբրեւ տեղեկացաւ ի քեռոյ աներոյն Գրիգորէ՝ եթէ դա է որդին Անակայ՝ որ սպան զհայրն քո զԽոսրով, և նորա արկեալ գնա ի վիրապն ներքին՝ ամս հնգետասան: Եւ յետ հնգետասան ամին դիւաղնեալ ամենայն երկիրն Հայոց, և ինքն թագաւորն՝ ի մէջ վարազացն երթեալ դադարէր:

ԾԳ

ՆՈՑՆ ԲԱՆ, ԸՍՏ ՍԻՄԷՕՆԻ[1]

Ի գալն Անակայ առ Խոսրով թագաւոր Հայոց, ի նոյն հասակի լինելով մանկանն Տրդատայ՝ յորում և սուրբ Լուսաւորիչն Գրիգորիոս էր. և ըստ Ագաթանգեղայ պատմագրի, տարեալ դայեկաց զպատանին Տրդատ յարեւմտեան կողմանս՝ ի թագաւորանիստ քաղաքն, և անդ մնաս: Իսկ զուղիտամեմ չահ լուցեալն՝ զանբազդատ և զանհամեմատ մանուկն զՍուրբն Գրիգոր, զկնի Աւտայի[2] նախարարի՝ խաղացուցեալ դայեկացն մինչեւ յամուրն Աղի, որ այժմ կոչի Կամախ. քանզի դուստր թագաւորին Խոսրովիդուխտ ամրացուցեալ էր մինչև-

1. Անծանօթ հեղինակ մի. գրուածն հինկերկ ձեռագրի մէջ ըլլալով. կըրնայ կարծուիլ թէ ըլլայ Միւռեռն Աղձնեցիին իբր ծ գլուխ մէջ, թէ և սա եւս ոչ շատ ծանօթ: Գրուածն է Ս. Լուսաւորչի կարգադրութեանց վրայ, և յատկապէս Յովհ. Մկրտչի տօնը հաստատելուն:

2. Սովորաբար Օտայ գրուի, բայց Խորենացւոյ շատ հին օրինակի մի մէջ գրուած է Ոտայ. սա էր որ ըրկուեցաւ յետոյ զԳը. Լուսաւորիչ հանելու ի վիրապէն:

բօք թագաւորականօք. բայց զՍուրբն ոչ համարձակեցան դայեակքն թողուլ անդր, զի մի գուցէ մեռանիցի ի խոսրովիդխտոյ՝ ի դառերէ խոսրով թագաւորին. այլ դարձեալ չուեցին ի Կեսարիա (որ է) սկիզբն սահմանի Հայոց. և բնակիչք քաղաքին քրիստոնեայք գոլով՝ ի զանխուլ դարան եղեն նմա: Զոր Բուրդարն անուցեալ, և Դաւթի տալով զդուստր իւր Մարիամ՝ նմա յամուսնութիւն: Եւ ի Սուրբն Գրիգոր ոմրակ[1] ի դամբանէ թագէոսէ, երկիւղն Աստուծոյ ունակացեալ յոգի և ի մարմին. և աճզացեալ[2] ընդ համասեռս եղմնոսաց[3]. և ի սկզբան տիոց յանձն առ ուսանել զգիր հելլենացի. և աստուածայնոց ուսմանց պատպեալ մինչեւ յամս քսան և եօթն: Եւ ի դայեկաց իւրոց՝ վասն սպանման հօր իւրոյ խոսրովու լսէր զպարսիս[4], և խիթայր ի միտս:

Իբրեւ լուաւ զթագաւորելն Տրդատայ ի Պիտկղետիանոսէ ամպարշտէ, այնուհետեւ ընթացեալ առ մեծն Տրդատ թագաւորն Հայոց, պահապան[5] կամեցաւ լինել նմա, յորժամ գայր մեծապանծ չքեղութեամբ ի Հայս: Եւ թագաւորն առաւելապէս մեծարեալ զնա սակս հաւատարմութեանն, մանաւանդ զի արեանն գութ զեղոյր առ իրեարս: Այնուհետեւ ծանուցեալ զքաղաքնդրութիւն հաւատոց նորա, և Տրդատ տանջեալ հարուածէր զնա

1. Թուի նշանակել բոյս կամ չառաւիղ: Հին բառգրաց մէկն գրէ, Ոմր, գրգռութիւն, բարկութիւն, կամ յոյս. նոյնն, Ոմրակ՝ բանակ: Ուրիշ մի աւելի օտար և անյարմար տեղւոյս նշանակութիւն տայ. «Ոմրեկս և քայքայեալս յամենայն բարի գործոց»:

2. Աճեալ, զարգացեալ կամ իբրեւ ճիւղ բաւսեալ. ուրիշ մէկն գրած է, Ազեղ մանուկ:

3. Յունական ծոած ձայնիւ թուի նշանակել եկեղեցւոյ պաշտօնեայս կամ կրօնաւորս:

4. Ըսելու էր. Լսէր ի դայեկաց իւրոց զպարսիսն, վասն հօր իւրոյ սպանանելոյն զխոսրով:

5. Անյաղթն՝ թիկնապահ:

սաստկագոյն. Աւտայի նախարարի յառաջագոյն հասու լեալ ամենայնի՝ մատնէր թագաւորին, մահապարտ ցուցանելով զՍուրբն. ուստի և արկանել հրամայէր զՍուրբն ի խոր վիրապին, յորում զօձան ժողովէր հայր իւր[1]: Եւ տարեալ սպասաւորացն ընկեցին ի ներքս, երկանաքար ի վերայ կափուցեալ, ողորմելով նմա, զի ծանեան եթէ թագաւորն է: Եւ յարհաւրաց գիշերոյ ազդ եղեալ կնոջ ուրեմն, նկանակ հացի՝ թերեւս և ջուր՝ մատուցանէր Սրբոյն: Եւ արդ ի մէջ օձիցն իրրեւ ի վերայ չեղջ ցօրենոյ կայր. և անդ կացեալ զամս երեքտասան:

ԾԴ

Ս. ԳՐԻԳՈՐ Ի ԽՈՐ ՎԻՐԱՊԻՆ

(Ա.Գ.Ա.Թ.Ա.Ն.Գ.Ե.Ղ.Ո.Ս. ԺԱ.)

Եւ զայն ամս երեքտասան որ եղեւ Գրիգորիոս ի բերդին բանտին և ի խոր վիրապին, կին ոմն այրի՝ որ էր ի բերդին յայնմիկ, հրաման առեալ յԱրհաւրաց[2], զի աւուրն նկանակ մի արարեալ պատրաստական՝ ընկենուլ ի ներքս ի խոր վիրապին, և այնու կերակրեալ լինէր նա ի հրամանէն Աստուծոյ՝ զայն ամս որ եղեւ նա անդ: Իսկ յայն վիրապ՝ ուր ընկեցին զնա, պահեալ լինէր նա կենդանի, չնորհիւ Տեառն իւրոյ: Իսկ այլ մարդիկ՝ որ միանգամ էր ինչուեցեալ անդր՝ ամենեքեան մեռեալ էին, վասն դժնդակ չարաչունչ գառնութեան

1. Որո՞ւ հայրն. խոսրո՞վ. Օտա՞. Անո՞ւկ: Ինձ թուի առաջինն:

2. Երազի մէջ վախցընող կարծուած ոգիք:

տեղւոյն, վասն կարակուժ[1] տղմին, օձախառն բնա-
կութեան և խորութեան. վասն չարագործաց իսկ
էր չինեալ զայն տեղին և ի սպանումն մահապար-
տացն ամենայն Հայոց։

ԺԵ

ՀՐՈՎԱՐՏԱԿՍ ՏՐԴԱՏԱՅ

(ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ· ԺԲ)

Հրաման ետ Տրդատ արքայ՝ հրովարտակ առնել
ընդ ամենայն աշխարհս իշխանութեան իւրոյ, հրա-
ման հանեալ օրինակ զայս։

Տրդատ արքայ Հայոց Մեծաց. առ մեծամեծս և
առ իշխանս և առ նախարարս և առ գործակալս,
և առ այլ մարդիկդ՝ որ ընդ իմով իշխանութեամբ
էք, յաւանս, ի չէնս, ի գեօղս, յագարակս. առ
ազատս և առ չինականս, միանգամայն իսկ առ
ամենեսեան, ողջոյն։ Ողջոյն հասեալ և չինութիւն՝
դիցն օգնականութեամբ, լուսաւիւն պարարտու-
թեան յարւոյն Արամազդայ, խնամակալութիւն
յԱնահիտ տիկնոջէ, և քաջութիւն հասցէ ձեզ ի
քաջն Վահագնէ[2], ամենայն Հայոց աշխարհիս. իմաս-
տութիւն Յունաց[3] հասցէ դաստակերտիդ կայ-
սերաց[4], և ի մեր դիւցախառն Պարթեւաց հասցէ

1. Անծանօթ բառ, բայց արգմի յատկութիւն մի նը-
շանակէ. հին բառադրաց մէջ գտաւ զրուած Կարակիմ։
2. Հայոց սիրելի հաստատածներն՝ իրենց յատուկ
մականուամբք. Արամազդն՝ Արի, Անահիտն՝ Թևնա-
մակալ, Վահագն՝ Քաջ։
3. Թուի թէ Յունաց ազգին անուամբ իրենց Աթե-
նաս դիցուհին իմացընէ։
4. Իբրեւ պաշտպանեալ ի կայսերաց Հռովմայեցւոց՝
Հայք։

այցելութիւն, ի փառաց թագաց և ի քաջ նախա-
նեաց։

Ամենայն ոք գիտասցէ ի մերոց հրամանացս, որ
ձեզ վասն ձեր շինութեան իցեմք հոգացեալք. զի
յորժամ էաք մեք ի Յունաց աշխարհին, անդ տե-
սանէաք զհոգաբարձութիւն թագաւորաց՝ ի հոգալ
ընդ շինութիւնն իւրեանց աշխարհին, ի պատուել
զպագինս դիցն աստուածոց՝ շինուածովք և սպան-
դիւք զոհիցն, և երեւելի պատարագացն ընծայիւք
և գունակ գունակ նուիրօքն, և պտղոցն յամե-
նայնէ՝ զամենայն նոցա մատուցանելով, և ջերմ-
եռանդն եռել զեռել պաշտամանն, չքեղեցուցանե-
լով և զարդուքն զարդարեալ, և զերեւելի հոյա-
կապ զանեզդ դիցն մեծարելով։ Եւ զայն եւս տե-
սանէաք ի նոցանէ՝ ի նոցունց դից անտի վաստա-
զասէր շինութիւն մարդաշատութեանն հոյծ բազմ-
ամբոխ[1] լիութեամբ պարարտութեամբ, նոցա
զայն փոխադարձ փոխարինացն շինութիւն շնոր-
հել, ամենալրիւք բարութեամբ մեծացեալ խաղա-
ղացեալք ի բարիսն վայելեն։

Վասն որոյ պատուէր առեալ՝ ահաբեկ արարեալ
թագաւորաց աշխարհին՝ զմարդիկ, կացուցանել ին
ի պաշտամանն դիցն յորվելոյ. վասն զի, եթէ խաղ-
նաղանդ բազմամբոխ խաժամուժ մարդիկ՝ առ տգի-
տութեան ինչ, կամ թէ ոք յանկարծ առ փոխե-
լութեան[2] իշխեսցէ արհամարհել զպաշտօն դիցն,
հրաման եղեալ զօրացեալ ի թագաւորաց, զի խըլ-
լեսցեն բրեսցեն իշխանքն որ իցեն յիւրաքանչիւր
գործակալութեանց. զի շինութիւն աշխարհի ի
դիցն բազմացի։ Զի գուցէ թէ յանկարծ ոք զդիան
անգոնանասցէ՝ վնաս մեծի ցասման ի դիցն յուզես-
ցէ. այնպիսիքն զանձինս կորուսանեն, և աշխարհի
մեծ ոճիրս վնասուց ի նոցանէն ընդոստուցանիցէ.
վասն այսորիկ իսկ և եւտուն զհրամանս սաստիցին՝

1. Հսծ, լիուլի, առատ։
2. Կաւ եր կարդալ խնդափոխուբեամբ։

այնպիսեացն պատուհասի մահու, թագաւորքն Յունաց՝ յիւրեանց աչխարհին։

Ա.ՐԴ, և մեք հրաման չինութեան կամեցեալ՝ ձեզ հոգացեալ, զի և ձեզ ամենալրիւքն ամենաբարիքն ի դիցն բազմացին. զի ի ձէնջ պաշտօն նոցա և փառաւորութիւն, և ի նոցանէ չինութիւն, լիութիւն և խաղաղութիւն. զի որպէս ամենայն տանուտէր ընդ տան իւրոյ և ընդ ընտանեաց հոգայ, այնպէս և մեք հոգամք ընդ Հայոց աչխարհիս չինութեան։

Ա.ՐԴ, ամենայն նախարարք մեծամեծք և ազատք և զործակալք և սիրելիք մեր թագաւորաց, և չինականք, բնակք և ձեռաւորունկք և ձեռաւորունք մեր Ա.րչակունեաց, զոր յանձանձեալդ և սնուցեալդ անխայեալդ և յաւաչեալդ, վասն որոց մեր[1] օգտի առ հասարակ հոգացեալ, զի զդիսն պատուհաչիք։ Ա.ՐԴ, եթէ յանկարծ ոք թէ գացի՝ որ զդիսն անպատուեսցէ, և գացեն զայնպիսին, կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք և կապեալ պարանոցաւ ի դուռն արքունի մեծցեն. և տունք և կեանք և արարք և առացուածք և գանձք, այն ամենայն այնոցիկ լիցի՝ որ զայնպիսեան ի մէջ մեծցէ։ Ողջ լերուք ի դիցն օգնականութենէ դուք ամենեքին, և ի մեր թագաւորաց, որ ընդ այս հրաման կամիք և ի չինութեան բնակեալիք ամենեքեան. զի մեք գլխովին իսկ ողջ եմք։

Տրդատիոս, Հայոց Մեծաց արքայ, առ աչխարհս և առ գաւառս, առ նախարարս և առ զօրս և առ չինականս, և առ ամենեսին ողջոյն. ողջ լիջիք. և մեք մեզէն իսկ ողջ եմք։

Դուք ինքնին գիտէք զիարդ ի բնէ նախնեաց իսկ՝ յաղթութիւն խաղաղութեան բազում՝ չնոր-

1. Խառնակ չարաբանութիւն. փոխանակ մերի վայելէր ձեր։

հեալ մեզ դիցն օգնականութեամբ, ա՛րդեօք զամենայն ազգ նուաճեալ էր, և ի հնազանդութեան ունէաք. իսկ յորժամ առ դիսն ոչ մարթացաք հաճել պաշտամամբն՝ զկամս նոցա քաղցրացուցանել, հանին մերժեցին ի ցասմանն իւրեանց՝ զմեզ՝ ի մեծ ափրութենէն։ Մանաւանդ վասն ազանդին քրիստոնէից, պատուիրեալ ձեզ, զի հազար և բիւր դեպ, եթէ գացի ոք, զի նոքա անչնարին լինին խափան դիցն պաշտամանն, զայնպիսին թէ գըտցեն՝ վաղվաղակի ի մէջ ածցեն. յարքունեաց պարգեւք և պատիւս նոցա լինին չնորհեալ՝ որ զնոսին յայտնեացեն։ Ա.պա թէ ոք չյայտնեացէ զայնպիսին կամ թաքուսցէ, և գացի, այսպիսին ընդ մահապարտս համարեալ լիցի, և ի հրապարակ արքունի եկեալ՝ մեռցի, և տուն նորա յարքունիս երթիցէ։

Ա.ՐԴ, զոր օրինակ ես ոչ խնայեցի յիմ վաստակաւոր Գրիգորիոս՝ յիմ սիրելին, որ վասն դօրին իսկ իրաց չարաչար և սաստիկ տանջանօք տանջեցի, և յետ այնորիկ հառս զնա ի խոր վիրապն ընկենուլ, զի անդէն իսկ միանդամայն օձից լիցի կերակուր. զի և ոչ զմեծ վաստակն նորա համարեցայ ինչ, առ սիրով և առ ախիւ դիցն գրեցի ինչ. զի և ի ձեզ ահ լիցի այս և երկիւղ ի մահանէն. այլ զի կեցջիք ընդ հովանեաւ դիցն, և ի մէնջ բարիս մարթասջիք գտանել։ Ողջ լերուք, և մեք մեզէն ողջ եմք։

ԾԶ

ԳԱԼՈՒՍՏ ՀՈՒՓՍԻՄԵԱՆՑ Ի ՀԱՅՍ[1]

(Մ. ԽՈՐԵՆ. Ա. 3 Ի)

Յաղագս զանազան տեղեաց և գնացից և վարուց Սրբոց Հռիփսիմեանցն, որ ոչ երեւին գրեալ ի յոլովից ճոխարան պատմութեանց, ի բազմաց մատենագրաց Յունաց արարեալ քննութիւն և իմացեալ զմիտս ճառից, որ հեռի էր ի սուտենալ և լի ճշմարտութեամբ, կարգեցի գեղ ի գիրս յայսմ. որում ոչ զոք կարծեմ ընդդիմանալ ի միտս ունողացն. բայց միայն եթէ ոք սուտենան հաճեալ՝ զոմ պատմութեանս քակել չկարասցէ: Զատենալ քննութիւնս խմաստնոց Եկղեսիաստից[2] Ա. Տաթիկէ իմ ընթերցեալ, բազում անգամ գտի զոմ գրոցս՝ որ ի ճահ գայր պատմութեանս մերոյ հիւսման: Յայժ պիտանի և յօգտութիւն մեզ լսի՝ որ անուն գրոցն կոչի Դաւթի Հռոմայեցւոյ գիրս Եկղեսիաստից[2].

1. Գրուածին սեն յայտնէ հեղինակ զՄ. Խորեն. և գտանի օրինակ՝ որ յայտնապէս գրէ. « Մովսէսի » Խորենացւոյ Ճառ պատմութեան բանից ի Սուրբն » Հռիփսիմէ և ընկերսն, և յաղագս ի զանազան » տեղիս փոխելոյ նոցա, որ ոչ երեւին առ բազումս ». այսինքն, չատ պատմագրաց քով չեն գտուիր այս զանազան տեղեաց յիշատակքն: Իսկ Յովհ. Եզնկացի իր Հաւաքած Ոսկեփորիկի կամ Տօնանամակի մէջ՝ վերնագրէ. « Յաղագս Հռիփսիմեանցն. ի ճշմարիտ » մատենագրացն Յունաց գտեալ Մովսէսի Խորենաց- » ւոյ. զոր քաղեալ համառօտեցի նուաստ Յովհաննէս » Եզնկայեցի: Էր Սուրբն Հռիփսիմէ ի տունէ Աւգոս- » տոս կայսեր », և այլն:

2. Խորեն. Ա. գ. քանի մի անծանօթ հնախօս հեղինակաց հետ յիշէ Դաւիթ փիլիսոփայ մի եւս. բայց այս տեղ յիշատակն հռովմայեցի և եկեղեցական պատմութիւն զրոյ՝ ուրիշ անձն երեւի:

1. Խորենացին ուրիշ տեղ այլ այսպէս կ'ըսէ:

2. Հեղինակս կարծել տայ՝ թէ Ագաթանգեղոս եւս այս Դաւթի գրքէն քաղած ըլլայ իր գրածը:

3. Կարծեցուցանէ թէ Օգոստոսի կամ կայսերական գեղէ ըլլան Հռիփսիմէ և Գայիանէ:

զոր կամեցեալ իմ թարգմանել, և ոչ ժամանեցի. ինձ այլումն տեղւոյ և կամ իմաստնոյ: Զի ես մահկանացու գոլով, ծեր և հիւանդոտ, երկուղեալ, ոչ հրեշտակ գոլով, կամ որդի Բարձրելոյ[1], որպէս աստուածայինն ասէ բան, սակաւ մի երկրորդեցի ի նոյն գրոցս, զոր քաջ քարտուղարն Թողեալ Ագաթանգեղոս, որ և ոչ կարէր զամենայն զրանս և զգործս ի միտն ծովացուցանել, ինձով և այլոց եւս[2]:

Եւ արդ, ի նոյն գիրս պատմի, ի նոյն թագաւորական տոհմէ գոլով Սրբոյն, լինել Աւգոստոս կայսեր՝ ցեղապետ թագաւորաց. լինի և Գայիանէ ի նոյն ցեղէ[3], առաքինի և զարմանալի հօր և մօր դուստր: Նախանձ ունելով առաքելական դասուցն, գրէ, որպէս տեսութեամբ նոքա էին մօտագոյնք առ Նոսա. որոց ոչ հին համբաւով ի մոռացումն ինչ էին եկեալք գործք նոցա, ընդելեալ կամ յուլացեալ, որպէս առ մերովք ժամանակօքս աստուածպաշտութիւնն նուազեալ, սրբութիւն լռեալ, և անկեալ մեղք: Ալ արքն՝ որպէս թէ առաքեալք, լաւութեան նախանձ ունէին, և կանայքն՝ զգաստանային նախանձ ունելով Աստուածածնին, Քրիստոսի լինելով մարք, որպէս ասաց ոմն ի Հարցն:

Յայսցանէ գոլով և ծնողքն Սրբոյն Հռիփսիմեայ, սան յաւազանէն լեալ Սրբոյն Գայիանեայ, որ էր մայր կուսիւ վանականաց ի Հռոմ, ի վանս սրբոյ Աստեղոյն Պաւղոսի. զոր իւր տեղի որոշեալ երանելոյն, պատշաճ և պարտ գոլով, հրաման յԱստղենակաց հետ յիշէ Դաւիթ փիլիսոփայ մի եւս. բայց այս տեղ յիշատակն հռովմայեցի և եկեղեցական պատմութիւն գրոյ՝ ուրիշ անձն երեւի:

1. Խորենացին ուրիշ տեղ այլ այսպէս կ'ըսէ:

2. Հեղինակս կարծել տայ՝ թէ Ագաթանգեղոս եւս այս Դաւթի գրքէն քաղած ըլլայ իր գրածը:

3. Կարծեցուցանէ թէ Օգոստոսի կամ կայսերական ցեղէ ըլլան Հռիփսիմէ և Գայիանէ:

քելոյն առեալ աղօթել. որ և այլք յետ նորա աշա-
կերտեցան, լինելով անձինս երեք հարիւր, պահե-
լով զհրամանս Յովաքելոյն: Եւ այսմ տեղւոջ տե-
սուչ գոլով Գայիանեայ, անուցանէ առ ինքեան
զՀռիփսիմէ, ի մէջ զգաստացելոց կուսանացն: Որ
և պատուղ աղօթիւց նորա յարբունս հասեալ, տե-
սեալ ի նմա զհոգւոյն մեծանձնութիւնն, անուանէ
զնա աղախին գոլ Սրբոյ Աստուածածնին, և տայ
զնա ուսանիլ և աղօթիւք՝ ծառայել Աստուածա-
ծընին: Ակնանէ և ի նմին պարանոցն խաչ զսրբոյն
Յակոբայ, զմածեալն տէրունական արեամբն, ի
կենաց փայտէն հատեալ, վասն խնդրոյն Պատրո-
նիկեայ տիկնոջ[1], որ և ինքեան գոլ պահապան. ի
ձեռն նմին եղբօր Տեառն, առաւել փափաքմամբ և
երկիւղիւ առեալ՝ արկանէր ի պարանոց սրբոյն մե-
ծին Հռիփսիմեայ, որպէս և յայնժամ յականջն
Պետեկայ՝ զգինեան, հարսնանալ հօրն հաւատոց
Աբրահամու, թէպէտ և ոչ նման, այլ երկոքին ի
խորհուրդ եկեղեցւոյ: Եւ այս այսչափ:

Այլ ի հասանել յուզման ժամանակին, վասն
ազնուական ազգին և աքանչելատեսիլ գեղոյն, որ
և յաչխարհի փայլէր հոգւով, խորհէին առնուլ ի
պատիւ տանն Հռոմայեցւոց՝ ի թագուհութիւն տիե-
զերապետութեան[2]: Եւ Գայիանեայ իմացեալ հոգ-
ւոյ ակամբ, առեալ զնա փախչի յԵգիպտոս, յԱղէք-
սանդրիա. և անտի ելանէ յԵրուսաղէմ՝ երկրպա-

1. Ազանդութիւն. իբր թէ այդ անուամբ հռոմէա-
կան կայսերաց կամ նոյն իսկ Օգոստոսի ցեղէն ու-
կին մի հաւատացեալ ի Քրիստոս, խնդրեր է Երու-
սաղէմի առաջին եպիսկոպոսէն, որ է Յակովբ Եղ-
բայր Տեառն, Քրիստոսի խաչին մաս մի. և այն
տիկնոջ ցեղէն յաջորդաց անցնելով՝ հասեր է մինչեւ
ի Գայիանէ: Տիկնոջ անուն (զոր ուրիշ Օր. գրէ
Պարթիւնիկէ,) յիշեցընէ զՊետրոնիլլա, համարեալ
դուստր կամ աշակերտ Ս. Պետրոսի առաքելապետի:
2. Հռիփսիմէի համար է ըսուածն:

գել սրբոյ տեղեացն որ անդ: Եւ երթեալք ի
յԱյրն՝[1] աղօթս և պաղատանս մատուցանէին ա-
ռաջի Սրբուհւոյն, օգնել կուսին վանդելոյ և փա-
խուցելոյ, որ եղեւ նորա աղախին ի մանկութենէ:
Եւ գնացեալ անտի ի Դեթսեմանի՝ ի գերեզման
Աստուածածնին, և անդ աղօթելով, ասէր. Մայր
լուսոյ, կոյս անարատ, որ կուսութեանց ես վերա-
կացու և սրբութեան օգնական, ընկալ զաղաչա-
նաց աղօթս յանարժան ազախնոյս. և զորդի հոգւոյ
իմոյ զոր ունուցի՝ քեզ տուեալ աղախին, զպաս-
տացեալ արգարացս արժանաւորապէս. և մի տար
փորձել օտարին, և մի տացես աղտեղանալ անձամբ
ի ձեռն պիղծ թագաւորացն. զի մի ուխտս մեր
որ առ քեզ է՝ խափանեսցի: Այլ յիշեա զպանդըխ-
տութիւն իմ և գծուխս ի կենացս մեր՝ որ վասն
քո. յիշեա և զչարչարանս որդւոյ քո և Աստուծոյ
մերոյ, և աղօրմեա մեզ. վասն որոյ զքեզ օրհնեմք:
Եւ երկրպագելով Աստուածածնին և բաղում ար-
տասուս հեղեալ, մնալով անդ ամօրեայ ժամա-
կաւ. ապա տեսիլ երեւեալ Սրբոցն, և հրաման
առեալ գնալ ի Հայք, յերկիրն Աբրահատեան ի
բաժին Թադէոսի Առաքելոյն. և զպատկերն փայ-
տեղէն որ եղեալ է յերեսս իմ յաւուր փոխման
իմոյ[2], զնա խնդրեսջիք, կատարեալ զընթացս ձեր
արեամբ:

Եւ դարձեալ անտի խնդութեամբ եկին յԵդե-
սիա քաղաք, և երկրպագեալ փրկչական պատ-
կերին՝ լցան ուրախութեամբ, և համարեցան տե-
սեալ զԲանն մարմին եղեալ: Դարձեալ աքանչելի
տեսիլ երեւեալ յորդորէին ի ճգունս: Եւ այլ կա-
նայք՝ ի նոցանէ մեկնեալ մնացին ի նմին քաղա-
քի, ի մեծ եկեղեցւոյն Աբգարու, ի հիման Սրբոյն
Թադէոսի[3] կրօնաւորեալք: Սապէս և անտի ի Դա-

1. Բեթղեհեմի այրն, ուր Ծնեաւ Քրիստոս:
2. Խօսքն Ս. Աստուածածնի ընծոյն է:
3. Թադէոսի հիմնարկեալ եկեղեցւոյ քով:

բանագործաց[1] գաւառին կացեալ ի խորշ լերինն Մեծպոռի կոչեցեալ, որ անուանեցաւ Մաճկայ այրք[2]:

Աւելի քան զեօթանասուն հոգի զՍրբոցն՝ ասէ պատմագիրս, եղեալ ընդ նոսա ի Հռովմայեցւոց քաղաքէն, որք բնակեցան ի տեղիս տեղիս: Իսկ զտեղին կալեալ այլոց քերցն, և քոյր Գայիանեայ Եզդոյի[3] անուն, միաբանեալ քերքքն՝ կատարեցան բաբի վկայութեամբ ի Դիոկղետիանոսէ ամբարշտէ, զԹոյնս չարութեանն ի նոսա թափելով, որք եղեն վկայք Քրիստոսի, չաղագս ոչ ըմբռնելոյ ի վարկս մահու զմեծ առաքելուհին:

Եւ բազում տառապանօք գնացեալ եկին ի Բզնունեաց գաւառ, ի քաղաքն Թլար, երեկօթս արարեալ: Եւ անտի փոխին, և գնացեալ ի գաւառն Մոկաց, Սուրբ Թալէ կոչեցեալ տեղի. որ և մեծ աքանչելիս կատարեաց Աստուած ի ձեռն նոցա պատուական սուրբ խաչիւն Եսայեայ և Դանիէլի[4]. որում ես և դու հաստս, մեզ երկրորդել զի է: կձաւեն[5] կոչեցեալ տեղի՝ դիւաց լցեալ պաշտամամբ. հասեալ անդ առաքելանման քահանայիցն և սրբոց կուսանացն, զընդդիմամարտան արգելուին զձիոցն[6]. յորում զայրագնեալ դիւացն՝ դիմեալ ի վերայ, խեղդին, ծռէին, պնչատէին զպաշտօնեայս իւրեանց. որ և անդ առաքելանչան քահանայքն հաւատացեալ գնոսա, և քանդեալ զպաշտամունս նոցա, բժշկին զխեղեալսն. վանն որոյ տեղին կոչեցաւ

1. Որ է ի Բարձր Հայս:

2. Յանուն Մանի կուսին, յընկերաց Հռիփսիմեայ, որ ճգնաւորական կենօք վախճանեցաւ և ոչ արեամբ:

3. Ուրիշ Օրինակ գրէ Զոռի. այս կամ Զոյի անունը չատ գործածեն Հայնք:

4. Հռիփսիմեանց հետ եկող քահանայք:

5. Թուի թէ կձօն կարգալու էր, բայց վարը կճաւ գրէ:

6. Գեւք կամ պաշտօնեայքն դիւաց՝ կ'արգելուին հօն եկողաց ձիանքը:

կձաւ[1]. յորում թողու զիաչն իւր Սուրբն Գայիանէ՝ ախոյեան դիւաց, որ էր աւազակին[2], որ և զտեղին յետոյ հաստատէ վանս Սուրբն Գրիգոր:

Եւ վանն յայնմ անուանն՝ նոքա գաղտ գնացեալ ընդ մէջ Կորդուաց՝ ընդ լեառն Սողոմի[4] ի Բերկրացոց[3] գաւառին. և սքան աչացաւութեան զնոսա տագնապեալ, և կացեալ յաղօթս, երկու աղբերք բղխեցան, որ է ժանգ Լրոյն կարմիր և սպիտակ. և միչեւ ցայսօր օգնէ աչացաւաց յանուն Սրբուհեացն: Բայց (վանն) այսր լերին ասի Ամորուց, թէ ի նաւադել Նուբցն հեղեղաց՝ եհաս տապանն ի գլուխ լերինն, որ է Սարարատայ. և ընդ մէջ անցեալ սղոցաձուկն արգելու զնաւն. և անուն քաղաքագեղջն կոչեցաւ Թրմևիս[5], այսինքն թէ ութ ոգիք եկին ի տապանէն:

Իսկ Սրբոցն յապահովացեալք, խրճիթս չինեալ բնակեցան: Եւ անտի գնացեալ և օթեվանս արա-

1. Կձել բառէն. ինչպէս գրէ օրինակ մի, թէ, « ի » յայսմ տեղւոջ կձատիին գեւքն զմարգիկն »: Օրինակ մ'այլ գրէ. « Վանն որոյ տեղին կոչեցաւ Կղր- » ձատ »:

2. Քրիստոսի խաչակից հաւատացեալ աւազակին խաչին մատնէն:

3–4. Յայսմնի է այս լեառս հիմայ Միջիվա անուամբ. հին օտար մատենագիրք այլ յիշեն Սողոմիա գաւառ մի. իսկ Բերկրացոց գաւառն՝ չէ Հայոց ծանօթ Բերկրքին, թուի թէ պէտք էր կոչուիլ Բերկացոց, վասն զի նոյն կողմեր կայ Գըքէ անուամբ տեղի մի: Օրինակ մի պատմութեանն կ'ասէ այսքը. « Վանն այսր » լերին ասի, թէ յետ ջրհեղեղին հաստեալ անդ տա- » պանն, տասց Նոյ սրդւոց իւրոց՝ Սաղոյ. այսինքն, » թէ Սղոցձուկն գիպեցաւ նաւին »:

5. Վերոյիշեալ օրինակն՝ Թրմիսի և Տմարեաց մի- ջոց՝ ուրիշ Հանգիստ մի այլ յիշէ. « Անտի եկեալ յա- » ռանձ Սմբատայ, որոյ յանուն կոչէն՝ որ յԱմորից առեալ (էր) Աշիկա, և է Աշիկա Սմպատայ »: Օրինակ մ'այլ գրէ « Աչիկէ՝ որ է Ռիկի »:

բեալ ի վտակս գետոյն՝ մօտ ի կամուրջն, ի կողմն Տմորևաց[1], ի ծառաւէտ ընկուզատ տեղիս: Եւ անտի փոխեալ ելանեն ի Հայաստան գաւառ, ի խորին խորշ լերին Մշկուռևաց. ի սմա ասի այծեմունս մշկապորս լինել. ուր և բազում ուրուկս հալածականս գտեալ, բժշկեն զնոսա առուրբ խաչիւն՝ ընտրեալ քահանայքն, ուր և ի Տեառնէ աղբիւր չնորհեալ նոցա. և յայսմ տեղւոջ կային ծեր կանայքն մինչեւ ցօր կատարման իւրեանց: Եւ չուեալ անտի և կացեալ յեղր Բժռևնեաց[2], կային անդ աւուրս բազումս. և անտի փոխեալ բնակեցան յայնկոյս գետոյն մօտ ի յակն յորդաբուղիս, յորդորեալք ի չնորհաց Սուրբ Հոգւոյն, բազում աւուրբ անցուցանելով, զուարճացեալք ի տեղւոյն բարեհամբաւութիւնն: Եւ ապա ասա այլք ի նոցանէ կացեալք. որ անուանի տեղին Սուրբ Տիկին:

Եւ անտի յառաջ անցեալ ուսան հասի գետն բովանդակ. որ փոքրագոյն չար ջուրքն հոսեալ ի լերանց կաւիգուռապայ, որ կոչի Աղռաւաքար, և գարնանային ուղիքն գետացեալ, գան յօժընդակուածիւն գետոյն մեծի, որ կոչի Տիգրիս, հասին ի տեղի մի, և գտին ոսկւա ինչ քրիստոնեայս՝ ձեռանչան ունելով զպատկեր Տիրամօրն. որում երկրպագեցին ուրախացեալք, և տային գոհութիւն Սրբուհւոյն: Եւ սակաւ աւուրս կացեալ, ոչ կամեցեալ հաւատացեալքն, երկուցեալք ի կասկածանացն[3].

1. Տմորիք կամ Կորդրիք՝ Կարճայից նահանգին գաւառ մ՚է, որոյ մէկ մասն կամ վիճակն է ներքեւ յիշուած Հայաստանն. ինչուէ այսպէս կոչուեր է։...

2. Հաւանօրէն նոյն Բզնունեաց գաւառն, որոյ անուամբ նախ կոչուեցաւ Վանայ ծովն: Օրինակ մի ի՚աւելցընէ թէ հօն կուսանաց կեցած տեղն կոչուեր Ս. Թեոդորոս:

3. Տեղւոյն քրիստոնեայ բնակիչքն՝ վախնալով որ չհայտնուին կառապաշտից, սահման ղՀռիփսիմեանս որ չուսով հեռանան:

և նոքա գնացին ի գլուխ լերինն Պաղատոյ[1], զոր ասէին սաստիկ յայժ ի նմա լեալ դիւացն, Տուն Աբրամագդայ և Աստղկայ մեծապէին, և յաճախ պաշտամամբք ոտն կարդային, որ է Պաղատ: Եւ անտի գնացեալք ի խորաձոր գառ ի վայր լեռնէն յարեգակնեան կոյս, սակաւ մի առ ի կողմն հարաւոյ, ի կատար լերինն, որ ի վայր իջանէ, տուն կրակի, անյագ հրոյ, անդադար այրման ասուածոցն. և քարինս հոսեալ յակն յորդաբուղիս աղբերն, որ բղխէ յատն լերինն, որ է յառաջս խոռաւիմին, որ կոչի տեղին Բռեր[2]: Քանզի վաղիւն զկրակն Քոյրն, և զաղբիւրն Եղբայրն: Եւ յայրս քարին որ լայացեալ կային վիշապք երկու, դիւացեալք և սեւացեալք, որոց աղխիկ կոյս և պատառնիս անմեղս զենուին. այնոցիկ սրեամբն զուարճացեալ զեւքն և բագնօքն, հրոյն և աղբերքն, ահագին իմն տեսիլ և փայլուման և թնդմանս և կայթմանս գործէին. և ի մէջ խորաձորոցն՝ օձք և կարիճք լի թիւնաւոր մահարերին լցեալք:

Անդ հասեալ սուրբ կանանցն, և աղօթիւք և արտասուօք ի յերկինս հայեցեալ, առեալ զսուրբ նշանն, և ի վերայ կացեալ աղբերն, և փախստական եղեալ դիւացն՝ ի բագինն անկանէին, վայ զվայիւ ազազակեալ, և ի լեռնէ ի լեառն ոչ այլ ինչ լսիւր, բայց վայ զվայիւ ճիչեալ: Եւ նոքա ընդ մէջ ձորոյն անցեալ. օձք մարմնաւորք քարացեալք կան մինչեւ ցայսօր: Եւ ի բագնացն փախուցեալք դեւքն անկանէին յերկիրն Մարաց: Եւ զպատկերն փչրեալ զօրութեամբ սուրբ խաչին.

1. Կայ օրինակ պատմութեանս՝ որ Պաղատ կ՚անուանէ լեառն, և ոմանց խօսք կամ երգւած մի եւս յիշէ. «զոր և այժմ մարդիկ աշխարհին՝ վիճելով » ասեն. Թուրս ի Պաշատ դիւաց, դլուխ յանդուր » և անիմայ »: Թուխ անարգանք պնդագլուխ մարդու:

2. Օրինակ մի աւելցընէ. «Քանզի անուն քրմա» պետին Բռեր կարդայր »՝ այսինքն կոչուեր:

զոր տեսեալ գեղջն, հաւատացին ի Քրիստոս, ի ձեռն սուրբ երանելեացն[1]:

Եւ անտի եղեալ և ընդ հիւսիսով իջեալ, եկին ի գեօղն՝ որ կոչի Կորիք. զկուռսն փշրեցին, և զօձան թիւնաւորս սպանին՝ նշանաւ սուրբ խաչիւն, և զաղբիւր դիւացն յամաքեցուցին. զոր և յետոյ զտեղին՝ Սուրբն Գրիգոր չինեաց եկեղեցիս երկուս. և ի Կորիք փայտեղէն սեղան կազմէ, և նշան Թողու անդ զգօտին և զգաւազանն իւր: Իսկ Սրբոյն ի Տուսբ[2] գաւառ եղեալ, զսուրբ նշանն Թողուն հանդէպ վանիւ, ի հարաւակուսէ լերինն, փոքրագոյն խրճիթս չինեալ վանաց. և եդին անդ վանն կասկածի հալածանաց ի վերայ կացելոց: Եւ անդ ի լեառն վարագ ամրացեալք. զի լուան խնդիր լինել ինքեանց, ցան և ցիր ի խորչ լերինն բնակեցան, արարեալ իւրեանց գեռնափոր գադարս: Այսպէս երկուք ամանք ի քահանայիցն սրբոց բնակեցան ի նմին տեղւոջ՝ մինչեւ ցօր կոչման և կատարման իւրեանց առ Քրիստոս: Եւ տեղիք նոցա կոչին Ոչրբաբայրք. քանզի ի յորբաթէ յորբաթ մատուցանէին զսրբութեան պատարագն, և բաշխէին արժանաւորապէս սուրբ կանանցն զմարմին և զարիւնն Տեառն. և ինքեանք հաց և ջուր միայն ճաշակէին:

Արդ, ո՞վ պատմեսցէ զզօրութիւնս Տեառն, լսելի լինել սքանչելեաց նորա. որ ի ձեռն ողորմութեան իւրոյ ծագեաց մեզ լոյս գերազանց յարեւմտից՝ արեւելից Հայաստան երկրի, մանաւանդ ի ձեռն

1. Ուրիշ Օր. «ի ձեռն սուրբ երիցանց նոցա». և կ՚աւելցընէ. «Եւ տեղիս այս էր Անակայ, Հօր » Սրբոյն Գրիգորի»: Աւելի ևս ուրիշ մի. «Քանզի » տեղիս այս գոլով Անակայ Հօր Գրիգորի, ի լսել » զբօթ մահու Անակայ և խռովուս, գնացին փա» խըստականք. և ոչ ոք գոյր նոցա զիմամարտ»:
2. Հիմակուան վիճակ Վան քաղաքին, որ անոր համար կոչուի Վան–տոսպ:

կանանց, յորոց մինն մեզք յաչխարհ: Որ ամենայն ինչ կարելի է նմա, և տկարանայ առ ի նմանէ և ոչ ինչ: Արդ, վասն կատարման և չարչարանաց և նահատակութեան երանելեացն Այրարատեան գաւառ ի վազարշապատ քաղաքի, ուսցիս ի Այգաթանգեղեայ պատմութեանցն: Յորոց ձեռն ծագեաց մեզ անստուեր արեգակն ի բարձանց, լուսաւորելով զմեզ լուսով աստուածգիտութեամբ, պայծառացուցանելով զսիրտս հաւատացեալ ժողովրդոց տօնասիրաց և աստուածասիրաց:

ԾԻ

ԹՈՒՂԹ ԴԻՈԿղԵՏԻԱՆՈՒ ԿԱՅՍԵՐ ԱՌ ՏՐԴԱՏ, ՎԱՍՆ ՀՌԻՓՍԻՄԵԱՅ[1]

(ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ· ԾԴ)

Ինքնակալ կայսր Դիոկղետիանոս, առ սիրելի եղբայր աթոռակից մեր, Տրդատ. ողջոյն:

Գիտութիւն լիցի եղբայրութեանդ քում նիւթակակի մերում, վասն չարեացն որ անցանեն ընդ մեզ հանապազ ի մոլար ազանդէս քրիստոնէից. զի յամենայնի գտօրվեալ լինի տէրութիւնս մեր յուխտէ նոցա, և արհամարհեալ լինի արքայութիւնս մեր ի նոցանէ. և ինչ համեստութիւն ոչ գոյ ի նոսա: Զի ինքեանք զմեռեալ ումն խաչեալ պաշտեն, և փայտի երկիր պագանեն, և զոսկերս սպանելոցն պաշտեն, որ զիւրեանց մահն՝ որ վասն Աստուծոյն իւրեանց՝ փառս և պատիւ համարին: Եւ ի մերոց արդար օրինաց դատապարտեալ լի-

1. Եթէ թղթոյս առաջին մասն կրնայ հաւանական ըլլալ, վերջինն՝ ոչ. և յայտնապէս բարեպաշտ քրիստոնէ մի հարատար հիւսուած է:

նեն. վասն զի և զմեր զնախնիսն զառաջին հարան՝ զթագաւորսն՝ զառնացուցեալս ձանձրացուցին. զի մեր սուրբս բթեցան, և նոքա ոչ զարհուրեցան ի մեռանելոյ: Զի ինքեանք զհետ Հրէի ուժմն խաչելոյ մոլորեալ են, և զթագաւորս անպատուել ուսուցանեն, և զխռովին իսկ զպատկերս դիցն զատուածոց անարգել ուսուցանեն:

Նա և զլուսաւորացդ զօրութիւնս, զարեգակնդ և զլուսինդ՝ աստեղսդ հանդերձ, առ աչինչ համարեցան, նա և արարած առնեն այնմ խաչելոյ[1]: Եւ զխռովին զպատկերս դիցն աստուածոցն անարգել ուսուցանեն. և զաշխարհս ամենայն փոխեցին ի պաշտամունէ դիցն. մինչ զի և զկանայս անգամ յարանց և զարս ի կանանց կենդանւոյն մեկնեալս հեռացուցանեն: Թէպէտ և ապրի ապրի պատուհաս առնլանաց ի վերայ եղաք, առաւել եւս առչորեալ յորդագոյնս տարածեցաւ ազանդն նոցա, թէպէտ և բիւրապատիկ ինչ արհաւիրս սաստից արկաք ի վերայ նոցա, սաստկապէս հեղումն արեան նոցա առաւել եւս բղխանց յորդից զուսումն նոցա:

Դէպ եղեւ տեսանել ինձ յայնդոյ ուսման նոցա օրիորդ մի կոյս և գեղեցիկ, և կամեցայ առնուլ զնա ինձ կնութեան. սակայն և զայն իշխեցին խորամանկել յինէն: Եւ ոչ իբր ի թագաւոր ցանկութեամբ փափաքեաց յիս (կոյսն), և ոչ ի սատանից սպառնալեաց իմոց երկեան նոքա. այլ առաւել եւս վասն ազանդոյն իւրեանց՝ ազատելի և պիղծ և գարշ համարեցան զիս, և զնուցիչ նորին զատեկան՝ ի կոդմանս ձերոյ տէրութեանդ փախուցեալս յուղարկեցին:

Արդ, փոյթ լիցի քեզ, եղբայր մեր, զի ուր և իցեն զկոդմամբդ այդոքիւք, զհետս նոցա գտանել մարթասցես. և որ ընդ նմայն իցեն՝ դայեկաւն

1· Աչխենքն, խաչեալն այն առեղծեր է զարեգակն, լուսին, և այլն:

հանդերձ՝ վրիժուց մահու արժանի արասցես. և զհրապուրեալն զչքնաղագեղն ինձ ի սոյն այսրէն յղարկեսցես. ապա թէ հաճոյ թուեսցի քեզ տեսիլ գեղոյ նորա՝ այդրէն առ քեզ պահեսցես. զի ոչ երբէք գտաւ նման նմա ի մէջ Յունաց աշխարհիս: Ողջ լեր դիցն պաշտամամբն, ամենայն պատուով:

ԾԸ

ՀԱՄԲԱՒ ԿՈՈՐՎՈՒԹԵԱՆՑ ՏՐԴԱՏԱՑ

(ՅՈՎՀ· ՍԱՐԿԱՒԱԳ[1])

Ջանդի ի կատել զօրաց բազմաց կոդմանցն երկոցունց, բան հանդիսի զօրանայր ի խուժական կոդմանէն, իբր մարդասիրելի բազմութեանն. և ի ձեռն մենամարտութեան թագաւորացն երկոցունց՝ զիրին վճարել զկատարումն. և զյաղթութիւնն որ ոք և առցէ՝ հնազանդել միմեանց եղիցին, վճարմամբ այսպիսի իբր՝ կոդմանքն երկոքին:

Բանն սաստկանայր. և ինքնակալն վարանեալ տարակուսէր, ոչ տանելով զայսպիսի լուր բարբառոյ, և ոչ պատահել մենամարտութեամբ ահագին վիրապին՝ կանացի ոյժ և սիրտ: Զայսոսիկ վարանս տարակուսանաց լուծանէր ծանօթ և ընդել հաստատութեան սրտի և ուժոյ Պարթեւին՝ կամսուրեան հասելոյ պատուոյ Լիկիանէան. կանգնէ զանձյատութիւնն, և զերկեղ մահուն ի բաց փարատէ. Ուրախացոյ ինքնակալդ, ասելով, քանդի բազում արս քաջս և անուանիս տածեալ փայփայէ քո հզօր զօրութիւնդ, որ իբր այսպիսի ըստ իւրաքանչիւր դիպուածոյ վճարեացեն. և ինքնակալութիւնդ ձեր

1· Ս. Լուսաւորչի վրայ գրած Ներբողէն է:

յուրախութեան խաղաղութեամբ մնասցէ: Աւլ որ այժմ ասա հասեալ է՝ այր հզօր, ի զաւակէ թագաւորացն Հայոց, որով՝ կարծեմ՝ զայսպիսի իրս դիւրաւ վճարել նովաւ: Եւ յինքն զարձեալ անաբինն[1], հրամայեաց ածել զքաջն. և ընդ տեսլեանն՝ իմանայ իմն զոգեկս որ ի նմա արիութիւնն, միանգամայն և ի պատերազմողացն: Եւ վստահացեալ յայսպիսի սաստկութիւն մարմնոյ և ուժոյ, զարձուածս պատասխանւոյ առաքէր խուժացն, զյորդորեալ բանն ի նոցանէ՝ արդիւնագործել ինքեամբք: Իսկ զծածուկ նենդութիւնն ի ձեռն առեալ, զայն որ ի Պահլաւաց քաջն՝ հանդերձէ. ձեւ և չուք թագաւորական զնեալ՝ համբաւէր ինքնակալ կայսր:

Աւլ, քանզի տօնախմբութեան՝ և ոչ պատմութեան է ժամանակս, կարճառօտիւ զայսոսիկ հարցուք, փութալով որ ինչ աւուրս բան: — Պատահեն միմեանց Գութն և Պարթեւն. յաղթահարէ Պարթեւն, ձերբակալ արարեալ զխուժն: Ի թագաւորութիւն հայրենի՝ զՏրդատ այսպիսիս ածեալ լինէր դիպուած: Աւլ զայս ամենայն գործէ յառաջատեսութիւնն Աստուծոյ, որպէս կամք են ասել իմոյ բանիս, յաղագս որ ի մեզ փրկութեանն ճառնապարհ: Աւրդ, պսակաւ և ծիրանեօք զհասակ և զգագաթն զարդարեալ Տրդատիոս՝ ի հայրականն իւր հասանէր յաշխարհ:

1. Վաս., վախկոտ կայսրն Դիոկղեթիանոս:

ԾԹ

ՏՐՓԱՆՔ ՏՐԴԱՏԱՅ ԵՒ ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՀՈՒԻՓՍԻՄԵԱՅ

(ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ. ԾԵ)

Եւ մինչդեռ Սուրբն Հռիփսիմէ զամենայն աղօթս առ Աստուած մատուցանէր, եկն եմուտ թագաւորն ի ներքս ի սենեակն՝ ուր էրն զնա արգելեալ: Աւրդ, իբրեւ եկն եմուտ նա ի ներքս, առ հասարակ մարդիկն՝ ամանք արտաքոյ ապարանիցն, կէսքն ի փողոցս ի ներքսագոյնսն, առ հասարակ երգս առեալ՝ բարբառեցան կայթիւք վազելով, ցուց բարձեալ[1] մարդկանն. կէսքն ի բերդամիջին, և կէսք զքաղաքամէջն լըցին խնճոյիւք. առ հասարակ համարէին հարսանեացն զպարսն պարել և զկաքաւսն յորդորել: Իսկ Տէր Աստուած՝ նայեցաւ յիւր սիրելին Հռիփսիմէ, ապրեցուցանել զնա, զի մի կորիցէ աւանդ որ պահեալ զգուշացեալ էր[2]. և լուաւ աղօթից նորա, զօրացուցանել զնա իբրեւ զՅայէլն և իբրեւ զԴեբովրային. եա զօրութիւն նմա՝ զի ապրեսցի ի ստամբակ բռնաւորին անօրէնութենէն:

Աւրդ, մտեալ թագաւորն՝ բաւն հարկանէր ըզնմանէն, կատարել զկամս ցանկութեանն: Իսկ նա զօրացեալ լինէր ի Հոգւոյն Սրբոյ. գազանաբար ոգորեալ, առնաբար մարտնչէր. իբրեւ յերեք ժամուց սկսեալ մարտնչել՝ մինչեւ ի տասն ժամն: Պարտեալ լինէր թագաւորն. և զայն՝ որ անհնարին համարեալ սուժով, որ մինչեւ ի Յունաց աշխարհն

1. Եթէ ուրիշ հին նշանակութիւն մի չունի, ըսել է ուրախութիւն ցուցընող ձայն կամ երգ:
2. Կուսութիւնն Հռիփսիմեայ:

էր՝ բազում այժս պնդութեան ոսկերացն ցուցեալ էր և զարմացուցեալ զամենեսեան, և ի թագաւորութեանն իսկ՝ իբրեւ ի հայրենի բնակութիւնն դարձեալ էր, բազում գործս արութեանն քաջութեանն և անդ ցուցեալ. և որ այնպէս հռչակեալ էր ամենայնիւ, արդ յաղկանէ միոջէ պարտեալ վատթարանայր. կամաք և զօրութեամբն Քրիստոսի:

Կ

ՆՈՑՆ ԲԱՆ ԸՍՏ ԽՈՐԵՆԱՑԻՈՑ[1]

Աստանօր ճառագայթ ճշմարտութեան ի Հայաստանս փայլէր աչխարհ, և ձայն աւետեաց հնչէր ի տանս Թորգոմայ. քանզի չփոթեալ տէրութեանն Պարթեւաց, մեծայայլ քննութեամբ ի խնդիր ելեալ բազմալոյս անյայտ մարգարտինն, որ գնոսան եկեալ էր մեծացուցանել յանանց մեծութիւնն: Եւ քաջութեամբ պսակեալն հոյակապ յաղթութեամբ ընկայազօր արքայն քաջ արանց, սէգն Տրդատ՝ մոլեգնոտ արիանաք առնչայր, առթել ինքեան զեսական լուսոյն հարսնացեալ դշխոյն Հռիփսիմէ, որ գնայն էր առթելոց իւրում փեսային[3]: Եւ զօրք պարթեւք զարքայականն հարսանեաց փողովք և սրնգօք փութային յորդորել պատն, այնմ՝ որ եկեալ էր գրել գնոսա ի զօրս զօրութեան արքային երկնից, օրհնութեամբ երգով սաղմոսաց յանմարմնոցն հայեցուցանել պարս: Եւ օրիորդք թագաւորազունք

1. Յառուկ ներքոյ մի ի Ս. Հռիփսիմէ և չընկերաց:
2. Լաւագոյն մարգարիան Հռիփսիմէ եկեր էր անկարելոյս հարսութեամբ վայելչացնել զՀայս:
3. Հռիփսիմէ, իր փեսային Քրիստոսի՝ հետեւող պիտի ընէր զՏրդատ:

և կուսանք Հայկազեանցս՝ ոսկիակուռ չքեղաչուք երին երին զարդուք, թմբկօք և պարուք՝ գային տանել ի սենեակ արքունի զայն, որ եկեալ էր գնոսա հարսնագեաստել երրորդութեանն լուսով, գրել ի գաւերս վերին Սիովնի, ընդ լուսերամիցն դասս, յանեզաչէն առագաստեալ հարսնարանին:...

Գայր հասանէր մոլեգնեալ ընդդիմամարտն, չամբչեալ կատազի զայրացմամբ, մեղացն բորբոքեալ բոցով, այրել խնդրէր զանթառամ կուսութեան բոյսատերեւ վարդն, որ կենացն փթթէր ցօղով, զՀագւոյն զգեցեալ զօրութիւն: Դիմէր և կռուի ի հանդէսն: Նոր էր հանդէսն, ի վեր քան զմիտս և զբան հրեշտակաց և մարդկան: Դիմէր ի հանդէս կռուի խաչազգեաց՝ առ ծիրանազգեստ արքայն, որ վառեալն էր ի զարդ և ի թագ հարսնեւոյ: Մտանէր ի հանդէս կռուի, որ խաչիւն էր պսակեալ և խաչեալ աչխարհի, առ այն՝ որ խրոխտացեալ թագիւն զգլուխն ամբառնայր, և որպէս փեսայ յորդորեալ ցնծայր յառագաստի: Հարկանէր կռուի ի դիմի առ արի սկայն, որ փքացեալ զօրութեամբ՝ զտիեզերս զդրդէր, և գոռալով խրոխտայր՝ ընկել զզօրութիւն Մարաց և Պարսից: Ելանէր ի ճակատ զգաստութեան վառեալ կռուն՝ առ պաշտօնեալ վիրապն աՀագին. որ ըստ առակաւոր բանին, « ի սիգալն իւրում աւերէր զթշումբս » գնաց, և ցամաքեցուցանէր զյորձանս ծովուց »: Բռնաւորն պերճացեալ զօրութեամբ հանդիսից, որ ի մարտս Պարսից զփղայն պատղեր վերամակաւ, և յմբչամարտս Ցունաց՝ զլուցն ձեռամբ թափէր զեղջիւրան, և բռամբ՝ զսկայն հերձուցանէր[1], ի դիմի հարկանէր կռուին՝ որ գիտէն ունէր ընդ աւան, և տենչայր ծարաւի սիրով խաչակից լինել կռուածին արարչին:

1. Հաչէն կամ Մանաւանդ Գեղեհոնն:

ԿԱ.

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ Ս. ՀՈՒՓՍԻՄԵԱՆՑ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆՑ

(Ա. Դ Ա Ր Ձ Ա Ն Գ Ե Ղ Ո Ս. ԺՀ–Թ)

Ի նմին գիշերի եկին հասին վաղվաղակի ի տեղի անդր իշխանք թագաւորին, և գահճապետն գահճաքն հանդերձ ընդ նոսա, և չահք լուցեալք առաջի նոցա: Եւ մատեան վաղվաղակի կապեցին զնա ձեռս յետոյ և խնդրէին զի հասցեն պղեզուն. իսկ նա իւրովք կամօքն բացեալ զբերանն՝ հանեալ մատուցանէր պղեզուն:

Եւ անդէն զհանդերձիին պատառատուն որ զնովաւն էր՝ ի բաց զերծուին ի նմանէ. և հարեալ չորս ցից ի գետինն՝ երկուս ոտիցն, երկուս ձեռացն, և պրկեցին զնա. և մատուցին զկանթեղունն յաճեծ ժամս. այրէին և խորովէին զմարմինս նորա հրով կանթեղացն, և քարինս վարեցին ընդ գոգն նորա, և ի վայր վայթեցին զպոխն նորա. և մինչդեռ եւս կայր կենդանի՝ փորեցին զաչս երանելւոյն: Ապա անդամ անդամ յօշէին զնա և ասէին, եթէ. Զմենեքեան որ իշխեացին անդոսնել և անարգել զհրամանս թագաւորաց, ըստ նմին օրինակի կորիցեն:...

Դարձեալ հրաման տայր վասն առաքինւոյն Գայիանեայ, թէ, նախ պղեզուն ընդ ծոծորակն հանել, և ապա սպանանել. վասն զի իշխեաց վնասակար խրատուն իւրով կորոյս զայնպիսին, որ զդիցն գեղեցկութիւն ունէր ի մէջ մարդկան. իսկ դորին խրատ՝ անչնորհ արարեալ[1] զդիսն իշխեաց,

1. Պէտք էր ըսել՝ անշնորհս առնել զդիսն:

որոյ նմայն զայն չնորհեալ էր գեղեցկութիւն. վասն այնորիկ զնա կատամահ սպանցեն:

Ա.րդ, ելեալ գահճապետն՝ պարծելով[1] չարամահ առնել զնա. և ետ հանել զնոսա չղթայիւք ի քաղաքէն՝ ընդ դուռն հարաւոյ, ընդ կողմն պողոտային՝ որ հանէր ի Մեծամօրի կամուրջն, ի տեղին յայն՝ ուր սովոր էին սպանանել զամենայն մահապարտս, ի ճաղճախուտ տեղի մի, մօտ ի պարկէն փոսին[2] որ չուրջ գայր զքաղաքաւն: Եւ վաղեցին չորս չորս ցիցս միւմ միւմ ի նոցանէն:

Եւ յետ այսորիկ մատեան և պատառեցին զհանդերձս նոցա յանդամոց իւրեանց. և պրկեցին ըզնոսա մի մի ի չորս ցիցս. և ծակեցին զմարմնս ի պճղունս նոցա. եդին փոզս, և փչելով այնպէս կենդանւոյն մարթեցին զսուրբսն երեսին, ի ներքուստ ի վեր մինչեւ ի ստինն. և ծակեալ զծոծորակն՝ և պղեզուն ընդ այն հանէին: Եւ վարեցին եւս քարինս ընդ գոգս նոցա, և ցրուեալ գաղիս նոցա յորովայնիցն՝ ընդ գոգս նոցա: Եւ քանզի գեռ եւս կային կենդանի, և ապա բարձին զգլուխս նոցա սրով:

Ա.րդ, որք միանգամ եկեալ էին ընդ նոսա անդուստ ի Հոռոմոց աշխարհէն, որ միանգամ միաբանք եկին հասին յերկիր Հայաստան աշխարհին, աւելի էին քան զեօթանասուն մարդ. իսկ որք սպանան ընդ սուրբ տիկնայն՝ ընդ Գայիանեայ և ընդ Հռիփսիմեայ, նոքիմբք հանդերձ որ թուեցան ի թիւ վկայելոցն, ընդ ամենայն սպանեալսն՝ երեսուն և եւթն մարդ:

Ա.րդ, ի քան և վեց ամսոյն Հոռի կատարեցաւ Սուրբն Հռիփսիմէ՝ դասուն սրբով երեսուն և երեք նահատակիւք ընկերօքն հանդերձ, և ի քան և

1. Վախցընելու համար՝ խրախատալ և սպառնալ:
2. Փաղքին բոլորտիքը պատող խրամին, որ է փոսն, կամ անոր պատերն:

եւթն ամսոյն Հոռի[1] Սուրբն Գայիանէ՝ երկու իւրովք ընկերօքն, որք ընդ նմա պատերազմեալք պսակեցան, և առին զպսակն յաղթութեան:

ԿԲ

ԱՂԵՐՍ ԽՈՐԵՆԱՑԻՈՑ ԱՌ Ս· ՀՌԻՓՍԻՄԷ[2]

Այսոքիկ քեզ յիմոց բանիցս պատուէ՝ երջանիկդ ի կանայս, նահատակ յաղթող և հարսն սուրբ· ոչ պսակ ձիթենւոյ զոմբիական մարտից յաղթանակ, և ոչ թագ ոսկիակուռ ակամբք փայլեալ՝ ի զարդ արքայական հարսանեաց· այլ մաքուր ընտանեգոյն ընծայ սիրոյդ բանին, և ծաղիկ իմաստութեան ի Քրիստոս· արեամբ առագեալ բուրաստան, և համահաւաքեալ ի զարդ քոյմ հարսնութեանդ, որպիսեաք պսակիս ծաղկօք· առաջին քրտունք իմոյ նորաբոյս հոգւոյս, որ զքեզ սիրէ՝ սիրեցեալդ խոկապէս բարւոյն· որ և ընկալցիս գթութեամբ, որպէս արգարեւ մայր գորովադութ, և յիս գարձուսցես զգթութիւն սիրոյդին զքեզ վեսայացեալ բանին· զի և ես ցնծացայց ընդ քեզ յերեւել լուսոյ փառաց նորա: Եւ զամենեսեան զմեզ՝ զորս արեամբ քո ծնար յորդեզրութիւն բանին, մշտա-

1. Հռիփսիմեանց և Գայիանեանց նահատակութեանց օրերն՝ ըստ Յայսմաւուրց և Հաստատուն տումարի՝ համեմատին հակառակք ամսոյ 5–6· բայց ամանք փիրր. ամսոյ 23–6 օրերուն այլ յիշեն:

2. Խորենացւոյ յառաւել զրած ներքոգրին մասն է, չատ փակուկ, ազնիւ և վաւելուն զգացմամբ գրուած: Վկայէ ինքնին որ այս ներքագրս իր մտաց առաջինեակ ծնունդն է, ըսել է իր ծաղիկ հասակին մէջ այս բանաւոր ծաղիկը կ'ընծայէ Հռիփսիմեայ, մօր պէս սիրելով զնա, և փափագելով սիրուիլ անկէ:

հայց աղօթիւք յանձն արասցես նմա, ծածկեալդ ընդ հովանեաւ թեւոց նորա: Որպէս զի առաջնորդեալք լուսով աւետարանին, ընդ անգոյս անցանելով յաւիտենից[1], ի հանդերձեալսն ժամանեսցուք հասանել՝ ի կեանս, ի նոյն ինքն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր· ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն Սրբոյ վայել է փառք իշխանութիւն և պատիւ այժմ· և այլն:

ԿԳ

ՏԽՐԱՆՔ ՏՐԴԱՏԱՅ ԵՒ ՊԱՏՈՒՀԱՍՆ

(Ա Գ Ա Թ Ա Ն Գ Ե Ղ Ո Ս)

Աւուրս վեց ի խոր տխրութեան և յանհնարին արտմութեան կացեալ[2] թագաւորն, առ անձուկ սիրոյ գեղոյն Հռիփսիմեայ՝ ապա յետ այսորիկ ժամ առեալ որսոյ՝ ամենայն զօրաց, ածել կատել պատահականն[3], խուճապականս[4] սփռեալ, երագաց[5] տուեալ, թակարդ ձգեալ, կամեցեալ զնս առնել, երթեալ ի զաշտն Փառական չեմակաց[6]:

Այն ինչ ի կառս ելեալ՝ կամէր թագաւորն ըստ

1. Անցաւոր, ունայն աշխարհս:

2. Յետ նահատակութեան Կաւսանացն:

3. Ծանօթ չէ թէ ինչ տեսակ զործիք կամ նիւթ է:

4. Թուխ արտալոյս կենդանիները խրտեցընելու, վախցընելու բաներ:

5. Պարակեր· Երրէն՝ որսալոյ չրջապատ տեղ նշանակէ: — Գազ՝ յայտ է որ տեսակ մի է փշոյ· կըրնար յառաւել տեսակ մի փշոյ կարծուիլ Երագազն, թէ բառից տեղափոխութեամբ կարդացուեր այս տեղս, խուճապական տուեալ, Երագազ սփռեալ:

6. Տեղն անծանօթ, բառն ասրակուսական:

քաղաքն ելանել, անդէն վազվազակի պատուհաս ի Տեառնէ ի վերայ հասանէր. և հարեալ պիա-գաւորն՝ այսոյն պղծութեան, ի կառացն ի վայր կործանէր. և անդէն մոլեգնել սկսաւ, և իւրովի ուտել զիւր մարմինն: Սա և ըստ նմանութեան Նաբաւգոդոնոսորայ արքային Բաբելացւոց, եղեալ ըստ մարդկային բնութեան արտաքս, ի նմանու-թիւն վայրենի խոզից[1], իբրեւ զնոսա՝ ընդ նոսա՝ ի մէջ նոցա երթեալ բնակէր: Եւ այնուհետեւ մտեալ յեղէգն, խոտաճարակ լեալ անհնարին ան-զգայութեամբ, մերկ զանձն ընդ գաշտսն կոծելով: Զի թէպէտ կամեցան արգելուլ անդէն ի քաղա-քին, ոչ կարացին. մի՝ վասն բնական ուժոյն, և մի՝ վասն զի էր և այժն զիւաց՝ որ ի նմայն հա-րեալ էին:

Նա և ամենայն մարդիկն որ ի քաղաքին էին՝ նոյն օրինակ զիւաբախք մոլեգնէին. և անհնարին կործանումն ի վերայ աչխարհին հասանէր. և ամենայն ընտանիք թագաւորին՝ ծառայք և սպա-սաւորք առ հասարակ հարուածովք հարեալք լի-նէին. և անհնարին սուգ վասն հարուածոցն լինէր:

1. Առանց ուրանալու այս տարօրինակ դէպքը, սմանք տեսակ մի բնական հիւանդութիւն կամ մո-լեգնութիւն համարին, ինչպէս և Նաբուգոդոնոսո-րինը. ասոր վրայ գրուածքը կըրնան կարդալ հետաքը-նողք՝ Դանիէլի Ս. Գրոց մեկնութեանց մէջ:

ԿԴ

Ս· ԹԷՈԴՈՐՈՍ ՍԱԼԱՀՈՒՆԻ[1]

Յամս տէրութեանն Տրդատայ թագաւորին՝ էր ոմն ի նախարարացն արքունի՝ յազգէ թագաւորու-թեանն, Սոռեան անուն. և բնակէր ի գաւառն Աահունեաց[2], ի յաւանաչէնն իւր զոր Սոռենաչեն կոչէն մինչեւ ցայսօր, մերձ առ գղեակն Պարքե-ւից, որ այժմ կոչի Քերդոտն. և ինքն էր իշխե-ցող գաւառին այնմիկ: Եւ կին մի էր նորա Աղ-վիթոս[3] անուն, յոյժ գեղեցիկ և երկիւղած և աղօր-մած առ աղքատս. և որդի մի էր նոցա Աբեւնա-դորոս անուն, հնգետասան ամաց. և էր ցաւօք վիրաւորեալ, զի ունէր ցաւս անբժշկելիս յանձն իւր: Եւ հայրն և մայրն բազում ծախս ետուն բժշկաց, և ոչ կարացին դեղօք բժշկել զնա. և դամս եօթն զցայգ և զցերեկ այնպէս նեղեալ կայր ի վտանգէ ցաւոցն: Եւ մայրն իւր Աղվիթոս չի-

1. Յայսմաւուրք ի 16 մայիսի նշանակեն ասոր յիշատակը. անոնցմէ դուրս առանձին գրուած այլ գաւուելով վարքին, յայտնէ որ և սոնեալի Սուրբերէն է, և փափաքելի է որ և հիմայ հանդիսիւ սոնուի:

2. Վէրջը գրածէն կ'իմացուի որ Եկեղեաց կողմերն էին այս տեղիքս, և որովհետեւ շատոնց անյայտացեր են, պատմչին ըսած մինչեւ այժմը՝ շատ հին գարե-րու առեն էր, և շատ հնուց գրուած է Սրբոյս վարքն: Օրինակ մի յայտնապէս գրէ, թէ «է ի մէջ Դերջը-» նոյ և Եղընկոյ»:

3. Յունական անուն լսուի (որպէս և սրդուին), անպատշաճ ոս վերջաւորութեամբ, փոխանակ ըսելու Ագաւիթի, Ἀγαπητή, որ նշանակէ սիրուն, հաճելի, անուշիկ: Կամ յունադէմ էր կինն, կամ հայերէն գրոց հնարուելէն առաջ՝ յունարէն գրուած էր այս վկայաբանութիւնս:

նեալ էր իւր աւան առ ափն ծովուն[1] որ կոչի Միկիխողմն[2]: Եւ հանդէպ գեղջն կայր ազրիւր մի բարեհամ, զոր կոչէին Աբրեևուռա[3]. չինեցին անդ տեղիք ցաւագնելոցն. և ամենեքեան ողջմտութիւն առնէին կերակրովք և ըղձիւք. և էին անդ ոգիք երեսուն և հինգ. և երթեալ անդ Ա.Թենադորոս միաբանեցաւ ընդ նոսա: Եւ ոմն ի նոցանէ անուն Դասիոս, քրիստոնեայ զաղտ և ծեր գոլով, դարձոյց զնոսա զամենեսեան ի հաւատս քրիստոնէութիւն. և յանդարձն զրով վարեր զօրէնս աստուածայինս, և վարդապետեր նոցա ի հին և ի նոր կտակարանաց. և ուսուցանէր նոցա հաստատուն կալ ի հաւատս:

Եւ եղեւ զի յամենայն ամի ասն առնէին և զոհս մատուցանէին աստուածոցն իւրեանց, Հերակլիոսի և Ապիկպիոսի[4]. և ամենեքեան երկրպագութիւն մատուցանէին պիղծ կռոցն իւրեանց: Եւ կոչէին զԱ.Թենադորոս ի զոհն. և նա ոչ կամէր երթալ, այլ երկնչէր ի հօրէն և երկիւղած էր յԱստուծոյ. և նա զգաւս անձինն պատճառէր, և ոչ կամէր գնալ: Եւ ասէ հայրն նորա Սուրբն. Որդեակ, այս վեց ամ է որ ոչ ես մատուցեալ զոհ աստուածոցն մերոց. և նա պատճառէր զհիւանդութիւն մարմնոյն: Իսկ մայրն նորա ծանեաւ զարարիչն երկնի և երկրի, և հաւատաց ի Հայր և ի Որդի և ի Սուրբ Հոգին. և արթիւ և մտօք պաշտէր զԱստուած կենդանի, զաղտ:

Եւ եղեւ յանկարծակի գալ զօրացն Տրգատայ թագաւորին. իշխան ոմն Մազենտիոս[5] անուն, տա-

1. Ուրիշ օրինակ փոխան ծովուն՝ կ'ըսէ ձորոյն:
2. Այս յաւնարէն անունն այլ կերպով թարգմանելով Թղզագրակ, այսինքն թզենեաց ագարակ.
3. Այս տեղ անունն Հայանայ:
4. Սա բժշկութեան կամ առողջութեան պաշտպան կարծուէր:
5. Գուցէ Մաժան էր բնիկ անունն:

նէր զիապետն Գրիգորիոս ի Խոր վիրապն, վասն ոչ երկրպագելոյ Աստուածական պատկերին. որ և զերիս ամս[1] չարչարեաց. և յետոյ զգացուցին թագաւորին՝ թէ որդի է դա Անակայ, որ սպան զհայրն, և խաւար էած Հայոց աշխարհիս: Եւ հրամայեաց տանել զնա ի Վիրապն, կերակուր լինել գազանաց և սողնոց թունաւորաց. և խաղացեալ գայն հասին ի գաւառն Աղձնեաց ի Սոդրենաշէն աւանն: Եւ որք նեղեալ էին ի պէսպէս ցաւս և ի վերս և ի տանջանս, գային և անկանէին առ ոտս կապելոյն Գրիգորիոսի, և առժամայն բժշկէին յախտից հոգւոյ և մարմնոյ: Եւ գայր Դասիոս ընկերօքն, հանդերձ Ա.Թենադորոսիւ. և անկան առ ոտս Գրիգորիոսի, և առժամայն զառողջութիւն ըզգեցան ամենեքեան: Եւ ասեն վասն Ա.Թենադորոսի՝ թէ ոչ ունի զինիք մկրտութեան աւազանին. և ասէ Գրիգորիոս ցԴասիոս. Երթ ի յաղբիւրդ որ հանդէպ արեւելից կայ, և մկրտէ զԱ.Թենադորոս, և անուանէ զնա Թեոդորոս. վասն զի ունէր Դասիոս զաջահանայական աստիճանն: Եւ գայս լուեալ ի Գրիգորիոսէ՝ տարեալ մկրտեաց զնա ի յաղբերն. և առժամայն ծագեաց լոյս աստուածութեանն ի վերայ նորա. և լցաւ Թէոդորոս Հոգւով Սրբով, և օր ըստ օրէ կանխէր յաղօթս և ի պատարագս Տեառն: Եւ զամս վեց պահեալ լինէր չնորհօքն Աստուածոյ աներկբայ հաւատով:

Եւ զգացուցին հօր իւրոյ Սուրենայ, թէ որդի ձեր Ա.Թենադորոս քրիստոնեայ է: Եւ հայր նորա բերեալ խրատէր զնա, ուրանալ զՔրիստոս և զաստնալ ի կուռս. և զամիս վեց ոչ կարացին դարձուցանել զնա. և բազում ողբանս մատուցանէր հայր նորա, և ոչ կարաց խախտել զնա ի հաւատոցն որ ի Քրիստոս: Եւ սկսաւ ապա սպառնալօք զարհուրեցուցանել. և ոչ այնու կարաց թիւ-

1. Թերեւս կարգալու է երիս աւիսաս:

բել զնա: Այլ յետ աւուրց ինչ երանելի մանուկն Թէոդորոս ելեալ ի տանէն՝ գնայր ի միւս այլ ձո-րակն, զոր Սեղեմնուտ[1] կոչեն. և անդ լինէր զա-ւուրս եօթն, առ ստորոտով ծառի միոյ թաքու-ցանէր զանձն: Եւ իմացեալ հայրն նորա թէ որ-պէս իւր ի Սեղեմնուտն կայ թաքուցեալ, առեալ զսուր իւր գնաց ի ձորակն. և գտեալ զԹէոդորոս, առեալ զվերացն և հանեալ զսուրն՝ եղեն զորդի իւր ի վերայ վիմի միոյ, առ ստորոտով ծառին: Եւ ի նոյն գիշերին ծագեաց լոյս սաստիկ ի վերայ աւուրբ նշխարաց նորա: Եւ հրամանաւ մօր նորա գնայր Դասիոս քահանայն ընկերօքն. և պատեալ աւուրբ կառուցովք զմարմինն Թէոդորոսի սուրբ նա-հատակին Քրիստոսի, և թաղեալ ի նոյն տեղի. և բազում սքանչելիք լինին ի տեղւոջն յայնմիկ մին-չեւ ցայսօր:...

Եւ յետ հինգ ամաց նահատակութեան Սրբոյն՝ հրամանաւն Աստուծոյ ելեալ ի վիրապէն Ս. Գրի-գորիոս, գայր հանդերձ բազում զօրօք յաշխարհն Կորդուաց[2], ի գաւառն Սալհունեաց, յաւանն Սու-բէնաչէն՝ զոր այժմ կոչեն Ջուռեվն. և լինէր անդ զգիշերն ողջոյն. և ի հաւարակել գիշերոյն՝ լոյս մեծ ծագեալ ի ձորակին՝ ուր էր տապան Ս. Թէո-դորոսի: Իսկ Սուրբն Գրիգոր հարցանէր զպատ-ճառս իրին. և եկեալ ծերունին Դասիոս պատմէր մի ըստ միոջէ վասն սուրբ նահատակին Թէոդո-րոսի: Եւ ի վաղիւն ելեալ զօրօք բազմօք և եկեալ ի տեղին ուր էր տապան Սրբոյն, չինեաց ի վե-րայ նշխարացն վկայարան, յանուն Սրբոյն Թէո-դորոսի. և ինքն յուղի անկեալ երթայր ի Կեսա-րիա առնուլ զպատիւ քահանայապետութեան:...

1. Անուան վերջաւորութիւնն կարծել տայ սր Սե-ղեմ կամ Սեղեմն բառական ինչ նշանակէ, կամ ու-րիշ քնական բան մի:

2. Ոչ ծանօթ կարճայից կամ Կորդուաց աշխարհն, այլ նախայիշեալ Եկեղեաց և Եղբնկայի կողմն. ինչ պատճառաւ Կորդուիք կոչուէրն յայտնի չէ:

Գիտելի է՝ զի աղբիւրն որ զառ ի վայր տեղւոյ վկայարանին հոսի, ասեն, թէ՝ յորժամ հայրն եղեն զորդին՝ անդ լուաց զսուրն. և բազում բժշկու-թիւն լինի յաղբիւրէն յայնմանէ:...

Եւ ինքն Թէոդորոս էր[1] աչօքն թուխ և գան-գրահեր, և երեսօքն խարտեաշ, և անձամբն եր-կայն. և էր ամաց քսան և ութ և ամսոց վեցից՝ յորժամ զմարտիրոսութեան պսակն էառ: Եւ մայր նորա սպասաւորեալ սրբոյ տապանին զամս եօթն, և բարի խոստովանութեամբ հանդեաւ ի Քրիստոս յապրիլի 29 (կամ 18), և կայ թաղեալ արտաքոյ դրան տաճարին: Եւ գերեզման Սրբոյն Թէոդորոսի կայ հանդէպ դրանն՝ ի կողմն հիւսիսոյ, յանկիւն տաճարին. և վէմն յորոյ վերայ զնաւ՝ կայ ի միւս այլ անկեան տաճարին. և Ս. Դասիոս կայ թա-ղեալ ի կողմն արեւմտից:...

Իսկ հայր նորա Սուրէն չորս ամ այլ եկեաց զկնի նահատակութեան Սրբոյն, և ի նոյն կապաշ-տութեան մեռաւ: — Իսկ Ս. նահատակն Թէո-դորոս՝ առաջին պտուղ եղեւ չարչարանաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ. և նախաշաւիղ նահա-տակութեան նորա սա եղեւ: Եւ իբրեւ զհարա-պատ որդի ժառանգաւոր հօրն գաւառի՝ ի յերկիրն Եկեղեաց, որ է Եղբնկան, ի կողմն արեւելից. և է վանք ճգնաւորաց մինչեւ ցայսօր. և առնէ բժըշ-կութիւն ամենայն ախտաժետաց, մանաւանդ այ-սահարաց. առաւել ներգործէ փայտն և վէմն յո-րոյ վերայ հեղաւ արիւն Ս. Նահատակին, որ կայ եդեալ ի վանքն Գորտիւռ Ա. Թորոս կոչեցեալ. և որք հաւատով դիմեն առ նա՝ գտանեն զառողջու-թիւն, ի փառս Քրիստոսի:

1. Կամ երախտաւոր ժամանակակից մ'է նկարա-գրողն, կամ հնագոյն և երկար գրուղէ առնուած է այս անուշակ յիշատակս, և մանրամասնութիւն պատ-մութեանն անտարակոյս կ'ըսէ ճշմարիտ ըլլալը:

ԿԵ

Ս. ԳՐԻԳՈՐԻ ԵԼՆ Ի ՎԻՐԱՊԷՆ

(Ա. ԹԱԳԱՒՈՐԻՆ ԳԵՂՈՒ. Ի)

Յայնմ ժամանակի տեսիլ Աստուծոյ երեւեալ ի վերայ քեռ թագաւորին, որոյ անուն էր Խոսրովիդոխտ. արդ, եկեալ խոսէր ընդ մարդիկն, պատմէր տեսիլ և ասէր. Տեսիլ երեւեցաւ ինձ յայսմ գիշերի. այր մի ի նմանութիւն լուսոյ եկեալ պատմեաց ինձ, եթէ, ոչ այլ ինչ գոյ բժշկութիւն հարուածոցն՝ որ եկին հասին ի վերայ ձեր, եթէ ոչ յղեսջիք դուք ի քաղաքն Աղբատաշատ, ածել անտի զկապեալն Գրիգորիոս. նա եկեալ ուսուսցէ զձեզ՝ զեղ ցաւոցդ բժշկութեան:

Աւրդ, իբրեւ լուան մարդիկն՝ սկսան ծիծաղել զբանիւքն զոր ասաց. սկսան խօսել ընդ նմա և ասեն. Եւ դո՞ւ ուրեմն մոլեգնեցար. զի՞ւ ուրեմն հարաւ ի քեզ. զիարդ է՝ զի այս հնդետասան ամ է զի ընկեցին զնա յանհնարին խոր վիրապն, և դու ասես եթէ կենդանի է. արդ և ոսկրոտին իսկ ո՞ւր լցեր. զի նոյնօրին իբրեւ իլուցին զնա անդր՝ յօձիցն իսկ տեսլենէն նոյնժամայն սատակեալ իցէ:

Իսկ կրկնեաց դարձեալ եւս կնոջն զնոյն տեսիլն, և հինգնեաց սպառնալեօք, զի եթէ ոչ պատմեսցէ սաստ սաստ, մեծամեծ տանջանս ընկալցի, և հարուածք մարդկան և թագաւորին եւս քան զեւս սատակացի մահու և պէսպէս տանջանօք: Եւ մտեալ անդրէն Խոսրովիդուխտն՝ մեծաւ երկիւղիւ և զգուշութեամբ ասաց զբանն հրեշտակին:

Իսկ նոքա վաղվաղակի յղէին անդր նախարար զումն աւագ՝ որում անուն Օտա կոչէր: Եւ գնաց նա ի քաղաքն Աղբատաշատ՝ հանել զնա ի խոր բանդէ վիրապին: Աւրդ, իբրեւ եկն եհաս Օտայն ի քաղաքն

Աղբատաշատ, ընդ առաջ ելանէին նմա քաղաքացիքն՝ հարցանել զպատճառս գալոյն. և նա ասէ ցնոսա, թէ վասն կապելոյն Գրիգորի եկեալ եմ՝ տանել զնա: Իսկ նոքա զարմացեալ առ հասարակ ասէին. Ո՞ զիտէ թէ կայցէ, զի բազում ամք են զի ընկեցին զնա անդր: Իսկ նա պատմեաց զիրս տեսլեանն և զգործն զինչ եղեւն:

Իսկ եկին բերին կարս պարանոց երկայնս և ատուարս, և կացին իվուցին ի ներքս. ազազակեաց Օտայն նախարար ի ձայն մեծ, և ասէ. Գրիգորիո՛ս. եթէ կայցես ուրեք՝ եկ ի դուրս, զի տէր Աստուածն քո՝ զոր պաշտես դու՝ նա հրամայեաց հանել զքեզ այսր: Եւ անդէն յոտն կացեալ վազվազակի չարժեաց զպարանն, և բուռն հարկանէր: Իսկ սոցա գիտացեալ՝ ձգեալ հանին զնա ի վեր. և տեսին զի թխացեալ էր մարմին նորա իբրեւ զածուղ սեւացեալ. և անդէն հանդերձս մատուցեալ զգեցուցին նմա, և խնդութեամբ առին զնացին Աղբատաշատ քաղաքէ, տանել ի վաղարշապատ քաղաք:

Յայնմ ժամանակի առ վտանգի տարակուսացեալ ցաւոցն՝ եղեալ թագաւորն՝ դիւրին առեալ ածէր ընդ առաջ նորա, մերկ խայտառակ. և նախարարքն պատաքոյ քաղաքին սպասէին նմա: Աւրդ, իբրեւ տեսանէին զնոսա ի բացէ՝ զի գային, Գրիգորիոս Օտայիւն հանդերձ և այլ բազում մարդիկ՝ որ գային ընդ նոսա Աղբատաշատ քաղաքէ, ընդ առաջ խաղացեալ մոլեգնելով և ուտելով զմարմինս, դիւահարէին և փրփրէին առաջի նորա:

ԿԶ

ՏՐԴԱՏ Ի ՇԻՆՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԱՐԱՆԱՑ Ս. ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ

(ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ. ՃԶ)

Առեալ թագաւորին փայտատ և բահ, հատանէր դիրս հանգստացոյն Սրբոյն իւրաքանչիւր, ըստ չափարան[1] արկեզացն: Սոյնպէս և ինքեանք երկոքին՝ Աշխեն տիկին և քոյր թագաւորին Խոսրովիդուխտ, ըստ բրել բրոցին՝ ի հանգերձս իւրեանց ընկալեալ զհողն՝ արտաքս պեղէին: Եւ այսպէս կարգի կարգի յառաջակոչն պատրաստեցին զդիրս Սրբոյն Հռիփսիմեայ. և զկնի նորա զերեսուն և զերկուցն, ի տեղւոջ յայնմիկ, ուր հեզան արիւնք վկայականք երանելեացն նոցա, ի տեղի հանգըստեան պատրաստելոյ սուրբ և փառաւոր սեղանոյն Քրիստոսի: Սոյնպէս ի վկայարանին՝ որ ի հարաւակոյս քաղաքին էր՝ պատրաստեաց, և զայն տեղին փոսէր[2] Սրբոյն Գայիանեայ և երկուց ընկերացն: Ինքն թագաւորն քերրն Խոսրովիդխտով հանդերձ և Աշխէն տիկնաւ զդիրս Սրբոյն իւրաքանչիւր բնակութեան յօրինէին իւրեանց ձեռօքն:

Եւ եկն թագաւորն խնդրեաց հրաժեշտ ի Սուրբոյն Գրիգորէ, եօթնօրեայ ճանապարհ կալեալ ի վեր ի բարձր լեառն Մասիս: Եւ անտի ի գլխոյ լեռնէն առեալ վէմս արաստոյս[3], անտաչս, անկոփս, յաղիս, ծանուննս, երկայնս և ստուարս, մեծամեծս,

1. Ըստ չափու՝ պէտք էր ըսել:
2. Տրդատ փոս կը բանար կամ փորէր՝ Գայիանեանց մարմնոց համար:
3. Կարծր նշանակէ, բառին ծագումն յայտնի չէ:

որ զմի մի ոչ լինէը հնար՝ թէ և դիպելոյ բազմութեանց ի մարդկանէ՝ զայն շարժել. արդ, առեալ սկայազօրն հայկաբար[1] զութ արձանն՝ ի վերայ իւրոց թիկանցն զայն դնէր, ատանձնեալ բերեալ ի վկայարան տաճարացն. մէն չորս արձանս[2] սեամն կանգնէր՝ իբրեւ փոխարէն անմիտ մարտին, զոր ընդ Սրբոյն պատերազմեալ յիւրում սենեկին. որ ամենապահ չնորհացն յաղթեալ[3] զայնչափ զարմանութիւն գործեաց: Եւ սա պակաս յաղթութեանց՝ զիւրոյ ձեռագործութեան զվատակոն մատուցանէր:

Աբարեալ չինեալ կազմեալ զսուրբ վկայարանն երեսին, հանդերձեցին զարդարեցին, և օրինօք

1. Գուցէ Հայկայ համար այսպիսի բան մ'ասեն դած են հին Հայք, եթէ կարգալու չէ հնկայաբար, հոմանիշ բառերը կրկնելով:
2. Ութ քարերէն չորսը՝ Հռիփսիմեայ վկայարանին հիմն դնէ, կամ ամենն այլ անոր չորս կողմը: Արդեօք կըրնար կարծուիլ՝ թէ ոչ լոկ արձան՝ այլ և արձանաց վրայ գրուածք այլ ըլլային:
3. Ըսելու էր չնորհօքն: Այս խօսքս յիշեցընէ մեր հոգեշունչ Կաթողիկոսին (Կամիրասայ) Հռիփսիմէի արժանաւոր երգը.

« Թուլացան կորովիք հասատաձիգ ազեզանց,
» Եւ ակար կանայքն վառեցան զինուս.
» Թագաւորըն պերճացեալ զօրութեամբ և փառօք՝
» Ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր:
» Ժողովեալ բազմութեան ազգաց և ազանց՝
» Ոչ զօրէին առ մի՛ նահատակ.
» Քանզի հասեալ ի թիկունս աներեւոյթ զօրութիւն՝
» Խորտակեաց յայտնապէս զգաղտնի պատերազմին:
» Ի վերայ միոյ պատուական մարգարտի՝
» Խաղացին ցնծալով ամենայն հեթանոսք.
» Արեւմտեաք՝ յարեւելս ընթացեալ հասին,
» Քարոզել յայտնապէս զքնաղ տեսութիւնն:
» Լըսեան թագաւորք, և լըցան խնդութեամբ.
» Որսալ յանձն առին ըզգաղտնի մեծութիւնն.
» Պարգեւել իրերաց խոստանային՝ բանիւք.
» Եւ ծածուկ հնարիւք՝ զղանալ ի միմեանց »:

յարդարեցին։ Եւ ապա առեալ զիւրաքանչիւր (արկեղն) յիւրաքանչիւր տեղի վկայութեանն մատուցանէին. զՍուրբն Գայիանէ՝ ի կողմ հարաւոյ, իւրոյ մարտիրոսութեանն երկու ընկերօքն՝ դնէր ի վկայարան տաճարին. սոյնպէս և զերանելին Հռիփսիմէ՝ երեսուն և երկու ընկերօքն ի կողմն արեւելեաց՝ ի կողմ տաճարին մատուցանէին. և զմիաւորն՝ որ ի հնձանին սպանին, սորա տաճար ի կողմանէ քաղաքին ի հիւսիսոյ կողմանէ։ Եւ զամենայն Սուրբսն ի միասին գումարեալ՝ զնաչական վկայսն Քրիստոսի, յիւրաքանչիւր հանգիստս մարտիրոսական բնակութեան չինուածոյ փոխեցին։

ԿԼ

ԹՈՒՂԹ ԸՆԾԱՅՈՒԹԵԱՆ Ս. ԳՐԻԳՈՐԻ Ի ՏՐԴԱՏԱՅ ԱՌ ՂԵՒՈՆԴԻՈՍ ՀԱՅՐԱՊԵՏ

(Ագաթանգեղայ. ձ ժ Բ)

Ի վաղընջենէ հետէ կորուսեալք, տգիտութեամբ մեզացն պաշարեալք, մատախլապատք, ափշեալք, ոչ կարացեալ իմանալ նկատել, զարեզակն արդարութեան ոչ տեսանել. վասն այսորիկ խաւարեալք էաք ի մութ թաթաւեալք։ Իսկ յորժամ քաղցրութիւն արարչին Աստուծոյ երեւեցաւ՝ խրատել և լուսաւորել զմեզ՝ զարարածս իւր, ծագեաց գնորոյ կենդանի լուսոյն ի սիրտս մեր, և կենդանացոյց զմեռեալութիւնս մեր, փիլ սուրբ պսիրկլի վկայս յայս կոչմանս առաքելով։

Որք եկեալ, մերով անմտութեամբն զիւրեանց քաջութեան նահատակութեան առաքինութեան հանդէսն ցուցին. իրրեւ զի Տէրն գիտէր իսկ զնոցա քաջութիւնն՝ թէ որպիսիք են[1], այլ զի և մեզ

1. Շարաբանութիւնն չիմի է. ըսելի էր, իբրեւ ոչ զի չգիտէր Տէրն։

անմտացս ուսուցէ զիմաստութիւն, թէ սոքա որչափ սիրեցին զՏէրն իւրեանց. վասն այնորիկ ընդ մարտին նոցա առաքինութեանն՝ զսխրագործ գիւր անչափ արար զաքանչելիս, և մեզ պատուհաս. մինչեւ թագաւորիս մերոյ լինել խոց[1], և ընդ վայրապատուն գազանս արածել։ Այսպա ազօրմեալ մեզ բարեխօսութեամբ աղօթից վկայելոցս, ի ձեռն այդ վկայելոյդ Գրիգորի՝ զամենեսին զմեզ թժըկեաց։

Քանզի և դա առաւել վկայ գաւաւ, առաւել քան զառաւել, վասն այսորիկ յԱստուծոյ մեզ տուեալ (եղեւ) առաջնորդ։ Զնախնական կարգս սովորութեան ունայնութեան կռապաշտութեանն հայրենեացն, զոր Աստուած ի ձեռն գորա խլեաց և եբարձ ի միջոյ. և ուսոյց ամենեցուն մեզ գիւր զվկայութիւնն և զհրամանս, ըստ իւրոց կամացն գնալ. մինչեւ ի տալ մեզ հրաման յայս յանդիմանն, զդոյն լինչն զԳրիգորդ մեզ հովիւ և տեսուչ և վարդապետ ճշմարտապատում կացուցանել։

Վասն այսորիկ և մեր ապաստան եղեալ յօգնականութիւն ընդունելութեան աղօթից ձերոց և սրբութեանդ, Ղեւոնդիոս արքեպիսկոպոս կեսարու, և ամենայն ուխտ քահանայութեանդ սուրբ եկեղեցւոյ՝ որ այդր էք, մեք յողորմութենէ Տեառն աղօթիւք ձերով առցուք ողջոյն. Տրդատիոս թագաւոր, ամենայն զօրք երկրիս Հայոց Մեծաց, և Աշխէն տիկին, և օրիորդ Խոսրովիդուխտ։ Վասն այսորիկ առաքեցաք մեք առ ձեզ սրս գլխաւորս իշխանս պատուական զաշխարհիս մերոյ մեծի, զի պատուեցին ձեզ զամենայն աքանչելիս Աստուծոյ՝ որ ասա յայսմ աշխարհի գործեցաւ ընդ մեզ։

Եւ տուաք մեք ածել առ ձեզ զսուրբ խոստովանողդ Քրիստոսի զԳրիգորիոս. և զայս հրովարտակ մեք առ ձեզ գրեցաք, զի ըստ տուչութեան

1. Այս բացատրութիւն Գեղեհկանի բերնի վայրէր։

աւանդութեան հոգեւոր աստուածատուր շնորհին Քրիստոսի, մեզ՝ զԳրիգորդ տեսուչ և վարդապետ ա-ռաքնորդութեան աստուածազնուց ճանապարհացն, և հովիւ և բժիշկ կացուսջիք. որպէս և մեզ յԱ-տուծոյ հրամայեցաւ: Եւ աղօթս արասջիք, զի զմեզ արժանիս արասցէ Աստուած իւրոյ ողորմութեան, առողջութեամբ գնալ ի ճանապարհս նորա. և ձեր սէրն առ մեզ եկեալ հանգիցէ. Ողջոյն:

ԿԸ

ԱՒԵՐՈՒՄՆ ՄԵՀԵՆԵԱՑ, ՇԻՆՈՒԹԻՒՆ ՎԿԱՅԱՐԱՆԱՑ

(Ա.ԳԱԹԱՆԳԵՂՈՍ. ՃԻԳ)

Իբրեւ եկն եհաս ի սահմանս Հայոց, լուաւ Գրիգորիոս՝ թէ վահեվահեան[1] մեհեանն մնացեալ է յերկրին Տարօնոյ, մեհեանն մեծագանձ, լի ոս-կով և արծաթով, և բազում նուէրք մեծամեծ թա-գաւորաց ձօնեալ անդ, ուխերսրդ պաշտօն հուչա-կեալ, անուանեալն վիշապաքաղն վահագնի[2], Յաշ-տից տեղիք[3] թագաւորացն Հայոց Մեծաց, ի մնաբս լերինն Քարքեայ, ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդէպ հայի ի մեծ լեառնն Տաւրոսի, որ և անուա-նեալ ըստ յառաջագոյն տեղեացն՝ Յաշտիշատ. զի յայնժամ եւս դեռ չէին կային երիք բա-գինքն ի նմա: Առաջին, մեհեանն Վահեվահեան.

1. Եթէ Վահագնի և թէ Վահեի ըլլայ, պատճառ կրկնութեան վահեվահեան անուանն՝ անծանօթ է:

2. Առաջ յիշուած է՝ որ Հայք եօթն գլխաւոր բա-գին կամ մեհեան դից ունէին, անոնցմէ վերջ այս ութերորդ էր:

3. Զոհից և պաշտամանց տեղի:

երկրորդ, Ոսկեմօր[1] Ոսկեծին դից, և բագին իսկ յայս անուանեալ՝ Ոսկեհատ Ոսկիամօր դիցն. և երրորդ, մեհեանն անուանեալ Աստղկան դից, Սև-նեակ Վահագնի[2] կարդացեալ, ըստ յունականին՝ որ է ինքն Ափրոդիտէ: Այդ, դիմեաց գալ Սուրբն Գրիգորիոս, զի քանդեսցէ և զայն. զի տակաւին իսկ տգէտ մարդկան խառնակութիւն զոհէին ի յայս բագինս մնացեալս:

Իբրեւ զարձեալ գայր ի կողմանց Յունաց, բար-ձեալ բերէր ընդ իւր նշխարս ինչ յոսկերացն մեծի մարգարէին երանեալ Մկրտչին Յովհաննու, և ըզ-սուրբ վկայն Քրիստոսի զԱթանագինէս: Եւ իբրեւ եկին հասին յանդիման մեհենացն, մօտ ի գետն Եփրատ, կամէր հանել զնոսա ի բարձրաւանդակ տեղիս մեհենիցն՝ կործանել զբագինսն, և չինել զվկայարանս նոցա: Իբրեւ եկին մօտ ի տեղին՝ ի գետն Եփրատ, իբրեւ ձիոյ արշաւանաք[3] երկու, և դեռ ընդ փոքր ձորակ մի անցանել կամէին ընդ նուր մի սակաւ, զտեղի առին սպիտակ նորիք կա-ռացն՝ ուր կային գանձք աստուածային նշխարք նոցա, ոչ կարացին հանել ընդ ձորակն: Եւ յայտ-նեալ առ Գրիգոր հրեշտակ Տեառն, ասէ. Հանեք-ցաւ Տէր բնակել Սրբոցդ Աստուծոյ ի տեղւոջդ: Ուր և անդէն բազմութեան զօրացն՝ մէն սակաւ աստուածեալ՝ չինեցին զվկայարանն, և զՍուրբսն ի հանդիստ փոխեցին:

1. Թէցամայրն է Անահիտ, անշուշտ պատկերն կամ արձանն այլ ոսկեղէն կամ ոսկեզօծ, որոյ ճո-խութիւնը՝ կարծես՝ ցուցընելու ուղէ հեղինակն՝ կըրկ-նութեամբ անուան ոսկւոյն:

2. Այսպիսի կոչման պատճառն լաւ չիմացուեցաւ: Աստղկան յունական անունն այլ մեզ քերելով:

3. Ձիոյ արշաւանք մի սովորաբար կոչուի ասպա-րէզ, և համարուի իբրեւ 180 քնաչափ (մետր):

ԿԹ

ԱՇԽԱՐՀԱՕՐԷՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՅԵՓՐԱՏ ԳԵՏ

(Ա. ԳԱՆԱՆԳԵՂՈՍ. ՃԻԸ–Թ)

Ի հնուել կեանին եղելոյ՝ պահոցն կատարելոյ, առեալ երանելւոյն Գրիգորի զաչխարհաբանակն զօրացն, և զինքնին զթագաւորն, և զկին նորա Աչխէն, և զմեծ օրիորդն Թոսրովիդուխտ, և զմեծամեծան ամենայն, և ամենայն մարդկաւ բանակին, ընդ առաւօտն լուսանալոյն՝ յափն Եփրատ գետոյն մատուցանէր. և անդէն մկրտէր առ հասարակ զամենեսեան. յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ:

Եւ իրրեւ լինէին մարդիկն ամենայն և թաղաւորն՝ ի մկրտութիւնն, ի Լուրն Եփրատ գետոյն, նչան աքանչելի երեւեալ Աստուծոյ. զի զսեղի առեալ Լուրք գետոյն, անդրէն դարձան ընդ կրունկն: Եւ լոյս սաստիկ երեւեալ ի նմանութիւն սեան լուսաւորի՝ կայր ի վերայ Լուրց գետոյն, և ի վերայ նորա նմանութիւն սէրուբէական խաչին. և այնչափ ծագեաց՝ մինչեւ զհատագայթս արեգականն նուաղեցուցանէր: Եւ իւղն օծութեան՝ զոր արկանէր Գրիգորիոս ի վերայ մարդկանն, չրջան առեալ ի մէջ գետոյն՝ շուրջ զմարդկաւն խաղայր. և ամենեքեան զարմացեալք բարձրացուցանէին զօրհնութիւն ի փառս Աստուծոյ: Եւ ընդ երեկս աւուրն նչանն աներեւոյթ լինէր, և նոքա յաւանն դառնային: Եւ որ մկրտեցանն յաւուր յայնմիկ, աւելի քան զհնգետասան բիւր մարդիկ յարքունական զօրացն:

Եւ անտի եղեալ մեծաւ ցնծութեամբ, և սպիտակ հանդերձիւք, սաղմոսիւք և օրհնութեամբք,

կանթեղօք վառելովք, և մոմեղինօք լուցելովք, և խունկ բորբոքելովք, մեծաւ լռմտութեամբ և բազում զուարթութեամբ լուսաւորեալք և հրեշտակացեալք. և առեալ զանուն որդեգրութեան Աստուծոյ, և մտեալ ի ժառանգութիւն սրբոյ աւետարանին, և ի վիճակ սրբոցն խառնեալք, ծագկեալք ի հոտ անոյշ ի Քրիստոս: Եւ ելեալք ի տէրունական տունն գառնային. և անդ մատուցանէր զօրհնութեան պատարագն, հաղորդէր զամենեսեան ի խորհուրդն սրբութեան. բաչխէր ամենեցուն զսուրբ մարմինն և զպատուական արիւնն ամենափրկչին Քրիստոսի, զկենդանարարն և զկեցուցիչ ամենայն մարդկան, և զարարիչն և զչխարհագործն ամենայն աչխարհի, զաստուածատուր չնորհս առ ամենեսեան:

Եւ գադարեաց անդ չետ այնորիկ աւուրս եօթն, վասն հոգեւոր մխիթարութեան: Եւ յայն աւուրս եօթանցն՝ որ մկրտեցան չարքունական բանակէ անտի, ընդ այր և ընդ կին և ընդ մանուկ, աւելի քան զչորեքբարիւր բիւր [1]:

Եւ զյիշատակս վկայիցն բերելոց՝ ժամագրեաց ոճն մեծ հռչակել, յառաջագոյն կարգեալ անուանացն պաշտամանն՝ ի ժամանակի դիցն Աւանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղւոջ պաշտէին [2] յուրախութեան Նաւասարդ ա-

1· Որ է (4,000,000) չորս միլիոն: Հայոց բազմամարդութիւնն և հրաչալի զարձն՝ չի զարմացընէր այդ թուով, բայց մեկ չաբաթուան մէջ այդքան բազմութեան ծագումին այդ նչանակուած Եփրատայ ափերուն, կըընայ չափազանց զարմանալի ըլլալ:

2· Բառերը տեղափոխելով կարդալու է· ի ժամանակի յառաջագոյն, և այլն· այսինքն, այն օրերուն որ առաջուց ատատուած կարծուածներըը կու պաշտէին, նոյն Նաւասարդի օրերուն ոճն հաստատեց Յովհ· Մկրտչի և Աթանագինեի· որ Հայոց Նոր տարւոյ հանդիսական օրերն էին:

ւոր: Զի ժողովեալ ի յիշատակ մեծի երանելոյն Յովհաննու, և սուրբ վկային Աստուծոյ Աթանագինի, յայնմ աւուր խմբեացեն ի նմին յաւանի:

Յորում և երանելոյն Գրիգորի վարդապետութիւնն իւր ի գործ արկեալ, և ժողովրդոցն առ ընդունել քաղցրացուցանելով, և ծավացուցեալ ըզվարդապետութեանն խորութիւն, և լցուցեալ զամենայնսն հոգեւոր բարութեամբ. հասանել նմա բովանդակ ի վերայ ամենայն երկրին սահմանացն Հայոց մեծութեան աշխարհին, չինելով եկեղեցիս յամենայն աշխարհս, ի կողմանս, յաւանս, ի շէնս, ի գեօղս, յագարակս: Այոյնպէս և թագաւորն յամենայն իշխանութեան իւրում առ հասարակ՝ զբեաց չորս չորս հողս յամենայն յագարակ տեղիս[1]. իսկ յաւանսն՝ եւթն եւթն երդոյ հող, ի ծառայութիւն սպասաւորութեան եկեղեցւոյ, նուէր պարգեւ Տեառն մատուցանէր:

Եւ կացուցանէր քահանայս յամենայն տեղիս. և հրաման տուեալ՝ ղի պաշտեսցեն զմեր Աստուած միայն, զարարիչն երկնի և երկրի. և բազմացուցանէր զպաշտօնեայս սեղանոյն Տեառն՝ ընդ ամենայն տեղիս. և կացուցանէր քահանայս առ սեղան սեղան՝ յամենայն եկեղեցիսն: Այոյնպէս և զեպիսկոպոսսն վիճակեցուցանէր ի պլխաւորութիւն ժողովրդոցն Տեառն[2], և հրաման տայր նոցա հաւատարիմ առաքինութեամբ վերակացու լինել լուսաւորապէս՝ հօտին Տեառն:

1. Ագարակ՝ քիչ-ւոր մարդկան կամ հողագործաց բնակութեան տեղ որ և ոչ գիւղ կըրնայ ըսուիլ:

2. Յայս է՝ որ միաբանութեանը պէս այս քանիերս միանգամայն չէղան, այլ հետ զհետէ. այդ քահանայք և եպիսկոպոսքն այլ՝ յայլեւայլ կողմանց փոքր Հայոց և յԱսորւոց՝ հրաւիրուած էին:

Ձ

ՊԱՏԵՐԱԶՄՆ ՀԱՅՈՑ ԿՐԻՍՏՈՆԷԻՑ ԵԻ ԿՐՄԱՑ ՏԱՐՕՆՈՅ[1]

(ՋԵՆՈՎԲ ԳԼԱԿ.)

Իսկ իշխանքն իրրեւ լուան՝ ելին ի վերայ բլերն, և տեսին զԱրձանն[2], զի արս չորեքհարիւր լոկ՝ թէ աւելի կամ պակաս ունէր ընդ իւրն. վաղվաղակի ի վերայ յարձակեալ քալ իշխանացն, ի փախուստ դարձուցանէին զԱրձանն. իսկ այլ զօրքն Հայոց իրրեւ լուան զձայն գոչիւն, վաղվաղակի ամենեքեան անդր ի բլուրն հասանէին: Իսկ Արձանն յառաջ մատուցեալ՝ սկսաւ թշնամանել զիշխանսն Հայոց, և ասէ. Յառաջ մատիք, ով զենակորոյք, և ուրացողք զհայրենի աստուածսն, և թշնամիք բարեփառին Գիսանեի[3]. ոչ գիտէք զի այսօր Գիսանէ ի պատերազմ ելեալ է ընդ ձեզ, և մատնելոց է զձեզ ի ձեռս մեր, և հարկանելոց է զձեզ կսւրութեամբ և մահուամբ: Իսկ իշխանն Արծրունեաց ի մէջ անցեալ, ասէ. Ո՛վ որ խրոխտասդ ի վերայ մեր. եթէ վասն աստուածոցն մարտնչիս, սուտ ես. և եթէ վասն երկրիդ, բնաւ իսկ անմիտ ես. զի այս իշխանն է Աղեզ տան, և իշխան Սիւ-

1. Ս. Գրիգոր ի կեսարիոյ գառնալով՝ կու գայ նախ ի Տարօն. այդ տեղւոյ և մերձենաց կ'իշխեին քաջ. մերն, յամառ անհաւանք քրիստոնէութեան, և զրկըռղք զժողովուրդն՝ ընդդիմանալու:

2. Որ էր քրմապետն:

3. Ըստ նշանակութեան անուանն՝ (գէս, մազ,) մազոտ չատուած մ'էր, իր պաշտօնեայք այլ՝ երկայնամազ. բայց չատուածն և իր առաջին պաշտօնեայք ի Հնդկաստանէ եկած էին ի Հայաստան:

նեաց տանն, և այլք ի պատուաւորաց՝ զորս գուք իսկ ճանաչէք: Իսկ Գևոնտ որդի Աբգանին ասէ. Լուարուք մեզ իշխանդ Հայոց. այս քառասունամ է՝ զի ծառայեմք մեծի աստուածոյն, և զիտեմք զզօրութիւն նորա, զի ընդ թշնամիս պաշտօնէից իւրեանց ինքեանք մարտնչին: Արդ, մեք պատերազմաւ ձեզ չկարեմք ընդդիմանալ. զի այս տուն է թագաւորին Հայոց, և գուք իշխանք նորա. բայց այս ձեզ յայտնի լիցի, որ թէպէտ մեք ձեզ յաղթել ոչ կարեմք, սակայն լաւ է այսօր մեռանել ի վերայ աստուածոյն մերոյ՝ քան թէ զտանձար նորա ի ձէնջ ապականեալ տեսանեմք, որով և զկեանս առեցաք և զմահ սիրեցաք[1]: Բայց որ իշխանդ ես Անգեղ տան, յառաջ մատիր, զի մեծամարտեսցուք ես և դու:

Յայնժամ ի մէջ անցեալ իշխանն Անգեղ տան և Արձանն, և սկսան անցանել շուրջ զմիմեամբք. և աճապարեալ Արձանն, եհար սրտաւ ի վերայ բարձից նորա, և մերձ տապաւ ընկենուլ զնա. իսկ իշխանն դարձեալ ի վերայ նորա, ասէ. Գիտեա զայս, Արձան, զի տեղւոյս այս Արձաւի են կոչեցոց. զի քեզ սրձանանալ պիտի յայսմ վայրի[2]: Եւ ի վեր ամբարձեալ զձեռն իւր՝ իջուցանէր ընդսուբն իւր ի վերայ աջոյ թիկանցն, և ի բաց ձգէր զպարանոցն հանդերձ ձախ թիկամբն և ոտամբն: Եւ նորա անկեալ յերկիր թաւալէր. և կուտեցին արձան ի վերայ նորա, և կայ ի թաղման ի նմին տեղւոյն, որ դեռ եւս Արձաւի կոչի անուն լերինն:

Եւ մինչ այս այսպէս գործեցաւ, փութանակի եկին հասին զօրքն քրմաց՝ ի վիշապ քաղաքէ[3], և արք Պարտիոյ[4] և արք Մեղոյ ամենեքեան առ

1. Ճարտար և կարիճի զրոյց, բայց անօգուտ:
2. Քարի պէս անշարժ ընկած պիտի մնաս: Խաւն՝ ատոյգ և վիպասանական են բաներս:
3. Ուր և Օձ քաղաք կոչուէր:
4. Մօտ անուամբ երկու տեղ յիշուի ի Տարօն, Պարեխ կամ Բրեխ և Պարտիկ:

հասարակ անդր հասանէին: Եւ այլք յԱյոտօնից եկեալ ընդ նոսա. ընդ ամենայնն, որպէս և ինքեանք յետոյ ասէին, հինգ հազար չորեք հարիւր և յիսուն այր:

Իրրեւ հասին ի գլուխ լերինն, ձայնն գուժեաց յերկոսեան գունդսն. և միաւորեալ դասք քրմացն ընդ միմեանս, յարձակեցան ի վերայ զօրացն Հայոց, և փախստական արարեալ իջուցին զնոսա ի զառ ի վայր լերինն՝ ընդ գեղջն կողմանէ: Իսկ արք գեղջն այնորիկ՝ քանզի դարանամուտք էին, ընդդէմ եկեալ մերոց զօրացն, և յերկուց կողմանց ի մէջ առեալ զզօրսն Հայոց, սկսան կոտորել: Իսկ իշխանն Անգեղ տանն հերձեալ զքրմացն կողմն, և անցանէր յետուստ կողմանէ, և ուչ բերն առնէր. զի անդ արք հետեւակք, որ զառ ի վերին կողմանէն էին, բազում ինչս արարին վիմօք՝ երիվարացն: Իսկ Դեմետր իրրեւ տեսս՝ եթէ Անգեղ տան իշխանն ի բլուրն ել, թողեալ զզօրսն՝ ուչ նմա արաբեալ, նոյնպէս և այլ զօրքն սկսան ձիախաղաց անդր ժողովել:

Իրրեւ ելին ի վերայ բլերն, ճակատեցան դարձեալ առ միմեանս. և կային միայն իշխանքն մեր՝ զօրուն իւրեանց, զի դեռ ամենեքին չէին ժողովեալ. քանզի չորեք հազար այր դեռ ի Մեղոի՝ զգերիան ունէին, իսկ երեք հազարն անցին ընդ Քասեան և ընդ Հարր. իսկ այլքն դեռ ի դաշտի անդ սիրեալ ապատակէին: Եւ յորժամ ճակատեցան առ միմեանս, և կամէին խառնել ընդ իրեար, ժամանեաց նոցա երեկոյ. և ի նոյն վայրի իջեալ բանակեցան մինչեւ ցառաւօտն. և իրրեւ առաւօտ եղեւ, եկին հասին ի նոյն տեղի միացեալք զօրուն Հայոց, և այլք ամենք ի Տիրակատարն քաղաքէ[1], որպէս թէ արք հինգհարիւր, եկին

1. Քաղաքն չկայ հիմայ, բայց իր այլայլեալ անուամբ Միրիկատար լեռն ծանօթ է, հռչակաւոր

ագնել քրմացն: Արդ, իբրեւ հարատացան երկոքին կողմանքն. և էին վեց հազար իննհարիւր քառասուն և վեց արք քրմացն, իսկ հինգ հազար և ութսուն զօրք իշխանացն Հայոց, ապա հնչեցուցին զփող պատերազմացն. և դիմեցին իւրաքանչիւր այր ի դէմ առն զիպանաւորի[1]: Զառաջինն յաղթեցին զօրքն Հայոց՝ քրմացն. իսկ ի նոյն ցեղէն Դեմետրեայ իշխանն Հաչտենից, որ էր ընդ զօրսն Հայոց, կարեալ եւթն հարիւր արամբք ի քրմացն կողմ եղանէր, և սկսաւ կռուել ընդ իշխանս Հայոց: Իբրեւ տեսին զօրքն Հայոց զնա, լքան և յերկիր կոթծանեցան. զի այնպիսի այրն այն յաղթող և հմուտ պատերազմի և կռուոյ, մինչ զի ամենայն իշխանքն Հայոց զողային ի նմանէ. և յանխնայ սկսաւ արեան ճապաղիս հանել. և ամենայն զօրքն զաղաղակ բարձին առ իշխանն Սիւնեաց: Իսկ նորա ձայն տուեալ ասէ. Ա՛յ զայլակորիւն, յիշեցեր զբաս հօր քո, և ի նոյն չաղզակերութիւն դարձար. իսկ նա ասէ. Ա՛յ արծուոյ ձագ, թեւօքդ ես հպարտացեալ. բայց եթէ ի չար[2] սկնատաց անկանիս[3], ես ցուցանեմ քեզ զիմ զօրութիւնս: Իսկ իշխանն Սիւնեաց չհանդուրժեաց առ թշնամանն՝ յարձակեալ ի վերայ նորա, եհար մրճոլն ի վերայ սաղաւարտին, և կարեալ զնա ի զօրացն, և փախստական արար զնա ի վերայ լերինն՝ ընդ արեւելս կայս. և հանեալ հանդէպ Խնձակիճեան վայրուցն՝[4] մղեալ ընկէց յերիվարէն. և իջեալ՝ դանակաւ կտրեաց զգլուխ

Ա՛ռաքելոց վանեաց քով. չէ հեռի և Աղուներդին, այսինքն Աստղկան բերդ. երկուքն այլ այս կիսուհուն առասպել աւանդութեամբ:

1. Ով արու որ հանդիպեցաւ:
2. Ուրիշ ձեռագրի մէջ գրուած է յար:
3. Իբրեւ թռչուն բռնելու սրոգայթով սպառնայ բռնել զարծուածիւ իշխանն Սիւնեաց:
4. Հոչակաւոր Մշոյ Ս. Կարապետի վանուց կողմն:

նորա, և զմարմինն գահավէժ արարեալ, ասէ. Տեսցեն զքեզ անգեղք, և գիտասցեն՝ եթէ արծուոյ հարեալ է գնապատակդ. և ինքն դարձաւ. որ մինչեւ ցայսօր Արծուիք կոչեն տեղւոյն:

Իսկ իշխանն Արծրունեաց ի մէջ անցեալ՝ կըտրեաց զքրմապետան Աչտիշատայ, որոյ անունն էր Մետակէս. և տարաւ փախստական մինչեւ ի գլուխ լերինն՝ ընդ դիտան վայրուցն[1]: Եւ իբրեւ եհաս նմա, ընդդէմ դարձաւ Մետակէսն, և եհար ըզբարձս նորա. իսկ նորա ջեռեալ յարենէ խոցաւածին՝ անապարեալ կտրեաց զթիկունսն և պարանոցսն ի բաց ընկէց, և զդի նորա դարաշոս արար. զոր և Մետակող կոչեն զանուն տեղւոյն:

Իսկ իշխանն Արջռից[2] փախուցեալ ի նոյն վայրս թագեաւ. զոր տեսեալ իշխանին Արծրունեաց՝ որպէս թէ ընդ չտես արար, և գնացեալ մերձեցաւ առ նա. և յանկարծակի յարձակեցաւ ի վերայ նորա. իսկ նորա փախստական եղեալ ընդ անտառն, կտրօն փայտի էանց ընդ սիրտ նորա և ընդ լեարդն, և անգէն մեռաւ. իսկ նորա առեալ զերկոսին երիվարսն և դարձաւ. և անուանեցաւ տեղին այն Արջռից ձոր:

Եւ իբրեւ դարձաւ անտի, եկեալ հանդիպեցաւ՝ զի Դեմետր և իշխանն Անգեղ տան մարտնչէին ընդ միմեանս. և նորա ի վերայ յարձակեալ, կտրեաց զայոյ ուս նորա, և ի վայր ընկէց. և կտրեաց զգլուխ նորա[3], և ձգեաց ի մախաղ իւր, և դարձաւ: Եւ յարձակեալ ի վերայ զօրացն՝ յանխնայ կոտորեալ զիթաւալ առնէին իբրեւ արս հազար երեսուն և ութ. և զայլսն մերկացուցին: Եւ ի նոյն պատերազմին եսպան Դեմետր զորդի Մոկաց իշխանին. որ և սուգ մեծ եհաս իշխանացն Հայոց:

1. Բարձր, չորս կողմ գիտելու տեղ:
2. Տարօնոյ առհմանակից գաւառ:
3. Արծրունեաց իշխանն կտրէ Դեմետրի գլուխը:

Արդ, իբրեւ մեռաւ Դեմետր ի նոյն պատերազմին, հնչեցոյց իշխանն Սիւնեաց զփողս պատերազմին՝ ի խաղաղութիւն. և լսեցին երկոքին կողմանքն ի կոտորելոյ զմիմեանս: Զոր իբրեւ տեսին արք կողմանցն, որ քաւրքն էին, ազաչեցին զիշխանսն ի խաղաղութիւն, զի թագեսցեն զմեռեալս իւրեանց. և թոյլ ետուն: Եւ ժողովեցին զամենայն կոտորեալսն յերկոցունց կողմանցն. և հաւաքեալ գերեզմանս՝ լցին զնոսա ի ներքս, և կանգնեցին ի վերայ գերեզմանացն արձանս, և գրեցին ի նմա այսպէս.

Առաջին պատերազմ որ եղեւ յոյժ սաստիկ.
Պատերազմին գլխաւոր՝ Արծան քրմապետն որ կայ այսր ի թաղմանն.
Եւ ընդ նմա այս հազար երեսուն եւ ութ.
Եւ զայս պատերազմ արարաք Վասն Գիսանեայ կռոց եւ Վասն Քրիստոսի:

Զայս գրեցին ասորի և հելլենացի[1] գրով, և յոյն և իսմայելացի նշանաւ: Եւ ինքեանք իմին երեկօթս առնել յիննակնեան տեղոյն. և փութապէս կոչնական արարին Սրբոյն Գրիգորի, և ինքեանք մնացին անդէն. ոմանք ի դիտանոցն մնացին, և այլ զօրքն ի մարգճակին իջեւանս կալեալ, առ քաղցր աղբերն անտառին:

Յոյժ զարմանալի էր տեսիլ նոցա[2]. քանզի

1. Յոյն և հելլենացի նոյն են, ինչպէս և գիրն և նշանն՝ որ թէ նշանակէ. թերեւս մեկ ազգն՝ և գիրն լատինացի էր. իսմայելացին այլ արաբերէնն է: Այսպէս այլեւայլ լեզուօք գիրք են, որպէս զի ամեն տեսաղք իմանան այն տեղ հանդիպած մեծ գործը, հեթանոսութեան և քրիստոնէութեան կռիւը, միանգամայն և վերջնոյս յաղթանակը:
2. Աչքին, Գիսանէի և Դեմետրի, և իրենց ընկերաց հնդկացեղ քրմաց որդւոցն:

սեաւք էին և գիսաւորք և զազրատեսակք, զի ցեղով ի Հնդկաց էին: Քանզի և կռոցն, որ յայս տեղւոջ էին, պատճառն այս է. Դեմետր և Գիսանէ իշխանք էին Հնդկաց, և եղբարք ցեղովք. դաւ իմն խորհեալ դոքա Դիւնաքեայ արքային իւրեանց, զոր իրազեկ լեալ արքային՝ առաքէ զոր զհետ նոցա, կամ սպանանել կամ յերկրէն հալածական առնել: Իսկ նոցա լեալ մազապուր՝ անկան առ թագաւորն Վազարշակ. և նա ետ նոցա զերկիրն Տարօնոյ, իշխանութեամբ. զոր ինքեանք չինեցին քաղաք, և կոչեցին Վիշապ: Որք եկեալ յԱշտիշատ, և կանգնեցին զկուռն զայնոսիկ՝ յանուն կռոցն զոր ի Հնդիկն պաշտէին: Եւ յետ հնգետասան ամի սպան թագաւորն զերկոսին եղբարսն, ոչ գիտեմ թէ վասն էր, և ետ զիշխանութիւնն երից որդւոց նոցա, Կոռառայ և Մեղտեայ և Հռեւենայ: Իսկ Կուառ չինեաց զաւանն կռոցառս, և վասն անուան նորա կոչեցաւ Կուառս. իսկ Մեղտէս չինեաց ի գաշտի անդ իւր աւան, և կոչեաց զանուն նորա Մեղտի. իսկ Հռեւենն չինեաց իւր աւան ի գաւառն Պալունեաց, և կոչեաց զանուն նորա Հռեւեան: Եւ յետ ժամանակաց խորհուրդ ի մէջ առեալ Կուառ և Մեղտէս և Հռեւեան, ելեալք ի լեառն Քարքեայ, և գտին զայն տեղին բարեհամ և գեղեցիկ. զի ընդարձակութիւն էր արօտ և հովասուն, խոտոյ և փայտի առատաձեռն. և չինեցին անդ դաստակերտս. և կանգնեցին երկուս կուռս, զմինն յանուն Գիսանեայ, և զմինն յանուն Դեմետրեայ:

ՀԱ.

ԴԱՇԻՆՔ ՏՐԴԱՏԱՑ ԵՒ ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍԻ, ԵՒ ԹԵՄ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆԱՑ ՏԱՐՕՆՈՑ[1]

Ես Գրիգորիոս Պալհաւիկ որդի Անակայ, յազգէ Աբշակունեաց, յետ բազում չարչարանաց և վըտանկից զոր կրեցի վասն անուանն Քրիստոսի, խնամօք և տեսչութեամբ կոչմամբ Ամենասուրբ Հոգւոյն, կացի յաթոռ եպիսկոպոսապետութեան տանս Թորգոմայ և ազգանոցեան ապինս։ Զոր գութ և խնամ մեծի ողորմածին Աստուծոյ ծագեաց ի նոսա ի ձեռն իմոյ անպիտանութեանս՝ զոյս գիտութեան աւետարանի փառացն Քրիստոսի. որ զարդարեալ պայծառացան եկեղեցիք Հայաստանեացս։ Աղդ, խնամալքն Աստուծոյ և առաջնորդութեամբ, կամ եղեւ ինձ և սատուածասէր և քրիստոսապսակ արքային Հայոց Տրդատայ, գնալ ի տես և ի սէր և ի միաբանութիւն մեծ քրիստոսասէր և բարեպաշտ աշխարհակալ կայսերն Հռոմայեցոց՝ Կոստանդիանոսի, հանդերձ բազում ազատագունդ զօրօքս Հայոց, եօթանասուն հազարաւ. որով հասեալ ի մեծ մայրաքաղաքն և յարքայանիստ գահն Հռոմ, մեծամեծ պատուով և ամենայատ սիրով ընդալեալ եղաք յատուածասէրն և բարեպաշտ արքայէն Կոստանդիանոսէ. և ի սուրբ առաքելանման հայրապետէն Սեղբեստրոսէ. կացեալ ժամանակս ինչ

1. Նման իմն է զրուածս հնչակաւոր բայց անվաւեր Դաշանց Թաղոյն. ասելի ընդունելի է սա տեղագրական անուամբք և ծանօթութեամբք. բաւական հին թուի և վանաց առաջնորդք կամ միաբանք մի գրուածք, կէս հին կէս նոր և ոամիկ ոճով, որոյ ուղղագրութիւնն անփոփոխ պահեցինք։

առ նոսին, դաշն սիրոյ և միաբանութեան եղաք առ միմեանս, Քրիստոսի արեամբն գրել և միջնորդել. զի անջրելի լիցի ուխտ և միաբանութիւն Հայոց և Յունակաց մինչեւ ի կատարած աշխարհի։

Իսկ զկնի դառնալոյն մեր յաշխարհս Հայոց, ի ժամ բաժանմանն պատվեալք եղաք ի նոցանէ փառօք մեծամեծ և անթվելի պարգեւօք. զոր ամենայնի կատարեալ և ջերմեռանդ սիրով խնդրեցաք մեք ի նոցանէ՝ կապ սիրոյ և հաստատութեան Դաշանց՝ զոր եղաք, ի նշխարաց սուրբ և գլխաւոր Առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի։ Եւ նոցա չարժեալ ի սիրոյ, մանաւանդ թէ ի վերին խնամոցն, տվին զահեկ բազուկսն Պետրոսի և Պաւղոսի, և զալ ձեռն սուրբ Առաքելոյն Անդրէի, հանդերձ այլ բազում նշխարաւք պարգեւ Հայաստանեաց, գանձ անկորոպտելի և պատճառք փրկութեան ազգի մարդկան։ Մեք ընդալեալ մեծաւ ուրախութեամբ՝ բերաք յաշխարհս Հայաստանեաց. եկեալք ի գաւառս Տարաւնոյ, ի տեղոյն յորում հանգուցեալ էր նշխարք Սրբոյ Կարապետին և Յովհաննու Մկրտչի, ժողովեալ զամենայն եպիսկոպոսունս և զվարդապետս և զբոլոր դասս պաշտօնէից՝ բազում պաղատանօք խնդրեցաք ի Քրիստոսէ յայտնել տեղի արժանաւոր հանգստեան նշխարաց Սրբոյ Առաքելոցն՝ ի Հայաստան աշխարհիս. զոր լուաւ Աստուած, այն որ զկամս երկեղածաց իւրոց առնէ և աղօթից նոցա լսէ. և յայտնեաց ի ձեռն հրեշտակի իւրոյ առաքելով յերկնից, եցոյց զտեղին արժանաւոր՝ առ ստորոտով լերին Տարօնոյ ի յարեւելից կողմանէ, ի տեղոյն որ կոչի Արեգակնաձագ միջնարլուր. ուր բերեալ ամիրափեցին զնշխարս Սրբոց Առաքելոցն, զոր հիմնարկեցաք ի վերայ մեծի և երկնանման խորան եկեղեցի[1], յաւրինել զտեղին բնակութեան մաքուր միանձանց և աս-

1. Այս է մեծաձայկ վանքն Առաքելոց։

տուածահաճոյ ձգնաւորաց. առաքնորդ կարգեալ նոցա զոմն ի հանճարեղ և ի մաքուր կրաւնաւորաց, Եղիազար անուն[1], ազգաւ ասորական, բայց հաւատով ճշմարիտ քրիստոնեայ, յաստիճան քահանայութեան կարգեալ՝ մերով ձեռնադրութեամբ:

Յորում ժամանակի ասուածածասէր և բարեպաշտ արքայս մեր Տրդատ, փարթամացոյց գաւրք ուխտս պայծառ սպասիւք և բազում շինանիստ տեղեաւք, յամենայն գաւառս իշխանութեան իւրոյ. և հաստատեաց սահման վանից ի չորս դեհայ[2]. յարեւելից կողմանէն՝ Աղուաց հողվայրքն, գայ ձորովն Յեիցգունոյն ազբիւրն. և ելանէ քարագլխովն ու մայրաբերանովն՝ գայ ի միջին ճանապարհն որ երթայ ի.... գաւթայ ի Գողոզց ազբիւրն[3]. ելանէ ի Մոկաց խաչն, ի հարաւոյ կողմանէ անցանէ յեռեւ Մկնաբերդոյ, յանդիման այրին. գայ ի Մոկաձորոյն ճանապարհն՝ իբրեւ Ջրառանի[4] կարէ գնչտին քարն. և անցանէ դիմաց Յաթուանանց, որ գնայ ի Ջրնորոյն, իջանէ ճանապարհովն ի Գաւիթանիք ու անցանէ ի Ձկանիտոզ, ու ելանէ ի Ջետոզ ու երթայ ներքեւ Վանաւարգայ դիմաց Քառպատոյն[5] զոր կարէ կաքվոզ ազբիւրաձորն ընդ Կախմախոտան[6] ի վայր մինչ ի Մեծ Ձորն. և երթայ ձորովն ներքեւ Քօղմեռիկ[7] ի մեծ ճանապարհն՝ որ գնայ ի բերդն, դառնայ ճանապարհին հատուածն, երթայ ի Աւիկեռն, անցանէ յեռեւ Ոդինի և իջանէ ի Հորձոր յաւուն,

1. Որոյ անուամբ Ղազարու վանք կոչեցաւ մեզն:
2. Մանրամասն սահմանագրութիւն թիւմի Վանացն. տեղեաց և անուանց մասն մի յայտնի են, բայց շատն հիմայ անծանօթ:
3. Կամ Գողոզց:
4. Կամ յաւուրկ անուն տեղւոյն, կամ ջրոց ժողոված տեղ, իբրեւի տեղ ուրիշ բաւ պէտք էր:
5. Անմշակ կամ անջէն տեղ նշանակէ:
6. Կաղամախի ծառոց տեղ, կաղաւնախոտա լսելի:
7. Ծանօթ է Քիօշկեր լեռն:

ելանէ յԱկնջրդեաց խաղն. գնայ սարովն Ծծուակին գլխովն ի կրձիլանց խաղն, Ջախոզց ճանապարհաւն, և Հաճատորոզց խաղովն[1] իջանէ կարմիր իւղն ի ջրաղաց... յեզր գաշտակին ի խաչն. և երթայ ճանապարհաւն ի հօղվայրքն[2]:

Այս է սուրբ թեամբ սահման վանացն, որ էր յառաջ դղեկին Տիրինկատար կոչեցեալ. զի էր նա տեղի Անահիտ պատկերի, զոր մեք զօրութեամբն Քրիստոսի խորտակեցաք, և տվաք զերդն Տիրինկատարի՝ իւր քաղաքովն և ամենայն սահմանաւքն՝ ընձայ Սուրբ Աստուածոյն. և զրեալ կնքեցաք հայրապետական մեծաւ զրաւորական մատանեաւ, զի անխախտելի լիցի մինչեւ ի կատարած աշխարհի:

Այդ յետ մեր անցման՝ որ տիրեն այսմ աշխարհի թագաւորք կամ իշխանք, ի մերոց կամ յաւտարաց, մի իշխեսցեն հանել զսա ի սուրբ ուխտէն՝ յափշտակելով կամ խորելով կամ զինչ և է պատճառանաւք. և թէ ոք յանդգնեսցի զայս գործել, անէծս առցէ ընդ Կայէնի և ընդ այլ չարագործսն, և յամենայն լեզուէ նզովի լիցի:

1. Փոքր առուակ մի երեւցընէ: Սովորաբար հաւաստաւոր կոչուին կլօնաւոր կուսանք:
2. Գերեզմանատեղին:

ՀԲ

ՀԱՒԱՏԱԼՆ ՎՐԱՑ Ի ՁԵՌՆ ՆՈՒՆԵՑԻ[1]

Հիւանդացաւ մոգ մի ազգական թագաւորին, և ասէ ցՍուրբն Նունէի՝ Միհրան[2]. Դու գուսպ ես Աբամագդայ, և կամ գաւակ Զադհնայ[3], որք բեբրին զքեզ աստ իբրեւ զօտար, և չնորհեցին քեզ զարհուրելի բժշկութեան, զի փառաւորես զքեզ. և արդ արա՛ բժշկութիւն ընդանոյս իմոյ՝ անուամբ Նոցա, և մի մոլար հաւատոյն Յունաց պատմող լինելիցիս. զի թէպէտ և Թրուջան աստուածն Պարսից՝ ամպով և[4] կարկտիւ վանեաց և տարաւ զնոսա, այլ տեղին կայ հաստատուն. և այն պատեբաղմ սովորութիւն է աշխարհակալաց. այլ և հին Աստուածք հարցն մերոց կան, Գայիմ և Գացիմ, և են արեգական ծագողք, և անձրեւաց տուողք, և արդեանց երկրի բուսուցիչք: Պատասխանի ետ Սուրբն, և ասէ. Կին մի գերի եմ ես, ստեղծուած և երկրպագու անեղեւոյթ և անծանօթ Աստուածութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, որ է արարիչ երկնի և երկրի. որ վասն բազում ողորմութեան իւրոյ՝ տայ արհամարհողաց իւրոց կեանդանութիւն[5] և անուն և պատիւ, որպէս և քեզդ: Զի ես քեզ միսս և բան, զի գիտասցես զերկնից

1. Հեղինակ բանիս է Ղուռանիչի վրացի. Թարգմանողն կարծուի Վարդան պատմիչ: Բայց Նունեի անունն և զործն տարբեր կերպով պատմեն այլ պատմիչք:
2. Թագաւորն Վրաց:
3. Կարծուի Աբամագդ Հաստատուածն Վրաց:
4. Թրուջանն Թուի Զրուան. միւս դիք Վրաց՝ անծանօթք են ինձ, կարծեմ՝ ուրիշներու այլ:
5. Աստուած՝ նա և զինքն արհամարհողներուն՝ կու տայ կենդանութիւն, և այլն:

բարձրութիւնն, և զաստեղաց դիրս, և զծովու խորութիւն, և զերկրի լայնութիւն, և սոքօք ճանաչեսցես զկառավարութիւն սոցա և զօրհնիչն. և ասեմ քեզ, եթէ անհաս մեծութիւնն այն՝ որ զպեցուցանէ զերկինս ամպօք, և որոտայ ձայնիւ օդոց, և ի ձեռն մեծի Կիտոսին[1] չարժէ զամենայն երկիր, նա իջեալ ի բարձանց ողորմութեամբ և առեալ զմեր բնութիւնս՝ կատարեաց ժամանակս երեսուն և երից ամաց, և յանմիտ ազգէն անարգեցաւ և խաչեցաւ, կամօք և ոչ ի հարկէ, և երեքօրեայ յարուցեալ վերացաւ յերկինս, և քարոզս առաքեաց յաշխարհ՝ հաւատալ յանուն նորա, և կեալ աստուածպաշտութեամբ, ի բաց կացեալ ի կռոցն անոտեաց. զոր և ես քեզ աւետարանեմ, զի հաւատասցես զոր ինչ եթէ առնեմ ես անուամբ նորա: Եւ կայ աստ պատմուճան մի նորա ծածկեալ, և որպէս ասեն՝ մաշկեակն Եղիայի տեսողին Աստուծոյ աստ է, և զի յայտնապէս ուսոլիք զաստուածեալս, բերէք առ իս զմոգն Թորաստանեան՝ զԹզնամին ճշմարտութեան, և ուրասցի զաղանդ իւր, և հաւատով դաւանեսցէ զոր ինչ տամ նմա ասել:

Եւ իբրեւ ածին առ նա ի գրախտ անդր, ի ներքոյ անկոյն չոճեաց, գարձոյց զնա յարեւմուտս, և ասել ետ երից, եթէ Հրաժարիմ ի քէն, սատանայ. և գարձուցեալ յարեւելս ասել ետ, Անկանիմ առ քեզ Սուրբ Երրորդութիւն, և դիմեմ ի քեզ՝ խաչեալդ Աստուած: Եւ ելաց Նունէ, և տեսանագրեաց խաչին. և ել ի նմանէ ոգին չար իբրեւ զծուխ. և ողջացաւ այրն ի դիւէն և ի ցաւոցն, և հաւատաց ի Քրիստոս ամենայն սրտմբ իւրով. և փառաւորեցին տեսողքն զՀայր և զՈրդի զՀոգին Սուրբ, յաւիտեանս յաւետենից. ամէն:

1. Վրացերէն բնագրին մէջ չկայ այս աւանդութիւնս. որոյ հաւատային չառաք հին առեն, թէ մեծ կէտ ձուկն մի է պատճառ ալէկոծութեան ծովու:

Յետ այսորիկ գնաց Թագաւորն յորս՝ ընդ Մռխանարն[1], յամսեանն յուլիս ի քսանն, յաւուր շաբաթու. և մինչ էին ի ճանապարհին՝ հնչեաց սատանայ ի սիրտ Թագաւորին, և ասէ ցչորս խորհրդակիցան իւր. Ընդէ՞ր հեղգացաք մեք ի պաշտելոյ զդիան՝ յորմէ հետէ եկն կախարդդ այդ և քարոզեաց զքրիստոնէութիւն. և արդ կորուսցուք ըզմոլորեալսն ի նմանէ, նովաւ հանդերձ, և յաճախանացուք ի պաշտօնն հայրենի: Եւ նոցա լուեալ՝ խնդացին, և առաւել եւս յորդորեցին, ասելով ընդ խորհեալսն. և չրջեալ նոցա ընդ Մուխնարայ սահմանն՝ եկին ի լեառն Թխուրոյ, զի ի բարձրութենէ անտի տեսցեն զկազբս[2] և զՈւիւիսցիխէ[3]: Եւ ահա եղեւ ի վերայ մէգ և մառախուղ, և խաւարեցաւ արեգակն ի միջօրէի, և եղեւ գիշեր, և անկաւ ի վերայ արհաւիրք. և Թոզեալ զԹագաւորն՝ ցրուեցան. և նա ի գոզման եղեալ և յուսահատեալ ի կենաց՝ ասաց. Յիսուս Քրիստոս, Աստուած Նուեհեայ, ստացիր զիս քեզ ի ծառայութիւն, և հանի զժոխոց զանձն իմ, զի աստուածդն իմ չկարացին ինձ օգնել. և հաւատամ զի դու կարող ես. և քո է օր և գիշեր. խաչեալդ Տէր, խաչիւ քո կեցո զմեզ. զի կարծեմ ես եթէ ի վերայ ամենեցունց ոչ է խաւարս այս, այլ մեր միայնոյ, որ զկնի լուսոյդ եկեղեցեան[4] սիրեմք զխաւարն:

1. Մուխնար՝ որ յետոյ Մռխարաւ կոչուեցաւ, նշանակէ կաղնուտ. կաղնի ծառոց անտառ, ի հիւսիսակողմն Մծխեթայ, ուր կար և համանուն քաղաք մի:

2. Կովկասու բարձրագոյն լեռներէն մէկն է Թըխուրի, այլ գրեթէ իր սարսռան է:

3. Ըստ աւանդութեան վրաց Ոչիլոս կամ Ոչիլիս էր սրդէ Մցխեթոյ որդւոյ Քարթլոսի՝ եղբօր Հայկայ. չիներ է բերդաքաղաք մի, որ իր անուամբն կոչուած է Ոչիլիս-ցիխէ:

4. Թէ լոյս ծագելէդ վերջն այլ՝ մենք զեռ խաւարը սիրեմք:

Եւ զայս իրրեւ ասաց՝ ծագեաց արեգակն պայծառ օդով, և գտին զնա զօրքն իւր. և իջեալ յերիվարացն՝ անկան ի վերայ երեսաց իւրեանց, և երկրպագեցին խաչելոյն՝ ասելով. Դու ես Աստուած յերկինս ի վեր և ի վերայ երկրի, և քո է լոյս, և քո է խաւար. զքեզ օրհնեմք Տէր տերանց, և Աստուած աստուածոց. և զի ստացար զմեզ քեզ ի տեղւոջս յայս՝ աստ կանգնեսցուք զնշան խաչի քո, որով փառաւորի անուն քո անպատում աքանչելեաքս, անուն քո յաւիտեանս: Եւ դարձան ի տուն, աւետաւորս արձակելով յառաջագոյն՝ որոց նստէին ի սուգ վասն չար համբաւոյն՝ զոր լուեալ էին: Իսկ իրրեւ լսեցին զխաղաղութեամբ դառնալն, ելին մեծաւ ուրախութեամբ ընդ առաջ Թագաւորին, ամենայն բազմութեամբ քաղաքին. և ասէ Թագաւորն. Փառք տուք ի մի բերան Քրիստոսի Աստուծոյ՝ արարչին երկնի և երկրի. և սա է Սուրբն Նունէ՝ մայրն իմ, քանզի Աստուած նորա՝ Աստուած իմ է: Այսմ ցնա. Այհա աղօթէ ի մորենւոջն՝ վասն քո, յիսուն ոգւովք: Եւ չոգան առ նա, և անկեալ երկրպագէին նմա: Եւ նա բուռն հարեալ կանգնէր զնոսա, և դարձուցանէր յարեւելս. և խրատ տայր՝ փրկողին իւրեանց Քրիստոսի երկրպագել, և խոստովանել զնա Որդի Աստուծոյ կենդանւոյ: Եւ լայր ամենայն բազմութիւնն ի տեսանելն զԹագաւորն, և տային օրհնութիւն Աստուծոյ կենդանւոյ:

ՀԳ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ ՏՐԴԱՏԱՑ ԱՌ ԱՆՏՈՆ ԵՒ ԿՐՕՆԻԴԷՍ

(Ջ ԵՆՈՎՔ Գ Լ. Ա Կ.)

Իբրեւ եկաք ի տեղին Իննակնեան թագաւորաւն հանդերձ, խնդիր արարաք Անտոնի և Կրօնիդեայ. իսկ պաշտօնեայքն ասեն. Այս ամ մի է, սակաւ ինչ պակաս, մեք զնոսա չեմք տեսեալ: Եւ տրամեցաւ յոյժ թագաւորն, զի ի վաղնջուց ցանկայր տեսանել զնոսա. իսկ Սուրբն Գրիգոր առաքեաց խնդրակս զԱլբիանոս եպիսկոպոս՝ հանդերձ երկու սարկաւագօք, պատուէր տուեալ նմա, եթէ ընդ առաւօտն եթանեն յանտառէն ի բլուրս ուրեք, և դու անդ կաց զգոյշ, զի մի զքեզ տեսցեն և փախիցեն: Եւ զաւուրս չորս ոչ կարացին գտանել. իսկ ի լուսանալ հինգերորդին առաւօտուն՝ լուան զձայն սաղմոսերգութեան նոցա, զի գային յանտառէն յարեւմտից կուսէ, ի քաղցրահամ աղբեւրէն. և եկեալ ի բլուրն արեւելեան՝ ի տեղիս արարոցն Դեմետրեայ, զոր կոչեմք Աբեղու բլուր. զի և անդ իսկ էին գարափոսք խուցք նոցա, ի կողմանէ արեւելից: Եւ իբրեւ մերձեցան ի վերայ աղբերն, սկսան սաղմոսել այսպէս. «Լսելի արա » ինձ, Տէր, առաւօտու զողորմութիւնն քո»: Իսկ Ալբիանոս ասէ. Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ: Եւ ազօթեալ անդ, ասէ Անտոն ցԱլբիանոս. Բարի եկիր ճանապարհորդ խաղաղութեան: Եւ նա ասէ. Բարւոք գտաք զձեզ, օթեւանք Սրբոյ Հոգւոյն, և ձրագք լուսոյ. այլ և աւետիք ձեզ, զի Սուրբ Գրիգոր և Տրդատ թագաւորն ի բնակութիւնս ձեր են եկեալ, և յոյժ խնդրեն զձեզ: Իսկ նոքա ասեն. Եւ ձեզ աւետիք, զի սատանայ կործանեցաւ, և

Աստուած այսօր կրկին ուրախութեամբք լցոյց զսրտածս իմմամբ Սուրբ Հոգւոյն: Եւ կոչեցաւ տեղին այն Աչետեաց բլուր: Եւ առաքեաց Ալբիանոս առ մեզ՝ զերկուս սարկաւագան աւետաւորս. զոր լուեալ մեր՝ յոյժ ուրախ եղաք: Եւ դարձեալ զնոյն սարկաւագունսն առաքեաց Սուրբն Գրիգոր աւետաւորս առ Տրդատ, ի ստորոտ Արձանին. որ յոյժ խնդութեամբ լցեալ՝ եկն ի վանսն, հանդերձ գըլխաւոր իշխանօքն. իսկ ի տեղին՝ ուր գաւառիսն եառն, հրամայեաց վեմս ժողովել բլրաձեւս, և կանգնեաց անդ նշան խաչի. զոր և կոչեմք Աչեւեաց խաչ[1]:

Եւ առեալ Սրբոյն Գրիգորի զգաստ պաշտօնէիսն, և զնշան տէրունական խաչին, հանդերձ Յահիւք և անուշահոտութեամբ խնկոց և պաշտամամբք, որ և ձայն ուրախութեան պաշտօնէիցն զանտառն հնչեցուցանէր. և մերձեալ ի բլուրն՝ ընդ առաջ եղեն մեզ և միաբան ի բլուրն եղեալ աղօթեցաք: Եւ յետ ողջունին՝ ասէ Սուրբն Գրիգոր. Բարիոք գտաք զձեզ՝ առաւօտք խաղաղութեան: Իսկ նոքա ասեն. Բարի եկիր, արուեստակդ արդարութեան, որ զսիեղերս լուսաւորես. մշակ առանց ամօթոյ, և աշտարակ բարձրագոյն քան զերկինս: Եւ բազում անգամ համբուրեալ զմիմեանս, և առեալ զնոսա՝ գոյաք յեկեղեցին. զի ոչ էր բլուրն հեռի ի տեղւոյն, այլ սակաւ մի ի բացեայ ի հիւսիսոյ կողմանէն, և ինքն հայի ընդ արեւելս, բարեխամբ և դիտանոց երեւակ բազում վայրաց: Իբրեւ ածաք զնոսա առ թագաւորն, և նա արտասուեալ աղօթէր օրհնել ի նոցանէ. և յարուցեալ համբուրեաց զնոսա, և նստան առաջի վկայարանին: Եւ բազում վարդապետութեամբ խօսէին ընդ նոսա, և ուսուցանէին զորբութեան կրօնս:

1. Յակաղք նահապետին օրէն, Քրիստոսէ 2000 տարի առաջ, հին ազգաց սովորութիւն էր, նշանաւոր դիպուածի մի յիշատակ թողուլ նոյն տեղ՝ քարեր դիզելով, և իբրեւ քարաբլուր մի ձեւացընելով:

ՀԴ

ՏՐԴԱՏ ԵՒ ԳԵԴՌԵՀՈՆ

(ՁԵՆՈՎԲ ԳԼՈՒԽ·)

Թագաւորն և Գրիգոր մեծք հանդերձ ի փոքր ամրոցին կայաք և աղօթեաք. և մի ոմն ի զօրացն Սիւնեաց՝ պատանի մի ըմբռնեաց ի հիւսիսակա-նացն, և էած առ Թագաւորն: Եւ իբրեւ տեղեկացաւ եթէ ի քո զօրացդ և իշխանացդ է իրդ[1], և այս է Թագաւորն Հիւսիսի՝ Գեդեհէոն. և վասն ունելոյ զքեզ եկեալ՝ յիսուն և ութ հազարաւ: Եւ հրամայեաց զօրացն պատրաստել զյեսին աւուրն՝ մինչև պատերազմ[2]: Եւ իբրեւ առաւօտ եղեւ զօրքն սկսան կազմել փողոցս[3] Թագաւորին՝ զի յԱրձանն ելցէ: Իսկ Թագաւորն Հիւսիսոյ հրամայեաց զօրացն՝ զառաջս ունել վեց հազար սպառազինօք. արգելուլ կամէր զԹագաւորն Տրդատ: Որոյ եկեալ յառաջն՝ արգելուչն զնա ի գլուխ Արձանին. և զբազում ժամս ոչ կարացին ելանել ի վեր: Զոր տեսեալ Սրբոյն Գրիգորի՝ յարտասուս եղեալ, և ձայն բարձեալ ասէ. Մկրտիչ և Կա-բապետ Քրիստոսի, տեա՛ զինչ գործեն. և հասիր յօգնութիւն, և արա զայս օրս նշանաւոր յազգս: Եւ առեալ զնշխարս Աւաքելոցն՝ զոր բերեալ էր ի Հռոմայեցւոցն, տեառնագրեաց ի վերայ Թըշ-նամեացն: Եւ առժամայն այժ առեալ Տրդատայ, քաջառնաբար ձայն բարձեալ՝ յօգնականութիւն

1. Ա.յսինքն, Տրդատայ իշխաններէն էին զինքը մատնողք Հոնաց իշխանին կամ թագաւոր Հիւսիսի կոչուածին:
2. Իբր guerre décisive.
3. Անցնելու ճամբաներ բանալ:

կոչելով զՍուրբ Կարապետն, և կարեաց զոտամ առաջապահիցն, և ել ի վերայ բլերն: Եւ որք ի գիշերին թագուցեալ էին, յարուցեալ ի մէջ առին զայն զօրն, և փախստական արարեալ իջուցին զնոսա ընդ հարաւակողմն յանտառն, և որպէս ի թակարդ արկեալ, սուր ի վերայ եղեալ՝ կոտո-րեցին. և անուանեցաւ տեղին այն Թակարդս:

Իսկ զօրն հիւսիսի որպէս դիպող ժամանակ գը-տեալ, յարձակեցան ի վերայ գեղջն, և գեռ հա-նէին զմեզ յամրոցէն. զոր տեսեալ չորեքհազար արանցն, որ ի վերայ գեղջն կային, յարձակեալ ի վերայ՝ փախստական արարին զնոսա ի ներքոյ գեղջն. զոր և ոմանք յայգորդացն գլալարդ առ-նէին[1] զճակատ երիվարացն, և ոմանք ի հեծելոցն ի վիմաց անտի մեռան:

Իսկ զօրք մեր ցրուեալ զնոսա ընդ այգեմէջն՝ սակաւք փրծան. և անկան ի տեղւոջն յայնմիկ վեց հարիւր այր ի Թակարդն. իսկ երկու հազար եւթն հարիւր այր, և զօրս պարսեաւքն կոտորեցին՝ ութ հարիւր վեց. և ընդ ամենայն՝ չորեք հազար երկու հարիւր և երկոտասան այր[2]:

Եւ ապա դարձեալ Թագաւորն ի փոքր կոտորա-ծէն, ել ի գլուխ Արձանին. և հարեալ զազգարար փաղն, մինչեւ ամենայն զօրքն ժողովեցան ի մի վայր: Եւ իբրեւ եկին հասին ի տեղին, և ըզ-Սուրբն Գրիգոր իջուցին յանտառն, և պահէին զնա աւր վեց հարիւր: Իսկ Թագաւորն Հիւսիսոյ առեալ զզօրսն իւր, գնաց ի Հաշտենից տափա-րակն. և առաքեաց Թուղթ առ Տրդատ, թէ, Եկ, ի վաղիւն տացուք պատերազմ, և եղիցի օր յա-ւիտենական ի մէջ երկոցունցս. կամ տացես զիշ-խանսն իմ ինձ, և հարկս հնգետասան տարւոյ. ապա թէ ոչ, քանզեմ զերկիրս քո սրով և զե-

1. Գարերով ձիոց ճակատը գլուխը կոպրտէին:
2. Մանր թուոց մէջ սխալ կայ, որ գումարին ամ-բողջութեան չեն համեմատիր:

րութեամբ և մաշուամբ, որպէս զի ծանիցես ըզդէմս խոզութեան քո, որ եղեր առաջի զօրաց քոց. արդ, ըստ այսմ արա զպատասխանիսդ: Եւ ընթերցեալ զթուղթն, ոչ արար նմա պատասխանի, այլ յարուցեալ զնաց երեսուն հազար արամբք ի պատերազմ, և երթեալ՝ յանդիման նոցա իջաւանեցաւ ի Մուշեղամարգն Հաշտենից: Եւ ի վաղիւն սկսան ռազմ գործել և ճակատ յօրինել. և փոզոց թողեալ պատերազմին՝ գրուներկու, և զնացեալ տեղեացն զԲագրատունեացն իշխանն կացուցանէր: Իսկ զաջ թեւն զօրուն՝ տայր ի ձեռն իշխանին Սիւնեաց, և զահեակ թեւն ի ձեռն իշխանին Անգեղ տանն. իսկ զգահերէկ իշխանան կացոյց Թիկնապահս իւր[1]. և այնպէս յօրինեցան երկոքին ճակատքն, և պատրաստեցան ի խառնն:

Իսկ իբրեւ ամենայն զօրքն սկսան ընդդէմ իրերաց անցանել, ձայն բարձեալ արքայն Հիւսիսոյ առէր. Ա՛րքայ Հայոց, ինձ մատիր: Եւ իբրեւ եկին ընդդէմ իրերաց, սկսան իբրեւ զմրճաւորս քաջահատաց կամ իբրեւ զառնածս[2] որք պատեն զանթիս հրայրեաց. մինն առնոյր և միւսն իջուցանէր: Քանզի արքայն Հիւսիսոյ մեծաշռաւակ էր և կորովի իբրեւ զՏրդատ. և բազում կոփեալ միմեանց, ոչ ինչ եղեւ: Բայց սկսաւ պակասիլ արքայն Հիւսիսոյ. և գիտացեալ եթէ վհատելոց եմ, և քանզի ճօպանաւոր էր, ամապարեաց և ձգեաց զճօպանն, և արգել զաջ թեկն (Տրդատայ) ընդ պարանոցն. և փութանակի դարձաւ և կղթեաց[3] զճօպանն, մինչ զի և չկարաց բնաւ չարժել զձեռն՝

1. Հայոց հարիւրաւոր իշխանաց և գաւառապետաց մէջ գլխաւորք էին չորս իշխանք, երիցին չորս կոչմանց սահմանապահք. սոցանք սովորաբար կուչուին Գահերէկք, բարձրագոյն կամ առաջին աթոռ նստողք թագաւորին քով. կոչուին եւս Բդեաշխք:

2. Տաքցուցած մեռած ծեծող գործաւորք:

3. Ձուանը քաշել՝ գլորել, պրկել:

Տրդատ: Եւ մտրակեալ զկուշտ երիվարին զկնի Գեղեհոնին, այնպէս փութացեալ՝ մինչ զի ոչ ետ քայլել նմա առաջի իւր տասն քայլ: Իրրեւ եհաս նմա, ասէ. Կատաղի չուն, խառանեցեր զկնի քո լլացդ[1]: Եւ ամբարձեալ զաջ ձեռն իւր ի վեր, իջուցանէր զօսլսերն ի վերայ ձախոյ թիկանն Գեղեհոնի. և անցուցեալ ընդ գօտին, և զողն երիվարին հանդերձ գլխովն բաժանեալ՝ յերկիր ձգեաց: Եւ այն էր զարմանալի, զի գլուխն և աջ ձեռնն և աջ ոտն ընդ միմեանս, և ողջ երիվարին ընդ մէջ հերձեալ՝ թաւալէին:

ՀԵ

ՄԱՀ ՏՐԴԱՏԱՑ ԵՒ ՈՂԲՔ Ի ՆՈՑՆ

(Մ. ԽՈՐԵՆ. Բ. ղբ)

ԶՍրբոյ և զՄեծէ և զերկրորդ նահատակէ, զվերոյ լուսաւորութեանդն լուսաւոր վերակացուէ՝ ճառելով, զի Քրիստոսէ հանուրց եղելոցս ճշմարիտ թագաւորէ, հրաշափառագունիւ պարտ էր անցանել բանիւ, որպէս զգործակէ և զհաւատար ճրագնողէ վերոյ նախաշաւղի և լուսաւորութեանդ նահապետի. որպէս թուեցաւ հանդ Հայոցն Սրբոյ՝ երիցացուցանել զիմ Լուսաւորիչն՝ վկայութեանն միայնոյ վիճակաւ, ի վերայ բերեմ՝ թէ և առաքելութեանն[2]. իսկ որ ինչ զկնի այսորիկ, զուգա-

1. Թուի ըսել, Քու չղերուդ հետ պրկեցիր ճօպանդ:

2. Այսինքն, Ս. Գրիգոր իրրեւ խոստովանող վկայ Քրիստոսի և առաքեալ՝ առաւելութիւն ունի քան զՏրդատ. ուրիշ մասամբք հաւասար են՝ մեր ազգին ըրած բարեաք. և մասամբ՝ վերազանցէ Տրդատ:

բան և հաւատարագոյն: Այլ, զառաւելութիւն ասեմ առ զթագաւորին. քանզի խորհելն յաղագս Աստուծոյ և ճշնագիտիկ լինել՝ զոյգ երկոցունց, իսկ նուաճել հաւանեցուցանողականաւ կամ բռնաւորականաւ բանիւ, առաւել էր թագաւորին չնորհքանզի ըստ հաւատոցն՝ ոչ ինչ կասեցուցանէր զգործն. այլ ազագաւ կոչեմ և զսա՝ նախաշաւիղ ճանապարհ և լուսաւորութեանցն մերոյ հայր երկրորդ: Բայց, զի պատմութեանց և ոչ գովեստից է ժամանակս, մանաւանդ զի և հակերգութիւնս՝ ըստ իւրաքանչիւր պատմագրաց արտասանութեանց և ոչ յատուկ ի մէնջ չարադրեցաւ, անցցուք ի կարգ բանիցս՝ որ ինչ յաղագս սորա:

Սա՝ յետ հաւատոյն որ ի Քրիստոս՝ ամենայն առաքինութեամբք բացափայլեալ, եւս քան զեւս յառախէր՝ որ ինչ յաղագս Քրիստոսի գործ և բան. աստեղով և հաւանեցուցանելով վեհագոյն նախարարսն, միանգամայն և զամենայն բազմութիւնս ռամկին, լինել արդարեւ Քրիստոսի[1]. որպէս զի վկայեսցին հաւատոցն ամենեցուն և գործքն: Այլ, զխոստովանութիւն կամիմ ասել, (կամ) թէ և զամբարհաւաճութիւն ազգիս մերոյ յիսկզբանցն և այսր, որպէս անհամբոյր բարւոյ և ճշմարտութեան անհարազատ. կամ թէ բնութիւն ունելով զարձագայութիւն և զկամակորութիւն, ընդդիմանան կամաց թագաւորին՝ յաղագս կրօնիցն քրիստոսականաց, զհետ երթալով կամաց կանանց և հարճից: Որում՝ ոչ կարացեալ ներել թագաւորին, ընկեցեալ զերկրաւոր պսակ՝ զհետ ընթանայր երկնաւորին. արագ հասանելով ի տեղի սուրբ ծննդեանն Քրիստոսի, ծակամուտ լեռնակեցիկ եղեալ[2]:

Աստանօր ամաչեմ ասել զճշմարտութիւնն, մա-

1. Ճշմարիտ քրիստոնեայ ըլլալ:
2. Եզընկայ քաղաքին և Կամախայ կողմերը:

նաւանդ թէ զանօրէնութիւն և զամբարչտութիւն ազգիս մերոյ, և զվեծի ողբոց և արտասուաց արժանի սոցա գործս: Քանզի, զհետ առաքեալ՝ կոչեն գնա՝ լինել ըստ կամաց նորա, և ունել զթագաւորութիւնն: Իսկ ի չհաւանիլ Սրբոյն՝ տան նմա արքունի[1], որպէս անդ ուրեմն ի հինսն՝ Աթենացիքն՝ Սոկրատայ՝ զմոլեխինդն. և կամ թէ ըզմերն իսկ ասել, կատաղեալ Երրայեցիքն՝ ըմպելի լեղեաւ խառնեալ Աստուծոյ մերոյ: Եւ զայս առաքեալ՝ չիմացին յինքեանց զբազմափայլ հառագայթն աստուածապաշտութեան:

Վասն այսորիկ, ի վերայ իմոցս ողբալով՝ ասեմ[2], որպէս Պօղոս յաղագս իւրոցն, և թէնամեաց խաչին Քրիստոսի. բայց ասեմ ոչ զիմ բանս, այլ զՀոգւոյն Սրբոյ. Ազգ թիւր և դառնացող. ազգ՝ որ ոչ ուղղեաց զսիրտ իւր, և ոչ հաւատարմացաւ Աստուծոյ՝ ոգի նորա: Ախ Ախտաճանաչ, մինչեւ յերբ էք ծանրասիրտք. Ընդէ՞ր սիրէք ըզնանրութիւն և զանաստուածութիւն: Ո՞չ ծանեայք, զի աքանչելացոյց Տէր զՍուրբս իւր. և ոչ Տէր լուիցէ յաղաղակել ձերում՝ առ նա: Բարկացեալ մեզանչեցէք, և յանկողինս ձեր ոչ զղջացարուք. քանզի զենէք զենուն անօրէնութեան, և զյուսացեալսն ի Տէր՝ արհամարհեցէք: Վասն այսորիկ, եկեսցէ ձեզ որոգայթ՝ զոր ոչ ծանեայք. և օրն զոր որսայցէք՝ ըմբռնեսցէ զձեզ, և նովին որոգայթիւն անկիջիք: Այլ նորա անձն ցնծասցէ Տեառնմ, և ուրախասցի ի փրկութեան իւրում, և ամենայնիւ ինքեամբ սասցէ. Տէր, ո՛վ նման է քեզ:

Եւ զի այսոքիկ ճշմարիտ այսպէս, միխիթարեսցուք մերովք վտանգիւքս և մեք. զի, եթէ ընդ

1. Ըմպելիք մահուան, թոյն: Յր. Cigüe, թուրք. Պալտըրաև:
2. Սրտառուչ և վսեմական խօսքեր. արժանաւոր հեղինակին յարգը անմահացընելու, և ամաչեցընելու իր դաւաճիտօղները, եթէ կան:

փայտ գալար զայս արարին, ասէ Քրիստոս, իսկ ընդ չորն զի՞նչ լինիցի: Արդ, եթէ ընդ Սուրբս Աստուածոյ, և որք ի թագաւորութենէ յաղագս Աստուածոյ զինքեանս նուաստացուցին՝ այս է, այլ զի՞նչ մեր բանս առ Աստուածոյ՝ յաղագս ի ձէնջ վտանգիցս. որոց՝ վտանգք և աղքատութիւն սեպհական է: Այլ սակայն ասացից[1]. Ո՞ր ի ձէնջ՝ թոշակս յաղագս մեր[2]. ո՞վ որ վարդապետացն մաղթանս. ո՞վ որ բան յօժարեցուցանող կամ յորդորական. ո՞վ որ՝ յերթալս մեր՝ բեռնաբարձս[3]. ո՞վ որ ի գալն մերում հանգիստ. ո՞վ որ տուն կամ օթանոց մեզ պատրաստեաց: Թողից զայլն. զի և ոչ զլեզուս չարս և զգիտութիւնս, հանգերձ անօտի փառամոլութեամբն և կատաղի լեզուանութեամբն՝ սանձահարեցէք. այլ նիւթ նոցա անմտութեան՝ ըզձեր ուսումնասիրացդ տալով բարս, բորբոքեցէք առաւել քան զհնոցն Բաբելացւոյն:

Վասն որոյ իրաքանչիւր որ առանձինն է քաւիմ և պաշտօնեայ, որպէս ասէ Գիր[4]. որպէս և այժմ խօսողք բազումք աստուածայնոցն, և զօրութեան մտացն ոչ հասուք. և խօսողք՝ ոչ ըստ հաճոյից Հոգւոյն, այլ ըստ ստարին: Վասն որոյ հիացումն իմն են ճառքս և սարսափելի՝[5] որոց միտս ունին. քանզի խօսի որ խօսին զԱստուածոյ և զաստուածայինսն, և խորհուրդ խօսողին յօտարն հային: Զի ոչ վասն որոյ խօսին՝ կրէ զաշխատութիւնն,

1. Իր ժամանակակից անհաւանները:

2. Ո՞վ մեզի թոշակ առաւ. կամ իբրեւ վարձատրեաց՝ մեզի անսյլ խօսք մի ըսաւ:

3. Ո՞վ երթալնուս առեն՝ մեր բեռները չալիսալ տաւաւ. կամ երբ յոգնած գարձանք՝ ո՛վ գիտէ հանգչեցուց:

4. Յետ Մովսէսի և Յեսուայ Հրեից անիշխանութեան ժամանակին նմանցընէ:

5. Իբր թէ, ես իսկ գրելուս և գրածիս վրայ զարմանամ և սոսկամ այդ յանդուգն խօսողաց վրայ:

և ոչ մեղմով և հեզիկ, որպէս ուսաւն, թէ, Մի ոք լուիցէ արտաքոյ զբարբառս նորա. այլ յաղագս փառաց մարդկայնոց. և հայթեցուցանելով հնչեցուցանեն ի լսելիս մարդկան: Որ(ոց) չատխօսութեանն հասանք՝ իբրեւ յաղերբէ դիմեն, որպէս ասաց ոմն ի հնոցն, և զկծեցուցանեն զամենայն գինարբուս ի հրապարակս: Ո՞վ ոք զնոսա ոչ ողբասցէ, որ միտս ունիցի. և եթէ ոչ ոք զչարեսցի, ասեմ՝ թէ և որք յորդորեն զնոսա այսպիսիս լինել[1]: Արգելում ասել զՔրիստոսին, զսայն վրէժս յարենէն Աբելի արգարոյ մինչեւ ցարիւնն Զաքարիայ, որ կայ ի մէջ տաճարին և սեղանոյն:

Այլ ասատնօր դադարեսցէ բանս, որպէս այնխատութիւն կրեալ՝ յականջս լինել խօսեցեալ մեռելոց: Այլ պատմութիւնս յաղագս Սրբոյն Տրդատայ՝ ճշմարիտ է. քանզի արբուցեալ նմա դեղ մահու, զրկեցան ի լուսոյ չնորհաց ճառագայթից նորա[2]: Որ թագաւորեաց ամս յիսուն և վեց:

ՀԶ

ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՏՐԴԱՏԱՅ[3]

Իսկ թագաւորն Տրդատ՝ յետ հաւատոցն ի Քրիստոս, ամենայն առաքինութեամբ փայլեալ մինչեւ ցվախճան արի ծերութեանն: Այլ խոտա-

1. Ոչ թէ միայն չեն բարկանար այդպիսի չարալեզուաց վրայ, Տապա ամենք յորդորեն եւս՝ որ այնպէս լեզուագարեն:

2. Յայտնի է որ Տրդատ չատ երկար ապրած է. մանաւանդ ի թշնամիք անհամբերք մահուանն, բանի մեռցընեն:

3. Խորենացւոյ ծանօթ պատմագրութեան մասն չէ այս յօդուածս. բայց անշուշտ իր լեզուն իր ոգին իր գրածն է:

սրբոութիւն ազգիս մերոյ կամ ամբարտաւանութիւնն՝ որ ի սկզբանէ պատահեցին, ամենայն գլորմանց սոցա պատճառք. քանզի չարք ումանք հրամանաւ Շապհոյ խորհեցան սպանանել զՏրդատ, և միւսանգամ անդրէն զկապաչտութիւնն հաստատել յաշխարհիս Հայոց. յորում խորհրդի լեալ էր և սենեկապանն Տրդատայ, ըստ օրինակի Յուդայի մատնչի. բայց ոչ գիտեր թագաւորն թէ քանիք կամ ոք իցեն. վասն որոյ կոչեալ զսենեկապանն զայն՝ հարցանէր. եթէ, իցէ ինչ ի դրանս արգարեւ այսպիսի խորհուրդ: Նա իրրեւ լուաւ՝ զահի հարեալ սրտաբեկ լինէր. և ուրացաւ, եթէ, ոչ երբէք լուեալ է իմ այսպիսի բանս: Վասն որոյ ելեալ առ ընկերսն՝ երկիւղագին, ի բաց կորսուանէին զխորհուրդն անօրէնութեան, որպէս զարհաւրեալք: Բայց ինքն թագաւորն՝ ոչ առնլով դալ, հեռանայր յարեւմուտս կոյս, մինչեւ ի գաւառն Եկեղեաց, տեղի տուեալ լրոյն այնորիկ: Եւ քանզի բազումք էին ի խորհրդին, ոմանք զկնի նորա գնացին, մանաւանդ ազատքն Սիւնեաց կողմանց, որք առաւել հրամանակատարք Շապհոյ լինէին, վասն աշխարհին իւրեանց խաղաղական ունելոյ. որք և յորս երէից երբեմն ընդ թագաւորին լինելով, յորոց և խոցեալ լինի թագաւորն, որպէս թէ յանգէտս ուստեք դիպեալ պատահեաց նեռն. և եկեալ յարքունիսն գնի ի մահիճս, սակաւ ինչ վիրաւորեալ: Ցորոց՝ մոռեալ սենեկապանն այն պատել ըզվէրս նորա, և տեսեալ վի ոչ (թուի) մեռանել նմա ի վիրէն, արբուցանէ գեղ մահու, և վախճանէ. որ յետոյ յայտնի իսկ եղեւ ի նորին խորհրդակըցացն:

Եւ բարձեալ տարան գնա ի Թորդան, արծաթապատ դիակիր զագաւոք[1]. յորում լծեալ ջորիք ոսկեսանձք, և գունակ գունակ հանդերձիւք զպա-

1. Փառք բարեբեր և զգաստ ազգայնոց, որ գնեզ արժանաւոր թագուհի ըրած են այնպիսի վերին:

զանն զարդարելով, և վաշտք զօրացն աստի և անտի վառեալք զինուք և նշանակօք. իսկ առաջի զագաւոցն՝ ձայն աստուածօրհնութեան և բուրմունք խնկոց. իսկ աստի և անտի՝ բարեկամք և սիրելիք, ընտանիք, և բազումք յորդւոցն նորա հետեւակ անկեալ. և զկնի զագաւոցն՝ փողք և տաւիղք ողբոց, և կուսանք ողբասացք. թող զայլ ամենայն ռամիկն՝ որ երթային զհետ՝ անթիւ բազմութեամբ: Եւ այսպէս հասեալք ի տեղին, արարեալ տապան թագաւորական ի քարանց կըճեաց, և ի վերայ ապակի արկեալ, յորում եդեալ զգանձն պատուական, զանուշահոտ զպատարագն, զմեծ վաստակաւորն. և տարեալ թաղեցին զնա ի տեղւոջ[1] սբուհանաց Մեծին Գրիգորի. զոր պարբսպեալ անուանեալ իւր Պարտեզ: Եւ կանոնեցին զօր կատարման նորա՝ տօնել ամ յամէ. զոր յանձն արարեալ եպիսկոպոսին գեղջն՝ գնացին:

Տրդատ թագաւորեալ ամս չիսուն և եւթն[2]. և ապա կատարեալ ի Հայր և յՈրդի և ի Հոգին Սուրբ. որում փառք և զօրութիւն յաւիտեանս. ամէն:

1. Ար է վերոյիշեալն Թորդան, որոյ մօտ է Լուսաւորչի վանք անուանեալն: Բայց անկից չատ հեռու տեղ և Հայաստանի միւս ծայրը, Վանայ հարաւակողմն, Հոգեաց վանքի մէջ այլ միշտ Տրդատայ գերեզման. երբ և ինչպէս եղած՝ ծանօթ չէ:

2. Մի տարի աւելի քան Խորենացւոյ ծանօթ պատմութեան մէջ նշանակածն:

ՀԻ

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵՒ ԿՈՅՍՆ ՄԱՆՒ

(ՍԻՄԷՈՆ[1])

Արժան է լինել զըզձից իմաստս վասն գերազրական կարգաց երիցս երանեալ սուրբ քահանայապետին Գրիգորիոսի, և թէ որպէս հրաժարեաց յաշխարհածուփ կենցաղոյս: Յետ լուսաւորելոյ զՀայս՝ այնուհետեւ լեռնակեցիկ եղեալ և ազօթից պարապեալ, սակս զոր ի Քրիստոս սիրելոցն՝ անասան մնալ յուզղագաւան հաւատս երբորդութեանն: Նա և զսուրբ տիկնոջն Մանեայ, թէ որչափ ժամանակս եկաց ի քարանձաւս, զամս քառասուն և չորս, խոտամբերութեամբ վարուք, հունդս ճաշակելով, կամ ըստ անմարմնոցն տեսակի: Իսկ Սուրբն Գրիգոր հոգւոյ ակամբ տեսեալ զերանելին, կամեցաւ քաղաքավարիլ հուպ առնմա՝ ամս հինգ. այսպէս և երանելի տիկինն իմանայր՝ յորժամ Սուրբն Աստուծոյ զիրկական խորհուրդն կատարէր. գայր առաքելուհին և ընդունէր սրհնութիւն ի պարգեւարաշխ ավոյ նորա, և արտօրբագոչ պաղատանօք Սուրբն Մանի յանձն առնէր զինքն Սուրբ Լուսաւորչին մերոյ Գրիգորի: Եւ յետ հինգ ամի վախճան կատարման Սուրբն Մանեայ հասեալ, միայն գոլով, աւանդէր զհոգին ի ձեռս Աստուծոյ. և ամփոփեալ զմարմին նորա՝ նափորտամբ[2] իւրով՝ ի նմին տեղւոջ՝ երանելոյն Սըրբոյն Գրիգորի:

1. Տես զ'և ծանօթութիւն 53 յօդուածոյ:
2. Թէ քահանայական եկեղեցւոյ զգեստ նշանակէ նափորտ, և թէ արտաքին վերարկու մի: Յայտնի չէն բառիս ծագումն, բայց կայ գրուած և փորտ բառ, փորտիք կամ Պորտ նշանակելով:

ՀԸ

Ս· ԹԷՈԴՈՐՈՍ ՋԻՆԱՒՈՐ ԱՄԱՍԻԱՑԻ ԵՒ ՎԻՇԱՊՆ

(ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ[1])

Յորժամ եհաս Սուրբ Աքաքեայն Անդրէաս ՅԱմասիա, և զՓիդիմոս[2] ձեռնադրեալ եպիսկոպոս՝ փոխանակ իւր Թողու անդր, և ինքն իջանէ ի Սինոպ, ուր բազում աքանչելագործութիւնք արարեալ պատմին: Եւ Փիդիմոս ձեռնադրէ զերանելին Գրիգոր Աքանչելագործ եպիսկոպոս Նիոկեսարիոյ: Եւ այնպիսի ինչ կարգօք վարեցան, երբեմն յայսնի և երբեմն ծածուկ, մինչեւ ի ժամանակս հալածանաց. յորում բազումք վկայեցին. և այլ բազմութիւն հաւատացելոց սարսեալ զոզեցին, անյայտաբար ունելով զյաժարական հաւատսն, զոր ոչ կարէին գիտել դատաւորքն. այլ և զոր գիտէին՝ չգիտացեալս առնէին. քանզի հրաման ընկալեալ էին ի թագաւորէն՝ մի խուզել զայնոսիկ ոյք թաքնաբար ունէին զհաւատսն, այլ միայն զայնոսիկ խոչտանգել՝ որք քաջասիրտք համարձակութեամբ մատուցեալ, և յայտնի արհամարհեն զհրամանս թագաւորացն և զպաշտամունս դիցն:

Ընդ այն ժամանակս երանելին Թէոդորոս ծնեալ լինի ի քրիստոնեայ ծնողաց, ի գիւղն Սաբռէ, որ վեց մղոնաւ աւելի կամ պակաս հեռի էր ի Վի-

1. Վկայաբանութեանս յառաջաբանն էր յօդուածն 28, ուր Ամասիոյ քաղաքին չինութիւնն պատմի:
2. Ծանօթ չէ այս անձն, և անհաւանական կ'երեւի իր ձեռնադրելն զՍ. Գր. Աքանչելագործ. զի այս հայրապետս վախճանած է իբր յամի 270:

ռիս[1] քաղաքէ երկրորդ Հայոց. և որպէս ասեն յաւանդական դիրս պատմութեանց, թէ, մօրն վախճանեալ՝ տղայ զնա թողու, և հայրն մնուցանէր զնա. և նորա խարչեալ հատ՝ և հատաղրոյն[2] անուացանէր զնա: Եւ յարբունս հասեալ, աքանչելի վարուց մանկութեանն՝ սուրբ և պարկեշտ յամենայնի. որ զնոյն հատ սիրեալ՝ ոչ ինչ աւելի քան զայն ճաշակէր. և այնպէս հասանէր ի սիս հասակի երիտասարդութեան, կատարեալ մօրուօք խոբագունիւք, կարճ հերավք գանգրիւք[3], թուխ գունով, աշխուժ տեսլեամբ, հռչակեալ արութեամբ: Զոր տեսեալ զարմանալի և բազում ուժով, կամեցան զինուորեցուցանել ի դուռն աթգունի. այլ նա ոչ առնոյր յանձն, ասելով. Ես երկնաւորին եմ զինուորեալ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Աստուծոյն աստուծոց: Զոր իբրեւ ընդ արհամարհի համարեալ՝ ի բաց թողեալ, ասացին իւրովի գալ յուղղութիւն. գիտելով զյանկարծակի պնդութեանն ընդդիմութիւն՝ ի հակառակութիւն բերելով, և գհակառակութիւնն՝ ի վնաս ինքեանց:

Ընդ այն ժամանակս լինէր երանելին Թէոդորոս ընդ պատասին[4] Եւսեբեայ ուրումն կնոջ այրւոյ անցանել՝ առ ի պէտս ինչ գործոյ. և յուժգին եղեալ տօթոյն, խորհեցաւ հանգչել ի մարգճակին[5] պըռատասին Եւսեբեայ, որ կոչէր Եւթայիտաս. և կապեալ զձին՝ կոմիեցաւ ընդ հովանեաւ անկոյն: Զայն տեսեալ Եւսեբեայ՝ ի սրահէ տնկան[6] իւրոյ, կարկա-

1. Вѣрица յաւնարէն, տեղն յայտնի չէ հիմայ. ըստ հին աշխարհագրաց՝ Մեքաստիա և Մեքաստուպոլիս քաղաքաց միջաւ էր:
2. Թուխ թէ հայրն գայեկի ձեռօք տայր տղուն ըզհատիկն, որ էր խաչած ցորենի և նմանեաց չաբր:
3. Խիտ կամ թանձր և ալորուած մօրուք:
4. Փաղքի կամ գեղի ծայրը գետին, թուխ ի πέρας յոյն բառէ, որ նշանակէ սահմանի:
5. Խոտաւէտ խոնաւ գետին:
6. Տնակ, տաւնիկ, փոքրիկ տուն:

ռեալ զձեռն՝ աղաղակեաց, և ասէ. Ա՛յ հեծեալ, ա՛յ հեծեալ, մի դադարեր յայդմ տեղւոջ. զի հուպ է որչ վիշապի հղօրի, և զայսու ժամու ելանէ և շրջի ի մարգճակիդ. գուցէ վնասիս դու կամ երիվարդ. այլ յարուցեալ եկ ի տնիկս իմ, որպէս զի լուացեալ զոտս քո, և հաց ճաշակեալ հանգիցես ի միջօրէի, և հովուն անկանելոյ[1] երթիցես զձանապարհս քո: Պատասխանի ետ երանելին Թէոդորոս, և ասէ. Ես յուսալով յօգնականութիւնն Աստուծոյն իմոյ՝ յաներեւոյթ վիշապէն ոչ երկնչիմ, թող թէ յերեւելի օձէն. ելոյծ ըստ բանի քում, և սատակեցից զնա անուամբն Քրիստոսի: Իսկ բարեպաշտն Եւսեբի իբրեւ լուաւ թէ զՔրիստոս անուանեաց, և իմացեալ եթէ հաւատակից իւր է, ի խնդութենէն իւրմէ ընթացեալ ընդ առաջ նորա, և բուռն հարեալ ազաչէր գնալ անտի, և երթալ ընդ նմա ի տունն իւր: Եւ մինչդեռ նա զայն խօսէր՝ եղեւ յանկարծակի չարժուն մեծ յոյժ, և չաչիւն գալոյ վիշապին. զոր փութանակի զգացեալ երանելւոյն Եւսեբեայ՝ հիւ բարձեալ մեծաձայն. և վիշապն քաջալանջ և մեծապարանոց՝ ելեալ յարձակեցաւ ի վերայ երիվարին, ահագին և անզգամ չնչմամբ յոյժ: Յայնժամ երանելին Թէոդորոս կնքեալ զինքն նշանաւ ամենայաղթ խաչին Քրիստոսի, հարկանէր նիզակաւն զգլուխ վիշապին. և չչտակի ճեղքեաց և առժամայն սատակեաց զնա: Որոյ տապալեալ յեղեգանն[2] որ հուպ ի չուրն, իբրեւ զգերան անարի՝ յոյժ ահագին տեսողացն երեւէր[3]: Յայնժամ եղեւ ծանօթութիւն և սէր բարեպաշտին Եւսեբեայ առ երանելին Թէոդորոս, որպէս առ իւրմէ ծնեալ որդի:

1. Երբ հովն զովանայ, օդուն տաքութիւնն անցնի:
2. Զրի մօտ եղած եղէգներուն մէջ, որ սովորաբար Շամբ կ՚ըսուի:
3. Այս պատճառաւ Ս. Թէոդորոս նկարուի հեծեալ, և երկար նիզակաւ մեծ վիշապ մի սպանող:

Բայց երանելին Թէոդորոս ոչ դադարէր ի զօրացուցանելոյ զհաւատացեալս իւր զհեծեալս. և ուսուցանէր վասն անուանն Տեառն Յիսուսի Քրիստոսի. զի յայտնի որպէս գնային ընկալեցին զհաւատսն՝ ի միտս հաստատուն, անպարտելի մնալ ի հակառակորդացն՝ ի յոյն բարեպաշտութեան:

ՀԹ

ԱՌԱՋԻՆ ԿԵԱՆՔ Ս· ԱՐԻՍՏԱԿԻՍԻ

(ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ· ՃԻԴ)

Ներստակէս՝ որ ի մանկութենէ ըստ աստուածագործ ծառայութեան անեալ էր, որ ի մենակեաց լեառնակեաց կրօնս մտեալ էր, և բազում ազգի ազգի վշտակեցութիւն ըստ աւետարանին կրեալ, ամենայն կրթութեամբ, և ամենայն իրաց հոգեւոր զանձն տուեալ, մենաւորութեան լեառնակեցութեան, քազցի և ծարաւոյ, և բանջարաճաշակ կենաց, և արգելանաց անլուսից, խարազնագեաւ և գետնատարած անկողնոց, և բազում անգամ զհեշտական հանգիստն գիշերոյ՝ զկարկ քնոյ՝ յոտնաւոր աքնութեան՝ ի թարթափ ական վճարելով. և զայս արարեալ ոչ սակաւ ժամանակս: Գտեալ և զոմանս՝ յինքն յարեցուցեալ, և աշակերտեալ սմին աւետարանական սպասաւորութեան: Եւ այսպէս ամենայն փորձութեանց ի վերայ հասեալոց՝ կամայական քաջութեամբ տարեալ, և նովին լուսաւորեալ և պայծառացեալ. և ծանօթական և հաճոյ եղեալ առաջի Աստուծոյ և ամենայն մարդկան:

Արդ, իբրեւ լուաւ զայս ամենայն Տրդատ, վազվազակի փութով և անզրաղապէս արձակեր երիս աւագս փառաւորս պատուականս, հրովարտակօք հանդերձ, զի զերկուս որդիսն Գրիգորի վաղ առնա հասուսցեն: Եւ որ առաքեցանն յարքայէն՝ զի ածցեն զնա, այսոքիկ են. առաջնոյն անուն Արտաւազդ, որ սպարապետն էր ամենայն զօրացն Հայոց Մեծաց. և երկրորդին՝ Տաճատ անուն, իշխան Աշոցաց գաւառին. երրորդին՝ Դատ անուն, կարապետ արքային:

Արդ, իբրեւ եկին հասին նոքա յաչխարհն Կապադովկացւոց, և գտին զվրթաւնիս ի Կեսարացւոց քաղաքին, և զՍուրբն Ներստակէս բնակեալ յանապատի, յիւրում վենաւորատանին: Այս, ոչ հաւանէր նա իմանել յանապատէ անտի, թէ ոչ եղեւ ժողով բազմութեան քրիստոնէիւ, որ հաւանեցուցին զնա գնալ անտի. զի լաւ է, ասեն, քեզ գործ մշակութեանն Աստուծոյ՝ քան զայդ վենաւորութիւն բնակութեան յանապատս: Զօրս այնուհետեւ յղարկեցին զնոսա անտի. իսկ նոքա եկին հասին յերկիրն, և յանդիման ունէին զածեալսն զերկոսին զորդիսն Գրիգորի՝ առաջի թագաւորին. զօրս առեալ թագաւորին՝ ինքնին նոքօք հանդերձ ի խնդիր ելանէր Սրբոյն Գրիգորի՝ ուր և գոցէ: Այս եկեալ՝ գտանէր ի Գարաւնաղեաց գաւառին, ի լերինն որ կոչի Մաւնայարդ[1], յանապատին:

Այս, աղաչեաց երանելի թագաւորն Տրդատ՝ զՍուրբն Գրիգորիոս, զի փոխանակ այնր՝ զի ոչ հաւանեցաւ նա գալ և չրջել ընդ նմա, և սիրեաց վենաւորութեան կեանս, ձեռնադրեսցէ տացէ նմա եպիսկոպոս զաւրր որդին իւր՝ զոր ետ ածել ինքն, զՆերստակէս: Զօր ձեռնադրեաց յեպիսկոպոսութիւն փոխանակ իւր. որպէս ըստ զրեցելոյն ի դէպ, թէ, փոխանակ հարց՝ եղիցին որդիք՝ կալ իշխան ի վերայ երկրի: Որ առաւել եւս քան զՀայրն՝ վերադոյն երեւեցուցանէր սա զիւր վարդապետութիւնն՝ առ հարբն. և յետ նորա կալաւ զտեղի հայրենեացն. անդէն նստաւ յաթոռ կաթողիկոսութեան Հայոց Մեծաց:

1· Պէտք է կարդալ Մանեայ այրք· այսինքն քարայրք, ուր Ս· Մանի կեանն եղնէր:

Զ

ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՂՈՒԱՆԻՑ

(ԲՈՒԶԱՆԴ, Գ. զ)

Վասն Գրիգորի եպիսկոպոսի որդւոյ Վրթանայ, եղբօրն Յուսկան, որ կաթողիկոսն էր կողմանցն Վրաց և Աղուանից: Իբրեւ եկաց սա յիւրում պաշտամանն, մինչդեռ մանուկն եւս էր, չինեաց նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ, և ձգեցաւ ի գաւառս կողմանցն Ասպատականի: Քարոզ ճշմարտութեան հաւատոցն Քրիստոսի լինէր նա. և առաջի իսկ ամենեցուն էր սքանչելի և զարմանալի. խստագոյն և զժուարագոյն անհամարք ծանրաբեռն վարուցն կրթութիւնք խստամբերութեանն, պահօք և սրբութեամբ, ոչնաչան հսկմամբ անձանձրոյթ աղօթիցն ջերմութեան առ Տէր Աստուած կանխելոյ, վասն ամենայն մարդոյ: Ջաւետարանական ընթացան և վերակացութիւն եկեղեցւոյ սրբոյ՝ չնորհօքն Աստուծոյ առանց պակասութեան տանէր. առաւել եւս փութայր, գուն եղեալ յորդորելով զամենեսեան առ ի բարեացն քաջալերութիւն, զցայգ և զցերեկ պահօք և աղօթիւք և ուժգին խնդրուածովք, և բարձրակալ կատարման հաւատովքն, մերձաւորաց և հեռաւորաց՝ զհոգեւոր եռանդն ածէր. իբրեւ զպատերազմասէր նահատակ միշտ զանձն ի կրթութիւն և ի պատրաստութեան ունէր ամենայն փորձութեանց և վըշտաց, առ ի տալ պատասխանի ամենայն համարձակութեամբ, վասն ճշմարտութեան հաւատոցն մարտնչել որ վասն Քրիստոսի:

Եւ իբրեւ ուղղեաց և նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ, եհաս նա մինչեւ ի ձամբար բանակին Աբշակունւոյ՝ արքային Մազքթաց[1], որում անուն իւր Սանեսան կոչէր: Քանզի և նոցա և Հայոց թագաւորացն մի ազգաւորութիւն էր առհմին բնութեան: Եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին Մազքթաց, իշխանին բազմութեան զօրացն Հոնաց. և եկաց առաջի նոցա, սկսաւ քարոզել և աւետարանել նոցա զՔրիստոս: Ասէ ցնոսա, թէ, Ծաներուք զԱստուած: Լուան և ընկալան զառաջինն և հնազանդեցան. ապա սկսան քննել զօրէնսն Քրիստոսի, և ուսան ի նմանէ, թէ առելի է Աստուծոյ աւարառութիւն և յափշտակութիւն, սպանութիւն, ագահութիւն, այլազգկութիւն, գայլոյակերութիւն, ցանկութիւն այլոց ստացուածոց: Ապա այսպիսի իմն իրօք իբրեւ լուան, զայրացան ընդ բանս նորա, և ասեն. Չի ոչ յափըշտակեսցուք, զի ոչ աւարեսցուք, զի ոչ առցուք զայլոյ, իւր կեցցուք այսչափ անչափ զօրաց բազմութիւնք: Եւ թէպէտ բիւրաւոր բանիւք բարեօք կամէր հաճել զսիրտս նոցա, ոչ ինչ կամէին ունկընդիր լինել, այլ ասէին ցմիմեանս. Եկեալ այսպիսի բանիւք կամի ի քաջութենէ որսոյն կենաց մերոց՝ խափանել զմեզ. իսկ եթէ սմա լուիցուք, և գարձցուք յօրէնս քրիստոնէութեան, իւր կեցցուք. զի ոչ յերիվար հեծցուք՝ ըստ բնութեան օրինաց սովորութեանց մերոց: Այլ, ասէին, այս խորհուրդ Հայոց թագաւորին է. զսա յղել առ մեզ, զի այսու ուսմամբ խափանեսցէ զմեր արշաւանս առպատակութեան հինի՝ յաշխարհէն իւրմէ. այլ, եկայք զսա պակասեցուսցուք ի միջոյ, և մեք ի Հայս արշաւեսցուք. աւարառ զմեր աշխարհս լցցուք:

Ապա, չրջեցաւ թագաւորն, և լուաւ քանից զօրացն իւրոց. և կալան ձի մի ամենի, կապեցին

1. Ըստ մեր պատմչաց՝ Պարթեւաց և Հայոց պէս Աբշակայ ցեղէն էին և թագաւորք Մազքթաց, Μασσαγέται Մասսագետք, ըստ Յունաց. պատմիչս մեր զասունք և զՀոնս՝ մի ազգ կամ ցեղախառն համարին:

կախեցին զմանուկն Գրիգորիս զագուց ձիոյն, և արձակեցին ընդ ծեվեղեր դաշտին հիւսիսական ծովուն մեծի, արտաքոյ իւրեանց բանակին, ի դաշտին Վատնեայ: Եւ այսպէս ապանին զառաքինի քարոզն Քրիստոսի, զմանուկն Գրիգորիս: Եւ ապա բարձին զնա՝ որք ընդ նմա երթեալ էին ի գաւառն Հաբանդայ[1]. և բերին ի գաւառն իւրեանց, ի կողմանս Աղուանից, ի սահմանս Հայոց ի Հաբանդ, ի գեօղն՝ որ անուանեալ կոչի Ամարազ[2]: Եւ եղին զնա առ եկեղեցեաւն, զոր չինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւատն Գրիգորիսի՝ քահանայապետին մեծի աշխարհին Հայաստան երկրին: Եւ ամ յամէ աշխարհաժողովուրդք ի մի վայր ժողովեալ կողմանցն այնոցիկ և աշխարհաց դաւառացն այնոցիկ, զոյրա զօր ասնին զյիշատակ քաղուքեանն ցնծան.

ԶՍ.

ԳԱՍՏԱԿԵՐՏՔ Ի ԽՈՍՐՈՎՈՒ[3]

(ԲՈՒԶԱՆԴ. Գ. Ի)

Իբրեւ առ ժամանակ մի խաղաղացաւ երկիրս Հայոց, ապա ետ հրաման թագաւորն Հայոց Խոսրով, տալ պարգեւս արանցն քաջաց՝ որ վաստակեցին նմա, և փախանակեցին զանձինս իւրեանց փոխանակ աշխարհին Հայոց Մեծաց, յամենայն

1. Աղուանից նահանգին մեկ գաւառն է:

2. Հիմայ այլ ծանօթ մեծ աւան Ամարա կոչուած, մօտ Գանձասարայ՝ Աղուանից կաթողիկոսարանին:

3. Մեծին Տրդատայ որդին է, զոր՝ իր հօրն անունման փոքրիկ ըլլալուն համար՝ կոտակ անուաներ են, բայց երեւի որ մատաղ և չինաւոր է եղեր:

ի մարտ ճակատուցն պատերազմաց: Եւ ետ վաչէի զօրավարի զկանս Ջանչանակին, և զՋրաքաշխա, և զՅոյս գլուխ[1], ամենայն գաւառակօքն հանդերձ. նոյնպէս և այլոց նախարարացն մեծամեծ պարգեւս: Եւ ետ հրաման թագաւորն՝ զօրավարին իւրոյ՝ հանել խաչար[2] յաշխարհէն բազում, և բերել զվայրենի կաղին մայրեաց, և տնկել զայն ՅԱյրարատեան գաւառին. և առեալ յամուր բերդէն արքունի՝ որում կոչեն Գառնի, մինչեւ ի դաշտն Մեծամորի՝ ի բլուրն՝ որ անուանեալ կոչի Գոհիմ[3], որ կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու, զգեան խոնարհ մինչեւ յապարանսն Տիկնուհւոյ, տնկեցին զկաղինն. և կոչեաց զանուն նորա Ցաձար մայրի. և միւս ի մայրեացն Յեղեգնաբերանիկ՝ ի նմանէ ի հարաւակոյս, լցին զդաշտն կաղնատաւն տնկով. և կոչեցին զանուն նորա խոսրովակերտ: Եւ անդ չինեցին գազարանան արքունական, և զերկոսեան տեղիսն պարսպեալ փակեցին. և ոչ կցեցին ի միմեանս վասն պողոտայի ճանապարհին[4]: Եւ ածեաց բարձրացաւ. և ապա զամենայն էրէս և զդաշտն հրամայեաց ժողովել թագաւորն, և լինել զքաղաքորման, զի լիցին նոցա տեղիք որսոց զբօսանաց[5] ուրախութեան թագաւորութեան նորա: Եւ զօրավարն Վաչէ կատարէր վաղվաղակի զաւարտեալն արքայի:

1. Ասար թուրք անուամբ՝ Պոդդա-թեփէ՝ Սեւանայ ծովուն արեւմտակողմը լեռ մի յայտնի է, հաւանօրէն միւսներն եւս հետու չէին:

2. Յած թուփեր Յաիս կոչուած վայրի բուսոց: Մեր հին միաբան Տրապիզոնցի Հայր մի գրէ (1753)· «Խաչար՝ ակռիկ, ցանցառ, երեք կաւթ և երեք գալարի իցէ, սաւզեալ և անաստակոյս»:

3. Այն առեն դեռ սա չէր մայրաքաղաք Հայոց:

4. Երկու պարսպապատ արքունական դեղակ (villa) զբօսանաց ապարանք չինէ, Ցաձար մայրի և Խոսրովակերտ անուանելով, երկուքին միջոց բաց թողու՝ որ անցուդարձի ճամբայ ըլլայ:

5. Այս է Փառանկաց և այլ եւրոպացւոց Parc կոչածն:

ԶԲ

Ս· ՅԱԿՈՎԲ ՄԾԲՆԱՑ ՀԱՅՐԱՊԵՏ ԵՒ ՄԱՆԱՁԻՀՐ

(ՁԱՒԹՂՆՑԻՐՔ)

Իբրեւ գայր բերէր այրն Աստուծոյ՝ զաստուածագործ մեծութեանցն պատուհասին վերատես՝ որ առ ամենայն ազգս բանաւորաց եւ չնչաւորաց՝ յաւիտենից զնչանակն[1], զփայտն ապրեցուցիչ, զնշանակն հայրենի գործոցն՝ զնոյեան տապանին, ամենայն գաւառքն եւ քաղաքն որ չուրջ էին զնովաւ, անպայման եւ անչափ խնդութեամբ եւ ցնծութեամբ՝ ընդ առաջ ելանէին: Իբրեւ զառաքեալ Քրիստոսի, իբրեւ զհրեշտակ երկնաւոր տեսեալ զՍուրբն, զնովաւ պատէին. զքաջ հովիւն իւրեանց իբրեւ զաստուածախօս տեսանէին. եւ զնովիմբ փարեալք, եւ զվաստակասէր զօգտաբեր զդպրչապարան զչաւիղն համբուրէին: Եւ զրեալ պարգեւացն զչնորհս՝ իւրեանց յօժարութեամբ ընդունէին. որ մինչեւ ցայսօր նչանակ աքանչելութեանն՝ կայ պահեալ առ նոսա երեւոյթ, փայտն հայրապետական նոյեան տապանին:

Ապա յետ այսորիկ լուր լուաւ յերկրէն Հայաստանեայ՝ աքանչելի եպիսկոպոսն Յակոբ. խաղաց զնաց առ մեծ իշխանն՝ աշխարհատէրն, մեծ ծառայն արքային Հայոց, առ Մանաձիհրի[2] աղչտունի, եւ եկն թափեցաւ յաշխարհ նորա: Վասն զի, լուեալ էր

1. Ըստ աւանդութեան, երբ Ս· Յակովբ Մասեաց լեռնէն իջնելով, նոյի տապանին կատր մի բերէր:

2. Անուն հին Պարսից մեկ զիւցազին, Միհռշիհր, որ նշանակէ զրախտաղէմ, այսինքն պայծառ ծաղկափայլ երեսով:

զնմանէ՝ թէ այր չար եւ անզգամ է, եւ զուր տաղտապատ ի ցաւմանէ գառնութեան սրտին իւրոյ՝ կատարէ անթիւ մարդիկ: Եկն ուսուցանել եւ խրատել զնա, զի յահէ Տեառն երկուցեալ զարձցի յընտանութեան բարս, եւ մեկուսի ի վայր դիցէ զանառնաբար գազանամտութիւն մոլեգնութեանն իւրոյ: Իսկ իբրեւ հասս զնա, արհամարհեաց, ծաղր եւ այպն առնէր անօրէնն Մանաձիհրն զայրն Աստուծոյ զՅակոբ եպիսկոպոսն: Եւ առ վայրենի բարուցն իւրոց զոր ունէր յանձին իւրում՝ իբրեւ նմա հեճուկն առնելոյ[1], ուխտ հարիւր այր՝ որ կային ի կապանս՝ առանց յանցման, ետ ածել առաջի նորա. և հրամայեաց ի գահճէ միոջէ ի ծով անդր (Վանայ) հոսել, և զայնչափ հոգի՝ առանց յանցման կորուսանել. և կատակութեամբ ծաղծ՝ հրամայէր հալածել զնա յաշխարհէն իւրմէ. և ասէ. Ա՛ռ քում բարեացութիւնդ՝[2] տեսէ՛ր, զիա՛րդ մեծարեցի զքեզ. զիւր արարի նոցա ի կապանացն, և ի ծովուն զեռ լուղին: Իսկ նա զնացեալ անտի մեծաւ արտմութեամբ, ըստ հրամանի պատուիրանին Տեառն իւրոյ, թօթափէր զփոշի ոտից իւրոց ի վերայ նորա: Գայր հասանէր ի լեառն Երկաթահատացն և կապարահատացն, և որ ընդ նմանն էին, ընդ Ռոըշտունիս. և բաժանէր լեառն բարձր, ուստի երեւէին գաւառքն բովանդակ, որում անուն Ըլնձաքիտար[3] կոչէին: Իբրեւ հուսկ եղեւ յայն լեառն, ի սաստիս լերինն, քանզի բազում աւուրք էին զի չէր ինչ բնաւ ամենեւին ճաշակեալ, և ծանրաւեաց խիստ ծարաւով, եկաց յաղօթս առ Տէր. դնէր ծունր, և եդ զգլուխ իւր ի վերայ երկրի, և բղխեաց աղբիւր. ուստի արբ ինքն և որք ընդ նմանն էին: Եւ եղեւ այս ըստ առաջին օրինակին,

1. Ծաղրելով արհամարհել:

2. Բարեխօսութիւն:

3. Լաւ եւս ըսելի է Ըլնձաքի–ատար, ի հարաւակողմն Վանայ ծովուն:

որպէս արար ի Սարարադ[1] լերինն, սոյնպէս և յոտին Ընձաքիարս լերինն, ի ծովեզերն Ըձըշտուն նեաց ծովուն. որ ըստ առաջնոյն օրինակի[2] կոչի և այս Աղրեար Ցակոբայ մինչեւ ցայսօր ժամանակի:

Եւ եղաներ քահանայապետն Աստուծոյ ի գլուխ լերինն Ընձաքիարս, և նղովէր զաշխարհն, զի մի պակասեսցէ անտի խառվութիւն մինչեւ ի սպառ, փոխանակ տէրունի խաղաղութեանն՝ որ ոչ լուան: Եւ Սուրբ աւետարանիչ եպիսկոպոսն գնաց ի տեղի իւր: Իսկ յայնմ գաւառի, յետ գնալոյ նորա անտի, յետ երկուց աւուրց սատակեցաւ կինն Մանաճիհրայ եւթն որդւովք իւրով, յետոյ և ինքն չարամահ ծակոտեալ՝ եղաներ մեծաւ տանջանօք յաշխարհէ: Եւ ըստ բանին՝ որ ասացաւ, ոչ եղեւ խաղաղութիւն յաշխարհին յայնմիկ՝ յօրէն յայնմանէ և յապա[3]:

1. Նոյն Մասիս լեռն, կամ որ և է կարծեցեալ տապանին հանգըստեան լեռն:

2. Առաջինն է Մասիս լերան կողը եղած Ախոռի (հիմայ կործանեալ) գիւղի մօտ Ս. Յակովբայ աղբիւրն, որոյ ջուրք մարախները չարգելու դեղ կ'ըլլային:

3. Եթէ ոչ որդի՝ բայց յաջորդ եղաւ Մանաճիհրի՝ Զօրայ, Հայոց հարաւային բանակին սպարապետն, որ յետ սպանման Ս. Յուսկան՝ չուզելով (ըստ հրամանի Տիրանայ) յօգնութիւն երթալ ուրացողին Յուդիանոսի՝ ընդդէմ Պարսից, սպանուեցաւ՝ այդ Հայոց վատ թագաւորին հրամանաւ:

ԶԳ.

ԿԱՏԱՐՈՒՄՆ Ս. ՄԱՐԵՄԱՅ ՄՕՐ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՈՒԼՆԵՑԻՈՑ ԵՒ ԿՈՒՍԱՆԱՑՆ

(Գ. ԿԱՑԱՐԱՆՈՒԹԻՒՆ)

Առեալ դահճացն փութանակի ընդ այգն ընդ առաւօտն՝ զսուրբ կուսանան, հանգերձ Մարեմաւ, գնացին տանել ի տեղի նահատակութեանն: Իսկ Մարիամ տեսեալ զի տանէին զինքեան ի նահատակել՝ յառաջ քան զեղբարսն և զսրբին իւր, սկսաւ արտասուել, և ասէ ցՍուրբն Ստեփաննոս՝ բարձր բարբառով, զի էր հեռագոյն ի նոցանէ. Արդեակ Ստեփաննոս, դու գիտես եթէ որպէս անուցի զքեզ, կրթել յաստուածպաշտութիւն. արդ պինդ կաց ի նահատակութիւնդ. և քաջալերեա զեղբարսդ, զի մի ոք զարհուրեսցի ի տանջանացդ, մի զանգիտեսցէ և երկմտիցի, կամ ի սպառնալեաց դատաւորին երկնչիցի, զի տալոյք են դեռ, և ոչ եւս հասեալ ի տիս մանկութեան. արդ, յառաջեսցեն քան զձեզ ի նահատակութիւն և գնալ առ Տէրն մեր սրբութեամբ: Այլ վասն իմ և վասն դասերաց իմոց՝ աղօթեա, որպեակ իմ Ստեփաննոս, զի խաղաղութեամբ անցցուք ընդ խաւարային իշխանութիւնն, զերծանել ի խաւարային օդային դիւացն: Եւ ասէ Սուրբն Ստեփաննոս. Մարիամ, մայր իմ, գնա՛ խաղաղութեամբ, Տէր ընդ ձեզ և ընդ քոյրդ իմ: Եւ ասէ յուսնական բարբառով[1]. Մայր իմ, մայր, յառաջագոյն կուսանդք ըմպեսցեն զբաժակ մահու, և ապա դու, զի տալոյք գոլով երկնչիցին ի սրոյն տեսլենէն. և ես և եղբարքս

1. Որով յայտնէ՝ թէ էր ընկեր բարբառն Հայկերէն էր:

իմ ի սմին ժամու ի սոյն աւուրս ժամանեցուք առ ձեզ: Եւ առեալ զահճացն զկուսանսն՝ Մարիամաւ հանդերձ, տարեալ ի տեղի նահատակութեան՝ հանդէպ ձորակի միոյ առ ստորոտով լերինն, և կապեալ զձեռս յետս՝ սկսան յանխնայ սպանանել զնոսա: Եւ նոքա մի մի յառաջեալ առ դահիճան՝ ի զենուն, և կնքեցին զանձինս իւրեանց նշանաւ խաչին[1]: Իսկ Մարիամ կայր յանդիման կուսանացն, և նշանացի քաջալերէր զսուրբսն՝ պինդ կալ ի հաւատսն և տեսանել զՔրիստոս: Եւ զահճացն յանխնայ կոտորեալ զկուսանսն՝ հասին առ Մարիամ, մերկացուցեալ զսուրբսն իւրեանց: Եւ նա կայր ամբարձեալ զձեռս յերկինս, զի ոչ էր կապեալ, այլ կայր մեկուսի և աղօթէր, ասելով· Օրհնեալ ես թագաւոր անմահ, որ արժանի արարեր զորդեակդ իմ՝ անարատ ըմպել զբաժակ մահու: Եւ մինչեւ էր կատարեալ զաղօթսն, մի ոմն ի զահճացն հարեալ զսուրբն ընդ կուրծս նորա, և առժամայն աւանդեաց զհոգին՝ Սուրբն Մարիամ, բարի խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի Ս· Հոգին, յամենեսեան ազգսս, որ օր քան և մի էր, յաւուր ուրբաթու, ի տասներորդ ժամու: Եւ կային սուրբ մարմինք նոցա անթաղ, և յառաջագոյն վկայեցելոյն Բագրատունեայ[2]: Իսկ ապա առեալ նոքա հաւատացելոյն զնշխարս Սրբոյն Բագրատունեայ, գաղտ ի գիշերի տարեալ առ նշխարս սրբոց կուսանացն ամփոփեցին ի մի վայր, և անյայտ արարին զհանգիստ նոցա մինչեւ ի ժամանակս սակաւս:

1· Աղաղաւեւ միամիտ աղաւնիք Քրիստոսի· իբրեւց արեամբք իւրեանց կարմիր մանեակս վզկերսին կապած՝ թռչին առ նա:

2· Վկայուհի մի յընկերաց Ս· Սա. Ուղնեցւոյն. զոյգ ի Բագրատունեաց ցեղէն ըլլալով՝ այնպէս կոչեր է վկայագիրն:

ԶԴ

ՀԱՅՔ ՈՒՍԱՆՈՂՔ ՅԱԹԻՆՍ

(Ս· ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ, ՅԱՐՁԱՆԱԿԱՆՆ Ս· ԲԱՐՍՂԻ)

Ոչ պարզամիտ ազգ գտանեմ զՀայոց, այլ և յոյժ թաքուցանողք և նենգաժառք[1]: Յայնժամ ի յոլովից նմա ի սովորականացն և ի սիրելեաց ամենից՝ առ ի հօրէ և յառաջագոյն ընկերութենէն, վասն զի յայնմանէ ի գալոց եկեալք հանդիպէին, մերձեցեալք առ նա անդ՝ ստեղծական բարեկամութեամբ· բայց էին մախանք և ոչ բարեմտութեան մերձաւորութիւնք[2]· փորձէին զնա՝ վիճելով առաւել քան եթէ բանականապէս· և ի ներքոյ խոնարհեցուցեալ զանձինս՝ հնարէին յառաջին ձեռնարկութենան, զկանխագոյն զառնն գովութիւն զիտելով, և յայնժամու պատուովն ոչ համբերելով: Վասն զի, զժնդակ է՝ եթէ յառաջագոյն ժամանեալք ի զգեստն վարդապետական, և կոկորդելն խօսել կրթեալք, ոչ ինչ առաւելագոյն ունել քան զօտարսն և զնոր եկեալսն[3]: Իսկ ես աթենաէոս՝ և վայրապար ոչ սգայի զմախանսն, հաւատայի ստեղծմանն՝ ի խոնարհելն նոցա և ի թիկունք

1· Ս· Աստուածաբանն այսպէս գտաւ ի իբ սուրբ սուրճակիկ Հայ երեսաւարդները, խորամանկ, կեղծաւոր, և վիճաբանութեամբ յաղթել սիրող:

2· Առ Ս· Բարսեղ մտանելով կ'ուզեն փորձել կեղծ բարեկամութեամբ:

3· Ըսել կ'ուզէ, թէ չատ ամօթ է որ մեկն չատոնց եկած սովրած ըլլայ, և վարդապետի գլեստ հագած գոռոզութեամբ խօսի, և առկայն նոր եկած աշակերտներէ յաղթուի:

դարձուցանէին[1]. վասն զի նախանձէի աթենակցացն փառացն՝ նոքօք քակտել, և վաղվաղակի արհամարհանս ընդունել. անտես առնէի զզօրաւորագոյնն ի վերայ ածել բան, և յինէն զպարձուածն չնորհէի: Կարէ և փոքր այս յաւելուած զամենայն յայնպիսիս զհաւատարն ի ձեզ զգլուխ բանի՝ հաստատել. և յորժամ զխօսիցն ճանաչէի զանյայտութիւն, զի և ոչ անընդունակ ինչ հանդիպէր, այլ յայտնապէս անդէն մերձ կացեալ լինէր, յանկարծակի փոփոխեալ զվերջին կոզմն բախելով՝ ի նա յաւելուի, և ընկերութիւն օգնականութեան համատարած առնէի: Իսկ նա վաղվաղակի զդայր զլեալն, վասն զի և էր իսկ արագամիտ, որպէս թէ ոչ այլ ոք. և յօժարամտութեամբ լցեալ՝ զի կատարելագոյն զնա զեկուցից, ընկրկէր բանիւք զքաջն զայնոսիկ, և զմանկական խորհուրդն՝ ոչ յաւելագոյն թոյլ տայր, քան եթէ կատարելապէս կործանել, և զյաղթութիւն մաքրապէս ընդունել:

Այս երկրորդ մեզ սիրելութեանս, ոչ և արծարծումն կայծական, այլ անդէն վաղվաղակի ջահ բորբոքեալ լինէր, յոյժ երեւելի և օգտին: Եւ նոքա այնպէս անցեալ գնային անգործք, ի յոլովագոյնս յանդգնութեամբ զինքեանս բամբասելով: Բազումս և գաւառանութեամբն ընդ իս գժուարէին. մինչ զի երեւելի թշնամութիւն խոստովանել և մատնութիւն կոչել, ոչ ինքեանց միայն այլ և նոցին իսկ Աթենացւոյն, իբրեւ առաջին փորձիւն ընտրեալքն ամաչէին ի միջի առնէ. և այն ոչ համարձակեալ ի ժամանակին ունողէ, որ է մարգկային ախտք. յորժամ մեծամեծս յուսալով յանկարծակի ի յու-

1. Ես որ Աթենքի պատիւը կ'ուզեի պահել, կ'ըսէ, և նեզանայի այնպիսիներէ արհամարհուելուն համար, անոնց խոնարհութիւն ձեւացընելէն ճանչցայ իրենց կեղծաւորութիւնը:

սոյն վրիպիմք, նուազագոյն քան զկարծիսն տեսանեմք զերեւեալսն: Զնոյնս և նա կրէր, որոմէր և գժուարէր ընդ գալն իւր անդր[1]:

Զե

ՆՈՅՆ ԲԱՆ ԸՍՏ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

« Օրէն էր ուսանել յԱթէնս՝ լուռ կալով և ի » հնազանդութեան. այլ զմերոցն ամբաստանեն՝ թէ » սակաւ ուսանին և խօսելով երկար դիմանան: » Զայս Աստուածաբանն հաչակեցոյց ի Բարսղի արձանականն[2] »: Նախանձ ի վաղուց հետէ կայր ընդ ազգս. և յայնի ի Բարսղի յԱրձանականէն է. և պատճառ զայս խնացաք, որ սահմանակից է նոցա աշխարհն Հայոց, և արուեստիւք աւելի, և չատ ինչ յիշատակ քաղուեանն զրով ունին, և քան զայլ ազգս լեզուով սեպհական, և յար յուսմունս նոցա փութով ծանօթանալ լինէր: Խօրիթ ինչ խնացեալ

1. Աստուածաբանն՝ թուի թէ այս Հայոց հետ վիճաբանութենէն վերջը՝ գրած է անոնց դէմ քանի մի տող պարսաւ, որ է թարգմանեալս. և յետոյ Ս. Բարսղի մահուան վրայ խօսած առեն վերոյգրեալը (84 յօդուած).

Աո Հայկազն

Ի զուր վիճիս Հայկազնեղ, զուր զօղըս կոծիս նանը (բանսս.
Ի՞նչ յուսակնեալ ակն ունիցիս ի հակաճառըս բանից
Յաղթահարել զայնպիսւոյ Աստն Թեւսակից ըզԳրի- (գոր:

2. Այս չակերտեալ բանս Գր. Աստուածաբանի գրոց մեկնիչն՝ անոր Հայոց վրայ ըսածին համար գրած է. անկէ վերջը գրուածն է վանական վարդապետին:

ի վարս վարդապետին Իւրեանց[1], յերեան հանին։ Ն՚ա՝ յառաջ ետ նկարել զպատկերս նոցա, և ապա յարոյց զքաղաքն ի վերայ նոցա, և հանին զնոսա արտաքս։ Նոքա երթեալ ի Միջագետս Ասորւոց՝ ուսան գիր և լեզու, յամենեքին անդ մինչեւ ի գալ հաւատարել հերացն և մօրուաց. ապա ամենեքին Ասորի ձեւացեալ՝ մտին անդրէն յԱթէնս։ Զոր իմացեալ՝ հանին վերստին. օրէնս եդեալ՝ Հայի մի ումեք մտանել անդ։ Եւ զի նախանձ և հեռ ուր մտանի՝ քակէ, աւերեալ բարձաւ անդ ուսումն և արուեստ։

ԶՉ

ԴԱՆԻԷԼ ԾԵՐՈՒՆԻ

(ԲՈՒԶԱՆԴ. Գ. ԺԴ)

Էր սա այր զարմանալի. առնէր նշանս և զօրութիւնս մեծամեծս՝ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Սա և կօշկօք քայլելոյն գնայր ի վերայ ջուրց գետոց, և ոչ թանային, և ոչ հանէր։ Սա և յաւուրս ձմերանոյն՝ յորժամ կաւտեալ զիզեալ մեծութիւն բազմութիւն թանձրութեան ձեռանցն կաւտակեալ հիւսեալ ձեռանցն[2] ի վերայ ձմերային լերանցն, յայնպիսի լերանց ի վերայ՝ ընդ այնպիսի ժամանակի կամէր ուրեք երթալ՝ ի պէտս հանապարհի, յանկարծօրէն ձիւնն ցամաք

1. Հայք իրենց վարպետին մէկ պակասութիւնը կամ յանցանքը կու յայտնեն, նա ուզելով զանոնք վռնտել, նախ անոնց պատկերը նկարել տայ, որպէս զի ճանչցուելով՝ նորէն չընդունուին յԱթէնս։
2. Ձիւներուս վրայէ վրայ դիզուիլը յիշելով, հեղինակն այլ չափազանց դիզեր է իր բառերը։

արջն[1] լինէր առաջի նորա։ Եւ զի կամէր ի հեռաստան ուրեք երթալ, իբրեւ զիայլական սլացեալ լինէր անաչխատ. իբրեւ թռուցեալ՝ յոր կամէրն երթալ ի տեղին՝ յանկարծօրէն անդ գտանէր։ Յարուցանէր զմեռեալս, առնէր և բժշկութիւնս հիւանդաց, և այլ եւս մեծ նշանս և զօրութիւնս քան զնոյնս գործէր. զոր ոչ բաւեսցէ(ագ) ընդ գրով նշմարտացս փակել։ Եւ բնակութիւն իւրոց կայենիցն յանմարդի լերինս(էր). այլ զտեսչութիւն մարդկան պիտոյից՝ ոչ երբէք անփոյթ առնէր։ Միահանդերձ մաչկանախորան[2], առնգալաւոր[3]. և կերակուր իւր արմատք բանջարոց. և գաւազան անգամ ընդ ինքեան ոչ ունէր։ Եւ առ բանն Ասուածոյ այնչափ էր հզօր, զի զինչ հայցէրն յամենայն՝ առնոյր, և զոր ինչ ասէր՝ այն լինէր։ Եւ կայեանք տեսչութեան իւրոյ՝ յորժամ յանապատաց ի չէնս իջանէր վասն գործոյ Աստուածոյ, ի գլխաւոր տեղիսն յեկեղեցեացն լինէր. և յամէն յակն աղբերն ի ներքոյ սարարարձր մեհենատեղւոյն Հերակլայ, որ կայ դէմ յանդիման լերինն մեծի՝ որում Յոզին[4] անուանեալ կարդան, ի բաղնին տեղւոջէ ի բացագոյն իրրեւ քարընկէց մի, ի ներքոյ կուսէ, ի գոյզն ծործորակին, ի սակաւ անտառակին, ի հացուտ պուրակին[5], որում անուն տեղւոյն իսկ Հացեացն դրախտ կոչեն։ Այս այն աղբիւրն է՝ յորում առնէր յայնժամ եւս վաղ՝ մեծն Գրիգոր՝ զմկրտութիւնս զօրացն բազմաց։ Յայնմ տեղւոջէ սորա կայեանք խցկան, Սրբոյն Դանիէլի. էր դարաւոր արարեալ բնակութիւն. և յայնմ տեղւոջ զղխաւորութիւն այցելութեանն կատարէր։

1. Սեւ ու ցամաք գեռին կ՚ըսեր։
2. Կաշիէ նախորդ զգեստ հագած. տես 105. ծան. 5։
3. Փայտէ ասքի աման։
4. Ասյինքն, Տօրոս կամ Տաւրոս, Ταῦρος, որ ըստ յոյն լեզուի, նշանակէ Ցուլ։
5. Հացի ծառերու պզտիկ տեղ մը. փռ. Frêne.

ԶԻ

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆՆ

(ԲՈՒԶԱՆԴ. Դ. Գ)

Յականէ յանուանէ իսկ խնդրեցին աշխարհաժողով զօրքն բազմութեան զայն՝ որ անուանեալ կոչէր Ներսէս, զորդի Աթանագենի, զհոռն քահանայապետին Յունական, որդւոյ Վրթանայ, որդւոյն Գրիգորի մեծին՝ առաջնոյ քահանայապետին. և մօր սորա Քամբիշն անուն, քոյր արքային Տիրանայ: Սա լեալ էր ամուսնաւոր յաշխարհակեաց կեանս նախ՝ յառաջս մանկութեան. ի տղայութենէ անեալ և ուսեալ ի կեսարացւոց քաղաքին Գամրաց, ընդ հաւատարիմ վարդապետաք. և ցանկալի եղեալ իւրացն համարուեցան զուգակցացն: Այլ ի ժամանակին յայնմիկ էր ի վարս պինուորութեան, ի գործակալութեան, սիրելի սենեկապետ արքային Արշակայ, հաւատարիմ ի վերայ ամենայն կարգաց կենաց թագաւորութեանն ի ներքոյ և արտաքոյ:

Այր էր սա մեծ և բարձր, ցանկալի հասակաւ, և վայելուչ գեղով, զի ոչ գտանէր ուրեք նման նմա գեղեցկութեանն ի վերայ երեսաց երկրի. տենչալի ցանկալի և զարմանալի և ահագին ամենայն նայեցող տեսողաց, և նախանձելի յարութեանն ի պինուորական կրթութեանն: Երկիւղած ի տեառնէ Աստուծոյ, յոյժ ուսանդապաշտ պատուբանաց նորա, մարդասէր, սուրբ, զգաստ, սաստիկ, խմաստուն և առանց ակնառութեան իրաւանց իրաւարար, ցածուն, քաղցր, խոնարհ, աղքատասէր. ի սրբութիւնս ամուսնութեանցն օրինաւոր. և կատարեալ սիրոյն Աստուծոյ: Եւ առ իւր ընկերս՝

ըստ պատուիրանին՝ սիրել զամենայն ընկեր իրրեւ զանձն. զի ի պինուորութեանն այնպէս կատարեալ էր վարուք լաւութեամբ, որ մինչդեռ մանուկ իսկ էր՝ գնայր նա ամենայն պատուիրանաքն Տեառն ի արդարութեամբ, անարատութեամբ և ամենայն պաշտամամբք առ ընկերս իւր: Անձանձրոյթ էր, և ունէր զնախանձն Աստուծոյ, և եռայր սուրբ հոգւովն. այսպէս իսկ էր ամենայնիւ կատարեալ յամենայնի: Եւ զաղքատս և զտառապեալս այսպէս սիրէր և ակն ածէր ի վերայ նոցա, զի զիւր ինչ զհանգերձս և զկերակուր հատարակէր ընդ նոսա. և նեզելոց և տարակուսելոց օգնական և վերակացու, և չատագով ամենայն զրկելոց լինէր նա:

Մինչ գեռ եւս զպինուորական ձեռն յինքեան բերէր, և զարգարեալ էր գեղեցիկ պատմուճանաւ ի զարդ վայելուչ, և ցանկալի գեղով իւրով, երկայն հասակաւ, և չքնաղատես հերոք վարսից իւրոց, կայր ի սպասու թագաւորին, մօտ ի անարս արքային, զարքունական սուսերն զպողովատիկն զուկէպատեանն՝ հանդերձ ականակապ մարգարտազարդ կամարաւն՝ ի սպասու նորա բարձեալ ունէր. առհասարակ առեանն զրաղոք բարձեալ զազդակէին, եթէ Ներսէս լիցի մեր հալիւ:

ԶՐ

ՇԱԽԱՍՊ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՒ ՀԱՅՐ ՄԱՐԴՊԵՏ

(ԲՈՒԶԱՆԴ. Դ. ԺԴ)

Զայնու ժամանակաւ Սուրբն Ներսէս չրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնն. զի հնգետասան դասս զայն ձեռական իշխանութեան ունէին իրրեւ սեպհական ի բնէ, առանձին առաչոգի նոցա էր

կարգեալ[1]։ Եւ յայն գաւառս գլխաւոր գաւառք այս էին, Աղբատաց, Գարանաղէ, Եկեղեաց, Տարօն, Բգնունիք, Ծոփք, և որ ընդ մէջ նոցա և որ չուրջ զնոքօք։ Եկն էլ և Հայրն մարդպետ[2] զիւրով իշխանութեամբն շրջել. ապա եկն և սուրբ կաթողիկոսն Ներսէս յառաջին տեղին, ուր նախ էր զեկեղեցին շինեալ ի Գրիգորէ, և զվկայարանն սրբոցն զվկայեցն, և անդ դլիշատակս Սրբոցն կատարէր։ Ապա դէպ եղեւ անցանել Հայր մարդպետին առ տեղօքն, ցանկացաւ ելանել ի սուրբ տեղիսն Աշիշատաւ, կալ յաղօթս, և առնուլ օղջոյն ի սրբոյ եպիսկոպոսապետէն Ներսիսէ։ Ապա իբրեւ կային յաղօթս, եառն օղջոյն, հրամայն տայր սուրբ Հայրապետն Ներսէս՝ եկեղեցին ձայն պատրաստել։ Եւ մինչդեռ նոքա պատրաստէին ինչ ըստ նմա արժանի՝ աւագօրէն սպաս, նա[3] ելանէր յեպիսկոպոսական կայինէն յապարանիցն՝ մինչեւ ի վիյաբանս Սրբոցն. ի մեծ և ի դեղեցիկ հրապարակին զերթեւեկս առեալ չրջէր, զեմս առեալ. ապա տեսանէր զդեղեցկութիւնս վայրացն, զնիստ չքեղութեան ի բարձրաւանդակ տեղեացն և զնայեացն ի խոնարհ, զի կարի վայելուչ էր տեղին. և չարակնեաց[4]։

Ապա եմուտ բազմեցաւ յատեղ և լըմպել։ Իսկ յորժամ արբեցաւ, սթափակեցաւ[5], սկսաւ ներքինին խօսել բանս հպարտս և ամբարտաւանս յարբեցեաց. գնէր թչնամանս Տրդատայ արքայի, ի մեռեալս և ի կենդանեացն ի կեանս, ազգի և տոհմի և տահմի Աշակունեաց թագաւորացն Հայոց[1]։ Զիմարդ, ասէ, զայսպիսի տեղիս՝ կանանցահանդերձ[2] մարդկան տուեալ է, և ոչ արանց։ Եւ ըզսուրբ տեղեօքն քամահեալ արհամարհէր, և ասէր. եթէ, զայս տեղիս ի բաց քակեմք, զի սատ պարտ է չինել զապարանս արքունի։ Եւ թէ, ես Հայր մարդպետ կենդանի իցեմ և առ թագաւորաւն Հայոց, ասէ, որ ինչ ասա իցէ զայն ի բաց փոխեցից. և որ ասա իցեն, ասէ, զնոսա հանից, և զտեղիս՝ արքունի սենեակ կազմեցից։

Իսկ սուրբ եպիսկոպոսապետն յորժամ լսէր, և ասէ. եթէ, Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ընտրեաց նախ զայս տեղի՝ դնել զանուն իւր ասա, որոյ անունն առ հասարակ ընդ ամենայն տեղիս փառաւորեալ է՝ Հարրն և Սուրբ Հոգւովն հանդերձ, որ պատուիրեաց մի ամենեւին յայլոյ ինչ անկն դնել[3] կամ ցանգալ. իսկ որք ժլատեաքք՝ ի նորա նուէրսն բերեն աչս, և այնմ ցանկան, վասն այսորիկ նա մի հասցէ առ այն՝ որով սպառնացաւն, այլ խափան լիցի իւր յաւուրն նմա բազում մակարդ մեզացն իւրոց գործեցելոց։ Ապա գնայր մարդպետն Հայր ի սուրբ տեղեացն, և էլ յայն գետոյն հոսանացն Եփրատու, հովիտն թանձրատառն անտառին, ի գետախառնուածն երկուց գետոցն, ի թաւուտ խարձիցն մամխեացն[4], որ ի տեղւոջն ի հնոցն իմն չինած քաղաք՝ զոր չինեալ Սանատրուկ արքայի, որում անուն տեղւոյն Ծոցորք կոչի։

Աւրդ, իբրեւ եկն եհաս յայն տեղի, ապա յաւղեցաւ գաւառատան բարկութեան ի Տեառնէ՝ ի վերայ անօրէնին Հայրի, և իւրոց գործոցն և բանիցն խօսելոյ։ Ապա մտանեցաւ նա ի ձեռս առն միոյ,

1. Իբրեւ առճիկ կամ ապրուստի համար՝ Հայոց թագաւորք առած էին Հայրապետին 15 գաւառս։

2. Երբեմն արքունի ներքինապետն այսպէս կոչուէր. յետոյ իրեն երկրին տեարքն այլ այնպէս կոչեցան։

3. Մարդպետն։

4. Ագահաբար նախանձիլ։

5. Խելքն անցաւ, ցնորեցաւ։

1. Գինովի խօսքեր։

2. Եկեղեցականաց և կրօնաւորաց հագուստը նմանեցնել կանանց հագուստի։

3. Աչք անկել, ագահութեամբ նայիլ։

4. Մամխի, վայրի սալորի ծառոց տեղ։

որոյ անուն Շաւասպ կոչէր, ծնացորդ ազգին Աբծրունեաց: Մինչդեռ նստէր նա ի կառս, և երթայր զճանապարհն, եկն Շաւասպն, սկսեալ պատմել Մարգպետին սուտ՝ ի քմաց իւրոց[1], և ասէ. Աղջ մի տեսի սպիտակ իբրեւ զձիւն. և հրապուրեաց զՄարգպետն իջանել ի կառաց անտի, և հեծանել ի նժոյգի: Եւ մտեալ պատակէին[2] մայրեացն: Իսկ իբրեւ ընդ թաւուխն անկանէին, զկնի եղեալ սակաւ մի Շաւասպն՝ յետադոյն ծնացեալ, յետոյ յառաջ նետիւ հարկանէր զմէջ ներքինւոյն Հայրի. անդէն թափ հանեալ գնետն, և անդ յերկիր անկեալ սատակեցաւ: Եւ առնն Աստուծոյ (Ներսիսի) ասացեալքն, հուպ ընդ հուպ վաղվաղակի կատարեցաւ. զի ամենեւին բան ի գետին ոչ անկանէր առնն Աստուծոյ:

ԶԹ

ԱՆԴՈՎԿԱՑ
ՍԻՒՆԵԱՑ ՏԵԱՌՆ ՎՐԷԺՔ Ի ՊԱՐՍԻՑ

(ՍՏ. ՕՐՊԵԼԵԱՆ, Ա. Բ)

Այս Անդովկ այլովք նախարարօք Հայոց՝ լինէր հանապազ ի զրոյն արքունի. և սա էր ճոխ և փառաւոր ի մէջ իշխանաց Հայոց և խառնեալ էր խնամութեամբ ընդ Աբշակունիսն. զի զդուստր իւր զարմանագեղ զՓառանձեմ՝ տուեալ էր ի կնութիւն Գնելայ՝ եղբօրորդւոյն Աբշակայ, զոր յետոյ ինքն էառ և ծնաւ ի նմանէ ժառանգ թագաւորութեան իւրոյ զՊապ, որ թագաւորեաց Հայոց յետ հօր իւրոյ:

1. Շինծու սուտ խօսքեր:
2. Այս կողմ այն կողմ կ'երթային անտառին մէջ:

Եւ ապա լինէր օր մի պարապոյ, և Շապուհ որդի Որմզդայ արքայից արքայ Պարսից[1], Աբեաց և անթիւ աշխարհաց, կամեցեալ խրախանալ, և ճաշ արարեալ ամենայն մեծամեծաց իւրոց, ամենայն տոհմից ազատատոհմի Պարսից նախարարաց և Աբեաց գնդին, ըստ նախապատուութեան նախապատիւ արարեալ բաժակօք և ուռովք[2], առաջի իւր՝ զիւրաքանչիւր ոք նախամեծար ցուցանէր. իսկ զմովպետան մովպետան[3] ի սեղան արքունի մեծապատիւ մեծարէր: Եւ խորհուրդ բերեալ թագաւորն Պարսից Շապուհ՝ խօսել սկսաւ առ նախարարս Հայոց և ասէ. ԶՊարսից և զՊարթեւաց բնական պահպանիկս և զազատագունդս ազատ արանց Աբեաց աշխարհի, և զնախամեծար գաստապատիս՝ քաջ գիտեմք զորպիսութիւն. բայց զԱբմինու[4] զազատատոհմն և զնոսին նախապատիւ նախադաս նախագահութիւնս՝ ոչ կարացաք գիտել, ոչ ի նախնեացն մերոց հարցն հարանց թագաւորաց և ոչ այլուստեք յամենիմաստ մատենագրաց: Եւ արդ, մի յերկուցս առաջի կայ ձեզ՝ նախարարացդ Հայոց ազատ արանց, կատարել զինդիր մերոց Աբեաց աշխարհաժողով ազատազարմ կուսակալաց. ցուցանել ձեզ զնախնականն գիր, ըստ իւրաքանչիւր ըստ տանց ազատազարմ եկաց ձերոց՝ զնախատոհմն և զնախանիստ պատիւն, և դարձեալ զմեծագոյնն ունել զչքեղազուարճ մեծարանս եւս քան զեւս. իսկ եթէ ոչ կարէք, ակն յայտնի Աբեաց աշխարհի ազատ արանցս չնորհեսցուք, և զձեզ ապաշնորհս և ունայնս արձակեսցուք, և ատացուածք գիւղից

1. Մեծ և երկար թագաւորող Շապուհն է, մեր Ս. Տրդատայ օրերէն մինչեւ ի Վարազդատ:
2. Փինեայ բաժակները օրթի ճիւղերով և ծաղկեղերով պատէին:
3. Որ է մեծ Մոգպետն:
4. Աչխինքն Հայոց. որոց աշնուական ցեղերու իրարմէ վեր վար դասակարգութիւնը կ'ուզէր դնանալ:

և ապարանից ձերոց՝ Աբեացս ազատ արանց ի ծառայութիւն լիցին:

Եւ նայնժամայն խորհուրդ արարեալ իշխանացն Հայոց Մեծաց, մատուցին առաջի թագաւորին զցանկալին ամենայն ատենից՝ դհրաշալաբանականն տպաւորումն, զգրաւորական գիրս Սրբոյն Գրիգորի, որ Ագաթանգեղն կոչի[1]: Եւ հրամայեալ թագաւորին Պարսից ընթեռնուլ և թարգմանել ի պարսիկ գիր և լեզու. և իմացեալ՝ եթէ սիփրն յԱրտաշրէ[2] առնու՝ յիւրոյին նախնւոյն, առաւելագոյն զուարճացեալ բերկրեցաւ առաջի աշխարհաժողով Աբեացն գնդին. և առեալ զգիրս Սրբոյն Գրիգորի՝ եդ ի վերայ աչաց իւրոց. և զուարճացեալ Պարսից թագաւորն համբուրէր զգիրս Սրբոյն Գրիգորի, և պէսպէս պարսկական լեզուաւ զբազում խանդագատանաց ի ներբողումն արարեալ. վասն զի գիւրեան ազգային զԱրտաշիր գոլ ըստկիզբն զրոյն գիտէր: Եւ գտեալ ի նմա զգիր տանն և եօթն բարձ ազատացն Հայոց իշխանաց, սկսաւ ըստ այնմ գոյ նախապատիւ յարդարել յարքունական տաճարին՝ գնխաս իւրաքանչիւրոցն ի սեղանի ուրախութեան: Իսկ տանն և չորրորդ բարձն եհաս Աճդոկայ՝ Սիւնեաց տեառն: Եւ նա հպարտութեամբ խրոխտացեալ՝ ոչ ինչ ճաշակեաց յայնմ ուրախարար արքունական ընդունելութենէն: Եւ զգացուցեալ սպասաւորացն թագաւորին՝ պարիւնըգաւոթիւն խռովութեան երեսացն Աճդոկայ Սիւնեաց Տեառն՝ Շապհոյ Պարսից արքայի, ոչ ինչ փոյթ զայնմանէ լինէր:

Յայնմ ժամանակի փոյթ ընդ փոյթ զգացումն եղեւ ի գուռն արքունի, եթէ խազիրք բազմամբոխ

1. Ս. Գրիգորի վրայօք գրած ըստ լսելոյ Ագաթանգեղ, գրածն այլ երբեմն Ս. Գրիգորի գիրք կոչուի. անշուշտ յատնարէն գրուածն էր:

2. Սասանեանց նահապետն է, որ Ս. Խոսրովու հակառակորդ և Պարթեւաց ցեղը ջնջողն:

գնդովք հասին, արտաքս եղեալ ընդ Դրռնիս Զուղայ[1] յաշխարհս մեր: Եւ ժողով անթիւ արարեալ Շապհոյ Պարսից արքայի՝ Աւորւոց, Խորասանի, Խորդմայ, եւս առաւել քաջացն Պարսից Ասբարատական նահանգին, Հայոց, Վրաց, Աղուանից, և երկոտասան լեզուաց խուժադուժ ազգաց լերինն Կովկասու բարձրաբերձ կոհակացն առնեամանեաց, եկ գնաց անհամար բազմութեամբ պատերազմաւ ի գիմի հարկանել նոցա:

Իսկ Աճդոկայ՝ հազար և եօթն հարիւր արամբք ընտրելովք ժիր և քաջ տաճիկ նժուգաք՝ զինքն կոզման առեալ[2], և ապա զզօրն աստ և անդ նկանխաղ գաւառանութեամբ թաքուցեալ չուրջ զարքայանիստ չահաստանաւն Ցխաբռնիւ[3], որ է ի Մտաճր գաւառի Պարսից աշխարհին, պակաս քան վաչակաք արամբք ընտրելովք, քաջակորով հեծելովք, ընդ դրունս արքայարնակ քաղաքին մտեալ, հարցանէ յանգէստս և ի չքմեղս եղեալ, եթէ, ես առ Շապուհ արքայ եկի: Եւ քաղաքացիքն՝ ըստ Պարսից խրատուն հրահանգին[4] տեղիս իջեւանի նմա պատրաստեցին, պէսպէս բաժակօք և ընդունելութեան ոռճկօք՝ բազմախորհրդիկ համեղաճաշակս յարդարեալ, մեծաշուք չքեղութեամբ պատուով: Եւ իրրեւ գիշեր լինէր, Աճդոկ՝ գաւառանութեամբ ապդ արարեալ զօրուն իւրոյ, և իրրեւ առաւօտն ղլոյն մերկացաւ, և դրունք քաղաքին բացան և յանգուժանի[5] և յանպատրաստի՝ զօրքն Աճդոկայ ի ներքս դիմեցին ընդ դրունս, և առին զգանձս ոսկւոյ և արծաթոյ անհամարս, և գոհարս ականց և

1. Որ է ձորայ պահակ կաշուածն. տես երես 65:

2. Բանակէն գուրս ելնելով՝ ուրիշ կողմ կ'երթայր իր գունդն այլ բաժնելով՝ այս այն կողմ պահուըտիլ տայ՝ խարդախ մտածութեամբ:

3. Այն ժամանակի մայրաքաղաքն Պարսից:

4. Ըստ սովորութեան Պարսից և օրինաց:

5. Յանկարծակի, պարսկերէն բառով:

մարգարտաց, զշահաւարն բազմագին ոսկեթել հանդերձից, զթագաւորական ծիրանիս մարգարտայեռ պատմուճանաց, ի տանէ թագաւորին և յամենայն տանց իշխանացն Պարսից առին, և ոչ կարէին բառնալ: Եւ բերեալ զանթիւ զաւարն զամենայն՝ հաւաքեցին ի Բաղարբերդ[1]: Եւ զամենայն գաւառացն զհամբարս՝ զհացի, զխոտոյ, զյարդի և զբազմութեան գինւոյ, իղոյ, զենելեաց, մեղուի և պէս-պէս մրգոց համբարս անթիւս՝ ժողովեցին ի Բաղարբերդ, և զկազմածս հեծելոց և զպինուց օձարս:

Եւ հրաման տուեալ Աշոտոյ Սիւնեաց տեառն՝ ամենայն Սիւնեաց՝ փախչել, և զառունս և զհամբարանոցս համբարօք հանդերձ այրել: Իսկ բազմութիւն ամենայն գաւառացն Սիւնեաց՝ ժողով արարեալ եկեղեցեացն պատուիրանաց կամակարացն և արբոց խաչից ոսկւոյ և արծաթոյ անթիւ, և նշխարաց պատուական և սուրբ մարտիրոսաց, հաւաքեցին զամենայն ի Շաղատայ եկեղեցին[2], քարկոփ գումբեթաւոր. ոմանք յորմն եկեղեցւոյն պատուհանս գործեալ՝ դնէին զիւրաքանչիւր սուրբս՝ ի ներքս յորմն. և ոմանք ի ներքոյ եկեղեցւոյն ընդ բեմսն՝ գարանս գործեալ քարկոփս՝ լցին. ոմանք ի միջի եկեղեցւոյն, և ոմանք ի ներքոյ եկեղեցւոյն՝ արկեղովք ի վայր իջուցեալ. համբուրէին լալով և արտասուելով զիւրաքանչիւր վկայս, զսուրբ վկայից զնշխարս և զկտակարանս սուրբ աւետարանաց, մարգարէից և առաքելոց. յանձն արարեալ եկեղեցւոյն Սուրբ Աստիանոսի: Եւ ութ օր խընդրուածովք ցայգապաշտօն արարեալ ի նմին՝ ամենայն Սիւնեաց. և կունձամբ[3] թաղեալ հոգալըւր արարին ի վերայ եկեղեցւոյն Շաղատայ, որ է ի Ծղուկ գաւառի: Եւ փախուցեալ ցրուեցան ընդ ա-

1. Սիւնեաց երկրին գլխաւոր ամուր բերդն:
2. Սիւնեաց Ծղուկք գաւառին իշխանանիստ քաղաքաւանն էր, Ս. Աստիանոս եկեղեցեաւ:
3. Խառով խառնած հողի կոշտք:

մենայն երկիր. և ոչ ոք իշխէր ասել զանուն Սիւնեացն. և քան և հինգ տարի ապալերկ աւերակ եկաց աշխարհն ցանկալի Սիւնեաց: Եւ եկեալ Շապուհ Պարսից արքայ ի վճարմանէ պատերազմին Խաղրաց, մեծաւ յաստմամբ հրամայէր ամենայն զօրաց իւրոց ելանել յաշխարհն Սիւնեաց, և գերել զմարդ և զանասուն ի ծառայութիւն: Եւ հասեալ յաշխարհն՝ ոչ ինչ գտին ամենեւին, բայց զօրրութեանց տեղիս՝ զեկեղեցիս, զորս քանդեալ աւերէին և հրակէզ առնէին ընդ ամենայն աշխարհն Սիւնեաց: Եւ հասեալ զօրն պարսկական ի Ծղուկս գաւառս, ի Շաղատ գիւղաքաղաք, և անցեալ յեկեղեցարլուրն, ընդ որով սուրբ եկեղեցին թաղեալ էր, իմացան թէ ընդ բլրովն լինի ինչ ի ներքոյ. և ոմանք ի պարսկական պայեկացն[1] ի վեր յեկեղեցարլուրն ելեալ՝ յանկարծօրէն թնդիւն որոտման և չարժումն եղեւ, և յեկեղեցարլրէն արտաքս ձգեալ վերելականքն[2] Պարսից՝ սատակեցան. և Աբրահադա[3] ինքն պարսկական գնդիւն ի փախուստ դառնայր ի սաստիկ յահի եղանելոյն:

Եւ գարձեալ ժողով արարեալ ամենայն բազմութեան գնդին Պարսից և Աբեաց աշխարհին, որ է Խորասան, Շապուհ Որմզդեան, անց տալ պատերազմ ընդ Բաղարբերդի, և ոչ ինչ կարացեալ առնել ամրութեան տեղւոյն, զի վէմս գլեալ ի տեղւոյն ընդ զառ ի վայրն, զամենեսեան առ հասարակ սատակէին: Եւ հրամայեալ Շապհոյ բազում քան զնոյն կրկնապատիկ զօր գալ ի Պարսից և վերջապահ թողեալ՝ հրամայեաց սատակացուցանել զպատերազմն ընդդէմ ամրոցին:

Եւ որպէս յառաջնումն, նոյնպէս յերկրորդումս՝ պարտաքարիւք և վիմագլամբ զանհուն բազմու-

1. Պայեկ կամ փայեկ, փեյիք ըստ Պարսից, սպասաւոր, հեռաւոր վազող կամ սուրհանդակ:
2. Վէր երկողներն:
3. Կրակապաշտից առաջնորդն կամ սարսչանն:

թիւն պաթսկական զօրաւն դիմաւաւել կացուցա-
նէին: Եւ դարձեալ երեքկին քան զնոյնն այլ զօր
բովանդակեալ Շապհոյ, ասաց. « Եթէ ի վերջ ոք
» դառնայ՝ սպանէք »: Եւ սոքա նոյնգունակ վիմօք
և պարսիւք կոչկոճեալ սպառեցան: Եւ զայրագին
լի ցասմամբ եղեալ Շապհոյ ընդ եղմունս իրացն՝
կամ եղեւ այլ եւս զօրս անթիւս բովանդակել առ
ի սատակիկ եւս տալ պատերազմ ընդ Բազաբերդի:
Բայց մեծամեծ նախարարացն ի ծունր իջեալ ա-
ռաջի արքային Պարսից Շապհոյ, աղաչեցին մի
եւս պատերազմել ընդ անպարտելի ամրոցին և մի
տալ կոտորել զՍրեացն գունդս: Եւ ասացին չուրջ
զամրոցաւն յաւեր դարձուցանել, նոյնպէս և զա-
մենայն իշխանութիւն գաւառացն Սիւնեաց: Հրա-
ման եղ յարքունեաւս, եթէ մարդ և անասուն՝ ձեզ
Աբեաց աշխարհի զօրաց ի ծառայութիւն լիցին:

Իսկ Անդոկայ Սիւնեաց Տեառն, որ պարապորդ
գաեալ՝ եղեալ յամրոցին Բազաբերդի մեծաւ աւա-
րաւն՝ անցանէ յաշխարհն Հաւոմոց, առ մեծ ինք-
նակալն Թէոդոս՝ արքայ Յունաց. և ի նմանէ պա-
տիւ մեծագոյն գտեալ, և պատրկաց պատրիկ ա-
րարեալ՝ վախճանի անդէն յաշխարհն Հաւոմոց:

Ղ.

ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ ԲԱԲԿԱՅ ՍԻՒՆԻՈՑ ԸՆԴ ՀՈՆԻՆ

(ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ[1], Բ. ա)

Բաբիկ՝ փափաքեալ ի հող հայրենի, որպէս քաղցր
են ծնողք՝ նոյն և գաւառք, երթայ, գնայ ի դուռն
Շապհոյ արքային Պարսից. և անդ ուժգին ի զօ-
րականացն պատահեալ՝ զեռելի[2]. և բազում արու-
թիւնս յոգմպիադս[3] Պարսից ցուցանէ, ոչ աք գի-
տելով վնաս:

Յայնժամ եղեալ Հոնն ի Հոնաց Հոնաւիգուր[4] ա-
նուն, ուսար առեալ զաչխարհն Պարսից, յղեալ
առ Շապուհ ասէր. Ձի՞ է հեղուսն արեանցս. եկ,
մարտիցուք դու և ես: Եւ ինքն Հոնն վառեալ էր
յիշանութեաւ[5] զրահիւք զբարձր և լայն հասակն,
և բեւեռապինդ սաղաւարտաւ՝ զահագին գլուխն, և
զերեքթիզեան ճակատն պղնձեան սախտակով յօրի-
նեալ, և զանհեթեթ գեղարդն ի բարձրամայր փայ-
տից, և զսուսերն բոցանչան ունելով ահաբեկ ըզ-
տեսողսն առնէր:

Ասուսա յայնմի անուն Բաբիկայ առաջի ար-

1. Թէ այս հեղինակս և թէ յետոյգրեալ Օրպէլեանն՝
այս դիպուածս առած են՝ Սիւնեաց եպիսկոպոս Պե-
տրոս Գերդգի ճարտասանօրէն զրուածէն: Բաբիկ՝ Ան-
դովկայ որդին է, որ հօրը հետ փախեր էր իր եր-
կրէն, վերոյգրեալ գործոյն պատճառաւ:
2. Անոր քով կենայ. քնակի:
3. Ըմբշամարտութեանց մէջ:
4. Հոնաց մեկ ցեղի անուն է Հոն–Ոզուր, որ յի-
շեցընէ Հունգարաց (Մաճառաց) անունն և ծագումը:
5. Վրայէ վրայ կամ յիսուն տակ:

քայի. թէ, գործդ այդ՝ նովաւ վճարի: Եւ արքայն արքայից կոչէ առ ինքն զԲարիկ, և տայ վճիռ թագաւորութեան կնքեալ վարազագիր մատանեաւ. և ասէ ցնա. Թէ մեծ քինոյս այսմիկ յանդուման առցես, մեծագոյն խոստմանց հասանիցես: Եւ նորա յանձն առեալ կատարել զխնդիրն. և նոյն ժամայն ապաւինեալ ի վերին օգնականութիւնն, ասէ. Եկեղեցիք Սիւնեաց, օգնեցէք ինձ: Եւ առեալ զիւրոյ զօրութեան զգենս, և ճաճանչաւոր մարգարտակապ զրահիւք արքունի՝ զվայելչականն զայն զարդարեալ զհասակ, և վագրակերպեան սաղաւարտովն[1] զգեղեցիկ զլուխն հիւսեալ, սուսեր ընդ մէջ, զոսկիակապ վահանն յահեակ ուսն ընկեցեալ, և զգեզարդն քաջամարտս յաչ բազուկն առեալ, աշտանակէր ի սեաւն երիվար. և խայտայր ընդ գէմ թշնամւոյն: Յարձակէին ի միմեանս. ի տար և առ գեղարդայն՝ ճայթիւն որոտմանց ելանէր, յառաւօտէն մինչեւ յիւնն ժամն: Դատապարտեր անհնարին սկայն. յաղթողանայր քաջն Բարիկ. աճապարէր ի սուրն միսառնի, որով անգէն սատակէր զմարդապաշտ գազանն:

Եւ լցեալ Շապուհ մեծաւ ցնծութեամբ՝ կոչէ զԲարիկ, առ ի կատարել զառ ի նա խոստմունս. և նորա բան խնդրեալ ասէ. Բարձցի սանդն պղնձի՝ ի գրանէ քուիմէ: Եւ սանդն էր լի մոխրով հնոցի. և որք գային ի տեղին յայն՝ կոխէին ի նմա և ասէին. Սիւնեաց տէրութիւնն ընդ այս մոխիր ի վայր լիցի, կեանքն և խորհուրդն: Եւ արքայ մեծաւ զարմացմամբ հրամայեաց բառնալ զսանդն ի տեղւոջէն: Եւ ապա խնդրէր զրնական աշխարհն իւր ի նա դարձուցանել: Եւ չնորհեալ նմա յարքայէն՝ մեծաւ պատուով առաքէ զնա յիւր աշխարհն. և աւանդէ նմա պատիւ ընդ Բագրատունեաս և ընդ Մամիկոնեանս համապատուեալ:

1. Սաղաւարտն վերեւն վագրի գլուխ մի ձեւացուցած:

Եւ եկեալ անց ընդ Երասխ, և չինեալ գեղ մի Նակորզ[1] անուն. այսինքն է առաջին կորզեալ ի հայրենեացն: Եւ յառաջին ամի տէրութեան իւրոյ՝ եղեալ յօրս՝ չրջէր, և տեսանէր ապալերկ զերկիրն. և հասեալ ի Շաղատ՝ ելանէ ի բլուր մի. և անտի փախչի եղջերու մի, զեպ ելանէ յեկեղեցաբլուրն. և Բարիկ զհետ մտեալ, եղջերուն ի բլրին՝ անհետացեալ լինէր. և ոտք երիվարին խրեցան ի բլրին. որ իջեալ յերիվարէն՝ հազիւ ուրեմն քարչէր զերիվարն: Ահ կալաւ զամենեսեան. արտաքս պեղէին զհողն ի բլրէն. և գտանէին զգեղեցկաչէն եկեղեցին՝ լի աստուածային գանձիւն, հօտ անոյշ բուրեալ. և օրն այն լինէր Հոռի ամսոյ, որ օր մի էր[2]:

Զայն օր մեծապէս կատարեցին տօն՝ ժողովք լեալ. և բազում բժշկութիւն լինէր ո՛ք ի ժամուն դիպեցաւ անդ. զոր տեսեալ անհաւատացին՝ հաւատացին և մկրտեցան Գոր և Գազաւն, որք բազում զօրօք զկնի Բարկայ եկեալ էին, երկու եղբարք մեծատունք. որոց արկեալ վիճակ Բարկայ՝ հասանէ Գորայ աւանն խոտայ և կրսերին Գազանայ՝ գեօղն ցանկալի Շաղատ վիճակեցաւ:

Յօրժամ այս եղանէր, քան ամաւ յառաջ լինէր քան զթագաւորելն Յազկերտի չարի[3], որ բառնալ կամեցաւ զհաւատն Քրիստոսի:

1. Կամ լաւ եւս Նախկորզաւն:

2. Ըստ անշարժ տոմարի՝ 9 սեպտեմբերի:

3. Թուականս յարմարի Ա Յազկերտի, որ թագաւորեց յամի 399: Հեռեւեալ (90) յօդուածն քանի մի տարի առաջ դնէ:

Ղ.Ա.

ՆՈՑՆ ԲԱՆ, ԸՍՏ ՍՏ. ՕՐՊԵԼԵԱՆ

(Ա. ԺԱ. ԺԲ)

Վասն գալոյ Բաբկայ ի Հոռոմոց առ Շապուհ, և քաչուբեանն զոր եցոյց. և վերատին տիրելոյն սկսմանական հայրենեաց իւրոց Միհրեանց աշխարհին, և շինուբեան սորա, և նախագահ պատուելոյն ընդ Բագրատունիս. ի նոյն Ճառիցն Ցեառն Պետրոսի։

Եւ այս ի վաթսներորդ ութերորդ ամի թագաւորութեանն Պարսից Շապհոյ Որմզդանի։

Իսկ ի վախճանելն պատրկայ պատրկին Անդկայ, մնաց որբ և անմխիթար միայնակ որդին իւր Բաբիկ, և զի թէպետ բազում և մեծամեծ ունէր պատիւ յաստուածապաշակ և ի սուրբ թագաւորէն Թէոդոսէ Մեծէ, այլ ոչ հանդուրժէր արտաքոյ ընկերութեան իւրոյ, փափագեալ աստիճակ կարօտութեամբ յաշխարհ իւր, ըստ ասացելոյնն Դաւթայ, թէ, ի հողս իւրեանց գիմացին. և պարձեալ, ըստ իմաստնոյն բանի, եթէ, Ձիք ունէք քաղցրագոյն քան զծնողս, և ոչ քան զգաւառ իւր։ Եւ գնացեալ յաշխարհէն Հոռոմոց առ արքայն Պարսից առ Շապուհ, հասանէ ի գուռն արքունի. և առ ուժեղն ի զօրականաց արքային հեշտ պաշտամութեամբ[1], և բազում արութիւնս պէսպէս յօրամպիսգան Պարսից ցուցեալ, և ոչ ունէք զինքն յայտնեալ եթէ ով և կամ ուստի ոք իցէ։ Եւ նոյնժամայն յայնժամ եկեալ Հոնն ի Հոնաց Հոնագուր անուն, աւար առեալ զամենայն աշխարհս Պարսից

1. Թուի ըսել, թէ Բաբիկ ինքնայօժար կամօք ծառայէր այն պարսիկ զօրավարին քով։

սից, ասէ. «Զի՞ է հեղումն արեան և վատնումն » զօրաց բազմութեան. եկ, և մենամարտեսցուք » ես և դու՝ միով միակաւ »։

Եւ վառեալ Հոնին՝ որոյ Հոնագուր[1] անուն ճանաչէր, յիշնանիւթեալ զրահիւն զանհնարին բարձր և զլայն հասակն, և երկաթագամ և բեւեռապինդ սազաւարտիւն զահեզակերպ զլուխն և զճակատն՝ պղնձեալ և տախտակամած յօրինուածով ամրացուցանէր. և զանհեգեզ գեղարդան զրունն ի բարձրամայր փայտից, և զսուսերն բոցանչան և զբիւնահեղ յօրինէր ի յինքեան, ահաբեկեալ զամենայն զզօրս Մարաց և Պարսից և Արեաց աշխարհին. որպէս զեկոյց մեզ ի ներբողմանն իւրում՝ երանելին Պետրոս՝ Սիւնեաց եպիսկոպոս, քերթողահօրն Մովսիսի աշակերտ։

Եւ գարձեալ զեկուցանեն արքային արքային Պարսից վասն Բարկայ, թէ, դոյ այր մի ի զրան քուն, որ գործ պատերազմիդ նովաւ վճարի։ Եւ արքային արքայի կոչեցեալ զԲարիկ, և թագաւորութեան պատուի վճիռ կնքեալ վարազգիր մատանեաւ. և ասէ. «Եթէ վրիժուց նախանձու քինոյս » այսորիկ յանդգնեալ արարեալ, մեծամեծ խոստ » մանցս առացելոցս հատցես»։ Եւ նորա ձեռն յանձին հարեալ առ արքային՝ առ ի կատարել զհրամանն արքունի. և նոյնժամայն ապաւինեալ ի վերին օգնութիւն, և առեալ զիւրոյ զօրութեան զէնն՝ յօրինէր ինքեան, և ճաճանչաւոր և մարգարտակապ զրահիւն արքունական՝ զվայելուչն հասակ, և վագրակերպեան[2] սազաւարտաւն՝ զգեղեցիկն զլուխ. և զսուսերն սեաւ պողովատիկ՝ զսէգն մինչև. և զվահանն զոսկիակապ և զականակապ՝ ի յահեակ ի յուսն ընկեցեալ. և զգեղարդն՝ զսուրն քաջամարտ՝ ի յայ բազուկն ընկեցեալ, հաստատեստեալ

1. Ցեղին յատուկ անունն է քան իր յատուկ անձին. տես նախագրեալ յօդուածին 4 ծանօթութիւնը։
2. Տես երես 118, ծան. 2։

աչառանակէր ի սեաւն քաջ երիվար. ախոյանայր ընդդէմ թշնամւոյն: Յարձակէին ի միմեանս. ի տուր և յառ գեղարդացն՝ ճայթիւն որոտման ելանէր յառաւօտէ մինչեւ ցինն ժամ: Անդ գառապարտեալ լինէր անհնարին հսկայն Հռնագուր. յաղթօղանայր քաջն Բաբիկ. ամապարէր ի սուրն միասայրի, որով անդէն սատակէր զմարդախաղոյ և զվիշապազոր գազանն:

Եւ դարձեալ, որպէս վերագոյնն ասացաք, յեբանելոյն Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի՝ ի ներքոյմանէն առաք՝[1] զոր արարն ի վերն Բաբիկ. զոր և Պարսիկք յիւրեանց լեզուն լաւ[2] կոչէին զնա:

Եւ յետ այսր եղմանց սքանչելեաց հրաշագործեանց, կոչեաց զԲաբիկ Շապուհ՝ արքայն Պարսից, մեծաւ ցնծալից ուրախութեամբ, առ ի կատարել առ նա զխոստացեալն զմեծ խոսմունս: Եւ նորա բան[3] խնդրեալ յարքայից արքայէն՝ առ ի բառնալ զանգրդն լի մխթով հնոցի, զոր ի դարապասին եղեալ կոփելով վերակոփմամբ՝ յիշելով ի վերայ մխթոյն ասէին, եթէ «Սիւնեաց տերանցն նախագահութիւն տէրութեանն՝ ընդ այս մխթիս ի վայր լինի, և որպիսութիւն նոցին խորհրդոց և կենաց»: Եւ արքայիցն արքայի մեծաւ զարմացմամբ եղեալ՝ հրամայեաց բառնալ զանգն ի տեղւոջէն յայնմանէ: Եւ խնդրեալ Բարկայ յարքայիցն արքայէ զի միայն զսեպհական աշխարհն իւր՝ զբնիկն, զնախնական տէրութիւնն իւր տպին՝ ի նա դարձուսցէ: Եւ չնորհեալ նմա արքայիցն արքայի Շապ-

1. Թուի թէ երբ Բաբիկ իշխանութեամբ գարձաւ ի Պարսից՝ խօսած ըլլայ Պետրոս այս գովեստս, ինչպէս իբրեւ տարիւր տարի մի վերջը՝ Յովհաննէս Մանդակունի կաթողիկոսն՝ ի գարձին Վահանայ Մամիկոնենոյ՝ ի զրանէն Պարսից, մարզպանութեան գերագոյն և անակնկալ իշխանութեամբ:

2. Պարսիկք իրենց լեզուաւ լաւ կոչէին զԲաբիկ:

3. Խնդրե Բաբիկ որ թագաւորն խոստանայ իրեն:

հոյ՝ առաքէ զնա մեծաւ պատուով յաշխարհն իւր Սիւնեաց. և աւանդէ նմա նախագահ լինել ընդ Բագրատունւոյ և ընդ Մամիկոնէի համապատիւ եղանիլ:

Եւ անցեալ ընդ երասխ գետ՝ չինէ գեղաքաղաք մի՝ կոչելով զանուն տեզւոյն Նախկորզան, որ թարգմանի նախ զնա կորզեալ առ յինքն յիւր հայրենեացն: Եւ գարձեալ, որպէս վերագոյնն ասացաք, եթէ ի վաթսներորդ ութերորդ յամի Շապհոյ Պարսից արքայի՝ որդւոյն Որմզդի, և յերկրորդ ամին Խոսրովու՝ Հայոց թագաւորի, Բաբիկ Սիւնեաց տէր լինի, և ի նմանէ առնու զտէրութիւն: Եւ Հռոմի թուական լինի 124. զոր ստոյգ գիտացաք, և 158 ամաւ յառաջ քան զԹուական Հայոց[1]:

Ղ.Բ

ՇԱՂԱՏԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՆՇԽԱՐՕՔՆ ՍՐԲՈՑ, ԵՒ ՏԻՐՈՑ ԵՐԷՑ

(ՍՏ. ՕՐՊԵԼ. Ա. ԺԱ. ԺԲ)

Ի բաղձալի ի կենցաղս ոչ այլ ինչ՝ բայց միայն[2] սեպհականութեան ժառանգութիւն առն՝ յորում ծնեալ և սնեալ լինի, և վայելել խորհիցի. որպէս զտիւն մօր և զգուխ հօր, այնպէս քաղցր թուե-

1. Յունաց թուականն համարելով սկսեալ Հռոմայ չինութեան հազար տարիէն վերջ՝ մտներայ Շապհոյ թագաւորութեան 687 տարւոյն, որ լոյս նոր քննութեան գիտնոց թագաւորած է յամի Տեառն 309, քայց Հայոց թուականին հետ չի յարմարիր՝ անկէ միայն 124 տարի առաջ ըլլալն, այլ պէտք էր 175:

2. Ոչ ինչ այնպէս բաղձալի է ինչպէս, և այլն:

ցեալ լինի ի միաս ժառանգորդին։ Վասն որոյ միչա կաթօղի չրջիլ, տեսանել, զբօսնուլ, խնդամտիլ ի վերայ նորա։ Որպէս և գովելի և քաջուզէչ մանուկս այս Բարիկ, որ յետ տիրելոյն ընկի ժառանգութեան իւրոյ, յորս եղեալ խնդալով, խաղալով ի վերայ ազգային թաւերացն և խնջոյից իրախարա-նացն, ի լերինս որատաուն և բազմաջուղիր վայրացն Սիւնեաց, նա և ի տես որպիսութեան գաւառացն, յառաջին ամին իւրոյ տէրութեանն. որ և զրեա զայս ոչ աչխարհազբօս ինչ գատարկութեան գործ, այլ ի Հոգւոյն չարժեալ։ Եւ մինչ յայս իսկ յաւելեալ՝ տեսանէր ապա ազգակիլի տեսակաւ զգանկալի աչխարհս այս, ապալերկ ի մարգոյ և յանտոյ, և հիմնախիլ արարեալ զգեղեցկայարմար աւանաչինից, գիւղից և ագարակաց, վանեալ զամենայնն և յաւեր զարձուցեալ։

Իսկ ի տեսանելն զայս՝ ազգալից և աչխատելի տեսակս, ապա անցեալ ի գաւառն Ծղկաց՝ հասանէ յաւանն ի չինանիսան Շաղատայ. և ելանէ յարեւելից կողմանէ ի հանդիպակաց բլուր մի, և նոյնժամայն ի բլրոյն ելանէ եղջերու մի, և խուճապեալ ի փախուստ դառնայր երէն՝ զինքն եկեղեցաբլրոյն (դէմ) եղեալ։ Եւ Բարկայ՝ տանիկ երիվարաւն զհետ մտեալ, և եղեալ զկնի եղջերուին յեկեղեցաբլուրն. և անդ երիվարին ոտքն խրեցան ի բլրին, և եղջերուն ի բլրին անսրեւոյթ եղեւ։ Եւ Բարկայ՝ Սիւնեաց տեառն՝ ի վայր իջեալ յերիվարէն՝ ի վերայ եկեղեցաբլրին, հրամայեաց բազմութեանն քարչել զերեալ ոտն երիվարին ի վերայ բլրոյն. և իրրեւ քարչեցին ուժգնակի՝ բազմութիւն զնդին Բարկայ Սիւնեաց տեառն, և գտանէ սերալի զարմանք յահի կալաւ զամենայն բազմութիւնն. զի ընդ ոտնատեղիս երիվարին աննուշահոտութիւն բուրման զանազան գրեթէ զամենայն գիտակ գաւառին ելից։ Եւ հրամայեաց Բարիկ՝ Սիւնեաց տէր՝ բազմութեանն, պեղել զհող բլրին. և տեսին ի ներքոյ եկեղեցի քարկոփ չքնա-

զաչէն, որ ոչ ուրեք էր այնպիսի հրաչաճարտար չինուած. գմբէթն և խորանքն չորեքկուսի, մի յարկ, մի տանիք՝ և ոչ ուրոյն ուրոյն՝ որպէս և այլ գաղատոսաչէն եկեղեցիք։

Եւ բացեալ զդրունս սրբոյ եկեղեցւոյն Նախավկային Ստեփանոսի, և տեսին բազմահոյլս բազում խաչս ոսկիս և արծաթիս, և բազում գրեանս պատուիրանաց և այլ սպասս ամենայն եկեղեցեացն Սիւնեաց, իւրաքանչիւր զրով զիւղաքաղաքացն. և նշխարք սուրբ և պատուական մարտիրոսացն անհամար անթիւ, որ յորմն եկեղեցւոյն մնաց։ Եւ յայտնութիւն և գիւտ սրբոյ եկեղեցւոյն Շաղատայ (եղեւ) ի հոգի ամսոյ որ օր մի էր ամսոյն։ Յայնմ ժամանակի յամենայն տարւոջ ժողով արարեալ Սիւնեաց տեառն հանդերձ եպիսկոպոսիւն՝ զօր երեւման սուրբ եկեղեցւոյն, տօնախմբելին իւրեւ զմայր եկեղեցեաց աչխարհին ամենայն Սիւնեաց։ Եւ զարձեալ յայնմ աւուր ազօթայարգարքն ցայգապաշտամամբ՝ որ ինչ և խնդրուածս առնէին յԱստուծոյ, նոյնժամայն ներկատարուածն հրաչիցն եղանիւր։ Եւ զարձեալ, զայն տեսեալ զերեւումն հրաչիցն, որ եղեն ի սուրբ եկեղեցւոյն Սրբոյն Ստեփանոսի, զի բազում բժշկութիւնք պէս պէս ցաւոց լինէին, որք ի ժամուն յայնմիկ հանդիպեցան, հաւատացին և մկրտեցան Գոր և Գազանն, երկու եղբարք, հանդերձ պարսկական բազմութեամբ գնդիւն իւրեանց, որ եկեալ էին ի Պարսից գհետ Բարկայ՝ Սիւնեաց տեառն։ Եւ զարձեալ, վիճակ արկեալ Բարկայ՝ Սիւնեաց տեառն՝ Գորայ և Գազանայ, Գորայ՝ աւագ եղբօրն՝ հասանէ աւանն Թոռոայ, և քաջարի արիացելոյն քաջ Համարտիկն Գազանայ՝ հասանէ վիճակաւ գիւղաքաղաքն Շաղատայ, հանդերձ սուրբ եկեղեցեաւն, որ յայնմ ժամանակի մայր եկեղեցեաց անուանէին։

Եւ Բարիկ՝ Սիւնեաց տէր, վանական կացոյց և սպասաւոր ընտրեալն Ցիրոտ, հաւատարիմ, սուրբ և ներանձնաւոր քահանայ, որ յայնմ ժա-

մանակի ոչ ոք գոյր նման նմա վարուք առաքինութեան. և գարձեալ, սքանչելագործ հաւատովք, զոր սուղ ինչ յիշեսցուք: Զի, յորժամ գայլ յայծեաց ոչ կամ զառն յաքչատակէր, և ձայնեալ ոմանց առ նա, և նորա արարեալ սուրբ ալիքն իւրով զնչան խաչին ընդդէմ գազանին, և ասէր. « Քրիստոսիւ ասեմ, չիշխես առնել ». և գազանի գայլուն ի վայր եղեալ զուչն կամ զգառնն՝ գնայր հանդարտութեամբ: Եւ գարձեալ, թաղք մի Շապատայ (էր) ի լերինն յեզր ծովակի միոջ, և երանելին Տիրոտ նստէր ի միջի ոմանց. և գորաքն ի ծովուն՝ ըստ սովորութեան իւրեանց բարբառոյ լնուին յաւէժ աղաղակելով. և երանելին Տիրոտ զչարեալ նոցա՝ ասէ. « Ո՜հ, խլայեք[1] ձեր անհնգեղ » բարբառվդ ». և զբազում աւուրս կարկամեցան գորաքն, և ոչ կարացին բարբառել: Եւ եղեւ ի միում յաւուրցն սուրբն և երանելին Տիրոտ եհաս ի նոյն տեղի. և բնակիչք տեղւոյն զգացուցին վասն գորացոյն. և նա ասէ. « Հրամայեալ եմ նոցա լուս » ծանիլ և ի նոյն անտառ բարբառն վերադառնել »: Եւ նոյնժամայն գորաքն զաղաղակ կալեալ իբրեւ զառաջինն՝ յաւէժարար մեծաձայնէին բարբառել:

Եւ գարձեալ, ի միում յաւուրց ընդ երեկոյն՝ եհաս որայ լուցեալ հրով, ձգեաց զգաւազանն և բնկեաց ի մէջ որայի հրոյն. և ընդ առաւօտն յորժամ զարժանաւոր զազօթսն ի յանկումն կատարելութեան հասեալ (էին), հրամայեաց բերել զգաւազանն իւր. և մարգին զաղաղակ բարձին և ասեն. « Որայն առտիկ այրեալ է. և արդ գաւա » զանին ո՞ւր խնդիր առնես, քաղեակ[2] ակր ». և նորա առտեալ նոցա՝ ասաց բերել. և երթեալ մարգկանն՝ տեսին զգաւազանն Սրբոյն Տիրոտի անվնաս մնալով ի մէջ հրոյն՝ չնորհօքն Աստուծոյ.

1. Պէտք էր ըսել՝ խլացաք կամ խլացուցէք:
2. Թուի թէ ծաղրելով. քանզի (այծաւ) նմանցնէին զՏիրոտ՝ մօրուացն համար:

և բերեալ մեծաւ զարմացմամբ զգաւազանն կարմըրագունեալ իբրեւ զհուր՝ առ երանելին Տիրոտ. և առեալ առ ինքն զգաւազանն, և նայեցեալ ի գոյն գաւազանին, և ասէ. « Այսպէս արիւնագոյն կակծելով իբրեւ հրացեալ այրի սիրտ որային տեառն ». և գարձեալ, « Յաւիտենից անողորմ անչէջ հրոյն գատելոց են արարողք արկածից վնասուն ախորիկ »:

Եւ երանելւոյն Տիրոտի էր ոմն, և գժնդակ և չարաչար վնաս գործեաց. և Սուրբն զչարեալ ցասմամբ՝ ասէ. « Գնա՛, չամ զվարձն քո ». և նորա գաղանի խորամանկութեամբ փայտատ մի առեալ գնաց. և եհաս ի խոռս Աղնձատոս, որ է յարեւմըտից կոյս եկեղեցւոյն, իբրեւ ձայնըկնէց մի, պարաւանդեցան ոտքն, և ոչ կարաց գնալ. և առ Սուրբն Տիրոտ գարձեալ զղջախոհ մեղայիւ, եղ զերկաթն առաջի նորա. և գարձեալ հեղն և բարեպաշտն, սուրբն և ցանկալին Տիրոտ՝ եհ զվարձն, օրհնեաց և արձակեաց յիւրմէ:

Եւ գարձեալ, գեղոյ միոյ յայնմ կողմանէ էր ջրաղացք մի. և երանելին Տիրոտ ի գեղավարարան՝ հանապազ գնչան խաչին արարեալ՝ անցանէր ընդ գեան աներկեզաբար. և եղեւ ի միում յաւուրց եհաս ցանկալի և գեղեցկատեսիլ քառակ էշ մի, և ասաց ի մտի իւրում, երթայց, անցից իշոյն այնուհիկ ընդ գեան. և երեալ յէշն և մտեալ ի գեան. և ի միջի գեոյն՝ գարձեալ էշն առ նա՝ և եղոյց փայլատակմամբք գերկաթի գպայախան[2], և ասէ. « քո այսպէս իշոյ պայախ տեսեալ է ». և նորա հանեալ ի թափուցն[3] զփոքրիկ զանակիկն իւր՝ եղոյց և ասէ. « Եւ քո՝ այսպէս իշոյ մտրակ տեսեալ է. վիս ի գետէս բաց անցո՛. երթ ոչ՝

1. Անձրեւներով կամ հալած ձիւնով գետոց ուռիլն յորդիլն:
2. Անչուշա ոտից սալերն կամ պայտերն (sabots).
3. Դանակի պատեանն. fourreau.

հարկանեմ և վիրաւորեմ զքեզ». և անցուցեալ զսուրբն ընդ գետն՝ աներեւոյթ եղեւ չարն սատանայ[1]։ Եւ այլ բազում ինչ նշանագործութիւնք, որ յերանելւոյն լինէին, և պէսպէս ցաւոց լկատնաց անդորրութիւնք. և այսահարաց՝ նորին ազօթիւք բժշկութիւնք։

Եւ վախճանեալ Սրբոյն՝ եղաւ ի դիր յարեւելից կողմանէ սրբոյ եկեղեցւոյն. որ և բազում այցելութիւնք լինէին ի սուրբ գերեզմանն նորա՝ հիւանդաց։ Եւ գարձեալ, կանանց ոչ հրամայեցաւ ի նմանէ ի սուրբ եկեղեցին մտանել։ Եւ այսու կարգաւորութեամբ կրօնիւք եկաց (ուխտ) սուրբ եկեղեցւոյն Շաղատայ մինչեւ յամս երեք հարիւր. և ոչ, գարձեալ, կանամբի քահանայի՝ սպասաւորութիւն առնել սրբոյն տեղւոյն։

Եւ գարձեալ, երանելւոյն տեառն Բարկայ՝ Սիւնեաց տեառն՝ հրամայեալ, զի նախթիոռ լինիցին յամենայն Սիւնիս՝ սպասաւոր քահանայք և հաւատացեալ ժողովրդականք պաշտօնեայք սրբոյ եկեղեցւոյն Շաղատայ, իբրեւ մայր եկեղեցեաց և մայրաքաղաք[2] ամենայն աշխարհին Սիւնեաց։

1. Թերեւս ռամկական աւանդութիւն, բայց ոչ անարժան ղիւաց խայտառակութեան։

2. Շատ անգամ մայրաքաղաք կոչուի հիմայ մայրավանք ըսուածն, այսինքն մեծ զլխաւոր վանք։

Գ.Գ

ՄԱՍ ԳՆԵԼԻ

(ԲՈՒԶԱՆԴ, Գ. ԺԶ)

Ողացեալ թագաւորն (Արշակ) ընդ պատանեկին Գնելոյ[1]. և բազում անգամ հալածական առնէր զնա. և նիւթեալ լինէր նենգութիւն բազում ժամանակս։ Ապա զնաւասարդաց ժամանակաւքն առնէր խորհուրդ թագաւորն Արշակ, կոչել առ ինքն զպատանեական Գնել և սպանանել. ապա առաքէր զվարդան զեղբայր սպարապետին, զնահապետ ազգին Մամիկոնեան տոհմին, զի մեծաւ երդմամբ և նենգութեամբ կոչել կարասցէ, զի մի խորհուրդն յայտնեսցի՝ գուցէ փախիցէ և ապրիցէ. այլ զի պատրանօք և հրապուրանօք ածիցէ մինչեւ ի տեղին մահուն։ Եւ էր բանակ թագաւորին ի Շահապիվանի[2], ի բուն բանակի տեղիսն Արշակունեացն, ի ներքոյ Միհենացւոյ[3] և ի վերայ ասպատիսացն։ Եւ առաքեալ զվարդանն, զմեծ նահապետն[4] յարքայէն Արշակայ, եկն եգիտ զպատանեական Գնել ի մօտաւոր տեղւոյն, այսինքն ի գեղն Առաւիւտոց անուանեալ[5]։ Մեծաւ ուխտիւ և բա-

1. Արշակայ եղբօր սրդին էր, իր առաքինութեամբ և իր կնոջ Փառանձեմի գեղեցկութեանն համար նախանձելի եղած։

2. Տարօնոյ և Ալաշկերտի միջոց, հիմակուան Տիատրին վիճակի մէջ։

3. Անծանօթ. եթէ կարդալու չէ սեաւիցն կամ սօսեացն (ծառեր)։ Ապարեւքն այլ թուէին նշանակել զօրաց ձիաբշաւի տեղիք։

4. Քիչ մ՚առաջ բուսու որ նահապետին եղբայրն էր։

5. Առաւոյտ (trêve) բուսոյ անուամբ, բայց տեղն հիմայ անծանօթ։

զում պատրանօք զպատանեական Գնել հանդերձ իւրով կնաւն և զրամբն[1] հաւանեցուցանէր երթալ հասանել ի բանակն արքունի. իբրեւ այն թէ ի մեծարանս ինչ զնա կոչիցէ Թագաւորն. բազում խնդանօք տարեալ հաւանեցուցանէր, եթէ, Թագաւորն Աբշակ ոչ կամեցեալ զոմն նաւատարզաց առանց քո անցուցանել. զի հաճեալ և քաղցրացեալ է ընդ քեզ. վասն զի ըստ բանից չարախօսացն՝ ոչ ինչ գաւաւ ի քեզ չարութիւն. և եհաս ինքն ի վերայ, զի զուր ցայժմ ատեր զքեզ, որ ի նմանէն մեծ սիրոյ արժանի ես:

Ապա չուեաց ամենայն կազմութեամբն իւրով՝ Գնել. երթեալ հասանէր ի բանակն արքունի, ըզդիշերն ամենայն բազում վուխտով տաղնապաւ. վասն զի վաղուին հասելոյ առաւօտուն օրն լուսանայր՝ կիւրակէն. և յայնմ աւուր ոտն դիպեցաւ յիշատակի մեծին Յովհաննու, որ ի Գրիգորէ և ի Տրդատայ յաւանին Բագաւանին կարգեալ էր[2]: Ապա յայնմ յիշատակի աչխարհաբանակք մարդկան՝ որ ժողովեալն էին, և բազում եպիսկոպոսք՝ որ յայլոց գաւառաց. և ապա մեծ եպիսկոպոսապետն Ներսէս փոխանակ իւր յղեաց զիւր աթոռակիցն[3] զԽադ, և զիւր արքիդիակոնն[4] եպիսկոպոսին՝ որում անուն Մուշրիկ կոչէր. զի երթիցեն նոքա, պէտք զինչ և իցեն ժողովոյն՝ ընդ նորա վճարեսցեն: Եւ ինքն անդէն ընդ յարքունական

1. Գուռն, թագաւորի կամ իշխանի պատուական և սպասաւոր մարդիկ, ինչպէս հիմայ այլ կ'անուանեն Օսմանեան արքունիքն (la Porte):

2. Յովհ. Կարապետի և Ամենափինեայ եպիսկոպոսի ասն է, որ ինչուան հիմայ կատարուի Հոգեգալըստեան օրերէն վերջը:

3. Լաւ եւս ըսելի էր աթոռակալ, կամ տեղակալ:

4. Յայտ է որ Սարկաւագապետ կամ Նախասարկաւագ՝ նշանակէ հիմայ այլ յետ եպիսկոպոսի՝ նախապատիւն ի կղերին:

բանակին, զի զնոյն հաղորդութիւնն և անդ կատարեսցեն: Եւ յայնմ դիշերի ցայգապաշտօն մեծ եղեւ ի բանակին առ կաթողիկոսին:

Իսկ իբրեւ առաւօտն ծագեաց, հասանէր վաշտն Գնելոյ ի բանակն արքունի. և մինչ Գնելն արքունական բանակին լինէր մերձաւոր, ազգ լինէր Թագաւորին եկն նորա. ապա ելանէր հրաման յարքունեաւս, արտաքս ունել և տանել սպասանալ: Եւ մինչդեռ գայր նա ընդ բանակամէջն, և էր հեծեալ յերիվարին իւրում, իբրեւ մերձ եղեւ ի հրապարակն արքունի, և անդ ի յարքունեաւս հասանէին բազում սպասաւորք վառեալք սուսերաւորք, նիզակաւորք, վաղրաւորք, սակրաւորք, սրնաւորք, և սպարակիրք հետեւակք, որք մատուցեալք բուռն հարեալք՝ ընկենուին յերիվարէ անտի զպատանեական Գնել. և ձեռն յետս կապէին զնա, և առեալ զնային ի տեղի կառափելոյն: Եւ քանզի կին նորա եկեալ էր ընդ նմա ժանուաւ[1], ի նմին ի նորին վաշտու էր ընդ առն իւրում. իսկ իբրեւ տեսանէր թէ կալան զայր իւր և կապեցին, վազվազակի ընթացաւ յեկեղեցախորանն ի ժողովուրդն, ուր պաշտօն մարդկան բանակին առ Աստուած կատարէր, մինչդեռ առաւօտին ազօթքն մատչէին. և անդ (էր) Ներսէս մեծ եպիսկոպոսապետն: Իսկ կինն հասեալ առ արքեպիսկոպոսապետն, զոյժ արկանէր նմա վիրոյ առնն տարապարա կորուստն, ճչեալ մեծաձայն. Վա՛յ հասիր, ասէ, դեռ զամուսինն իմ զուր առանց վնասու և յանցանաց՝ խողխողեն: Իսկ նորա խափանեալ զպաշտօնն, ընթանայր ի խորանն արքունի. հասեալ ի դրացն ի ներքս՝ առ Թագաւորն անկանէր. իսկ Թագաւորն իբրեւ տեսանէր զմեծ քահանայապետն, դիտացեալ զարարեխօսութիւն համօղելոյն վասն առն մահուանն զի մի մեռցի. յայնժամ Թագաւորն զիւր

1. Վրան ծածկուած կառք կամ գահաւորակ:

սամոյրան զգլխովն ածեալ, ի փոյթ կնջանն[1] մտեալ, զիւր դէմս երեսացն ծածկէր, քնոյ պատճառ եղեալ. զի զնորա բանան մի լուիցէ։... Իսկ զպատանին Գնել առնուին գնային մօտ ի Սիւան[2] արքունի, և անգէն կառափէին ի սարակ լերինն, որում տեղւոյն Լսին անուանեալ է, մօտ յորմածս արգելոցացն որոցն էրէցն, ընդդէմ մուտս տանին[3] աղբերացն բազմոցացն արքունի, յանդիման բանակեաց բնին։ Ապա հրաման եղեւ յարքայէն. Ամենայն մարդիկն, որ իցեն ի բանակին, մեծ և փոքր առ հասարակ, մի ոք իչխեսցէ չերթալ. այլ ամենայն ոք առհասարակ երթիցեն, դիցեն աշխար, կոծ, և լացցեն զԳնել՝ մեծ սեպուհն արչակունի՝ սպանեալն։ Իսկ ինքն թագաւորն գնացեալ ի լալիսն, նստեալ լայր զեղբօրորդին իւր՝ զոր ինքն եսպան. երթեալ նստէր մօտ առ դին, լայր ինքն, և տայր հրաման կոծ մեծ և աշխար դնել չուրջ զպանեալով դիակամբն։ Իսկ կինն սպանելոյն Փառանձեմն, զհանգերձան պատառեալ, զգեաս արձակեալ, մերկատիս, ի մէջ աշխարանին կոծէր, ձայն արկանելով ճչէր, յորս պատասուց յաղիողորմ գուժի՝ զամենեսեան լացուցանէր։ Իսկ թագաւորն Արշակ ի լալիսն տեսանէր զկինն սպանելոյն, տափէր, և ակն դնէր առնուլ զնա իւր կնութեան։... Մինչդեռ կոծ մոլութեան զդիակամբն չայէին, զայսպիսի պատգամս (սիրոյ) առաքէր Տիրիրն[4] (առ Փառանձեմ. որ) բողոք բառնայր, թէ Լուարուք ամենեքեան, զի մահ առն իմոյ վասն իմ եղեւ. զի որ ինձ ակն եդ՝ վասն

1. Ուղիղ թէ սխալ՝ անյայտ է իմաստն։ Կինջ կամ կինճ վայրի խոզ նշանակէ, որ այս տեղ չի յարմարիր։ Կէս ռամկօրէն գրուածի մէջ ըսուած է, կինճ և դժուար։

2. Տես երես 122, ծան. 3։

3. Մուրթի ծառ, մրտի, մրտենի, Myrte.

4. Սա եւս Արշակայ եղբօրորդի էր։

իմ, զայրն իմ ետ սպանանել։ Զհեր փեսէր, ճչէր ընդ կոծելն։... Զոր իրրեւ լուաւ թագաւորն Արչակ և եհաս ի վերայ իրացն, զարմացեալ լինէր, արմանայր ընդարմանայր, սարչացեալ ի միտ առնոյր զիրան. ապա խօսել սկսանէր թագաւորն, ծափս զծափի հարեալ մեծաւ զղմամբ ընդ իրան զոր գործեաց։... Ապա ազդ լինէր թագաւորին փախուստն Տիրիթայ. տայր հրաման թագաւորն Արչակ՝ ապատագունդ բանակին, զհետ լինել Տիրիթային. զի իրրեւ հասցեն նմա՝ անգէն ի տեղւոյն սպանցեն։ Բազումք և քաջք զհետ լինէին փախուցելոյն Տիրիթայ. ապա երթեալ հասանէին ի գաւառին Բասենոյ, ի մէջ մայրեացն. ի տեղւոյն յորում հասանէին, անգէն զՏիրիթն սպանանէին։

Ղ.

ՀՄԱՅՔ ԵԱՊՀՈՅ
Ի ՓՈՐՁԵԼ ԶՀԱԻԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԿԱՅ

(ԲՈՒԶԱՆԴ, Գ, ծդ)

Ապա թագաւորն Պարսից, քանզի զայս լուեալ ի քաւդէիցն[1], տաճիկ[2] ուղտուք արձակէ ի Հայս աս՝ զհողոյ և զջրոյ, զի եկեսցին բարձցեն նմա զհմայսն։ Եւ ընդ սակաւ աւուրս եկին բերին զայն ինչ՝ զորմէ յղեացն։ Ապա հրաման տայր թագաւորն Շապուհ, զկէս յատուկին իւրոյ խորանին՝ հարկանել ի բերեալ հողոյն Հայոց, և զջուրն ցանել ի վերայ նորա. և զկէսն ի նոյն հողն զիւրոյ բնակութեան երկրին թողուլ։ Եւ ետ ածել զԱր-

1. Քաղդեայ, քաղդեացի, կախարդ նշանակելով. անուամբ հին ազգին։

2. Արաբացի, վազուկ ուղտ։

չակ արքայ Հայոց՝ զառաջեւ իւրով, և պայլ մարդիկն ի բաց հրամայեաց կացուցանել. և զձեռանէ առեալ՝ չրջէր ձեմելով. և երթեւեկս առեալ ընդ խորանն, ասէ ցնա, յորժամ ի պարսիկ ի հողոյն ի վերայ ձեմէին. Թէ, Ընդէր եղեր իմ թշնամի, Աբշակ արքայ Հայոց. զի ես որպէս զորդի սիրեցի զքեզ, և կամեցայ տալ քեզ զդուստր իմ ի կնութիւն, և որդի ինձ առնել զքեզ. իսկ դու խատաղար ընդ իս, և քովք կամօք՝ առանց իմոց կամաց՝ եղեր ընդ իս թշնամի. և այս լի երեսուն ամ է[1], զի պատերազմեցար ընդ իս:

Ասէ Աբշակ արքայ. Թէ, Մեղայ քեզ և յանցեայ. զի ես եկի և կոտորեցի, և յաղթեցի թշնամեաց քոց. և ահն ունէի ի քէն պարգեւ կենաց. և թշնամիք իմ հրապուրեցին զիս, և արկին երկիւղս ի քէն, և փախուցին ի քէն: Եւ երդումն իմ զոր երդուայ քեզ, յառաջ ածին զիս. և եկի աւասիկ առաջի քո. և աւասիկ ծառայ քո ի ձեռս կամ. զինչ և պարտ է քեզ՝ արա զիս, զինչ և կամ իցէ. սպան զիս, զի ես ծառայ քո առ քեզ կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ:

Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորա՝ չրջէր ձեմելով ի չքմեղս. առեալ զնա ածէր ի հայկազնի՝ ի հողն հարեալ յատակն. իսկ իբրեւ յայն տեղի հասանէր, և զհայ հողն կոխէր, մեծամեծս ըմբոստացեալ հպարտացեալ՝ այլ ձայն չըրջէր. սկսանէր խօսել և ասել. Ի բաց կաց յինէն, ծառայ չարագործ, տիրացեալ տերանցն քոց. այլ ոչ թողից զքեզ և որդւոյ քոց զվրէժ նախնեաց իմոց, և զհայն Աբաեւանայ արքայի[2]. զի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զրարձ կալեալ

1. Բուզանդի մէջ պատմուածքն այս Աբշակ Թագաւորի պատերազմաց՝ Թէ զօրաց Թէ տարիներու Թիւերն չափազանց են:

2. Պարթեւաց վերջին Թագաւորն, զոր սպաննեց Արտաշիր՝ Սասանեանց դեղապետն:

է. բայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ:

Իսկ դարձեալ առնոյր զձեռանէ, դարձեալ տանէր յայն հող Պարսից. ապա աշխարէր զառաջեալսն, խոնարհէր, բուռն հարկանէր զոտից նորա, մեծապէս ապաշխարելով զղջմամբ զառաջեալ բանսն: Իսկ յորժամ առեալ զձեռանէ՝ զնա տանել ի հայ հողն, եւս խաստագոյն քան զառաջինսն բարբառէր. իսկ դարձեալ միւսանգամ հանէր յայնմ հողոյն, բանիւք յապաշխարութիւն դառնայր: Յայգուէ և երեկոյն այնպէս շատ փորձ փոքձեաց զնա. զի իբրեւ ի վերայ հարեալ հողոյն տանէր, խոստացեալ ամբարտաւանէր. իսկ ի վերայ բուռն գեաղոյն յատակին (գայր) և կայր, ի զղջումն դառնայր:

Իսկ իբրեւ երեկոյ եղեւ՝ ժամ ընթրեաց թագաւորին Պարսից, քանզի սովորութիւն էր Հայոց թագաւորին բազմական անդէն ընդ նմին առ նմա ի նորին տախտին արկանել բազմական, օրէնք էին՝ զի թագաւորն Պարսից և թագաւորն Հայոց ի միում տախտի բազմէին, ի միում գահոյս. իսկ այն օր՝ նախ զառղ[1] բազմականացն թագաւորացն՝ որ անդն էին, զամենեցունց կարգեցին. հուսկ յետոյ զկնի ամենեցունց ի ներքոյ բոլորին՝ զԱբշակայ բազմականն առնէին, ուր զհայ հողն յատակն հաբեալ էր: Նախ, ամենեքեան իբրեւ բազմեցան, յիւրաքանչիւր չափու, յետոյ ածէին բազմեցուցանէին զարքայն Աբշակ: Աբդ, եկաց բազմեալ ուռուցեալ վայր մի. իսկ յոտն եկաց, ասէ ցթագաւորն Շապուհ. Իմ այդ տեղի, ուր դուդ ես բազմեալ. յոտն կաց այդի, թող ես այդր բազմեցայց, զի տեղի ապդի մերոյ այդ լեալ է. ապա եթէ յաշխարհն իմ հասից, մեծամեծ վրէժս խնդրեցից ի քէն:

1. Թագաւորաց չարքը, կարգը:

Ղ.Ե

ՎԱՍԱԿ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԵՒ ԱԽՈՌԱՊԵՏՆ ՊԱՐՍԻՑ

(ԲՈՒԶԱՆԴ, Դ, ԺԶ)

Եւ եղեւ դէպ օր մի յաւուրց, եկն եմուտ թագաւորն Հայոց Ա.բշակ չրջել զսպասաւորանաւ[1] միով զարքային Պարսից. իսկ ախոռապետն արքային Պարսից նստէր ի ներքս տան սպասաւորին. իբրեւ տեսանէր զթագաւորն, ոչ ինչ առ լուս[2] կալեալ մեծարեաց զնա, և ոչ ինչ չուքս դնէր նմա, այլ և անարգանս եւս դնէր թշնամանաց, ասելով ի պարսկերէն լեզու, թէ, Այծից Հայոց արքայ, եկ նիստ ի խթձան խոտոյ ի վերայ: Զոր բանս իբրեւ լսէր սպարապետն զօրավարն Հայոց Մեծաց, որում Վասակն կոչէր, ի մամիկոնեան տոհմէն, մեծաւ բարկութեամբ և բազում սրտմտութեամբ բարկանայր. ի վեր առեալ զսուսերն՝ զոր ընդ մէջն ունէր, հարեալ անդէն ի տեղւոջն զախոռապետն արքային Պարսից՝ գլխատէր ի ներքս յսպասաւորանի անդ. զի ոչ կարաց լսել և ժոյժ ունել զիւրոյ թագաւորին զանարգանս. զիւր մահն առաջի եգեալ՝ լաւ հաշուէր բազում անգամ, քան զտեառն իւրոյ լսել զվատթարութեան թշնամանս: Իբրեւ ի Պարսից աշխարհի էին[3], յայլոց ի տեղի և ի նոցուն հրապարակի՝ աներկիւղ և անկասկած յանկարծօրէն զայսպիսի գործ կարաց գործել: Իսկ թագաւորն

1. Ախոռ ձիոց:
2. Թէ լայս բառէն չէ, թուի թէ կարդալու է ոչ առ լաւս կալեալ, պատուելի մարդ չհամարեցաւ:
3. Եւ թէպէտ օտար տեղ Պարսից տէրութեան մէջ էին:

Պարսից յորժամ զայս լսէր՝ բազում չնորհս ունէր զօրավարին Վասակայ, ընդ քաջասրտութեանն զարմացեալ և ընդ բազում աներկիւղութիւն. և բազում պարգեւաց և պատուոյ արժանի առնէր, ըզքաջութիւնն և զտիրասիրութիւնն գովեալ. վասն այնր իրաց մեծաւ սիրով սիրէր զնա, և ըստ արժանի իւրում՝ պատուէր զնա. մեծարէր զամենայն աւուրս հաշտութեան և խաղաղութեանն, որ ի մէջ նոցա էր:

Ղ.Զ

ՍՊԱՆՈՒՄՆ ՀԱՅՐ ՄԱՐԴՊԵՏԻ

(ԲՈՒԶԱՆԴ, Ե, Գ)

Պատմեցաւ թագաւորին Պապայ յաղագս օրհասին՝[1] զոր եղ Հայր մարդպետն ախկնէն փառանձեմայ, մօր թագաւորին Պապայ, թշնամանս ձաղանաց ի բերդարգել պաշարմանն. զի իբրեւ զրոյ մի այնպէս թշնամանեաց զնա, ի ժամանակի իբրեւ եմուտ անդր գաղտուկ, և եղ անարգանս ախկնոջն. և եկն ել անտի և փախեաւ. հատուն զայս ամենայն զրոյց թագաւորին: Ապա մինչդեռ մարդպետն Հայր զիւրով իշխանութեամբ չրջէր՝ յերկրին Տարօնոյ, և Մուշեղ սպարապետն Հայոց էր ի նմին գաւառին՝ յիւրում բերդին՝ որում Ողական[2] կոչեն, որ կայ ի վերայ գետոյն Եփրատայ, եկն եհաս մի դեսպան յարքայէն Պապայ առ զօրավարն Հայոց Մուշեղ, և ունէր առ նա հրովարտակ. և գրեալ էր ի հրովարտակին անդր հրաման

1. Նախատական խօսքեր կամ գործք:
2. Սղխուենաց ցեղին ըլլալով այս տեղս, ոմանք կարծեցին թէ Աղական կարդալու է:

առ նա, զի չարամահ սատակեսցէ զՀայր մարդպետն: Եւ նա իբրեւ զայս հրամանս ընկալեալ ի ձեռն առնոյր, յղէր առ մարդպետն Հայր դաւով, և մեծարանաց պատճառանաւ՝ առ ինքն կոչէր յՈղականն: Եւ էին աւուրք ձմերայնոյ, և սաստկացեալ էր գետն Եփրատ[1]: Ապա կոչեալ եղեւ առ նա Հայր մարդպետն՝ իբրեւ ի պատիւ մեծարանաց. եկն եմուտ մարդպետն ի բերդն Յողական: Եւ հրաման զօրավարն Մուշեղ զօրականացն՝ առնել զնա, և մերկանալ իբրեւ ի մօրէ, և կապել զձեռս նորա ի ներքոյ ծնկաց նորա, և իջուցանել զնա ի գետն, և դնել ի վերայ սառինն կցելոյ գետոյն. և սատակեցաւ անդէն: Եւ եղեւ ի վաղիւ անդր չոգան տեսին, զի ուղիղ գլխոյն ի ցրտոյն վայրեալ՝ ի բաց իջեալ թափեալ էր ընդ քիթս նորա: Եւ վտանգակ ի նորա տեղի հայրութեան մարդպետութեանն՝ (կարգեցին) զԴրդղակ[2] անն անուն, որ յաւուրս Աբշակայ թագաւորին կամ Տիրանայ հօր նորա՝ զամս միով լեալ(էր) ի նոյն գործ մարդպետութեանն:

Գլ

ՍՊԱՆՈՒՄՆ ԴԳԱԿԱՅ

(ԲՈՒԶԱՆԴ· Ե· Գ)

Թագաւորն Պապ յղեաց զեսպանս առ մարդպետն Դղակ, թէ զօրքդ՝ որ են ընդ ձեռամբ քով՝ զումարեա զայդ, Գնելոյ անձեւացւոյ[3] յանձն առ

1· Այսինքն պազած սառած չար գետին զարձեր էր գետն:

2· Կամ Դղակ, կամ թերեւս Գդակ:

3· Անձեւացւոյ երկրին համար՝ տես երես 50, ծան. 1:

բասցես, և վաղ եկեսցես. զի պիտոյ է ինձ յղել զքեզ առ թագաւորն Պարսից Շապուհ. զի ես մըտից նմա ի ծառայութիւն: Ապա յորժամ լսեր մարդպետն Դղակ, մեծապէս խնդացեալ՝ ասէր ընդ միտս իւր, թէ արդ դիւրին է ինձ զկամս իմ կատարել, զոր խոստացայն թագաւորին Պարսից Շապհոյ, յորժամ զուրս գտի իրացս յապահով յանհոգս առնել բանիւք զՊապ, և յանկարծօրէն յանպատրաստից սրկանել զթագաւորն Պարսից զգլխով նորա: Եւ ինքն զուարճացեալ՝ լինէր խօսնակից ի մէջ թագաւորացն երկոցունց. զեսպան ձիով վաղ հասուցանէր ի գաւառն Աղրատատս, ի մեծ գետն ընդ Ցիլխի[1] արքունի, որում Արդեհանն կոչեն, առ թագաւորն Հայոց Պապ. և գայր յանդիման լինէր թագաւորին: Մեծապէս մեծարեցաւ ի նմանէն. և ի ժամ ընթրեացն հրաման եւս արքայն Պապ, առնել պատմուճան ագուցանել մարդպետին Դղակայ. և ագուցին նմա զրահս[2] և վարտիս. և էր հանդերձն անհեղեղ մեծութեամբն. զի խորչ զխորչիս էջանէր, մինչ զի ոչ կարէր հանդերձել զանձն իւր, զի պատեաց գնա մեծութիւն հանդերձին: Եւ ագուցեալ զպատմուճանն մեծ, էած զգօտին ընդ մէջ իւր՝ զորմէ թուրն կախէր. և սուսեր ընդ մէջ ածեալ, և խորչ ի գօտւոյ դրահիցն իջեալ, զթուրն և զսուսերն ծածկէր. իսկ զվարտիսն զգեցեալ, և մոյկս[3] ագուցեալ, և զնըրանն յաղդեր կապեալ, և ի վերայ նրանին խորչն

1· Այսպէս գրեն ամեն Ձեռագիրք. ոչ յաւուրս անուն այլ հասարակ բառ թուի, անծանօթ նշանակութեամբ:

2· Այսպէս գրեն ամեն 00· բայց յետոյ սեռական հոլովը՝ առանց ս տառի՝ դրատիցն· կըրնայ կարծուիլ որ սկզբնագիրն Գրատ գրուած ըլլայ· վասն զի այս բառս գործածուած է զինուորական զգեստի մի համար:

3· Ոտից աման, իբր կակուղ կօշիկ:

ի վարեաւցն իջեալ անկեալ ի վերայ նրանին, ծածկեալ մինչեւ ի սրունսն։ Եւ ոչինչ իմացաւ Դղակ թէ այն մեծութիւն հանդերձին՝ չարայ նորա իցէ այն։ Իսկ յինն ժամ աւուրն կոչեցին զԴղակն, և ասեն. Կոչեն զքեզ յընթրիս, ի ներքս յարքունիս։ Իսկ յորժամ մուծին ի փող[1] ասեցն՝ յորում արքայն էր, և էր փողն ընդ երկար, բազում երդս լոյսիվոյցս[2] էր թողեալ. և տանէին զնա ընդ այն. կայր չուրջ սպարակիրն փակեալ սակրաւորքն, և զերդս ամենայն լուսոյն ծածկէին։ Ապա մտեալ չուրջ զնովաւ ի տեղւոյն ձգձգէին զնա սպարակիրքն. իսկ նա թէպէտ տանէր ձեռն ի զէն՝ ի խորշխորչան հանդերձիցն պատատեալցն՝ զոր էր զգեցեալ, ոչ զի զէն ոչ կարաց գտանել։

Ապա զի էր ինքն Դղակն այր մեծ և անձնեայ, քաջ հարուստ ոսկերօք, սակայն սպարակիրն մարդկանն պատեցին զնովաւ, և բարձին զնա վերըմբարձ. և տանէին զնա մինչեւ ի գուբս տաճարին արքունի։ Իսկ իբրեւ հասեն թագաւորն՝ թէ անդր տանին, ասէ. Մի այսր, մի այսր. այլ մուծէք զդա ի տուն պատմուճականացն[3]։ Բանզի ի փողին՝ զորք սպարակրացն մուծին զնա ի ներքս ի տունն պատմուճականացն, կապեալ ձեռս յետս, այսինքն ուր թագ արքունի զնէին. և անդէն խօսել սկսաւ Դղակն և ասէ. Աւացէք ցարքայ, գոգէք. ես այս մահու արժանի էի, բայց քեզ արժան էր զիս ի հրապարակի սպանանել, և ոչ ի տան թագաց ըսպանանել, և զքո թագդ արեամբ չաղտակել։ Եւ զայս միայն ժամանեաց ասել. և անդէն ի վանօն պատմուճականացն՝ փողտեցին զնա, և հատին ըզգլուխ նորա, և հանին հարին ի նիզակի, և կանկնեցին ի հրապարակին արքունի։

1. Նեղ սրահ տան մէջ։

2. Սրահին վերի կողմէն շատ լուսանցոյց, պատուհան կարծես։

3. Վարը բացատրէ, թէ թագաւորին թագը պահելու տեղն էր պատմուճակ կոչուածն։

Ղ.Ը

ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

(ԲՈՒԶԱՆԴ, Ե. դ, ի)

Քաջ զօրավարն սպարապետն Հայոց (Մուշեղ) լի էր փինիւ մեծաւ և բազում նախանձու, զամենայն աւուրս կենաց իւրոց. և միամտութեամբ և արդար վաստակով չնայր հանապազ և վաստակէր ի վերայ թագաւորութեանն Հայոց աշխարհին. զոհ և զգիշեր կայր յաշխատութեանն. չնայր ճգնէր կալ ի ճակատու պատերազմին, և ոչ թողայր բնաւ ամենեւին և ոչ քան զկորի մի գեաին ի սահմանաց երկրին Հայոց՝ ուրեք վտարել. ի վերայ աշխարհին կեալ և մեռանել, ի վերայ անուանն քաջութեան, ի վերայ բնակ տերանց և ի վերայ բնակչաց աշխարհին, ի վերայ քրիստոնէութեանն հաւատոյ, ի վերայ հաւատացեալ ՅԱստուած և ի Քրիստոս մկրտեալ ժողովրդոց, ի վերայ եկեղեցեաց, և ի վերայ նուիրեալ սպասուց, ի վերայ վկայարանացն Քրիստոսի, ի վերայ ուխտի Աստուծոյ, ի վերայ քերց և եղբարց, ի վերայ մերձաւորաց տոհմին, ի վերայ բարեկաց բարեկիր բարեկամաց. հանապազ կայր զօրավարն Մուշեղ ի նահատակութեան պատերազմին. զանձն փոխանակ առնել աշխարհին. և յանձն իւր անխայէր ի մեռանել, զամենայն աւուրս կենաց իւրոց՝ առաջի իւրոց բնակ տերանցն Աղբակունեաց վաստակէր։..

Բայց ապա ամբաստան լինէին քսութեամբ առ մեծ թագաւորին Պապայ՝ զզօրավարէն Մուշեղէ, և ասէին. Թէ, Դիտեա, արքայ, զի մեծաւ նենգութեամբ է ընդ քեզ, և քեզ մահու սպասէ. զի զքո թշնամիան համակ արձակէ. զի զբազումս բազում անգամ ի բուռն առեալ՝ սովոր է արձակել

զՔՆամիան. զի զՂեւնայր[1] արքայ արձակեալ՝ թոյլ ետ ապրել, ի բուռն արկեալ զՀակառակորդս քո։ Եւ վասն այսր իրաց բազում անգամ լինէր գԸժտութիւն Թագաւորին Պապայ ընդ զօրավարին Մուշեղի. և բազում անգամ յանդիմանէր զնա վասն այսր իրաց։ Իսկ զօրավարն Մուշեղ տայր պատասխանի Թագաւորին Պապայ, և ասէր. եթէ, Ձիմ զընկերսն զամենեսեան՝ ես կոտորեցի. իսկ որ Թագս ունէին՝ նոքա իմ ընկերք չէին, այլ քո. եկեսցես, որպէս ես զիմն սպանի, դու զքոյսն. այլ իմ՝ յայր Թագաւոր ոչ ձգեալ ձեռն երբէք՝ որ Թագ ունի, և ոչ ձգեմ, և մի այլ ձգել լիցի։ Եթէ կամիս սպանանել զիս, սպան. այլ ես, եթէ գայ ինձ ի ձեռն երբէք այր Թագաւոր, որպէս եկն բազում անգամ, ես ոչ սպանանեմ զայր Թագաւոր՝ որ գամ մի Թագ ունի, եթէ ոք իսկ զիս ըսպանցէ։

Թագաւորն Պապ իբրեւ լսեր զբանս զայս, յարուսաւս հարեալ, և յարուցեալ ի գահոյիցն՝ բուռն հարկանէր զՄուշեղ. արկանէր զնովաւ գիրկս, և լայր ի վերայ պարանոցին Մուշեղի, և ասէ. Մահապարտ են այնոքիկ որ իշխեն խօսել չարութիւն զՄուշեղէ, զառնէ քաջէ և զպատուականէ. զի այր՝ որ տղգաւ պատուական է իբրեւ զմեզ, և նախնիքն զորա իբրեւ զնախնիսն մեր, և Թողեալ նախնեացն զորա զԹագաւորութիւնն ձենաց աշխարհին, եկեալք առ մեզ նախնիքն՝ ի նախնեացն մերոց ի վերայ կեցեալք և մեռեալք են. և հայր սորա ի վերայ հօրն իմոյ մեռաւ, և սա միամտութեամբ մինչեւ ի մահ վաստակեալ է. և բազում անգամ Աստուած եւս մեզ յաղթութիւն յաղօթս և ի խնդրուածս հօր մերոյ աքանչելոյն Ներսիսի,

1. Աղուանից Թագաւորն, Պարսից Շապուհ Թագաւորին օգնական Հայոց դէմ պատերազմելու առեն, զոր յիշէ և Խորենացին (Բ. յԸ). բայց ընդհանրապէս Աղուանք բարեկամ և նիզակակից էին Հայոց։

ի ձեռն դորա չնորհեցաւ բազում խաղաղութիւն. զիա՞րդ ասեն ցես զայս բանս, եթէ Մուշեղ քեզ մահու սպասէ. սա աւասիկ այր իրաւախորհ է. զի յօտար տեարն վասն բարեկամութեան խնայեաց, զիա՞րդ դա ի բնակ տեարս ձեռն ձգէր։ Ցայնմ ժամանակի բազում պարգեւս և պատիւս և բազում գեօղեան զօրավարին Մուշեղի Պապն չնորհէր։

ՂԹ

ՏԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(ԲՈՒԶԱՆԴ. Ե. զ)

Շապուհ Թագաւորն յորժամ յաչխարհն իշխաւնութեանն իւրոյ հաստանէր, զարմացեալ ընդ քաջութիւն գնդին կռուոյն որ դիպեցաւ նմա, և ասէր. եթէ, Զարմացեալ եմ ես զոր ինչ տեսի. զի իմ ի մանկութենէ իմմէ համակ ի ճակատու և ի կռիւ մտեալ եմ, և բազում ամք են՝ զի հասի ի Թագաւորութիւն. և առանց կռուոյ ամ չեմ լեալ. բայց իմ չերմ կռիւ զայս էր տեսեալ, որ այս անգամս դիպեցաւ ինձ։ Զի յորժամ Հայոց նիզակաւորքն առաջի կարգէին, այսպէս յարձակէին որպէս զլեառն մի բարձր, և կամ որպէս զաշտաբակ մի հաստատեսս հզօր և անշարժ. և յորժամ մեք զնոսա սակաւ մի չարժէաք, նոքա ի լեգէոն Հոռոմոց ապաստան լինէին. և նոցա զվահանափական բացեալ, զնոսա իբրեւ ի քաղաքորմ պարըսպաւոր ամրացեալ ընդունէին[1]. և անտի սակաւիկ մի ոդի առեալ, դարձեալ եկեալք մարտնչէին. մինչեւ անմի զզօրսն Աբեաց առնէին։ Եւ միւս եւս

1. Խորենացի եւս այսպէս պատմէ (Բ, յԸ). տես յեսագայ 101 յօդուածը։

որ ընդ այս եմ զարմացեալ ես, ընդ մտերմութիւն միամտութեանն հայաստան գնդին, ընդ տիրասիրութեանն. զի այնչափ ամք են՝ զի տէրն նոցա Աբշակ կորուսեալ է ի նոցանէն, և նոքա ի պատերազմին ի նա խրախուսէին. և յորժամ զահոյեանան՝ ընկենուին, համակ ասէին, թէ՝ Ա՛ռ Աբշակ[1]. և նա չէր ի մէջ նոցա, և նոքա առ գութ տիրասիրութեանն՝ զոր առ բնակ տէրն իւրեանց ունէին, զամենայն ախոյեանան՝ զոր սպանանէին նմա նուիրէին: Եւ կամ մոլեկան գունդն մուշեզեան, զի ինձ այսպէս թուէր՝ եթէ հուր բոց ի գնդէն ելանիցէր և ի նչանացն, իբրեւ ի հուր հրեղէնի այնպէս անցանէր ընդ գունդն, որպէս բոց ընդ եղէգն: Եւ այսչափ ժամանակք են՝ զի Աբշակ տէրն նոցա ի նոցանէն կորուսեալ է, զի յԱնդմըշն բերդի կայ յերկիրն Խուժաստանի, և նոքա առ գութն համարէին, թէ ի գլուխ նոցա նա իբրեւ թագաւոր կայցէ, և կամ ընդ նոսա արդեւք ի մէջ գնդին կայցէ ի գլուխ ճակատուն պատերազմին, և նոքա առ նմա առնիցեն պաշտօն յանդիման նորա: Այլ, ասէր, երանի՛ որ Հայոց գնդին տէր իցէ, այնպիսի տիրասէր և միաբան միամիտ զօրացն:

1. Որու որ զարնելով սպաննէին, Գնա՛ առ Աբշակ՝ կ'ըսէին, որ ի Պարսկաստան բանտուած էր:

Ա

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԿԱՅ Բ, ՆՈՅՆ ԵՒ ՏԻՐԱՍԷՐ ԴՐԱՍՏԱՄԱՏԻՆ

(ԲՈՒԶԱՆԴ, Ե. Ի)

Դեռ տակաւին եւս կայր կենդանի Աբշակ արքայ Հայոց յերկրին իշխանութեանն թագաւորութեանն Պարսից ի կողմանս Խուժաստանի յԱնդմըշն բերդին. այս ինքն որ անուն Անյուշն բերդն կոչեն. և գայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս. զի Աբշակունին թագաւորն Ռուշանաց, որ նստէր ի Բալխ[1] քաղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ սասանականին Շապհու և թագաւորին Պարսից. և Շապուհ թագաւորն զամենայն զզօրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, և զօրս միանգամ ածեալ էր գերութիւն յերկրէն Հայոց՝ զամենայն այրուձի գումարեալ՝ խաղացոյց ընդ ինքեան. և զներքինին անգամ թագաւորին Հայոց Աբշակայ՝ տանէր ընդ ինքեան ի գործ պատերազմին:

Եւ էր ներքինի մի Հայոց թագաւորին Աբշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ, ներքինի սիրելի մեծի իշխանութեան և մեծի պատուի, և անուն Դրաստամատ: Իսկ իբրեւ եղեւ պատերազմ ընդ թագաւորին Ռուշանաց և ընդ թագաւորին Պարսից, չարաչար տարածէին զզօրսն Պարսից զօրքն Ռուշանաց, և զբազումս կոտորեցին ի զօրացն Պարսից զօրքն Ռուշանաց, և զբազումս ձերբակալ արարին, և զկէս՝ փախստականս հալածական առ-

1. Սովորաբար Պահլ կ'ըսուի, Պահլաւիկաց կամ Պահլաւեանց ընկէրկրին, յորոց և Լուսաւորիչ մեր:

նէին: Իսկ Դրաստամատն ներքինին, որ յամս Տիբանայ թագաւորին Հայոց և Աբրշակայ որդւոյ նորա թագաւորին Հայոց, լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին, և ամենայն բերդացն արքունի՝ որ ի կողմանս յայնս, այնպէս և յերկրին Ծոփաց[1] ի Բնաբեղ բերդին, գանձքն լեալ էին ընդ նովաւ, և բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն: Եւ քանզի այս գործակալութիւն և մարդպետութիւն որում Հայրն կոչէին՝ ներքինեաց գործ լեալ էր ի բնէ ժամանակաց՝ ի թագաւորութեանն Աբրշակունոյ, և զայս Դրաստամատն ներքինի՝ ի իշխանն զԱնգեղ տանն՝ զերեալ տարեալ էր յերկրէն Պարսից, ի ժամանակին՝ յորժամ կալան զԱբրշակ արքայն Հայոց:

Եւ այս Դրաստամատ էր յայնմ ճակատու՝ յորում վառթարեցին Քուշանքն զՇապուհ արքայն Պարսից. և Դրաստամատ գործեաց անհնարին քաջութիւն, այնչափ կռուաւ եւս ի վերայ Շապհոյ արքային, և ապրեցոյց զնա ի մահուանէ. և բազում ի Քուշանաց անտի կոտորեաց, և զբազում պախայանից զգլուխս բերէր զառաջեաւ. և զՇապուհ թագաւորն Պարսից փրկեր ի նեղութենէն պատերազմին Թշնամեաց անտի, ուր արգելին զնա ի խուռն պատերազմին ի զօրաց անտի: Իսկ իբրեւ եղեւ յորժամ դարձաւ Շապուհ թագաւորն Պարսից յերկիրն Ասորեստանի, և մեծ չնորհակալութիւն առնէր ներքինւոյն Դրաստամատայն վասն ակացն, և ասէր ցնա Շապուհ թագաւորն Պարսից. Խնդրեա դու ինչ կինէն. զինչ և խնդրեսցես՝ տաց քեզ և ոչ արգելից: Եւ ասէ Դրաստամատ ցթագաւորն. Ինձ ի քէն այլ ինչ ոչ պիտի, բայց տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զրնակ տէրն իմ՝ զԱբրշակ արքայ Հայոց. և առ մի օր՝ իբրեւ ես երթայց առ նա, հրաման տուր արձակել

1. Տես երես 36. ծան 1:

զնա ի կապանացն, և ես իշխեցից լուանալ ըզգլուխ նորա և օծանել, և ազուցանել նմա պատմուճան, և արկանել նմա բազմականս, և դնել առաջի նորա խորտիկս, և տալ նմա գինի, և ուրախ առնել զնա արուեստականաւքն, մի օր ձիւղ: Եւ ասէ թագաւորն Շապուհ. Խիստ են խնդրուածքդ, զոր խնդրեցեր դ. զի յաւուրց ժամանակաց՝ յորմէ թագաւորութիւնս Պարսից կանգնեալ է, և բերդն այն Անյաղթ բերդ կոչեցեալ է. չէք ոք մարդ եղեալ ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել թագաւորաց՝ զոր յայնմ բերդի եդեալ զոք է թագաւորաց, յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք եդեալ է, թող թէ զնա՝ զայր թագաւոր և զիմ ընկեր, կապեալ եդեալ յայնմ բերդի, զհակառակորդն. քան մինչ աշխատ արարեր զմեզ, և դու աւադիկ գանձն ի մահ եդիր և յիշեցուցեր զԱնյաղթն, որ ոչ էին լեալ երբէք օրէնք թագաւորութեանս Աբեաց ի սկզբանէ: Բայց վասն զի քո մեծ վաստակք են առ իս, զոր ինչ խնդրեցերն՝ երթ, առեալ լիցի քեզ. բայց քեզ արժան էր զօգուտ քո անձինդ խնդրել, կամ աշխարհս կամ գաւառս կամ գանձս. բայց յորժամ դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցիս զօրինօք Աբեաց թագաւորութեանս. երթ, առեալ լիցի քեզ որ ինչ յիշեցիս խնդրեցեր փոխանակաց քոց:

Եւ ես նմա փուչտիպան[1] մի հաւատարիմ. և հրովարտակ՝ արքունի մատանեաւ. զի գնացեալ երթիցէ նա ի բերդն Անդմըշն, և զիարդ և կամք իցէ նորա, զոր օրինակ և խնդրեացն՝ արասցէ կապելոյն Աբրշակայ, որ յառաջ թագաւորեալն էր ի Հայս:

Եւ չոգաւ Դրաստամատն հանդերձ փչտիպանաւն և հրովարտակաւն արքունի՝ Անդուշ բերդն. և եռեւ զտէրն բնակ. և արձակեաց զԱբրշակ ի կապանացն երկաթեաց՝ ի ձեռակապացն և յոտից երկաթոց,

1. Թիկնապահ, ըստ Պարսից՝ փիշքիպան:

և յանրոց պարանոցին չղթայիցն սարեացն[1]: Եւ լուաց զգլուխ նորա, և լոգացոյց[2] զանձն նորա. և ազոյց նմա պատմուճան ազնիւ. և էարկ նմա բազմականս, և բազմեցոյց զնա. և եղ առաջի նորա ընթրիս՝ ըստ օրինաց թագաւորաց, և եղ առաջի նորա գինի, որպէս օրէն էր թագաւորացն. սթափեաց զնա և մխիթարեաց, և ուրախ առնէր զնա գուսանօք:

Եւ ի ժամ ազանգեր[3] մատուցանելոյ՝ եդին առաջի նորա միրգ, խնձոր և վարունգ և ամխձ[4], զի կերիցէ. և եդին դանակ նմա, որպէս զի հատցէ և կերիցէ զիարդ և կամեցի: Եւ Դրաստամատ մատ մեծապէս ուրախ առնէր զնա. կայր յոտն, և մխիթարէր զնա: Իսկ յորժամ արբեցաւ, և զինն եկն զակամբ նորա, արբեցաւ հպարտացաւ, և ասէ. Վայ ինձ Աբլակայ. աչսպէս և աչս, և յայսմ չափուս. և աչս անգք անցին ընդ իս...: Եւ զայս ասացեալ, զդանակն՝ զոր ունէր ի ձեռինն՝ որով զմիրգն կամ զամխձն կամէր ուտել, եհար ի սրտի իւրում. և անդէն սատակեցաւ, և մեռաւ անդէն ի նմին ժամուն, մինչդեռ կայր ի բազմականին: Իսկ յորժամ գայն ետես Դրաստամատն, յարձակեցաւ եհան ի նմանէ զնոյն դանակ, և եհար յիւրում կշտին. և անդէն մեռաւ և նա ի նմին ժամուն յայնմ[5]:

1. Նայնպէս կապանք չղթայից նշանակեն:
2. Բայր մարմինը լուաց՝ իբրեւ ի բաղնիս:
3. Թեզիւ կամ անայշ ուտելիք, յետ կերակրոց:
4. Խնձորի և վարունգի հետ յիշեալ Ամիձն եւս պատուղ մի ծառի: Եղիչէ այլ յիշէ գայն, բայց իբրեւ փափուկ մսեղէն ուտելիք:
5. Թէ բոլորովին սատյգ և թէ սչ, թէ և սչ գովելի՝ այլ չատ արտաչարժ և սրբերգական. ինչպէս և ամանք յաղագոյնս՝ զրած են թատերական սրբերգ կամ հանդէս՝ այս դիպուածիս:

Ճ Ա.

ՋԻՐԱՒԱՅ[1] ՊԱՏԵՐԱԶՄՆ ՀԱՅՈՑ ԸՆԴ ՊԱՐՍԻՑ

(ԽՈՐԵՆ. Գ. լԷ)

Ազգ արարեալ Մերուժանայ[2] յերկիրն Խորասա-նայ՝ առ Շապուհ, զամենայն օգնականութիւն Թէոդոսի՝ զոր արար առ Պապ, ելանել հրաման ի Շապհոյ՝ ամենայն զօրաց Պարսից երթալ ընդ Մերուժանայ ի Հայս, ի պատերազմ: Գոյնպէս ազդեն ինքնակալին Թէոդոսի՝ Պապ և Ցերենդ[3] ըզՇապհոյ, թէ ամենայն զօրացն հրամայեաց ելանել ի վերայ մեր, բայց ի զրանկացն[4]: Ապա Աբ-

1. Անուամբ տեղւոյն՝ որ հիմայ Ջիրոյ կոչուի, Ալաչկերտի կողմը:
2. Աբրացող Հայն և թշնամին Հայոց:
3. Հայաստանի յաւնական մասին կողմնակալն և զօրավար: Արա համար վկայէ Թէոդորետոս եկեղեցւոյ պատմիչ (Գ. լբ), թէ, ոչ միայն ըստ Խորենացւոյ (Գ. լզ–բ) քաջ ատրատեղատ էր, այլ և բարեպաշտ մարդ, որ ցուցուց իր զթութիւնը Պապայ վրայ, երբ վռնտուելով անկէ՝ յետ գարձաւ կայսեր հրամանաւ և բանեց զՊապ, թնայեց ազաչանացը և ազջ տարաւ առ կայսր: Իսկ ինքն՝ Ջիրաւայ մեծ պատերազմէն վերջ դառնալով՝ յաղթութեան Հանդէս կատարեց. վազէս կայսրն այնքան Հաճեցաւ իրեն, որ խոստացաւ տալ ինչ որ խնդրէ. Տերենտ աղերսագրով պատասխանեց, թէ ոչ ատակ կ'ուզէ ոչ տուն, գեռին այլ եկեղեցի մի՝ ուր աղօթեն ուղղափառք: Վազէս՝ որ մտորեալ էր ի չաւառս՝ բարկացաւ և պատրաստեց ազերսագիրը Տերենդ ժողվեց կասրներն և ըսաւ. Շնորհակալ եմ, խնդրածս ընդունեցայ. չեմ ուզեր ուրիշ բան. արդար գատաւորն վկայ է իմ բարեմտութեանս:
4. Աղքատներուց պահպանքն և ազնուական զօրականք:

գոստոսն Թէոդոս հրամայեաց Աղդիի կոմսին մեծի՝[1] երթալ յօգնականութիւն Պապայ, առնուլ զամենայն զօրս Ցունաց, ոչ զոք թողուլ՝ զոր ոչ առցէ. այլ և զհետեւակս պահապանս քաղաքացն, որք զմետաքսեայսն ունէին զվիշապս[2]:

Եւ խմբեցաւ պատերազմն ի դաշտին որ կոչի Ջիրաւ. և մատեան ճակատ առ ճակատ. և մանկունքն քաջ նախարարացն Հայոց ինքնակամ նահատակեալք՝ մահն ի մէջ ճակատուցն, առաջնորդութեամբ սպարապետին իւրեանց Ամբատայ սպասպետի, որդւոյ Բագարատայ, որ յազգէն Բագրատունեաց: Ելին և ի զօրացն Պարսից համատիք նոցա, և խաղացին ի մէջ ճակատուցն. և ցիր ընդ ցիր լինէր[3]: Եւ ի դառնալ մանկանցն Պարսից՝ ընդ հուպ զարձեալ մերոցն զհետ նոցա, օրինակ իմն որպէս փոթորիկ յանտառէ տերեւաթափ, այնպէս երագ յերիվարացն առեալ նիզակօք՝ դի ցուրտ յերկիր ընկենուին, ոչ կարելով նոցա յիւրեանց ճակատն մնանել: Իսկ յորժամ Պարսիկքն զմերն ընկէին[4], նոքա ի վահանափակն Ցունաց՝ իբր յաժուռ քաղաք մտանէին՝ առ ոչինչ վնասելոյ: Քանզի այնպէս արար Գորգոնիոս[5] իշխան հետեւակ զօրուն.

1. Թէոդոսի օրինագրոց մէջ յիշուի այս կոմսս:
2. Դրօշներու վրայ հիւսուած վիշապներ, նա և արձակ վիշապաձեւ դրօշներ:
3. Աւյսպէ այնպէ վազվզելով ցրուբաբեին:
4. Երբ Պարսիկք Հայոց կարիճներըը հալածէին:
5. Ժամանակակից յոյն և լատին հեղինակք յիշեն զովութեամբ զսա՝ որ թէ քաղաքական և թէ զինուորական պատիւ ունէր: Այս դիպուածէն չատ առաջ վերջ (386) յիշուի իբրեւ պաշտօնեայ գանձապետ Վաղենտիանոսի արեւմտեան կայսեր, որոյ հետ Մեծդն Թէոդոս և Արկադիոս կայսերք յանուն նորա օրէնք մի առած են: Յիշուած է տասը բնակիչն ի Պիկենեան գաւառի Իտալիոյ, որ է Անգոնայի կողմերն. ուր և թուի մեռած վասն զի մինչեւ հիմայ չէն գտած իր չիրին, Հանդերձ արձանագրութեամբ անուանն:

իբր պարապաւ պատեաց վահանօք զճակատն Պապայ:

Քանզի զօրքն Ցունաց վառեալ էին ի զէնս ոսկւոյ և արծաթոյ, և երիվարք նոցա նոյնպէս զարդուս. և էր տեսանել իբրեւ զպարիսպ մի, յորոց յոլովք ի ղեղայ և ի կաշեայ պահպանակաց զգեստուն՝ զկարծրութեան վիմայ բերէին երեւոյթս. և ի վերայ նոցա անթափառ գէպ՝[1] նշանք արձակեալք իբր զոսպարդ ինչ հովանաւոր ծառոց. բայց զվիշապացն մանուածս ահագին բերանաբացութեամբ ուռուցեալ ի փչմանէ օդոյն, ոչ ինչ ուրեք կարեմ նմանեցուցանել, այլ միայն իբրեւ զվեառն ինչ ագամանդեայ խռնարհիլ ի ծով՝ զբովանդակ ճակատն Ցունաց ի պարսկական զօրուն: Քանզի և զնոսա էր տեսանել իբրեւ զհզօր ինչ գետ առ ի կողմն ի լայն ծաւալեալ, արգարեւ զբոյ գոյն զրահազգեստացն բերէր տեսութիւն:

Աւդ, իբրեւ եռաց Մեծն Ներսէս զայն ամենայն,

Բայց զարմանալի զուգադիպութեամբ՝ այդ չիրիմն եղած է հանգստարան մերազգի Ս. Լիբերիոսի (Ազատ), որ և Անգոնա քաղաքին երկրորդ պաշտպանն է, և մեծ հանդիսով ոտնուի. ամանք գրեն թէ ի սկզբան ն զարուս հօտ եկած է ի Հայոց, այլք՝ թէ յամի 340 վախճանած է. Տրասոն եպիսկոպոս քաղաքին ի կէս 9. դարու գրեր է Սրբոյն մարմինը՝ Գորգոնիոսի չիրմին մէջ, ուր գրեթէ 1200 տարի մնացեր և յետոյ ուրիշ տեղ տարփոխեր է: Այս յիշատակին համար ներկայացնենք չիրմին մէկ կողմի գեղեցիկ քանդակը. որոյ ուրիշ կողմ փորագրուած է Գորգոնիոսի տապանագիրն. T. (Titus) J. (Julius) Gorgonius, V(ir) C(larissimus) Ex Comitibus (կամ Ex Comite) largitionum ex privatarum P(ræfectus) Pretorio fie(ri) sibi jus(sit). Աչխինքն, Տիտոս (կամ Ցիորիոս) Գորգոնիոս այր մեծապայծառ Կոմս Բաշխից, Գահերից Պրետոր. հրամայեաց առնել վասն իւր (գչիրիմս զայս):

1. Առանց գլխոց կենդանեաց՝ անոնց մազերը ձեւացուցած էին գրատից վրայ:

եւ նա ի կատար լերինն Նպատայ. և ամբարձ ըզձեռս իւր յերկինս, անխոնարհելի պահելով ի խընդրուածս, հանգոյն նախամարդապետին Մովսիսի, մինչեւ պարտեցաւ երկրորդն Ամաղեկ:

Իսկ ի ծագել արեգականն ընդդէմ մերոց զօրացն. ի պղնձապատ վահանացն նշոյլք զլերամբքն փայլատակէին իբրեւ յամպոյ մեծէ, և ի նոցանէ ի դուրս ոստէին ի մերոց նախարարացն՝ քաջ զրահաւորք, որպէս փայլատականց ճառագայթք. յորոց միայն ի տեսութենէն՝ զանգիտեալ պարսկական գունդն, սակաւ ինչ և մերն՝ վասն ոչ կարել հայել ընդդէմ արեգականն ծագման: Իսկ ի բախելն զմիմեանս՝ եղեւ ի վերայ հովանի ամպոյ, և հոգմ սաստիկ ի մերոցն կուսէ՝ ընդդէմ պարսկականին փչեալ: Եւ ի խառնակել մարտին՝ պատահէ կամսարականն Սպանդարատ խմբի մեծի, յորում էր քաջն Շերգիր Լեկաց[1] արքայ, զգլուխ միջին գնդին պնդութեամբ պահոյ հակառուն կալեալ. և յարձակեալ Սպանդարատ և հերձեալ զխումբն, որպէս չանթահար յերկիր կործանէր զքաջն, և ըզխումբն պռոստեալ ի փախուստ դարձուցանէր: Եւ այսպէս ի վերին օգնականութենէն զօրացեալ հասարակ զօրքն Յունաց և Հայոց, դիակամբք թշնամեաց լցին զդաշտն ամենայն, և զինացօրգոն ամենայն ի փախուստ չրջեալ հալածեցին: Ընդ որս և զՄռեւնայր Աղուանից արքայ՝ խոցոտեալ ի Մռչևդայ որդւոյ Վասակայ Մամիկոնենի, հանին ի պատերազմէն:

Բայց ամբարչին Մերուժանայ վիրաւորեալ ձին, ոչ կարաց երագել ընդ փախստեայսն, որում՝ ածապարեալ հասանէ սպարապետն Հայոց Սմբատ, և զրոս ընդ նմանն էին կոտորէ. ձերբակալ առնէ ըզվաշուէրն՝ յեզեր չամբին Կոգայովտի. և զմուտս ածեալ, թէ գուցէ թաւիշէ վնա մեծն Ներսէս,

1. Լեկք՝ Աղուանից երկրին հիւսիսակողմն բնակող կովկասային ազգաց մէկ ցեղն են:

այնորիկ աղագաւ ոչ ածէ ի բանակն. այլ զտեղօքն գտանէ պատրաստական՝ առ ի կորուստ ամբարըչին՝ զմանս խորանաւորս. հուր լուցեալ և չամփուր երկաթի ի միս խորովեալ. զոր չեռուցեալ՝ կրկնեաց բոլորեալ[1] որպէս պսակ, և յոյժ ատրաչէկ արարեալ, ասէ. Պատկեմ զքեզ, Մերուժան, քանզի ի խնդիր էիր թագաւորել Հայոց. և ինձ՝ ասպետիս՝ պարտ է զքեզ պսակել, ըստ սովորական իշխանութեան իմոյ հայրենեաց[2]: Եւ մինչդեռ տաք էր իբրեւ հուր, եդ ի գլուխ Մերուժանայ. և այնպէս սատակեցաւ չարն: Եւ յայնմհետէ խաղաղեցաւ երկիրն, ընդ ձեռամբ Պապայ նուաճեալ:

ՃԲ

ՆՈՑՆ ԲԱՆ, ԸՍՏ ՄԵՍՐՈՎՊԱՅ ԵՐԻՑՈՒ

Ձետ այսորիկ, ի թիկունս կոչէր թագաւորն Պարսից Շապուհ՝ զթագաւորն Հոնաց զՈւռնայր, և բանայր զդուռն Ալանաց. և ժողովեցան առ նա զօրքն Հոնաց, և Մազքրաց, և Ազոռգաց, և Լփնաց, Թաւմատկաց և Գուռռուրեից, Ճիմահաց, Գուռդարաց, Ոռզաց, Ճուռձաց, Շղխաց, Մաղազձաց, Գերաց, Կուռանաց, և այլ խառնաղանջ զօրացն[3] Պարսկաց,

1. Կրակ դարձած չամփուրը՝ կլորելով պսակի պէս:

2. Բագրատունեաց իշխանին տրուած էր պատիւ թագ դնելու Աբշականի թագաւորաց. տես եր. 32:

3. Շատ չանգ և ճարտարութիւն պէտք է այս խառնաղանջ ազգաց տեղիքն և ցեղերը գտնելու և որոշելու. յորոց ծանօթագոյնք են Մազքութք, Հոնք և Լփինք, որք յառաջ այլ յիշուեցան. Ազոռգք հաւանօրէն են Գոգք, որք սովորաբար յիշուին իրենց ցեղակցին հետ, Գոգք կամ Գովգք և Մագովգք, ըստ

անթիւ յոյժ, և այլ անբնակ զօրաց լեռնականաց Քուրդեից: Եւ եկեալ միաբան լցին զդաշտս Ա-տրպատականի, և տարածեցան ընդ աշխարհն Հայոց: Եւ ասէր թագաւորն Հոնաց ցթագաւորն Պարսից. Ընդ Մուշեղայ ես եկից ախոյեան իմով գնացս. և դու Աբեաց գնացուդ՝ հակառակ ընդդէմ Հոռոմոց գնդին: Իբրեւ լուաւ Մանուէլ Մամիկոն՝ եղբայր Մուշեղայ քաջի, ասէ ցնա. Գիրկս արկեր զբազում փշով, թէ ժողովես՝ մանուկ[1] ես: Եւ ինքն յղէր առ Մուշեղ եղբայր իւր՝ զհաւրհուրդս թագաւորացն: Ասէ Մուշեղ. Վասն եմ յաղթիս Սրբոյն Ներսիսի, զի նկուն լիցի փքալ զօցա: Եւ պատուէր տուեալ զօրացն Պարսկաց և Հոնաց, զի զզօրսն Հոռոմոց ձերբակալ արասցեն, և տարցեն յաշխարհն իւրեանց՝ ի գործս ապարանաց և բերդից (շինութեան)[2]. իսկ զզօրսն Հայոց՝ յանխնայ կոտորեսցեն, զի մի ոք մնասցէ ի Հայոց և աշխատ արասցէ զմեզ պատերազմաւ:

Եւ ժողովեցան զօրքն Հայոց և Հոռոմոց ի դաշտն Նպատակ[3], առ Պապ թագաւորն Հայոց. ընդ նոսին ածաւ և առաքեալ եպիսկոպոսապետն Ներսէս: Իսկ Պապ՝ չտայր մտանել ի պատերազմ Մուշեղայ Մամիկոնենւոյ, ասելով, թէ վասն աւուրս այսորիկ եթող Մուշեղ զկանայսն Շապհոյ, զի ապրստամբեալ ի մէնջ՝ առաւել կարասցէ գործել զօրաց մերոց՝ քան զթշնամիս մեր: Իսկ Մուշեղ անկանէր յոտս Սրբոյն Ներսիսի և բարեխօս ունէր և միջնորդ. և բուռն հարկանէր զայոյ նորա. և սաստիկ երդնոյր և ասէր, եթէ, Ոչ (է) անկեալ խորհուրդդ այդ ի միտս իմ՝ զոր կարծէիք: Եւ ասէ Սուրբն Ներսէս ցՊապ. Ես եմ տէր միաստու դո-

աբեւելեայց Աձռձ Մաձռձ. զուգէ անունց մին է և այս տեղ յիշեալն Շռձք:

1. Կարճ, քաջ երիտասարդ:
2. Վկայութիւն Յունաց լաւ հարտարապետութեան:
3. Կամ Նպատական, Նպատ լերան բոլորը:

բաս՝ յայսմ աւուր: Եւ ապա լուեալ թագաւորն՝ հրամայեաց նմա վառել ի պատերազմ: Իսկ Սուրբն Ներսէս հակէր զգիչերն՝ նոքօք հանդերձ. և մատուցանէր պատարագ և հաղորդեցուցանէր զարժանացեալսն՝ մարմնոյ և արեան Տեառն: Եւ քանզի Մուշեղ բերեալ զզօրսն պատերազմի՝ զկէսն առ Սուրբն Ներսէս, զի նա զգեցուսցէ զնա: Եւ բերեին ամենայն զօրավարքն Հայոց և Հոռոմոց առ Սուրբն Ներսէս՝ զի տեառնագրեսցէ զկէսն. և նորա տեառնագրեալ զկէսն նոցա և օրհնէր զնոսա: Իսկ Մուշեղ առնայր զդաստառակ Սրբոյն Ներսիսի և ի գեղարդն իւր կապէր, և յառաջ խաղայր ի գործ պատերազմին: Եւ Սուրբն Ներսէս ելանէր ի գլուխ լերինն Նպատայ, և համբարձեալ զսուրբ ձեռս իւր յերկինս անխոնարհելի, յաղթս կայր առ Աստուած:

Իսկ Մուշեղ զօրավարն վառէր զգունդն Հայոց ընդդէմ գնդին Հոռոմոց[1], և յառաջէր քան զնոսա ի զօրս թշնամեացն. և որպէս զհուր փոթորկեալ յեզէգն՝ ճեղքէր զզօրսն Պարսից և զՀոնաց: Իսկ իբրեւ եաես Պապ՝ եթէ ծածկեցաւ նշանն Մուշեղայ, ասէ ցՍուրբն Ներսէս. Վա՛յ, դու եաուր կոտորել զզօրսն Հայոց՝ գազանին Մուշեղայ: Ասէ Սուրբն Ներսէս ցթագաւորն. Մի՛ կարծեր, ո՛վ թագաւոր, այդպիսի՝ վասն տիրասէր ազգին Մամիկոնէից և անննդ. այլ տեսցես յայսմ աւուր զքաջալութիւն նորա: Եւ ասէ Պապ ցՍուրբն Ներսէս. Առէք աղօթեա առ Աստուած, ի ձայն մաղթեա, ով սուրբ քահանայապետ: Եւ նորա համբարձեալ զձեռն ուժգին հառաչմամբ:

Իսկ զօրացն յիրեարս խառնեալ՝ քաջս ընդ քաջս ելանէին. և իբրեւ զձայն ուռանց դարբնաց և ըզճայթիւն մայրեւորաց՝ լսելի լինէին. և ի սաստկանալ մեծի պատերազմին՝ ի փախուստ դարձու-

1. Իմանալոյ է Յունաց գնդին աչաց առջեւ:

ցանէին զզօրան Ալանաց և Պարսկաց և Ուզաց և Մասքթաց՝ գունդն Հայոց։ Եւ իբրեւ խոնարհէր ձեռք Սրբոյն Ներսիսի, զտեղի առնուին փախըստականքն և ընդդիմանային զօրացն Հայոց. և իբրեւ համբառնայր Սուրբն Ներսէս զձեռան, ցիրեւցան լինէին զօրքն անօրինաց՝ առաջի զօրացն Հայոց. և անտի փութարկեալ զօրքն Հայոց զկնի փախստէից, սուր ի վերայ եդեալ առ հասարակ սատակէին զանօրէնսն։

Եւ Շապուհ արքայն Պարսից իջեալ յերիվարէն և այլափոխեալ զգեստն, և ի դարափոր մի մտեալ՝ ապրէր։ Իսկ Մուշեղ զօրավարն Հայոց՝ սէրն Մամիկոնէից՝ հասեալ Ուռնայրի Հոնաց[1] թագաւորին, և բնով նիզակին ծեծէր զգլուխն նորա՝ թուլագոյն, և ասէր. Ահա ախոյեանս քո՝ զոր յուզէիր. բայց դու գնա չնորհակալ լեր այդմ՝ զի այր թագաւոր ես, և ես ոչ սպանից զթագաւոր զօք։ Ես եմ Մուշեղ Մամիկոնեան զոր դուն ցանկայիր մենամարտիկ լինել։ Զայս ասացեալ եթող զնա և ոչ էած առ Պապ, զի մի սպանցէ զնա։ Եւ յետ յաղթութեանն և անհնարին և մեծ պատերազմին՝ դառնային զօրքն Հայոց և Հոռոմոց առ Պապ թագաւորն և առ եպիսկոպոսապետն Ներսէս, բազում աւարաւ և խնդութեամբ։ Բայց յայնմ մեծի պատերազմին՝ ոչ ոք անկանէր ի զօրացն Հայոց։

Իսկ Մուշեղ Մամիկոնեան զործ մի զարմանալի պատմէր. թէ, իբրեւ սաստկացաւ մարտն ի մէջ երկոցունց՝ ընդ մեզ և ընդ թշնամիս մեր, ելեալ փոշին և շուք նեփեցն յօգս ի վերայ մեր, և ի ձայնից փղացն և ի նիզակացն և ի խաւարէն՝ ոչ ոք ճանաչէր զիւր կողմն կամ զթշնամեացն. ապա երթայր սուրբ քահանայապետն առաջի մեր, և ձեռամբ իւրով ցուցանէր զթշնամիս մեր. զոր՝ ելանէաք ընդդէմ նոցա և յերկիր ընկենուաք։ Զոմանսն տեսիլ և ամենայն զօրքն պատմէին. և անկանէին յոտս Սրբոյն Ներսիսի, և ասէին. Թէ, Ո՞ր էր յաղթութիւնն։ Եւ իջեալ ի լեռնէն ոտն մեծ կատարէին զօրն զայն[1]։

1. Ոչ Հոնաց այլ Աղուանից թագաւոր։

ՃԳ

ՄԱՀ ՄԵԾԻՆ ՆԵՐՍԻՍԻ

(ՄԵՍՐՈՊՊ ԵՐԻՑ)

Բայց թագաւորն Պապ զազրագործ էր, և յանդիմանէր զնա Սուրբն Ներսէս, և նա ոչ լսէր նմա. և Սուրբն Ներսէս դարձուցանէր զերեսս իւր ի նմանէ, և անիծանէր զնա որպէս զՀայր նորա զԱրշակ։ Եւ անդէն նեղէին զնա դեւքն. և երեւէին նմա իբրեւ զօձս մարմնաւոր տեսլեամբ։ Եւ եկեալ առ Ներսէս անկանէր առաջի նորա, և հայցէր թողութիւն, զի մոցէ առ նա։ Եւ իբրեւ մտանէր մեծն Ներսէս առ նա, դիւրանայր նմա, և հանգչէր, և ոչ երեւէին նմա դեւքն, և հալածական լինէին ի նմանէ. և իբրեւ ելանէր Ներսէս, ապա նեղէր թագաւորն ի տապոյ ցանկութեանն. իսկ Սուրբն Ներսէս յաղօթս կայր, և հալածէին ի նմանէ դեւքն. իսկ յետ մեկնելոյ Սրբոյն, թագաւորն ի նոյն չարիս անկանէր։ Եւ ապա Սուրբն Ներսէս արդելոյր զնա, և ոչ տայր նմա յեկեղեցին մտանել։ Եւ թագաւորն խորհէր ի գիպող աւուր ապաշնանել զՆերսէս, բայց ոչ կարէր, վասն երկիւղի նախարարացն և ժողովրդեանն՝ որ գային առ Ներսէս, և բժշկէին ախտաժէտք, և աչակերտէին նմա. և ոչ մեկնէին ի նմանէ բազում ժողովուրդք։ Եւ

1. Մեսրովպ երեց, շատ աշխատասիրութեամբ գրէ. բայց ամէն ըստածներն խիստ քննութեան տակ չեն ընկնիր։

զնոր ցաւքն զոր առաքեաց Աստուած՝ յանիրաւ քաղաքն Արշակաւան, զայն որ ժանիգ անուանեն մինչեւ ցայսօր, զոր բժշկեր Սուրբն Ներսէս՝ ձեռօքն տեառնագրելով։

Յետ այսորիկ կոչէր թագաւորն Պապ՝ զմեծն Ներսէս՝ ի ճաշ, կեղծաւորութեամբ, զի զեղօք ըսպանցէ զնա, ի գաւառն Եկեղեաց, ի վերն որ կոչի Խախ. և ասէր ցնա նենգաւ, Թէ կերիցես զճաշ ընդ իս, յորէս յայսմանէ գնացից ըստ կամաց զոց մինչեւ ցվախճան. և զինչ և հրամայես ինձ՝ ապաշխարեցից ի փութ և ի մխիթր, ըստ կամաց։ Իսկ Սուրբն Ներսէս ոչ գիտելով զանձին իւրոյ վնաս, երթայր ընդ նմա ի ճաշ. և իբրեւ մտանէր ի խորանն, բռնադատէր զնա թագաւորն՝ բազմել ի թագաւորական գահոյն. իսկ նա ոչ առնոյր յանձն. և բազում ազաչանօք բազմեալ ի թագաւորական գահոյն. և թագաւորն Պապ յարուցեալ հոլանէր զինքն, և իջանէր ի գետինն, և մատուցանէր նմա. և ի բաժակն խառնէր չար դեղ, և մատուցանէր Սրբոյն։...

Եւ յարուցեալ գնաց ի վանս իւր. և զհետ գնացին նմա ամենայն իշխանքն, և զօրավարն Հայոց Մուշեղ, և Մարզպետն՝ որ թագաւորահայրն կոչիւր. և սեպուհք և կուսակալք և սամիկք, զկնի նորա գնացին՝ ագով և սրտմտութեամբ։ Եւ իբրեւ եմուտ Սուրբն ի վանս իւր, և վերացուցեալ ըզպարեգօտն յանձնէ իւրմէ, կայր կառուցեալ ի վերայ սրտին կապուտակ բոլոր իբրեւ զնկանակ մի. և նախաբարքն մատուցանէին նմա թիւրակէս և անգեղայս, զի թափեսցին զդեղն և ապրեսցի։... Եւ յաղօթելն աւանդեաց զհոգին՝ սուրբ եպիսկոպոսապետն Ներսէս, բարի խոստովանութեամբ, ի Հայր և ի Որդի և ի Հոգին Սուրբ, յամենայնն հրոտից, յաւուր հինգշաբաթու[1]։ Եւ ժողովուրդեանն

1. Ըստ Յայսմաւուրքս ի 25 յունիս ամսոյ. ամանք այլ յ'19 փետր. ամսոյ զնեն զսոսն, ընդ Խոգայ։

ոչ իմացեալ զվախճան առնն Աստուծոյ. զի ձեռք նորա կանգուն կային ընդ երկինս, և պարանոցն անխոնարհելի. և ժողովուրդն մերձենային ի նա՝ զի նստուսցեն զնա, զի էր աչխատեալ և վտանգեալ ի ցաւոց դեղոյն։ Եւ իբրեւ տեսին զնա զի վախճանեալ էր, հիացումն լինէր ժողովրդեանն, և անկեալ զպարանոցաւ նորա՝ կոծ մեծ առնէին. ճիչք և լալումն լինէր Հայոց աչխարհին, զի հեզաւ աբրին արդար ի տարապարտուց. և ազալով մեծաւ տարեալ կողմնեցուցին ի քահանայապետական գահոյն. և երեւէր տեսողացն իբրեւ կենդանի։

ՃԴ

ՅԱՂԱԳՍ ՍԳՈՅՆ ՈՐՊԷՍ ՍԳԱՅԻՆ ՉՀԱՅՐԱՊԵՏՆ ՆԵՐՍԷՍ. ԵՒ ԼԻՆԷԻՆ ՉՆՄԱՆԷ ԿԱԹՈԳԻ[1]

(ԲՈՒԶԱՆԴ, Ե. Կ)

Ապա յետ սպանանելոյն Պապայ զսուրբ Հայրապետն Ներսէս, տխրեցաւ ամենայն մարդ խոր սրտմտութեամբ. և ամենայն մարդ երկրին Հայոց՝ հաւանէին խօսէին և ասէին. Բարձեալ են արդ փառք Հայոց, զի բարձաւ արդարն Աստուծոյ յայսմ երկրէ։ Խօսէին իշխանքն և նախարարքն, և ասէին. Գիտեմք արդ, եթէ կորեաւ երկիրս մեր. զիարդ հեզաւ արիւն արդար ի տարապարտուց. մանաւանդ զի վասն Աստուծոյ սպանաւ։ Եւ խօսէր Մուշեղ սպարապետն Հայոց և ասէր. Սրբոյն Աստուծոյ

վախճանած է յամի 373. ի նոյն տաճանորդական թուականի, 1173, վախճանած է և Ս. Ներսէս Շնորհալի։

1. Այս վերնագիրս է Բուզանդայ (Ե. յ.), և Սրբոյն մահուան պատմութենէն՝ չատ քան վերջը գրուած է. Թուի թէ օրինակողք սխալմամբ յետադասեր են։

հեղաւ արիւն ի տարապարտուց. այսուհետեւ ես ոչ կարեմ երթալ ի վերայ թշնամեաց, և ոչ նիզակ ունեք ուղղել. զի գիտեմ եթէ եթող Աստուած ի ձեռանէ՝ զմեզ. և լքեալ եմք, և ոչ կարեմք համբառնալ զգլուխս մեր. զի գիտեմ ես՝ եթէ չիք յաղթութիւն ի վերայ թշնամեաց երկրիս Հայոց. յաղթիից նորա էր յաղթութիւն՝ որ մեռաւն, և ազգի նոցա: Եւ սպային ամենայն ազատք և շինականք՝ ծագէ ի ծագ ամենայն սահմանաց երկրին Հայոց, ազատք և շինականք, ամենայն բնակիչք տանն Թորգոմայ, հայ լեզուն առ հասարակ[1]:

ՃԵ

ՍՊԱՆՈՒՄՆ ՍՊԻՏԱԿԱՁԻ ՄՈՒՇԵՂԻ[2]

(ԲՈՒԶԱՆԴ. Ե. ԼԶ)

Իրրեւ տեսանէին զթագաւորն Հայոց վարազդատ՝ մեծ նախարարքն Հայոց՝ թէ մանուկ բանս երթուկ[3] է, զչար ի բարւոյ որոշել չգիտէ, սկը-

1. Կրկնութիւնք նոյնիմաստ բանից, բայց չատ յարմար տեղ, այնպիսի արժանաւոր անձին այնպիսի անարժան մահուան համար. ոչ միայն աւեւնայն տահ-ւանք երկրին Հայոց, այլ և յաւտակք երկրին կ'արժէր որ սասկային և սասանէին:

2. Մեսրոպով երէց պատմիչ՝ մեր Մուշեղի մահը նշանակէ Արկադեոս կայսեր առաջին տարին, որ է ըսել իր Յօր Թէոդոսի մահուանն, և է 395 թիւ Փըրկչին. այս մեր ուրիշ պատմչաց ժամանակագրութեան չի համաձայնիր, և չատ ուշ է. ընդ հակառակն, Խորենացի (գ. խա) զվարազդատ թագաւորած կ'ըսէ Շապհոյ 358 տարին որ է 363 թուականն, և չատ կանուխ է:

3. Բերանին եկածը գրուցող. անհաստատ մտօք:

սան այնուհետեւ ըստ կամաց իւրեանց վարել զթագաւորն. որպէս և կամէին՝ բանիւք իւրեանց տանէին և բերէին զնա: Նա առաւել ունկն դնէր մանկտւոյն՝ որ ի տից հասակակիցք էին նորա, առաւել քան զծերոցն իմաստնոց, որք կարող էին զօգտակար խրատն մատուցանել նմա:

Այլ Բատ[1], որ նահապետն էր ազգին Սահառունեաց տոհմին[2], դայեակ սնուցիչ թագաւորին Վարազդատայ, կամեցաւ նա զգործ զօրավարութեան սպարապետութեան Մուշեղայ յինքն յափշտակել ի նմանէ. վասն այսորիկ սկսաւ քսխս մատուցանել զնմանէ առ թագաւորին Վարազդատայ, առ իւրեամ սանեան, և ասել. Թէ, ի սկզբան ի նախնեացն հետէ զձեր Արշակունեաց տոհմին՝ Մամիկոնէից է կորուսեալ, զի հակառակորդք ձեր դաքա լեալ են ի բնէ անտի. և համակ զերկիրս Հայոց՝ գոցա է կերեալ, մանաւանդ Մուշեղի. մանաւանդ զի այր չար է և նենգաւոր. զի սիրելի է թշնամեաց ձերոց, և ատելի սիրելեաց ձերոց. և համակ ընդ ձեզ նենգաւ է գնացեալ, երկմտութեամբ և դժխեմութեամբ: Զի ո՞չ այն Մուշեղ է՝ որ ի թագաւորութեան ժամանակ Պապայ, ի պատերազմունս Պարսից քանիցս անգամ ձեռնհաս եղեւ սպանանել զՇապուհ արքայն Պարսից, և ոչ եսպան, այլ արձակեաց զթշնամին. և երբեմն զկնայս Շապհոյ թագաւորին ի բուռն էարկ, և խնամոտ գթով ժանեւարօք[3] արձակեաց զնոսա զհետ Շապհոյ: Ո՞չ այդ այն Մուշեղ է՝ որ զՈւռնայր արքայ Աղուանից ի բուռն էարկ, և սպանանել ոչ կամեցաւ, այլ արձակեաց զթշնամին: Ո՞չ այդ այն

3. Նախանձոտ չարախօսի եղբիւր օրինակ մի կըրնայ ընծայուիլ Բատ, լաւ եւս կոչելի Վատ:

4. Սովորաբար Սահառունիք գրուին. անծանօթ է տոհմին նահապետն և իշխանութեան տեղն:

5. Թուի վրան ծածկուած կառք. անծանօթ է ինձ բառիս ծագումն:

Մուշեղն է, զի զարքայն Պապ հրամանաւ դորա և դորին խորհրդովդ՝ զօրավարքն Յունաց սպանին. զի դա ոխացոյց և գրգռեաց զարքայն Յունաց ի վերայ թագաւորին Պապայ, մինչեւ ետ սպանանել: Այլ արժան է մեռանել ի ձեռաց քոց, և չէ պարտ կեալ դմա. այլ թէ ոչ ամաչարեսցես, արքայ, այժմ զհայ երկիրս խորհի լնուլ քաղաքօք, և զօրանիստ առնէ ատ բնակութեան զօրացն Յունաց. և այնուհետեւ կամ թագաւորն Յունաց հանէ ի քէն զթագաւորութիւնս Հայոց, կամ այս Մուշեղ սպանանէ և ինքն թագաւորէ:

Եւ այսպիսի բանիւք գաղտնի հանապազ զթագաւորն գրգռէին. մինչեւ հաւանեցաւ ըստ կամաց նոցա զսպարապետն զզօրավարն Հայոց սպանանել: Այս խորհուրդ արարին, թէ որպէս ըմբռնել կարացեն զնա. քանզի մեծապէս երկնչէին ի նմանէն. թէ գայ, ասեն, մեծ պատերազմ առնէ, և ոչ ոք կարէ զդէմ քաջութեան նորա ունել, բայց հնարիւք մեքենաւորութեամբ ինչ լինիցի հնար: Այսպէս սպասէին նմա: Եւ եղեւ յաւուր միով հրամանեն ետ վարազդատ արքայ Հայոց՝ ընթրիս մեծ գործել, և մեծ պատրաստութիւն առնել. և կոչել հրամայեաց յընթրիսն զամենայն աւագս պատուականս և զմեծամեծս, և զզօրավարն Մուշեղ: Պատրաստեաց Վարազդատ արս ընտիրս հզօրս, զօրեղս, զի կամ կայցեն գործոյն, հարկանել յանկարծօրէն յանպատրաստից յեղակարծումն ժամուն ի վերայ Մուշեղի. զնոսա քաջ ուրախ առնէր մեծապէս, և չատ գինի տայր ըմպել, և բազում առնէր զբօսումն ուրախութեան. արքայն Վարազդատ տայր նշանս յառաջագոյն այնոցիկ՝ զոր էր սպանողն պատրաստեալ. եթէ, յորժամ գիտիցես՝ թէ քաջ արբեալ իցէ և զմտօք զառանցեալ յարբեցութենէ՝ սպարապետն Մուշեղ, ես յարուցեալ իբրեւ ի ճեմիչն[1] երթալոյ պատճառաւ, և դուք պա-

1. Աբտաքնոց:

տեսջիք զնովաւ: Եւ եղեւ իբրեւ անցին զառանցին ի գինւոյն՝ ըստ չափ անցանելով, և թագաւորն Վարազդատ պահէր զանձն ի գինւոյն. իբրեւ գիտաց Վարազդատ՝ թէ արդ յարբեցութենէ մտաց ինչ չգոյն, ինքն յարուցեալ իբրեւ յապաթահէ զանց առնելոյ պատճառաւ, և աւագանին ամենայն բազմականացն յոտն կացին առ հասարակ, իբրեւ նմա պատիւ ինչ առնել: Եւ յանկարծ, արքն՝ որոց էր տուեալ հրաման, երկոտասան այր, կից զոյգ զկնի կոզմանէ զնմանէ բուռն հարկանէին, վեց այր ի մի բազուկն Մուշեղի, և վեց այր ի միւս բազուկն: Եւ ընդ ոտն կալ թագաւորին, նայեցեալ ընդ նա՝ թէ այս ընդէ՞ր է. և թագաւորին պատասխանի տուեալ, ասէ. Երթ առ Պապ արքայ, հարց և տես՝ թէ ընդէ՞ր է այդ: Եւ թագաւորն ի դուրս կոյս գնացեալ եւանէր: Եւ ասէ Մուշեղ. Ի վերայ բազում իմոց վաստակոցն արեան և քրտան, և սլաքօքն զբիրան չնչելոյ, այս հատուցումն եղեւ ինձ. բայց իբրեւ եհաս ինձ մահս, թէ ի վերայ ձիոյ դիպեալ էր[1]...: Զայս միայն բանս ժամանեաց ասել, և այլ ոչ ինչ ոչ: Եւ անդէն Բատ Սահառունի, դայեակն արքային Վարազդատայ, ըզնրանն՝ զոր յիւրում ազգերն ունէր՝ հանեալ, անցոյց ընդ փղն զօրավարին Մուշեղի, և անդէն ի բաց եհատ զգլուխ նորա: Եւ բարձին զնա և տարան զմարմին նորա ի գետն իւր:

Եւ եղեւ իբրեւ տարան զմարմինն սպարապետին Մուշեղի ի տուն իւր առ ընտանիս իւր, ոչ հաւատային ընտանիք նորա մահուն նորա, թէպէտ և տեսանէին զգլուխ նորուն զատ ի մարմնոյն անտի. զի ասէին. Դորա յանթիւ ճակատ մտեալ էր, և վէր երբէք չէր առեալ. ոչ նեա մի դիպեցաւ երբեք, և ոչ այլոց զինու խոցեալ է զդա: Իսկ կէսք յառնելոյ ակն ունէին նմա. մինչեւ զգլուխն անդ-

1. Անշուշտ յիշէր իր պատերազմի հերմակ ձին:

դէն ի կոճեղն կարեալ կցեցին, և հանին եդին ի տանիսն աշտարակի միոյ. ասէին, թէ, վասն զի այր քալ էր, Աշեզք[1] իջանեն և յարուցանեն զդա: Պահապան կային և ակն ունէին յառնելոյ, մինչեւ նեխեցաւ մարմինն. ապա իջուցին յաշտարակէ անտի, և լացին, թաղեցին զնա որպէս օրէն էր:

ՃԶ

ՄՈՒՇԵՂ, ԵՒ ԹԱԳԱՒՈՐՆ ՀՈՆԱՑ, ՔԱՆԴԱԿ ՊԱՏԿԵՐԱՒ

(ՄԵՍՐՈՊ. ԵՐԷՑ. ի)

Մի այն յազգէ Գնդունեաց[2] որ մեծամարտեցաւ յառաջնումն՝ ընդ Հայոց թագաւորին Տրդատայ, ապստամբեալ և անցեալ[3] յաշխարհն Ասորւոց, բռնանայր ի վերայ բազում գաւառաց, և առնոյր զնփրկերտ քաղաք և զԳիդիրա[4], մինչեւ ի սահմանս Նինուէի՝ որ է Մօսլ. նա միանգամ և երկիցս ապատակեալ յաշխարհն Հայոց և աւար առեալ ըզգաւառսն՝ զՎասպուրական և զՏարօն և զԽորձայն[5],

1. Յիշուած է յաւանդութեան Գեղեցիկ Արայի մահուան:

2. Տես յօդուած 74:

3. Հոնք այս առեն արշաւած են և յարեւմուտս իբր յամի 375, ինչպէս Ս. Ամբրոսիոս ի Մեկն. Գուկայ, «Յարիցե ազգ յազգի վերայ». Այս խօսքիս՝ մեզմէ աւելի վկայ չկայ, վասն զի, կ'ըսէ, յարեան Հոնք (Chunni) ի վերայ Ալանաց, Ալանք ի վերայ Գոթից, Գոթք ի վերայ Հերմիոնաց (Tayfados) և Սարմատաց... և դեռ չվերջացաւ:

4. Ըստ արեւելեայց Ձիզիրե-իպն-Էօմեր, Տիգրիս գետոյ ճիւղով մի չրջապատուած:

5. Գաւառ Դ Հայոց կամ Ծոփաց:

մինչեւ ի սահմանս Մելտենոյ: Եւ զօրքն Հայոց սրտաթափ եղեալ վասն համբաւոյ Հոնին այնորիկ. ապա Մուշեղ սպարապետն Հայոց տէրն Մամիկոնէից՝ ի մի վայր գումարեալ այր և ձիոյ[1] Հայոց Մեծաց, զէն զանձամբ առեալ և սպառազէն երիվարօք. քալ ազգաւն իւրոց Մամիկոնէից, յառաջ հասանէին ժիր քալ առն և ձիոյ, պատրաստ գտանել ի տեղի ճակատամարտին. և որք երթային ընդ նմա՝ ի կամաց[2] գնային և ոչ բռնութեամբ. և Վրզուհի[3] նահապետն Վրաց բազկակից էր եղեալ քաջին Մուշեղի. և այլ յորդորէր զնա ի մարտ պատերազմի: Եւ սպառազէն գունդն Հայոց և Վրաց՝ զօրավարաւն Մուշեղու Մամիկոնէից՝ յառաջ խաղացեալ փութանակի զհետ Հոնաց անօրինացն, ճեղով ընթացեալ ընդ գաւառն[4] Ջերմաձորոյ, առ ոտս ամրոցացն Տմորից և բերդին Անկոյ[5] զոր էր չինեալ արքայն Քաջ[6] յանուն կնոջ իւրոյ Աւիկայ, որ էր Սմբատն այն անուցիչ Աբուտաչրի որդւոյ Սանատրկոյ՝ Հայոց թագաւորին: Աբգ, զօրքն Հայոց քաջն և չորս հազարաց վաղվաղակի սրաթիռիչ եղեալ որպէս զարծուիս՝ հասանէին ի սահմանս Ասորւոց: Իրրեւ լուաւ Հոնն այն՝ ընդ երկուս բաժանեալ զզօրս իւր՝ թաքուցանէր, զի զգունդն Հայոց ի մէջ առեալ՝ բարձցեն ի միջոյ: Իսկ ի տեսչութենէն Ասուծոյ գունդն Հայոց հանդիպեին թաքստէիցն, և սրոյ ճարակ արարեալ

1. Պէտք էր ըսել զայրուձիսն, կամ զգունդ այրուձիոյն:

2. Յօժարութեամբ, ինքնակամ կ'երթային պատերազմելու:

3. Վարազ անուան նուագարանն լսուի:

4. Այլ Օր. ընդ Դուռն:

5. Այս բերդին և անկէ առաջ յիշեալ գաւառաց համար՝ տես երես 78, ծան. 9:

6. Ոչ արքայն Քաջ, այլ Այրաքաջն Սմբատ. տես նախայիշեալ ծանօթութիւնը:

զնոսա, և մնացեալքն առ Հոնն անկանէին։ Եւ Հոնն այն գիմէր ընդդէմ Մուշեղայ, ձայնեալ առ նա՝ այսպէս ասելով, եթէ. Ե՛կ, սուտանուն առիւծդ Ամինեաց[1], զի ես այսօր հարեալ մաշեմ զքեզ առ տապով արեգական՝[2] զեղարդեամբ իմով։ Եւ ինքն յառաջ խաղացեալ՝ չառաչեցուցանէր զզեղարդն[3] և անցուցանէր զգլխովն, որպէս զշառաչիւն արծուոյ ի բարձանց։ Իսկ Մուշեղ ոչ ժամանեալ լինել յերիվարէն՝ զի ազօթեսցէ, ըստ սովորութեան իւրում, այլ սրսի մտաք հայցէր ի Տեառնէ յօգնականութիւն՝ զաղօթս Սրբոյն Ներսէսի՝ ի ժամուն յայնմիկ, ի մեծ պատերազմին[4]։ Իսկ Հոնն այն ձիարշաւ սրարեալ ի վերայ Մուշեղայ՝ որպէս զվըտչուն. և քաջին Մուշեղայ անցուցեալ վահանաւն զզեղարդն ահագին[5], և բաղխեալ ուժգին սրտվաւրիկ սուսերաւն յուս նորա, ճեղքեալ զնա, և հարստահարեալ զսուրն յորն երիվարին, անկանէր գառուղն այն՝ որպէս զԳողիաթին ի Դաւիթ, և ըզնախնին նորին զՀոնն առաջին ի Տրդատայ. և զօրացն ի փախուստ դարձեալ։ Իսկ գունդն Հայոց գՀետ եղեալ դիմաւեալ կացուցանէին զնոսա մինչեւ ի գուռն Գպիրայոյ։

Իսկ հարստահարց Ասորւոց պողոմատիկ գրչաւ նկատեալ զՄուշեղ՝ ձերմակ երիվարաւն յարձանի՝ առ եզերբ գետոյն, և զՀոնն յոտս նորա. որ բնակիչք

1. Ինչպէս Պարսիկք, Ասորիք և այլ արեւելեայք, Հոնաց այլ զՀայս Ամենիք կոչել սոյ՝ հեղինակս։

2. Թուի թէ կէսօրուան արեւու տաք ժամուն եղած է Հոնաց և Հայոց իրարու հանդիպելին։

3. Գուշակել սոյ թէ երկայն և ճօճուն էր զեղարդն կամ նիզակն։

4. Հեղինակն՝ այս կռիւը Զիրաւի մեծ պատերազմէն առաջ եղած ցուցընէ, բայց Հոնաց յարձակմունքն Ս. Ներսէսի մահուանէն վերջ եղած թուի, գոնէ անոնց յԵւրոպիա մանելն։

5. Կարծեմ թէ Մուշեղ իր վահանաւ Հոնին ահագին զեղարդէն զինքը պաշտպանեց և սուրը բանեցուց։

գաւառին՝ Հոնի Դուռն ասեն զտեղին զայն մինչեւ յայսօր[1]։ Եւ զօրացն Հայոց դարձեալ մեծաւ յաղթութեամբ և աւարաւն յաչխարհն իւրեանց։

1. Ըստ ամենայնի հաւանական է մեզ ասիկ առաջ կարգած յօդուածն, (Սպանման Մուշեղի), այնքան մանրամասնութեան կըրնանք համարիլ զայս յիշատակ, որ ոչ միայն գրաւոր է, այլ և իրական, տեսանելի և չօշափելի. և գուցէ միակ մեռ անկինջ մնացեալ՝ ի յիշատակաց հնագոյն նախնեաց մերոց, թէ և մաշեալ, և մինչեւ հիմայ անծանօթ, Մուշեղի երախտապարտ Ասորւոց՝ պաղպատիկ գրչաւ նկարեալ, այսինքն երկաթեայ գրչով կամ բրչով քանդակած։ Զայս զանողն և իր Նիւռեի Հնոտթեանց աստղագրութեան գրոց մէջ (երես 54–5) օրինակողն և հրատարակող, է անգղիացի (և ծագմամբ արտասահմանեալ վրանիկ Յանսենանց սերունդ), տղոյնուական արեւելագէտն Ա. Հենրի Լէյարտ, երբեմն դեսպան Բրիտանական պետութեան ի Դուռն օսմանեան, և երկար ժամանակ բնակութեամբն ի Վենետիկ՝ Ծանօթ մեզ և բարեկամ, որպէս և բազմաց ազգայնոց ի Կ. Պոլիս։ Պատմիչ մեր զՀոնն կ'ըսէ յատս զինքը կոչող Մուշեղին. գուցէ Լէյարտ ըստ պատշաճի գրից իր գրոց՝ գեմ առ գեմ գրեր է, գյաղթուածն իբրեւ կապուած՝ և գյաղթողն՝ ձերմակաձիին մեր, առանց գիանալու մեր ազգային պատմութիւնը։ Իր ըսածն այս է. Quitted Fynyk (Ֆընըգ) I left the carovan to examine some roch–sculptures, in a valley leading from *Jezireh* to *Derghileh*, the former stronghold of Beder–khan bey. The sculptures are about two miles from the high road, near a small fort built by Mir Saif–ed–din... There are two tablets, *one above the other: the upper contains a warrior on horseback, the lower a single figure.* Although no traces of inscription remain, the bas–reliefs may confidently be assigned to the same period as that of Fynyk.

ՃԸ

ՍՊԱՆՈՒՄՆ ՊԱՊԱՅ

(ԲՈՒԶԱՆԴ, Ե. ԼԲ)

Իշխանքն Յունաց և զօրքն նոցին՝ տակաւին էին յերկրին Հայոց. և անուն իշխանացն՝ միւսոն Տերենտ, միւսոսն Ադէ: Եւ յղեաց դեսպան մի գաղտուկ թագաւորն Յունաց՝ առ իշխանան զօրացն իւրոց՝ որ էին յերկրին Հայոց, և հրաման տայր սպանանել զթագաւորն Հայոց զՊապ: Եւ եղեւ իբրեւ ընկալան զայս հրաման ի թագաւորէն Յունաց՝ իշխանքն իւր՝ որ էին ի Հայոց երկրին, սպասէին մահու[1] ի գէպ՝ սպանանել զթագաւորն Հայոց զՊապ: Եւ եղեւ ի դիպան ժամանակի, իբրեւ գիտացին Տերենդն և Ադէն զօրավարքն զօրացն Յունաց, թէ միայն է թագաւորն Հայոց Պապ, և ամենայն մեծամեծքն և զօրքն Հայոց չէին անդ. և էր թագաւորն Հայոց Պապ բանակեալ ի դաշտին ի Բագրաւանդ գաւառի, ի Թռո[2] անուն տեղւոյն, և բանակ զօրացն Յունաց բանակեալ էր անդէն մօտ առ բանակին Հայոց արքային: Ապա զօրավարն Յունաց՝ հաց մեծապէս գործեալ՝ յընթրիս հրաւիրեալ կոչեցին զմեծ թագաւորն Հայոց զՊապ, մեծապէս ըստ արժանաւորութեան նորա, որպէս էր զայր թագաւոր ի հաց մեծ կոչել. և առնէին կամմութիւն պատրաստութեան:

Եւ եկեալ թագաւորն Պապ յընթրիս, մտեալ բազմեցաւ յուտել և յըմպել: Եւ իբրեւ մտանէր արքայն ի խորանն Տերենդի զօրավարին Յունաց, և լէգէոն սպարակիր հետեւակն՝ վահան ի ձեռն,

1. Թուի թէ պէտք էր ըլլալ ժառռ:
2. Անծանօթ տեղ, և արժանի անծանօթ ըլլալու:

սակաւը զգօտւոյ, չուրջ ի ներքոյ զսրմակք խորանին պատեալ պահէին. սոյնպէս և արտաքոյ կապէին, ի ներքոյ կուռ վառեալք, և ի վերոյ հանդերձ զգեցեալք՝ պատրաստէին: Իսկ թագաւորն Պապ համարէր ի միտս իւր՝ թէ ի պատիւ ինչ նորա զայն առնէին: Եւ մինչդեռ յընթրիսն ուտէր, սակաւոր զօրքն ի թիկանց կուսէ նորա կարգեալք պահակեալք կային չուրջ զնովաւ յամենայն կուսէ: Իբրեւ ընդ գինիս մտին, որպէս զառաջին ուրախութեանց նուագն մատուցին արքային Պապայ. և առ հասարակ թմրկահարք և սրնգահարք, քնարահարք և փողահարք՝ իւրաքանչիւր արուեստաւք պէսպէս ձայնիւք բարբառեցան[1]. և վահանաւոր լէգէոնին հրաման եառն. և մինչդեռ թագաւորն Պապ զգինին ունէր ի մատունս իւր, և նայէր ընդ պէսպէս ամբոխ գուսանացն, ահեակ ձեռամբն յարմուկն՝ յոր յեցեալ բազմեալ էր՝ ունէր տաշտ ոսկի ի մատունս իւր. իսկ ալ ձեռնն եղեալ էր ի դաստապան նրանին՝ զոր կապեալն էր յաջու ազդերն իւրում. և մինչդեռ բերանն ի բաժակին էր՝ յըմպելն, և աչօքն յառաջ կոյս պշուցեալ հայէր ընդ պէսպէս ամբոխս գուսանացն, հրաման լինէր ակնարկելով զօրացն Յունաց. և լէգէոն սակրաւորքն երկու ի թիկանց կուսէ կային ի սպասու ոսկիկմբ վահանաւքն[2], յանկարծօրէն կից[3] ի վեր առեալ ըզսակուրսն, զարկանէին թագաւորին Պապայ. մին կշիռ զուլն հարկանէր սակրաւն, և միւսն եւս սակրաւորն՝ զալ թաթ ձեռինն՝ որ կայր ի վերոյ դաստապանի նրանին՝ հարկանէր, կտրէր և ի բաց ընդգնոյր: Անդէն ի բերանս տապալէր թագաւորն Պապ. և գինին տաշտիւն և արիւնն պարանոցին՝

1. Գեղեցիկ յիշատակ սովորութեանց հանդիսից, այլ շատ սխալը առթիւ յիշուած:
2. Վահանին ղերսի կողմն զմբեթաձեւ ուռած:
3. Երկուքն այլ միանգամայն, նոյն վայրկենին՝ զարնեն Պապայ:

նովաւ հանդերձ ի վերայ բաժակակալ սկտեղն անկանէր առհասարակ. և անդէն սատակէր թագաւորն Պապ: Ընդ չփոթելոյ տաճարին խառնութեան, Գնէի՝ տէր գաւառին Աղձեւացեաց, յոտն կացեալ յիւրմէ բազմականէն, հանեալ զիւր սուսերն՝ հարկանէր զմի ի լեգէոնաց անտի, սպանանէր, յայնցանէ՝ որ հարին զթագաւորն: Ապա Տերենդ զօրավարին Ցունաց զիւր սուսերն հանեալ ածէր, տապակաց ի գլխոյն Գնելոյ՝ զկաւառակն գլխոյն ի վերայ աչացն ի բաց ընկենոյր: Եւ այլ ինչ ոք ոչ կարաց յանդգնել ասել ինչ ընդ նոսա, և ոչ ինչ[1]:

ՃԸ

ԵՂԲԱՅՐՍԻՐՈՒԹԻՒՆ ԿՈՄՍԻ

(ԲՈՒԶԱՆԴ, Ե. 1 Ի)

Յայնմ ժամանակի դարձան ի գերութենէն եկին ի Պարսից, զոր տարեալ էր Շապհոյ արքային, արք երկու եղբարք ի մամիկոնեան տոհմէն. անուն միոյն Մանուէլ, և անուն երկրորդին Կոմս: Քանզի զայն ժամանակաւ թագաւորին Պարսից սատանայականին՝ տուեալ էր պատերազմ ընդ մեծ թագաւորին Քուշանաց՝ ընդ արշակունւոյն, որ նստէր ի ի Բահլ քաղաքին: Եւ իրրեւ երթային զօրքն Պարսից ի Քուշանացն պատերազմին, ապա և զմարդիկ

1. Խորենացին տարբեր կերպով պատմէ (Գ. 1Թ) այս դիպուածը. Տերենտ բռնէ զՊապ. սա ազատէ որ զինքը խաւրէ կայսեր, և խաւրեն չղթայակապ. կայսրն Թէոդոս Մեծն, չի ներեր, այլ սակրով զլխատել տայ: Պապ՝ Ս. Ղեւոնթեան սպանման և իր անշնորհք վարուց համար՝ չէր վայլեր թագաւորելու. բայց վայլէը Թէոդոսի սպանանել իրեն ապաւինած թագաւորը:

գերութեանն որ ի Հայոցն էին՝ թագաւորին Պարսից, յղեր ի պատերազմ ընդ իւր զօրսն. և Մանուէլ այս երթայր ընդ նոսա, հանդերձ եղբարբն իւրով Կոմսիւ: Եւ իրրեւ եղեն խառնուրդք երկոցունց գնդացն ընդ միմեանս, ապա ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից՝ յերեսաց զօրացն Քուշանաց. դարձան ի փախուստ՝ անհնարին հարուածովք. հասին ի վերայ զօրացն Պարսից, զի ոչ մի ի նոցանէն ոչ ապրեցուցանէին ի զօրացն Պարսից. բանքեր անդամ ոչ ապրէր: Բայց Մանուէլ որդի Ներսէհայ ի մամիկոնեան ի տոհմէն, հանդերձ եղբարբն իւրով Կոմսիւ, բազում քաջութիւնս կատարեալ ի նմին ճակատուն, սակայն հետիոտս ապրէին և գային. յամենայն զօրացն Պարսից՝ սոքա միայն հասանէին առ թագաւորն Պարսից՝ ողջ ապրեալք, և բազում քաջութիւնս կատարեալ:

Սակայն թագաւորին Պարսից բազում տրտմութիւն լինէր յազգս իւրոյ զօրացն կոտորածոյն. սակայն և զայնու զայրացեալ զկատէր, զի զնոսա միայն տեսանէր ողջ եկեալ յամենայն զօրացն իւրոց. ցասուցեալ ընդ նոսա, այսպն արարեալ, հալածեաց յիւրոց սահմանացն[1]. արձակեաց զնոսա յերկիրն իւրեանց: Եւ գնացեալք գային դէմ յանդիման յիւրեանց երկիրն արարեալ[2]: Եւ էին հետիոտք երկոքին եղբարքն. և էին երկոքեան մեծք անհեղեղք. երկոքեան անձնեալք որպէս սկայազունք: Մինչդեռ գային ի ճանապարհի, ոչ կարէր Մանուէլն գնալ, զի ոտիւքն ցաւած էր. ապա Կոմս եղբայր իւր ըստանձնեալ առեալ բառնայր, և տանն տանն խրատա[3] բերէր ըստ անձին, գայնչափ այրն դանհեղեղ զանարի՝ եկն երեր յերկիրս Հայոց:

1. Ուղեց կարծել տալ՝ թէ զանոնք իբրեւ վախով պատերազմէն փախած վազնէ:

2. Եթէ սխալ չէ այս բառս, կըրնայ մեկնուիլ դէմ արարեալ, ինչ որ նշանակէ դէմ եդեալ գային:

3. Սովորաբար Հ առաջ դրուի, Հրատարա. եթէ սա

ՃԹ

ԿՏԱԿ ՄԱՆՈՒԷԼԻ ԱՌ ՈՐԴԻՆ ԻԻՐ ԱՐՏԱՇԻՐ

(ԲՈՒԶԱՆԴ, Ե. խդ)

Ապա յետ այսորիկ հիւանդացաւ սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ՝ զախտ հիւանդութեան մահու. և կոչեաց զորդի իւր զԱրտաշիր, և ետ նմա զթերութիւն իւր և զսպարապետութիւն զօրավարութեանն իւրոյ: Եւ պատուիրէր նմա հնազանդ հպատակ կալ արքային Ա[ր]շակայ (Գ), և լինել միամիտ. Չանալ և վաստակել, և տալ պատերազմ փոխանակ աշխարհին Հայոց՝ զանձն քո, որպէս քաջ նախնիքն՝ ի վերայ աշխարհին մտադիւր մեռանել: Զի, ասէ, առ Աստուած այն արդարութիւն մեծ է և ընդունելի. և ոչ Աստուած թողու ի ձեռաց, յորժամ այնպէս լինիք: Անուն քաջութեան յերկրի թողուցուք, և զարդարութիւն յերկինս ընծայեցուցանէք. և ամենեւին ի մահուանէ մի երկնչիք. այլ յուսացէք յայն՝ որ զամենայն արար և հաստատեաց: Եւ զնոյնգութիւն և զպղծութիւն և զչարութիւն յանձանց ձերոց ի բաց արարէք. և զտէր Աստուած սրբութեամբ և միամտութեամբ պաշտեցէք.

է փարսախն համաձայն, անկարելի է այնչափ տեղ այնպիսի անհեղեղ ծանր մարմին մի չալկել տանիլ. որովհետեւ Պարսից փարսախը 3000 չափ (մեար) համարին դիտնականք, որ աւելի է քան զերկուս մղոն աշխարհագրական, և քան Պարսից՝ մղոնն երրորդ մասն էր փարսախին՝ (1668 Զ.). կարծեմ թէ ասոր սահմանեալ մասն (167 Զ.) ըլլայ այս տեղ յիշուած հրամանն, որ մօտենայ Յունաց Ասպարէզ կամ Զիարչաւ չափուն: — Մանուէլս այս պատ է Ս. Վարդանայ:

և ի վերայ աստուածապաշտ աշխարհի համարձակութեամբ մեռարուք. զի այն ինքն մահ վասն Աստուծոյ է, փոխանակ եկեզեցեաց նորա և ուխտի նորա, և ի վերայ բնակ տերանց աշխարհիս արշակունոյ:

ՃԺ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՈՐԴԻ ՓԱՒՌԵՆԻ

(ԲՈՒԶԱՆԴ, Զ. ը)

Յովհան եպիսկոպոս, որդի Փաւռենայ հայրապետի, հինաւուրց, թէ արժան իցէ զնա կոչել եպիսկոպոս. և էր սա այր կեղծաւոր, և երեւեցուցանէր ինքն զանձն իւր մարդկան՝ պահող և խորգահանդերձս. մինչ զի մոգս[1] անգամ ոչ ագանէր, այլ զամառն հեսկով[2] պատէր, և զձմեռն կեմով: Եւ յագահութեան առանց չափոյ էր հեղեալ, և ոչ կարէր տալ զագահութիւն իւր ընդ երկիւղին Աստուծոյ. այնչափ ինչ, զի զիրս անարժանս և չհաւատալիս գործէր:

Զի էր երբեմն դիպեալ ի ճանապարհի ուրեմն, զի նստէր նա ի գրաստու վերայ և գայր. եկ դիպեցաւ սմա օտար պատանի մի աշխարհական՝ հեծեալ ի ձի, առեր ընդ ձէջ, թուր զգօտւոյ, աղեղնակապարճ զմիջոցն. լուացեալ զհերս իւր, օծեալ մարձեալ[3], վարսակալ եդեալ ի գլուխ իւր,

1. Կաշիէ կօշիկ կամ հողաթափ:
2. Մէկն թուի քթանով հիւսուածո, միւսն խոտերնով պատատած ոտից աման:
3. Ի ձեռագրին մերձեալ գրուած է, որ հօս բան չի նշանակեր. իսկ մարձել նշանակէ մազերը շըկակել, չիւել. և ինչպէս գրուած է Ոսկիբեր. Տիտոսի Թղթի

և օդիկ[1] արկեալ զուսովք իւր. և գայր զճանապարհս իւր. թերեւս յաւազակութենէն: Իսկ ձին՝ յորում հեծեալ՝ մեծ հասակաւ, և էր գունաւոր, գնացող, մինչ զի ի բացէ տեսանէր եպիսկոպոսն Յոհան զձին, մեծապէս զարմացեալ՝ ակնկառոյց լինէր: Ապա իբրեւ եկն մերձեցաւ հեծեալն՝ մօտ ի նա անդր, ապա սպասեալ Յոհաննու՝ բուռն հարկանէր զերասանակաց ձիոյն, և ասէր. Էջ դու վազվազակի ի ձիոյ այսի, զի բանք են ինձ ընդ քեզ: Ասէ այրն. Զի ոչ դու զիս գիտես, և ոչ ես ըզքեզ, զի՞նչ այն բանք իցեն, զոր դու ընդ իս իցես խօսելոյ: Մանաւանդ զի այրն արբեալ եւս թուեցաւ, և շատ յամառեաց այրն իջանել ի ձիոյն: Ապա բռնադատեաց զնա Յոհան, իջոյց ի ձիոյ անտի. և առ տարաւ զնա մեկուսի ի ճանապարհէն: Եւ առնն խոնարհել հրամայէր և ասէր. Զերիցութեան ձեռն զնեմ ի վերայ քո: Իսկ նա տայր պատասխանի զանձնէն, եթէ այր աւազակ սպանող չարագործ և խառնագնաց լեալ ի մանկութենէ իմմէ, ես ոչ ինչ եմ արժանի այդպիսի իրաց. և այժմ դեռ ի նմին գործ կամ: Եւ շատ ի վէպ եւ կեալ յամառէր այրն, և նա եւս չար քան զնա: Ապա բռնաբար զգեստեալ զայրն, դնէր Յոհան զձեռն իւր՝ առնել զնա երէց. և յարուցեալ հրամայէր լուծանել զհանդոյցս մեկնոցին, և արկանել նմա աղաբողոն. և ասէր. Երթ ի գեղ քո, և լիցիր դու անդ երէց գեղջն՝ ուստի ես: Եւ անգամ ոչ գիտէր զայրն թէ յորմէ գեղջէ իցէ. ինքն Յոհան մատուցեալ բուռն հարկանէր զձիոյն, և ասէր. Այս ինձ կօշիկք լիցին, փոխանակ զի երէց արարի զքեզ: Իսկ այրն յամառեալ ի վերայ ձիոյն՝ չառնոյր յանձն տալ. ապա բռնաբար յինքն հանեալ զձին, և զայրն արձակեաց: Եւ այս ամենայն իրքս վասն ձիոյն եղեն:

Մեկնութեան մէջ. «Մանեալ պերեւեշութիւք մարձիին» զմօրուս», (ընչացքը մօրուքը հիւսել չգիտէր):

1. Մարթէ վերարկու. զուցե Լօդիկ գրուած էր:

Ապա այրն թէ ոչ կամաք՝ ազէրոզոն արկեալ, գնայր ի տուն իւր. և երթեալ մտանէր ի մէջ ընտանեաց իւրոց. ասէ ցկին իւր և ցընտանիս. Արիք, յաղօթս կամք. և նոքա ասեն. Մոլիս դու, զեւ ուրեմն հարաւ ի քեզ: Իսկ նա ասէ. Արիք, կամք յաղօթս, վասն զի երէց եմ: Իսկ նոքա զարմացեալ, մերթ չիկնէին, մերթ ծիծաղէին. մինչեւ բազում անգամ յամառեալք, ապա ուրեմն հաւանեցան կալ յաղօթս ընդ նմա: Ապա ասէ կինն ցայրն իւր. Ո՞չ դու երանայ էիր և չէիր մկրտեալ: Ասէ այրն ցկինն իւր. Ապշեցայ, չեմ յիշել, և ոչ ես յիշեցի զայդ ասել ցնա. զիս երէց արար, և զձին սանձաւ թամբաւ առ և անց: Եւ ասեն ցայրն ընտանիքն իւր. Յարիցես անդրէն գնացես առ եպիսկոպոսն, և ասացես. Մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց: Եւ ասէ Յոհան. Սափորով միով ջուր բերէք. և առեալ զջուրն էարկ զգլխով նորա, և ասէ. Երթ, մկրտեցի զքեզ: Եւ արձակէր զայրն վազվազակի յիւրմէ[1]:

ՃԺԱ.

ԴԷՊՔ Ի ՔԱՐԱՅՐՍ ՄԱՆԱՆԱԳԻՈՅ

(Մ. ԽՈՐԵՆ, Գ. ԽԱ)

Սուրենայ խորխոռունւոյ և վահանայ առաւեղենի և Աշխադարայ դիմաքսինի, գտեալ ժամ պատեհ, զի էր զգանձան Արշակայ[2] յամրոցէն Հանւոյ[3] տանել յաշխարհն Ծոփաց. զոր յափշտակեալ, և կամեցեալ անցանել առ Խոսրով[4], ոչ ժամանեա-

1. Գեղեցիկ նկարագիրը՝ ազեղ գործոյ. եթէ սապոգ է:
2. Պապայ որդին է, Գ Արշակ, յարեւմտեան Հայոց:
3. Թարանաղէաց գաւառին Անի ամրոցն:
4. Արեւելեան Հայաստանի թագաւորն, Խոսրով Գ:

ցին : Քանզի ածապարեալ Սահղի մամիկոնենէ մտերմի Արշակայ, յոլովաձեռն գնդաւ զհետ մըտեալ, փախատեայս արկանէ յամուր այրս ի գաւառին Մանաւաղոյ, յոր մուտ ոչ գտանէր, բայց ի կողմանէ դոյզն ելք էին առ ի թաւալ. և առաջի դրաց այրին՝ սեպ էր ուղղորդ միապաղաղ. և ի վերուստ քարանձաւ քուաւոր[1], որ հայի յանդունդըս խորաձորոյն. և որ ինչ վերծանի՝ յանհնարին ուղիս սաստկութեան անկանի, անդադար հոլովմամբ գլորեալ, ոչ ուրեք լինել ոանկախ : Վասն որոյ տարակուսեալ Սամէլ վարանէր առ անհնարութիւն տեղեացն. և ազդ արարեալ Արշակայ, հրամայեաց արկղ գործել երկաթակապ. և քաջ առանց ի ներքս մտանել, և այնպէս չղթայատող կարիւք ի վերուստ ի վայր իջուցանել ի դուրս այրին. սակայն և ոչ այն ինչ ձեռնտաց. քանզի յոյժ ի գատ պահէր ցերդն[2] :

Եւ մինչդեռ նոքա յայնմ էին, լինէր լուր ըստ դիպուածոյ բախտի հասանել անդր ասպետին Սահակայ՝ բովանդակ գնդաւն Խոսրովայ, որով հետամուտ յելուզակացն էր : Թողեալ զնոսա, դիմէ ի վերայ այնոցիկ՝ որք ընդ այրին մարտնչէին, և հաւածական արարեալ՝ հանէ զՍուրէն և զՎահան և զԱչխադար հանդերձ գանձիւքն. փոյթ ընդ փոյթ հասուցանէ առ Խոսրով: Իսկ Խոսրով առեալ ի գանձուցն, հանէ և մասն Շապհոյ. և հրամանաւ նորա տայ նոցա զեղջս և դաստակերաս ընտիրս և յարմարս, յայնոցիկ ժառանգութենէ՝ որք ի բաժնոյն Պարսից մնացին առ Արշակայ : Եւ այս եղեւ սկիզբն պատերազմին Արշակայ և Խոսրովայ :

1. Ժայռերուն դէպ ի դուրս ցցուած եղերքն :

2. Ցերդ, Ցրդի կամ Ցրդենի, վայրենի թռչուն մի. Sabine: պտուղն արաքերէն Ոպհոյ կամ Ոշհոյ կոչի և յիշուի ի Բժշկարանս մեր :

ԺԹ

ՇԱՊՈՒՀ ԱՐՔԱՅՈՐԴԻ ՊԱՐՍԻՑ[1] ԱՐՀԱՄԱՐՀԵԱԼ Ի ՀԱՅՈՑ

(Մ. ԽՈՐԵՆ. Գ. ԺԵ)

Էր երբեմն զհետ երամակաց ցռուց[2] յանդգնագոյնս արշաւեալ ընդ խորտարորսն և ի վիմուտ տեղիս. յորմէ կասել սկսաւ Շապուհ. իսկ Ացոռմայ մոկացւոյ եպերեալ զնա՝ ասէ. Գնա՛, գնա, ասուածորդիդ Պարսից, թէ այր իցես : Եւ նա ասէ. Դու երթիջիր, զի ի քարինս՝ դիւաց է չհատուցել: Գարձեալ յայլում ժամու դիպեցաւ ի շամբու կինջ որսալ՝ հրով, և Շապհոյ ոչ համարձակեալ ի թաւուն[3] քաջարշաւ լինել, մինչեւ շրջապատէր հուրն. և նորա զհայեցուածսն յերկուս բաժանեալ, այսր անդր բերեալ լինէր երիվարաւն: Միւսանգամ ասէ Ացոռմ. Ացուածորդիդ Պարսից, ահա հայր քո և ասուածս[4], ընդէր զանգիտես: Իսկ Շապուհ ասէ. Թողեալ զկատակերգ՝ յանցանել ընդ հուրդ զարձս զքեզ, որ և ես զկնի քո. քանզի յառաջելն՝ ձիս իմ խրտչի : Յայնժամ այպանեաց զնա Ացոռմ՝ ասելով. Միթէ և այդ քարինք իցեն՝ զի ես յառաջեցից. և արդ, թէ դու զՄակացիս կոչես

1. Խոսրով Գ. Հայոց թագաւորին մեռանելէն վերջը՝ Յազկերտ Ա. Պարսից թագաւորն՝ զայս իր Շապուհ որդին խաւրեց իբրեւ թագաւոր ի Հայս:

2. Ցիռս, վայրենի հչ:

3. Թաւ կամ թաւուռտ, խիտ խիտ թուփերով ծառերով տեղ:

4. Պարսից կրակ պաշտելը ծագրեր Ացոռմ. եթէ կրակ քու աստուածդ է, կ'ըսեր, ինչո՞ւ կու վախես անոր մօտենալ:

դիւազդիս, ես զասասանեանդ կոչեմ կնամարդիս։ Եւ մտրակեալ զերիվարն՝ իբրեւ ընդ հովիտս ծաղկանց անցանէր ընդ հուրն, զերծուցանելով զՇապուհ. և յետ այնր գիտացեալ՝ եթէ նա լուռ ոչ լինի, անցեալ գնայ ի Մոկաց աշխարհն։

Ա՛յլ երբեմն ի մականական խաղուն՝ երկիցս պատահեաց Շաւասպայ արծրունւոյ զգնդակն հանել ի Շապհոյ. և նորա ածեալ նմա մականաւն՝ ասէ. Ծանիր զքեզ. իսկ նորա պատասխանեալ, թէ, Ա՛յո, ասէ, ճանաչեմ և զիս արքայորդի, ի սերմանէ Սանասարայ[1], և ունիմ իշխանութիւն ընդ եղբարս քո՝ զբարձն արքայի համբուրել, որպէս և անուանակոչեցեալս եմ[2]։ Եւ զայս ասացեալ յոյժ քամահաբար, ի ձիարձակարանէն արփայադնաց[3] լինէր։

Դարձեալ երբեմն, ի խնդոյն ուրախութեան խոստով գարդևանացի ի գինւոջ զեղխեալ առաջի Շապհոյ, զօրէն սեղեխի տափեցելոյ զհետ չնարահար քաղաման կնոջ կրթէր։ Ընդ որ ցասուցեալ Շապհոյ՝ հրամայէ ունել զնա և ի դահլճին պահել. այլ նա ի վաղահաւորն հաստատեալ զպէն, պէս գունակ Տըրդատայ Բագրատունւոյ[4], յիւր տունն անցեալ գնայր. և ոչ ոք ի սպասաւորացն արքունի համարձակեալ արկանել ձեռն, յառաջադոյն գիտելով զփորձ առնն[5]։

1. Ասորեստանեայց Սենեքերիմ թագաւորին ցեղէն։
2. Մինչ Շաւասպ անունն այսպիսի ինչ նշանակէ։
3. Թռչելու պէս չուռով կ'երթար։ Բայց յայտնի չէ՝ թէ արփի (արեւ) բառէն զուգած է բարդ բառս։
4. Տես խորն. Բ. կգ։
5. Ա.յսինքն, անոր քաջութենէն վախնային։

ԺԴ

ԱՐՇԱԿ Գ ԵՒ ԽՈՍՐՈՎ Գ. — ՊԱՐԱՐՏՈՒԹԻՒՆ ԱՅՐԱՐԱՏԱՅ

(Ղ. Ա Զ Ա Ր Փ Ա Ր Պ Ե Ց Ի, Ա, Բ)

Քանզի նախգոյն թագաւորն Հայոց Ա.րշակ (Գ) ունէր միահեծան զթագաւորութիւնն ի վերայ ամենայն աշխարհիս Հայոց։ Իրրեւ եառս թէ խախտեալ և քայքայեալ մանեցաւ ի բաժանումն մեծ իշխանութիւն թագաւորութեան ազգին Լուբեանց, մեծաւ արտաքսութեամբ խռովեալ տարակուսէր յանձն իւր. տեսանէր, նախ, զանկանելն ընդ լծով ծառայութեան երկուց թագաւորաց զաշխարհս Հայոց. և դարձեալ, զմեծ մասն՝ զլաւն և զպիտանին և զարգաւանդն աշխարհիս Հայոց՝ ունել ի բաժին արքային Պարսից. քանզի թէպէտ և հասեալ (էին) բազում գաւառք այլ՝ ի ժառանգութեան մասին թագաւորին Յունաց, սակայն համեմատին այն՝ միայն Ա.յրարատեան գաւառին։ Խորհուրդ բազմածուփ հանգերձ իւրովք սիրելեաք ի մէջ առեալ թագաւորն Ա.րշակ, մտայոյզ լինէր ի սիրտ իւր, ասելով. Թէպէտ երբեք մինչեւ ցայժմ՝ կամ հակառակութեամբ կամ սիրով եղեալք մեք ընդ միմեանս, զգացուցեալ էր մեր նոցա զօրծով պատերազմի, որպէս և պարտ էր ճանաչել առն փորձ միւսոյ եւս լաւագունի քան զինքն. և թէ խոնարհեալ դիպեաք ի սէր առ միմեանս, սակայն եղբայր լինեաք հաշուեալ նոցա, պատուով և գահակցութեամբ ըստ կրտսերագոյն մասին. և ոչ ընդունելք ի բաժին՝ զանուն ծառայութեան ստացեալ կրեաք յանձինս[1]։ Իսկ այժմ յաղագս ցասուց-

1. Խառնակ և չփոթ է չարագրութիւն բանիցն։

ցանելոյ մեր և մերոց առաջնոցն զերկայնամիտ և զքաղցր Աստուած, մատնեալ անկաք ի տարկուսութիւն, և խոնարհեալք յանարգութիւն՝ անողորմութեամբ գտեաք ի բաժանումն. այլ և զդեղեցիկ տեղի հանգստի մերոյ և բնակութեան՝ տեսաք ժառանգեալ ամբարհաւաճ և անաստուած ազգին Պարսից: Վասն որոյ ընտրելագոյն լիցի ինձ թողուլ զանձկալի և զամենատենչ վայրս Այրարատոյ՝ զբնիկ և զեպհական տեղիս նախնեաց իմոց, և գնալ զկնի աղքատութեան, և կեալ բազալի կարօտանօք՝ քան թէ սիրել զկենցաղս աչխարհիս, զոր իրրեւ թողլոց եմք ականջ. և ընտրել զբնակութիւնն մահին այսորիկ, քան բնակել անարգանօք ի մէջ անօրինաց, և կեալ միշտ ցաւօք մտաց՝ զյերկար և կամ զկարճ կեանս անյայտ կենցաղոյս, և վախճանել անարգութեամբ. ըստ որում որ ոչ արժանի թագաւորական պատուոյ և չքեղութեան:

Եւ խորհելով զայս ամենայն Աբշակ թագաւորն ի միտս իւր, կքեալ մերժեալ Թողոյր զբարի և ըզբնիկ ժառանգութիւն նախնեաց իւրոց՝ զգաւառն Այրարատոյ, զհայկապն և զհռչակաւորն և զանուանելին, զամենաբոյսն, զամենաբուղխն, զամենայիլն, զամենագիւտն ի չահս և ի գարմանս մարդկային պիտոյիցս կենաց և վայելչութեան և սթափութեան. զդաչտս մեծատարածս և օրօրելիցս, զլերինս չուրջանակի գեղեցկանիստս և պարարտաբուսս, զհոծեալս էրէովքն կճղակաբաժնիւք[1] և որճայնովքն, և այլովք եւս բազմօք ընդ նոսին: Յորոց ի վերուստ ի կատարացն՝ ջրոց հոսմունք անկարօտ ոռոգման, արբուցանելով զդաչտս, մատակարարել անբաւ բազմութեամբ յոտանն[2], կանամբք, արամբք և ընտանեօք, զանպակասութիւն

1. Իրարմէ զատուած մատներով՝ ընտանի կամ որսի չորքոտանիներ, որք ըստ մովսիսական օրինաց եւս՝ ուտելի համարուէին:

2. Թագաւորաքնակ քաղաքն և Այրարատ գաւառն:

հացի և գինւոյ, զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն և զպանազանութիւն իւղաբուղխ սերմանցն: Իսկ ի լանջակողմանն կամ ի սարահարթ տեղիս՝ յոր դիպեցուցեալ զհայեցած նորոգատեսիլ մարդոց, հանդերձս ինչ և ոչ ծաղկաբոյս գոյնս կարծեցուցանեն[1] սփռեալս, պարարտաբոյսք և պարարտաբուսք, պարարտահամք. որոց թանձրախիտ ամմունք խոտոցն՝ զանթիւ ոչխարական ընտանի խաշանց[2], և զանհամրոյր բոյսս վայրենի էրէոցն յագեցուցեալ, թանձրաթաղանթս, առոգագաւակս, սոնքացեալս գիրութեամբ զբնաւ մարմինն ցուցանեն: Իսկ սաստկաբուրումն անուչահոտ ծաղկանցն, որ զարանցն քաղաց որսաւէր նետողացն և զհօտս արած բացօթեգացն[3] ընձեռելով առողջութիւն, զօրացուցանեն զզգայութիւն խելացն և նորոգեն: Անդ գտանին և ազգի ազգի սրմատք բուսոց ի պէտս օգտակարութեան դեղոց, ըստ ճարտարապետ ճանաչողութեան ստուգահմուտ բժշկացն յօրինուածոց, երագահաս ախտահալած ապեղանիք. և կամ արբմամբ[4] յերկարելոյն ի ցաւս՝ պատահացուցանեն առողջութիւն:

Իսկ դաչտացն ամենալիութիւն՝ զկամս աչխատասիրացն կորզելով յինքեանց իրրեւ բանիւ, և առլցեալ որ զինչ և է բարով, եւս առաւել փառօք Թանակի զգարձն առ ինքեանս հրաւիրեն միանդամայն: Որք ոչ միայն երեւելութեամբն ցուցանեն վերաբերեալ զչահաւորութիւն օգտից մարդկան,

1. Լերանց և բլրոց տափակ և պատկուկ կողմանց՝ բոյսերով և ծաղկած տեսքը՝ նմանցընէ գունագոյն գեղասուզ:

2. Ի բնագրին էր իշանց, որ յայտնի սխալ է, և սչ այլ յարմարի շանց ըսել, զի սրքան և պարարտ ըլլան Այրարատայ խոտերն՝ շունք չեն ուտեր:

3. Բաց օդոյ տակ սչխար արածոյ հովիւք:

4. Բժշկական խոտեր խաչելով և ջուրը լմցընելով հիւանդաց:

այլ առաւել յորդորախոյզ աշխատողացն զառ ընդ երկրաւ ծածկեալ օգուտս ուսուցանեն, գանձել անձանց գշահս և զվայելս այսր աշխարհիս, ի մեծութիւն թագաւորաց և ի հաստատութիւն հարկահանաց, զոսկի և զպղինձ և զերկաթ և զպատուական քարինս. զոր ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարեն զթագաւորս մեծատեսիլ զարդեօքն, յօրինուածովքն՝ զոր ի խոյրսն և ի թագն և ի հանդերձն ոսկեհուռս պատուեալս ընդելուզանեն: Այլ և մածմամբ ջրոց՝ համածին անուշութիւնս մատուցանեն զխորակացն որոշութիւնս. նա և զարմատս եղէգնասէր բուսոցն՝ ոչ ընդունայն անուցանէ յինքեան ամենաբազձ դաշտն Այրարատոյ. այլ և ի նմանէ ծնեալ որդունս՝ ի զարդ կարմրատեսիլ գուշոց՝[1] ընծայէ օգտասիրացն չահս և շքեղութիւնս: Եւս և գեսոցն գնայք բազմակերպ ձկամբք մեծամեծօք և փոքումբք, զանազանեալ համովք և այլ և այլ տեսովք՝ ուրախացուցեալ լցուցանէ գշնորհս ընչից, և յագուրդ որովայնից ժրացելոցն և անվեհեր չանացողացն:

Սնուցանէ յինքեան երկիրն՝ ջրովք արուեստիւք և զառաւելութիւն հաւուցն յուրախութիւն և ի սթափումն որսատենչ ազատացն. զկրկըջաձայն քաղցրաձայն առապարասէր վիմասոյղ սորամուտ երամս կաքաւացն և ապառիւացն[2], և կամ զեղէգնաբնակ թփամուտս մացառաղօղ պարարտամարմին զանուշահամ ազգ ագարացն[3] վայրենեաց. այլ և զչրասուզակ մամռախնդիր խօզակեր[4] մեծանձունք և յայլ թամարմինք հաւքն, փորն[1] և թաւձարն[2] և սագն. և կամ այլ բազում և անհամար ցամաքայնոցն և ջրայնոցն չոկք թռչնոցն: Իսկ թակարդացն չրջափակութեամբք, երագաղիւքն[3] և գահոդովքն[4], եւ լեալ ի յորս՝ գունդք նախարարացն որդւովքն ազատացն, ուր ոմանք զհետ ցուցին և այծեմանցն արշաւելով՝ զխիզախականն և զաղեղնայինն[5] եւեթ բարբառեսցին, և այլք զհետ բուլից[6] եղջերուացն և եղանց ձիարձակ եղեալ, զդոյզ կորովածիգ ապանցն[7] ցուցանեն. և կէսք՝ սուսերօք իբրեւ զմեհամարտիկս զատասկանգամ երամս վարազացն զլռեցուցեալ սպանանեն: Եւ չատք ի մանր մանկանց նախարարացն որդւոցն՝ գաստիարակօք և ծառայիւք, զայլ և այլ տեսս ի թռչնոցն որսացեալ բազայիւք, դարձեալ բերիցեն ի յառնումն ընթրեացն ուրախութեան. և այսպէս առլցեալք իւրաքանչիւր որսով՝ գնան ուրախացեալք:

Ապա գէտակն կալեալ՝ ըստ հանապազօրեայ սովորութեան, ջրայոյզ ջրածուփ ձկնորսացն մանկունք, ընծայեալք ի յառաջ նախարարագունդ որերոյն, ձկունս ի յորոյ, և բազմազան վայրենի հաւուց ձագս և ձուս ի կղզեաց գետոյն՝ բերեալ մատուցանեն ընծայս իշխանացն: Յորոց ընկալեալ մանն ինչ նախարարացն՝ ըստ կամի, պարգեւեն և նոքա ի յիւրեանց բերոցն ըստ առաւելապէս բաւականի՝ ընծայատուրացն. և հասեալք ի ամենայն բարութեամբ յիւրաքանչիւր ապարանս՝ չնորհեն և անպարապիցն մնացելոցն ի տան՝ զամբիծան, առա-

1. Որդան կարմիր կոչուած զեղեցիկ կարմիր ներկ առուղ ճճին կամ արդն:
2. Ապառամ կամ Ապառաւք՝ ըստ ոմանց, Francolin, տեսակ կաքաւու, ըստ այլոց՝ փարաւանի հաւ կոչուածն, Pharaon.
3. Ագար. Ասոր յատուկ տեսակն յայտնի չէ ինձ:
4. Խոզ. ջրիմուռս (աղտ կանաչ) ըստ Բժշկարանի:

1. Փոր կամ փորահաւ, մեծ կարապ հաւն է, Cygne.
2. Թաւձար. Հաւերկնաց մեծագոյնն, Outarde.
3. Տես երես 83, ծանօթ. 3:
4. Թուի ճամբայ բացողք որսի տեղերուն:
5. Աղեղ քաշելու տաճն յարմար ձայն, և եղանակ երգելու, որ կ'ըսուէր Աղեղն:
6. Բոյլ, բազմութիւն, հօտ:
7. Կըրնար և աղեղաձիցն գրուած ըլլալ:

ւելապէս և առ օտարան: Եւ տեսանել է յամենեւ-
ցուն ընթերս՝ որպէս և չեղջակոյտս ինչ ի վերայ
միմեանց զերէցոյն բազմութիւն և զնոցուն գլխոց
կարգմանց զառաջադրութիւն. յորոց ուրախացեալ
բերկրին ձկնակերացն և մսակերացն անձինք, ա-
ռաւել քան զխորտակաց անուշութեամբ՝ հոգեւոր ճա-
շակօք սաղմոսիւք և մարգարէական երգօք օրհնե-
լով զպարգեւատուն Քրիստոս և զտուիչ և զյուցիչ
ամենայն բարութեանց:

ՃԺԹ

Ս· ՅՈՎՀԱՆ ՈՍԿԻԲԵՐԱՆ ԱՓՍՈՐԵԱԼ Ի ՓՈՓՐ ՀԱՅՍ

(ՎԱՐՔ ՈՍԿԻԲԵՐԱՆԻ)

Զինուորքն առեալ զձգնազգեաց քահանայապետն
Քրիստոսի՝ տարան յանապատս Հայոց, ի գաւառս
այլազգեաց ամենց, որոյ անուն էր տեղոյն Կո-
կիսոն[1]: Եւ էր անդ այր մի՝ որոյ անունն էր Ա-
դելփիոս, որ էր եղեալ յառաջագոյն եպիսկոպոս
Արաբացւոց[2]: Սա ի հրեշտակէ Աստուծոյ հրաման
առեալ՝ ընդունել զնա ի տուն իւր. և այս լինէր
ի տեսչութենէն Աստուծոյ, որ զայլոց ինքնակամ
չարութիւնն՝ իւրով մարդասիրութեամբն առեալ,
յայլոց բարեաց պատճառս ի կիր արկանէր[3]: Քանզի
նոքա յանդգնութեամբն իւրեանց աքսորել կամե-
ցան զնա և ծածկել զլոյս հառագայթից Հոգւոյն

1. Կիօքսոն. Ծանօթ տեղի Հիւսիսակողման Կիլիկիոյ:
2. Թուի Արաբիսոս քաղաքն: Ադելփը՝ Հայք ըստ
յոյն նշանակութեանն երբեմն Եղբայր կոչեն. ինչպէս
Անձաւացեաց եպիսկոպոսն՝ Վարդանայ առեն:
3. Ի ձեռագրին՝ յորմէ և տպագիրն՝ վարկաւեր:

Սրբոյ՝ որ ի նմա ունակացեալ էր. իսկ նա անդ
եւս առաւել բորբոքեալ պայծառանայր, և զբաղումս
լուսաւորէր. քանզի հնթանոսք էին բնակիչք տեղ-
եայն այնորիկ. ուստի ամենք պաշտէին զկուռս ան-
մըռունչս, և այլք զիայոյս վարսաւորս անտաւախիտ
ծառոցն. և կէսք արեգականն երկիր պագանէին:

ՃԺԵ

Ս· ՄԵՍՐՈՎՊ ՄԱՇՏՈՑ

(ԿՈՐԻՒՆ)

Էր այրս այս Մեսրովբ ի Տարօն գաւառէ, ի Հա-
ցեկաց գեղջէ, որդի վարդապետի. ի մանկութեան
առեալ վարժեալ հելլենական դպրութեամբն, և
եկեալ ի դուռն Արշակունեաց թագաւորացն Հայոց,
կացեալ յարքունական դիւանին[1], լինէր ազատաւոր
արքայատուր հրամանին: Եւ հմուտ եղեալ աշխար-
հակեաց վարուց՝ ի զինուորական կարգս, և յա-

1· Որ և է ատենաւով ըլլայ՝ արքունի դիւանա-
տան (Chancellerie) մէջ պաշտօն ունեցեր է, որ և
նչան է իր հմտութեան, թէ քաղաքական օրինաց և
թէ լեզուաց: Սանեցի Կարապետ վարդապետ (որ
թուի ԺՌ դարու) ներբողելով զՍուրբս՝ գրէ· «Զինչ
» գործառնութիւն նորա. — Դիւանն արքունի, մա-
» նաւանդ եթէ գլխաւորութիւն դիւանին. զի նա
» միայն էր հմուտ դատիճական մատենին և արիական
» (պարսկերէն) տառին, և փիւնիկեացւոց թուականին»:
Յետին բանն՝ թուաբանութեան, համաբակալութեան
հմտութիւնը յայտնէ· Լատինական մատեանն այլ՝
Կոստանդիանոսի և Թէոդոսի օրինաց գրքերը: Գրա-
ւոր ըլլալէն զատ զինաւոր ըլլալուն այլ վկայէ·
« Յաղագս կորովութեան իւրոյ՝ կարգեր ի զինուորու-
» թիւն զօրավարին Յունաց. և անդ բարեաք երեւեր »:

ռայադէմ և սիրելի էր ամենեցուն, մեծամեծաց և փոքունց, իմաստութեանն առաջնորդեալ յիրաւունս ամենայն։

Ցետ այսորիկ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրի դարձեալ, մերկանայր յինքենէ զամենայն զբաղմունս, և առեալ զխաչն պարծանաց՝ ըստ առաքեալական հրամանին, ելանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն Քրիստոսի. և հաճեալ զհրամանաց պայման, ի խաչակիր գունդն Քրիստոսի աչակերտացն խառնի. և զկրօնս միանձանց յանձն առեալ յաւէտ կրօնաւորէր։ Եւ բազում և ազգի ազգի վշտակցութիւն ընդ աւետարանին կրէր. և ամենայն կրթութեան հոգեւորացն զանձն տուեալ՝ կրօնաւորէր ի քաղց և ի ծարաւ, ի ցուրտ և ի մերկութիւն. խոտաբուտ եղեալ, խարազնազգեստ և գեանատարած անկողնաք, և զհանգիստ քնոյ գիշերոյ յոտնաւոր աքնութեամբ՝ ի թօթափել ական վշարէր բազում անգամ. և զայս առնէր ոչ սակաւ ժամանակս։ Եւ գտեալ զամանս զգաստասէրս՝ յինքն յարեցուցանէր, աչակերտել նմին աւետարանական կրօնաւորութեանն։ Եւ ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց՝ կամայական քաջութեամբ տարեալ, և նովիմբ լուսաւորեալ և պայծառացեալ ի հանդէս ճգնաւորական, հաճոյ Աստուծոյ և մարդկան երեւեալ։

ՃԺԹ

ԳԻՒՏ ՀԱՅԵՐԷՆ ՏԱՌԻՑ

(Ա. ԽՈՐԵՆ. Գ. ԺԳ[1])

Յայնժամ Մեսրովպայ օգնականութիւն գտեալ ի Բարիլոսէ[2] եպիսկոպոսէ և անցեալ ընդ Փիւնիկէ՝ ի Սամոս դիմէ. քանզի Եպիփանիոս[3] վճարեալ ըզկենցաղս՝ թողեալ լինի աչակերտ մի անուանեալ Հռոփանոս, հրաշալի արուեստիւ հելլէն գրչութեամբ, որ ի Սամոս[4] էր միայնացեալ։ Առ սա երթեալ Մեսրոպայ, և յայնմ եւս անչահ մնացեալ, յաղօթս ապաւինի. և տեսանէ, ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյն աչաց՝ թաթ ձեռին աջոյ, գրելով ի վերայ վիմի Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ի.[5] զի որպէս ի ձեռն՝ վերջք գծին կուտեալ ունէր քարն։ Եւ ոչ միայն երեւութացաւ, այլ և հանգամանք ամենայնին՝ որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ։ Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր, հանդերձ Հռոփանոսիւ, կերպաձեւեալ զդիրն՝ Մեսրոպայ՝ առ ձեռն պա-

1. Մեր գրերուն դիւտի կամ հնարման և ձեւացըման պարագային վրայ՝ այլեւայլ տարակոյս և կարծիք եղած են. մեր գործին նպատակն չի ներեր երկար քննութեան կամ յիշման։

2. Եպիսկոպոս Եդեսիոյ, ոչ Բարիլոս՝ այլ Ռաբբուլաս։

3. Ոչ Ս. Կիպրացին, այլ բազմահմուտ գրագէտ մի։

4. Ծանօթ կղզի է. բայց Կորիւն ոչ զայս՝ այլ Սամոսատա քաղաքը կ'ըսէ։

5. Ոմանք ի վեց օրինակաց մեր ունեցած ձեռագրաց՝ զրեն զայս ձայնաւոր տառերը։

տրատա. փոխատրելով զՀայերէն աթուէթայն[1], ըստ անսայթաքութեան սիւղարայից Հելլենացւոց: Եւ իսկոյն ի Թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհըրդաբար սկսանելով յԱռակաց[2], բովանդակ զքսան և երկու Ցայտնիսս[3] և զՆոր Կտակս յեղուլ ի հայ բան. նա՛ և աշակերտաք նորա Ցոհան Եկեղեցացին և Ցովսէփ Պաղնացի[4]. միանգամայն և զարուեստ գըրչութեան ուսուցանել տալով իւրոց մանկտոյն աշակերտացն:

ՃԻԼ

ԽՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՀՈՒԹԻՒՆ ԸՆԴ ԳԻՏՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՌԻՑ[5]

Ցաւէտ ուրախացեալ բերկրալի ցնծութեամբ՝ մեծ գոհութիւն ամենողորմի Աստուծոյ մատուցանելով, որ ոչ անտես առնէ զաղաչանս ծառայից

1. Աղբուբենն, կամ Ալֆաբետն ըստ յոյն բառից և տառից. որոց կարգին և ձայներուն յարմարցընելով գտաեց հայերէն տառերը, որչափ կարելի էր, զի մերիններն (36 գիր) երբորդ մասամբ չատ են քան զՅունացն (22):

2. Սաղմոսի Առակաց գիրքն, որ գեղեցիկ բարոյական խրատներ ընծայէ:

3. Աղբեւայլ կերպով դասելով և համրելով Հին կտակարանաց Սուրբ գրքերը՝ 22 դումարին, ըստ թուոյ 22 տառից Հրէից, որպէս և Յունաց. այլ թուէն դուրս թողլով այն գիրքերը՝ որոց վաւերականութեան (սուրբ ըլլալուն) վրայ տարակոյս եղած է, իսկ անտարակոյսքն կ'ըսուին Ցայտնիք և վաւերականք:

4. Մեկն Բարձր Հայոց Եկեղեցւոյ գաւառէն, միւսն Դ Հայոց Պաղին գաւառէն. երկուքն այլ Թարգմանչաց կամ Աշակերտաց երիցադոյն գտաէն, բայց իրենց յատուկ գրած կամ թարգմանած գործ մի ծանօթ չէ:

5. Անծանօթ հին հեղինակի մի գրուած է:

իւրոց, այլ ճշմարտութեամբ զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր, ազօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա. զի Աստուած փառաւորեալ է ի խորհուրդս սրբոց իւրոց, և զփառաւորիչս իւր փառաւորէ: Արգարեւ ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր, այլ զօրացոյց զողորմութիւն իւր ի վերայ երկիւղածաց իւրոց, հեռի առնելով ի մէնջ՝ զխաւար տգիտութեան մերոյ. և մեծ արար Տէր զառնէն իւր ընդ մեզ. ըստ իւրում առատ ողորմութեան գթալով ի ստեղծուածս ձեռաց իւրոց: Վասն որոյ, եկայք ցնծասցուք ի Տէր, և օրհնեսցուք զբարերար փըրկիչն մեր. կանխեսցուք առաջի նորա խոստովանութեամբ, և գոհացարուք զառատ ողորմութենէ նորա: Տուք փառք Աստուծոյ, տուք օրհնութիւն Տեառն Աստուծոյ մերոյ, ժողովուրդք հաւատացեալոց և պաշտօնեայք պանծալի մօր մերոյ Սիովնի: Մեծացուսցուք զբարերարութիւն Աստուծոյ և բարձրը արասցուք զանուն նորա ի միասին, և գոհացարուք զբարերար Տեառնէ մերմէ. զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմ նորա: Այժմ աչք կուրաց բացցին և ականջք խլից լուիցեն. այժմ երագեսցէ կաղութիւն լեզուիս մերոյ, որ ոչ կարէր զխաղտատաղտուղ ասորերէնն բարբառել կամ զյունարէնն ծեքաժուռ ծեթեւեթթել[1]. այժմ պարզեսցին լեզուք ծանրախօսք, և զօրասցի տկարութիւն տգիտութեան մերոյ, ի փառս և ի գովութիւն մարգասիրին Աստուծոյ: Այժմ, ոչ լիցի ասել խուժ և լսել դուժ, այլ և ամենեն վերաձայնեսցի[2] ի ժողովուրդ

1. Հայերէն գիր չեղած առեն՝ սահպուէթին Ասորւոց և Յունաց գիր և լեզու սովրիլ. որոց մէկին հայ ականջի (գոնէ պայս գրողին) խառնաձայն՝ խաղտախուռղտ լըսուէր, միւսն ծուռմուռ, ծամծմած, ծեքաժուռ:

2. Պօղ. Առաքել. ըսած է, Ա. Կորն. ժդ, 11. « եթէ ոչ » գիտիցեմ զզօրութիւն ձայնին՝ լինիցիմ այնմ որ խօ» սիցին ընդ իս՝ խուժ, և նա որ խօսիցին ընդ իս՝ դուժ... » զիարդ ասացից ի քէս զոհութեանն՝ զաւետիս »:

դենէն՝ ի փառատրութիւն պաշտօնէիցն, և ունկնդրութիւն լիցի վերծանողաց. և ծանիցէ ամէնքին զծանրութիւն պատուիրանացն Աստուծոյ, և գեղչուիկն գովեսցէ զքանչելարար Տէրն։ Այժմ ոչ կարօտացայ ոք թարգմանութեան, և ոչ ընթացայ ոք առ ոք, թէ ընթերցիր ինձ զայս, այլ միաւորեալք միաբանութեամբ ներքինք և արտաքինք, հեռաբնակք և մերձակայք, ի փոքունց մինչեւ ցմեծամեծս, ամենեքեան ծանիցեն զճշմարտութիւն, իմացին զարդարութիւն, փառաբանեսցեն զպարգեւատուն։ Լուծաւ կապ բերանոյ. փարատեցաւ նսեմութիւն խաւարի, սիւն ամպոյ լուսաւորէ. ստին հոգեւոր գիեցուցանէ, ընչընչութիւն կերակրոյ ի սուտգութիւն փոխեցաւ, և գառնութիւն լուրց՝ ի քաղցրութիւն. սեղան հոգեւոր պատրաստական է, բաժակ իմանալի մատուցակի. փութացարուք հաւատացեալ ժողովուրդք, եկայք ճաշակեցէք, եկայք զմայլեցարուք։ Ոչ սղիւ վաճառի, այլ ձրի պարգեւի[1]. ոչ տարակուսիւ խնդրեսցի՝ այլ դիւրալուր իմանի։ Առէք, լիացարուք, առէք բերկրեցարուք, ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է Տէր. կերակրոյն փառս վերառաքեցէք, զի անբաւ է մարդասիրութիւն նորա։ Վայ արարչին, փառք փրկչին, մեծութիւն մարդասիրին, գոհութիւն գովելի տէրութեան. չնորհք չտեմարանապետին, օրհնութիւն ողորմածին, բարերանութիւն բժշկողին։

1. Սուղ սուղ չի ծախուի, այլ ձրի տրուի։

ՃԻԼ

Ս. ՍԱՀԱԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

(ՂԱԶԱՐ ՓԱՐՊ. ԺԱ)

Ժողովեալ ամենայն աւագ քահանայք աշխարհին Հայոց, հանդերձ եպանելեաւն Մաշթոցիւ և ամենայն նախարարօք աշխարհիս Հայոց և մեծամեծ տանուտերօք՝ առ թագաւորն Հայոց Վռամշապուհ, և հանդերձ թագաւորաւն՝ սկսան ազաչել զտուրբ կաթողիկոսն Սահակ, արկանել զանձն յաշխատութիւն հոգեւոր, և թարգմանել զԱստուածաշունչ կտակարանս ի յոյն լեզուոյ ի հայ բարբառ[1]։ Եւ դասք աւագ քահանայիցն ասէին ցտուրբ քահանայապետն. թէ, Մեք որ կամքս առաջի քո, հանդերձ եպանելեաւն Մաշթոցիւ, զոր զարթոյց առատաձայինն չնորհ ի ցանկութիւնս յայս, կարգել զվաղնջուցն գրեալ չարագիրս տարիցն, զորս ոչ ուրուք էր հզգացեալ արկանել ի կիր[2], այլ ասորի մեծաձան և անօգուտ ուսմամբքն աշխատեալք յոխորտ. յորոց բազմութիւնք ժողովրդոց ունայնք և թափուրք հրաժարեալք գնային յեկեղեցւոյն, և ուսուցիչքն հանելով յոգւոց և հառաչելով՝ զղջանային զնոսին չանն իւրեանց, յորում ոչ զոք յուսուցանեսէր ժողովելոցն տեսանէին օգտեալս ի վարդապե-

1. Կերպով մի բոլոր Հայոց ազգն՝ իմանալով իր պէտքը՝ միաբան խնդրէ Ս. Գրոց թարգմանութիւնը իրեն բնիկ լեզուաւ. և խնդրէ իր քահանայապետէն, որ ոչ միայն իր կրօնից հոգեւոր գլուխն էր, այլ և լեզուին ամենահմուտ։

2. Կարծեցընէ թէ ի հնուց եղած ըլլայ Հայերէն դիր, կամ որ և է կերպով Հայ լեզուով գրուած. սակայն պատմիչք այլ այս բանիս նշան տան։

տուԹենէ հոգեւոր խրատուցն, որ է կերակուր և պարարուցն իմաստնախնդիր անձանց. մինչեւ գըտաւ գիր, և յայղողելով Քրիստոսի եկեալ յաճուն՝ տակաւին զօրանայ: Համայն և զայս վաստակոյս կարգուցն՝ քոյին առաքինուԹեանդ գիտուԹեամբ եղիցի, և կատարեա: Ամէն, որպէս և սուրբ Նահատակն Քրիստոսի Գրիգորիոս՝ պահեալ ի խոշտանգականն անվնաս, աջով հզօրին ի լուսաւորուԹիւն գիտուԹեան աշխարհիս Հայոց տուաւ, պահեալ չնորհեցաւ և քեզ՝ նորին չառաւիղի՝ վիճակ ժառանգուԹեան պայծառուԹեան պաշտամանս այսորիկ. սկիզբն առնել գործոյ մշակուԹեանս այսմիկ, և լինել նմանող սուրբ նախնւոյն քումմ, որ յանգիտուԹենէ ի ճշմարիտ աստուածգիտուԹիւն առաջնորդեաց աշխարհիս Հայոց: Ամէն, և դու յանօգուտ մուրոզաբանուԹենէն՝ ի սադդ հոգեշահ և եկեղեցաշարդ բանաւորուԹիւնս առաջնորդեա բազում ժողովրդոց աշխարհիս մեծի, լնուլ զպակասուԹիւնս զայս մնացեալ ի սուրբ նախեացն քոց, զոր պահեաց քեզ Աստուած. զոր ոչ ումեք այլոմ ի Հայաստան աշխարհիս մարդկան՝ զոյ հնար ձեռն արկանել յայդպիսի գործ մեծ: Վասն զի և ոչ բացաք հմուտք լինել տեղեկանալ այդչափ արուեստս տուոր ուսմանցդ, որպէս և քեզ տուաւ զօրուԹիւն հարատարուԹեան ի վերին օգնականուԹենէն, յաղագս քո առաքինասէր և պարկեշտ հոգւոյդ, որ նմանեալ ճշդրտապէս օրինակեցեր ի քեզ վարս երանելւոյ Հօր քո Ներսէսի:

Եւ լուեալ զայս ամենայն բարեպաշտ կաթողիկոսն Հայոց Սուրբն Սահակ՝ ի թագաւորէն Հայոց Վռամշապհոյ և յերանելոյն Մաշթոցէ և յամենայն ուխտէ քահանայիցն, եւս առաւել յաւագ տանուտերացն և յամենայն նախարարացն Հայոց, զուարճացաւ յոգի իւր, փառաւորելով զիրկիչն ամենեցուն զտէր Յիսուս Քրիստոս: Եւ կամաւոր յօժարուԹեամբ ետ զանձն ի գործ՝ պանծացեալ ՅԱստուծոյ գործակցուԹիւնն, որ ետ նմա զայնպիսի

չնորհս առաւելապէս գիտուԹեան. և անվհեր ջանալով զցայգ և զցերեկ՝ թարգմանեաց զկատարեալսն ամենայն, զիաստեցեալս ճշմարիտ մարգարէիւք ի Սուրբ Հոգւոյն. և հաստատեալ կնքեաց երջանիկ առաքելովքն՝ զՆորոց Կտակարանացն զլուսաւոր և զկենսատուր քարոզուԹիւնս՝ նովին Հոգւով:

Եւ տարեալ ի գլուխ սուրբ Հայրապետին Հայոց Սահակայ զգործ մեծ հոգեւոր վաստակոյն, կարգեցան վաղվաղակի յայնմ հետէ դպրոցք հօտին ուսմանց, բազմացան գաղք զրչաց՝ ելեւէջս առնելով զմիմեամբ: Զարդարեցան պաշտամունք սուրբ եկեղեցւոյ, յորդորեցան բազմուԹիւնք արանց և կանանց ժողովըրդոց[1] ի տօնս Փրկչին, և ի ժողովս մարտիրոսաց: Չահեալք հոգեւոր օգտիւ ընԹանային խնդալիցք՝ ի հաղորդմանէ մեծի խորհրդոյն արձակեալք[2] իւրաքանչիւր ի տունս, մեծամեծք և տղայք, սաղմոսելով և կցորդս ասելով, ընդ ամենայն տեղիս, ի հրապարակս և ի փողոցս և առանձինն:

---

1. Ժողովելոց պէտք էր ըլլալ:
2. Եկեղեցւոյ սուրբ խորհըրդոյն, այսինքն պատարագի, հայերէն լեզուով լսելով և հաղորդուելով, ուրախութեամբ երգելով գառնային իրենց տունը:

ԺԶ.

ԱՌԱՔՈՒՄՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՅՈՒՍՈՒՄՆ ԵՒ Ի ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ[1]

(ԱՆԴԱՆՕԹ ՀԵՂԻՆԱԿ)

Իակ և իակ ի հրամանէ Մեծին Սահակայ ժողովեալ մանկունս խոհեմամիտս, տրամախոհս, քաջուշեղս, փափկավանդս, և գպրոցս ըստ գաւառաց գաւառաց կարգել ուսուցանել մեծով պնդութեամբ: Հարիւր և տասն ամ էր ի Սրբոյն Գրիգորէ, յորժամ գտաւ գիր ազգիս մերոյ. և զայնչափ ժամանակս ի յայլալեզու դեգերանս էին տառապեալ. վասն որոյ առաւել փոյթ յանձին ունէին, զի երադ վարժեացին մանկունք յիւրաքանչիւր տեղիս. յորոց ընտրեցին թուով վարդապետս յաշակերտելոցն, զառաւել ուշիմս և զփափկաձայնս և զերկարոգիս, և առաքեցին յազգս և ի լեզուս օտար գաւառաց, ուսանել իմաստութիւն և արուեստախօսութիւն[2], և առնել թարգմանութիւն: Ցորոց էր Մեծն Մովսես Խորենացին, և եղբայրն նորին Մամբրէ, Դաւիթ Ալեքսանդրի և Եղիշէ, Յովսէփ[3], Եզնիկ, Արծան, Ագան, Մուշէ. և այլս բազումս որք ընդ նոսա գընացին յԱղեքսանդրիա, ի Բիւզանդիա, յԱթէնս և յայլ գաւառս. ուսան և զիմաստասիրութիւնն որպէս զայլ ազգս: Զի նախանձ բազում էր յայնմ ժամանակի ուսման՝ ամենայն ազգաց, և ծաղկեալ էր ուսումնասիրութիւն յաշխարհի: Եւ այսպէս

1. Թէ և չափազանց կրկնութեամբ բառից զրուցած է, բայց և մեծ ուրախութեամբ, հայերէն գպրութեան ծաղկելոյն և մեր թարգմանչաց յաջող Ջանից վրայ:
2. Ճարտասանութիւն, վարպետ կերպով խօսել:
3. Թուի Պաղնացին վերոյիշեալ (երես 146):

մերքն ամենեքեան գումարէին, հանդերձէին, կազմէին, պատրաստէին, յուղի անկանէին, յերկայնաձիգ ճանապարհորդէին, ի ծովս ընթանային ի թեւս թռչէին[1], յերիվարս վայտակերտս[2] ելանէին, զերասանական լայնալանջս ըմբռնէին, զխարազանս օդատարածս յածէին, ի սատանաւտ դաշտս անհատատս[3] արշաւէին. զմահ քան զկեանս միշտ ընտրէին. աներեւոյթ նպատակեալ ունէին[4]: Զորոց զկնի՝ բազումք յիւրաքանչիւր գարս և ի ժամանակս հանդիսանային՝ նախանձաւոր գործոց բարեաց լինելով, ի վաստակս և ի ջանս պատրաստելով զանձինս. ժրանային, աքնէին, աշխատէին, հարցասէր լինէին՝ ուսանելով, կրթելով, վարժելով, վաստակելով, պատրաստելով զանձինս՝ ի յերկս օգտակարս, և ի գործս չահաւէտս: Ոմանք զտաւրից գծագրութիւնս չահաւորեալ. ոմանք զիմաստս հաւաքեալ, զհամարողականն, զերաժշտականն, զաստեղաբաշխականն, զբերականն և զքերդողականն, զգործնականն և զտեսականն իմաստասիրութիւն և զմասունս նոցա, որք են թուով երկոտասան: Ոմանց հաւասարէին գիտութեամբ, քանզոմանս վեհագոյնք երեւէին, ոմանց զարմանալիք թուէին, ոմանց բազձալիք լինէին, ժրութեամբ, ուշիմութեամբ, իմաստութեամբ, խոհեմութեամբ, ուսումնասիրութեամբ, գիտութեամբ, բանագատկութեամբ. ընդ ոմանս դասէին քննութեամբ. զոմանս պատասխանւոյ արժանի ոչ համարէին: Առ ընկերակիցս գովելիք, առ վարդապետս հաճելիք. հարցասէրք, բանասէրք, ընթերցասէրք, ուսումնասէրք, աքնասէրք, ժրասէրք, երկասէրք: Եւ այսպէս Ջանային, արիանային, խիզախէին, զօրանային,

1. Նաւու առագաստներով:
2. Նաւը նմանցընէ փայտէ շինած ձիու և կառաց:
3. Ծովը նմանցընէ անհատատս չարժան դաշտի:
4. Կարծեմ զիմաստասիրութիւնն ըսել ուզէ նպատակ աներեւոյթ:

հանդիսանային. պատրաստելով, կուտելով, ժողովելով, յօդելով, թարգելով բեռինս մեծամեծս և դժուարակիրս՝ զգրեանց բազմութիւնս և գուսումն իմաստութեան. բազմաց փափագելիս, բաղձալիս, ցանկալիս, հեշտալիս, սիրելիս: Ււ գային հասանէին մեծաւ ձախութեամբ յաշխարհս Հայոց, վաճառականքն հոգեւորք, փարթամացուցիչքն եկեղեցւոյ, խրախացուցիչքն մանկանց Աիոնի, սխրացուցիչքն բազմախումբ ժողովրդոց, զարդարիչքն հոչակահանդէս ուսնեմբութեան. առնելով ընդ ինքեանս բեռինս չահաւէտս և արդիւնաբարս, մարգարիտս զեղեցիկս և ակունս պատուականս. զրաղխոհականն, զաւենականն, զկացրդականն, և զաստուածաբանականն. զարդարելով զերկս աշխատասցն, և զոյնս[2] իմաստասիրութեան պանծալիս արմատացուցանելով. և ծանօթ առնելով բազմաց զգիտութիւն, զերեւակայութիւն, զմիտս և զկարծիս, և զգայութիւն, զարհեստ, և զմակացութիւն, և զայսն ամենայն զգովելիսն, և զպանծալիսն, և զպիտանիսն պատուականաց, զգաւեսան և զմեկնեալսն յանպիտանեացն: Քանզի մեծաւ հոգւոբարձութեամբ փոյթ անձին կալեալ երանելեացն՝ զչաւհաւէտսն ժողովելով և զիատանսն ի բաց ընկենելով:

ձի

ՄԵՐԺԵԼ ՆԱԽԱՐԱՐԱՑ ՀԱՅՈՑ ՋԹԱԳԱԻՈՐ ԻՒՐԵԱՆՑ

(Ղ. Ա. Զ. Ա. Ր. Փ. Ա. Ր. Պ. Ե. Տ. Ի. Ժ)

Միաբանեալ գնացին ի գաւառն, և երթեալք անդր՝ յանդիման եղեն արքային Պարսից Վռամայ. ընդ որս էր և երէց մի Սուրմակ անուն, ի գաւառն

1. Ձարտասանութեան տեսակներ:
2. Այնք Թուի զօրութիւն կամ հնարք:

Բզնունեաց, ի գեղջէն որ կոչի Աղթակ[1], ի տոհմէ քահանայից գաւառին, մեկուսանայր[2]: որոյ միաբանեալ ընդ նախարարսն Հայոց, ճեղքեալ ի խրատուէ սրբոյ հայրապետին Սահակայ, խօսէր բանս անհանճարս և առաւել ազուեղս քան զամենայն նախարարս Հայոց՝ զթագաւորէն Աբրաշխէ, առաջի աւագորերոյն Պարսից. չնորհ առնելով նախարարացն Հայոց, յաղագս խաստանալոյ նմա զմանկ յաւագանոյն Հայոց՝ զաթոռ կաթուղիկոսութեան այնմարհին Հայոց: Եւ ծանուցեալ նախագոյն զպատճառս արանձնոյն իւրեանց՝ Սուրէնայ և այլ աւագանոյն Պարսից. քանզի Սուրէնն պահլաւէր ի ժամանակին յայնմիկ հազարապետ զրանն արքունի. և հանգերձ նովաւ և այլ մեծամեծօք զրանն՝ հասուցին զբանս ամբաստանութեան առ Վռամ արքայն Պարսից:

Եւ լուեալ արքային Պարսից այնպիսի բողոք յաղատանոյն, ոչ թոյլ տայր նոցա խօսել առ վայր մի առանց գալոյ տոհմին ի գուռն: Վազվազակի դեսպան արարեալ զթագաւորէն Հայոց Աբրաշեհէ, առ ինքն ճեպով գալ հրամայէր. գալ նմա զբէր և մեծի քահանայապետին Հայոց Սահակայ: Եւ եկեալ նոցա ի գուռն, հարցանէր նախ առանձին արքային Պարսից զթագաւորն Հայոց զԱբրաշէս, եթէ, Զինչ են իրգ՝ յաղագս որոյ ամբաստանեն զքէն՝ նախարարդ Հայոց: Եւ նորա պատասխանի տուեալ ասէր. եթէ, Ամենեւին ոչ գիտեմ զինչ խօսին և չարախօսեն դաքա զինէն. այլ որպէս սովոր են ի բնէ՝ թշնամանել զտեարս իւրեանց, ըստ նմին օրինակի և այժմ կամին կատարել զչար կամայ իւրեանց զինդիրս. քանզի միշտ

1. Ինչպէսեան հիմայ ծանօթ աւան կամ քաղաք ի հիւսիս–արեւմտեան կողմն Վանայ ծովուն:
2. Եթէ պակաս բառ չկայ, Սուրմակայ նմանը իմանալու է, թէ, գաւառէր սուրիշներէ, քահանաներէ, ինքն իր գլուխ կ'ըլլար:

իշխանափոխք լեալ են և տիրատեացք: Եւ թագաւորն Աբեաց Վռամ հրաման տայր՝ միայն ընդ միայն կռչել առ ինքն զսուրբ կաթուղիկոսն Հայոց զՍահակ. քանզի մեծարէր զնա. նախ՝ վասն ազգականութեան առնն[1], և զարձեալ՝ զի առաջի անհաւատից յարդոյ և պատուական ցուցանէր զսուրբ ծառայս իւր՝ Աստուած. և հարցեալ ցերանելի կաթուղիկոսն, կամէր լսել ի նմանէ զամենայն բանից զչարախօսացն թագաւորացն Հայոց: Իսկ նորա պատասխանի արարեալ ասէր. եթէ, Ոչ գիտեմ զինչ խօսին նոքա զնմանէ. նոքին իսկ ասացեն, և զուք լուարուք ի նոցանէ. և որպէս ասենն առաջի ձեր՝ յանձինս իւրեանց ընդունին զհատուցումն. զիս ինչ այդպիսի խնդիրս մի հարցանէք. զի ոչինչ լսելոց եք յինէն յաղագս չարախօսութեանդ այդորիկ չար ինչ և կամ բարի:

Այլ կոչէր առ ինքն թագաւորն Վռամ զՍուբէն Պահլաւն՝ զիւր զհազարապետն, որ ազգակից և տոհմակից էր մեծի քահանայապետին Սահակայ, որպէս զի միաբանեալ և նա ընդ այլ նախարարան Հայոց՝ վկայեսցէ չարախօսութեան նոցա, և պատուեալ բազում պարգեւօք և մեծապէս չքեղութեամբ՝ դարձցի յիշխանութիւն կաթուղիկոսութեան իւրոյ և յաշխարհ: Եւ Սուրենայ բերեալ զպատգամն զարքային առ երանելին Սահակ, խոստանայր նմա ըստ ասածին Վռամայ՝ չքեղութիւն մեծ և օգուտ գտանել ի թագաւորէն, թէ հաւանեալ, ասէ, կամաց նորա՝ տացես վկայութիւն նախարարացն Հայոց, մեծարեալ բազում պատուովք դառնաս յիշխանութիւնդ. ապա եթէ այլազգացոյն ինչ խորհիս՝ յամառեալ, և զքո կաթողիկոսական տունն կորուսանես ի քէն, և յիշխանութենէդ զոր ունիս՝ մերժեալ լինիս. և ես՝ վասն զի ազգակից քո եմ և զբարին քո կամիմ, և ոչ թե

1. Ս. Սահակ էր ազգական Սառանեանց, այլ նախարդ Պարթեւաց և մնացեալ պահլաւ իշխանաց:

թեւութեամբ տամ քեզ այսպիսի սիրոյ խրատ: Եւ այսպիսի բանիւք չանայր հաւանեցուցանել զսուրբ հայրապետն զՍահակ. քանզի կամէին բառնալ ի միջոյ զթագաւորութիւնն Հայոց:

Իսկ Սուրբն և բնաւ իսկ յանձն ոչ առնոյր այսպիսի բանից տալ վկայութիւն իշխանացն Հայոց. այլ հաստատեալ ի նոյն միտս՝ ասէր, եթէ, Ես զԱրտաշիսի զայդպիսի ինչ զվատթարութիւն ոչ գիտեմ, որով թէ արժան է ի ձէնջ դատելոյ և անարգանաց. զի թէպէտ և ըստ սրբասէր մերոյ օրինացս արժանի է և անգոնելոյ, այլ ըստ հրամանի ձեր ազատեցաք օրինացդ՝ գովութեան արժանի է և մեծարանաց:

Եւ լուեալ զայս պատասխանի Սուրենայ ի մեծ հայրապետէն Հայոց Սահակայ՝ յիւրմէ տոհմակիցէն, և պատմեալ թագաւորին Աբեաց, ի ցասումն զայրացման զրգռեալ թագաւորն՝ հրաման տայ այնուհետեւ ի բազմամբոխ ատենին հարցանել զնախարարսն Հայոց և զԱրտաշէս: Եւ կուտեալ իշխանացն Հայոց բազում ազատեղբարանութիւնս և ազգի ազգի խօսս անարժանութեան ի վերայ թագաւորին իւրեանց. քանզի ոչ եթէ ի նմա եղեալ զիրսն խօսէին, այլ եւս յաւելուածովք՝ ըստ օրինի թշնամութեան՝ կուտէին ի վերայ նորա բազում մեղս: Որ թէպէտ և յուրատ եղեալ Արտաշէսի՝ թէ չէ այդպէս, ոչ հաւատացին լսողքն, եդեալ զկամս իւրեանց բառնալ ի միջոյ զթագաւորութիւն Արշակունեաց ապրկէն: Մանաւանդ՝ զի լուաւ թագաւորն Աբեաց ամենայն աւագանեօք զրանն՝ ի դատախազացն Արտաշեսի, թէ բնաւ զի՞ իսկ եւս պիտոյ է թագաւոր. այլ իշխան պարսիկ ըստ ժամանակի եկեալ՝ վերակացու լիցի մեզ. որ և զիւրաքանչիւր ուրուք ի մէնջ ծանուցեալ զկպատակութիւն և զանհպատակութիւն՝ ցուցցէ ձեզ:

Եւ լուեալ զայս Վռամայ՝ հանդերձ աւագանով դրանն, յայժ ուրախանայր. և այնուհետեւ հրաման տայր վազվազակի ի բաց առնուլ զթագաւորու-

թիւնն յԱբրահամէ. ընդ նմին և զտունն կաթողիկոսական ի Սրբոյն Սահակայ՝ յարքունիս ունել. փոխանակ զի ոչ միաբանեցաւ տալ վկայութիւն ընդ նախարարսն Հայոց: Եւ այսպէս վճարեալ, հրաման Պարսից թագաւորին ի գլուխ ելանէր:

Յայնմ հետէ բարձաւ թագաւորութիւն յազգէն Արշակունեաց ի վեցերորդ աւի Աբրահամայ, ըստ բանի երանելոյ առն Աստուծոյ մեծի քահանայապետին Ներսեսի, և անկաւ աշխարհս Հայոց ընդ լծով ծառայութեան անօրէն իշխանութեան Պարսից: Եւ առեալ գինս իշխանացն Հայոց՝ ի թագաւորէն Պարսից ընդ մատնութեանն Աբրահամայ, պատիւ և մեծութիւնս, նման արծաթոյն՝ զոր առին ընդ Յովսեփայ՝ եղբարքն, ընդ մատնութեանն իսմայելացի վաճառականացն: Եւ այսպէս հրաժարեալք ի դրանէ, եկին յաշխարհն իւրեանց:

ՃԻԱ.

ՄԵԾՆ ՍԱՀԱԿ ՅԱՏԵՆԻՆ ՎՌԱՄԱՅ ԱՐՔԱՅԻ

(ԽՈՐԵՆ. Գ. կե–զ)

Արքային Պարսից Վռամայ կոչեցեալ ի Դուռն՝ զթագաւորն Հայոց զԱբրահիր և զՄեծն Սահակ, խնդրէին ի նմանէ ամբաստանել զԱբրահիրէ. և նա հրաժարէր բնաւ ասել ինչ չար կամ բարի: Ապա հրամայեաց հազարապետին Աբեաց՝ որ է Սուրբ-Նեռնն Պալհաւ զի հաւանեցուսցէ զնա խրատուս սիրելութեան՝ որպէս զազգային. և նորա անկեալ ի բանս հրապուրանաց, ասելով. Զի արիւն եմ ես և հարազատութիւն, զբարին քո խակալ ասեմ. եթէ միայն այժմ միաբանեացես ընդ նախարարացդ, մեծարեալ լինիցես յարքայէն Պարսից. և զմոռն քո վարդան՝ կարգեսցէ ի վերայ Հայոց, զուգահաւասար թագաւորին և համապատիւ: Այլ նա ոչ առնոյր յանձն, ասելով. Զիարդ վասն անափառութեան և իշխանասիրութեան չարաբանիցեմ զընկերէ. կամ ընդէ՞ր ձեր այդպիսի յօժարութիւն, ընկենուլ զԱբրահիր. զի ես զնորա ապստամբութեան ինչ խորհուրդ՝ ոչ գիտեմ. ապա եթէ վասն անառակ ինչ վարուց՝ զոր նոքա ամբաստանեն, պատուոյ արժանի է ի ձէնջ, ըստ ձերում անմոքրասէր օրինացդ, թէպէտ ըստ մերումն՝ գտատպարտի. բայց սակայն յինէն ոչ ինչ էք լսելոց ամենեւին:

Ապա զայրացեալ Վռամայ՝ ի մեծի հրապարակին արարեալ քննութիւն, և ոչ գնելով ունկն Աբրահիրի, յօժարութեամբ լսեր չարախօսացն... մինչեւ հրամայեաց առնուլ զթագաւորութիւնն յԱբրահիրէ, և անդէն արգելուլ զնա. և զամենայն ինչս ազգի նորա՝ առնել յարքունիս. նոյնպէս և զՄեծն Սահակ, և զտունն կաթողիկոսական ունել յարքունիս:... Եւ զՄեծն Սահակ արձակեալ՝ թողու ի նա սակաւ գիւղս՝ ի նորին տանէ, զի նատցի յինքեան. միայն իշխանութիւն ունելով վարդապետութեան սովորականն կրօնիցն, և ձեռնադրութեան զայնոցիկ՝ զորոց և Շմուէլն յանձն առնուցու: Բայց, յարձակելն՝ յանդիման իւր արարեալ ի բազմակոյտ առնէնն, ասէ. Երդմնեցուցանեմ զքեզ ի քոյին հաւատս, միամիտ կալ ի ծառայութեան մերում, և ոչ խորհիլ իրս ապստամբութեան, պատրել ի մոլար հաւատակցութիւնն Յունաց, և լինել կորստեան պատճառ Հայոց աշխարհին՝ ի մէնջ, փոխել զբարերար անուն մեր՝ ի չարարար:

Յայնժամ կանգնուն կացեալ Մեծին Սահակայ, պարկեշտ և նպատկի զինքն կազմեալ ի բեմբասացութեան ձեւի, համեստ՝ հայեցուածովք, համեստագոյն եւս ձայնիւ՝ սկսաւ ճառել զերախտիս ծառայութեանն, և զապերախտն ի նոցանէ լինել, ընդ նմին և զկեղծաւոր քաղցրաբանութիւնն նոցա յանդիմանելով, զգաստութիւն խորհրդոց և զգործս չա-

բաշտաս. յարելով ի նոսին զընդդիմադրանել անվիտ հայհոյութեանցն արտաճառելոց, զոր ասաց մոլար հաւատակցութիւն. և զնոցայն խոյտառակելով պաշտամունս, կատարեաց ի հրաշալի աստուածաբանութիւն, ըստ հանդուրժելոյ հեթանոսական լսելեաց. և ոչ զբովանդակ բանին զպայծառութիւն՝ անհաւատից արկանել առաջի յայտնութեան, որպէս զմարգարիտ ի խոզից կոխութեան. այլ այնչափ կայծակնաճաճանչեցուցեալ՝ որով զդազաղացան մոգուցն լեզուք. և հիացեալ պակեաս ինքնին թագաւորն, և ամենայն բազմութիւն հրապարակին անձնագոհացան Պարսից՝ յակճառս կալով ականջել. մինչեւ հրամայեաց վաղամ՝ արձաթ բազում տալ նմա՝ իբր քաջարանի և ուժգնասրտի առն համարձակախօսի՝ առաջի այնքանոյ թագաւորի: Այլ նորա ոչ առեալ՝ ասէ ցՀամազգին իւր ցՍուրէնն Պահլաւ. Արծաթ նորա նմա լիցի. բայց դու հաւանեցուացես զնա՝ տալ ինձ զերկուս զայս միայն. զԳահ նախարարացն Հայոց՝ որպէս կարգեալ է յԱրտաշրէ՝ և վրացեան մինչեւ ցայժմ, նուիրն օրինակաւ հրամայեցէ և առ յապայ. զի մարզպանք պարսից մի կարասցեն ծանուցանել առիս այնր առնելով՝ զերազանցօրէն փոփոխել ըստ կամաց իւրեանց: Եւ միւս, զի զարձուսցէ զտուն ազգականին իմոյ և քո՝ ըզմանկանն Գազառնի զորդւոյն Հրահատայ, թէ և ոչ յիւրում եռեղ՝ զԱրշակունին յաչալերով անուն, զեթ ի կարգ ընկեցեալ ընդ այլ նախարարան թուեսցի, յորում տեղւոջ ինքն կամեցի:... Այնմ լսող լեալ Վաղամայ՝ հրամայէ զամենայնն կատարել. և դարձեալ հաստատելով զԹոռն նորա զԱրտքն ընտրաեալսան՝ ի տէրութիւն իւրոյ ազգին Մամիկոնենից, արձակէ ի Հայս:

Բայց թէ ասիցէ ոք, պարտ է մեզ զասացեալն Մեծին Սահակայ ի Պարսից հրապարակախօսութեանն՝ գրել, գիտասցէ, զի ոչ յումեքէ ի լսելիս մեր հասեալ է բովանդակն՝ ճշմարտութեամբ, և ոչ մեք ի Պատմութեանս հիւսել հաւանիմք: Զի և

ես այլ եմ ծերացեալ և հիւանդոտ և անպարապ ի թարգմանութեանց, և զերագիկն միայն խոկացի, ոչ ինչ մաքրագունից պարապեալ բանից. զի և զո կամքդ կատարեցին, և ես ճողոպրեցայց ի քոց հարկեցուցանողականաց բանից և աղաչանաց:

ՃԻԲ

ՎԱԽՃԱՆ Ս. ՍԱՀԱԿԱՑ

(Ղ. ՓԱՐՊԵՑԻ. ԺԸ)

Աճիփեալ գինքն առաքինւոյն՝ յամենայն աչխարհածուփ զբօսանաց, աղօթից միայն պարապէր և վարդապետութեան. վասն զի բազումք յեպիսկոպոսաց և յայլոց ի պատուական քահանայից՝ ոչ երբեք ժուժէին տեւել և մեկուսանալ ի մշտաբուղխ աղբերէ վարդապետութեան Սրբոյն, ուր ուրեք և գիպէր, ի յոստանի և կամ ի հովս: Եւ կացեալ ամս բազումս, և հասեալ ի յերկար ծերութիւն՝ վախճանեցաւ խաղաղական հանգստիւ, ի գաւառին Բագրեւանդայ, ի գիւղն որ անուանեալ կոչի Բյուր, ի սկզբան ամին երկրորդի Յազկերտի՝ որդւոյ Վռամայ թագաւորին Պարսից, յամսեանն նաւասարդի որ օր երեսուն էր ամսոյն, յերրորդ ժամու աւուրն. որ և զօր ծննդեան Սրբոյն ի տոյզ գիտողաց և ի պատմութենէ երանելոյն առն Կորեան հաստատեալ գրեցաք լինել և նոյն օր ծնընդեան Սրբոյն, ի նմին ամսեան:

Եւ վասն զի ոչ գոյր իւր արու որդի՝ բայց միայն դուստր մի, զոր էր տուեալ կնութեան Համազասպայ՝ տեառն Մամիկոնէից և Հայոց սպարապետի, որ ծնաւ ի Համազասպայ երիս արու որդիս, զՍուրբն Վարդան և զՍուրբն Հմայեակ և զերանելին Համազասպեան. որոց եւս և կնքեաց սուրբ

այրն Աստուծոյ Սահակ՝ զտաճարաւծս գեօղից իւրոց և ագարակաց, և որ ինչ միանգամ էր իւր եւ նոցա ի ժառանգութիւն և զաւակի նոցա մինչեւ ցյաւիտեան: Եւ ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա օրհնութեամբ բազմաւ և պատուիրեաց նոցա պահել զվարդապետութիւն պատուիրանի Սրբոյն Գրիգորի. զոր ուսոյց և աւանդեաց ճշմարտութեամբ՝ ամենայն աշխարհիս Հայոց, ծառայել և երկիր պագանել միւսմն միայնոյ ճշմարտին Աստուծոյ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Որոց առեալ զանենչալի նչխարս Սրբոյն՝ բազմութեամբ քահանայից և ազատաց, տարան ի գաւառն Տարօնոյ, ի բնիկ գիւղն իւր սեպհական՝ յանուանեալն Աշտիշատ. և անդ կազմեալ հանդըստարան Սրբոյն, պատեցին զպարկեշտ մարմին արդարոյն, ըստ արժանի կայանից ճշմարտին: Ուր և չինեալ եկեղեցի մեծապայծառ և վկայարան Սրբոյն՝ զարդարեցին պատուական և մեծագին սպասուք. հիմնացուցեալ կանդնեցին ի տեղւոջն՝ վանս բազմութեան պաշտօնէից. կարգեալ դարմանս անպակաս պտղոց՝ ի հանգիստ առաւելեալ եղբայրութեան. ժողովս տարեւորականս աշխարհայորդոց բազմութեամբ հաստատեցին ի տեղւոջն. որ ըստ ժամանակի՝ բազմամբոխ ժողովրդոց կամաւոր յօժարութեամբ՝ ազատք և քահանայք գաւառին, այլ և կարի յոյժ հեռաւոր տեղեաց դիմեալք, յօր կարգադրութեան նորա՝ տօնեն: Ուր և բազում օգնականութիւնս առողջութեան՝ ըստ իւրաքանչիւր ախտից՝ չահին ի նչխարաց Սրբոյն. և ուրախալից սրտիւ դառնային ի բնակութիւնս իւրաքանչիւր:

ՃԻԳ

ՆՈՑՆ ԲԱՆ ԸՍՏ ԽՈՐԵՆԱՑԻՈՑ

Մեծին Սահակայ հասեալ հիւանդութիւն մահու, և առեալ աշակերտացն՝ տարան ի գեւղն որ կոչի Բղուր, որպէս թէ ի վայր ընդանեգոյն և վերծ տեղի մաուցեալ՝ ի զօրացն Պարսից կատաղայ զնոսա: Ուր եհաս վախճանն. կեցեալ եպիսկոպոսապետութեամբն ամս չիսուն և մի. սկսեալ յերրորդ ամէ վերջնոյ Խոսրովայ Հայոց արքայի, մինչեւ յսկիզբն ամին երկրորդի Յազկերտի եղելոյ Պարսից թագաւորի, յելս ամսոյն Ղաւասարդի, յաւուր իւրոյ ծննդեանն[1]: Ուր մահկանացու ծնեալ՝ անմահ վիւրն յիշատակ եթող. պատուեաց զպատկերն[2], պատկառեաց ի կոչնականէն, փոխանորդեաց զկեանն. և այսքան կենցաղավարեաց՝ իբր զի ոչ պակասութեան իրիք մասն ի ծերութենէն եղանիլ, և ոչ յախտից առընդունել[3]: Զորմէ պարտ էր մեզ հրաշափառաւորութիւն անցանել բանիւ, ըստ արժանի հօրն դրուատից. այլ զի մի յերկարութիւն ճառիցս լիցի ձանձրութիւն ընթերցողաց, այլում տեղւոյ և ժամանակի զայսոսիկ թողցուք՝ արտաքոյ այսց գրոց, ուր ի սկզբանն հրաւիրեցաք առնել թեզապրութիւն[4]:

1. Եթէ ըստ հաստատուն տոմարի կամ Յայսմաւուրց է օր՝ պատշաճի սեպտեմբերի 7ին. իսկ տարին 439. ի յիշեալ թագաւորաց՝ Յազկերտ Բ Համաբուի թագաւորածի 4 օգոստ. 438 ամին, Խոսրով Գ յամի 385:

2. Մարդ կոչուի պատկեր Աստուծոյ. պատուել զպատկերն՝ է աստուածաւայել վարք ունենալ:

3. Ոչ ծերութեամբ և ոչ ցաւերով վհատուեցան միտքըն և մարմինն:

4. Մուխ խօսք. որով՝ ինչպէս երբեմն ուրիշ տեղ՝

Բայց զպատուական մարմին նորա բարձեալ սարկաւագապետին նորին Երեմիայի[1], հանդերձ աշակերտակցօք և տիկնանն Մամիկոնենից՝ նորին նուաւ, որում անուն էր Դատրիկ, կին Վարդանայ սպարապետի, տարեալ հանգուցին յիւրեանց գեղն յԱշտիշատ, որ է ի գաւառին Տարօն։ Եւ ցրուեալ աշակերտաց նորա կրօնաւորաց սպուդեից՝[2] ի գաւառս իւրաքանչիւր՝ վանորայս չինեցին, ժողովեալ եղբարս։

ՃԻԴ

ՎԱԽՃԱՆ ՍՐԲՈՑՆ ՄԵՍՐՈՎՊԱՑ

(ԿՈՐԻՒՆ)

Իսկ երանելւոյ զուգականին[3] զայս լուեալ, ըզսուրբ վարդապետէն ասեմ զՄեսրովպայ, տրտմեալ և տխրեալ լինէր, և յարտասուս եղեալ վարանէր ի՝նմանէ բարժանումն և զվախճան առն Աստուծոյ, և զպատուական զարմից Սրբոյն Գրիգորի. և հոգովք տարակուսեալ պաշարէր առ այնպիսի աղէտս. մանաւանդ զի ոչ տեսանէր զայնպիսի զոք առ ի բարեպաշտութեան ջանս և առ լուսաւոր վարդապետութիւնն և առ վերակացութեան չնորհն,

խոստանայ առանձինն գրել և պարզել իր համառօտ ըսածը։

1. Հաւանօրէն եպիսկոպոս եղած առալջ կամ յետոյ՝ Մարդաստանի կամ Անձաւացեաց. զի այս երկու գաւառք այլ համանուն Երեմիա եպիսկոպոս ունէին Վռւռանդեանց առեն։

2. Յունարէն Σπουδαῖοι նշանակէ չատ ժիր աշխատող եղնաւորներ։

3. Ս. Սահակայ հաւասար, նման, միաբան ընկերն։

որ գեր ի վերոյ էր և քան զառաջինն զիւր սուրբ հարան[1]։ Յայսոսիկ մտախոհ եղեալ ողբերգական բարբառով վարաներ. զի ոչ զոք ունէր համաչափ թէ ընտանեբար հոգայցէ վասն Հայաստանեայց. և ելս այսոցիկ զԱստուած յիշէր և մխիթարէր[2], ըստ սաղմոսերգողին, որ արար զամենայն և փոփոխէ անհաս իմաստութեամբ և մատակարարութեամբ։ Եւ զինքն առաւել եւս յորդորէր ի կրօնաւորութեան կարգս. համանգամայնն յաղթող լեալ էր կրօնաւորաց, ըստ երկնային կոչմանն՝ հանդիսանալ ի բարձրագոյնն՝ չնորհօքն Քրիստոսի, առանց հեղգութեան։ Եւ յորդորէր զամենայն աշակերտեսն առ բարեացն քաջութիւնն, և յուշ առնէր ամենայն անձին՝ զգուշանալ ի վարս և ի գնացս՝ խոհեմագոյն և հանճարեղ խրատուք. մինչ բազմաց խիստ և ծանր և դժուար համարեալ ըզվարուցն կրթութիւնն։ Այլ նա զվերջինն մոռացայր և յառաջագէմն նկրտէր, ծերունի հասակաւն. զմտաւ ածելով զմօտաւոր վախճանն՝ ոչ տայր քուն աչաց և ոչ նինջ արտեւանաց, մինչեւ ցօր կոչման ելանելոյ նորա յաշխարհէս։

Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւրեւ զհոգեւոր եռանդն բորբոքէր յաստուածասիրութիւն, և բազում թուղթս խրատուց ընդ ամենայն գաւառսն առաքէր, անդէն ի նմին ամի յետ վախճանի երանելւոյն Սրբոյն Սահակայ, ի վեցերորդ ամսեանն[3] ի տասն և յեւթն մեհեկանի՝ հասանէր վախճան սրբոյ վարդապետին Հայոց, յԱյրարատ գաւառի, ի Նոր քաղաքն[4]. ի նոյն հոգեկիր կրօնս, որպէս և յառաջագոյն ասացաք, հասանէր Սրբոյն

1. Ս. Սահակայ համար են այս ըսածքն։

2. Այս բաներուս ուրիշ հար չէր գտներ՝ բայց զԱստուած։

3. Ս. Սահակայ մահուանէն սկսեալ վեցերորդ ամիսն։

4. Որ է Վաղարշապատ աւանն, էջմիածնի քով։

քրիստոսակոչ կատարումն, յետ սակաւ ինչ աւուրց հիւանդութեան: Եւ յորժամ կամեցաւ Աստուած որոշել զսուրբն ի միջոյ ձեռասուն աշակերտացն և խառնել ի գունդս սրբոցն, թեթեւացեալ և սթափացեալ ի ցաւոցն, և կանգնեալ նստաւ ի ժողովոյն միջի. և համբարձեալ զձեռան հանապազատարածս յերկինս, զԱմենասուրբ ՔՐԵՐորդութիւնն օրհնէր. և յանձն առնէր զաշակերտեալսն ամենասիրտ չնորհացն Աստուծոյ, զի կայցեն հաստատուն ի հաւատս և ի վարս ուղղութեան, և առանց դայթակղութեան կատարեսցեն զարդարութիւն սուրբ հարց՝ մերձաւորաց Քրիստոսի:

Եւ անուանք գլխաւոր աշակերտացն ժողովելոցն առ նա՝ են այս. առաջնումն Յովսէփ, և երկրորդումն Թոդիկ, արք զգաստք և զգուշագոյնք. իսկ զինուորացն, առաջնումն՝ Հմայեակ ի Մամիկոնեան տոհմէն, և երկրորդին Վահան՝ յազդէն Ամատունեաց, որ էր հազարապետ Հայոց Մեծաց, ամուսնացեալքն և երկուզածք յԱստուծոյ: Եւ մինչդեռ ձեռք սրբոյ վարդապետին ընդ երկինս կարկառեալ կայր, տեսիլ աքանչելի և խաչանշան լուսաւոր և չողաձեւ երեւէր ի վերայ ապարանիցն՝ յորում երանելին վախճանէր. զոր և ամենայն ուրուք ինքնատես լեալ և ոչ յընկերէն պատմեալ. իսկ Սրբոյն զսիրոյ և զմիաբանութեան պատուիրանն առանձեալ, և զհեռաւորս և զմերձաւորս օրհնութեամբ պահակեալ, և զհաճոյական աղօթսն հաստուցեալ ի Տէր, անդէն վազվազակի աւանդեաց զհոգին ի փառս Ամենասուրբ Երրորդութեանն:

Զոր՝ առեալ Հմայեկի և Վահանայ՝ կպմամբ թեամբ վախճանելոց, հանդերձ աշխարհաժողով ամբոխիւ, սաղմոսիւք և օրհնութեամբ և երգոք հոգեւորօք, մոմեղինօք վառելօք և խունկ բուրվառելովք և անուշահոտ խնկովք. և այնու խաչանշան յաւասխաղաց լուսաւոր նշանաւն, յԱւրկականն եւ լանէին, և անդ ի մարտիւրոսական յարկն հանգուցանէին զսուրբ այրն Աստուծոյ, և զօրինաւոր

տօն յիշատակի Սրբոյն կատարէին: Այս նշանն աներեւոյթ լինէր, և նոքա յիւրաքանչիւր տեղիս դառնային, փառաւորելով և օրհնելով զԱստուած ի վերայ աքանչելեացն, զոր Տէր եցոյց ի վերայ վարդապետին:

Իսկ յետ ամաց երից անցելոց, ըստ յաղողելոյն Աստուծոյ՝ Վահանայ ամատունեայ քրիստոսասիրի, կամեցաւ տաճար փառաց անուանն Աստուծոյ շինել յանուն սրբոյ վարդապետին. ի տաչանոյ վիմաց աքանչելապէս յօրինեալ խորանս և գեղեցկապէս կազմեալս. և անդ ի ներքսագոյն խորանին զՍրբոյն հանգիստն առնել. և վայելուչ սպասիւք ոսկւով և արծաթով և ակամբք պատուականաւք ըզտունն Աստուծոյ և զսեղան կենարար մարմնոյ և արեան Քրիստոսի զարդարէր: Եւ զնորին աշակերտն զգաստ և բարեպաշտօն զԹոդիկ սպասաւոր նորին կացուցանէին, այլ եւս եղբարբք կատարել զհանապազորդ պաշտօնն:

ՃԻԵ

ՆՈՅՆ ԲԱՆ ԸՍՏ ԽՈՐԵՆԱՑԻՈՑ (Գ. կէ)

Չկնի վեց ամսոց անցելոյ (մահուան Ս. Սահակայ), յերեքտասաներորդ մեհեկանի[1], և երանելին Մեսրոպ փոխեցաւ յաշխարհէ, ի վաղարշապատ քաղաքի. գերազանցեալ քան զամենայն որք գոյնու ժամանակաւ էին առաքինիք: Քանզի ամբարտաւանութիւն և մարդահաճութիւն ի նորա վարս տեղի գտանել երբէք ոչ կարացին. այլ հեզ և լաւակամ և բարեխորհուրդ[2] գոլով, և երկնայնոցն զարդարեալ սովորութեամբք՝ զինքն բոլորից ցուցանէր: Վասն

1. Ըստ Յայսմաւուրքս ի 19 Փետրուարի:
2. Օրինակ մի զրե երկայնախորհուրդ:

զի դայր տեսլեամբ հրեշտակական, մտօք ծննդական[1], բանիւք պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտաքայլեալ, սարսափիւք անճառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերող, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ։

Այլ վասն զի զբոլոր ուղղութիւնս նորա ոչ բաւական եմ ասել, ի հանգիստ նորա նչխարացն դարձուցից զբանս։ Որպէս լուայ ի բազմաց և ի հաւատարիմ արանց, եթէ եկաց լոյս չողապէս ընդ ազօտ նշան խաչի՝ ի վերայ տանն, ուր երանելին գհոգին աւանդեաց. ոչ փոյթ ընդ փոյթ լեալ՝ էանց ծագումն, կամ տակաւուց տեսանելի, այլ ամենայն բազմութեանն, մինչ յոլովից մկրտել յանհաւատից։ Ցայնժամ լեալ ազմուկ չխոթի յամբոխութեանն՝ բաժանեալ յերիս գունդս, վասն հանդուցանելոյ զպարկեշտն զայն մարմին՝ և նախ քան զմահն կըրթեալ ի մեռելութիւն. կէսքն ասէին տանել ի բըլնագաւառն իւր ի Տարօն, և ոմանք ի նախ աշակերտացն Գողթն[2], և այլք անդէն ի Վաղարշապատ քաղաքի ի Սրբոցն դիրս[3]։ Բայց յաղթեալ քաջն Վահան ամատուն, զի էր զօրաւոր հաւատովք և ճոխութեամբ մարմնաւորաւ. վասն զի ի ժամանակին յայնմիկ ի նա էր հաւատացեալ Պարսից[4] ըզհազարապետութիւնն Հայոց աշխարհիս. որոյ բարձեալ՝ տարաւ զնա արժանի յուղարկմամբ՝ յիւր

1. Մատուռ հարըստութեանը վրայ տես յհատոյ զվկայութիւն Յովսէփայ՝ ի պատմութեան Թաթզոյ։

2. Խորենացին յիշէ (Գ. խոր. կ.) Մեսրովպայ քաղցողութիւնն ի Գողթն. նոյնպէս և Ստեփ. Օրպէլեան։

3. Հռիփսիմեանց և Գայիանեանց գերեզմանքն, և ուրիշ Սրբոց։

4. Թուի թէ յառաջ քան զմարզպանութիւն Վասակայ Սիւնեաց, այս Վահանս եղած է զլխաւոր յիշխանս Հայոց. բայց ի ժամանակի Վարդանանց յիշուի իբր սոսկ նախարար Ամատունեաց ցեղին։

գեղն Օշական[1]։ Եւ նոյն տեսիլ լուսեղէն խաչին՝ ի վերայ երթեալ դագաղացն՝ յանդիման ամենայն ժողովրդեանն, մինչեւ ի հանգիստ զնա փոխեցին Վահան և Թարխիկ[2] նորին արբանեակք. և ապա նշանն աներեւոյթ լինէր։

ՃԻԶ

ՈՂԲՔ Մ· ԽՈՐԵՆԱՑԻՈՑ ՎԱՍՆ ԲԱՌՆԱԼՈՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ Ի ՏԱՆԷ Ս· ԳՐԻԳՈՐԻ[3]

Ողորմ զքեզ Հայոց աշխարհ, ողորմ զքեզ, հանուրց հիւսիսականաց վհատոյն. զի բարձաւ թագաւոր և քահանայ, խորհրդական և ուսուցող։ Վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն, դրդուեցաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն։

Ողորմիմ քեզ, եկեղեցի Հայաստանեայց, խըրթնացեալ ի բարեզարդութենէ բեմբին. ի քաջէն զրկեալ հովուէ և հովուակից։ Ոչ եւս տեսանեմ զբանաւոր քո հօտ ի վայրի դալարուղ և առ չուրս հանգստեան տածեալս, և ոչ ի փարախ հաւաքեալ՝ զգուշանալով ի գայլոց, այլ ցրուեալս անապատաց և գահավիժութեանց։...

Ընդ Քրիստոսի լաւ է նոցա բնակել, և յարբա-

1. Մօտ յԷջմիածին, ուր և հիմայ պատուի Սուրբն։

2. Ըստ կարեան՝ Թոդիկ, զոյգ Բասենոյ եպիսկոպոսն, որ յիշուի Վարդանանց և Վեւոնդեանց առեն։

3. Որքան և այս Ողբոց խօսքերուս մասն ինչ առած ըլլայ խորեն. հին Ս. Հարց ըսածէն, չատ զեղեցիկ և սրտառուչ յարմարեր է իր դիտածին և դիպուածին. անհնար թուի սը ժամանակակից չեղող մի այսպէս խորին զգացմամբ գրէ։

համեանն հանդչել դոգս, և զհրեշտակացն տեսա-
նել պարտաւորութիւնս: Բայց անհոգող դու այրու-
թեամբդ, և եղկելիք մեք՝ որ զրկեցաք ի հայրենի
վերակացութենէն: Չի ոչ որպէս ի հնումն ժողո-
վուրդն այն, այլ առաւել մեր է թշուառութիւն.
վասն զի Մովսէս բարձեալ, և Յեսու ոչ յաղորդէ՝
առաջնորդել յերկիրն աւետեաց:... Չօրաբաթել ոչ
ուրեք է՝ որ նորոգէ զպետութիւնն: Անտիոքոս բըռ-
նադատէ թողուլ զօրէնս հայրենիս, և Մատաթիա
ոչ ընդդիմակայէ: Պատերազմ զմեզ չուրջ պա-
տեաց, և Մակաբէ ոչ փրկէ: Այժմ մարտք ի ներ-
քուստ և արհաւիրք արտաքուստ:

Աւաղ զրկանացն, աւաղ թշուառական պատմու-
թեանս. որպէս զախտս հանդուրժեցից բերել. զիա՞րդ
զմիտս իմ և զլեզուս՝ պնդեցից, և հատուցից ըզ-
բանս հարցն՝ փոխանակ ծննդեանն և անդեանն[1]:
Քանզի ծնան զիս իւրեանց վարդապետութեամբն,
և անուցին՝ առ այս առաքելով՝ ահեղութեամբն: Եւ
մինչ նոքա զմեզ յուսային դարձ, և պատուաստիրել
իմով ամենիմաստ արուեստիւս և կատարելագոյն
յարմարութեամբս, համայն և մեք փութայիս դի-
մեալք ի Բիւզանդիոյ, յուսայաք հարսանեաց պա-
րել՝ անվհեղ երագութեամբ կրթեալք, և առա-
գաստի ասել երգս, արդ փոխանակ խրախճանու-
թեանն՝ ի վերայ գերեզմանի ողբս ասելով՝ ողոր-
մելի հառաչեմ. ուր և ոչ սեռութեանն ժամանեցի
աչաց նոցա կափուցմանց, և լսել զվերջին բարբառն
և զօրհնութիւն:

Այսպիսեաւ անձկաւ հեղձամղձուկ եղեալ՝ վը-
տանգիմ կարօտութեամբ մերոյ Տեառն: Ո՞ւր է քաղցր
աչացն հանդարտութիւն՝ առ ուղիղս, և ահաւորու-
թիւն՝ առ թիւրս. ո՞ւր զուարթ չրթունցն ժպտումն՝
առ բարի ազակերտացն հանդիպումն. ո՞ւր խնդա-
միտ սիրտն՝ ընդունող արբանեկաց. ո՞ւր երկայն

1. Ինչ խօսքով փոխարէն ընեմ հոգեւոր ծնողացս երախտեաց՝ զիս կրթելնուն և սովրեցնելուն համար:

ձանապարհաց յոյս հաշտեցուցիչ, աշխատութեանցն
հանգուցող: Կորեաւ ժողովողն. թագեաւ նաւա-
հանգիստն. ելիք օգնականն. լռեաց ձայնն յորդո-
րեցուցիչ:

Ո՞վ այսուհետեւ զմեզ յարգեսցէ զուսումն. ո՞վ
ուրախասցի ընդ առաջադիմութիւն աշակերտիս.
ո՞վ զհայրականն բարբառեսցի զուարճութիւն, մա-
սամբ ինչ յաղթահարեալ յորդոյս: Ո՞վ կարկեսցէ
զյանդգնութիւնն ընդդէմ առողջ վարդապետու-
թեանն հակառակ յարուցելոցն. որք ամենայն բա-
նիւք քակտեալք և քայքայեալք, յոլովս փոփոխեն
վարդապետս և բազում դիրս. որպէս ասաց ոմն
ի հարց. առ ամենայն բան նմանապէս դժուարին,
և չար օրինակ զրեն զայն՝ անձանց. զծիծաղելն
զմեւք և զարհամարհելն իբրեւ զանհաստատանովք,
և որ ոչ ինչ պիտանացու ունիցի արուեստս: Ո՞վ
զնաստ ըմբռնեսցէ՝ ասատելով, և զմեզ սփոփեսցէ
դովելով, և չափ դնէ բանի և լռութեան:

Չմտաւ զայսոսիկ ածելով, հառաչումն յիս ի
ներքս ընթանայ և արտասր. և կամեցուցանէ բար-
բառել բան ախորհան և սգաւոր: Եւ ոչ գիտեմ՝
եթէ զիարդ յարմարեցից զողբերգութիւնս, և կամ
զո՞վ արտասուեցից. զէ՞ք իմ մանուկ և թա-
գաւոր, զսորհրդակցութեամբ վատթար՝ սգգաւ ի
բաց ընկեցիկն, և նախ քան զմահ՝ մեռելութիւն
անհաւատութեամբ, յանձառոյն ի վայր կործանեալ.
եթէ գիս ինքն, զի վերացաւ ի գլխոյս վարթա-
մացուցիչ պսակն գեղեցիկ և կենցաղօգուտ: Չհայրն
իմ և զքահանայապետ, զմիտան վսեմացեալս, որ
երթայր տանէր կատարեալ բան, որով վարէրն և
յարմարէր, և զերասանական ի բուռն առեալ՝ ուղ-
ղէր զդէմն, և սանձահարէր զլեզուս օտարաձայնս.
եթէ գիս թափուր ի հոգւոյն մնացեալս խանդից
և ցակասեալ: Չծնո՞ղն իմ՝ սգրիւր վարդապետա-
կան, զարդարութեանն առոգող, և հեղեղաւ զամ-
բարշտութիւն արտասահմանելով, եթէ գիս երաշ-
տացեալ և թարչամեալ պաքութեամբ արբուցմանց

խրատու։ Զաչխարհիս եկեալ ազէտս, եթէ զապագայիցն ակնկալութիւն։

Ո՞վ մեզ յայսոսիկ ճառակիցէ՝ հաւատարելով տըրտմութեանս, և օգնեսցէ՝ ախտակցելով ասիցս, կամ յարձանս փորագրել։ Զարթիր, Երեմիա, զարթիր, և ողբա հանդերձ մարգարէութեամբ՝ որ ինչ թշուառացաքս և որ ինչ թշուառանալոցս եմք. գուշակեա զյառնել հովուաց տգիտաց, որպէս երբեմն Զաքարիաս յիսրայելին։...

Զի թագաւորք սիրեալք՝ խիստք և չարաչարք, բեռինս բառնալով ծանուցնս և դժուարակիրս. հրամանս տալով անտանելիս։ Վերակացուք անհարթարարք, անողորմք. սիրելիք գաւաճանեալք և թըշնամիք զօրացեալք. հաւատ վաճառեալ ընդ անօտի կենցաղոյս։ Հէնք եկեալ անհատք և յոլովից կողմանց. գերիւմն տանց և յափշտակութիւն ստացուածոց. կապումն գլխաւորաց, և բանտք յայտնեաց. յօտարութիւն վտարումն՝ ազատաց, և անթիւ նեղութիւնք ռամկաց. առումն քաղաքաց և քանդումն ամրոցաց. աւերումն աւանաց և հրդեհումն չինուածոց։ Սովք անբաւք, և հիւանդութիւնք և մահք՝ բազմօրինակք։ Աստուածապաշտութիւն մոռացեալ, և ակնկալութիւն գեհենի։ Ցորմէ պահեսցէ զմեզ Քրիստոս Աստուած, և զամենեսեան՝ որք երկրպագեն նմա ճշմարտութեամբ. և նմա փառք յամենայն եղականացս. ամէն։

ՃԻԼ

Ա Ղ Ա Ն Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

(Ղ. ՓԱՐՊԵՑԻ)[1]

Առաքինակրօն երանելոյն Աղանայ, որ էր ազգաւ ի հայակաց և յականաւոր տոհմէն Արծրունեաց, որդի վաստակոյ եղբօր Տաճատայ և Գուտորդի[2]. որ մինչդեռ էր ի տիս մանկութեանն, և այն ինչ դեռ տէգ մորուացն ի վերայ գեղեցկատեսիլ վարդափթիթ ծնօտիցն բուսանէր, ի բաց ընկեցեալ արհամարհէր զամենայն վայելս կենցաղոյս, և զերկնաթռիչ զհանապարհն յաւիտենից[3]

1. Հեղինակս (Ղազ. Փարպ.) առնեօք աչկերտ եղած է Աղանայ, վասն որոյ իր պատմագրութեան մէջ յիշէ զնա։ Սորա հայրն վաստակ Արծրունեաց առեր՝ իր պապն Մեհրուժանայ սպանման վրէժն առնուլ ուզելով (տ. Յօդ. 101–2) դիմեց Պարսից թագաւորին. այս բանիս վրայ գայթակղելով Աղան՝ իշխանութենէ այլ աշխարհէ այլ հրաժարեցաւ և կրօնաւորեցաւ։ Բայց յետոյ վաստակ թողլով զՊարսիկս՝ գնաց առ կայսր, և անոր քով մնաց մինչեւ ի մահն։

2. Թովմա Արծրունի Գուտեր կ'անուանէ։

3. Ըստ Թովմ. Արծրունւոյ, Աղան՝ հօրն ի Պարսկաստան երթալէն վերջը, խնդրեր է ի Ս. Սահակայ՝ որ իրեն կրօնաւորի հագուստ տայ. զգուշաւոր հայրապետն վախնալով որ մեր այն ժամանակին տգայ թագաւորն Արտաշէս՝ խառնակ բան մի չըսէ Պարսից թագաւորին, յորդորէ զԱղան՝ որ համբերէ. երբ՝ յետ Հայոց թագաւորութեան վերնալուն՝ Ս. Սահակ կ'երթայ և գառնայ ի Պարսից, Աղան նորէն խնդրէ, և կ'ընդունի «ի նմանէ սքեմ կրօնաւորութեան. և երթեալ բնակէ առանձնապէս ի Գողթն գաւառի, ի » տեղւոջ վարդապետութեան Սրբոյն Մեսրովբայ, » ճգնաւէր հրեշտակակրօն վարուք, երանելի մարդկան և ահարկու գիւաց »։

բարուքթեանցն ընտրեալ հետեւիւր. կեցեալ յանապատս, ընդ արս ընտիրս ի ճգնութիւնս մեծամեծս: Զորոյ և ոչ բաւական ոք է բանիւ բովանդակել զանբաւ վարուցն զառն նահատակութիւնն. այլ այսքան միայն ասացեալ, մնացուսցուք զբանս. որպէս թէ պատճառանօք գոլով ի մարմնի[1]. տքնութեամբ և պահօք և անդադար աղօթիւք զցայգ և զցերեկ, միշտ հոգեւոր անապատ վաստակօք զանմարմնոցն զվերին զօրացն բերեր յանձին զքաղաքավարութիւն: Որ ոչ երբեք ի կեանս իւրում ընտրեաց ժամ աղօթից, այլ զտիւ և զգիշեր անհանգիստ նմա ժամ աղօթից էր: Եւ կեցեալ այսպէս, մինչեւ առաւելեալ ծաղկեր հեր գլխոյն սպիտակն քան զվարսէնն, և կատարեալ զընթացս նահատակութեան իւրոյ, հանգչէր: Եւ եղեալ ի մատրանն Ս. Դաւանկերտի[2]. որոյ յիշատակարանն ընդ անուանս վկայիցն սրբոց պատմեալ քարոզի մինչեւ ցայսօր և յաւիտեան, անուն Սրբոյն յամենայն եկեղեցիս Հայաստանեայց աշխարհիս, Վրաց և Աղուանից:

1. Իբրեւ թէ ակամայ և բռնի կ'ապրէր, միշտ հանդերձեալ կենաց փափագելով:

2. Սովորաբար Հադամակերտ գրուի. չինողն Հադամ անծանօթ է. տեղն մօտ գուշակուի Պաշգալէ ամբոր բերդի, սուր Նոռը–ոդլան բէկ Նիզամակից Պիտերխանի անցեալ (ՃՓ) դարու կիսէն առաջ՝ շատ ընդհիմացաւ Օսմանեանց. ինչպէս ուրիշ մ'այլ անկէ ոչ հեռի Խօշապ կամ Մահմուտի բերդին մէջ:

ՃԻՐ

ԺՈՂՈՎ ՇԱՀԱՊԻՎԱՆԻ

Սահմանք և կանոնք, եդեալ միաբանութեամբ առաջագ Հայոց. ի հինգերորդ ամի վախճանելոյն Սահակայ կարգեցաւ կանոնս[1]:

Յետ փոխելոյ յերկրէս՝ վարդապետացն Հայոց հարցն առաքնոց, արդարոց և ճշմարիտ առաքնորդաց, և մանաւանդ սրբոյ քահանայապետին երանելւոյն Սահակայ Հայոց կաթուղիկոսի, և հոգելից հոգեկիր ճշմարտասէր վարդապետին Մեսրովպայ, որ լուսաւորեաց զերկիրս Հայոց վարդապետութեամբ իւրով. ի փոխելն նոցա յերկրէս՝ առ արարիչն և տէր, լինէր եղծումն և քայքայումն կարգաց և օրինաց սրբոյ եկեղեցւոյ. որպէս և տեսանէր ի տեսլեանն յառաջագոյն՝ սուրբ քահանայապետն Տէր Սահակ. կամ եւս յառաջ՝ Սուրբն Գրիգորիոս: Բազմանային որք յաճախէին ի գործս պղծութեան ընդդէմ գնացից. ի ցամաքել սիրոյն՝ բազմանայր անօրէնութիւն, և ոչ ոք էր որ քաղէր զորոմն և սրբէր զգաղձն վկասակար. քանզի արմատացեալ էր սէգն[2] և տարածէր օր ըստ օրէ:... Մանաւանդ զի չէր ի ժամանակին

1. Ա.յլեւայլ տարբերութեամբ գրուած է այս վերնագիրս՝ Ձեռագրաց մէջ, թուականն այլ փոխանակ եմ՝ ամանք է գրած են, բայց առաջինն յարմարագոյն է Յաղկերտի թագաւորութեանն, որոյ Ջ տարին կ'ըսուի եղած ժողովն, թէ և ամանք ԺՋ գրած են, այսպէս ուրիշ թիւերն և յատուկ անուանք եւս շատ այլայլած են:

2. Սէգ՝ երբեմն պարարտ և լաւ խոտ նշանակէ, երբեմն (ինչպէս հօս) լաւ խոտոց խեղդիչ և ապականիչ:

յայնմիկ իշխանութիւն և զօրութիւն ի ձեռն ազգին Մամիկոնէից. զի զօղեալ և նուաճեալ և հնազանդեալ էին համարձակելոյ պարսկային թագաւորութեանն: Զի թէպէտ և հեծէին մրմռային մունչէին ի նմանութիւն կորեանց առիւծուց, վարդան Մամիկոնեան՝ համազգօք իւրեանց հանդերձ եղբարբք, այլ կային իբրեւ ի զառագեղ[1] արգելեալք, և ակն ունէին ի վերուստ օգնականութեան: Քանզի չարահնար ազգն Պարսից ի կասկածանս կային և յերկիւղի, և ոչ տային զիշխանութիւն ի ձեռս նոցա:

Ապա օր աւուր բղխէր բան առ բան, և գիշերոյ առ գիշեր ցուցանէր զգործ արգարութեան. բան առ բան հասանէր, մարդ ի մարդոյ հնչուն լինէր յիւրաքանչիւր լսելիս[2]: Գային ժողովէին ի հրամանէ միաբանութեան՝ յեգեալ կէտն ի Շահապիվանի, ի բանակեալ թագաւորացն Հայոց՝ ի ժամ Ամանորեայ ոօնին: Եւ լինէր այս ի վեցերորդ[3] ամի թագաւորութեան Յազկերտի Պարսից արքայի, և Վասակայ Սիւնեաց՝ մարզպանութեան Հայոց[4], և Վահանայ Ամատունւոյ հազարապետութեան, և Վրխայր[5] Խոռխոռունեաց՝ խազադութեան[6]: Եւ գային ժողովէին եպիսկոպոսք քառասուն[7], և երիցունք բազումք և սարկաւագունք, և

1. Գազաններ փակելու վանդակ:
2. Այսինքն, մէկ մէկու ձայն տային, սիրտ տային:
3. Որ է 443 թուականն Քրիստոսի:
4. Վասակայ մարզպանութեան տարին այլ 26 գրած են սմանք՝ որ յայտնի սխալ է. եթէ 16 ըլլար՝ յարմարեր Հայոց թագաւորութեան վերջուած տարւոյն:
5. Կամ Վրոյր, ըստ այլ օրինակաց:
6. Այս պաշտօնիս տէրն սովորաբար պարսիկ բառով մաղխազ կոչուի: Կարեւոր պաշտօն մ'էր, և պաշտօնեային կոչուէր խոտաղապետ. բայց քիչ անգամ յիշուի. այսպէս էր Ագաթանգեղոսի:
7. Ի գրուած է թիւն. սմանք ի գրած են, որ է քսան:

նախանձաւոր պաշտօնեայք Քրիստոսի, և համօրէն ուխտ սուրբ եկեղեցւոյ, և իշխանք ամենայն, գաւառապետք, գաւառապետք, և բռնաւորք, և աշխարհիս Հայոց[1], առաջի գլխաւոր եպիսկոպոսաց, Ղազարայ[2], Տաճատուր, Աբրահամայ, Գադայ, Եփրեմայ, և այլոց բազմաց. և երիցանց գլխաւորաց, Յովսեփոս, Յոհաննայ, Մեղիտայ, Երեմիայ, Աստղրակայ, Դանիէլի, տեառն Ղեւոնդի, տեառն Եղիշայի[3], և այլոց բազմաց սքանչելաբեր քահանայից, որք էին նախանձախնդիր օրինացն սրբութեան եկեղեցւոյ Աստուծոյ: Ժողովեալ առաջի աւագ նախարարացն, քաջին և կորովման Սրբոյն Վարդանայ Մամիկոնենի, և Աշուշայ կամսարականի, և Մանուէլ Ամատունւոյ սպարապետին Հայոց և Զրհայ[4] Դիմաքսենի, և ամենայն իշխանացն Հայոց և ազատաց բազմաց:

Եւ միաբան միախորհուրդ բարբառէին այսպէս. եթէ, Չեգեալ կարգն Սրբոյն Գրիգորի և զներսիսի և զԱհակայ և զՄաշտոցի, դուք անգրէն հաստատեցէք. և այլ ևս ոչ՝ որպէս և ձեր կամք են, և մեք ախորժիւք և յօժարութեամբ յանձին ունիմք կատարել: Քանզի կարգք եկեղեցւոյ Թուղայեան, և մարդիկ յանօրէնութիւն դարձան, և թողին զպատուիրանս Տեառն: Արդ, օրէնք որ Աս-

1. Կան օրինակք որ կ'աւելցընեն, Զօրագլուխք, Հարիւրաւորք, կուսակալք կողմանց կողմանց աշխարհին Հայոց:
2. Ոմանք՝ Ղազայ:
3. Եթէ երկու երիցունք յոմանց Տէր կոչուին, կամ զի մեծապատիւ էին, ինչպէս Ղեւոնդ որ կոչուած է և քորեպիսկոպոս, կամ զի կանոնքն երեցք էին, ինչպէս Համազասպ Ղեւոնդ. Եղիշէ այլ (եթէ պատմիչն է) նոյն գինուորական էր. սմանք գրեն՝ Եղիշայի դրան երիցու. – որուն դրան. – անշուշտ Վարդանայ:
4. Ուղղական անունն է Զիկ, որ թուի թէ և յատուկ բան մի նշանակէ:

տուծոյ հաճոյ են և եկեղեցւոյ նորա իշխանութիւն, դուք զայն կարգեցէք, և մեք հնազանդիմք և հաստատուն պահեմք: Եւ եթէ ոք հաստատուն ոչ պահիցէ զկարգ օրինացն, կամ եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ, կամ ազատ կամ չինական, պատուհաս կրեսցէ և տուգանս տացէ:

Եւ զայս ամացեալ միաբան քահանայապետիցն և քահանայիցն, եթէ, Աստուածական կանոնն և նիկիականն հաստատուն կացցէ, և մեք հնազանդեալք եմք. և որ ինչ պիտոյ է ի նոսա ի լրութիւն, և մանաւանդ ի մէջ տանս Թորգոմայ և կոզմանց ազգիւեայցս՝ հաստատեսցուք:...

Եւ եղեալ միաբանութեամբ քահանայապետիցդ և քահանայիցդ ամենայն հաւատացելոցդ՝ զկարգս զայս և զկանոնս, և մատուցեալ առաջի մեծամեծ իշխանացն և աւագ նախարարացն, և ընթերցեալ առաջի ամենեցուն՝ հաճեցին հաւանութեամբ. ասեցին միաբան զօրացն և զօրագլխացն և իշխանացն, Այո՛, այո՛. կարգք և օրէնք այդ կացցեն, ինչ որ վասն մեր օգտի ի փրկութիւն հոգւոց և մարմնոց մերոց, իշխանութիւն եկեղեցւոյ և ազիթ փրկութեան մերոյ ի կեանս յաւիտենից:

ՃԻԼ

ՄԻԱԲԱՆՈՒԹԻԻՆ ՀԱՅՈՑ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻԻՆ ՀԱՒԱՏՈՑ Ի ՀԱԼԱԾԱՆՆՆ ՅԱԶԿԵՐՏԻ

(ԵՂԻՇԷ· Գ)

Յաղոզեալք զօրութեամբն Աստուծոյ՝ աղաղակէին և ասէին, արք և կանայք և ամենայն ոամիկ բազմութիւնն. Պատրաստ եմք ի հալածել և ի մեռանել, և յամենայն նեղութիւնս և ի չարչարանս՝ վասն սուրբ եկեղեցեաց, զոր աւանդեցին հարքն մեր առաջինք՝ զօրութեամբ գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով վերատին ծնաք ի մի յոյս հաւատոցն՝ ակրատութեամբ ի Քրիստոս Յիսուս: Ըստ նմին նմանութեան կամիմք չարչարանք և արեամբ նորոգել զանձինս: Քանզի, հայր մեր՝ զսուրբ աւետարանն գիտեմք, և մայր՝ զառաքելական եկեղեցի կաթողիկէ. մի ոք չար անքրպետ ի մէջ արկեալ՝ զմեզ քակեսցէ ի սմանէ:

Ոչ երեւէր այնուհետեւ առաւել տէր քան զծառայ, և ոչ ազատ փափկացեալ՝ քան զգեղջուկ վըշտացեալ. և ոչ ոք քան զոք նուաղեալ ի յ'արութենէ: Մի սիրտ յօժարութեան ամենեցուն՝ արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն միաբանելոց ի Քրիստոս: Քանզի առհասարակ զմի զինուորութիւն զինուորեցան. և զմի ազան զրահս հաւատոց պատուիրանին Քրիստոսի, և միով գօտեաւ ճշմարտութեան պնդեցին զմէջս՝ արք և կանայք:

Ընկեցեալ կայր այնուհետեւ ոսկի, և ոչ ոք առնոյր իւր առանձինն արծաթ. և արհամարհեալ առանց ագահութեան, անարգեալ պատուական հանդերձք՝ առ ի զարդս մեծատանց: Նա՝ իւրաքանչիւր ատացուածք՝ ոչ ինչ համարէին յաչս իւրեանց ատացողին. տեսանէին զանձինս իւրեանց իբրեւ զմեռեալ դիակունս, և զիւրաքանչիւր գերեզմանս՝ ինքեանք փորէին. և կեանք իւրեանց՝ ի մահ համարեալ էին, և մահք իւրեանց՝ անուշ կեանք:

Բայց այս բարբառ ստէպ ստէպ ընթանայր. Քաջութեամբ միայն մեռցուք. զանուն և զոգիս եւեթ ժառանգեսցուք. զի կենդանի իցէ ի մեզ Քրիստոս, որում դիւրին է միւսանգամ նորոգել զմեզ ի հոգւոյ՝ զամենայն դյուաւոգին զննջեցեալսն, և հաստացանել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց:

Զայս և առաւել քան զսոյն խօսելով, և միխթարելով զանձինս և զմիմեանս, դարձեալ միւսանգամ զինուորքն պատրաստեցին զզէնս իւրեանց, և աղօթականքն անդադար լինէին յաղօթսն իւրեանց,

և պահողքն ձգնէին ի պահս իւրեանց։ Զայնք պաշտօնէիցն ի տուէ և ի գիշերի անհատ էին ի սուրբ սաղմոսն. ընթերցուածք աստուածային կտակարանացն՝ ոչ երբեք առնուին դադարումն յամենայն ժամ, սոյնպէս և մեկնիչքն՝ ի մխիթարութիւն երկնաւոր վարդապետութեանն։

ՃԼ

ԳԱՐԵԳԻՆ ՄԱՆՈՒԿ ՆԱԽԱՐԱՐ[1] ՅԱՆԴԻՄԱՆԷ ԶՅԱՋԿԵՐՏ

(ԵՂԻՇԷ, Գ.)

Հպարտացաւ բարձրացաւ ի միտս իւր (Յազկերտ), ի վեր քան զմարդկային բնութիւնս ընդվզեալ ապարթանէր. ոչ միայն յիւրս մարմնական պատերազմացն, այլ մեծ ումն գինքն կարծէր քան զբնութեան հայրենի կարգին. վասն այնորիկ կեղծաւորութեամբ թաքուցանէր գինքն՝ ըստ կարծեացն. և որպէս երեւէր իմաստնոցն՝ յանմահից իմն կարգի դնէր գինքն։ Եւ յոյժ էր ցասուցեալ ընդ անուանն Քրիստոսի, յորժամ լսէր՝ թէ տանջեացաւ, խաչեցաւ, մեռաւ և թաղեցաւ։

Իրրեւ այսպէս օր ըստ օրէ ի սոյն միտս ցնորեալ դանդաչէր, մի ումն ի մանկագոյն նախարարացն Հայոց, ընդդէմ բանս եղ և ասէ. Արքայ քաջ, դու ուստի՞ գիտես այդպիսի բանս խօսել ընդ Տեառնէ։ Եւ պատասխանի թագաւորն և ասէ. Իմ իսկ առաջի ընթերցան զգիրս մոլորութեան ձերոյ։ Եւ պատասխանի անդրէն պատանեակն և ասէ. Ընդէ՞ր, արքայ, ցայդ վայր միայն հատուր ընթեռ-

1. Վարեգնի պատկերս առնուած է ի Շարականէ՝ գրուած ի Ֆռնուս Կիլիկիոյ, յամի 1578։

նուլ, այլ յառաջ եւս մատո՛ զկարդացուածն, և լսես անդ զյարութիւնն, զյայտնութիւնն առ բազումս, զվերացումն յերկինս, զնստեալն ընդ աջմէ Հօր, զխոստումն երկրորդ գալստեանն, զհրաշակերտ յարութիւնն առնելով բոլորեցունց, զհամառօտ[1] հատուցմունն արդար դատաստանին։ Իրրեւ լուաւ զայս թագաւորն՝ ի խոր խոցեալ՝ վեր ի վերոյ ծիծաղեցաւ. ասէ. Ամենայն այդ խաբէութիւն է։ Եւ պատասխանի գինուորն Քրիստոսի և ասէ. Եթէ հաւատարիմ են քեզ մարմնաւոր չարչարանքն նորա, հաւատարմագոյն եւս լիցի քեզ երկրորդ ահաւոր գալուստն նորա։

Եւ զայս լսելով թագաւորին՝ բորբոքեցաւ իրրեւ զհուր հնոցին ի Բաբելոն, մինչեւ իւրքն իսկ անդէն դեռ եւս իրրեւ զՔաղդէացիսն այրեցեալ լինէին։ Յայնժամ զրոլոր բարկութիւն սրտմտութեանն եհեղ յայրն երանելի, որում անուն էր Գարեգին։ Կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք զերկեամ մի տուաւ ի չարչարանս, և հանեալ ի բաց զերեսութիւնն ի նմանէ, ընկալաւ զվճիռ մահու[2]։

1. Վերջին անփոփոխ վճիռ դատաստանի։

2. Փափագելի էր զիանալ՝ որ երկրի կամ գաւառի տէր էր։ Վարդանանց պատերազմի մէջ նահատակեալ իշխանաց կարգին դասէ զսա մեր երդապետն Ս. Ղեւոնդ. Շնորհալի. և զի նախ քան զՎարդանանս նահատակեցաւ նա, կ'երեւի ծանօթ Նորահրաշ չարչարանին մէջ.

« Յառաջեալ յամենեցունց՝ գլուխ և աւարտ մարտիրոսաց,
» Նախաշաւիղ գալով բարեաց՝ Յառաջադիմին Գարեգին »։

Եւ զի նոյն ինքն Շնորհալի՝ Եղիշէի խօսքը կրկնելով կ'ըսէ ասոր համար.

« Երկոքեանքն հարազատովք՝ ընտրելագոյն նահատակօք »։

իսկ Եղիշէ կ'աւելցընէ, թէ սա Արծրանեան ցեղէն էր, և երկու եղբարբք ու 18 ցեղակիցներով նահա-

ՃԼԱ

ԲԱՆՔ ՎԱՐԴԱՆԱՅ ՅԱՏԵՆԻ ՅԱՋԿԵՐՏԻ

(ԴԱՋԱՐ ՓՈՐՊԵՏԻ· ԻԶ)

Յառաջ կացեալ աներկիւղ և քաջասիրտ մօտ՝ Վարդանայ Մամիկոնէից տեառն և Հայոց սպա-
բապետի, պատասխանի ետ թագաւորին Յազկեր-
տի, առաջի ամենայն բազմութեանն, և ասէ. Եթէ,
Բազումք են յայս երից աշխարհաց[1] յազատօրե-
րոյ, որք են աւագ քան զիս և գահու և աւուրբք,
և շատ են որ ի խոնարհ են. զվաստակ և զհպա-
տակութիւն՝ զոր ծառայից պարտ է առ իւրեանց
տէրն և առ թագաւորն առնել, զայն՝ նախ դու
որ ամենեցուն տէրդ ես՝ և ապա ամենայն Աբիք,
զիմ և զիւրաքանչիւր ի նոցանէ մինչեւ ցայժմ՝ քաջ
գիտէք, և ոչ ինչ պիտոյ է ինձ և կամ ումեք ի
նոցանէ՝ զիւր զվաստակ և զսպաս ծանուցանել ձեզ:
Ցայսմ հետէ և յառաջ՝ ի մտի այսպէս եդեալ
իմում անձինս, զի եթէ և զոյ հնար առնել զմի
անձն իմ բազում անձինս, զոյժ և զյօժարութիւն
կամաց առաւել եւս քան զնոսին, զկեանս և զկա-
բասի՝ որ գամ մի յիմում տանս կայ՝ ձեր առնե-
լով, և ի վերայ Աբեաց տեառն և ի վերայ Աբեաց
աշխարհի՝ եդեալ է ի մտի՝ մաչել: Բայց զօրէնս՝
զոր ուսայ յԱստուծոյ ի մանկութենէ իմմէ՝ թո-
ղուլ, և ընդ երկիւղի մարդոյ փոխանակել՝ չէ հը-
նար: Զի եթէ ի մարդոյ ընկալեալ էր զարդար
վարդապետութիւնն՝ զոր հաստատեալ է ի միտս

*տակեցաւ, ապա ուրիշ անձն է պատանի նահատակին:
Իսկ այդ Յառաջադէմ մականէրն՝ բիւզանդական զի-
նուորութեան ատաճան մի է:*

1· Ասյսինքն. Հայոց, Վրաց և Աղուանից:

*իմ, գիտէի թէ ճշմարիտ են և ուրանալի, ողոր-
մելի զանձն իմ համարէի. թող թէ օրէնս, զոր ըն-
կալայ և ուսայ ի բերանոյ Աստուծոյ, վաճառել
ընդ երկիւղի մարդոյ և անօտի փառաց. քաւ լիցի:
Իմ պատասխանիք այդ են, յորում ցանկամ մե-
ռանել, քան թէ կալ ուրացութեամբ առանց Աս-
տուծոյ. իսկ այլքս, որ կան առաջի ձեր՝ ամենե-
քեան՝ որ են ի քրիստոնէական կարգէ, բաւական
է իւրաքանչիւր ոք ընդ անձին իւրոյ տալ պա-
տասխանի:*

*Եւ լուեալ այլ ազատանոյն, որք էին յերից աշ-
խարհաց՝ Հայոց, Վրաց և Աղուանից, զպատաս-
խանիսն աներկիւղութեամբ զսպարապետին Հայոց
Վարդանայ, և զաստիկ սրտմտութիւն զտեսլեանն[1]
թագաւորին, եառն պատասխանի և ասեն. Ներ-
եսցէ մեզ արքայ՝ աւուրս ինչ, խորհել ընդ մի-
մեանս, և առնել ձեզ պատասխանիս հաստատա-
պէս միաբանութեամբ. վասն զի յաղագս հոգւոց
ընտրողութեան՝ խնդրին ի մէնջ պատասխանիքդ,
յորում կայ առաջի գիւտ և կամ կորուստ յաւիտե-
նական. և ոչ է պարտ ասիլով և անքննին մտօք ա-
ռաջի ձեր առնել այդպիսի մեծի խնդրոյ դարձուած
բանից. քանզի զնախնի և զսովորական հայրենի
աւանդութեան մերոյ խնդրէք զպահպանմն, և ըզ-
յանձնառութիւն բռնադատէք օրինաց՝ որոց ոչ
եմք եղեալ մեք և կամ հարք մեր՝ ընդունողք և
սիրողք: Եւ թագաւորին ամենայն աւագանեաւն
յանձն առեալ հաւանեցան բանիցն. և չնորհեալ
նոցա զժամակալութեան խնդիրն, արձակեցին զա-
տեանն:*

1· Թագաւորին արտմութեամբ թմրուած դէմքը:

ՃԼԲ

ՀՐԱՊՈՑՐՔ ՆԱԽԱՐԱՐԱՑՆ ԱՌ ՎԱՐԴԱՆ[1]

(ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ. ԻԸ)

Միաբան եկին առ տէրն Մամիկոնէից և Հայոց՝ զօրավարն Վարդան. և յայտնեալ նմա զխորհուրդն՝ պատմեցին զիւրեանց զիմաստս զամենայն և զոր խորհեալ էին առնել. յաւելեալ ի նոյնս թախանձումն և աղերս ամենեցունց, ասէին. Հայեաց, ասեն, ի մեզ անընդոստ[2] մտօք. հայեաց, ասեն, և յառաջիկայ դիպմունս բազմութեան բիւրոց մարդկան՝ պատահելոց չարաչար աղէտից. յիշեա զհաւանաչնս մարց. զմտաւ ած զտղայոց ողբումն, զծեծոց ատիպով և զպառաւանց վարելոց յօտարութիւն, և այլ ամենեցունց դիպելոց այսպիսի անհնարին և չար վչտաց: Թէ լոկ միայն մարմնոյ աչխատութեամբ և մահուամբ էր կրել զայս ամենայն, համայն ծանր էր և դառն և արժանի լալոյ, թող թէ առ հասարակ առաջի հոգւոյ և մարմնոյ գայթակղութիւն և կորուստ: Եւ ոչ եթէ լոկ հարեւանցի լինի հասելոյ վտանգիս վախճան, այլ ցանգ մածեալ խաւար ամբարշտութեան թանձրամածութեամբ՝ ունելոց է զսուրբ եկեղեցի մեր և զժողովուրդս, զկանայս և զծնունդս, մինչեւ յաւիտեան: Եւ եթէ գու միաբանելով մերովք խորհըրդոյս՝ կարասցես առ վայր մի հաւանեցուցանել զքո միտգ, գիտեմք զի ողորմութեան դիպիմք բազումքըս. այլ և ոչ ընդհանուր եկեղեցիք երեցունց աչխարհացն՝ մատնին յաւեր, և ոչ վարին ի գերութիւն բովանդակ աչխարհացն բնակիչք, զի ոչ չարժի սուրբ հաւատն ի հիմանէ. այլ թէ և առ վայր մի դղորդ հասանի՝ կանգնէ հաստատ անդրէն և հաստատէ զՀայկազեան: Եւ այս լինի հաստատ այսպէս, եթէ կարասցես վայր մի հիւանդանալ վասն մեր, որպէս զի ողջացուցցէ զմեզ քեւ հանդերձ՝ ամենագթածն բժիշկ, Բանն Աստուած:

Եւ լուեալ զայս ամենայն բանս զօրավարին Հայոց Վարդանայ տէառն Մամիկոնէից՝ ի նախարարացն Հայոց, Վրաց և Աղուանից, ամենեւին ոչ առնու յանձն լսել և հաւանել այսպիսի բանից, և կամ բնաւ հաղորդ լինել այսպիսի խորհրդոյ. այլ յոյժ խռովեալ մեծաձայն գոչմամբ. Թէ, Մի լիցի ինձ տալ արարչին իմում՝ պատճառանօք և կամ ճըշմարտութեամբ, և մի ուրանալ զայն՝ առաջի անօրէնն և մահկանացու ազգի, որ ուրանայ զուարացոցս իւր առաջի Հօր և հրեշտակաց սրբոց: Քաւ լիցի ինձ յաղագս զմտաւ ածելոյ զկարիս և զվիչտս ըզկնոջ և զորդւոց և զազգի, տալ ի մոռացումն զոր ասէն, թէ, Որ սիրէ զկին և զորդիս՝ առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի: Այլ դուք որ այժմ յերեսուն աչխարհաց եկեալքդ էք, տանուտէրք և սեպուհք, չնորհիւ սղոմութեամն Քրիստոսի լի էք ամենայն զօրութեամբ և լաւութեամբ. զի ըստ աստուածեան արուեստի առաւելեալ էք ամենայն հրահանգիւ, և ճանաչիք երեւելի ի մէջ սպասիս և ի մէջ ամենայն ազգաց, և ի մարտս և ի կազմ քաջութեամբ. իսկ զճմարիտ և զարդար հաւատն՝ ուսեալք էք յԱստուծոյ ի ձեռն առաքելանման հովուին սրբոյ նահատակին Գրիգորի և նորին զաւակի. բաւական էք ընդ իւրաքանչիւր անձին տալ պատասխանի. և որպէս խորհիք՝ կարիցէք առնել: Այլ ինձ՝ ոք ի ձէնջ՝ զոր ինչ անհնար է ինձ լսել բանիւք թող թէ և առնել արդեամբք, մի՛ ասէք:

Եւ լուեալ զայս ամենայն զխօսս՝ բազմութիւն նախարարացն աչխարհացն երեցունց՝ ի զօրավա-

1. Դրօշուանց կամ կենդանութեամբ զՔրիստոս ուրանալոյ, որպէս զի Յազկերտ գոհ ըլլայ և Հայք ազատին անոր չարութենէն:
2. Անխռով. հանդարտ սրտով:

ըէն Հայոց ի տեառնէն Մամիկոնէից Վարդանայ, թէպէտ և յանհնարին տրտմութիւն ընկղմեալք խռովէին, այլ սակայն ոչ ինչ թոյլ առեալ լինէին ի բանիցն առաջարկելոց. իմացեալ և առ կարիս վտանգին և այլ հնարս մաղթանաց: Եւ ժողովեալք ի մի վայր՝ կոչէին առ ինքեանս զիշխանն Մոկաց զԱյրտակ[1], և զնա առաւել փութացուցանէին անձնձոյթ խանդաղատանաւք, նստիլ առանձինն և խօսել ընդ սպարապետին իւրեանց՝ տեառն Մամիկոնէից տոհմին: Եւ նա ինքն էր այր հասեալ, մտացի և քաջ, և տէրն Մամիկոնէից Վարդան առաւելապէս պատուով սիրէր զԱյրտակ: Որ և հասանելով հրամանի նախարարացն Հայոց, յանձն առնոյր ամենայորդոր փութով չանալ ընդ նմա, յաբաժամ ազաչել. զոր և առնէր իշխանն Մոկաց Այրտակ, մերթ առանձինն և մերթ հանդերձ աւագանեաւն Հայոց՝ ըստ յանձնառութեանն իւրոյ. որք ոչ դադարէին զցայգ և զկեռկ խօսել ընդ նմա ըզնոյն բանս և զազերս ի բազում աւուրս: Զորս և ստիպադոյնս և անհագիստ ի նոյն խորհուրդս ձեպեցուցանէր զամենեսեան՝ բդեշխն Վրաց Աշուշայ, որ էր այր խելացի և խորհրդական, և ունէր կին յազգէն Աբծրաւնեաց՝ զբենի մեծի սեպհոյ Մամիկոնէից Վարդանայ, որ եւս առաւել յորդորէր յաւաչազրեալն Աշուշայ զամենայն բազմութիւն նախարարացն Հայոց և զՏէրն Մոկաց զԱյրտակ, խօսել ընդ զօրավարին Հայոց Վարդանայ՝ զայս ամենայն, առանց յապաղելոյ: Եւ ինքն գնոյն խօսել ընդ նմա ոչ կասէր, անձանձրոյթ բողոքելով, և ստէպ հայեցուցանելով յիրսն, թէ որչափ՝ յանհնարինն քո՝ կորուստ երեցունց աշխարհացն լինի, և ի հաւանելն և յանձն առնուլն՝ գիւտ բազմաց, և անձին ապաշխարութեան ակնկալութիւն:

Եւ տեսեալ նախարարացն և սեպհացն երեցունց աշխարհացն՝ զկամս սպարապետին Հայոց Վարդանայ՝ այնպէս անչարժս և անհաւանս ի յորդորմունս խօսից նոցա և ազաչանաց, բերեալ հարկաւորէին այնուհետեւ մատուցանել նմա ի սուրբ գրոց առակս զիպողս, ըստ պատշաճի հանգիպելոյ ի ժամանակին, որք տեղեկագոյնք էին ի նոսա գրոց եկեղեցւոյ. յիշեցուցանելով նմա՝ որպէս առն ուսելոյ և տեղեկի, – քանզի յայժ հմուտ էր և ընդել գրոց վարդապետութեան, ուսեալ և խրատեալ ի սուրբ հայրապետէն Իսահակայ՝ ի հաւոյն իւրմէ, – զգրեալսն Սրբոյն Պօղոսի յազագս Աբրչին, թէ որ ոչն գիտէր մեզս, վասն մեր մեզս արար[1]: Եւ դարձեալ, զինքեան իսկ Պօղոսի զիջանելն, և նզով զանձն տենչացեալ լինել՝ վասն ազգատոհմին փըրկութեան, զոր գրեալ ասէր ի Թղթի Հռովմայեցւոց. եթէ, «Ուխտիւք խնդրէի ես իսկ ինքն նզովեալ լինել ի Քրիստոսէ, վասն եղբարց իմոց և գաւակաց և ազգականաց ըստ մարմնոյ, որք են Իսրայէլացիք. որոց որդեգրութիւնն և փառքն և կտակարանքն և օրէնդրութիւնքն և պաշտօնն և աւետիքն»: Ա՛ռ յանձն, ասեն, և դու, լինել վասն մեր առակաւորս, նզովս. չես մեծ և առաւելեալ ի հաւատս արդարութեան՝ քան զսուրբ առաքեալն Քրիստոսի Պօղոս. բայց ժողովուրդքն Հայոց, Վրաց և Աղուանից՝ յայժ չատ են քան զժողովուրդն Իսրայէլացւոցն Հրէից:

Եւ յորժամ զայսպիսի բազում բանս և ստէպ թախանձանօք զազաչանս դնէին առաջի զօրավարին Հայոց Վարդանայ՝ երեցունց աշխարհաց աւագ տանուտեարքն և սեպուհքն, բերէին այնուհետեւ և զսուրբ աւետարանն, եդեալ ամենեցունց առհասարակ զձեռս ի վերայ՝ երդնուին ասելով. Եթէ

1. Որովհետեւ աշխարհին չփոթութեան ատեն՝ Վարդան քաշուեր էր այդ Մոկաց իշխանին քով:

1. Շատ ոգիտաբար Հասկըցեր են այդ Առաքելոյն խօսքը. Քրիստոս ոչ թէ մեզք ըրաւ, այլ ինք զինքն մեզք կամ մեղաւոր համարեցաւ Հօր Աստուծոյ առջեւ, որպէս զի ինքն պատժաւի և մարդիկ ազատին:

դու եւեթ առ վայր մի կարասցես յանձն առնուլ պատճառանօք՝ դասացեալս թագաւորին, և զերծուսցես զմեզ յորոգայթադիր թշնամւոյն յարձակմանց, ամենայն ատացելոց ի քէն լուիցուք և առթասցուք. դնելով զանձինս մեր ի վերայ ուխտին սրբութեան, և հեղլով զարիւն մեր ի վերայ ամենայն աշխարհին փրկութեան: Եւ եթէ դիպեսցի մեզ թողուլ զաշխարհ և զամենայն ստացուածս և փախչել յօտարութիւն, ընտրեսցուք, հանդերձ կանամբք և որդւովք. և սիրով յանձն առցուք զաղքատութիւն և զմուրոդութիւն. միայն ի բարկութենէս եւեթ ապրեսցուք: Եւ որ ոք թուլացեալ ի բանիցս յայսցանէ՝ ատեսցէ ուխտիս այսմ, և նենգութեամբ որոշեսցի յերդմանէ սուրբ աւետարանին, և ի միաբանութենէ բազմութեանս այսորիկ, որոչեալ ձեղքեսցի նա՝ նման Յուդայի, որ ձեղքեալ մեկնեցաւ ի գնդէն սուրբ առաքելոցն. և բաժին այնպիսւոյն առանց ապաշխարութեան և թողութեան՝ ընդ նմին լիցի, մատնեալ անչէջ բոցոյն, զոր պատրաստեաց Աստուած սատանայի և արբանեկաց նորա: Եւ որ ինչ ինձաք և կամ դերութիւնք և դրդմունք աշխարհաց երեցունց հասցեն, յանձնէ այնպիսւոյն և միաբանելոցն ընդ նմա՝ խընդրեսցէ վրէժ[1] վրէժխնդիրն՝ մինչեւ ցյաւիտեան: Իսկ զբարի և զօգտակար պահպանութիւնն՝ զոր չնարհեալ Փրկչին Քրիստոսի պարգեւեսցէ բազում ոգւոց երեցունց աշխարհացս, վասն քո առ վայր մի հաւանելոյդ մեզ, եղիցի մեծացեալ ժառանգութիւնն այն ի փրկութիւն թողութեան ոգւոյ քո և ազգի մինչեւ ցյաւիտեան:

Եւ լուեալ պայս ամենայն բանս ի բերանոյ երից աշխարհաց ազատանոյն՝ զօրավարին Հայոց Վարդանայ տեառն Մամիկոնէից, տեսեալ և գիտեալ ամենեցուն աշխատութեամբ սուրբ զաւետարանն ուխտին, որոյ առաջի ուխտեցին և աւանդեցին կենօք, յարտասուս հարեալ, յանձն առ վայր մի զպատճառանօք վիրաւորիլն՝[1] վասն երեցունց աշխարհացն և բազմութեանց ի նոսա արանց և կանանց:

Եւ այսպէս միաբանեալք ամենեքեան՝ յանձն առնուին կատարել խաբէութեամբ դէրաման թագաւորին. և երթեալք ի տուն մոխրանոցին, կէսքն ի նոսա ցուցանէին, այլ ոչ ամենեքեան, զպատճառանօք և ոչ ճշմարտութեամբ վիճնարհուին գըլխոց իւրեանց՝ անոսի պաշտաման: Եւ ամանք թէպէտ և գիտէին զանյարատական գլորումն[2], այլ ցանկացեալք աշխարհիս փառաց՝ փախանակեցին ըզփառս անեղծին Աստուծոյ՝ ընդ եղծանելի և անցաւոր կենաց աշխարհիս:

ՃԼԳ

ԵՐԿՐՈՐԴ

ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՌ ՅԱԶԿԵՐՏ

(ԳԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ· ԻԸ)

Սպարապետն Հայոց Վարդան Տէրն Մամիկոնէիցն, կարգեալ զիւրն զառանց պատճառանաց զանսուտ բանս և զլինելոց իրս, որպէս ի դէմս գովութեան թագաւորին և ամենայն բազմութեան աւագանւոյն Արեաց, ասէր այսպէս. Թէ, Ջիմոյ զնախանեացն զկպատակութիւն և զվատակ՝ զոր յայս դուրս և առ ձեր թագաւորութիւնդ արարեալ

1· Ա՛հաւոր վայրկեան. սատակագոյն պատերազմն սրտին Վարդանայ, քան իր զինուց պատերազմներն:

2· Գլորում մի՝ որոյ ոչ յատակ կայ ոչ ծայր. որ է յաւիտենական պատապարտութիւն՝ կամաւ յօժարութեամբ ուրացողացն:

1· Յօր. միայն խնդրեսցէ վրէժ խնդիրն:

է, ի ժամանակէ յորմէհետէ կարգեալ եմք ի ձեր ծառայութիւնդ, դուք ամենեքեան քաջագոյն գիտէք. և ինձ ոչ է պիտոյ յաղագս այդպիսի իրաց մի ըստ միոջէ տեղեկացուցանել զձեզ, զոր առուգագոյն առաւել ճանաչէք քան զիս. իսկ թէպէտ և չատ նուազ եմ քան զիմ նախնիսն, սակայն որչափ կարն էր յիս, եղեալ էր ի մտի արդար վաստակօք հաճել զմիտս ձեր. և ուր հասեալ էի ի գործ՝ ի ձեր հրամանէ, տեսեալ էր զօրագլխաց ձերոց և իմ ընկերաց՝ ըստ իմ ուժոյ միամտութեամբ զիմ զգործն և զվաստակն. բայց արդ յայսմ հետէ այսպէս կամք են, չնաման զի թէ ցայժմ գործեալ ինչ իցէ՝ և ոչ արժանի անուան կամ գովութեան, յայսմ հետէ հնարիմ ամենայն զօրութեամբ և ուժով՝ օգնականութեամբ Աստուծոյ՝ գործել գործ այնպիսի, զոր ոչ առաջի ձեր Աբեաց, այլ և ի կայսեր դրանն և յայլ ազգս՝ պատմեսցի համբաւն այն մինչեւ ցյաւիտեան:

Եւ զայս բան՝ որպէս ի չնորհէ Աստուծոյ՝ սպառպետին Հայոց Վարդանայ տեառն Մամիկոնէից ասացեալ. զոր հաչակելոց էր զնահատակութիւնն որ առ Աստուած՝ ի դարս յաւիտենից: Եւ զայսպիսի ասացմունս լուեալ թագաւորին Պարսից և ամենայն աւագանոյ դրանն, մեծաւ չնորհակալութեամբ զարմացեալք գովեցին զնա և գոհացան. քանզի ծածկեաց Աստուած զրան խոստանացն՝ զոր ասաց գործել սպարապետն Հայոց Վարդան, յաղագս մեծի անուանն համբաւոյ, զոր պարգեւեաց նմա Աստուած, զանուն նահատակութեան յազգս յաւիտենից[1]:

Եւ հրաժարեալք այնուհետեւ յամենեցունց երեքեան աշխարհքն... հրաժարեալք և ի միմեանց՝ գնացին յիւրաքանչիւր աշխարհս:

1. Ա՛հա 1450 տարի է՝ որ հաչակաւի յեկեղեցիս մեր և ի սուրբ պատարագի՝ անմահ նահատակութիւն Վարդանայ և ընկերացն. և հաչակեսցի մինչեւ ի կատարած աշխարհի՝ ի քաջահաւատ ազգայնոցն:

ՃԼԴ

ՍՈՒՓ ՀԱՅՈՑ ԸՆԴ ՈՒՐԱՑՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՐԱՐԱՑՆ

(Ղազար Փարպեցի. Իթ)

Արդ, եկեալ հասանէին տանուտեարքն Հայոց՝ հանդերձ սեպհաքն և որ ընդ ինքեանս, յաշխարհս Հայոց, ողջք և ոչ ողջք, կենդանի կիսամեռք. որք ոչն տեսանէին ըստ յառաջ լուսաւոր եկիցն ողջամբ՝ յայնպիսի հեռաւոր ճանապարհէ: Եւ ելեալ ընդ առաջ նոցա դասք պաշտօնէիցն Քրիստոսի, բերելով ընդ ինքեանս զնշան կենսատու խաչին և զնըշխարս սրբոյ առաքելանման նահատակին Գրիգորի. զձայն սաղմոսաց՝ զոր երգեաց մարգարէն Դաւիթ Աւուրր Հոգւոյն չնորհիւ, որում և ինքեանք երբեմն ձայնակից եղեալք՝ առաւելագոյն քան զպաշտօնեայսն նուագէին, զերգս երկնաւոր ցնծալից ուրախութեամբ: Այլ անդ էր լսել զձայն լալոյ և զձայնս գուժի, գոչիւնս ողբոց և բարբառ ճչոյ. տղայք անձկագոչք ի գրկաց հարց իւրեանց պակուցեալք փախչէին, կարծելով այլափոխեալս իմն, և ոչ զնոյնս նկատելով կերպարանս՝ զարհուրէին. ահէպ հայելով յերեսս մարցն, զոր տեսանէին կողկողագին միշտ և արտօսրաբուղխս. յաղագս որոյ և ինքեանք յարտասուս հարեալ տղայքն, ոչ ոք կարէր լռեցուցանել ի գայեկային կամ ի գաստիարակացն[1]: Ընդ որ հայեցեալ այնոցիկ՝ որք պատճառանօք և ոչ ճշմարտութեամբ ուրացողքն էին, փութանակի և առ ժամայն կամէին յառնել և ընդ

1. Ի՞նչ սրատեսուչ և զգեցիկ տեսրագրութիւն. արժանի և պատկերահանութեան, բայց՝ Խափայէլեան ճարտար գրչաւ:

ինքեանց սուրն ելանել[1]. որոց ոչ պիտէր և առ վայր մի կեալն, քան թէ զայնպիսի տեսանել զաղէտս և ժուժկալել: Որք՝ զկերակուրս ուրախութեան, ըստ բանի սաղմոսերգին, իբրեւ զմոխիր ուտէին, և զըմպելի իւրեանց արտասուօք խառնէին. քանզի ոչ ոք հաւանէր ընդ նոսա կամակից լինել սեղանոյ, ոչ կին, ոչ որդի, ոչ ազատ, ոչ ծառայ ոք, և ոչ սպասաւորք:

Եւ էր այնուհետեւ տեսանել զամենեսեան քակտեալս ի միմեանց և պատառեալս. և զորոց քաղցր և ախորժակ բարբառ Փրկչին Քրիստոսի, որ ասէր. Թէ, են և այլ ոչխարք՝ որ ոչ են յայսմ գաւթէ, պարտ է և զնոսա ածել այսր, զի եղիցին մի հօտ միոյ հովուի ճշմարտի, զոր Աստուած միացոյց. և կատարէր զասացեալսն. յանկարծակի աքցատեալ[2] թշնամւոյն՝ ցրուեաց վեր ի վայր, և արար իբրեւ զհօտ որոյ ոչ գուցէ հովիւ: Վասն ամենայնի այսորիկ՝ սուգ առեալ կածէին կանայք աւագ աղատացն և այրիք ի հրապարակս, մանկամարդ առնականաչք, օրիորդք ի սրահս դռնափակեալս, հարսունք ի սենեակս: Սուրբ եպիսկոպոսք պատուական քահանայիւք և եկեղեցին ուխտիւ, ծերովք և տղայովք և ամենայն ժողովրդոյն բազմութեամբ՝ կառաչ բարձեալ լային ի տանն Աստուծոյ: Եւ էր տեսանել ծփեալ արեանց հոսմամբք՝ զամենայն դէմս ուղղափառ մարդոց:

1. Իրենց սուրով ինքզինքնին կ'ուզէին սպաննել, տեսնելով իրենց ընտանեաց սուգը:
2. Սատանան՝ սուքով զարնելով՝ գլօրեց զանոնք:

ՃԼԵ

ՈՒՐԱՑՈՒԹԻՒՆ ՎԱՍԱԿԱՅ

(ԵՂԻՇԷ, Դ)

Այնօրէնն Միհրներսեհ, քանզի յառաջագոյն ըստուգեալ դիտէր զամբարշտութիւնն Վասակայ, և յայնմ ժամանակի եւս յղէր և կոչէր զնա առ ինքն: Որպէս նոքա իսկ յառաջագոյն գատեալ և որոշեալ էր ի միաբանութենէն Հայոց, ևկն և յանդիման եղեւ. և ստուգէր զիւր հաւատարմութիւնն և զհայոց անիրաւ ապստամբութիւնն: Յաւել և պատմեաց եւս առաւելաբանութեամբ՝ զոր ինչ ոչ էր գործեալ Հայոց, և կամէր ընտանեբար ընդ միտ մտանել անօրինին:

Բայց նա[1] թէպէտ և ի ներքոյ յոյժ դասովէր զնա, այլ արտաքին դիմօք մեծարեաց զնա, և եդ առաջի նոցա զմեծամեծ պարգեւս երկրաւորս. և խոստացաւ նմա իշխանութիւն՝ աւելի քան զոր ունէր. և հայեցոյց զնա ի կարծիս անոտիս, որ ի վեր էր քան զիւր տէրութիւնն. իբր թէ անկ իցէ նմա հասանել մինչ ի թագաւորական վիճակն. բայց միայն հնարս իրացն խնդրեսցէ, թէ օրպէս քակտեսցի միաբանութիւն ուխտին Հայոց, և թագաւորին կամքն կատարեսցին յաշխարհին:

Եւ իբրեւ յանձն էառ զամենայն ինչ՝ երթալ զկնի կամաց նորա, գիտաց և ծերն դառնացեալ, երթէ թմրեալ և ցնորեալ և քակեալ է ի հաստատութենէ միաբանելոցն. յոյժ մխիթարեցաւ ի միտս իւր տրտմեալս. և ած զմտաւ՝ թէ և զամենեսեան այսպէս կարիցեմք որսալ յանգիւտ կորուստն: Եւ

1. Այսինքն Միհրներսեհ՝ որ սրտանց կ'ատէր ըզՎասակ, այլ կեղծաւորութեամբ գովէր:

իւրոյ հնարագիտութեանն տայր զիմաստութիւնն. և այնմ՝ ոչ էր տեղեակ, թէ նա իւրովի զիւր անձն զատեալ և որոշեալ է ի սուրբ եկեղեցւոյն, հեռացեալ և օտարացեալ ի սիրոյն Քրիստոսի:

Քանզի մոռացօնք եղեն նմա գալստեան Որդւոյն Աստուծոյ, և ոչ յիշեաց զքարոզութիւն սուրբ առետարանին. ոչ ի սպառնալեացն զանգիտեաց, և ոչ յաւետիսն մխիթարեցաւ: Որպացաւ զաւազանն՝ որ յղացաւ զնա, և ոչ յիշեաց զընկալուչ Սուրբ Հոգին՝ որ ծնաւ զնա. անարգեաց զմկրտիչն պատուական՝ որով սրբեցաւն, և առ ոսն եհար զաբիւնն կենդանի՝ որով և քաւեցաւն ի մեղաց. զընչեաց զդիր որդեգրութեանն, և իւրովք ձեռօք խորտակեաց զհաստատուն կնիք մատանւոյն[1]: Եւ ի թուոյ երանելեացն, և ապստամբեցոյց ընդ իւր զպատուս. ձեռն արկ կամակորութեամբ, և եմուտ յորդեգրութիւն դիւապաշտութեան, և եղեւ ամանչարին, և եղից զնա աստանայ ամենայն խորամանկութեամբ. ի ձեռն էառ իբրեւ զվահան, և ագաւ զնա իբրեւ զրահս, և եղեւ իբր զինուոր կատարեալ կամաց նորա: Մարտեաւ հնարիւք ընդ խմաստունս, և յայժ խորագիտութեամբ ընդ գիտունս, յայտնի՝ ընդ անմեղս, և ի ծածուկ՝ ընդ խոհերգականս. ձեռն էարկ և եհան զպատուս ի գնդէն Քրիստոսի, և խառնեաց ի գունդս դիւաց: Եւ ի բազում յայլ տեղիս գողարար սողեցաւ և եմուտ իբրեւ զօձ ի մէջ ամրացելոցն. և խրամ հատեալ յափշտակեաց և էառ և եհան յայտնութեամբ՝ զպատուս յպատաց և զպաղմադոյնս ի չինականաց, և զայլ ոմանս յանուանեալ քահանայիցն[2]:

1. Հաւատարիմ քրիստոնեայ մնալու երդումը կոտրեց:

2. Այսքան մեղադրութեամբ յայտնի եղիշէ, թէ ոբքան վիրաւորուած էր իր սիրան և իրեն պէս բարեպաշտից՝ Վասակայ մատնութենէն:

Եւ բովանդակ զիւր բոլոր աշխարհն՝[1] ապստամբեցոյց յուրացութիւն. ոչ միայն ըստ աշխարհին բազմութեանն, այլ և զպատուս յոխտէ եկեղեցւոյն. մանաւանդ սուտ երիցամբքն, որով գործէր զչարիսն. երէց մի Զաւիգակ անուն, երէց մի Պետրոս անուն, սարկաւագ մի Յահակ անուն. զորս յղէր առ անմեղ մարդիկ, խաբէր և պատրէր. սուրբ առետարանսն երդնուին և ասէին, եթէ, ի թագաւորէն չնորհեացի ամենեցունց քրիստոնէութիւնդ: Եւ այսպէս խորամանկ խաբէութեամբ հանէին զպատուս ի սուրբ միաբանութենէն, ածէին և խառնէին ի գունդս ուրացողացն:

Եւ ժողովեաց զամենայն գայթակղութիւն[2], և արար գունդ զօրաց բազմաց. զրեաց և եցոյց զպատուս ի նոցանէ յականէ յանուանէ մեծ հազարապետին, և զիւր քաջութիւն արութեանն, մեծապէս պարծելով, որպէս աչակերտեաց ի մոլորութիւն խարէութեան, և բաժանեալս և երկչեղս երեւեցոյց զզօրսն Հայոց:

ՃԼԶ

ԽՐԱԽՈՑՍ ՀԱՅՈՑ ԸՆԴԷՄ ՊԱՐՍԻՑ, ԵՒ ՅՈՐԴՈՐԱԿ ՎԱՐԴԱՆԱՅ

(ԳՂիշէ, ե)

Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր. և այնպէս աներկիւղս առնէ զմարդիկ, իբրեւ զանմարմնին զօրս հրեշտակաց. որ-

1. Սիւնեաց աշխարհը, որուն նախարարն էր. մեծին Տրդատայ առեն այլ Սիւնիք՝ Պարսից կողմակից կ'ըլլային:

2. Ամեն վատ, թուլակրօն աշխարհականէր մարդիկ:

պէս անգամին ի սկզբանէ է տեսանել՝ զբազումս բազում անգամ ի բազում տեղիս: Մարդիկ՝ որ սիրովն Աստուծոյ իրրեւ զինու վառեալ էին, ոչ ինչ խնայեցին զանգիտելով, իրրեւ անարի գոլով վատասիրաք, կամ ի մահ անձանց, կամ յափըշտակութիւն ընչից, կամ ի խողխողումն սիրելեաց, կամ ի գերութիւն ընտանեաց, ելանել ի հայրենի երկրէն, և անկանել ի սարկութիւն յօտարութեան: Առ ոչինչ համարեցան զայս ամենայն անցս չարչարանացն. այլ միայն միաբան կալ ընդ Աստուծոյ, զի ի նմանէ միայն մի՛ գերի ելցեն. և ամենայն երեւելի մեծութեանս զնա բաւական համարեցան, ընտրեալ ի միտս իւրեանց: Եւ զուարթութիւնն՝ մեռելութիւն վարկանէին, և զմահ վասն Աստուծոյ՝ անանց կենդանութիւն, և ծառայել յերկրի և ընկենուլ զանձինս յօտարութիւն՝ ընդ Աստուծոյ դիւաց[1]: Որպէս յայսմ ժամանակի տեսաք աչօք մերովք, զի զնոյն նահատակութիւն նահատակեցաւ և աշխարհս Հայոց:

Քանզի, իրրեւ եաես մեծն Վարդան՝ զերկպառակութիւն աշխարհին իւրոյ, ոչ ինչ թերահաւատութեամբ զանգիտեաց. թէպէտ և ստուգեալ դիտաց զբազմաց այլոց եւս զերկմտութիւն, որ դեռ եւս ընդ նմա միաբանելոք էին, քաջալերեցաւ յանձն իւր և քաջալերեաց զզօրսն իւր. քանզի ինքն իսկ դեռ բնացեալ ունէր զթագաւորանիստ տեղիսն՝ միաբանութեամբ նախարարացն, որ ոչ քակեցան ի սուրբ ուխտէն: Հրաման տուեալ ամենայն զօրացն՝ ժողովել յԱրտաշատ քաղաք. փոխանակ յետս կացելոցն՝ որ ելին դէպ իշխանին Սիւնեաց, զեղբարս կամ զորդիս կամ զեղբարցն որդիս՝ ի տեղի նոցա մատուցանէր, և միւրաքանչիւր զօրս տան նոցա. զի դեռ եւս ինքն ունէր զամենայն աշխարհն:

1. Ձ-Աստուած զանելոյ կամ չկորանցնելոյ համար՝ յանձն առին ամեն տեսակ երկբաւոր զրկուիլն:

Եւ փութով ամենեքեան ի տեղի պատերազմին եկեալ հասանէին, իւրաքանչիւր զօրօք և ամենայն պատրաստութեամբ, նոքա և որ բունքն հաստատուն կացեալ էին ի տեղւոյն:... Ակսաւ սպարապետն խօսել միաբանութեամբ նախարարացն՝ ընդ զօրսն, և ասէ. Ի բազում պատերազմունս մտեալ է իմ, և ձեր ընդ իս. է ուրեք՝ զի քաշապէս յաղթեցաք թշնամեացն, և է ուրեք՝ զի նոքա մեզ յաղթեցին. և բազում այն է՝ որ յաղթող գտեալ եմք և ոչ յաղթեալք. և միանգամայն այն ամենայն էին մարմնոյ պարծանք. քանզի հրամանատուն անցաւոր թագաւորին մարանէաք: Որ փախչէր՝ վատանուն յաչխարհի երեւէր, և անողորմ մահ ի նմանէ գտանէր. իսկ որ քաջութեամբ յատակ մատչէր՝ քաջ անուն ազգի ժառանգէր, և պարգեւս մեծամեծս յանցաւոր և ի մահկանացու թագաւորէն ընդունէր: Եւ մեք իսկ աւասիկ՝ յիւրաքանչիւր մարմինս ունիմք վէրս և սպիս բազումս. և բազում այն քաջութիւն իցէ, վասն որոյ առեալ իցէ և պարգեւս մեծամեծս: Անարգ և անօգուտ զքաջութիւնն համարիմ, և առ ոչինչ զպարգեւսն զրազումս. վասն զի ամենեքեան խափանելոյ են: Իսկ արդ, եթէ վասն մահկանացու հրամանատուին զայն արութիւնս կատարէաք, որչափ եւս առաւել վասն անմահ թագաւորին մերոյ, որ տէրն է կենդանեաց և մեռելոց, և գտանելոյ է զամենայն մարդ՝ ըստ գործոց իւրոց: Այսպէսն եթէ կարի չատ յաւել մատուցեալ ծերացայց, սակայն ելանելոյ եմք ի մարմնոյ աստի, զի մտցուք առ Աստուած կենդանի, որ ոչ եւս ելանիցեմք ի նմանէ:

Արդ, աղաչեմ զձեզ, զի քաջ նիզակակիցք իմ. մանաւանդ զի բազումք ի ձէնջ՝ լուացեալք էք գան դիս արիութեամբ, և գահու՝ ի վեր՝ ըստ հայրենի պատուոյն. բայց յորժամ ձերով կամօք և յօժարութեամբ՝ առաջնորդ և զօրագլուխ ձեզ կացուցէք, հեչտ և բաղձալի թուեսցին բանք իմ ի լսելիս մեծամեծաց և վաթսունց: Մի՛ երկուցեալ զանգիտես-

ցուք ի բազմութենէ հեթանոսացն, և մի յահա-
գին սրոյ առն մահկանացուի՝ զթիկունս դարձուս-
ցուք. զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր,
սատակեսցուք զզօրութիւն նոցա, զի բարձրասցի
կողմն ճշմարտութեանն. և եթէ հասեալ իցէ ժամա-
նակ կենաց մերոց՝ սուրբ մահուամբ պատերազմիս՝
ընկալցուք խնդութեամբ սրտիւ. բայց միայն յ'ա-
րութիւնս քաջութեան՝ վատութիւն մի խառնեսցուք:

Մանաւանդ զի անմոռաց է ինձ, յիշելով զիմ
և զամենից ի ձէնջ, ի ժամանակին՝ զի զանօրէնն
իշխանն խաբեցաք պատրեցաք իբրեւ զմանուկ մի
տղայ անպիտան. իբր այն՝ եթէ ի վերին երեսս
զկամս նորա ամբարշտութեանն կատարեսցուք. բայց
ի ծածուկ զխորհուրդս՝ Տէր ինքնին վկայէ մեզ,
որպէս անքակ կացեալ եմք ի նմանէ, զոր և դուք
ինքնին իսկ գիտէք. վասն սիրելեաց մերոց՝ որ ի
մեծի նեղութեանն էին, հնարս խնդրէաք վասն
յանգորը հանելոյ. զի նաքօք հանդերձ մարտ եդեալ
կռուեցուք ընդ անօրէն իշխանին, վասն հայրենի
աստուածատուր օրինացն: Եւ իբրեւ նոցա ոչ ինչ
կարացաք օգնել, անհնար լիցի այս՝ եթէ վասն
մարմնաւոր սիրոյ՝ զԱստուած ընդ մարդկան փո-
խանակիցեմք:

Իսկ արդ, յերկուս և յերիս կռիս՝ Տէր ինք-
նին մեծաւ զօրութեամբ օգնեաց մեզ, որպէս զի
զանուն քաջութեան ժառանգեցաք, և զզօրսն ար-
քունի չարաչար հարաք, և զմոգսն անողոմ սա-
տակեցաք, և զպղծութիւն կռապաշտութեանն ի
տեղեաց տեղեաց սրբեցաք. զանօրէնն Հրաման թա-
գաւորին եղծաք ապականեցաք. զհաւուրս ծո-
վուն ցածուցաք. լեռնացեալ ալիքն դաշտացան,
բարձրագէզ փրփուրն սպառեցաւ. գազանացեալ
սրտմտութիւնն դադարեաց: Որ ի վերայ ամպոց
որոտայր, նկուն եղեալ՝ քան զաւերական բնու-
թիւնն ի վայր գոտ՝ ընդ մեզ խօսելով: Որ բա-
նիւ հրամանաւ՝ կամէր կատարել զշարութիւնն իւր՝
ի վերայ սուրբ եկեղեցւոյ, արդ աղեղամբ և նե-

զակաւ և սրով կռուի: Որ իբրեւ զհանդերձ կա-
ծէր ունել մեզ զբրիտոնէութիւնն, արդ իբրեւ
զգոյն ի մարմնոյ չկարէ չրջել, թերեւս և ոչ այլ
կարասցէ՝ մինչեւ ի կատարած: Քանզի հիմունք
սորա հաստատութեամբ եղեալ են ի վերայ վիմին
անշարժութեան. ոչ իբրեւ ի վերայ երկրի, այլ ի
վեր յերկինս, ուր ոչ անձրեւք իջանեն, և ոչ հողմք
չնչեն, և ոչ հեղեղս յարուցանեն: Եւ մեք՝ թէ-
պէտ և մարմնով յերկրի եմք, հաւատովք յերկինս
եմք չինեալ. ուր ոչ ոք կարէ հասանել, յանձե-
ռագործ չինուածն Քրիստոսի:

ՃԼԷ

ՇԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԱՐՇԱԻՐԻ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ

(Ղ. Ա. Զ. Ա. Ր Փ. Ա. Ր. Պ. Ե. Տ. Ի, Լ. Գ.)

Նախագոյն յառաջեալ ի տեղի մարտին՝[1] կամ-
սարականն Աշշաւիր և Մուշ սեպուհն Դիմաքսե-
նից, որք յանդիմութենէ տեղեացն՝ դիպեցան
թանձրախոտ սաստիկ մօրից[2]. կամսարականն Աշ-
շաւիր և Մուշ ի յառաւելապէս դիմեցմանէ երի-
վարացն՝ անկեալք ի տիզմն հանդերձ երիվարօքն
խրեին. անդ կատարեալ պսակէր երանելի սեպուհն
Դիմաքսենից Մուշն՝ ի խորակաւոյ[3]: Իսկ կամսա-
րականն Աշշաւիր իջեալ յերիվարէն ի հետիոտս՝
սպանանէր զվէրսկն՝ զեղբայր Լփնաց թագաւորին.
և ի բաց ձգեալ զերիվարն ի սաստիկ խոր ատմոյն,
ուր և մոկ մի զերծեալ յոտանէն՝ թագեալ մնայր
անդէն ի մօրին, և ինքն կամսարականն միամոկ[4]

1. Պարսից դեմ երթալով՝ Աղուանից կողմերը:
2. Շատ սիզմերով լցուած տեղ:
3. Նիխորական զոր և Մերուհատ կոչէ Ղազ. փարպ:
4. Միայն մէկ ատքին կօշիկն կար՝ մէկ այլն տըղ-
մին մէջ խրուեր մնացեր էր:

տղմաթաթաւ հանդերձ ամենայն զինուն հանեալ զերիվարն ի ցամաք, անվեհեր քաջաբար նման թռչնոյ յերիվարն հեծանէր. և զարհուրեցուցեալ զթեւ իւրոյ կողման թշնամեացն՝ փախստական առնէր: Եւ հայեցեալ տեսանէր զերանելի սպարապետն Հայոց զտէրն Մամիկոնէից Վարդան, հանդերձ ընտ կերակցօքն իւրովք և ամենայն Հայոց գնդաւն, զի արարեալ փախստականս և նոցա՝ ածէին առաջի իւրեանց զբազմութիւն զօրացն Պարսից. յորոց զկէսն սրով իւրեանց դիաթաւալս յերկիր կործանէին, և զկէսն գետավէժս արարեալ հեղձամղձուկ առնէին. և զայլսն ի նոցանէ՝ դաշտացն և անտառախիտ մայրեացն ցրուեալս վանէին:

Իսկ ոմանք յաւագորերոյ Պարսից ելեալք ի նաւս՝ յայնկոյս գետոյն մեծի՝[1] փախստեայք լինել ճեպէին: Որ և զկամարարականն Աբշաւիր զիշխանն Աբշարունեաց՝ ստիպով փութացուցանէր երանելի զօրավարն Հայոց Վարդան, զկնի փախստից նաւացն նետաձիգ լինել, ի հաստատաձգութիւն և յանվրէպ դիպողութիւն[2] առնն վստահեալ: Իսկ կամարարականն Աբշաւիր՝ որպէս և միւք կամակատար էր բանի սրբոյ զօրավարին, վաղվաղակի հասանեալ առ ի նմանէ հրամանին, զկնի նաւավարացն և փախստից նետաձիգ լինէր, և խոցեալ զնաւավարան և զայլս բազումս ի նաւսն՝ կարեվէրս առնէր. որոց ընդ տապալել վիրաւորացն՝ կործանէին նաւքն[3]. և բազումք ի նաւավարացն և զլխաւորացն Պարսից՝ գետասոյզ եղեալ կորնչէին: Եւ այսպէս չնորհեալ նոցա զյաղթութիւն՝ վերին օգնութեանն, դառնային ի բանակ իւրեանց, զոհանալով և օրհնելով զԱստուած:

1. Անշուշտ Կուր մեծ գետն է:
2. Ուժով նետ նետող և չիտակ հասցընող:
3. Շատ փոքր և թեթեւ եղած երեւին այդ նաւերն:

ՃԼԸ

ԴԵՒՈՆԴ ԵՐԷՑ

(Դ. ՓԱՐՊԵՑԻ, ԼԸ)

Սուրբ երէցն Դեւոնդ զամենայն զգիշերն՝ անձանձրոյթ առաքելական վարդապետութեամբ զօրացուցեալ՝ ուսուցանէր զամենեսեան յորդարուղիս իմաստութեամբ, առակաց մեկնութեամբք. որոյ բանքն նման քաղցրութեան մեղու բղխէին ի բերանոյ արդարոյն, որ էր լսողացն ցնծութիւն. և ախորժարար զնա ծանուցանէր վերին ազգեցութեամբ՝ լուսաճաճանչ պայծառութիւն ի նմա ներքին մարդոյն, և տեսակութիւն հրեշտականման երեսացն կերպարանի: Ջոր և յաւուրսդոյն ժամանակի կալով ի քուն Սրբոյն, այրն Աստուծոյ Մաշթոց վարդապետն նորին՝ հանդերձ աշակերտօք իւրովք՝ երանելեան կորեամբ և Ղազարաւ, տեսանէին արթնութեամբ՝ ճառագայթեալ շուրջ զնովաւ լոյս սաստիկ. որք անդէն և անդ ծանեան երանելի արքն՝ Սուրբ Հոգւով, զվախճան Սրբոյն, թէ նահատակութեամբ կատարի. զոր թէպէտ և նմա ոչ յայտնեցին՝ զգաստչելագործութեան պատուիրանն, սակայն ի բազում չչնջելն՝ պատմեալ հռչակեցաւ բան երեւմանն այսորիկ: Որ յուսուցանելն իւրում բազում բանս հոգեւորս՝ յիշեցուցանէր ամենեցուն, զվարս և զժուժկալութիւն առաջնոցն. և նախ՝ զանպատումն զհամբերութիւն Սրբոյն Գրիգորի, ապա զայլոցն ամենեցուն:

ՃԼԹ

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ԱՏՈՎՄԱՆՑ

(ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ.)

Դիւապարա և սեւագունդ զօրքն Պարսկաց՝ զգիչերն ամենայն հետամուտ եղեալ Հասանէին ի լեառնէն, և կալեալ զամն Հարցանէին, թէ ո՞ւր իցեն բընակեալ. իսկ նորա զարհուրեալ յ'անցաւոր մահուանէս, հանդոյն լեալ Յուդայի մատնչի, պատմէ նոցա զտեղւոյն. և նոքա բազում ամբոխիւ վազվազակի հասանէին՝ ուր էին Սուրբքն: Իսկ քաջ նահատակացն տեսեալ զյարձակումն անօրինացն, ըստ սովորակի իւրեանց արիութեան՝ միմեանց ձայն տըւեալ, ասելով. Զի կալէք[1]. վասն որոյ և անուն տեղւոյն Ձիակալի վանք կոչեցեալ, որ մինչեւ ցայսօր ժամանակի կոչի: Իսկ արանցն քրիստոսասիրաց՝ հեծեալք յիւրաքանչիւր յերիվարս, ժողովեալ ի բլուրն, կարգեցին ռազմ. իսկ նախախնամութիւն Աստուծոյ յայց եղեալ սրբեղեացն իւրոց, տեսիլ զիչերոյն յայտնապէս երեւեալ ամենեցուն՝ անանց լոյսն և անթառամ պսակքն. նոյնժամայն ի բաց թողեալ վերիվարսն, ի բաց թողեալ զէնսն, ցնծութեամբ յառաջ մատուցեալ ի կատարումն: Իսկ Սուրբըն Աստուած զքաջանչելատեսիլ զորդեակն իւր առաջի արարեալ ի ժամ կատարմանն, զանգիտեալ ի մանկական տիոցն. իսկ նորա յօժարութեամբ յառաջեալ քան զամենեսեան, բարի խոստովանութեամբ ի Քրիստոս՝ կատարէր, և պսակէր. և Սուրբն Աստուած հանդերձ սուրբ ընկերօքն իւրովք աղաղոսէին և ասէին. Սիրեցաք զքեզ, Տէր. լուիցես ձայնի աղօթից մերոց. ընկալցիս զկամաւոր պատարագս

1. Ա. յսինքն, ձիանգդ քաշեցէք, հեծէք:

և խառնեսցես զամենեսեան ի գունդս սրբոց քոց: Եւ ամենայն իսկ գնդին արժանի եղեալ կատարման սրով, բարի խոստովանութեամբ ի Քրիստոս, աւանդեցին զհոգիս իւրեանց ի նոյն տեղւոջ. և սուրբ և վարդագոյն արիւնն վերկիր ոռոգանէր: Իսկ չնորհալից պարսիկ մի ի նոյն գնդէ՝ արժանի եղեալ նոյն տեսլեանն, զաղաղակ բարձեալ, թէ, Եւ ես քրիստոնեայ եմ. որ առժամայն կատարի, մկրտեալ յիւր արիւնն. և թուեցաւ ի գունդ Սրբոցն ի տեսչութենէ Աստուծոյ: Իսկ մի ոմն թշուառացեալ ի գնդէն Հայոց, փախստեայ անկանի առ հովիւ մի. և առեալ զհովուական մախաղն կերպասանել զինքն ձեւով հովուին. փոխանակեալ զլուսեղէն պատմուճանն և զմշտնջենաւոր կեանսն՝ ընդ զգրաստեսիլ զգեստու և ընդ առօրեայ կենացս. և Պարսիկն յօժարութեամբ զիմեալ ի տեղի կատարմանն, ընկալեալ յինքն զվճիռ մարտիրոսութեան, փոխանակ նորա՝ ընդ սուրբ գնդին յերկնաւոր Հարսնիսն. և նա որպէս ոմն որ վարատեցաւ երբեմն ի Սրբոց Քառասնից[1], դիմելով ի բանտինն, և զտեղի կոչման նորա վիճակին եղից բանդպանն. քանզի թոյլք և երկմիտք՝ յամենայն ժամ կորնչին: Այս յետ երկուց աւուրց տեսիլ երեւեալ ի գիչերին՝ սրբոյ Հղնաւորին, զի յամենեցունց վերայ լուսափայլեալ հրաշալի և աքանչելի, որ մեծաւ զարմացմամբ ի վաղիւն փութով ազդ արարեալ եպիսկոպոսին և քահանայից, ազատաց և ամենայն ժողովրդոց. որք փութով անդր հասանէին. և ի սուրբ կատուն գնչխարս Սրբոցն ամփոփեալ՝ մատուցին ի տեղի հանգստեանն իւրեանց, լապտերօք և բուրմամբ խնկոց և ազմոսիս, հանդերձ հակմամբ, և ոտնախմբեալ գլուխս տակս նոցա մեծաւ ուրախութեամբ, ի նաւասարդի ամսոյ Թ[2]:

1. Սեբաստիոյ Քառասուն մանկանց մէկն:
2. Ըստ անշարժ տումարի՝ օգոստոսի 19:

Արդ, որ յայսմ տեղւոջ հանդիպեալք կատարեցան, են այսոքիկ. զվաւերն Սուրբ Աւետ որդւովն իւրով, յազգէն Գնունեաց, Սուրբն վարուս Յօհաննի տանէն, Սուրբն Ներսեհ յԱբուանթունեաց տանէ, Սուրբն վարձաւոր, և այլ եւս բազմութիւն սուրբ ընկերացն, որք նահատակեցան ընդ նոսա և առին զսպասս անապականս. որոց անուանքն գրեալ են ի գպրութեան կենացն յաւիտենից:

Եւ Սուրբն Մաւուձիհր Ոչտունի և սուրբ ընկերքն յառաջ անցեալ ի սահմանս իւրեանց աշխարհին, կատարեցան ի տեղւոջն՝ որ կոչի Ոյիտարաց վանք, ուր և ամիսս մի նշխարք ոսկերացն՝ ծածկեալ կան յեկեղեցւոջն որ ի բլրին: Այսպէս նահատակեալք արի և քաջ նահատակացն յամս Յազկերտի ամբարշտի Պարսից թագաւորի. որք արհամարհեցին զկեանս իւրեանց՝ վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և զամբարտաւան թագաւորն՝ հանդերձ խորհրդակցաւն իւրով սատանայիւ՝ յամօթ արարին, զօրացեալք յԱստուած Հայր մեր և ի Տէր մեր Յիսուս Քրիստոս և ի Սուրբ Հոգին. որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ճԽ

ՁԱԿԱՏԱՄԱՐՏՆ ԱԽԱՐԱՅԻ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ[2]

(ԵՂԻՇԷ, 2.)

Իբրեւ այսպէս պատրաստեցաւ՝ երկոքեան կողմանքն լի սրտմտութեամբ և մեծաւ բարկութեամբ զայրանային, և գազանացեալ զօրութեամբ յի-

1. Կամ Երուանիրուհի, վանայ արեւելեան կողմն:
2. Մեր ազգի դիպուածոց թէ քաղաքական թէ կրօ-

բեարս յարձակէին երկոքեան. և ամբոխ ազազակին յերկոցունց կողմանցն՝ իբրեւ ի մէջ ամպոց չփոթելոց՝ ձայնմունս գործէր, և հնչումն ձայնից՝ ըզքարանձաւս լերանցն չարժէր: Ի բազմութենէ սազաւարտից և ի փայլուն պատենազէն վառելոցն՝ իբրեւ նշոյլք ճառագայթից արեգական հատանէին: Նա և ի բազում սուսերացն չողալ, և ի ճօճել բազմախուռն նիզակացն՝ իբրեւ յերկինս ահագին հրաձգութիւնք եռային: Գանգի, ով իսկ է բաւական ասել զմեծամեծ տագնապ ահաւոր ձայնիցն, որպէս կոփիւնք վահանաւորացն և ձայնմունք լարից ազեղանցն՝ զլսելիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին:

Անդ էր տեսանել զյուսապ մեծի տագնապին, և զաղետս անթաւ տարակուսանացն՝ երկոցունց կողմանցն, առ ի յանզուգն յարձակմանէն զմիմեանս բաղխելով. քանզի թանձրամիտքն յիմարէին և վատասիրտքն լքանէին. քաջքն խիզախէին և նահատակքն գոչէին: Եւ խումբ արարեալ ամենայն բազմութեանն՝ զգետն ի մէջ փակէին. և զանդիտեալ գունդն Պարսից՝ ի զժուարութենէ գետոյն, զտեղեաւն զեռալ սկսան: Իսկ գունդն Հայոց հասեալ՝ անցանէին, ձի ի վերայ առեալ յարձակէին մեծաւ զօրութեամբ. սաստկապէս բաղխեալք ընդ միմեանս, յերկոցունց կողմանց բազում վիրաւորք յերկեր անկեալ դիաթաւալ խաղային:

Ցայնմ մեծի տագնապի՝ ի վեր հայեցաւ քաջն Վարդան, և տեսանէր զընտիր ընտիր քաջ նահատակաց Պարսից զօրուն, զի զձախակողմն չարժեցին զՀայոց գնդին. մեծաւ ուժով յարձակէր ի տեղին, և զալ թեւն Պարսից գնդին բեկեալ՝ արկանէր զգազանաբն. և չրջան առեալ կատարէր մինչեւ ի նոյն տեղին. և այնպէս չտապ տագնապի ի վե-

նական, ամենէն նշանաւորաց մէկն է, կատարուած յ'2 յունիսի 451 թուին Քրիստոսի, յանմահական յիշատակս նուիրեալ յեկեղեցւոյ:

բայ հասուցանէր, մինչեւ գունդն Մատեան[1] քակտեալ բաժանեցան ի մեծամուր պատրաստութենէն, դեռ եւս քայ քայ ի փախուստ դառնային։

Ապա դէտ ակն ի վեր համբառնայր Մուշկան Նիւսապաւուրտն[2], քակեալ զոմանս տեսանէր ի գընդէն Հայոց, և դկնի մնացեալ ի հովիտս լերանցն. վասն որոյ զաղաղակ բարձեալ՝ քայլելէր չուրջ զիւրեաւ զզօրս Արեաց. որք տեղի առեալ կացին ընդդէմ գնդին Վարդանայ. և անդէն ի տեղւոյն երկոքինն կողմանքն զպատուիթիւն խոստովանէին, և առ յոյժ թանձր անկեալ դիականցն՝ իբրեւ ըզքարակոյտս դեբրկաց երեւէին։

Զայն իբրեւ տեսս Մուշկան Նիւսապաւուրան, մնայր զգաստացեալ Արտաչիր՝ որ ի վերայ գազանացն նստէր ի բարձր դիտանոցին, և կամ իբրեւ յամուր քաղաքի. և ի ձայն մեծ գալարափողոցն զիւր գունդսըն ստիպէր, և յառաջամարտիկ զօրաքն՝ գնա ի մէջ փակէր։ Իսկ կորովին Վարդան իւրովք քայ նիզակակցօքն ոչ սակաւ նախճիրս ի տեղւոյն գործեաց. յորում տեղւոջ և ինքն իսկ արժանի եղեւ առնուլ զկատարեալ նահատակութիւնն։

Եւ յերկարել գործոյ պատերազմին՝ օրն տարաժամէր, և մօտ առ երեկս կարճատէր. բազմաց օրհասաք մահու հասանէին. մանաւանդ ի թանձրութենէ անկեալ դիականց՝ մօտ առ մօտ խոտացեալ իբրեւ զփայտահարս մայրաւորաց։ Անդ էր տեսանել զբեկումն նիզակացն և զխորտակումն ահղեղաց. վասն այնորիկ և ոչ կարէին կալ ճշմարտիւ ի վերայ սուրբ մարմնոց երանելեացն. և սաստիկ խուճապ տագնապի էր կողմանցն երկոցունց անկելոցն։ Եւ որ մնացեալքն էին՝ վանեալք և ցըրուեալք լինէին ի լեառնադաշտս և յամուրս ձո-

1. Մակեդոնացւոց փաղանգին պէս անպակաս բիւր մի՝ իրարու կից զօրաց, որ և Ֆալանգք կոչուէին։

2. Զօրագլուխն Պարսից, որ պատերազմէն վերջը չուտով ղրկեց իմացուց Յազկերտի՝ եղածը։

րոցն. և յորժամ պատահէին միմեանց, դարձեալ միւսանգամ զվիմեանս սատակէին. և մինչեւ ի մուտս արեգականն՝ անդադար լինէր գործ դառնութեանն։

Եւ քանզի գարնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն դառնային յորդահոսանս արեանց բազմաց։ Մանաւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ պիականցն անկելոց, սիրտն բեկանէր և աղիքն գալարէին. լսել զմնչիւն խոցելոցն և զմռնչիւնս բեկելոցն, զթաւալգլոր խաղալ սոզալ վիրաւորացն, զփախուստ վատացն, զթագուստ լքելոցն, զսրտաթափումն զանարի արանցն, զճչիւն կանացեացն, զողբս սիրելեաց, զաշխարհումն մերձաւորաց, զվայ և զաւաղ բարեկամացն։ Քանզի ոչ եթէ կոզմ էր՝ որ յաղթեաց և կոզմ էր որ պարտեցաւ, այլ քայք ընդ քայս եղեալ՝ երկոքինն կողմանքն ի պարտութիւն մատնեցան

Բայց քանզի անկեալ էր զօրավարն Հայոց ի մեծ պատերազմին, ոչ ոք գոյր այնուհետեւ ի մէջ գըլխաւոր, յոր յեցեալ ժողովէին գունդն մնացելոցն. թէպէտ և բազում այն էր որ ապրեցան՝ քան թէ որ մեռանն, սակայն ցանեալ ցրուեցան. և հասեալ անկանէին ի տեղիս տեղիս յամուրս աշխարհին, և բռնանային ի վերայ բազում գաւառաց և բերդից, զոր և ոչ առնուլ իսկ ոք կարէր։

ՃԽԱ.

ԿԱՄԱՒՈՐ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՎԱՍՆ ՀԱՒԱՏՈՑ

(ԵՂԻՇԷ, Է.)

Մարդիկն Հայոց՝ որ հասեալ էին ի վերայ յեղյեղուկ հրամանաց թագաւորին և ուրացեալ չարիմացին Վաստակայ, ոչ ինչ հաւատային սուտ թողութեանն, այլ քաջալերէին զմիմեանս և ասէին. Չէ՞ պիտոյ է մեզ բնաւ կեանք անցաւոր աշխարհիս. և կամ ընդէ՞ր տեսանեմք զարեւ՝ յետ մերոց սրբելեացն: Չի, եթէ քաջ նահատակքն մեր անկան ի մեծ պատերազմին, և բազում վիրաւորք տապալեցան յարիւն ապաժոյժ ի մէջ դաշտին, և ամենեցուն մարմինք եղեն զէշ թռչնոց և կերակուր գազանաց, և պատուական նախարարքն մեր հասին յանարգութիւն թշուառութեան, լքին զիւրաքանչիւր իշխանութիւն և են ի հալածանս նեղութեան, որ և ամենայն փոփկութիւնն Հայոց եհաս ի վիշտս վտանգի և յանհնարին ապականութիւն, ոչ անսամք խաբեբայ հրամանացդ և անկանիմք ի ձեռս անօրէն իշխանացդ:

Թոզին այնուհետեւ իւրաքանչիւր զգեստս և զաւանս և զազարակս. ելին հարստունք յառագաստից և փեսայք ի սենեկաց. անկան ծերք յաթոռոց և տղայք ի գրկաց. երիտասարդք և կուսանք և ամենայն բազմութիւն արանց և կանանց, հասեալ ունէին զամուրս անապատին և զանխաբ տեղիս բազում լերանց. լաւ համարէին զգազանաբար բնակութիւնն՝ աստուածպաշտութեամբ՝ ի քարանձաւս կելոյ, քան ուրացութեամբ փոփկանալ յիւրաքանչիւր չինուածս: Ազանց սրտմտելոյ համբերէին խոտաբուտ կերակրոցն, և ոչ յիշէին զսովորական խորտիկն: Համարեալ էին նոցա՝ զարտաքսորքն իրրեւ զյարկս բարձր չինուածոց, և զանկողինքն իրրեւ զնկարեալ պատկամս:

Սոմմաք էին նոցա մրմունջք երգոց, և ընթերցուածք սուրբ գրոց՝ կատարեալ ուրախութիւնք: Ամենայն մարդ յանձն իւր եկեղեցի էր, նոյն ինքն քահանայ. մարմինք իւրաքանչիւր՝ սուրբ սեղան, և ոգիք նոցունց՝ պատարագ ընդունելի: Քանզի ոչ ոք ի նոցանէ ողբայր յուսահատութեամբ զանկեալսն ի սրոյ, և ոչ ոք հեծեծելով հառաչէր ի վերայ մերձաւոր սիրելեաց իւրոց. խնդութեամբ ընկալան դյափշտակութիւն ընչից բազմաց. և ոչ յիշէին ամենեւին՝ եթէ եղեալ իցեն նոցա սուգ յուսահատ. համբերութեամբ հդնէին և մեծաւ առաքինութեամբ տանէին զքաջ նահատակութիւնն: Չի եթէ ոչ բացաւ աչօք տեսանէին զյոյսն խնդալից, և ոչ կարէին իսկ զործել զայնպիսի մեծ առաքինութիւն:

Քանզի բազումք յազգէ ի մեծ նախարարացն էին, և եղբարք և որդիք և գաւերք, հանդերձ առմենայն սիրելեօք իւրեանց՝ ի մէջ ամրական վայրացն. ոմանք յանլոյս երկիրն Խաղտեաց[1], և այլ բազումք՝ ի կողմանս հարաւոյ, յանմատոյց ամուրսն Տմորեաց[2]. և կէսքն ի թանձրախիտ մայրին Արցախոյ[3], և այլ ոմանք անդէն ի մէջոց աշխարհին՝ բռնացան ի վերայ բազում ամրոցացն: Եւ ամենեքին մեծաւ համբերութեամբ տանէին զբազում նեղութիւնն վասն յուսոյն Աստուծոյ. ազաչելով զայս միայն խնդրէին յԱստուծոյ, մի տեսանել նոցա զաւեր սուրբ եկեղեցեաց:

1. Պանտասի լեռնոտ արեւելակողմն, ուր շատ հեղ թանձր մէգ կ'ըլլայ: Հեթում պատմիչ մեր՝ Համշինու կողմանց համար կ'ըսէ, անձամբ տեսած երեք օրուան ճամբու տեղ մառախլապատ մութ: Էին Խաղտեաց ազգի մնացորդք կան և կոչուին հիմայ Խալիթ:
2. Կորզուաց գաւառ մի է, որ կոչուի և Կորդիք:
3. Մեծ Հայոց նահանգ, Աղուանից երկրին խառն:

ՃԼԹ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ՂԵՒՈՆԴ ԵՐԻՑՈՒ ԵՒ ՎԱՍԱԿԱՑ[1]

(ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, ԽԲ.)

Ելեալ սա (Վասակ) զմիջոցաւ ճանապարհին, ուր զսուրբ քահանայն տանէին կապեալս, նստուցեալս ի վերայ ջորւոյ. և բազմութիւնք չուելոցն՝ որ էին ընդ անօրինին Վասակայ, հասին նահատակացն Քրիստոսի: Եւ նոցա հարցեալ եթէ ո՞վ է բազմութիւնս այս, լուան ի մարդկանէ՝ թէ Սիւնեաց տեառնն է. և նոքա ասեն. Աւադիկ մօտ առ մեզ գայ: Լուեալք[2] ի հարցանելոյ՝ Սուրբքն, ճանապարհին ուշադրէին. և Սուրբն Յովսէփ հարցանէր ցայրն Աստուծոյ Ղեւոնդ, թէ, Գիտեմ թէ հասեալ գայ ի մեզ Վասակ, լրբի անամօթութեամբ սրտիւ՝ գալ առ մեզ յաղջոյն. և քո զմտաւ ածեալ՝ որպէս պարտ է առնել մեզ՝ հրամայեա, և այնպէս առնեմք մեք: Եւ Սրբոյն Ղեւոնդի պատասխանի տուեալ ասէ. Զվարդապետութիւն փրկչին մի՛ խնդրեր ուսանել ի մարդոյ. «Յոր քաղաք կամ գեօղ մտանիցէք՝ ողջոյն ասացէք. և ուր գոյի որդի ողջունի, հանգիցէ ողջոյնն ձեր ի վերայ նոցա. ապա թէ ոչ իցէ արժանի՝ առ ձեզ դարձցի ողջոյնն»: Եւ այն ինչ կատարեալ նոցա զհարցուածսն առ միմեանս, եկեալ հասանէր առ նոսա նենգաւորն Վասակ, Սիւնեաց տէր. և տեղեկացեալ ի նոցանէ՝ վաղվաղակի իջանէր յերիվարէն

1. Երկուքն ալ ի Պարսկաստան երթալու ժամանակին, թէ և մեր նոր քննաբանք՝ աչ միաժամանակ՝ այլ երթալէ առաջ եւս համարին առանց երթալը:

2. Թուի թէ պէտք էր կարդալ լռեալք:

և ողջունէր զՍուրբսն. որոց ոչինչ բնաւ կարծեցուցեալ թշնամութիւն ընդ նմա՝ յոյժ խնդալից սիրով տեսանէին զնա: Եւ մանաւանդ սուրբն Ղեւոնդ, որոյ անտրտում և զուարթերես միշտ տեսակ իւր, և ախորժակ բանիւ լրմնութեամբ խօսէր երկարս ընդ Վասակայ Սիւնեաց իշխանին. որ իբրեւ լսէր զքաղցրաբանութիւնն և զչնորհալի բանս երանելոյն, խելացնորեալ ի գիւէն՝ կարծեաց թէ սոքա գիտեն իսկ ոչ ինչ արարեալ ի սոսա ըզչարիս. յաղագս որոյ և առաւելագոյն մխիթարեալ ի բանից առն Աստուծոյ Ղեւոնդի, երթայր ընդ նոսա երկարագոյնս:

Եւ յետ կատարման խօսիցն՝ կամեցեալ կոչել զնոսա Սիւնեաց տէրն, զոր և յաւուրն յայնմիկ աղաչեաց զՍուրբսն՝ ճաշել ընդ նմա յօթեւանին: Եւ յառաջեալ սակաւ մի նենգաւորին Վասակայ ի նոցանէ, ձայն զկնի եդեալ Սրբոյն Ղեւոնդի՝ կոչէր զնա պատուոյն անուամբ մեծաձայն. Սիւնեաց տէր, Սիւնեաց տէր. և նորա յօժարապէս պատասխանի արարեալ, Տեարք, զինչ ասէք. և Սրբոյն ասացեալ. Ջամենայն ինչ մեր ասացեալ ընդ քեզ, զպիտոյսն և զառաւել օգտակարսն՝ մոռացաք հարցանել. թէ, ո՛ւր երթաս: Եւ նենգաւորին Վասակայ լուեալ զայս՝ և ի մեծ արտմութիւն ընկղմեալ, ասէր զարմացմամբ. Այս տէրն իմ երթամ՝ գտանել ի նմանէ ըստ արժանի մեծ վասակոցն՝ զհատուցումն մեծ: Եւ Սրբոյն Ղեւոնդի պատասխանի տուեալ ասէ. Կարծեցուցանէ՞ զքեզ դեւդ՝ որ պատրեալ սադրեաց զքեզ՝ նենգել սուրբ աւետարանին ուխտի, թէ, արդ միայն թագաւորութեամբ աշխարհին Հայոց կարեն Աբիք տալ քեզ ըստ արժանի վաստակոց քոց՝ զհատուցումն. այլ և ոչ մի ինչ է որ կարէն տալ քեզ փոխարէնս: Բայց թէ արդարեւ դու կենդանութեամբ զղլուխդ ի վերայ ուսոցդ ի Հայս տանիս, ապա ընդ իս Տեառն Աստուծոյ չէ խօսեցեալ: Եւ զայս լուեալ նենգաւոր իշխանին Վասակայ, վհատեալ խղճաւ

ամենայն անոտի յոյն իւր, և անդէն ծանեաւ զբեկումն անձին իւրոյ, որ մերձ ընդ մերձ հասանելոցն էր ի վերայ նորա. քանզի ոչ վրիպեր բան Սրբոյն, մինչեւ կատարէր ամենայն։

ԱՒԳ

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ ՎԱՍԱԿԱՅ

(ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, Խ.)

Ուխտանենգ իշխանն Սիւնեաց Վասակ՝ արկեալ զիւրեաւ դամենայն պատիւս՝ զոր ունէր ի թագաւորէն, գայր մտանէր ի խորանն արքունի. մեծաւ չքեղութեամբ. քանզի բաց ի պատուոյ թագաւորացն որ նուաղէր նմա, այլ ոչ ինչ ի պատուոյ արքունի պիտոյ էր՝ զոր ոչ ունէր. և կարծէր այնուհետեւ առնուլ զթագաւորութիւնն մեծ աշխարհին Հայոց։ Եւ զայն ոչ գիտէր թչուառացեալն, եթէ Տէր հեռացեալ էր ի նմանէ, և այսն պիղծ խեղդէր զնա. և բան սրբոյ առն Աստուծոյ Ղեւոնդի՝ ի նմին ժամու կատարէր ի վերայ թչուառականին։

Եւ լցեալ Արեօք ամենայն խորանն, հրաման տայր թագաւորն զպատառմանն Հայոց կապանօք ածել զառաջեաւ։ Եւ ածեալ կացուցանէին զնոսա առաջի թագաւորին. և հարցեալ թագաւորին, ասէ զնոսա. Որպիսի՞ համարձակութեամբ և կամ զի՞նչ գմտաւ ածեալ, և կամ զի՞նչ այժ օգնականութեան տեսեալ՝ դիմեցէք յայնպիսի աշաւոր գործ, յորում տեսանէիք զկորուստ անձանց ձերոց և զաշխարհին, որպէս եղեւ իսկ և տեսէք։ Եւ լուեալ զայս ամենայն նախարարացն Հայոց, լուռ եղեն առ վայր մի, և ոչ ինչ կարուն պատասխանի։ Եւ երկրորդեալ զրանն թագաւորին ըստ առաջին հարցմանն, խնդրէր ի նոցանէ սաստիկ պատասխանի. և նոցա

առեալ պատասխանի ասեն. Շնորհեսցէ մեզ բարերարութիւնդ ձեր՝ զայր մի՝ զոր մեք ի մէնջ ցուցանեմք, լսել ի նմանէ զամենայն ի բնէ զմերոց իրաց զաճումն, զխորհելն և զառնելն. վասն զի ոչ է պարտ ամենեցուն մեզ անկարգ ամբոխիւ խօսել առաջի քո։ Եւ թագաւորին և ամենայն աւագանւոյն յօժարութեամբ յանձն առեալ՝ հրամայեաց։ Եւ նոցա յառաջ մատուցեալ զկամաւորականն Արշաւիր, ասացին՝ լսել ի նմանէ բովանդակապէս զամենայն։ Եւ կամաւորականն Արշաւիր զօրացեալ ի Սուրբ Հոգւոյն, յառաջ մատուցեալ աներկիւղաբար սկսաւ խօսել առաջի թագաւորին և ամենայն աւագանւոյն։...

Իսկ ազգամոլի ուխտապրուժն Վասակ՝ թէպէտ և կամէր խօսել ինչ և տալ պատասխանի, չգիներ զի ունկն բանից և կամ ախորժէր. վասն զի ուխտանենգութիւն սրբոյ Աւետարանին, և բան անիծից երանելոյն առն Աստուծոյ Ղեւոնդի՝ եկեալ հասեալ ի վերայ նորա, պատեալ վրակեալ պաշարեցին զնա։ Որ թէպէտ և կայր ինչ վաստակս առնն՝ առ Պարսիկս, և չանայր ցուցանել ի ժամուն, և այն ոչ ինչ էր օգուտ, այլ առաւել եւս ի պատասխատութիւն եղեալ՝ ձեռասէին զնա։ Եւ կատարէր առ նա բան սաղմոսերգին. Թէ, «ի դատաստանէ իւրմէ » ելցէ դատապարտեալ, և աղօթք նորա ի մեղս » դարձցին »։ Հրաման տայր թագաւորն Յաղկերտ՝ անդէն զառաջեաւ կողոպտել ի նմանէ թչնամանօք՝ զամենայն պատիւն զոր ունէր. և ձաղեալ զնա պայկացն մերկացուցին զնա. մերկացուցեալ ի նմանէ զզարգարանս պատուոյ տէրութեանն, հանին զնա խայտառականօք արտաքս քան զհրապարակն արքունի։ Եւ ի նմին աւուր զթչնամին նորա զսեպուհն սիւնի՝ զուարացողն զվարազվաղան[1] տէր ի վերայ աշխարհին Սիւնեաց կացուցանէին. որոյ որքան ժամանակս կալեալ զիշխանութիւնն Սիւնեաց՝ բա-

1. Վասակայ դստերայրն (փեսայն) էր և մանիչ։

զուա արարեալ անիրաւութիւնս, և բազում տունս մոխրանոցս չինեալ յաշխարհին Սիւնեաց, ի գայթակղութիւն տանն իւրոյ, բազմաժամանակեայ տանջեալ ի դիւէ՝ ըստ յառաջագրելոցն, զառն ժամհուամբ սատակեցաւ չարաչար:

Եւ նենգաւորն վասակ կացեալ ի զրանն ամի ինչ կարի վշտագին և նեղութեամբ մեծաւ, մաշէր զաւուրս իւր, հառաչելով և յոգոց հանելով զամենայն օր և ժամ, մինչեւ թշնամակերպ ձազանօք սփռեալ զթաթս ձեռաց իւրոց՝ ինքնին զիւրոյին ծեծէր զդէմս, ասելով. Ահա ընկալ զայս ձազս, ասէր, զոր ես բերել քեզ ուխտանենգութիւն սրբոյ Աւետարանին և արիւն նահատակութեան Սրբոյն Վարդանայ Մամիկոնէի, և այլոցն ցանկալի հաղորդելոցն ընդ նմա. որոց ժառանգեալ զայսթեղնից կեանսն՝ ընկալան զանուն բարի յերկրի և անանց՝ յազգս իւրեանց: Իսկ դու, ասէ, մեզաւոր անձն իմ, կեաս խըղճիւ և ցաւօք մտաց՝ զսակաւութիւ զաւուրս կենցաղոյս, և պատրաստեալ պահիս մշանջենաւոր և անանց գհեղեին: Եւ զայսպիսի բանս հառաչանաց նորա և լալոյ՝ մինչեւ յօր մահուան իւրոյ, խօսէին ընդ մեզ զայս՝ արդարապատուին սպասաւորք նորին իշխանին Վասակայ. որոյ և վախճանն իւր անդէն յերկրին Պարսից վճարեր, ըստ բանի առն Աստուծոյ Սրբոյն Ղեւոնդի:

ՃԽԴ.

ՆՈՅՆ ԲԱՆ ԸՍՏ ԵՂԻՇԵԱՑ

(ԵՂԻՇԷ, Ե·)

Եւ եղեւ յաւուր միոջ մեծի՝ զամենայն երեւելին և զպատուականն հրամայէր (Ցազկերտ) յընթերիս կոչել: Կոչեցին և զուրացեալն. և նա ըստ առաջի

կարգի օրինացն արքունի՝ արկանէր զպատուական հանդերձն, զոր ունէր ի թագաւորէն. կապէր և զպատուավարսն [1], և վեցերն ոսկեղէն դնէր ի վերայ, և զկռանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր, և զգինդան յականջն, և զգումարատակն [2] ի պարանոցին, զամոյրսն զթիկամբքն. և զամենայն օրէնս պատուոյն զանձամբ արկեալ՝ երթայր յարքունիս, չքեղ և երեւելի քան զամենեսեան երեւէր բազմութեանն:

Իսկ նախարարքն որք կամօք ի Հայոց չոգան՝ անձամբ տուեալ զանձինս ի փորձութիւնն, և սուրբքըն [3] որ յառաջագոյն հասեալ էին, կապանօք ուղեկին զամենեսեան առ զրանն արքունի. իբրեւ տեսին զնա զարդարեալ և չքեղացեալ, և բազմամբոխ գնդաւ գայր յարքունիս, ի միտս իւրեանց սկսան այսպէս ասել. Ո՛վ անմիտ վաճառական, զաննման և զանանց պատիւդ եառար, և զանցաւորդ գնեցեր, զոր և զայդ եւս ընդ մօտոյ աւուրս կորուսանելոց ես: Եհաս և նատաւ ի ներքին դահլիճն, որ էր հրապարակ մեծամեծացն: Արդ, եկն ել սենեկապանն յարքունուստ, հարցանէր ցնա և ասէր. Արքայ յղեաց առ քեզ. յորմէ՞ գտեալ է քո զայդ ամենայն պատուական պատիւդ. սատ ինձ վաղվաղակի. վասն որո՞յ արդար վաստակոց: Եւ յոչ առնէր նմա զամենայն բանս ատենին, յորում դատապարտեցաւն. նա և զոր ոչ եւս անդ խօսեցան՝ զայն եւս յայտնեաց նմա. զի ոչ ըստ կարգի ունէր նա զտէրութիւնն Սիւնեաց աշխարհին, այլ նենգութեամբ և քաւթեամբ եհա սպանանել զհօրեղբայր իւր զՎաղենակ, և յինքն տարաւ զտէրութիւնն, իբրեւ քրտիկար [4] յարքունիս: Նա և այլ

1. Թանի մազկապ, զոհար քարերով հիւսուածք:
2. Վիզնոց, մարգարտաք և ադնիւ քարերով:
3. Այսինքն, Սուրբ Քահանայքն Ղեւոնդեանք:
4. Ըստ հին Բառագրոց՝ նշանակէ հարկաժողով.

եւս բազում բանիւք դատապարտեցին զնա. որում ամենայն աւագանին վկայ դային: Պապանձեցաւ ամենեւին, և չգտաւ բան ճշմարիտ ի բերան նորա: Իբրեւ կրկնեցին և երեքկնեցին, ցուցանելով ի ներքս յարքունիսն, հատաւ վճիռ մահու ի վերայ նորա:

Այր, եկն էլ գահճապետն, և մատեաւ առաջի ամենայն մեծամեծացն. մերկեաց ի նմանէ զպատիւն զոր ունէր յարքունուստ, և զգեցոյց նմա հանդերձ մահապարտի: Կապեցին զաստ և զձեռս, և կանանցարար նստուցին ի ձի մատակ. տարան եհան յայն զընդան, ուր կային մահապարտք ամենայն:...

Իսկ ուրացեալն վաստակ հայէր ի միաբանութիւն սուրբ կապելոցն, որք մեծաւ խնդութեամբ ընդունէին զչարչարանսն, և զուարթագոյն և պայծառք երեւէին, որպէս յառաջագոյն յարքունիսն. հայէր և կարօտէր, և ոչ ոք խառնեաց զնա ի նոսա, այլ ուրոյն նովին կապանօք պահէին: Եւ օր ըստ օրէ բերէին իբրեւ զգէշ ընկենուլն ի մեծ հրապարակին, ձաղէին և այպանէին, և տեսիլ ամենայն կատաւանին զնա առնէին: Կոզապետին հանին և ոչ ինչ թողին զոր ընդ իւրն ունէր. այնպէս ձաղեցին աղքատութեամբ, մինչեւ հաց մուրանային և բերէին նմա իւր ծառայքն: Եւ այնպէս սաստիկ արկին զպարտերս հարկաց աշխարհին ի վերայ տանն նորա, որ մինչեւ զվարց և զհաւուց և զիւր սարսս, և զզարդս կանանց եւս եդ ի վերայ և եհան, և տուժեցաւ, և ոչ կարաց հատուցանել զպարտսըն արքունի: Եւ յայն տեղի հատուցին, մինչեւ հարցանել նմա, եթէ կայցէ՞ ինչ գանձ ի գերեզմանս նախնեացն մերոց. և եթէ գտեալ էր նորա, հանէր և տայր ընդ իւր և ընդ ընտանեացն տուգանս. որպէս զի բազում մարդիկ չոգան ի տուժ

բայց ըստ բազմահմուտ մեկնըչին (Միք. Փարթ.) պէտք է կարդալ՝ քրոիկար, որ է գործակատար արդիւնաւոր:

ժին: Եւ իբրեւ այսպէս յամենայն կողմանց հաւրեալ վատթարեցաւ, անկաւ յախտս դժնդակս անդէն ի կապանսն. չեռաւ փոր նորա, և հարան և տրորեցան գոգք նորա, և քամեալ մղեցաւ թանձրամսութիւն[1] նորա. եռացին որդունք ընդ աչս նորա և ի վայր սորեցին ընդ ունգունս նորա. խցան լսելիք նորա, և ծակոտեցան չարաչար շրթունք նորա. լուծան ջիղք բազկաց նորա, և յետ կոյս կորացան կրկունք ոտից նորա. բղխեաց ի նմանէ հոտ մահու, և փախստական եղեն ի նմանէ ձեռնասուն ծառայք նորա: Լեզուն միայն կայր կենդանի ի բերան նորա, և ոչ գտաւ խոստովանութիւն ի շրթունս նորա: Ձաշակեաց զմահ հեղձամղձուկ, և էջ ի դժոխս անհնարին պատնութեամբ. ոսնհար եղեն նմա ամենայն սիրելիք նորա, և ոչ յագեցան սաստիկ հարուածովքն՝ ամենայն թշնամիք նորա:

Եւ այն որ կամէրն թագաւոր լինել մեզաք՝ Հայոց աշխարհին, ոչ երեւեցաւ տեղի գերեզմանի նորա. քանզի իբրեւ զշուն մեռաւ, և իբրեւ զգէշ քարշեցաւ: Ոչ յիշեցաւ անուն նորա ի մէջ Սրբոց, և ոչ մատեաւ յիշատակ նորա առաջի սուրբ սեղանոյն յեկեղեցւոջն: Ոչ ինչ եթող չարիս՝ զոր ոչ գործեաց ի կեանս իւր, և ոչ ինչ մնաց ի մեծամեծ չարեաց՝ որ ոչ անցին ընդ նա ի մահուան նորա:

Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբութիւն յանդիմանութեան մեզաց նորա. զի ամենայն որ զայս լուեալ գիտասցէ, նեղսի ի հետ արկցէ, և մի լիցի ցանկացող գործոց նորա[2]:

1. Հալեցաւ մարմինն, ջրոի պէս քամուեցաւ:
2. Ով քաղցրագան եղիչէ, սրբոյն արդար գառնութեամբ լցուեր ես սիրագ և կամէ զրիչդ:

ՃԽԵ

ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՌՇՏՈՒՆԵԱՑ ՊԱՏՄԻ ՋԱԻԵՐԵԼՆ ԱՏՐՈՒՇԱՆԻՆ

(ԵԳԻՇԷ, Ը.)

Ես ինձէն մաի ի կրակատունն ձեր, և տեսի՝ զի կային պաշտօնեայք ամբարչտութեանն մնասի կարծեացն ձերոց, և կրակարանն լի հրով առաջի նոցա բորբոքեալ այրէր: Հարցի ցնոսա բանիւք և ոչ գանիւ, թէ զինչ համարիք ի միտս ձեր՝ զկրակ պաշտամանս այսորիկ: Նոտուն պատասխանի և ասեն. Մեք ինչ ոչ գիտեմք. բայց այսչափ ինչ իմանամք, զի սովորութիւն է նախնեացն և հրաման բուռն թագաւորին: Ասեմ դարձեալ ցնոսա. Եւ դրնութիւն կրակիդ զինչ իմանալք. արարիչ կարծէք թէ արարած: Ասեն միաբան ամենեքեան. Արարիչ մեք զդա ոչ գիտեմք, նա և ոչ հանգուցիչ աչխատելոց. ձեռք մեր փապարեալ են ի կացնի, և ոդունք մեր տեառեալ են ի փայտակրի[1]. աչք մեր գիշացեալ են արտասուօք ի կծուութենէ ծխոյ դոցա, և երեսք մեր մրոտեալ են ի խանաւութենէ թանձրութեան նորին ծխոյ: Եթէ չատ մատուցանեմք նմա զկերակուրն, յոյժ քաղցնու. և եթէ բնաւ չտամք, ամենեւին անցանէ. և եթէ մօտ երթամք և երկիր պագանեմք, կիզու զմեզ. և եթէ ոչ երթամք մօտ՝ ամենեւին մոխիր լինի: Մեր այդպէս հասեալ է ի վերայ բնութեան դորա:

Ասեմ դարձեալ ցնոսա. Իսկ լուեա՞լ է ձեր, եթէ այլ ուսուցեալ է ձեզ զայդպիսի մոլորութիւն: Եւ նոտուն պատասխանի և ասեն. Չի՞ ի լսելոյ հարցա-

1. Կացինով փայտ կտրելով՝ ձեռաւընին խորցեր է. փայտ կրելով՝ կռնակնուն կաշին սկըռթուեր է:

նես զմեզ, այլ հայեաց ընդ առաջիկայ իրսդ. զի օրէնսդիրքն մեր ոգւովք մտաց միայն կուրացեալ են, այլ թագաւորն մեր մարմնով՝ միով ականն կոյր է, այլ ոգւոյն բնաւ չիք իսկ աչք:

Ապա այնուհետեւ և ես իրրեւ լուայ զայս ի մոգուցն, յոյժ ողոմեցայ. զի տգիտութեամբն զարդարն խաւեցան. տակաւին մի չարչարեցի զնոսա դանիւ, և նոցան իսկ եառ զկրակն ի ջուրն ընկենուլ, և ասացի այսպէս. Աստուածք՝ որ զերկինս և զերկիր ոչ արարին, կորիցեն ի ներքոյ երկնից: Եւ ապա զմոգան ի բաց արձակեցի:

ՃԽԶ

ՀՐԱԺԵՇՏ ՆԱԽԱՐԱՐԱՑՆ ՀԱՅՈՑ Ի ՂԵՒՈՆԴԵԱՆՑ

(Ղ. ՓԱՐՊԵՑԻ, ԺԱ.)

Հրաման տային սուրբ քահանայապետքն Աստուծոյ՝ կապելոցն նախարարաց, ազօթից և աքնուութեան պարապելոյ, ըստ կարգի իւրաքանչիւր ուրուք՝ զգիշերն զայն, ասելով ցամենեսեան այսպէս. Զի եթէ զոք ի ձէնջ այսօր յաւզարկեալ էիք ի Հայս, ոչ ապաքէն առ իւրաքանչիւր սիրելիս թուղթս ողջունացոյցս և պատգամս ուրախալիցս յղէիք խնդութեամբ. Նա և յաղագս ճանապարհորդելոյ ի ձէնջ ուրուք՝ խնդրէիք յԱստուծոյ ողջամբ հասանել առ իւրաքանչիւր ընտանիս, և զեպեալ ձեզ նմա զդանն՝ կատարել: Եւ արդ, աւասիկ յաւզարկիմք մեք ի ձէնջ առ Աստուած. խնդրեցէք աւետեաքեան ի փրկչէն Քրիստոսէ և ի Սուրբ Հոգւոյն, լինել անեղկիւղ քաջալերութեամբ ամենեցուն մեզ արժանի երկնաթռիչ ցանկալի ուղւոյն, տանել ձեզ ողջոյն և յանձնարարութիւն առ բա-

զումազոըմ Քրիստոս, և առ սուրբ գունդն առաքելոց և մարգարէից և ամենայն Սրբոց: Որոց միշտ բարեխօսութեամբ՝ թախանձեցի զորովալից գութ բազումազոըմ արարչին Քրիստոսի, լինել ձեզ մխիթարիչ և փրկիչ, և արձակեցէ զձեզ յեբեւելի կապանացդ՝ յորում էքդ, և ամաչեցուցանէ զնախանձորդս ձեր և զթշնամիս: Տացէ ձեզ տեսանել զաշխարհն Հայոց և զընտանիս ձեր, և անդ ամիսիթեալ զոսկերս իւրաքանչիւր ուրուք զձեր՝ առ ոսկերս հարց ձերոց ժողովեցէ. և յաներեւոյթ կապանաց սատանայի արձակեալ զոգիս ձեր՝ պահեցէ անվնաս յօր տեառն Յիսուսի Քրիստոսի:...

Եւ այսպէս օրհնեալ զերանելի կապեալն, և Հօր Ամենակալին յանձնեալ, ասեն. Նա պահեսցէ զձեզ ողջս, և Հոգւովն իւրով Սրբով մխիթարեսցէ զձեզ հանապազ: Եւ գուք մի՛ տրտմիք, այլ ուրախութեամբ ուրախ լերուք, որ ասացն, թէ, Ոչ թողից զձեզ որբս. գամ, ասէ, առ ձեզ. որ եկեալ իսկ է, և է ի միջի ձերում. որ արձակէ զձեզ ի կապանացդ՝ յորում էքդ, և պահեսցէ զձեզ յուսով օգնականութեան իւրոյ. և տայ ասել ձեզ համարձակաձայն պարծանօք, թէ, Վասն քո մեռանիմք զօրհնանապազ, համարեցաք որպէս զոչխար ի սպանդ: Եւ ամենատէրն խորտակէ զսատանայ ի ներքոյ ոտից ձերոց. երեւելիս և պայծառս ցուցցէ զձեզ ի մէջ ազգիս ամբարշտի. և զարձուսցէ զձեզ ի յերկիր ձեր: Պահեսցէ զտունս ձեր, անուսցէ զտղայս ձեր, ժառանգեցուսցէ զաւակի ձերում ըզվիճակ հարց իւրեանց:

ՃԽԼ

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՐԱՐԱՑՆ ՀԱՑՈՑ ՅԱՓՍՈՐՍՆ

(ԵՂԻՇԷ, Ը.)

Երեսուն և հինգ արք, են որ յաւագ նախարարացն և են որ ի կրտերագունիցն, սակայն ամենեքեան երկնային քաղաքացիք, և բազում եւս այլ ազատ մարդիկ, են որ յարքունի տանէ, և են որ ի տանէ նախարարացն իսկ նոցուն, նիզակակիցք և մարտակիցք քաջ նահատակացն. և ամենեքին առքա կամաք մատնեցան ի սուրբ կապանս չարչարանացն:

Այլ մեք առ այժմ ոչ ընդ այս եմք զարմացեալ միայն, զի կամաք չոգան մահն ի փորձութիւնն, այլ առաւել ընդ այն եմք աքանչացեալ՝ զի մարդիկ փափուկ իբրեւ զնոսա, ընդարձակասուն բնակիչք ձիւնեղէն լերանց՝ եղեն բնակիչք խարշակարեր դաշտաց: Որ զօրէն ազատ էրէոյ չրջէին ի մէջ ծաղկաբեր լերանց, ընկեցան ի բոցակէզ աշխարհն արեւելից, կապեալ ոտիւք և կապեալ ձեռաւք: Հայ նեղութեան և չուր կարօտանաց. խաւարարգել ի տուէ և անկոյս ի գիշերի. անվերարկուք և անանկողինք, գազանաբար գետնախչտիք լինէին զինն ամ և զվեց ամիս: Եւ այնպէս մեծաւ խնդութեամբ տանէին զնեղութիւնն, զի ամենեւին ոչ ոք սրբոտունջ հայհոյութեան ի բերանոյ նոցա լուաւ, այլ յորդառատ գոհացողութիւն, ըստ նմանութեան բազկեցիկ մարգկան, որ են յաստուածպաշտութեան:

Իսկ յերանելեացն բազումք ի նոցանէ՝ որ մանկագոյնքն էին, ուսան զդպրութիւն հայրենի աշխարհին իւրեանց, և եղեւ նոցա այն՝ կերակուր հոգեւոր, որով զանձինս քաջալերէին և զընկերսն

միխիթարէին: Եւ այնպէս զմայլեցան ի միտս և յոգիս իւրեանց, զի և որ ծերագոյնքն էին ի նոցանէ՝ փափկացան մատաղացան մանկացան. զի թէպէտ և դպրութեան ժամանակքն անցեալ էին, սակայն բազում՝ սաղմոս ի բերան առեալ՝ հոգեւոր երգակից լինէին մատաղերամ բազմութեան մանկըտւոյն: Եւ այնպէս բարձրացուցանէին զպաշտօնն սրբութեան, մինչեւ ամանց ի գառն գահճացն՝ մեծապէս քաղցրութիւն անկանէր ընդ լսելիս նոցա. և որչափ ի ձեռս իւրեանց էր՝ արտաքոյ արքունի հրամանին դիւրութիւն առնէին նոցա, և սէր խնամոյ ունէին առ ամենեսեան, և բազում անգամ զմարմնաւոր պէտս նոցա յնուին նոքա: Մանաւանդ զի նշանք եւս բժշկութեան յԱստուծոյ յայղոգեալ լինէր ի ձեռս նոցա, որպէս զի բազումք ի դիւահարաց սրբեցան ի նմին քաղաքի՝ ուր կապեալքն կային: Իրրեւ ոչ ոք գոյր առ նոսա քահանայ, դիմէին առ նոսա հիւանդք և ախտաժէտք քաղաքին, և ընդունէին ի նոցանէ վիւրաքանչիւր ցաւոց զառողջութիւն:

Նա և որ մեծ իշխանն էր աշխարհին՝ զոր և Հարեւդիոմ Շապուհ անուանէին, և նմա իսկ յանձն էին ամենայն պատժաւորքն, մեծապէս գութ սիրոյ էարկ առ ամենեսեան. գներս ի նոցանէ՝ առ հարս ունէր, և զմանկագոյնս ի նոցանէ՝ իրրեւ զսիրելի որդիս գգուէր: Բազում անգամ գրեաց և հրոյց յարքունիս՝ զվիշտս նեղութեան կապելոցն, և զառն առն իւրաքանչիւր զրարս ազնուականութեանն ցուցանէր նոցա. առաջի մեծամեծացն տառապէր, չանայր ազգի ազգի հնարիւք, մինչեւ բազում բարեխօսիւք ածին ի հաւան զթագաւորն: Հրամայեաց լուծանել զկապանս նոցա, և բառնալ ի նոցանէ զսուգ պատուհասին. և տգանել նոցա հանդերձ՝ զօրէն նախարարութեանն. կարգեաց նոցա առձիկ. և զպատրաստութիւն սպառազինութեանն՝ հրամայեաց յարքունուստ:

ՃԽԸ

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻԻՆ ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ

(ԵՂԻՇԷ, Ը.)

Ջայս ամենայն իրրեւ լուաւ Դենչապուհ ի բերանոյ սուրբ եպիսկոպոսին[1], անհնարին զայն հարաւ ի թշնամանաց թագաւորին և յանարգանաց դենին: Վասն որոյ և երկեաւ իսկ մատուցանել զնա ի տանջանս հարուածոց, թէ գուցէ այլ եւս մեծ անարգանս զթագաւորէն տացէ տալ յատենին, և ի նա ձգիցին կարծիք թշնամանացն, զի երկայնամտութեամբ պայքարեցաւ ընդ նոսա:

Եւ քանզի սուտեր ընդ մէջ ածեալ նոտէր յատենի՝ առ արկանելով Սրբոցն, գոչեաց իրրեւ առիւծ զայրագին, և հանեալ զսուտերն՝ զաղանացար յարձակեցաւ ի վերայ երանելեացն. և եհար եպիսկոպոսին զալ ուսն թիկամբն հետ, և զձեռն ի վայր ընկէց: Եւ նորա յահեակ կոզմն յերկիր անկեալ, և զարձեալ անգէն պատապարէր. առնոյր զալ ձեռն ի վեր. աղաղակեաց մեծաձայն և ասէ. Ընկալ, Տէր, զկամաւոր պատարագս, որ ինձէն զիս

1. Որ էր Ս. Սահակ եպիսկոպոսն Ծըշտունեաց: Դենչապուհ՝ վախնալով որ անոր համարձակ խօսածներն՝ իրեն կրակապաշտ կրօնքին և թագաւորին նախատինք համարուելով, ինքն այլ յանցաւոր համարուի՝ իբր պատճառ այն խօսքերուն, կուզ ուրեմն ապաննել մեր սուրբ առաջնորդները: — Ս. Ղեւոնդ երէց այլ երկար խօսած է՝ նոյն եպիսկոպոսը թարգմանն գնելով, զի ինքն պարսկերէն չէր գիտեր. երկար տանջեցին զինքը, Ս. Սահակայ պէս կրակապաշտները նեղելուն համար. և յառաջ քան զձգելնին՝ քարօք գետնի վրայ քաշկռտեալ տուին, ինչպէս պատմէ Ղազար Փարպեցի:

քեզ մատուցի բոլորովիմբ, և խառնեա զիս ի գունդս սուրբ զինուորացն քոց: Դարձեալ քաջալերէր զընկերակիցսն իւր և ասէր. Հապա, առաքինիք, եհաս ժամ կատարման մերոյ. խցէք զաչս մարմնոյ վայր մի, և այժմ տեսանէք զյոյսն մեր Քրիստոս: Եւ թաւալելով ընդ արիւն անձինն իւրոյ՝ ասէր. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, հանապազ օրհնութիւն նորա ի բերան իմ. ի Տէր պարծեսցի անձն իմ, լուիցեն հեզք և ուրախ եղիցին: Եւ ասելով զսաղմոսս զայս կատարէր մինչեւ ցայս տեղի. Բազում նեղութիւնք են արդարոց, յամենայնէ փրկէ զնոսա Տէր, և պահէ զամենայն ոսկերս նոցա:

Եւ մինչդեռ կայր յուժի սակաւիկ մի, իւրովք աչօք իսկ հայեցեալ՝ տեսանէր յերկնից եկեալ գունդ բազում հրեշտակաց, և վեց պսակ ի ձեռին հրեշտակապետին. դարձեալ, և լսէր եւս բարբառ ի վերուստ, որ ասէր. Քաջալերեցարուք սիրելիք իմ, զի ահա մոռացայք զվշտալի կեանսդ, և հասէք երանելի պսակացդ, զոր ձերով ճարտարութեամբ կազմեցէք. առէք, դիք յիւրաքանչիւր գլուխ. զի նիւթ պատրաստական ի ձէնջ հիւթեցաւ, իսկ ճըշմարտութիւն գործոյդ՝ յամենասուրբ ձեռաց Քրիստոսի կազմեցաւ. զոր ի սպասաւորաց այսի իսկ ընկալեալ, ընդ Ստեփանոսի լինիք պսակակից: Նա և զայն եւս տեսանէր, զի դեռ եւս չողայր սուրն ի վերայ պարանոցի երանելեացն:

Զոր իբրեւ եահս Սուրբն Ղեւոնդ՝ եթէ ոչ եւս զմի մի կամին հարցանել և դատել, այլ միանգամայն հրաման եղեւ մահու, ասէ ցերանելին Յովսէփ. Մատիր, յառաջնա ընդդէմ սրոյն. զի դու ասպիճանաւ ի վեր ես քան զամենեսեան: Եւ զայս իբրեւ ասաց, կարդացան կացին մի ըստ միոջէ. և առ ձեռ տագնապի ստիպելոյ գահճացն՝ միանգամայն հասին ընկեցին զպարանոցս երանելեացն՝ առաջի սուրբ եպիսկոպոսին. և նորա ընդ հանել ոգւոցն ազազակեաց և ասէ. Տէր Յիսուս, ընկալ զոգիս մեր ամենեցուն, և խառնեա զմեզ ի գունդս

սիրելեացն քոց: Եւ միանգամայն կատարեցան ամենեքեան ի նմին տեղւոջ:

Եւ եթէ զմոգպետն եւս, որ հաւատաց ի Քրիստոս՝ կամիցիս ընդ նոսա ի համար արկանել, թուով են եւթն. Թող զերկուսն եւս որ ի վարդգան կատարեցան, և միւսն՝ եպիսկոպոսն Թարիկ անուն յԱսորեստանի: Բայց անդէն ի տեղւոջն վեցեքին, որոց անուանքն են այսոքիկ. Սահակ եպիսկոպոս յՈչտունեաց, Սուրբն Յովսեփ ի Վայոց ձորոյ՝ ի գեղջէ Հողոցմանց, Ղեւոնդ երէց ի Վանանդայ՝ ի գեղջէ Իջաւանից, Մռուէ երէց յԱղբակայ, Աբրհամ երէց ի Բագրեւանդայ՝ ի գեղջէ Յեղեգեկայ, Քաջաչ սարկաւագ ուստի եպիսկոպոսն էր՝ յՈչտունեաց. իսկ երանելի մոգպետն ի Նիւշապուհ քաղաքէ. Սահռէղ երէց յԱյրարատոյ՝ ի գեղջէ Ամրամոյ, Աբրահամ սրկաւագ ի նմին գեղջէ:

Աբդ, զվեց զայս Սուրբս՝ յանապատին՝ ուր կատարեցին Դենչապուհ և մոգպետն և Զնիկանն[1] և մայրեսն, անդէն ի տեղւոջն պահապանս ընտրեցին յիւրաքանչիւր սպասաւորացն, և պահել հրամայեցին զմարմինս երանելեացն ցաւուրս տասն կամ եւս աւելի, մինչեւ կարասանն արքունի անցեալ գնասցէ. զի մի այլազգինքն եկեալ բառնայցեն զոսկերս դոցա, և բաշխեալ սփռեացեն ընդ աշխարհս ամենայն, յոր և մարդիկ եւս առաւել յորդորեալ մոլորիցին զկնի Նածարացւոց[2] աղանդին...

Եւ իբրեւ աւուրք երեք անցին ի վերայ, արհաւիրք մեծ անկանէին ի վերայ ամենեցուն, և իբրեւ թմբրեալք կիսամեռք անյարիր անկեալ գընէին զերիս աւուրսն. իսկ ի չորրորդումն աւուրն՝

1. Ասար համար մեր՝ պատմչին առաջ ըսածը սմանք թագաւորին մարզպետ կամ մարդպետ կարդան, բայց ուղիղն երեւի մնայպետ: Իսկ մոգպետին համար ուրիշ տեղ ըսուած է Մոման հանդերձապետ, այսինքն՝ մոգուց գլխաւորն:

2. Քրիստոնէից, հետեւողաց Յիսուսի Նազովրեցւոյ:

երկուք ի պահապանացն չարաչար լըկեցան ի դիւէ։ Դարձեալ, հասարակ գիչերաւ չափ՝ ձայնք ահեղք հնչէին, և թնդիւնք և որոտաձայնք ի ներքուստ՝ որպէս դղրդումն գետնաշարժի. երկիրն դողայր ի ներքոյ նոցա, և չոզիւնք սուսերաց փայլատակունս արձակէին չուրջ զնոքօք։ Եւ զամենեսեան զդիա-կունս կանգնեալ տեսանէին, և զնոյն բանս առնին ահագինս բարբառէին ի լսելիս նոցա. մինչեւ խու-ճապել նոցա ընդ միմեանս, զեռ եւս զիրեարս սա-տակէին։ Եւ այսպէս տագնապեալք և ցնորեալք մինչեւ այր զընկեր ի փախուստ՝ չգիտէր ընդ որ երթայր։ Եւ եկեալ պատմէին մեծաւ զարմացմամբ զամենայն անցս չարչարանացն, զոր կրեցին։

ՃԽԹ

ՏԻԿՆԱՑՔ ՆԱԽԱՐԱՐԱՑՆ ԿԱՊԵԼՈՑ

(ԵՂԻՇԷ, Ը.)

Իսկ կանայք երանելի առաքինեացն, և կապե-լոցն և անկելոցն ի պատերազմին, ընդ ամենայն աշխարհն Հայոց համօրէն համարել ես ոչ կարեմ. զի բազում այն են զոր ոչ գիտեմ քան թէ գի-տիցեմ։ Զի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչեմ. ոչ որ միայն աւագագոյնքն էին, այլ զբազումս ի կրտսերագունաց անտի։ Ամենեքեան միահամուռ զերկնաւոր նախանձ բերելով, ոչ ինչ ընդհատ երեւեցան յայնցանէ՝ որ ոչ ճաշակեցին զաչխարհ։ Քանզի, եթէ աւագագոյնք էին և եթէ մանկագոյնք, զմի առաքինութիւն հաւատոց զգե-ցան։ Ոչ ինչ յիշեցին ամենեւին զանուն փափկու-թեան մայրենի ազատութեանն, այլ իբրեւ մարդք՝ որ վշտամբեր լեալ իցեն անդստին ի չինական սո-վորութեանցն՝ տանջելով վարեալ զկեանս աչխար-

հիս, անդրագոյնք եւս քան զնոսա յանձն առին զհամբերութիւն վշտաց։

Ոչ միայն յոգիսն մխիթարեալ կացին առ ան-երեւոյթ զօրութիւն յուսոյն յաւիտենից, այլ և մարմնոյ նեղութեամբք առաւել եւս բարձին զբեռն ծանրութեան։ Զի թէպէտ և ունէին զիւրաքանչիւր ձեռնասուն սպասաւորս, ոչ ոք երեւէր ի նոցանէ՝ թէ որ տիկինն իցէ և կամ որ նաժիշտն[1]. մի հան-դերձ էր հասարակաց, և միապէս գետնախառիք երկոքեան։ Ոչ ոք ումեք անկողնակից լինէր. քանզի և չճանաչէին իսկ զետուզէնան ընտրել ի միմեանց. մի գոյն թխութեան փըսըսային[2], և մի գոյն սե-ւութեան անարիւ բարձին։

Ոչ գոյր նոցա համեմ խահամոքք անուշարար առանձինն, և ոչ հացարարք որոշեալ ի պէտս ըս-պասու՝ ըստ ազատաց կարգի, այլ հասարակաց էր չարութամուտն, ըստ կարգի միայնակեցաց, որ յա-նապատս բնակեալ են։ Ոչ ոք ումեք ջուր ի ձեռս արկանէր, և ոչ կրտսերք աւագաց դաստառակս[3] մատուցանէին. չանկաւ օշնան[4] ի ձեռս փափկասուն կանանց, և ոչ մատուցաւ իւղ ի զուարթութիւն խրախութեան։ Զեղան առաչի սուրբ սկտեղք[5], և ոչ անկան բաժակակալք յուրախութիւն. չեկաց ուրուք նոցա նուիրակ[6] առ դուրս, և ոչ կոչեցան պատուականք յարանց ի տաճարս նոցա. չյիչեցան նոցա՝ թէ գուցէ ոք ամենեւին ի բնականաւոր դայեկաց և կամ բնաւ ի սիրելի հարազատաց։

Փոչոտեցան և ծխոտեցան սրահակք և սրակա-

1. Աղնուական աղախին, իբր Dame d'honneur.
2. Կամ փրիսա, չոր խոտէ անկողին։
3. Ջեռաց սրբիչ։
4. Սապոնի փոխան լուացուելու գործածուած փըր-փրացող Օշնան խոտեղէնը, Saponaire, պարսկերէն Իշլնան։
5. Ափսէ, որոյ վրայ զրուին բաժակք և պնակք։
6. Սեղանի կամ հանդիսի հրաւիրող մարդ։

պանք[1] նորեկ հարսանց, և սարդի ոստայնք ձգեցան ի սենեակս առագաստաց նոցա. կործանեցան բարձրադահք առաջարաց նոցա, և խանգարեցան սպասք երախանաց[2] նոցա. անկան կործանեցան ապարանք նոցա, և տապալեալ աւերեցան ամուրք ապաստանի նոցա: Զօրացան ազազեցան բուրաստանք ծաղկոցաց նոցա, և տաշտախիլ եղեն[3] որթք գինեբեր այգեաց նոցա: Աչօք իւրեանց տեսին զյափշտակութիւն արարոց իւրեանց, և ականջօք իւրեանց լուան զվիշտս չարչարանաց սրբելեաց իւրեանց. առան գանձք իւրեանց յաքքունիս, և ոչ մնացին ամենեւին զարդք երեսաց իւրեանց:

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ զրգեալք և գգուեալք էին յիւրաքանչիւր պատեհս[4] և ի գահաւորակս, հանապազ բակ և հետի երթային ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք՝ զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն: Որ ի մանկութենէ իւրեանց անեալ էին ուղղակ զուարակաց և ամճովք երիցս, խոտաբուծ կենօք իրրեւ զվայրենիս ընդունէին զկերակուրն՝ մեծաւ խնդութեամբ, և ոչ յիշէին ամենեւին զսովորական փափկութիւնն: Սեւացեալ ներկան մորթք մարմնոց նոցա, վասն զի ցերեկ արեւակէզք էին և գամենայն գիշերս՝ գեռնաբեկք[5]: Սաղմոսք էին մշտնջենաւոր մրմունջք ի բերանս նոցա, և մխիթարութիւնք կատարեալք՝ ընթերցուածք մարգարէից: Միաբանեցին երկու երկու՝ իրրեւ ամոլք[6] հաւանք և հաւասարք՝ ուղիղ տանելով զակօսն արքայութեանն, զի առանց վրիպելոյ հասցեն ի նաւահանգիստն խաղաղութեան:

Մոռացան զկանացի տկարութիւն, և եղեն արուք առաքինիք ի հոգեւոր պատերազմի. մարտ եղեալ կռուեցան ընդ մեզն կարեւորս[1], հատին կտրեցին և ընկեցին զմահարեր սրմամբ նոցա: Միամտութեամբ յաղթեցին խորամանկութեանն, և սուրբ սիրով լուացին զկապուտակ ներկուածս նախանձուն. հատին զարմատս ագահութեան, և չորացան մահաբեր պտուղք ոստոց նոցա: Խոնարհութեամբ կռփեցին զամբարտաւանութիւն, և նուաճին խոնարհութեամբ հասին երկնաւոր բարձրութեանն: Աղօթիւք բացին զփակեալ դրունս երկնից, և սուրբ խնդրուածովք իջուցին զՔրիստոս ի փրկութիւն. լուան աւետիս ի հեռաստանէ, և փառաւորեցին զԱստուած ի բարձունս:

Այրիք որ ի նոսա էին՝ եղեն վերատին հարսունք առաքինութեան, և բարձին յանձանց զնախատինս այրութեանն:

Իսկ կանայք կապելոցն՝ կամօք կապեցին զմարմնաւոր ցանկութիւնս, և եղեն կցորդ չարչարանաց սուրբ կապելոցն. ի կեանս իւրեանց նմանեցին քաջ նահատակացն՝ մահուամբ, և ի հեռաստանէ եղեն վարդապետք մխիթարիչք՝ բանտարգելեացն: Մատամբք իւրեանց վաստակեցին և կերակրեցան. և զկարպեալ ոսկիկ նոցա յարքունուստ՝ ամ յամէ թոշակ առնէին և տային տանել նոցա ի մխիթարութիւն: Աննարիւն ճգնանց նմանեցին, որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան, և կենդանի են միայն զօդն ծծելով, զանմարմնոցն բերեն զնմանութիւն:

Բաղում ձերոց հալեցան առնամանիք, եհաս գարուն, և եկին նորեկ ծիծեռնունք. տեսին և խընդացին կենցաղատէր մարդիկ. և նոքա՝ ոչ երբեք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց: Ծաղիկք

1. Հարսին առագաստն, և հագուստի ու զարդարուեստիս սենեակք, որք սովորաբար վարագուրիւ դռնիւքով իրարմէ զատուէին:
2. Կոչունք, ուրախութեան պէտք եղած բաներ:
3. Նոր անկուած որթեր կամ այգիներն խլուեցան:
4. Հին Բառգիրք մեկնեն դևապակ և կռապա?
5. Գեռանի վրայ պառկելով՝ մարմիններն կտրտուէր:
6. Հողը չիտակ գծով հերկող կենդանեաց նման:

1. Դիւրաւ սխալելոյս և շատ պատահելոյս մեղքերը:

զարնանայինք յիշատակեցին զպատկասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի զեղ երեսաց նոցա: Սպառեցան բարակք[1] որսականք, և խզեալ կուրացան արշաւանք որսորդաց: Բնագրօք յիշատակեցան[2] նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա ի հեռաստանէ: Ի ճաշատեղս նոցա հայեցան և արտասուեցին, և յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա: Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա:

Եւ իրրեւ այնպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միաք նոցա, ոչ ինչ կասեալ խուլացան յերկնաւոր առաքինութենէն: Արտաքնոցն՝ երեւէին իբրեւ այրիք սգաւորք և չարչարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք և մխիթարեալք երկնաւոր սիրովն: Ոչ եւս սովորեցին հարցանել զկեալ ոք ի հեռաստանէ, եթէ երբ լինիցի մեզ տեսանել զսիրելիան մեր. այլ այն էին իղձք աղօթից նոցա առ Աստուած, եթէ, որպէս սկսանն՝ քաջութեամբ՝ ի նմին կատարեսցին լի երկնաւոր սիրովն:

ՃԺ

ԴԱՐՁ ԱԲՐԱՀԱՄՈՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՂԻ Ի ՀԱՅՍ

(ԵՂԻՇԷ, Ը.)

Եկն եհմուտ յաչխարհն Հայոց. փութացան և ելին ընդ առաջ նորա վաղվաղակի արք և կանայք, մեծամեծք և փոքունք, և ամենայն բազմութիւն

1. Որս բռնելու վարժած շուներ:
2. Թուի թէ գրուած յիշատակարաններ կային ազնուց անուամբ՝ հանդիսի տեղերում, և իրենք չէին երեւնար:

ազատաց և չինականաց: Ընկանէին առաջի, փառէին զոտիւք և զձեռօք Սրբոյն, և ասէին. Օրհնեալ Տէր Աստուած ի բարձունս, որ առաքեաց մեզ հրեշտակ յերկնից՝ բերել մեզ աւետիս յարութեան, զի լինիցիմք ժառանգք արքայութեան. զի ահա ի քեզ կերպարանեալ տեսանեմք զամենեսեան՝ զհրաժարեալն յաւուր յարութեամբ, և զկապեալն ակնկալութեամբ արձակելով: Ի քեզ տեսանեմք և զաշխարհին չինութիւն խաղաղութեան. քեզ եկեզեցիքն մեր ցնծացեալ բերկրին, և քեզ սուրբ վըկայքն մեր անդադար լիցին մեզ ի բարեխօսութիւն առ Աստուած: Օրհնեա զմեզ, սուրբ հայր մեր. դու ես բերան հանգուցելոցն. խօսեաց ընդ մեզ յայտնի օրհնութեամբ, զի յոգիս մեր լուիցուք ի ծածուկ զօրհնութիւնս Սրբոցն:

Հորդեցեր ճանապարհ այնոցիկ՝ որ անձկացեալ էին գալ յերկիր իւրեանց. խնդրեա յԱստուծոյ՝ զի ատեպ եկեսցեն զհետ սուրբ կարապետիդ. և որպէս հորդեցեր զարգելեալ ճանապարհ երկրի, բաց և յերկինս զդուռն աղօթից մերոց, զի և մեր մեզաւորաց մտցեն պաղատանք առաջի Աստուծոյ, ի բարեխօսութիւն նոցին կապելոց. և մինչդեռ եմք յերանելի մարմինս, որպէս տեսաք զքո զերանելի արքութիւնդ, տեսցուք և զսիրելի անձկալիսն մեր, որ ի բազում ժամանակաց հարեալ և պաշարեալ եմք յոգիս և մարմինս մեր: Արդ հաւատամք յանսուտ յոյսն, զի որպէս լցեալ կատարեցաւ ի քեզ տեսիլն ի սուրբ սէր քո, այսպէս և ընդ մեծոյ ունիմք տեսանել զճշմարիտ վկայն Քրիստոսի, որ հանապազ խանդակաթ եմք ի տեսիլս երկնաւոր գեղոյ նորա:

Բայց երանելի Խոստովանողն, թէպէտ և այսպէս սիրով ընկալեալ եղեւ յամենայն աշխարհէն, ոչ ինչ կամեցաւ ամենեւին մերձենալ առ ոք՝ ըստ մարմնոյ կարօտութեան. այլ ընտրեաց իւր տեղի մի զատ յամենայն բազմամբոխ ժողովրդոց, և առաքինի եղբարբք երիւք կատարեաց զկեանս իւր մեծաւ ճգնութեամբ:

Զոր՝ եթէ կամիցի ոք ի կարգ արկանել, գժուա-
բաւ կարասցէ ասել զվարս առաքինութեան նորա։
Զի եթէ զաքնութիւնն ասիցես, իբրեւ զկանթեղ
անչէջ կայր զամենայն դիչերս. և եթէ զսակաւա-
պիտութիւն կերակրոցն, համարեաց եթէ զանկերա-
կուր հրեչտակացն բերէր զնմանութիւն։ Եթէ զհե-
զութիւն յածութեանն կամիցիս ասել, ոչ զոք ի
կենդանեաց կարիցես գտանել նման նմա. և եթէ
զանընչասիրութիւնն կամիցիս ասել, դարձեալ՝ զոր
օրինակ չպատրի մեռեալ՝ ի կարասի, զնոյն օրի-
նակ ճշմարտութեամբ և առ երանելին իմասիր։

Աղյագական ձայնիւ հանապազորդեալ էր ի պաշ-
տաման, և անհատ ազօթիւք միշտ ընդ Աստուծոյ
ի բարձունս խօսէր։ Աղ եղեւ նա անհամելոց, և
խթան ընդոստուցիչ՝ ամենայն հեղգացելոց։ Դարո-
վեցաւ նովաւ ագահութիւն, և կարի յոյժ ամա-
չեաց նովաւ չուայտութիւն որկրամոլութեան։ Ա-
ռողջութիւն եղեւ նա աչխարհիս Հայոց, և բազում
վիրաւորք ի ծածուկ՝ նովաւ գտին զառողջութիւն։
Եղեւ նա վարդապետ կատարեալ վարդապետաց
իւրոց, և սուրբ հայր՝ խրատուաւ հարանց իւրոց։
Ի լուր համբաւոյ նորա խմաստնացան ազէտք, և
ի տեսիլ մերձաւորութեան նորա՝ զգաստացան լըկ-
տիք։ Բնակեալ էր ըստ մարմնոյ՝ ի նեղ խցկանն,
և ահ սրբութեան նորա անկեալ էր զհեռաւորօք և
զմերձաւորօք։ Զարհուրեցան գեւք և փախեան ի
նմանէ. իլին հրեչտակք և բանակեալ էին զնովաւ։

Յոյնք երանի եռուն վասն նորա՝ աչխարհիս
Հայոց, և բազում բարբարոսք՝ փութացան տեսա-
նել զնա մարմնով։ Սիրելի եղեւ նա սիրելեացն
Աստուծոյ, և զբազումս ի թշնամեացն ճշմարտու-
թեանն ած ի հաւանութիւն սուրբ սիրոյ։ Սկիզբն
արար առաքինութեան անդստին ի տղայ սիոց
իւրոց, և նովին առաքինութեամբ կատարեցաւ ի
վախճան կենաց իւրոց։ Որպէս ոչ խաւնեցաւ ի
կարգս սուրբ ամուսնութեան աչխարհիս, այսպէս
չեմուտ ընդ մարմնաւոր պիտոյիւք ամենայն ապա-

կանացաւ իրաց աչխարհիս։ Եւ եթէ պարտ է պար-
զաբար ասել, որպէս փոխանակեաց զպէտս մարմնոյ
ընդ պիտանացաւ հոգեւոր իրաց, այսպէս փոխա-
դրեալ եղեւ յերկրէ յերկինս։

ՃԾԱ.

ՇՈՒՇԱՆԻԿՆ ՎԱՐԴԵՆԻ

Ի ժամանակս Պարսից թագաւորութեանն՝ բը-
դեաչխն Վասակն որդի Աշուչայ բդեչխի[1] ի գուռն
արքունի երթեալ՝ ուրացաւ զքրիստոնէութիւն, և
եղեալ ընդ պարսկական օրինաքն, ի կամաց՝ և ոչ ի

1. Յիշուեցան երբեմն Հայապատումիս մէջ Բը-
դեաչխք. ասոքա բարձրապատիւ քան զայլ նախարարս
և զերեթ կէս ազատ տէր և իշխան էին՝ Հայոց ընդ-
արձակ թագաւորութեան այլեւայլ սահմանաց, որոյ
համար և Մահմանակալ կոչուին։ Ասոնց մին էր հիւ-
սիսային կողման Բդեչխն, միջասահման երկրին Հայոց
և Վրաց, որ երբեմն Հայոց Գուգարք նահանգի մաս
համարուէր, Տփղեաց գաւառին հարաւակողմն, Վրաց
դաշտ և Գաչևիք կոչուելով, երբեմն այլ Վրաց թա-
գաւորութեան վիճակէր։ Հայոց արշակունեաց տէրու-
թեան վերցուելէն ետեւ՝ այդ Բդեաչխքն աւելի ազա-
տութիւն մ՚առին, մէկ և չքաժնուեցան ի Հայոց մի-
քանութենէն, ինչպէս յայտնի կ՚երեւի ժամանակին
դիպուածներէն։ Վարդանանց հետ միաբանելոց մէջ
նախադաս տեսնուի Աշուչայ բդեչխն, որ և ոչ միայն
անոնց հետ կանչուեցաւ և գնաց առ Յազկերտ, այլ և
յետ անոնց խաղաղի կեզծ ուրացութեան՝ երբ արձա-
կուեցան իրենց տեղը, Յազկերտ իբրեւ պատանդ քովը
պահեց զԱշուշայ և ուրացող Վասակայ մարզպանին
որդիքը, իբրեւ երկու ամենէն բարձր իշխանաց. որոց
հետ կային և Վարդանայ ազգակցական եղբօրորդիքն.
և այս յայտնէ մեզ Ս. Սպարապետին այլ բարձրապա-
տիւ ըլլալն։ Յետ նահատակութեան սորա և Վեւան-

հարկէ և ի բռնութենէ: Եւ կին ունէր զդուստր Վարդանայ՝ Հայոց սպարապետի Մամիկոնէի, թոռին Սրբոյն Սահակայ Պարթեւի և Հայոց հայրապետի, ի դստերէն Յահակաւորայ. և անուն նորա Վարդենի ի ծնողացն կոչեցեալ, և Շուշանիկ յորջորջանօք յետոյ անուանեալ. բարեպաշտօն և

երկիւղած յԱստուծոյ: Եւ ման լինի և անառակ վարուց առնն՝ ազաչէր զհաւատացեալն՝ աղօթս առնել առ Աստուած, զի թերեւս գայցէ ի զղջումն. և հոգայր և կասկածէր յորժամ ի դուռն արքունի չգաւառ, թէ ուրանայ զԲրիստոս: Զոր և արար ամպարիշտն, ուրանալով զՏէրմարիան Աստուած և երկրպագէր կրակի, և ուխտէր ընդ սատանայի, և խնդրէր կին պարսիկ ի թագաւորէն. և նա հաւատայր նմա, և տայր զկնոջ իւրոյ մայրն նմա ի կնութիւն. և յանձն առնէր զկինն առաքին և զորդիսն՝ դարձուցանել ի մոգութեան օրէնս: Եւ ամպարշտութեամբ դառնայր յաշխարհ իւր. և յղէր յառաջագոյն յաշխարհ իւր զզալուստ իւր և զդառնալն: Եւ եկեալ սմին առաջի սրինգոյն Շուշանկանն՝ տալ զողջոյն զառնէ իւրմէ. և նա ասէ, թէ, Արդարեւ ո՞ղջ իցէ հոգւով. երգիեցուցանէր զայրն յԱստուած կենդանի: Եւ (նա) ասէր արտասուօք. Այրն քո՝ ուրացաւ զՏէրմարտութիւնն և երկիր եպագ սարուչանաց, և եղեւ ընդ պարսկական օրինաւքն: Եւ սրինգին յերկիր կործանեցաւ. լայր դառնապէս, և եղուկ զայրն զուրացեալ յԱստուծոյ՝ ասէր, և աւաղ զորդիսն վարկանէր: Եւ յետ բազում ողբոց և հառաչանաց՝ յարուցեալ երթայր յեկեղեցին, և զորդիսն իւր ընդ իւր առնէր, զի էին նորա երեք որդիք և դուստր մի. և անկանէր առաջի սրբոյ սեղանոյն, և ասէր այսպէս. Տէր Աստուած ամենակալ, արարող երկնի և երկրի, և որ ի նոսա արարածք իցեն. դու ահմամանեցեր այնպիսի օրէնս ազատութեան Միածնիւդ քո Որդւովդ սրհնութեամբ բանիւդ քո, ի ձեռն ծառայից քոց սրբանելոցդ, զրուէալս կենսաբեր աւետարանաւն, նոր և վերընծին ծննդեամբ ջրով և Հոգւով, որդիս լուսոյ և որդիս աւնձեան լինել և անուանել. և մաքրիլ ի գիշերային և յախտաւոր ծննդենէ՝ որ ըստ մարմնոյ՝ յառն և ի կնոջէ յառաջ գան, և այցելութիւն գտանել ի լուսաւոր ծննդենէն՝ որ ի Բրիստոս Յիսուս, և լինել մի հօտ միոյ հովուի հնմարտի

դեանց՝ Աշուշայ խնդրեց և իրեն հետ դարձուց այս Մամիկոնեան պայազատները, և իր տան մէջ դարմանեց և դաստիարակեց. վասն զի անոնց հայրն Հմայեակ և ինքն՝ քենակալք փեսայք էին երկուց քերց Աղաւնայ Արծրունւոյ (տես Յօդ. 127). Հմայեակ հայ կինն կոչուէր Զոռիկ, Աշուշային՝ Անուշ-Վռամ:

Ի չնորհս պատմութեան և հնագիտութեան՝ բարեբաղդաբար այս Աշուշայ բդեշխը կերպարանող թանկ քանդակ մի ազատուեր է ժամանակին արկածներէն, երկտակ ադնիւ եղնդնաքարի վրայ (Onyx) փորուած, զոր ներկայացընեմք, և որ մազերուս հիւսուածովն և Մազկապովն՝ ցուցընէ եւս իր տարազը (costume): Պատկերին եզերքն այլ յատնարէն փորագրուած է (ΑΣ)ΟΥΣΑΣ ΠΗΤΙΑΞΗΣ ΙΒΗΡΩΝ ΚΑΡΧΗΔΟΝ. այսինքն. Աշուշա Բդեաշխ Վրաց Կարխիդաց? եաքի անունս անծանօթ է. ըստ մեզ պէտք էր ըլլալ Գուռգարաց, ինչպէս կ'անուանէ զնա Խորենացի (գ. կ.) իսկ Վազար Փարպ. և այլք՝ Վրաց:

Ի Պարսից դառնալէն քիչ տարի վերջը վախճաներ է Աշուշայ, և յաջորդեր է որդին Վազգեն կամ Վասգեն, անարժան փեսայ Մեծին Վարդանայ, որպ դստրըն առեր էր, Վարդենի կամ Վարդուհի, որ և պայծառութեանն համար Շուշանիկ կոչուէր: Ասոր վրայ անդթացաւ Վազգէն՝ քան զՅազկերտ. զի և ոչ ինչպէս իր Հայրն՝ կեղծաւորութեամբ ուրացեր էր զբրիստոնէութիւն, այլ յօժարութեամբ, ի կատաղ կ'ըսէ պատմիչն: Իր սուրբ սիկնոջ նահատակութենէն չտա տարի վերջ դառաւ իրեն արժանի պատիժը. Վախտանդ Վրաց թագաւորն՝ որ դաշնակից էր Վահանայ Մամիկոնենի՝ հօրեղբօրորդւոյ Ս. Շուշանկան՝ սպաննեց զանգգամն Վազգեն, ինչպէս կոչէ զնա և Վազար Փարպեցի (կգ), որ անոր հօր տանը մէջ կեցեր էր իր պատանեկութեան տարին, վերոյիշեալ Մամիկոնեան պայազատաց հետ:

Յիսուսի Քրիստոսի: Եւ արդ, ես՝ իմ ինչ ոչ հա-
մարիմ զոսա՝ զծնեալս յառնէ ամպարշտէ՝ ըստ
մարմնոյ, մահկանացուս ի մահկանացուէ. և ոչ
ասել ինձ, Տէր, եթէ արժանիս համարիս զոսա
ծնել ի ճշմարիտ և ի վերատին ծննդեանդ՝ ի Հայր
և յՈրդի և ի Հոգին Սուրբ, և անեալ յարդարու-
թիւն ի վերայ բազկաց իմոց առաջի քոյոյ տէրու-
թեանդ. պահեա զնոսա ճշմարտութեամբ ի հաւատս
ուղիղս և ի գործս բարիս, զգաստութեամբ և ար-
դարութեամբ և առաւելապաշտութեամբ կեալ
յերկրի, և ոչ պաշտել զարարածս՝ այլ զարարիչդ,
որ ես օրհնեալ յաւիտեանս. ամէն: Զի դիմեալ
գայ ուրացեալն և լի ամպարշտութեամբ՝ որպէս պիս
և զծնունդս իմ ի վիճս կորտեան: Եւ արդ, ասէր
Յիսուս Քրիստոս, քեզ յանձն առնեմ զիս և զոր-
դիս իմ, որ ասէրդ ես և Աստուած. և պատրաստ
եմ ես չարչարիլ և մեռանիլ վասն անուանդ քո
սրբոյ, և ոչ հաւատարիլ կամաց ուրացողին և պիղծ
անկողնակցին: Զի դուք ես Աստուած ճշմարիտ, և
քեզ վայելէ երկրպագութիւն և փառք յաւիտեանս.
ամէն:

Եւ բազում պարապանս ամենասեռանն մատու-
ցանէր արտասուօք՝ երանելին, յայգուէ մինչեւ ցե-
րեկոյ, յեկեղեցւոջն: Եւ կատարեցին զպաշտօն երե-
կորին՝ ուրախ եկեղեցւոյն. և ամենեքին սգակիցք
լինէին, և ակն ածէին խօսել բան վասն այնորիկ:
Եւ նա չարաչեալ մտանէր ի տնիկ մի փոքրիկ,
որ մերձ էր յեկեղեցին. և կայր յաղօթս առ Աս-
տուած՝ լալով և ողբալով զգիշերն ամենայն ան-
հանգիստ, ամենեւին ոչ ինչ ճաշակեալ, ի գառնու-
թենէ անձին իւրոյ. և ոչ իշխէր (ոք) համարձակ
խօսել բան ի մերձաւորացն: Եւ եպիսկոպոսն[1] ոչ
պատահէր ի ժամուն յայնմիկ ի տանն բդեշխին.

1. Յատուկ եպիսկոպոս տան բդեշխին՝ էր եպիսկո-
պոս անուր գլխաւոր քաղաքին՝ որ է Յուրտաս, որոյ
այն ժամանակի եպիսկոպոսն կոչուէր Ափոց:

բայց երէց դրան տիկնոջն՝ համարձակեալ սփոփել
զտիկինն՝ վասն անհնարին վանգիցն, ասէր ցե-
րանելին. Յիշեա զԱստուած, և նովին յուսոյն ըզ-
քեզ մխիթարեա, որ տայ երկայնամտութիւն տա-
րակուսելոց, և կեանս այնոցիկ՝ որ մահեալ են սըր-
տիւք: Աղաչեմ զանձնդ սփոփեա ի Քրիստոս. և
մարթիր զբարիոք մարան՝ որով կեաս և հանդի-
ստանաս. և մխիթարութեամբ զանցաւորս թողուլ,
և յուսոյն մերձենալ առ Աստուած, որ կարողն է
յաւէնայնի. թէպէտ և ոչ զոք ունիս համաչունչ
եթէ ընտանեբար հոգայցէ վասն քո: Եւ այլովք
բանիւք բազմօք քաջալերէր և մխիթարէր զնա:

Եւ մերձաւորացն ընդ նա համարձակեալ՝ առնուլ
կերակուր. և ունկնդիր եղեալ՝ սակաւ ինչ ճաշա-
կեալ կերակուր և ըմպելի. և յարուցեալ գոհանայր
զՏեառնէ, և զգիշերն ամենայն յաղօթս և ի սաղ-
մոսերգութիւնս և յընթերցուածն զրոց անցուցանէին:
Եւ փոքր ինչ՝ մրըրկեալ սիրտն և տարակուսեալ և
խռովեալ՝ կադգուբերէր յուսոյն Աստուծոյ....

Եւ յարուցեալ ինքնին երթայր (վազէն), և
զրազումն ի ծառայիցն ընդ նմա առեալ՝ գտանէր
զնա յեկեղեցւոջն, և ոչ ներէր. այլ մտեալ հար-
կանէր զնա բրօք սաստիկ, և բուռն հարկանէր ըզ-
հերացն և քարչէր յեկեղեցւոյն ի դուրս: Եւ ոչ
ոք իշխէր բուռն հարկանել և թափել ի գայլոյն՝
զորոյն Քրիստոսի: Բայց մի ումն ի քահանայիցն,
Զի՛ այդպէս անողորմ չարչարես, ասէր. և նա ի
վերայ նորա զցասումն հեղոյր, և հարկանէր սաս-
տիկ յոյժ զնա. և ամենայն ժողովուրդքն զնիւ
բարձեալ լային առ հասարակ՝ արք և կանայք. և
նա դիմէր յամենեսեան ի հարուածս, որպէս զա-
զան չար և անընդել: Եւ զերանելին քարչէր ընդ
երկիրն, ընդ փուշ և ընդ խոչ և ընդ քար. և ապա
յապարանն հրամայէր տանել. և պատառ պատառ
լինէր ամենայն մարմին նորա. զի էր զժնիկ[1] եր-

1. Փչոտ էր զեռնն կամ խորտուբորտ, ուսկից
քարչէր զազանացեալն Վազգէն զտիկինն:

կիրն, և արիւնն ի նմանէ՝ զերկիրն արեամբ (ողողեալ) ցուցանէր տեսողացն:

Եւ հասեալ յապարանն՝ դարձեալ ի հարուածոն յաճախէր, և առաւել քան զառաջինն: Եւ երանելի աղախինն Քրիստոսի ոչ ինչ բարբառէր. այլ եթ զինքն Աստուծոյ և ժուժկալութեան. և կայր մեծաւ ուժով, և ոչ ինչ զրեաց զքարշելն և ոչ զրբաձեռ գանիցն. զի հանդերձիկն սր զանձամբն և զգլխովն՝ ի քարշանացն ի բաց զերծայր ի նմանէ. և մերկ գլխովն և պատառատուն զգեստովն պատրսպարէր զանձն. և գոհանայր զՏեառնէ վասն անցից անցելոց: Եւ ամպարիշտն ոչ ամաչէր և ոչ ողորմէր. այլ յայգմանէ չարին՝ յարուցեալ իբրեւ զհեզատաս սաստիկ ողողել գերփել կարծէր զլուսաւսր վարս և զսրսւթիւն երանելւոյն, և ասէր. Օգնեացէ քեզ Քրիստոս և աղօթք հարցն քո, յոր յուսացեալ ես: Եւ տայր կապել զոտս և զձեռս երանելւոյն երկաթի կապանօք և արկանել ի բանդ[1], և արկանել չղթայս ի պարանոցն, և վարել հրամայէր երկաթի ցից ընդ սրմն, և զչղթայսն ընդ այն կապել, և կնքէր զկապանան և զչղթայսն. և պահապանս կարգէր՝ մեծաւ ահիւ և զգուշութեամբ պահել, և մի զոք ամենեւին թողուլ, և կերակուր նորա՝ գարի հաց և ջուր հրամայէր:...

Եւ բդեաշխն հեռանայր ի կողմանս Ճորայ: Եւ (Ջոջիկ) եղբայր բդեչխին ոչ էր ի սահմանսն՝ յորժամ երկրորդ չարչարանքն և կապանքն գժնդակք հասանէր Սրբոյն. և լուեալ յայժ սրամէր. և երթեալ ապաչէր լուծանել զկապանան. և բաղում սուրբք անցանէին, և հազիւ ածէր ի հաւան՝ միայն զչղթայսն լուծանել ի պարանոցէն. այլ վասն ոտիցն՝ երդուաւն արարեալ ոչ լուծանել մինչեւ ցօր մահուան իւրոյ: Եւ այնպէս նովին կապանօք և տառապա-

1. Բանտն էր Ռափրէք կոչուած բերդին մէջ, հին վրացի անուամբ, Գուգարաց Նահանգի Բաղնոփոր գաւառի մէջ:

նօք, սովով և ծարաւով և նեղութեամբ՝ զվեց ամս բանդին կատարէր. զվեց ամն ոչ գադարէր ի պընդութենէ կրօնիցն, յորս հանդիսանայր և ճգնէր պահօք և աղօթիւք, աքնութեամբ և արտասուօք, անգադար սաղմոսերգութեամբ զցայգ և զցերեկ, հարուածեալ անձամբ և դառն կսպանօք. զարբ հացիւ և ջրով չատացեալ. և զպահս սրբոյ զատկին՝ զչարաթթան՝ ոչ ինչ ճաշակեալ, բայց ի չարաթթաւ և ի կիւրակէի՝ ճաշակէր ի մարմնոյ և յարենէ Կենարարին. և սակաւ ինչ բանջար ճաշակէր:...

... Եւ ի մտանել եւթներորդ ամին հարուածոցն և կապանացն և բանդին, հիւանդանայր երանելին յանհնարին տանջանաւն, վասն սաստիկ ճգնութեանն զոր կրեաց յանօրինէն: Եւ գայր եղբայր բդեչխին Ջոջիկն, և երկրպագեր սուրբ Նշանին[1] որ առաջի տիկնոջն, և առաջի անկանէր սուրբ աղախնոյն Քրիստոսի, հանդերձ կնաւ իւրով, զի օրհնեսցին ի նմանէն. խոստովանէր և զվեղս իւր՝ բաղում աղաւաղ և արտասուօք. և ընդունէր ի նմանէ խրատ բազում յորդորական բանիւք, հեռանալ յառաջին

1. Այս Ս. Նշանս էր Ձեռագործ Ս. Նուէնէի՝ առաքելուհւոյ Վրաց, որոց ամենեն յարգելի նշխարն կամ սրբազան նիւթն էր. Շուշանիկն սքանչելի նախազգուշութեամբ՝ վախանալով սր իր երկան պէս անկրօնից ձեռք չընկնի այն, իր վերջի օրերուն՝ երբ զինքը տանելու եկաւ Ամիրայ անուամբ իր ծանօթ մեր թարգմանչաց մէկն, յանձնեց սր տանի իր հայրենի երկիրը, ի Տարօն, և նա տարաւ. բայց քանի մի տարի վերջը բերուեցաւ ի Վանանդ գաւառ Աչրարատայ, անկէց այլ ուրիշ կողմեր, և գարձեալ ի Կարս, ԺԱ դարու վերջերն յԱնի, ուր մնաց մինչեւ Թամարի երբեցին և թալլեցին այս Բագրատունեաց մայրաքաղաքը (1236). այն ատեն անյայտ եղաւ Խաչն: Հիմայ Տփղիսու Ս. Սիոն եկեղեցւոյն մէջ մեծ յարգութեամբ պահուի կամ նոյն կամ ուրիշ խաչ մի Նուէնէի անուամբ, պահպանաւ:

չարեացն և առել զչար, և սիրել զբարի և զարդա-
րութիւն: Եւ յուզարկեաց զնա ի տեղի իւր:

Գայր և զլուխ եպիսկոպոսացն Սահակ, և Ցով-
հաննէս եպիսկոպոս Հանդերձ քահանայիւք և սարկա-
ւագօք, որ էին քաջալերիչք և կցորդք նեղութեան
երանելւոյն, որ յուզարկեացեն զնա ի մեծ աչխա-
տութենէն ի նաւահանգիստն Քրիստոս. նոյնպէս
և նախարարք և ազատք և տիկնայք, և այլ սե-
պուհք աշխարհին Վրաց, որ հաղորդեացին յուզարկ-
ման օրհնութեան երանելւոյն: Եւ խնդրէին ամե-
նեքեան զերկաթի կապանն՝ նչխարս, ի յիշատակ
Սրբոյն: Իսկ նա ասէ. Ես ոչ եմ այդմ արժանի.
բայց կամք Աստուծոյ եղիցին, արարէք որպէս և
կամիք: Եւ օրհնեաց զամենեսեան, և ասէր. Ամե-
նալին Քրիստոս՝ լի արասցէ զձեզ հոգեւոր օրհնու-
թեամբ: Եւ զոհանայր զամէն եպիսկոպոսին՝ որ-
պէս զդայեկէ կամ զհօրէ: Եւ այսպէս հրաժարեալ
յամենեցունց և օրհնեալ զամենեսեան ի Քրիստոս,
ազաչէր գնալ յայնմ տեղւոջ, ուստի զառաջինն
քարչեցին, եթէ արժանի (համարիցին) զայն առնել[1]:

Եւ այսպէս հրաժարեալ յամենեցունց և օրհ-
նեալ զամենեսեան ի Քրիստոս, զոհութիւն յաղ-
թութեան Ամենասուրբ Երրորդութեանն ի բար-
ձունս վերառաքէր, հանդերձ ամենայն ժողովրդօքն,
և ազօթէր զոհանալով այսպէս. Զոհանամ զքէն,
Քրիստոս, որ արժանի արարեր զիմ անարժանու-
թիւնս կատարել ի հաճոյս քոյոյ սէրտութեանդ. և
այժմ պահեա զհաւատացեալս ընդ ամենազօր ա-
ջովդ քո. և զիմ զչարչարանս՝ ընկալ ի հաճոյս
քեզ, բարեխօսութեամբ հարցն խոց[2] սիրոզաց ա-

1. Ի՞նչ փափուկ մտածութիւն, և ինչ խոնարհ ա-
ղաչանք:

2. Անշուշտ կ'իմանար զՍ. Վարդան և անոր պապը՝
զՄեծն Ս. Սահակ: Արժանաւոր հօր և ջոջ պապու
զաւակ և թոռնիկ. մեկզմեկ աւելի սիրելի կ'ընեն
զերեսնք հանչցողաց:

նուան քո, զի յամենայնի փառաւորեսցի անուն
քո սուրբ. և ես ի չնորհս քո աւանդեմ զհոգի իմ:
Եւ զայս ասացեալ Սրբոյն՝ աւանդեաց զհոգին ի
փառս Աստուծոյ:

Եւ եպիսկոպոսն և ամենայն ժողովուրդքն ամ-
փոփեալ զմարմինն և լուացեալ ի ձեռն պարկեշտ
կանանց, և իւղովք անուչիւք և խնկովք զպէտս
բերեալ, և պատեալ սուրբ կտաւօք՝ եդին ի տեղ-
ւոջն՝ յորում պատուիրեաց: Եւ զդիչերն ամենայն
օրհնութիւն Աստուծոյ մատուցին մինչեւ ի ժամ
ճաչոյն. և ապա պատարագ մատուցանէին, և տօն
մեծ կատարէին զօր հանգստեան Սրբոյն, ի տասն
և եւթն քաղոց ամսոյ[1], ամ յամէ կատարելով, ի
փառս Աստուծոյ: Եւ ոչ սակաւ բժշկութիւն առ-
նէր Աստուած բարեխօսութեամբ սուրբ սիրնոջն[2]:

ՃՒԹ

ՎԿԱՅՔ ԴԻԶԱՓԱՅՏԻ

(ՅՈՑՄԱԽՈՐԴ.)

Արքայն հիւսիսոյ[3] զօրաժողով լեալ, և եկն բա-
զում բարբարոսօք և ել ընդ Դուռն Դարբանտայ.

1. Ըստ անշարժ տոմարի 27 դեկտեմբերի. բայց
եթէ քաղոցի թիւն փոխանակ ԻԷ-ի գրուած էր ԻԵ,
լինի 25 դեկտ. և այսպէս դէնն չատ Յայտնաւորք,
ոմանք քանի մ'օր առաջ եռեռ:

2. Պատմութեանս մէջ յիշուած եպիսկոպոսաց կամ
երիցանց մէկն՝ թուի զրաղ Շուշանիկայ վկայաբա-
նութիւնը. որոյ համար համառօտ զրաղ մի կ'ըսէ.
« Ե և այլ Պատմուռթիւն Սրբոյն Շուշանիկանն մանր
» բամասնաբար... զոր՝ թէ խնդրես՝ ի Մարտիրոդոքն
» (Մարտիրոլոգիա) գտանես և առնուս զկնդրելին »:

3. Հոնաց և Խազրաց թագաւորն իր զօրօք:

և հասեալ ի մեծ գետն որ կոչի Կուր, և բանակեալ անդ, հրաման տայր զօրացն ասպատակ սփռել յերիս աշխարհսն ի Հայոց, ի Վրաց և Աղուանից. և առեալ պւարս և գերիս բազումս՝ ածին առ նա: Եւ մի ոմն յիշխանացն գնաց յերկիրն Խալխալոյ, և աւար հարեալ գնա, եհաս ի գերեզման կին մի գեղեցկատեսիլ և մեծազգի, որում անուն էր Թագուհի. և հրամայեաց ծառայից իւրոց պահել զնա նմա ի խառնակութիւն գիշերին: Եւ իրրեւ երեկոյ եղեւ բանակեցաւ ի տափարակ տեղի մի՝ մօտ Ս. կաւսա քաղաքն. հրամայեաց ածել զկինն, և նա ոչ չոգաւ. և ի քարշ տարան զնա առ նա: Եւ կամեցեալ զօրագլխին բռնադատել զնա, և նա առնաքար մարտեաւ ընդ նմա և պատառեաց զհանդերձ նորա, և էլ ի նմանէ բռնութեամբ: Եւ նա բարկացեալ յոյժ հրամայեաց կապել զագոյ ամէհի ձիոյ և արձակել ի դաշտ. և ձիոյն քարշել զնա ընդ մացառս և ընդ քարս՝ քանցեցաւ ամենայն մարմինն[1], և պատառ պատառ հատեալ յերկիր անկաւ, և արիւնն ոռոգանէր զերկրս երկրին. և այնպէս կատարեցաւ նահատակութեամբ սուրբ սիկինն Թագուհի: Եւ իրրեւ երեկոյ եղեւ լոյս սատիկ ծագեաց ի վերայ սուրբ մարմնոյն և ի տեղիս կաթուածի արեանն.

Եւ էր ընդ գերեզման քահանայ մի՝ Աբրահամ անուն, որ եկեալ էր յԵրուսաղէմէ ընդ աշակերտս Մաշտոցի և ընկերս նորա սպանեալս ի բարբարոսաց. և զքահանայն ունէին ի կապանս: Կոչեցեալ զնա հարցանէր զօրագլուխն, եթէ զինչ իցէ լոյսն այն. և նա ասաց. Որ վասն Աստուծոյ մեռանի սրբութեամբ՝ Աստուած նշանօք պատուէ զնա՝ ասա և ի հանդերձեալ կեանսն, որպէս կինն այն որ նահատակեցաւ ի ձէնջ և կատարեցաւ: Եւ զահի հարեալ իշխանն՝ ուսաւ ի նմանէ զամենայն կարգ և

1. Ինչպէս որ այդ բարբարոսաց նախնիք ըրին Ս. Գրիգորիսի՝ թոռին մեր Ս. Լուսաւորչին:

կրօնս քրիստոնէութեան, և մկրտեցաւ որդւովքն և ամենայն զօրօքն. և անուանեցաւ Թէոփիլոս, և արդիքն Մովսէս և Երանուհիս. և արձակեաց զամենայն քրիստոնեայս զոր գերեալն էր: Եւ կատարեցին զսոն սուրբ զաւակին ուրախութեամբ՝ ի տեղին որ այժմ կոչի Աստղաբլուր՝ վասն լուսոյն ծագմանն: Եւ լուեալ արքային բարբարոսաց՝ եթէ քրիստոնեայք եղեն զօրագլուխն և զօրքն, կոչեաց զնա և զայլսն առ ինքն, և բազում ողբանօք և սպառնալեօք ոչ կարաց խափանել զնա ի հաւատոցն Քրիստոսի. ապա հրամայեաց սրով սպանանել զնոսա, զսուրբն Թէոփիլոս և զիշխանս որ ընդ նմա: Եւ լուեալ օրդւոց նորա Մովսէսի և Երանուհեայ, փախեան զօրօքն իւրեանց ի մեծ լեառն Դիզափայտ: Եւ առաքեաց բարբարոս արքայն բազում զօրս զկնի. և հասեալ կոտորեցին առ հասարակ վասն Քրիստոսի հաւատոցն. և կուտեալ ի վերայ միմեանց այրեցին զամենեսեան՝ հանդերձ միայնակեացքն որ անդ էին. և կոչեցաւ անուն լերինն Դիզափայտ, մինչեւ ցայսօր: Եւ կատարի սոն Սրբոցս յարեգ ԻԲ, և մարտի 30[1]:

1. Եթէ ոչ նոյն՝ բայց չատ նման և աւելի հին զիպուած մի պատմէ Կաղանկատուացի պատմիչն (Ա. ե). Վերոյիշեալ Դիզափայտ լերան վրայ չինուած Կաստարոյ վանքը այրելով բարբարոսք, Զ զարու կիսոյ մօտ, յայտնուեցան հօն ծածկուած Սրբոց նշխարք, որք են, « Ս. Մովսէս, Ս. Դանիէլ, Ս. Եղիա. սոքա » սրբիք գալով Աաւետաւոյ արքային Մասգուէթաց, » որք աշակերտեալք էին Սրբոյն Գրիգորիսի, և 3870 » այլ ընդ նոսա: Այնենգեան սոքա ի լեառն Դիզափայտ » վայր աճապարեալ խոտաբուտ կենօք. որոց զկնի » եկեալ արիւնարբուն Աանեսան, ի սուբ սուսերի » արկ զնոսա. ի 29 նաւասարդի ». (8 սեպտեմբեր):

ՃԾԳ

ՕՐՉՆՈՒԹԻՒՆԱՔԵՐ

ՅՈՒՅԱԿՆ ԵՒ ԹԱՐԳՄԱՆԻՉՔ[1]

Կարգաւորուրիւն ցուցմանց[2] *Օրինաւրիւնաքեր Յոյ-ցակի, որ ունի իւիքեան զժամանակ իւրաքանչիւր կարգեալ կանոնացդ, զանդիման, թէ ով որ կամ յորմէ գաւառէ. զՀայրապետաց ժամանակն (ևս) նշանա-կեցից, թէ ով երբեր ի Հայոց աշխարհս, և որոց հրամանաւս կարգեալ, ձառեցից*[3]: Երանելոյն Մով-սեսի *թարգմանչի*[4], *որ էր գրիչ Սրբոյն Սահակայ հայրապետի Հայոց՝ որդւոյն Սրբոյն Ներսիսի*:

1. Ա. *ըն ամենապատուականն և ամենակարեւոր Գիր-քըն՝ որ հիմայ ամենուն ծանօթ է* Մաշտոց կոչմամբ, ԸԱայ Ս. Մեսրովպայ երկրորդ անուամբ, ԸԱայ հին արքազան նշանակութեամբ, երեւի, թէ՝ նախ մեր Ս. Թարգմանիչք զերքը կարգաւորողք՝ կոչեր են Օրինաւո-րիւնաքեր, որպէս և է իսկ. և անոր ապօթից կամ կանոնաց հեղինակաց և թարգմանչաց ցանկ մ'այլ կարգեալ՝ կոչեր են զայն Օրինաւորիւնաքեր Յուցակ: Թէ ի կարգի Մաշտոցայ ոմանց և թէ առանձին յայլ գիրս՝ գտնուի այս Յուցակս. որ և ըստ չատաւութեան ձեռագիրց օրինակաց՝ չատ այլեւայլութեամբ տարբե-րի՝ յանուանս և ի ժամանակս թարգմանութեանց: Ա. յս տարբերութեանց՝ ոչ բովանդակի՝ այլ ընտրա-նօք ալիսի յիշենք զոմանս:

2. Օրինակ մի գրած է Ըլնիերցաւի, որ պէտք է ԸԱայ Ըլնիերցաւեից:

3. Յայտնի է որ ընդ որ կանոնները հաւաքելով կար-գաւորողին է այս Վերնագիրս. որ նշանակութ ան-միջապէս յիշուած անուամբ:

4. Ո՞վ էր այս երանելի թարգմանիչն Մովսէս: — Ընտիր օրինակ մի չհակէ չիտակ գրե Մովսեսի Խորե-

նացւոյ. ուրիշ ԸԱայ Օր. մի՝ Մովսես Կիւրեղացին. չեմք կարծեր որ Սիմանի Կիւրեղացւոյ տեղակից ԸԱայ. ի Հայս այլ չեմք ճանչնար Կիւրեղ կոչուած տեղ, բայց միայն Կեղեզ ի Սիւնիս: Խորենացւոյ պատշաճէ թէ ոչ, տես գնա ի յիշատակի Պատմչաց:

1. Կայ Օր. որ գրե ՃԾԱ, ըսել է Կանաւսրբի թուա-կանէն 111 կամ 113 տարի վերջը, և կ'ըԱայ Գրիգո-րոսի 412–16 տարիներու միջեւ:

2. Կան օրինակք որ գրեն « յերկրորդ ամի թա-» գաւորութեան Վռամշապհոյ »· ԸԱայ յիշատակ, բայց փսխանակ 2ի տարւոյ յարմարագոյն էր 12ի: Ուրիշ 00, կ'ըսեն « յ'երրորդ ամի թարգմանութեան Ս. Մես-» րովբայ »:

3. Ա. յլ 00· Ազնւագոյն, կամ Նազիանզոյ, փոքրիկ քաղաք մի Կապադովկիոյ, որ մեծացաւ Ս. Գրիգորի Աստուա-ծաբանի ամուսնութեամբ ԸԱայով:

4. Ա. յս և յետագայ թուականաց քննութիւնն ուե-լորդ համարիմ տեղւոյս:

5. Փոխանակ թարգմանչին՝ կայ օրինակ որ գրե, « Եւ Խորով թագաւորն եւս ընդրել ի Հայք, որ եր-» թեալ էր յերուսաղէմ »: Եթէ ստուգիւ Խորովիկ թարգմանչին իսկ ԸԱայ գրող և ընդրող, ար-ժան էր զարմանալ և չարհամարհել այս Խորով թա-գաւորի անակնկալ յիշատակը, որ երբեւէ էր յԵրու-սաղէմ: Զայս կընայ հաւաստացընել ուրիշ անակնկալ

զբեաց և երեր ի Հայս: — Իսկ զԱպաշխարողն արդիլել և դարձեալ ի մեծ Հինգշաբթին արձակել, Ս. Կիւրեղ արար ի դուռն Սրբոյն Սիոնի, ի ԻՍ. (21 կամ Ի, 7.) ամի հայրապետութեան իւրոյ, յաւուրն յորում ընծայեցուցանէր զԵդովմայեցիան[1] առ Աստուած. և Արզեւան[2] և կորիւն թարգմանիչք բերին ի Հայս:

Իսկ զՄատաղն սուրբ՝ առնել, որ է Հոգեհանգիստն և զքահանայապարան՝ որ ունի ուխտաւոն աւետարան, արարեալ է Սրբոյն Եփրեմի խորին ասորւոյ՝ ի Նիկոմիդացոց քաղաքին, յերկրորդ ամի հայրապետութեան իւրոյ[3]. և Գազար թարգմանիչ երեր ի Հայս, յերեքտասան ամի թարգմանութեան Սրբոյն Սահակայ[4]: — Իսկ զՏեառնականի և զԱ-

և անկատած յիշատակարան մի՝ արձանագրեալ յաւետարանէն ի վերայ հնաշուք շիրմաց փարաւոնեան փարատանց. ΧΟΣΡΟΗΣ 'ΑΡΜΕΝΙΟΣ 'ΙΩΝ 'ΕΘΑΥΜΑΣΑ. այսինքն ԽՈՍՐՈՎ, ՀԱՅԿԱԶՆ ՏԵՍԵԱԼ, ՍԳՔԱՆՉԱՑԱՆ: Ոմանք կարծեն թէ հայրն Տրդատայ Ս. Խոսրով ըլլայ զրուղն, ինձ թուի Գ Խոսրով, որոյ գժար չէր յերուսաղէմէ անցնիլն ի Թեբէ, և այն զարմանացնող եղիպտոսի երկրին մէջ՝ գծել և թողուլ մեզ այս հայկական հաճոյ հանելուկն և զարմացուկն (surprise).

1. Ութիչ 00. զԵգիպտացիսն:

2. Ս.յԼ 00. Արջեւան. բայց կան 00 որ փոխանակ ասոր՝ զրեն Քնձակ և կորիւն. կան և այլանդակած զրուղք՝ Օձեւան և կորեւն:

3. Ս. Եփրեմ կարելի է գնացեր է և ի Նիկոմիդիա, փաքր Ասիոյ ութիչ քաղաքներ երթալուն առեն, և կըընար զրել այնպիսի աղօթքներ. բայց չէ եղած Հայրապետ ոչ այն և ոչ ութիչ քաղքի. անունն թուի չփոթուած, Եւփրասիոսի հետ, որ էր Նիկոմիդիոյ հայրապետ ի միջոցի 380–90 ամաց:

4. Շատ 00, կ'ուելցընեն յետ անուան « Սրբոյն, » Պաբթեւի առն Աստուծոյ, որ էր տատն Թէի ի Ս. » Գրիգորէ. որ էր յետ ձգն ամին (ա. վերը) անցանե- » լոյ, յորժամ այս ամենայն հաստատեալ կարգեցաւ » Հրամանաւ Սրբոյն Սահակայ, ձեռամբ իմով Մով-

օրինեիցն՝ Ս. Յոստոս[1] արար, որ էր չորրորդ եպիսկոպոս Երուսաղեմի ի Սրբոյն Յակովբայ[2]:

Իսկ զՀռիպսիան[3] կարգն՝ Թէոդորոս եպիսկոպոս Սիգարէ Պամփիւլիացւոց[4] քաղաքին է արարեալ, յառաջին ամին իւրոյ, հրամանաւ Սրբոյն Աստուծոյ:

Իսկ Եկեղեցւոյ Նկարչն և Գուռն դնելոյ, և զՆըշխարն ի հանգիստ փոխելոյ, այս ամենայն յիշատակ է մեզ ի Ս. Գրիգորէ Լուսաւորչէ մերոյ[5]: Իսկ զՔահանայիցն ձեռնադրելն՝ Ս. Սահակ է արարեալ, ի ԻՍ. (21ե) ամի[6] հայրապետութեան իւրոյ, ի Նաւասարդի ամսեան, որ օր մի էր և յիշատակ Սրբոյ Կարապետի, արար զքահանայօրինեքն

» սէս զբէլ Սահակայ Պարթեւի, ի փառս Աստուծոյ »: Թուի թէ Մովսէս մինչեւ այս տեղ գրած է զՅուցակը, յետոյ այլք աւելցուցեր են հետեւեալ կանոնները: Աստ յարմարի ուրիշ Օրինակի մի գրածն. « Յերկրորդ ամի (թարգմանութեան) Ս. Սահակայ » մինչեւ յերեքտասաներորդն՝ կատարեցաւ ի փառս » Աստուծոյ »:

1. Ոմանք Օգոստոս գրած են սխալմամբ:

2. Եղբայր Տեառն անուանեալն է:

3. Ըստ ուրիշ Օրինակաց է Սքեմարկիք, այսինքն կրօնաւորաց դգեստ տալու և օրհնելու կանոնն. ոմանք ընդարձակելով նշանակեն երեք տեսակ աքեմարկիք. « Ս. Մեծին Անտոնի. Բ. Թեքայեցւոցն, Ս. » Ամոնի, և Գ. Սկիւթացւոց լերինն »:

4. Ուղիղն Սիղդրա, Տ՛էձրգ, Կիլիկիոյ Ծովեզերեայ քաղաք: Տես Սիռուան, 316: Եպիսկոպոսն Թէոդորոս չատ Ծանօթ չէ:

5. Ուրիշ Օ. Համառօտ կ'ըսէ. « Այս ամենայն ի » Ս. Լուսաւորչէն սկաց »: Գիտեմք ի պատմչաց՝ Ս. Լուսաւորչի չատ Սրբոց նշխարներ բերին, և չատ եկեղեցիներ հիմնարկին, Հարկ էր որ և կերպով անոնց օրհնութեան կանոններ սահմանէին: Անոնց հետ կ'աւելցընեն սմանք և զկանոնս Գրաւկարդացաց և Սարկաւագաց:

6. Հին Օ. մի խա (21) թուանիշը զատելով ի'ա գրէ, իբր յառաջին ամի:

և զքահանայապարդիքն, որ ունի եօթն աւետարան[1]. այլ զԱշխարհապաղն՝ յԱյրարատ գաւառի ի վաղարշապատ քաղաքի՝[2] ի վկայարանի Ս. Հռիփսիմէի, յետ ձԺԸ (418) ամի Սրբոյն Գրիգորի, զի մինչեւ ցայն վայր հնոյն վարէին[3]: Աբար և զԳիշերայնի քարոզսն և զնոցին չորս աղօթսն[4]:

Իսկ զՀինաւարիկքն և զԶկնեցոյց օրինիկն և զսրբել տաճարի, և զՅաճախար օրինիկոյ, և զՄկիճի և Մաղմայի, և Գիրք, և Հանդերձի սպասու, և Աչազան և Մկրտուրիւն առնել, և խալ օրինիկ և Պատկ օրինիկոյ, և զՔառասնորդաց Քարոզն և զԱղօթսն, զայդ (ամենայն) ՑուՀաննու է արարեալ Մանդակունւոյ, որ չորեքտասան թիւ էր ի Սրբոյն Գրիգորէ[5]: Այսքան է, եղբայր[6]:

1. Ուրիշ ՕՕ. ոչ եօթն աւետարան կարգել կ'ըսեն, այլ «յաւել եօթն աւետարան», որ յարմարագոյն է այնքան երկար կանոնի քահանայաթթողին:

2. Ուրիշ Օ. Քաղաքռոդաշտի. այսպէս այլ անուանած էր այդ մայրաքաղաքն, որ հիմայ Էջմիածնի մօտ գեօղաւան է, կամ քաղաքաւան:

3. Գաւուբ արդեօք հիմայ այդ հին կանոնն. որ անշուշտ, վերոյիշեալ Ս. Լուսաւորչի կանոնածներուն հետ թարգմանուած էր. բայց Լուսաւորիչ ինչ լեզուով կարգադրեց և կ'աղօթուէր:

4. Ինչուան հիմայ ժամագրոց Վիշերային մասն են և ամեն օր կ'ըսուին. բայց սմանք զասնք այլ Ցուհ. Մանդակունւոյ համարին:

5. Յետ Ս. Սահակայ և Մեսրովպայ՝ անտարակոյս այս Մանդակունի հայրապետս է երախտաւորն մեր եկեղեցական կարգաց, կանոնաց և աղօթից: Հեղինակ Ցուցակիս՝ զնա ԺԴ հաշուէ ի Ս. Գրիգորէ սկսեալ, ինչպէս զՍ. Սահակ այլ ըստ այնմ ԺԲ, որով կ'երեւի թէ գուբս թողուած են Ս. Յուսկան և Ներսէսի միջոցի երկուքն, բայց ընդունուած են Ներսէսի և Սահակայ միջում գրուած չորք օտարացեղ կաթողիկոսունք. իսկ ի Ս. Սահակայ (որ 10դ գրուի) մինչ ի Մանդակունի՝ որ 16դ կ'ըսուի, ինն քահանայապետք կամ աթոռակալք այլ կան, յորս հաշուելով և զՍ. Մեսրովպ և զՅովսէփ և զԳիւտ, և այս երեքն միայն օրինաւոր համարելով՝ Մանդակունին կ'ըլլայ ճիշդ 16դ, արժանապէս գուբս թողլով Ս. Մեսրովպայ և Ս. Յովսէփայ միջանկեալքն, Բրքիշոյ, Շմոռէի, Սոռոմակ. իսկ ընդ Յովսէփայ և Մանդակունւոյ յիշեալքն Մելիտե, Մովսես, Քրիստափոր, ո՛ւր մնան: — Բայց զայս ըսելով չեմք ուզեր հօս լուծել այս կաթողիկոսաց շարքի խնդիրը. զոր՝ ամենն՝ որ և է կերպով քահանայապետացեալս չարադասելով, չարն ու բարին, Մանդակունին կ'ըլլար 24դ:

6. Այս միտս բարուկեն հաքն այլ աւելցընէ հին Օ. մի. «Յարժամ կամիցիս քերել զՆուցակ Մաշտո-» ցին, զքերեալսն նախ գծեացես, և զմեղապարտս » բիւր քանքարի՝ միով բանիւ յիշեացես»: Ինչուէ տարբերի քերելն ի գծելոյ կամ գրելոյ: — Ուրիշ Օ. աւելի երկար վերջաբանէ. «Շարադրութիւն կարգա-» ւորութեան սուրբ Ցուցակիս, զոր մակագրեալ Ս. » Հօրն Մաշթոցի ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ » և ի պարծանս մանկանց նորին և հաւատացելոց » Ս. Երրորդութեանն, ի գաւսիարակութիւն նոցա և » յաւուրս՝ կատարման Քրիստոսի ընդ Սուրբս ամե-» նայն: Այս ամենայն ի հրամանէ Սրբոյն Խոհակայ » Պարթեւի՝ Հառամբ Մովսեսի գրչի նորոգեցաւ ի » Հայք, ի փառս Աստուծոյ»: Նորոգիչն հասատաւէ, թէ առաջուց այլ Հայք ունէին այդպիսի Կանոններ:

ՃՈՊ

ԹԱԹՈՒԼ, ՎԱՐՈՍ (ԳԻԻՏ) ԵՒ ԹՈՎՄԱՍ

(ՅՈՎՍԻՊ[1])

Բարձրագոյն այրն Աստուծոյ քրիստոսազգեաց ճգնաւորն Թաթուղ, էր ի ժամանակս Թէոդոսի Փոքու, ծիրանազգեստ քրիստոսապսակեալ թագաւորին Հռոմոց և Յունաց Պարսից արքային. որ հակառակ Հայոց չարժեցաւ յաղդմանէ չարին, և ի սուբ և ի գերութիւն մաչեաց զերկիրս Հայոց: Իսկ Սուրբ Թաթուղ էր ծննդեամբ ի Բղրեայ[2] գեղջէ, և անտի գնացեալ բնակեցաւ ի քաղաքագեօղն Տիկոր[3], որ մերձ է յարքայանիստն[4] ՅԱնի. և պատեալ ի վարժուին գրոց, սուրբ վարդապետութեամբ լուսաւորէր զբազումս. և չնորհք տուաւ նմա յԱստուծոյ՝ որպէս Սրբոյն Մեսրովբայ. զոր

1. Հեղինակիս վրայօք գրած եմք ի չարս Պատմըչքայ, որ Թաթևոյ արքեպիսկոպոսութեան հետ յիշած է և անոր գիտութեան մեծ համբաւն, վկայութեամբ մեր Քերթողահօր մէկ պատմական գրուածին: Հոն յիշուած է և այս պատմութեան խնդրոյն՝ վարագոյ իշխան Գաբեղենից:

2. Աւաջին անգամն է որ այս անուն տեղւոյս հանդիպիմք, փափագելով որ որոշակի գաւառն այլ յիշած ըլլար գրողն, թէ և գուշակութ երասխաձորոյ կողմերն ըլլալ, և յետոյ յիշեալ տեղեաց մօտ:

3. Ոչ միայն ծանօթ անուամբ և տեղեաւ մինչեւ հիմայ, այլ և հին կանգուն եկեղեցեաւն, որ գրեթէ հնագոյն է քան զամենայն անկործան մնացեալ հին եկեղեցիս Հայոց աշխարհի. տես Շիրակ (եր. 134–6):

4. Ստոյգ այսպէս է. բայց արքայանիստ բառն՝ բազմաստուերի թագաւորաց առեն օրինակողի մի վայելէր գրել, և գրեթէ հարկ էր որ գրեր:

բովանդակ որպիսութիւնն գտանես ի Պատմութեան կարևորակաևաց[1]: Այդ, ի սատկանալ բարեկուսութեանն Պարսից, առեալ զկրեաց եղբայրն իւր զՎարոս, որ այժմ կոչի Գուռգ[2], յանապատ փութայր, որպէս ի նաւահանգիստ. և եկեալ ի տեղին որ կոչի Վիշապաձոր[3], բնակելով ի նմա խոստաբուստ աքնութեամբ և մերկութեամբ, քաջութեամբ յաղթէր սատանայի և մարմնական հեշտութեանց, որպէս զօրական Քրիստոսի ի խաչ ելեալ. զոր չէ ոք բաւական պատմել մի ըստ միոջէ զվարս երանելեացն: Եւ բնակելով Սրբոցն յանապատ, վիճակք փախստեայք լինէին, և գազանքն ընտանեանային. զոր այժմ խաղաղութիւն ունին ընդ մարդիկն՝ ի սուրբ տեղիսն, որպէս ամենեցուն յայտ է. և յամառնային ժամանակին բնակէին ի քարանձաւսն, մերձ ի յաղբիւրն՝ որ այժմ կոչի Թաթևոյ աղբիւր. և ըստ խոստութեան ձմերայնոյ ի խորաձորս իջանէին: Եւ այնպէս կացեալ բազում ժամանակս, և ապա առ սակաւ սակաւ խաղաղանայր բարկութիւնն Պարսից:

Ընդ այն ժամանակս լինէր կատարումն Սրբոց Ղեւոնդեանցն ի Վարդևան[4]. և կարևիրն վարդան յԱրտազական դաշտին պատերազմեալ՝ կատարեցաւ ի Քրիստոս, որդւովն Ջուբայիր[5] և այլ ազատովք: Եւ Սուրբն Սահակ փոխի ի Քրիստոս ի Բագրեւանդ գաւառի: Այդ, ի խաղաղանալ խոս-

1. Կարևոր և ցանկալի յիշատակ պատմական հին գրոց, զոր յիշէն և սուրիշ մի քանի հին պատմիչք:

2. Այսպէս կոչուելուն պատճառը յետոյ կ'իմացընէ հեղինակն:

3. Տես յԱյրարատ, երես 50:

4. Ըստ Ղազարայ Փարպեցւոյ և այլոց՝ Վարդգես:

5. Զարմանք է, որ ոչ Եղիշէ, ոչ Ղազար և ոչ ուրիշ ոք չէ յիշած վարդանայ այսպիսի որդի մի ուներալը. իսկ անուն չէ անծանօթ, Ջօրայ անուամբ յիշուած են իշխանք Գնթունեաց և Ռշտունեաց:

վութեանն Պարսից՝ յոյժ ուրախանային Սուրբքն և օր ըստ օրէ յաւելուին ի ճգնութիւնան: Եւ Սուրբն Թաթուլ առաքէ զՎարոս՝ ի հեռագոյն անապատ, այսպէս ասելով. Թէ, Մեծ մխիթարութիւն է մեզ ի միասին բնակել. Թէ ոչ հեռանամք ի միմեանց՝ չեմք բուռն հարեալ զսիրոյն Քրիստոսի, և ոչ մտեալ ի լուծ պատուիրանին, բառնալ զխաչն: Եւ ապա զայս ասելով՝ գնաց Վարոս յանապատն՝ որ կոչի Դիից մայրի[1], (զի) սովորութիւն էր զամենայն որ լաւագոյն լինէր՝ Դիից անուանէին. և անապատն կարի պատշճագոյն և վայելուչ, ինքնապարիսպ ծառատունկք[2] բազում, և բանջարք պիտանիք: Եւ այսպէս կացեալ ժամանակս բազում, որոորդոյ յայտնեցաւ Սուրբն Թաթուլ. և նոքա ապ արարեալ աշխարհին, բազում ուրախութիւն լինէր. և գային ամենեքեան ի տեսիլ Սրբոյն, հայրապետք և իշխանք և ազատք, և բոլոր երկիրն ամենայն, և ուրախութեամբ գառնային. ծանր ազէտին՝ որ եհաս աշխարհիս Հայոց՝ փոխան համարէին գյայտնումն Սրբոյն: Այս պատուէրն գտեղին և չինեցին եկեղեցի յանուն Սրբոյն Գրիգորի, և բնակեցուցին կրօնաւորս: Եւ Սուրբն Թաթուլ գնաց ի տեղին որ կոչի Մայրաձոր[3], և անդ բնակեցաւ: Եկն եղբայր ումն որոյ անուն Թոռնաս կոչիւր, որ և հետեւող եղեւ Սրբոյն. գիտացեալ Թաթլոյ՝ եթէ այր սատուածապաշտ է Թովմաս, կարգէ զնա առաջնորդ վանացն

1. Ինչպէս չատ ազգք՝ այսպէս և նախնի Հայոց մէջ կային ծառապաշտք, կամ ծառոց մէջ բնակեալ չատուածոց պաշտօնեայք, որք ծառոց վրայ նեռէին կամ կախէին այն դից ընծայուած իրերը:

2. Տեղւոյն բոլորտիքը՝ պատի պէս պատեր էին ծառերն, իբրեւ բնական պարիսպ:

3. Ինչուան հիմայ ծանօթ է տեղիս՝ Թուրքաանուամբ՝ Ջուրջուր–չամ. տես Աչքարատ, 30:

և ուսուցանէ նմա զամենայն բարեձեւութիւնն[1]. զկանոնն, ընդ որս և ընդ գիչերն՝ երիցս անգամ վճարէր ընթերցմամբ գրոց. և զմիաշաբաթն հակըմամբ կատարէր: Եւ ինքն (Թաթուլ) զառանձնական հանդիսն կատարէր ի Մայրաձորն. և ըստ պիտոյից՝ գայր յեղբարսն, մխիթարէր զնոսա: Եւ հասեալ ի բարի ծերութիւն՝ փոխի ի հանգիստն իւր Քրիստոս. և ժողովեալ զկրօնաւորսն փոխեն զՍուրբն ի հանգիստ, ի վանս իւր, մեծաւ պատուով. և աշխարհն ամենայն գային ի հանգիստն սուրբ նչխարացն: Եկն վարազտիրոց իշխանն Բագրեւանդեայ և Աբշարաւնեաց, որ ի Բանասատեղծացն՝ Սպարապետ Հայոց անուանիւր[2]. մեծ սոնախըմբութիւն կատարեաց, առատաձեռն ողորմութեամբ մխիթարէր զաղքատս. և զիղբուչ ծննդեան գեղ Սրբոյն՝ տայր ի վանն, հաստատուն կտակով, և հզեալ զկտակն ի վերայ տապանի Սրբոյն՝ ասէր. Սուրբ ճգնաւոր, մի թողուր զանարժան յօգնականութենէ քումէ. և զքո հայրենի գեղջն՝ քեզ եմ աւանդեալ. եթէ ոք հակառակ կայցէ՝ դու լեր վրէժխնդիր:

Եւ յետ ժամանակաց Հայրն Թովմաս փոխի ի Քրիստոս. և զառաջնորդութիւնն յաջորդեն մի լատ միոչէ ըստ արժանեաց. և յետ բազում ամաց յաջորդէ Յոհաննիկս. ապա կոչեն զնա ի կաթողիկոսութիւն Հայոց[3]. և նա առաւել գութ ունէր առ

1. Շատ խոհական և գեղեցիկ խրատներ աւանդած է Թաթուլ, որ և գրով մնան, և չատք յիշեն, նման Ս. Նեղոսի խրատուց:

2. Թուի նայն ինքն այս պատմութիւնս խնդրողն ի Յովսէփ: Նշանաւոր յիշատակ է այդ Բանասատեղծից, որք հիմակուան թուրք բառով աշուղ կոչուած, ներան նման եղած են. Սպարապետ կոչումն այլ սովորականէն աւելի նշանակութիւն մի պէտք է աւնեցած ըլլայ:

3. Հաստատի վկայութիւն յետագայ պատմչաց և գաւազանագրաց, որք ի Գաբեղեանից կոչեն այս Յովհաննէս Բ կաթողիկոսը, յետ կիսոյ Զ դարու:

սուրբ տեղիան. եկեալ չինէր զտեղին վայելուչ յօրինուածով. պատուական և պայծառ զարդուք զարդարէր զեկեղեցին. և զգեօղն որ կոչի Ցղնակա՝[1] ստացաւ արծաթոյ և ետ ի սուրբ տեղիան. և չինէր հիւրանոցս[2] ի վերայ գետոյն Երասխայ: Եւ կարգէր զարմանս՝ տուրս աղքատաց. և քահանայ մի և երկու եղբայր երթային ի սպասաւորութիւն հիւրանոցին՝ միաշաբաթէ ի միաշաբաթ: Եւ զԳաբեղենից գաէրունական աւանդն[3] հրամայեաց ի սուրբ տեղիան. և զԱրշարունեաց հայրապետի աւանդն հրամայեաց ի Վանկոյս[4], ի պէտս վարդապետացն, որք զԳրչութիւնն արուեստն ունէին: Եւ ամ յամէ գայր ժողովէր զկրօնաւորսն. և գայր ի վանս Գտկոյ[5], և կատարէր զյիշատակն. և ապա գայր ի մեր ուխտս, և աստ տօնէր զփոխման Սրբոյն օր, որ տասնեւհինգ էր մեհեկի ամսոյ: Եւ ապա իշխանն աշխարհին գայր ազատաքն. և նոքա տօնախմբէին աղքատացն դասիւք: Եւ այսպէս կարգեաց Տէր Յովհաննէս. զոր

1. Ասոր նշանակութեամբ թուի այն կողմերում թուրքաբերն Ջամռուդու կոչուած գիւղն: (Ալպարատ, 534):

2. Կարեւոր յիշատակ կարեւոր տեղւոյ՝ երասխ ըմբռնած գետէն անցնելուս, որ դիւրին չէր, և ամէն առեն չէր ըլլար անցուդարձ. ուստի և հարկաւոր էր անցորդաց սպասելու համար Հիւրանոց մի:

3. Այս աւանդք երեւին կամաւ կամ օրինօք արուած Հաստատուն եկամուտք, մին՝ Գաբեղենից իշխանէն, միւսն՝ յԱրշարունեաց եպիսկոպոսէն:

4. Վանկոյս կամ Վանկոյի, Վանգոյ, չատ նշանաւոր վանք և ուխտատեղի մի եղած է, հօն պատուաստ խաչի մի համար, զոր կաթողիկոսք ուրիշ սուրբ նշխարաց հետ պահէին իրենց քով, և անով օրհնութիւն խաւրէին իրենց կանդակաց հետ. վանաց տեղն հիմայ անծանօթ է:

5. Ս. Վարոսի գտուելուն պատճառաւ այսպէս կոչուած. ասոր տեղն ալ անծանօթ:

սովորեալք յետ փոխման նորա տօնախմբէին, որպէս աւանդութիւն ընկալեալ ի Տէր Յովհաննիսէ: Եւ յետ ժամանակաց Աշոտ բագրատունի[1] գայ ի վանքն, տօնախմբէ զյիշատակ Սրբոյն. և զհիւրանոցն չինել հրամայէ, և անուանէ զնա Աշոտ, և հաստատուն գրով տայ ի վանքն. և որ զպեղիկ[2] եկին ի վանքն և ուխտեցին առ յամէ տալ յԱշոտն՝ յիւուն վեցկի և հարիւր այր. և քաղաքագետքն կաղազոռաւի ուխտեցին հարիւր վեցկի[3] և երկերիւր այր՝ անխափան: Գայր և իշխանն Բագրեւանդեայ և Արշարունեաց Աշոտ՝ որդի Սմբատայ՝ ի վանքս, և տայ գՕշնատկոյս[4], հաստատուն գրով, և գՈսկոյն[5] ի վանգոյս, ի պէտս վարդապետացն՝ որ զգրչութեան արուեստն ունէին, և զսուրբ գիրսն յօրինեին. որք էին երեսուն և վեց վարդապետք[6]:

Եւ յետ փոխման Թաթլոյ փոխի և Վարոս. և գտեալ անդ յորսորդայ՝ ազգ արաբին կրօնաւորաց. որք եկեալ տեսին, և յերեւմանէն ծանեան, եթէ ի փախուցելոյ յաշխարհէս է. և իմուցեալ ի բնաձորն, տեսին տեղի պատշած, քար փոքրիկ ի վերայ աղբերն. անդ եղին ի հանգստի. և անուանեցին զնա Գտուկ, ոչ գիտելով եթէ Վարոս է, եղբայրն Թաթլոյ Սրբոյն Աստուծոյ: Ապա Գաւիր իշխանն Կամսարական չինէ զտեղին, անուանելով զնա Գտկոյ վանք. և զՀեզ[7] գետ ի Բագրեւանդայ՝ հաստատուն գրով տայ ի վանքն, և ի Հորգետաց[8] հարիւր կայք հայ և հազար փաս գինի: Եւ

1. Զ դարու վերջերն եղած Աշոտ մի, զոր դժուար է որոշել նոյն անուամբ շատ Բագրատուիններէն:

2. Եթէ սխալ գրուած չէ, անծանօթ է իմաստ բառիս:

3. Հարցի կամ ցորենի չափ, որպէս և քիչ մի յետոյ յիշուած կայքն:

4–5. Վերոյիշեալ տեղեաց մեծ ըլլալնին գուշակուի, բայց հիմայ անծանօթք:

6. Շատ կարեւոր յիշատակ. իբր յատուկ արուեստաւորք, մէկ ճարտարութեամբ գրելու և ընդօրինակելու զՍուրբ Գիրս, և մէկ կարելու կազմելու զանոնք:

7–8. Երկուքն ալ հիմայ անծանօթ:

այսպէս պատուէրին զսուրբ տեղիքս. և զնոյն կարգ հաստատեցին ի Գոհոյ վանքն՝ զոր Սուրբն Թաթուլ հաստատեաց յիւր վանսն, շարաթապահս, խարազնազգեստս, (որք) երեք անգամ զկանոնն վճարեն ընդ տիւն և ընդ գիշերն, և միաշաբաթին՝ հակումն։

Հայր իմ էած զիս ի վանքս Թաթլոյ, և էի ևօթնամեայ, և կացի ի վանքս յիսուն և վեց ամ։ Գտի ծեր զոմն եկեղեցական, այր աստուածասէր, որում անուն Աստուածատուր կոչիւր. զբազում ինչ ի նմանէ տեղեկացեալ գրեցի, վասն բժըշկութեանն որ լինէր ի սուրբ տեղիքն՝ որպէս զՍրբոց Սիւքիասանցն[1]։ Բայց զոր տեսի աքանչելիսն՝ բաւական համարեցայ գրել առ քեզ[2]։ Այլ ոչ եթէ զամենայն ոճով գրեցի, այլ ի բազմաց զտակաւն, զոր ինձէն ականատես եղէ։ Այրդ, անցելոց սխալանացն՝ Աստուած թողութիւն արասցէ փառաւոր անձինդ[3]. արդ, փութով եկեսցես յերկրպագութիւն վկայիցս Սրբոց, և խնդութեամբ երկնաւոր պարգեւսքն զարձցիս։

ՃԾԵ

Ս. ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ

Պատմի վասն երանելոյն Եղիշէի վարդապետի, թէ էր զինուորեալ Սրբոյն Վարդանայ և սպասա-

1. Մօտիկ տեղ Սուկաւէտ լերին, (հիմայ Քեօսէ տաղ), ըստ Ս. Սուքիասանց Քոշ անուանելոց, որոց բարեխօսութեամբ շատ հիւանդք բժշկուէին։
2. Երկու հրաշք պատմէ. մէկ մի ժանտամահ բըժշկուածներու, մէկ մ՚այլ կաթիճներու ջնջուելուն։
3. Անշուշտ իր մեկենաս Վարազդ իշխանն է՝ զոր հրաւիրէ։

ւորէր նմա[1]. և էր հաւատարիմ յամենայն իրս աստուածայինս և մարդկայինս. և կեցեալ և վարժեալ բարեպաշտութեամբ և ուսումնասիրութեամբ[2], և ամենայն անցից անցելոց ընդ Հայս՝ որ ի Պարսից հասին վտանգք ընդ ժամանական ընդ այնոսիկ՝ խելամուտ եղեալ, պատերազմաց և յաղթութեանց, և հալածանաց եկեղեցւոյ, և առաքինութեան և քաջութեան Սրբոյն Վարդանայ և որք ընդ նմա միաբանեալ կատարեցան յաղագս ի Քրիստոս հաւատոցն և պսակեցան, արհամարհելով ըզԶրադաչտական մոլորութիւն մոգութեան. միանգամայն զեպիսկոպոսացն խրատուց և հանդիպից և վկայութեանց, և զքահանայիցն և ամենայն Սրբոցն մարտն՝ որ մարտեան և պարտեցին զբռնաւորն, որ խրոխտացեալ էր ի վերայ ամենայն եկեղեցեաց սրբոց։ Եւ պատմագրեալ զայս ամենայն և որ ի նոսա յարմարի բան և գործ. զորս առաւգտակէս երանելւոյն Եղիշէի զատացեալսն՝ ի պատմագրաց Սրբոց Վարդանանցն է ուսանել։ Որ և այլ գիրս ստացեալ Կանոնականս[3] և զգուշաւորս սրբոյ եկեղեցւոյ։ Եւ առաւելեալ ի վարս արդարութեան՝ հաճոյ լինէր Աստուծոյ և մարդկան։

Յետ այսորիկ վարս կրօնաւորութեան յանձն առնոյր, և զխստամբերութիւն ճգնութեան, և պահօք և աղօթիւք հանդիսանայր. և որպէս յայեաց ծովու՝ ի նաւահանգիստ փութացեալ հասանէր յանապատ, ի բաց լքանելով զերկրաւորս՝ զհետ երթեալ հո-

1. Ըստ այլ գրուածք՝ «էր Դպրապետ Սրբոյն Վարդանայ»։ այսինքն Վարդանայ պաշտօնական թուղթերը, հրամանները գրող։
2. Ըստ այսմ մասին ուրիշ գրուածք վարուցն՝ վկայեն, թէ, «էր յոյժ հմուտ աստուածային սուրբ գրոց, և տեղեակ իսկ արտաքնոցն հանճարոյ, առնական փիլիսոփայական հանդիսից»։
3. Կանոնագրոց կարգին մէջ կան և քանի մի կանոնք յանուն այս սուրբ վարդապետիս։

գեւորգն. զմտաւ ածելով զվարս առաջին հարցն՝ և նոցա լեալ նմանող և նախանձաւոր նոցին վարուց, չանայր մտանել ընդ նեզ գուռնն՝ որ տանի ի կեանս յաւիտենից: Եւ զամենայն հանդէս առաքինութեան յանձին բերեալ՝ որոշէր զինքն ի միաբանակեցաց եղբարց, և զամայութիւն ստացեալ՝ օթեվանս բնակութեան յանապատս առնէր, ուր առնէ այցելութիւն Տէր՝ սրբոց, խոստաբուտ անցուցանելով զառօրեայ կենցաղս, միայնացեալ յաղօթս և ի խնդրուածս գոյգ և զգերակ. ունկնդիր եղեալ խրատու Պաւղոսի՝ որ վասն Սրբոցն պատմէ. «Շրջեցան լեչկմաչկօք և մորթովք այծենեաց, կարօտեալք նեղեալք չարչարեալք. զորս ոչ արժէ աշխարհս. յանապատի մոլորեալք, ի յայրս և ի լեռինս և ի փապարս երկրի»: Զայսպիսի վարս ըստացեալ հանդիսանայր ընդդէմ սատանայի փորձութեանց՝ աստուածային զօրութեամբն. և յամենայնի զօրաւոր և յաղթող եղեալ երանելին Եղիշէ. և բնակէր յայրի ուրեմն, միշտ յառաջիկայս ընթանալով. և կոչի այրն յանուն Եղիշէի՝ Սուրբ այր Եղիշէի. որ և այժմ ամենեցուն յայտնի է և վկայ ազգաց յազգս երանելոյն:

Եւ եկեալ գտանէին զՍուրբն բացօթեայ հովիւք, և նշան իմն աքանչելի առ երանելոյն տեսեալ՝ հաղակէին զայրն և զտեղին: Իսկ նորա խոյս տուեալ՝ կամելով զինքն անյայտ առնել, և եկեալ բնակէր ի գաւառին Ոչըտունեաց՝ յայրի ուրեմն մօտ ի ծովեզերին, որ և նա կոչեցաւ Սուրբ Եղիշէի այր[1]: Եւ յետ բազում ճգնութեանց և խըստամբեր վարուց, որ բազում ժամանակս եղեալն (էր) յառաջնումն այրին և սակաւ ամս ի միւսումն, յորում վախճան իսկ հասանէր երանելոյն: Եւ ոմ զայնքան գառնն պատմեսցէ զհանդէս, որով եկաց և նահատակեցաւ ընդդէմ հանապազորդեան թըշ-

1. Ինչուան հիմայ ծանօթ է տեղն, թէպէտ Սրբոյն արժանի յիշատակարան մի չկայ:

նամոյն, ազօթիւք, պահօք և աքնութեամբ և արտասուօք. իբրեւ զանմարմին ի մարմնի կեցեալ և զդիւացն մարտն վանեալ յաղթող զօրութեամբ Քրիստոսի. որ այժմ ծածկեալ է ընդ Քրիստոսի, և յետոյ ընդ նմա յայտնելոց է:

Ապա եկեալ արք ոմանք գտանէին զնա վախճանեալ[1]. և յերեւմանէն ծանուցեալ երէ ծառայն Քրիստոսի է, քանզի ոչ իսկ էր պարտ ծածկել Սրբոյն երեւումն, որ և զայլս ի նոյն հանդէս յորդորէր: Իբրեւ իրքն հաչակէր, ապա բազում քննութիւն լինէր. յայնժամ ստուգեցաւ և ծանուցաւ ամենայնիւ թէ Սուրբն Եղիշէ է, որ յառաջնումն այրին բնակեալ էր ի Մոկաց գաւառին: Որում չինեալ հանգիստ մօտ ի յայրն՝ փոխէին ի տեղի հանդստեանն, յորում տեղւոյ բազում բժշկութիւնք լինին: Եւ լուեալ զայն իշխանին Մոկաց՝ նախանձէր զբարւոք նախանձ. վասն զի ոչ հանդիպեցաւ վախճան երանելոյն յիւրում աշխարհին. ապա գայր ի տեղի հանգստեանն, պատճառաւ ինչ բժըշկութեան, և օթեվանս արարեալ՝ հնարէր զամենայն գիշերն, բարեխօս ունելով զՍուրբն առ Աստուած, զի թերեւս արժանի եղիցի առնուլ մասն ինչ ի նշխարաց երանելոյն. զի և առաջին տեղի բնակութեան Սրբոյն պատուեսցի ի փառս Աստուծոյ: Եւ յայտնի ոչ իշխէր մերձենալ և առնուլ մասն ինչ ի նշխարացն՝ վասն բնակչաց աշխարհին և նախապահին Ոըշտունեաց. ապա գողանայր զբըժըշկութիւն, որպէս կինն որ յաւետարանն պատմի. հատեալ զգլուխն և զձեռս՝ փախստեայ յաշխարհն իւր անկանէր: Եւ աղաղակ մեծ յաղագս այնորիկ լինէր. բայց ի վերին տեսութենէ խաղաղանայր. զի այնպէս հաճեցաւ Աստուած, թէ՝ և առաջին տեղի բնակութեան Սրբոյն պատուեսցի: Եւ բերեալ գնչխարս երանելոյն՝ չինէր վկայարան մերձ ի յայրն ուր էր առաջին բնակութիւնն. և յորդո-

1. Միայնիկ մեռանի՝ նման Լուսաւորչին և Թաթղէոս:

բէր պատուելով զտեղին առաւել քան զառաւել, յորում էր վախճանեալ, յորում երեւեցան չնորհք մարգահիրութեան Քրիստոսի ի ձեռն սրբոյ ճգնաւորին ի նմին տեղւոջ, և ընկալեալ բժշկութիւն յաղագս իւրաքանչիւր ցաւոց, և որք նեղեալ էին յայսոց պղծոյ: Եւ ամենեքեան տային օրհնութիւն Աստուծոյ. և ոն մեծ աւանդէին զոր կատարման Երանելւոյն, ի փառս և ի գովութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ, և այլն:

ՃԾԶ

ԴԱԽԻԹ ԱՆՅԱՂԹ ՅԱԹԷՆՍ[1]

Սովորութիւն էր Աթենացւոց, զի յորժամ ամք եօթն կատարէին, բերէին յառաջ զժամանակի ուսեալքն. և էր ի քաղաքին մեծ սիւն մի, և բարձր յոյժ, և էր պղնձի. և էր գրեալ բանք թագաւորականք, եօթն բանք թագաւորաց[2] սակաւագրով, և մեկնութիւնս՝ յոլովակի պահանջմամբ, բան առ բան գլխաւորեալ: Գրեալ յաւուրս Սերբերխսի[3] Տոհղոս Հռոմայեցւոցն թագաւորացն. և ըստ երբ-

1· Իբրեւ ռամկական քան գիտնական աւանդութիւն է Յօդուածս սխալագիր. չարժէր խնամով քննութեան:

2· Ոչ թագաւորք՝ այլ գերահռչակ եօթն իմաստասէրքն են Յունաց, որոց ամանց անուանքն կամ առգիք և բանքն՝ սխալ և չիմի գրուած են. Գ. Թալէս՝ Թէ և Փիւնիկեցի՝ Միլետացի կոչուի, ի Միլետոն քնակելոյն համար. Դ. Բիաս Պրիենացի է ի Յունիոյ. Ե. Պիտտակոս՝ Միտիլենացի, որոյ ըստ ոչ էր. Հաճոյագոյն քան զամենայն ժամանակ. Զ. Պերիանդրոս՝ Կորնթացի. Է. Կլեոբուլոս ի Լինդոսէ Կրեէ կղզւոյ:

3· Որ պիտի ըլլայ Սերոէիոս Տուլլիոս թագաւորն, վեց գլուխ նախ քան զՔրիստիչն:

բայեցւոցն՝ առ գերութեամբ Բաբելացւոց Սաղաթիէլի: Արդ, ով ոք զայս բանքս կարդայր և մեկնէր, զնա կացուցանէին վարդապետ, ամենայն իմաստասիրական ուսմանն, զոր էր ի յայն եօթն ամ ուսեալն. և զորչափ ժամանակս կեայր յԱթէնս, նա էր անդ վարդապետ: Եւ էր գրեալ ի սիւնն բանք այսպէս եօթն թագաւորի:

(Ա.) Սողոն Աթենացի. Մի ինչ յոյժ, թագաւոր[1]:

(Բ) Բիտու Մակեդոնացի. Ծանիր զքեզ, թագաւոր:

(Գ) Թալէս Միլեսացի. Եկ ի մերձ ինեաս, մեծ յոյժ՝ թագաւոր:

(Դ) Բիաս Պրիենդացի. Բազումք չարք թագաւորք՝

(Ե) Պիտակոս Միտեղենացի. Ժամանակ ծանիր, թագաւոր:

(Զ) Պենայնդրոս Կորնդացի. Վարժուն ամենայնի, թագաւոր:

(Է.) Կղեոբուղոս Լինդացի. Զափաւոր և անբաւ:

Արդ, կատարեալ վարդապետութեամբ որք էին վաթսուն, կացուցին զնոսա առաջի սեանն, եթէ ով ոք մեկնեսցէ զբան թագաւորացն: Եւ ամենեքեան պշուցեալ հայէին ընդ երեսս սեանն, և անգիտելի էր բանն այն ի նոցանէ: Եւ միա եղեալ Դաւթի և գաղտ ակամբ, սկսաւ ի միասն մեկնել բան առ բան. և նա իմացեալ թէ ճշմարտիւ զմեկնութիւնն գտաւ, և համաձայնեալ էանց, և եկաց յատենին. և ամենեքեան առ հասարակ ի նա հայէին. քանզի քաղաքն առ հասարակ եկեալ էին ի տեսիլ բանիցն: Եւ ելեալ Դաւթի ի վերին աստիճանն, և ձեռօքն զամբոխն սկսաւ խաղաղացուցանել, և ասաց վարդապետացն զի լռեալ դադարեսցեն: Եւ Դաւիթ, որպէս զլուսեղէն ամն՝ ծագել սկսաւ զլոյս վարդապետութեան իւրոյ, և բան առ բան զծածկեալ գանձս թագաւորացն մեկնէր՝ աշաւոր

1· Մի ինչ յոյժ. այսինքն, մի չափազանց ինչ ընել:

բանիւք. և ամենեքեան հիացան ընդ ճշմարիտ մեկնեալ բանիցն նմանութիւն. յերկարաձօս տուն առ տուն զբանն յայտնէր: Եւ բերեալ ոսկի առաջի, զարդարեալ ականբ և մարգարտաք, և զԱւետիսի եդեալ ի վերայ սպարսուն, և ընկերք ուսման իւրոյ՝ բարձեալ ի վերայ ուսոց և գլխոց, ձայնեալ ի վերայ նորա անուն Աւետարանի, որով և կոչեցաւն: Եւ այն օր ի շուրջ (ածին) զնա ի քաղաքն՝ ձայնիւ ցնծութեամբ՝ սրնգովք և փողովք: Եւ Աստուածաբանն և Նիւսացին, հաւանեալ ուսման Գաւթի, և կացուցին զնա վարդապետ ամենայն Աթենացւոց: Իսկ յետ ետին ամացն, զարձան Գրիգոր Աստուածաբանն և Գրիգոր Նիւսացին[1] յաշխարհն իւրեանց, կոչելով զնոսա յաթոռն հայրապետական, որով նստիլ իսկ արժանաւորեցան: Իսկ Մովսէս և Գաւթի կացին անդ յԱթէնս ամս երեսուն:

ՃԻԼ

ԱԽԱՆԴՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՄՈՎՍԻՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՑ[2]

Արեգակնակերպն այն Մովսէս և Գաւթի եկեալ յաշխարհն Հայոց՝ տեսին աւերեալ և քակտեալ զվայելուչ աշխարհն իւրեանց: Ցիշելով զկորուսեալ Հայոց զօրացն յանօրէնն Ցազկերտէ, լային և զմահ

1. Այս սուրբ հայրապետաքս գրեթէ զար մի առաջ էին քան զՄովսէս և զԳաւթի թարգմանիչս մեր:

2. Այս այլ Գաւթի Անյաղթի վրայ զրուածին նման՝ ոչ շատ նոր ժամանակի ոճիկ զրուած է. բայց իբրեւ շատ ծաւալեալ աւանդութիւն՝ հրատարակեմք. այլեւայլ օրինակք իրարմէ շատ տարբեր՝ աւելի և պակաս բաներ գրեն:

վարդապետացն իւրեանց. և ոչ ոք էր որ մխիթարէր զնոսա: Ահա փողքն հնչողականք, և ոչ ոք էր որ հարկանէր (ծափ?) քաղցր բարբառոյն. ահա լոյսն, և ի խաւարի նստեին տեսողքն: Եւ իբրեւ զայս ամենայն կատարածս տեսեալ Մովսէս և Գաւթի՝ ոչ կամեցան յայտ լինել զինքեանս յաշխարհին Հայոց. այլ և գաղանի և ծածուկ կամելով կեալ, զի էին աթենականքն այնք[1] ծերացեալ, և աշխարհն Հայոց աւերեալ: Իսկ Գաւթի յայտնի կացեալ յաշխարհին Հայոց. և Մովսէս ծածկէր զինքն՝ կարկատուն զգեստու և գծուծ կերպարանօք. գնաց ի գեղ մի Քաղարջոդաշտիկ[2], կացեալ անդ որպէս մուրացիկ. և ոչ ոք էր որ ճանաչէր զնա: Իսկ Գաւթի, Մամբրէ, Գողոս, Աբրահամ, ընկերք Մովսէսի կային յերեւանի: Եւ էր ի ժամանակին այնմիկ կաթողիկոս Հայոց՝ տէր Գիւտ (որ ի Թադէոսէ առաքելոյ վեչտասաներորդ և ի Լուսաւորչէն մերմէ ԻԲ[3]), աշակերտակից Մովսէսի: Սա խնդրեաց ի Գաւթայ փիլիսոփայէ զգիրն «Բարձրացուցէք»[4]: Արդ, ոչ զրուանգակ վարսն սոցին ասացաւք, այլ զրազումս թողլով զվարս ճգնութեանց:

Եւ խնդիր արարին Մովսէսի ընդ ամենայն աշխարհն Հայոց և ոչ գտին. կաթողիկոսն, եպիսկոպոսունքն և իշխանքն առ հասարակ սուգ ունէին ոչ սակաւ վասն ոչ գտանելոյ զնա: Իսկ հայրապետն Գիւտ ելեալ հաստատեր Հայոց սրբոյ եկեղեցւոյ զկարգս, և զաթոռս իւր հաստատեաց ի Դուին քաղաքի:

Իսկ ի շրջելն իւրում եկեալ ի գիւղն այն, ուր էր թաքուցեալ անթաքչելի գանձն և ամանն և անօթն լուսոյ Մովսէս. և ելեալ ընդ առաջ նորա

1. ՅԱթէնք ուսեալ գոլով:

2. Ի Քմիծաձեի կամ Վաղարշապատաւ:

3. Լուսաւորչի ցեղէն չեզոքները դուրս թողլով:

4. Խաչի վրայ գրած ներբողը, որ սկսի Սաղմոսին բնաբանովը, «Բարձրացուցէք զՏէր Աստուած մեր»:

առ հասարակ ծեր և տղայ, բերեալ իմուցին ըզհայրապետն ի տեղի պատուականի, և արարին զօրն զայն ուրախութիւն մեծ և գինարբուս. քահանայքն և իշխանքն առաջի հայրապետին էին նստեալ: Եւ ի բազմականին՝ զՄովսէս ոչ ոք էր որ զնա ճանաչէր՝ բաց յաշակերտէն: Եւ սկսան ուրախ լինել, և մի առ մի յարուցեալ երկրէին զերջս առաջի հայրապետին. և մի ումն ասէ ցնա. Ո՞ պատուական ծեր, սա բան ինչ չնորհաց՝ հայրապետիս. իսկ նա արտասուեալ ասէ. Եմ օտարական: Եւ նա զալիս նորա համբուրէր. և Մովսէս յիշեալ զբան Փրկչին՝ թէ, «Ոչ կարէք լուացանել զերդաց և թաքուցանել ընդ կարասեաւ, կամ դնել ընդ մահճօք, այլ ի վերայ աշտանակի դնել, զի որք մտանեն ըզլոյս տեսցեն». և եկաց առաջի հայրապետին, սկսեալ զբանս երաժշտականս այսպէս. «Ո՛վ արքայակերպ ՏԷր քահանայապետ սուրբ, Հովուապետ բարի, և նմանեալ առաջնոց»: և ի կարգին երիս տուեալ ասաց[1]: Իսկ հայրապետն և բազմականքն հիանային, և քննել սկսան. և նորին աչակերտն յառաջացեալ և ասէ. Ո՛ սուրբ Հայր, սա է ի ձէնջ կորուսեալն, Աթենացին Մովսէս, աշակերտ սրբոց հայրապետացն Սահակայ և Մեսրոպայ: Իսկ նորա՝ որպէս ի քնոյ ընդոստուցեալ (սուրբ Հայրապետն), և արտասուօք ձայնեալ. Ո՛վ աւետական ձայն. ո՞ տայր ինձ տեսանել զնա: Եւ ոչ զօրէր զնա ճանաչել. և զի էին ամք երեսուն որ ի նոցանէ հեռացեալ էր հեռի յաշխարհ. և ասէր ցնա

1. Հին Տաղարանաց մէջ գտանին այդ երեք տունք և կոչին Մեղեդի Տրդատայ Թագաւորին և նմանեաց իւրոց, ի Մովսէսէ Քերդողէ. հին և վսեմ զրուած. իմաստնէն գուշակուած է, թէ, Տրդատայ հիւանդութեան առեն՝ իրեն առաղջութեան համար մաղթանք մ'է այս, և սմանց յարմար երեւած է թէ Գր. Լուսաւորչին ըլլայ մաղթողն կամ հեղինակն: Հրատարակուած է ի տեղագրութեան Այրարատայ, եր. 390:

աչակերտն. Արդարութեամբ ասեմ, սա է ծերացեալն Մովսէս: Եւ յարուցեալ հայրապետն լալով, համբուրէր զսուրբ զերեսս նորա և զալիս. նստեալ պատմէին ընդ միմեանս զառաջակայն դնեղութիւնս անցեալս: Եւ զարձեալ մեծաւ ուրախութեամբ խրախանային. եղեւ օրն այն մեծ և երեւելի: Զեռնադրեաց սուրբ հայրապետն զՄովսէս՝ արքեպիսկոպոս. և ընթանային աշխարհ ամենայն ի տեսիլ Մովսիսի: Եկն և Դաւիթ և ընկերք իւր, ուրախ լինէին առաւել քան զառաւել: Խնդրեցին ի Մովսիսէ՝ զրով տալ նոցա զՀայոց Պատմութիւնս. իսկ նորա սկսեալ զրէր զՀայոց՝ բազում բնչ պէս պէս. և ձառել զՏնօրէնութիւն Փրկչին, և զԲերականին մեկնութիւն: Աւարին և եղանակս զերաժշտականաց՝ զձայնաւորս, ի պէտս սրբոյ եկեղեցւոյ:

ՃԾԸ

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ
ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆՆ ԵԻ ԵՂԲԱՐՔՆ

(ԹՈՒՂԹ Ղ. Ա. ՁԱՐԱՆՑ ՓԱՐՊԵՏԻՑ)

Անպիտան իշխանք ժամանակին իրրեւ տեսանէին օր ըստ օրէ զաճումն յառաջադիմութեան՝ յորդիս ազգի նահատակելոց Մամիկոնէիցն, զոր ոչ ի տուչութենէ մարդոյ վատահեալ ունէին յանձինս, այլ օգնութեամբ վերին խնամակալութեան, ի բարեխօսութենէ սուրբ արեան նախնեացն իւրեանց, զոր ի վերայ սուրբ եկեղեցւոյս Հայոց հզին յաժարութեամբ, կային աներկիւղապէս ի մէջ անուանեալ իշխանացն Հայոց, որպէս ի մէջ թշնամեաց: Թէպէտ և արհամարհեալք էին առ նախանձու, սակայն լաւագոյնք էին և երեւելին յամենայնի, և ականաւորք ի խորհրդի, մտաւորք և իմաստնագիւտք. ի նետաձգութեանն գեղեցկաձիգք

և դիպեցուցողք, յոր՝[1] թեթեւաշարժք և նախասպանք, յերկոցունց ձեռաց աջողակք, և յամենայն կռմանս ուղղակիք և չնորհալիցք: Զորոց ձանձրացուցանէին բազմածառայքն զանծառայիցն զդուրսըն, խնդրելով հանապազ զմիս այլեւայլ որսոց[2], և կամ այլ պատուական և մեծագին գիւտից խընդրովք, ըստ իւրաքանչիւր աշխարհաց: Նոքօք չքեզանային ընթրիք ամենայն տանուտերանց Հայոց. նոքօք զարդարէին յամենայն տունս՝ օտարք և ընտանիք: Եմանեցուցեալ ինքեանց ի յառաջնում փութային և զորդիս երանելոյ Կամսարականին Արշաւիրայ՝ տեառն Աղբարունեաց, որք և ազգականք իւրեանց էին, ծնունդք դստեր մարտիրոսին Վարդանայ[3], խրատել և հրահանգել ըստ իւրեանց իմաստութեան և արուեստի չանային:

Եւ զայսպիսի ինչ բարւոյ մասունս առնել առատ և հոգալ՝ առաւել եւս կամաւոր յօժարութեամբ յորդորագոյն էր աւագ որդին Սրբոյն Հմայեկայ, որում անուն էր Վահան[4]: Քանզի էր այր մտացի, առողջախորհուրդ և բարեսէր. յոր գործ և ձեռն արկանէր գործել՝ Տէր յաջողէր ի ձեռս նորա և զօրանայր. նա և գործակալք Պարսիկք որ գային ի գրանէ, թէպէտ ոչ կամաւ՝ այլ ըստ Աստուծոյ սադրելոյ սիրէին զնա և պատուէին. որք և առաջի թագաւորին Պարսից գովէին զլաւութիւն առնն, և անմոռաց յիշէին. մինչեւ ինքն իսկ թագաւորն Պերոզ զվճռովին՝ ծանեաւ զնա, և առ լաւս ունէր, և յանդիման ամենեցուն գովէր, և արժանի պատուոյ հաչուէր:

1. Որսորդութեան առեն չուտ չարժող, վազող, և ամենէն առաջ որսի կենդանւոյն զարնող և սպաննող:

2. Շատ ծառաներ ունող նախաթարթք՝ փչ ծառայ ունող վահանայ և եղբարցն կարօտ կ'ըլլային, ասոնց յաջողութեամբ ըրած որսերէն մասն խնդրելով:

3. Այս դստերն Մեծին Վարդանայ կոչուէր Վարդանուշ, որդիքն էին Ներսեհ, Հրահատ և Սահակ:

4. Միւս որդիքն էին Վասակ, Արտաշէս և Վարդ:

Ա՛ՄԹ

ՂԱԶԱՐ
ՓԱՐՊԵՑԻ ԵՒ ԹՈՒՂԹ ՆՈՐԱ ՍՈ ՎԱՀԱՆ[1]

Երանելին Ղազար նախանձաւոր և աշխատասէր այսպիսի երկնաւոր արուեստի, անդամին ի մանկական տիոցն սկիզբն արարեալ բանական գիտութեան՝ Յունաց յաշխարհն ճանապարհորդէր. և անդ քաջաց և առաքինի մարդոց պարապեալ, լիով ըզմարգարիտն՝ զբանն աստուածային՝ ընկալեալ յինքեան, եկեալ հասանէր յիւր աշխարհն:

Եւ քանզի սովորեաց մարդկայինս բնութիւն՝ զի իմաստունքն և մեծամեծքն գնեն ի վաճառականաց զմարգարիտն և զպատուականս հանդերձիցն, զի երեւելիք և պայծառք երեւեսցին ամենայն մարդկան յերեւելիս, այնպէս և սորա գիտութիւն բանի: Լուեալ իմաստուն և գիտուն մարդոց ընթերցուածոց պատուիրանացն Աստուծոյ՝ գովեցին. և խնդացին նովաւ յամենայն ժամ եկեղեցիք և վըկայարանք Սրբոց և տեղիք վարդապետարանք. ծաղկեաք լինէին հոգիք լսողացն ի չնորհացն որ էանէին ի բերանոյ նորա. և ի մէջ հայրապետացն և եպիսկոպոսացն՝ իբրեւ զարուսեակ պայծառացեալ երեւէր բանական գիտութեամբն:

Կամեցեալ մեծի իմաստութեանն Վահանայ մարզպանին՝ զօրավարին Հայոց՝ Տեառն Մամիկոնէից, զնա իւր առաւել մերձաւոր և սիրելի առնել, չնորհէր նմա զհոյակապ և զականաւոր տեղին ի Նոր քաղաքի՝ Վաղարշապատ, որում անուն էր Այբր

1. Ոչ նախընթաց երկու ազիատական յօդուածոց նմանութիւն, այլ հմուտ և ճարտար գրչի է գրուածս, թերեւս և Ղազարոս աշակերտի. որոյ առ Վահան Մամիկոնեան գրած Թղթոյն՝ յառաջաբանն է սա:

կաթողիկէ եկեղեցի, վանօքն[1]. և նորա ընկալեալ զբանն մարզպանին՝ խնամածէր զտեղին:

Պատահեաց նմա կրել արտաքսութիւն ի վայրապար մարդկանց. զի ի հրոյ վնասեալ փայտակերան եկեղեցւոյն[2]. վասն որոյ ածեալ զմտաւ և յիշելով զբանն Պօղոսի, զի յամենայն ժամ աստուածաշունչքն առանց խղճի մտաց կեցցեն, որպէս աղօթս առնելով ասէր. Խնդրեմք յԱստուծոյ, զի մի չար ինչ պատահեսցէ ձեզ. յայսմանէ կամ եղեւ նմա գնալ ի կողմանս Յունաց. հասանէր յԱմիթ քաղաք, և անդ առ ժամանակ մի զտեղի առնոյր: Տեսանելով զայն չարանախանձ մարդկան՝ յաւելուին բանս առնս զտեղւոյն և զուսմանէն եւս զնորա, զի զբարձր անունն խոնարհեցուսցանել կարասցեն:

Լուեալ զայս ամենայն Ղազարոս՝ իբրեւ զքաջ պատերազմող զինեալ զինքն, զի բանիւ զօրութեան զիւր ոգւոյն և զքաջալերութեան և զպատակեր կերպարանաց՝ ի ձեռն զրոյ թղթոյս այսորիկ ծանուսցէ նոցա, զվաստակ բանի իւրոյ որ առ նոսա յառաջագոյն լուսափայլեալ, զի կարճեսցին բերանք չարախօսացն զնմանէ. զի այսպէս, ասէ, ի ձեռն անիմաստ և վայրապար մարդոց՝ եհաս հալածումն յառաց և պիտանի մարդկան աշխարհիս Հայոց: Եւ մանաւանդ զի վասն եղեալ յամենիմաստ մարզպանն, եթէ գիտէ ճարտարութեան բանի լինել չլսող, և գիտել զիրաւունս, զի անմեղադրելի զինքն արասցէ ի ձեռն զրոյս:

Եւ առեալ ի ձեռն զզէն գիտութեան, զի յաղթող երեւեսցի. և առաքէ զգրեալս ի ձեռն բարեսէր մեծի և պատուական նախարարին՝ Մամիկոնէին Համազասպայ, որ և պատճառ իսկ եղեւ նմա այսրէն գարձին. զի յաղերբէն գիտութեան նորա արբցին միւսանգամ մարդիկ, և պղտաբերք լիցին Աստուծոյ՝ զարդարութիւն:

1. Հին Էջմիածնի եկեղեցին և վանքն:
2. Եկեղեցւոյն այրիչն և նորոգութիւնը՝ նախան-

ՃԿ

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՎԱՍԱԿԱՅ ԵՂԲՕՐ ՎԱՀԱՆԱՅ

(Ղ. Ա. ՁԱՐՊ. Հ Դ.)

Յարձակեալք ի վերայ միմեանց Հայք և Պարսիկք, թէպէտ և զօրավարն Հայոց Վահան երիւք կամաւորական եղբարբք հարեալ ի դիմի իւրոյ թշնամւոյն կողմանն, դիր և տար արարեալ դարձուցանէին ի փախուստ, մինչեւ տարեալ անցուցանէին զրաղումս ի զօրացն Պարսից՝ յայնկոյս Կուրն գետոյն, և զրաղումս ի զօրացն Պարսից երեւելի արանց զօրուն՝ կոտորէին քաջաբար: Անդ՝ քաջի սեպուհին Մամիկոնէից Վասակայ հարեալ նիզակաւ ուժեղապէս զայր ումն հզօր ի գնդէն Պարսից՝ յերկիր կործանէր. որ և բեկանէր նիզակն իւր յանկարծակի, և քաջին Մամիկոնենի Վասակայ՝ եղեալ ի խնդիր այլում նիզակի և գտեալ՝ գառնայր անդրէն փութանակի ուրախալից: Եւ պատահեալ նմա կամաւորականին Ներսեհի տեառն Շիրակայ, որոյ և նորա բեկեալ նիզակն՝ ի խնդիր էր այլում նիզակի, և քաջի Մամիկոնենին Վասակայ ձայն ի վերայ եղեալ՝ ասէր. Փութա, Ներսեհ, գտանել նիզակ, և դարձիր եւ կռուագ. քանզի ոչ երբեք կարեմք գտանել ժամ աքանչելի այսպիսի վաճառու, ուր մահ՝ զանմահութիւն և առժամանակեայ՝ զյաւիտենականն, և ապականացուս՝ զանապականելի կեանսն. վաղվաղեա, քանզի չեմք կալոց անմահք. գուցէ վրիպեալ յանուանի և ի փառաւորեալ կատարմանէս՝ անանուն և անպիտան

ձառաք Ղազարոս՝ իբրեն յանցանաք համարբէին, իբր թէ իր անհոգութենէն պատճառած ըլլայ:

ժահուամբ ելանիցեմք ի կենցաղոյս: Եւ զայս լուր ի սրբոյ առնէն Վասակայ Մամիկոնենէ՝ հաւաստի երդմամբ պատմէր մեզ բազում անգամ ինքն տէրն Շիրակայ Ներսեհ կամսարականն:

Եւ մինչդեռ զօրավարն Հայոց՝ Մամիկոնեանն Վահան՝ այսպէս մրցեր հանդերձ երանելի եղբարբն Վասակաւ և երկոքումբք որդւովքն կամսարականին Աբշաբայ, յանկարծակի փախուցեալք առ հասարակ սպանային գունդքն ամենայն Հայոց և Վրաց. որոց բազումք ի նենգաւորացն աղաղակէին առ միմեանս անհանգիստ, թէ, փախեան Հայք. անձնապրկրք լերուք: Եւ վասն զի ոչ ըստ փութոյ և յորդոր խնդրոյ չնորհիւր ի ժամուն վիճակ մարտիրոսութեան ի վերին զուգակշռոյ աչոյ ամենագիտին, ըստ ծածուկ և անքնին իւրոյ կանխատեսութեանն, քաջի զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի և այլոց ընդ նմա ուխտապահ ընկերացն, որ սխոր-ժելով տենչային բաժակի մարտիրոսութեան, և չգտան արժանիք. դարձուցեալ այնուհետեւ զերասանակս երիվարացն՝ գնային և նոքա զհետ փախստէից Հայոց: Եւ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի եկեալ պատահէր Բաբգենայ սիւնոյ, անկելոյ ի զօրացն Պարսից կարէվէր. զոր հեծուցեալ ի վերայ նորոյ նժոյգի և հանեալ ի պատերազմէն ապրեցուցանէր: Բայց որք ընտրութեանն ցանկացողք եղեն և արժանիք ընդ սրբոյ սպատին Սահակայ և ընդ սրբոյ քաջին Վասակայ Մամիկոնենի, և կատարեցան յաւուրն, և անուանքն են այսոքիկ[1]:...

1. Այս տեղ պակաս կայ Ղազարու պատմութեան մէջ. և ոչ միայն պակաս, այլ և յետ և առաջ զրուածք, ձեռագրին թվլթոց խառնակութեամբ. վասն զի ասկէ չատ առաջ՝ ԿԹ գլխոյն մէջ յիշուի Վասակայ մահն՝ Մասեաց Ակոռի գիւղի մօտերումն:

ՃԿԱ.

ՔԱՋՈՒԹԻՒՆՔ ՆԵՐՍԵՀԻ ԵՒ ՀՐԱՀԱՏԱՅ ԵՒ ԵՂԲԱՅՐՍԻՐՈՒԹԻՒՆ ՆՈՑԱ

(Ղ, Ս, Զ Ա. ՓԱՐՊ. ԿԹ. ՀԵ–ՀԶ.)

Առեալ Գարչռւայն մախազու[1] զգունդն կատաշաց[2] հանդերձ և այլ ապստամբօք Հայ որերով, և այնու եւս գնդաւ՝ որ ընդ իւրն էին, և յայլ կողմն կարթեալ[3], ըստ աներեւոյթ ձորոցն խորութեան, հասեալ կայր զկնի ուխտապահ զօրացն Հայոց՝ ի կողմանէ. կարծեցեալ մտադիւր զնոսա յայնմ պարապուրթենէ կոտորելոյ զթշնամիսն Աստուծոյ, կամէր ի թիկունս կուսէ անկանել ի վերայ զօրացելոցն ի Քրիստոս, և տանել զյաղթութիւնն՝ խաբէութեամբ, և անուն մեծ ժառանգել: Իսկ ուրումն յանկարծակի զձայն խողխողման զՀայ սպանելոյ ի կատաչացն՝ լուեալ, բոզոք արկանէր առ աբս կամսարականս. որոց ցասուցեալ առնն՝ կամէին սպանանել զնա, թէ գունդ մեր է, և դու խաբէութեամբ զմեծ իրս կորուսանես: Եւ ապա հաստատեալ Ներսեհի՝ ի լրտեսէն եղբօր իւրում Հրահատայ, եթէ գունդն թշնամեաց է, դիմեալ յարձակէին ի վերայ այնչափ բազմութեանն՝ երկոքին եղբարքն, սակաւ արամբք: Ընդ հասեալ Հայրանման կամսարականն Ներսեհ, զզօրագլուխն Կատչաց՝ զայր հզօր և զմարտիկ՝ հարեալ նիզակաւ անգէն ի տեղւոջն սատակէր, և զայլ ամենայն գունդն արկեալ առաջի, բազում արանց

1. Ուրացող մի. մադիազի պաշտօնն կամ պատիւն էր թիկնապահութեան խնդասւորի, իբր aide de camp.
2. Մարաց կողմերը բնակող ազգ մի, Cadusi.
3. Թուի՝ իբրեւ կարթի, որպայթի մէջ ընկած:

դիակունս՝ առաւել քան զայլ մեռեալս պատերազմին՝ կոթման յերկիր վարէին։ Եւ լինէր օրն այն՝ օր նշանաւոր ուրախութեան հաւատացելոցն ի Քրիստոս, և օր ամօթոյ և կորանաց ամենայն ուրացելոցն ի Քրիստոսէ. և ճշմարտապէս կատարեալ հաստատէր բան մարգարէին՝ որ ասէ. թէ, որոց Աստուած օգնէ, «Մի զհազարս հալածէ, և երկու՝ զբիւրս չարժէ»։... Բայց զՀրահատն կամ. սարական՝ սաստկապէս վազս առեալ երիվարին իւրոյ՝ ընկենոյր[1]. և հասեալ Պարսկացն՝ մինչդեռ էր հեծեծս, կալեալ ածէին առ Միհրան, զոր տեսեալ Միհրանայ՝ մեծապէս ուրախացաւ, պատուհասէր զնա բանիւք խաղութեան, և կապեալ տայր պահել զգուշութեամբ, և ուր երթայր յաշխարհս Հայոց՝ ընդ իւր չրկեցուցանէր։...

Գնացեալն հասանէր ի դրանէ և սիպով զՄիհրան ի գուռն կոչէին. և նորա չուեալ ամենայն բազմութեամբ ճեպով ի գուռն, առեալ ընդ իւր զկապեալն Հրահատ և զերանելին Ցագդ և զայլ կապեալսն, զորոց զհետ երթայր սրամութեամբ և բազում փութով սիրելի եղբայր նորուն՝ տէրն Շիրակայ Ներսեհ, արամբք ընտրելովք. որոց տեսեալ զանհնարին անապատ ողբումն Ներսեհի, սիրով խանդաղատեալ՝ զբարիս նոցա յիշելով՝ երթային ընդ նմա։ Որոյ յօրէ ունելոյ զՀրահատն՝ Պարսկացն, ոչ էր եղբօր նորա Ներսեհի տեսանն Շիրակայ՝ դադարեալ ի լալոյ, և ոչ էր հանգուցեալ ի վերայ անկողնոյ, և ոչ ճաշակեալ հաց առանց արտասուաց. այլ և զոր ճաշակէրն՝ առ չարի դառնացեալ լինէր բերան նորա։ Եւ երթայր զհետ գնդին Պարսկաց, ածելով զմտաւ, թէ ո՞ գիտէ, լրտեսեալ ուրեք ի զաւագան թեւի գնդին՝ անկեալ ի վերայ կարասցէ զնա գերծուցանել. և կամ թէ ոչ՝ գոնեա ես դիպեալ մահու՝ հանգեայց յանմբխելիսար տրամութենէս։ Եւ երթեալ բազում ան-

1. Յետոյ ուրիշ պատերազմի մէջ հանդիպած է այս։

գամ օթս զհետ[1], և ոչինչ կարացեալ գտանել հնարս. և մերձեալք որպէս թէ օթեւանաւ միով՝ ի սուրբ տեղի տան[2] նահատակին Գրիգորի, և յիշեալ զտրամակցութիւն Սրբոց ընդ վշտացեալս, և զհամարձակութիւն սրբոյ տան Գրիգորի առ Աստուած, ձայն սաստիկ բարբառոյ հանդերձ արտասուօք արձակեալ առ այրն Աստուծոյ, ազաղակեաց ասելով. Տէր Գրիգոր, որ զսաստիկ մեզ ամբարըշտութեանն մեղաց մերոց մերժեալ փարատեցեր յաշխարհէս Հայոց, փարատեա և զիմ սաստիկ մեզս տրամութեանս ի սրտէս, և չնորհեա ինձ զանձկալի զեղբայրն իմ տեսանել առողջ առ իս. քանզի հնարաւոր է Աստուծոյ ամենայն. և զբո խնդիր՝ քաջ ախորժելով կամի լսել և կատարել։ Եւ այսպէս մեծաձայն բարբառով և ողբալով ազաղակեաց համարականն Ներսեհ առ այրն Աստուծոյ Գրիգորիոս. ոչ թէ բերանով բարբառէր, այլ սրտիւն ազաղակէր։ Եւ նորա լուեալ վաղվաղակի ասաց ցԳրիգորիոս. և Փրկչին Աստուծոյ անդ և անդ հանեալ զկապեալն Հրահատ՝ ի չրջափակ զգուշութենէ պահապանացն, արձակէր խաղաղութեամբ առ սիրելի եղբայրն իւր և յաշխարհ։

ՃԿԲ

ԲԱՆՔ ՎԱՀԱՆԱՅ ԱՌ ՄԻՀՐԱՆ ՊԱՐՍԻԿ

(ՂԱԶԱՐ ՓԱՐՊ. Հ Ե.)

Սպարապետին Հայոց Վահանայ մամիկոնէի՝ պատսխանի արարեալ առէր ցՄիհրան. եթէ, Աչեաց տէր որ լինի՝ արդար աչօք պիտի նայել յամենայն մարդ՝ իբրեւ զթագաւոր, և արդարա-

1. Իջեվանէ իջեվան՝ տեղէ տեղ եռեւէն երթալով։
2. Էջմիածնի կամ Արտաշատայ կողմերն։

պէս լսել, ըստ արժանի թագաւորին: Բայց այլ թագաւոր՝ որ ուղիղ աչօք չհայի ի ծառայս, և ուղիղ լսողութեամբ չլսէ ուրուք զբանս, այլ համակ ըստ իշխանութեան վարի, և ոչ ըստ արժանի իրաւանց քննութեան, — այլ առաւել եւս որ կարի դժընդակագոյն է և աշխարհի կորստեան պատճառ, և հանապազ զայն առնէ, և կամի տեսանել այլոյ աչօք, և լսել այլոյ ականջօք, — ծանր է ծառայութիւնն այն և դառն և վտանգ, որում ոչ ոք կարէ կալ առաջի: Վասն պի, տէր՝ որ յիւր ի ծառայից զլաւ և զվատթար չգիտէ ընտրել, և ըստ արժանի իւրաքանչիւր ումեք մատակարարել զպիտոյն ոչ կամի, այնպիսին լաւ ծառայի տէր դժուարաւ կարէ լինել: Արդ, Հայոց աշխարհս որպիսի մեծ և պիտոյի աշխարհ է[1]. և արդ ցոյց ինձ զայր մի այսպիսի աշխարհի՝ որ թէ առաւելաւ թագաւորութեամբ արժանաւորապէս հասեալ ի տանուտէրութիւն. այլ որեար աւազակ և անպիտան, հացկատակք և վատասմիկ, որ զան զայնպիսի մեծ թագաւորութիւն խաբեն, և ընդ կրակի՝ փառս գնեն և տէրութիւն. և ի ձէնջ ըստ կողմն եղեալ սակաւ մի՝ միգին ի կրակն, և յանթեզ[2] զաղբ իւրեանց արկանեն. և զվաճառականն և զվաճառն ի միասին թշնամանեն: Եւ այլ լաւութիւն և քաջութիւն և միաբ և գիտութիւն՝ որով աշխարհ չինի և միշտ լինի, այն չնդրի և արհամարհեալ է. այլ անպիտան և վատասմիկ մարդկան պատրողութիւնն ի մէջ անցեալ յարդի. և դուք առ ճանաչող ունիք զձեզ: Լաւեալ է քո՝ որ Մխիթարդ ես, և ամենայն Պարսից՝ ըզբանս զայս յԱրեաց տեսանէն ի Պերոզէ, առաջի ամենեցունց յատենի. թէ, Աւր վատ և գունդ անպիտան Աւսրի է, բայց քան զասորի այր՝ Հայ մարդ չատ վատթար է և անպիտան: Եւ ոչ արդեօք լաւ էր մահ՝ քան զայն լուր յայնպիսի թա-

1. Պէտք է աւելցընել ըսել, թէ՝ դուք չատ գիտէք:
2. Մաշած կրակին մնացորդն:

գաւորէ: Եւ արդ, իմ երկուս կոիւս արարեալ է ընդ Աւրի մարդկան, և երրորդն այս է՝ որ ընդ քեզ արարաք, ընդ այնպիսի երեւելի և քաջ մարդկան կռուեցաք, զոր ինքն Աւրեաց տէրն և ամենայն Աւրիք ճանաչէին, թէ որպիսի որեար էին. և օտար մարդոյ մեզ չէր օգնեալ, Հոնի կամ Հոռոմի և կամ այլ ազգի ուստեք մարդոյ, բայց միայն այս Հայոց՝ զոր դուք գիտէք. սոցա վճարեալ է զայնպիսի մեծ գործ, զոր դուք ամենայն Աւրիք լուայք և տեսէք. և ոչ բաղում այրուձիոյ, այլ հարիւր արամբ և կամ եւս նուազիւ՝ զհազար և զերկուս հազար այր փախուցեալ է առջօք: Եւ յայսմ կըռուի՝ մի զայս գիտաւ ածեալ պարծիս, թէ աւելի ինչ քաջութեամբ յաղթեցէք մեզ. այլ ի մեր երկպառակութենէ և ի նենգելոյ եղեւ մեզ վնաս: Զի եթէ էր այս հայ գունդ՝ յորոյ վերայ ահ և երկիւղ էր, որպէս Աւրեաց տեառն յիւր ծառայի վերայ, և յիմում ձեռին այսպէս էին՝ որպէս ընդ իմ նախնեացն ձեռամբ, և համարձակապէս իշխէի՝ զվատացեալսն ի կռուի՝ տամբ և կենօք հարկանել և զլխով պատիժ առնել, և քաջացելոցն կարէի բարի առնել և պատիւ տալ, ցուցանէի Աւրեաց տեառն և ձեզ ամենեցուն, թէ որ կարի գունդ յԱւրիս անուանի էր և լաւ. բայց եթէ լաւագոյնք եւս և քաջք երեւէին, այլ ի խոնարհ սակաւ մի և նուազ չտայի երեւել[1]: Բայց արդ, զոր ձեր ի վատ տեսմէ և յանպիտան ի մարդկանէ աշխարհիս Հայոց իշխան կարգեալ էք, զոքա ըստ իւրեանց յեռանութեան կորուսին յաշխարհէս Հայոց զքաջութիւն և զանուն բարի և զլաւութիւն: Զի գնդի՝ որոյ զօրագլուխն վատ է, գնդին լաւ լինել չէ հնար. և աշխարհի՝ որոյ իշխանքն յետին են, աշխարհին այնմ անհնար է յառաջադէմ և անուանի լինել:

1. Եթէ Պարսիկք սուրիշ ազգերէ կարեն զօրք ունենային, ես չեմ թողուր որ Հայք անոնցմէ և ոչ քիչ մի վար ըլլան:

ՃԿԴ

ԱՌԱՔԻՆԻ ՓԱԶՈՒԹԻՒՆ ԽՈՒՐՍԱՑ

(ՂԱԶԱՐ ՓԱՐՊ. ԶՍ.)

Տեսեալ Խուրսայ, որ էր ի գաւառէն Աղձնեաց[1] ի գեղջէն Շխրմաց, պայեակորդի տեառն Շիրակայ կամսարականին, զոմն ի Պարսից զօրացն՝ զի կամէր սպանանել զայր ոմն կարնացի[2] ի մշակացն, և մշակն չուրջ գալով զրարդիւ միով խուսափէր ի սպանողէն. և տեսեալ զայն Խուրսայ դայեակորդոյն կամսարականին ներսեհի, գայրացեալ ընդ սեպհին մամիկոնէից Մուշեղի և ընդ կամսարականին Ներսեհի, ասէ աներկիւղապէս. Ո՛չ սպաքէն մահ այլ աշխարհաց՝ թէ մեռանի (սա) ի պարսկէն, ի մէնջ պահանջէ վրէժխնդիրն Աստուած: Եւ յարձակեալ նիզակաւ Խուրսն՝ ի վերայ պարսկին, անդէն ի տեղւոջն սատակէր, և զերծուցեալ ապրեցուցանէր զկարնացին ի սպանողէն: Եւ զրգռեալք ընդ բանսն Խուրսայ՝ սեպուհն Մամիկոնէից Մուշեղ և կամսարականն տէրն Շիրակայ Ներսեհ, և ընդ զօրծն հայեցեալ ընդ Խուրսայ՝ զոր գօրծեաց քաջարար, տեսեալ և զհետամուտսն զկնի նոցա՝ թէ չեն կարի բազումք, յարձակեցան ի վերայ Պարսկացն սակաւ արամբք որ ընդ նոսա էին, և զօրացեալ օգնականութեամբն Աստուծոյ՝ բազում արեանց ճապաղիս ի տեղւոջն հանէին, և զայլս փախստականս արարեալ՝ պարձուցանէին ընդ կրունկն ամօթով: Եւ եղեւ թիւ մեռելոց ի տեղւոջն՝ եօթանասուն և երկու արանց: Եւ լուեալ զայսպիսի յաղթութեան զործ՝ զօրավա-

1. Տարօնոյ մօտ գաւառ:
2. Կարնոյ (Էրզիռումի) գաւառէն:

րին Հայոց Վահանայ մամիկոնէի, եւս փառս Աստուծոյ, որ և առանց նորա կորացուցեալ խորտակէր զղօրութիւն թշնամւոյն:

ՃԿԴ

ՍՊԱՆՈՒՄՆ ՈՒՐԱՑՈՂԻՆ ԳԴԻՀՈՆԻ

(ՂԱԶԱՐ ՓԱՐՊ. ԶԳ.)

Քաջաբար ի մէջ ամենայն զօրացն Պարսից յարձակէր (Վահան) հանդերձ լաւ ուխտապահ արամբք սակաւուք, որ միայնի առ նմա: Եւ ապչեալ ընդ ահաւոր աներկիւղած ուժին զօրավարին Հայոց Վահանայ, և ընդ այլ սակաւ այնքան արանցն՝ որ ընդ նմա, զհետ զօրապլխին Պարսից Շապհոյ, ձեռով ցիշխանն Աիւնեաց առ Գդիհոնի[1] յղէր. ասէ. Զեռն տուր յիս կռղմն, վասն զի իրս անպատուհմն իմն նորոգս ցուցաւ. զի թէ արդարեւ զօրութիւն իմն աներեւոյթ այլ է՝ որ օգնէ նոցա և մեզ չերեւի, զայն ես ոչ գիտեմ. բայց եթէ անմտութեամբ ցանկան անձնամահք լինել, ապա ի մէջ արարեալ զամենեսեան զնոսա այսօր՝ ձերբակալս առնեմք: Եւ իշխանն Աիւնեաց Գդիհոնն խնդալից եղեալ ընդ կոչն Շապհոյ, նչկահելով փութանակի ի տեղին արշաւէր: Եւ զօրավարն Հայոց Վահան միմոնեան հանդերձ ընդ իւր միաբերան սակաւ արամբք, օգնութեամբ աջոյ հզօրին՝ յարձակեալ՝ հերձանէր զբազմադակ գունդն Պարսից, որպէս յորդահոսանք բազմութեան ջրոց՝ որ հեղեղատին զերկիր և անցանեն: Եւ ինքն հզօրաբար քաջ ուխտակցօքն նման առիւծոյ ընդ մէջ ամենեցուն յայնկոյս ելանէր. և սպանեալ իւր և արանցն որ ընդ

1. Ուրիշ տարբերակ մի, հակայակերպ յաղթանդամ:

նմա՝ բազում արս հզօրս պատերազմողս ի զօրացն Պարսից, հարեալ խոցէին նիզակաւ ընդ անուէթ կարեվէր՝ և զհզարա իչխանն Աիւնեաց զԳրիհոն, և զահաւորալուր ամրութիւն զինուն՝ յոր պանծացեալ յուսայր անօրէնն՝ ցելեալ վեր ի վայր, Թափ ընդ լեարդն զնիզակատէգն հասուցանէին։ Որոյ դառնակոծ չարալըլուկ հեծմամբ՝ յաւուրս սակաւս վճարեալ զոգին, սատակէր անխոստովան. որ պարծէրն ամբարտաւանութեամբ և ասէր. Թէ, Ես ընդ Վահանայ և այլ Հայերդ՝ ոչ եթէ նետիւ կռուիմ, այլ գղըկով[1] պողեալ զբոլորս ցնդեմ, օն և անդր ցիր և ցան արկից ձորոցդ և դաշտացդ։ Եւ եղեւ բան հպարտութեան նորա բեկումն նմին. զոր մատնեալ Աստուծոյ ի ձեռս արանց զօրուն Վահանայ մամիկոնէից՝ միանգամ և երկիցս զիչխանն Աիւնեաց զԳրիհոն, և դարձեալ երկայնամտեալ ի նա Աստուծոյ՝ իբրեւ զմարդասէրն՝ ներէր խնայելով, զի թերեւս զղջացեալ գոցէ ժամ դարձի և ապաշխարութեան և կեցցէ։ Եւ իբրեւ ոչ դադաստացաւ, այլ բնաւ ամենեւին արհամարհեալ զչմարտութիւն, և եղեալ անպատասխանի յաստուածային հարցմանն, ընկալաւ զատակումն ամօթոյ իւրոյ զատիս և զհանդերձելոյ։

1. Նեաին կոթով իրարմէ կու զառեմ՝ Վահանայ զօրքերը։

ԺԿԵ

ԲԱՆՔ ՎԱՀԱՆԱՅ ՅԱՏԵՆԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ

(Ղ. Ա. Զ. Ա. Ր ՓԱՐՊ. Ղ. Ե.)

Պատասխանի տուեալ մամիկոնենին Վահանայ՝ թագաւորին Վազարչու, առաջի ամենայն բազմութեանն, ասէ. Խօսել առաջի Աստուծոյ և առաջի ձեր թագաւորաց՝ երկայն բանիւք՝ չէ արժան. քանզի ես զամենայն գիտեմ մեր և զխնդիր և ըզհամարձակութիւն գործոյն, դնել զանձինս ի մահ, ցուցի ձեզ և ամենայն զրանն ասագանոյ, ի ձեռն Նիխորայ, գրով և կնքով. զնոյն բազում անգամ ասել՝ յերկարուսն է խօսից և ձանձրութիւն։ Վասն զի զկամս և զանհաւան բնութիւն՝ զոր ասացէք դուք զկղզիոյն ձերմէ զՊերոզէ, չատ էր և առն թագաւորի անպատշաճ։ Բայց ի յայլ ոք արդեօք յոր լինէր ի նմանէ բռնութիւն, տամք էր արդեօք և կամ կենօք և կամ պատուհասիւ ինչ այլով. իսկ զմեզ՝ հոգւովք հարկանէիք[1]. որում կարեաց և վտանգի՝ ոչ մեր նախնիքն և ոչ մեք՝ առաջի չկատարացաք կալ, և հանապազ բազաքեալք և բազաքեմք, եթէ, սուտ թուին մեզ օրէնգդ ձեր, և մարդոց անմտաց բարբանջմունք են. և մի բռնադատէք զմեզ թշնամանել՝ զոր կամաւ խորհրդով պատուել ոչ կարեմք, և ոչ սիրել, զի ծաղր թուին մեզ և չհաւատամք։ Եւ (դուք) իշխանաբար և ըստ բռնութեան չլսեալ բազաքոյն մերոյ, և կամէիք կորուսանել ըզմեզ, և կորուսաք։ Քանզի օրէնք մեր զսբրութիւն խնդրեն, և զամենայն ազատութիւն՝ որով հոգիք

1. Պերոզ զուրբչները կամ անով տեղով կամ մահուամբ կորուսցընէր, իսկ զմեզ՝ նա և հոգւով։

մարդկան կորնչին, չառնուն յանձն և չկամին. և տերանց հրամայեն ծառայել և հնազանդ լինել՝ որպէս Աստուծոյ: Եւ արդ, ազէ ցուցէք այր մի՝ որ Պերոզի արքայից արքայի, որ զձեր օրէնս կատարեալ է և պատուեալ են, թէ վասն պիտոյութեան և կամ ի կռուի վաստակ և գործ ցուցանելոյ՝ գտեալ է: Վասնզի ձեր Աբեաց զօրագլուխք բազում եղեալ ի տեղիս տեղիս, ասացեն զմիոյ ուրուք ի զոցանէ վերեւելի գործ ինչ՝ զոր նոցա արարեալ է և ձեր զօրագլխաց տեսեալ, և վասն այնպիսի վաստակոյ նոցա՝ ձեր հատուցումն արարեալ է: Իսկ զանտեղի գործս նոցա և զմահապարտութիւն՝ յայտնապէս գիտեն զաւտակիցք նոցա և այլ մարդիկ աշխարհին Հայոց, թէ որպիսի մարդիկ են. լի ամենայն ագահութեամբք, սուտք, անպիտանք, ագահագործք, գաղտաշուրջք, գողք, լեռնախոյք, գերեզմանակրկիտք, խարեբայք. և ընդ որս կրսեր չինականք մարդիկ աշխարհին Հայոց՝ հաց գարչէին ուտել ընդ նոսա[1], և կամ բնաւ իսկ ի մօտ իսկ երթալ առ նոսա, զի մի պղծիցեն զուցէ ըստ հրամանի օրինաց մերոց, գային ի ձէնջ խաբէութեամբ զձեր օրէնսդ ունէին, և ըստ կամի ազատեղեալ զկրակն՝ զձեզ առ անմիտս ունէին:

Յաղագս որոյ համարձակապէս ձայնիւ բարբառով՝ առաջի ձեր ասեմ այսօր, ի բաց բարձէք զխաբէութեան զվճռադ զայդ՝ յաշխարհէն Հայոց, զոր չունիմք առ արդարս, և չպատուէ ոք իրրեւ աստուած: Այլ յիտին զառաջինն, վասն զլաւն, և անպիտանն զպիտանին, և որդի ստամբակ զհայր, և ծառայ չարագործ զտէր իւր, յորժամ ի յետս տանել կամ կորուսանել, և զձեր սուտ օրէնսդ՝ ի ձեռն առեալ՝ զամենայն չարիս զոր և կամի գործել, դուալ վճարէ: Բայց ազէ, դուք ի մէնջ որպէս ի ծառայից զձեր տերանց զպատուն խնդրէք, զգործ և զվաստակ և զհպատակութիւն, զօգուտ, զարդարմունքն, և աստուածաբար անդրկող մօտ զիւրաքանչիւր մարդոյ ըստ իւրաքանչիւր վաստակոյ զարժանն հատուցէք: Մեր ամենեցուն այդ բանք են, և այդ խնդիր. եթէ չնորհեալ հատուտեալ զինդիրդ զայդ մեզ, և ի ծառայութենէ ձերմէ զմեզ ի բաց չկամիք հանել, որպէս օրէնքն են թագաւորաց, գրով և կնքով՝ զայդ մեզ հատուտուն արարէք, և ի մէնջ՝ որպէս ի ծառայ որեւրոյ՝ գործ խնդրեցէք և հպատակութիւն. և ձեր մտացի և ամենահայեաց ակամբ՝ հայեցարուք յայր և ի գործ նորուն, և հատուցէք զարժանն:

1. Այնպիսի վաստերը՝ որոց հետ մեր գեղացիներն անգամ զբաղելով չէին ուզեր հաց ուտել, դուք ստիպեցիք, և պատուեց և վարձուց արժանիները՝ անվարձ անպատիւ թողուցիք:

ՃԿԶ

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄԵԾԱՐԵԱԼ Ի ԴՐԱՆ ՊԱՐՍԻՑ

(ՍԻՄԷՈՆ ԱՊԱՐԱՆԵՑԻ)

Իսկ Վահանու հանդերձ զընդաւն գնացեալ ի դուռն Վաղարշին,

Աբքայօրէն փառս ըզդեցոյց և կատարեաց զիղձըս սրտին.

Տբեւել զնախնեացն ըզմեծութիւն և սարսափելատ[1] Հայոց ազգին:

Դարձեալ անդէն հրահոսակօք ուրացողացըն խոյս տային:

Ջարթեաւ առիւծըն սիգաձեմ և ջուրց որդիքըն զոխէին,

1. Այս զինուորական պատուանունը՝ Յունաց կայսերք տային և ոչ Պարսիկք:

Կալեալ զփաղանկըս աղուխսուց այգեստանեայքըն ծաղկէին[1]։
Ստեղնեալ բողբոջ գաւազանաց երկուց ցեղիցն ի միասին[2],
Բարձրացեալ եղջիւրք օծելոցն՝ հայրապետին և արքային.
Ակնեալ աթոռ դատաստանի ի յարկըս Տեառն, ըստ Սաղմոսին,
Կանգնեալ զկործնեալս աշտարակին, վերջինըս մեծ քան զառաջին։
Զի որ եհար վասըն յանցին՝ նոյն բժշկեաց ըզկնի զարձին.
Որպէս երբեմըն զիսրայէլ և այլ բազում՝ որ կայ ի գրին.
Կրկին կենօք կենդանացոյց և առաւել քան ըզնոցին։
Եւ այսքանեօք բարեգործեալ մեզ երկնաւոր Հայրըն վերին,
Մինչ զի տեսողքն հիանային, չարժեալ ըզգլուխըս չըշէին։
Զոր և Յոհան Մանդակունին նոր երգս երգէր ի տաճարին.
Դարձոյց ըզսուգն յուրախութիւն, և պատառեաց զքուրձ խաւարին.
Սրբեալ զարտօսր երեկոյին, սըգաթափեաց յառաւօտին.
Յարոյց զաղքատս և ըզպընանկս՝ նստուցանել իշխան կրկին։
Զայն գուշեցէք[3] ի խանդագնալս, թէ կանգնեցաւ անկեալն՝ յոտին։

1. Սաղմոսի Երգոց երգոյն (Բ. 15) խօսքն է։ Բայց ահ են այն ջուրց որդիքն և ինչ է այն գոհանչն։
2. Պահլաւունեաց և Մամիկոնեանց։
3. Գուշեցէք պիտեր. հին բառգիրք աւելին և Գուշել բառ, բայց նշանակեն գիշատել, պատրուակ գազանաց զկենդանիս կամ զմեռեալս։

Ահաւասիկ նոր նորոգեալ Պահլաւունի տունն առաջին,
Եւ ընդ նմին գերապարգեալ Մամիկոնեանըն տուն վերջին՝
Թեւակոխեալ ի յատենան զմեծագ արքային ի գլուխ եգին։
Թագաւորեալ ընդդէմ չարին քաջագանգուրըն Վահանին.
Մատաղ մանկանց ծերատածեալ՝ ի հրապարակըս խաղային,
Իւրաքանչիւր առեալ քընար ըստ կանխատաց մարգարէին։

ՃԿԷ

ԴԱՐՁ ՎԱՀԱՆԱՅ ՓԱՌՕՔ Ի ՀԱՅՏ

(Դ. ԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, Գ. ե–թ)

Հրաժարեալ թագաւորին Վաղարշու զսպարապետն Հայոց՝ զէրն Մամիկոնէից զՎահան և զամենայն նախարարս Հայոց, արձակէր խաղաղութեամբ։ Եւ եկեալ զօրավարն Հայոց տէրն Մամիկոնէից Վահան յաշխարհս Հայոց, ամենայն ազխատապահ նախարարօքն Հայոց. որում ընդ առաջ ելանէր սուրբ այրն Ներսէս կաթուղիկոսն Հայոց Յոռոմ[1], պատուական նշանաւ խաչին և սուրբ ընծայարօք ձգնազգեաց նահատակին Գրիգորի, որովք և յուղարկեացն իսկ ի գուռն՝ զամենեսեան։ Եւ պատահեալ Սրբոյն Յոհաննու կաթուղիկոսին՝ զօրավարին Հայոց տեառն Մամիկոնէից Վահանայ, և այլ նախարարացն Հայոց որ ընդ նմա և ամենայն զօրուն բազմութեանն, ողջունէր զնոսա օրհ-

1. Որ է Մանդակունին։

նուիրեան համբուրիւ, և առէր ուրախալից սրտիւ. Ցնծասցէ անձն իմ ի Տէր, զի զգնեալ որդւոց եկեղեցւոյ իւրոյ ընկալաց զքիրան՝ որ վասն անուանն Քրիստոսի քրանեցան. հանգոյց զաչխատութիւնն, մաքրեաց զաղտ վինուցն, լուաց զոգիսն հաւատարմաց՝ ուխտապահութեան ջրովն, և զգեցոյց ամենեցուն հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան. և որպէս փեսայից եդ պսակս, և որպէս հարսն՝ արքայութեան իւրոյ զարդարեաց զձեզ զարդու: Շնորհեսցէ բարեխօսութեամբ Սրբոց իւրոց՝ զարդարել զձեզ և այնու զարդու՝ որով զարդարին առաքեալքն և մարգարէքն՝ յաւուրն Քրիստոսի. զորոյ զարդու պայծառութեան տեսչութիւն, զոր ակն ոչ եահս և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց:

Եւ տացեալ զայս ամենայն կաթուղիկոսին, և օրհնեալ զամենեսեան, նախ գային ի քաղաքն Վաղարշապատ, որ այժմ անուանի Նոր քաղաք: Եւ ըստ սովորութեան իւրում սպարապետն Հայոց Վահան՝ ուխտակից նախարարաքն Հայոց՝ որ ընդ նմա էին, կային անդ աւուրս, և կատարէին զուխտս և գնուէրս ի սուրբ եկեղեցւոյն Կաթուղիկէի, և ապա յիւրաքանչիւր տեղիս նահատակելոց Կուսանաց[1]. և հոգացեալ նախ զպէտս դարմանոյ ազքատացն՝ լցեալք կատարէին: Գային միաբան ամենայն նախարարքն Հայոց և այլ բազմութիւն, զամենայն օր մեծապէս ցնծութեամբ սաղմոսիւք և ճառիւք հոգեւոր վարդապետաց եկեղեցւոյ սրբոյ, ուրախ լինէին գուարճացեալք առ զօրավարին Հայոց տեառնն Մամիկոնէից Վահանայ, և առ միմեանս: Եւ կացեալ անդ աւուրս, ապա չուեալ զօրավարին Հայոց տեառն Մամիկոնէից Վահանայ՝ գայր մտանէր ամենայն Հայոց բազմութեամբ ի բուն ոստանն Հայոց՝ ի Դուին, օրհնելով և փառաւորելով զԱստուր Երրորդութեան զօրութիւն:...

1. Հռիփսիմեանց և Գայիանեանց վկայարաններուն:

Իսկ տէրն Մամիկոնէից Վահան զօրավարն Հայոց և մարզպան՝ ընկալեալ զհրովարտակն մարզպանութեան ի ձեռաց դեսպանին, թէպէտ և ըզխանասածութիւն[1] հայ մարդկան ճանաչելով՝ ծանրանայր ընդ իրն, այլ սակայն և ոչ ընդդիմանալ հրամանի թագաւորին իշխէր և անհնազանդ լինել: Առեալ զհրովարտակն՝ խնդրէր վաղվաղակի անդրուիմ, երթալ ի տունն Աստուծոյ: Եւ լուեալ զայս մարդկանն՝ որ ի քաղաքին, զրոհ տուեալ առ հասարակ ամենայն մարդոյ, նախարարաց և ազատաց, ոստանկաց և ռամկաց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, և հարսունք անգամ յառագաստաց մուտացեալ առ վայր մի՝ առ խնդին՝ զամօթ հարսնութեան, դիմեալ ընթանային յեկեղեցին: Եւ ոչ բաւեալ ընդունել զամենեսեան տանն Աստուծոյ, ընուին արտաքոյ սրահք եկեղեցւոյն և փողոց, և ամենայն տեղիք հրապարակացն չուրջանակի: Եւ էր այն օր անյայտ խնդութեան և անընդպատ ուրախութեան աստուածասէր բանասիրացն և ողջախոհուրդ մտաց լաւահայեցց, և սուգ թախանձալից և արտմութիւն անմխիթար՝ խօթամըտացն և խարդախաց:

Եւ սրբոյ կաթուղիկոսին Հայոց Յովհաննու՝ տեսեալ զանկարծելի աւետարանութիւնն՝ չնորհեալ յԱստուծոյ ի ժամանակս երանելւոյն, բերկրեալ ցնծալից սրտիւ՝ տայր սաղմոսել ի ժամուն. «Ցեկեղեցիս օրհնեցէք զԱստուած, և զՏէր յաղբերացն Իսրայէլի»: Եւ կարգացեալ հրամայէր զեղի ելիցն Իսրայէլի ի ծառայութենէ Փարաւոնի, ի թագաւորութենէն՝ զընթերցուածն՝ ուր թագաւորեցոյց Դաւիթ զորդին իւր Սողոմոն[2]: Եւ եկեալ ինքն ի տեղի լսողութեանն աստիճանին, և առեալ


1. Նախանձոտութիւն:

2. Հին Կտակարանի Գ թագաւորութեանց գրոց Ա գլուխն:

զխաղաղութեան ողջոյնն և ասէր[1]... «Եւ ես այսօր առ ցնծալ սրտիս և ուրախանալ մտացս՝ համբարձեալ զձեռս ի յերկինս՝ ընդ ծերոյն Դաւթայ աղաղակեմ առ Աստուած, զոր ինչ դրուատեաց գոհութեամբ նա՝ յաղագս որդւոյն իւրոյ Սողմոնի՝ մատուցանէր Աստուծոյ բարձրելոյ՝ բան. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, որ ետ ինձ ի զաւակէ իմմէ նստել յաթոռ իմ, և աչք իմ տեսանեն։ Զայնակցելով ընդ մարգարէին ասեմ զնոյն և ես. Օրհնեալ տէր Աստուած Իսրայէլի, որ ետ ինձ տեսանել զորդիս եկեղեցւոյս, որ ինձ հաւատացաւ, պատուով չքեղութեամբ պայծառացեալ ի Քրիստոսէ[2]։

1. Մասն է այս բանս երկար ճառին՝ զոր առանց նախ պատրաստելոյ լաւսեր է Մանդակունին, չատ տեղ գեղեցիկ յատմարութեամբ, տեղ տեղ այլ ոչ այնքան. գուցէ և գրչագրաց անզգուշութեամբ։ Սակայն վայելուչ կինէք 33ամեայ նահատակութեանց վարդանայ և վահանայ։

2. Յարմար համարիմ այս տեղ՝ ուր-գրեթէ վերջնայ Հայոց միաբուն պետութիւնն՝ յատատեւեալ Հայկազամբք և Աբշակունեօք, — կարգել ցուցակ մի՝ նախընթաց քանի մի ցօղուածոց մէջ յիշուած այդ ե-դարու մեր ազգին ամենէն ազնիւ ցեղից գործուներայ պայազատաց, և անոնց իրարու հետ խնամութիւնն կապերուս. որ այլևայլ կարեւոր դիտողութիւններ կրնայ ընծայել մեր նախնեաց ընտանեկան և քաղաքական կենաց վրայ։



ՃԿԸ

ՏԷՐ ԵՐԻՑԱԿ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(ՍՏԵՓ. ՕՐՊԵԼԵԱՆ, ԺԹ.)

Յամս կաւատայ արքայի Պարսից ի մարզպանութենէն Հայոց Վահանայ Մամիկոնէի, ի հայրապետութեան Տեառն Մուշեղի՝ կաթողիկոսի՝ վախճանի երանելի եպիսկոպոսն Սիւնեաց Մուշէ[1], կալեալ զաթոռն ամս երեսուն և վեց[2]: Եւ զի պատկառեալ էր իշխանն Սիւնի, և էր նորա կին մեծահասատ լի ամենայն բարեպաշտութեամբ՝ Սահակիա անուն, և ոչ ունէին տեսուչ հոգւոց, յայնժամ բազոք բարձեալ ամենայն ազատաց և տանուտերաց և աւագ քահանայից աշխարհին՝ առ մեծ բարեպաշտուհին Սահակիա, խնդրէին իւրեանց առաջնորդ:

Իսկ նորա պատրաստեալ դեսպանս ի մեծ և ի պատուական արանց և յընտիր քահանայից, բազում ընծայիւք և պիտանի պատարագօք ուղարկէ առ կաթողիկոսն Հայոց Մուշէ, և թախանձէ զնա գալ յաշխարհ իւր, և ընտրեալ արժանաւոր այր՝ կացուցանել յաթոռ մեծապատուութեան Սիւնեաց: Եւ նորա տիրաբար խոնարհեալ՝ գթալով ի հօտն իւր, ոչինչ վերջացաւ ի գալոյ. այլ պատրաստել հրամայեաց ըստ հայրապետական ճոխութեան ըզ-

1. Մեր սովորական ժամանակագրութեան չի յարմարիր այս. զի Կաւատ Համարուի թագաւորած յամս 488–96 կամ 99, իսկ Մուշէ կաթողիկոս՝ վերջին թուականէն այլ վերջ, իբր 509–16. ապա վեր հանեալ էր ասոր կաթողիկոսութեան ժամանակը. սակայն ամենք կաւատի յաջորդ Ջամասպը չեն հաշուեր, և ինչուան 531 թագաւորած Համարին զնա:

2. Երիցակ եպիսկոպոսին համար է այս բառն:

ճանապարհն. հեծեալ ի սպիտակ ջորի ոսկեզօծ թամբօք, եպիսկոպոսօք և բազմամբոխ պաշտօնէիւք, զառաջեաւ ունելով զոսկիափայլ նշանն աստուածընկալ արեգակնակերպ նշողիւք, ընթանային ըզճանապարհսն՝ սաղմոսիւք և քաղցրաձայն եղանակօք: Եւ այն ինչ հասանէին ի սահմանս Սիւնեաց, ի գաւառն Վայոց ձորոյ, տեսին երաչտացեալ ի բազում աւուրց և ոգորմ տեսակաւ թարչամեալ զամենայն բոյս: Այդ արտասուագոչ պատասանօք ձեռս ի վեր համբարձեալ հայրապետին՝ խնդրէր ի Տեառնէ այցելութիւն. որ և ի ժամուն ցօղեաց Տէր զցօղ քաղցրութեան, և զաւուրս երիս զցայգ և զգերեկ ոչ զադարեաց ի տեղալոյ. և ամենայն երկիրն զարմացեալ փառս ի վեր առաքէր մեծաւ գոհութեամբ:

Իսկ ի մերձենալն ի գահն իշխանաց ի Սիւնիս, աւետաւորքն առաջի ընթանային: Եւ ել տիկինն որդւով իւրով և ամենայն ազատագունդ հեծելովք և բազում ամբոխիւք, քահանայիւք և տանուտերօք՝ ընդ առաջ կաթողիկոսին. և մեծաւ խնդութեամբ պատահեալք՝ իջանէին ամենեքին ի վերայ ծնգաց և երկիր պագանէին. կաք հետեւակք և կաք հեծեալք ընթանային յաջմէ և յահեկէ. մեծաձայն ազաղակաւ երգէին զերգս օրհնութեան: Եւ այնպէս տարեալ իջուցանէին ի խորանն, և նստուցանէին ի վերայ ոսկեհէտ բազմականին՝ ի գահ իշխանացն, ի տեղին՝ որ կոչի կից վտակաց[1]: Եւ անդ հանգուցեալ զաւուրս երիս՝ հրամայէ հայրապետն՝ ժողովոյն, ընտրել իւրեանց առաջնորդ՝ զի ձեռնադրեսցէ. ապա ամենայն բազմութիւնն զազազակ բարձին ի մի բերան և ասեն. «Խնդրեմք մեք տեսուչ հոգւոց մերոց՝ զՀայր Երիցակ, և բաց ի նմանէ ոչ պիտի մեզ այլ ոք»: — Հրամայէ հայ-

1. Նշանակէ տեղ մի՝ ուր յիրաւ խառնուին երկու ջուրք կամ փոքր գետակք. հօս յատուկ անուն տեղոյ է այդպիսի խառնուրդ մի:

բապետան պատրաստել երիվարս, զի երթիցեն փութանակի ի վանս նորա. և ցիշխանն ասէ. «Դու գնա պատճառաւ որոյ, և պահեա զդրունս վանիցն, զի մի իմացեալ՝ ելեալ փախիցէ և ընդուզնայն լիցի աշխատութիւնս մեր»:

Իսկ տիկինն Սահակիա ընծայէ նմա զվրան արքունի՝ ամենայն կահիւքն և բազմականօքն, և հեծուցանէ զնա յոսկիապատ կառս ոսպիտակ ջորւոյ. ընդ որում և ամենայն բազմութիւնն գրոհ տուեալ գնացին զկնի: Եւ այն ինչ հասեալք ի դուռն Երիցոց վանացն, որ է ի Բաղք գաւառի՝ որ Փաշուհիք կոչի, և այժմ Բարկուշատ[1], կամեցաւ Երիցակ իջուցանել պարանօք ընդ պարիսպն և փախչել. և ոչ թոյլացուցին պահակքն: Եւ էր վանքն այն տեղի գեղեցիկ և պարմանատիպ ի վերայ բարձրաւանդակի միոջ, չինեալ եկեղեցի յանուն Սրբոյ Նախավկային, նորին Երիցակայ ձեռամբ, և պարսպեալ մեծամեծ քարամբք. և ի ներքին պարսպին խցկուածք, և միանձունք խուռվ քառասուն, մշտնջենաւորք, խարազնագեսաք, լուսք. որք իբր զկանթեղունս մշտավառս և անշէջս՝ յիւրաքանչիւր խըղի հանապազ տքնութեամբ վառեալք լինէին բոցով շնորհաց Հոգւոյն:

Իսկ Երիցակս այս անեալ էր նախ բազում ամաց ի Բաղք գաւառի, ի տեղի մի քարանձաւ, և ապա գնացեալ ի վանս Գիւտայ, և անդ անցուցեալ բազում աւուրս անասնելի ճգնութեամբ. և ապա օժանդակութեամբ և հրամանաւ Գիւտայ եկեալ ի տեղին յայն՝ երկոտասան կրօնաւորօք և բազում ընչիւք, զոր պարգեւեալ էր Հայրն Գիւտ, չինեաց զեկեղեցին որ կոչեցաւ Նոր Երուսաղէմ: Բայց ուրուբուքն՝ որ ի ժամանակին հալածեալ լինէին յանվայր տեղիս, և բնակեցուցեալ էր գնոսա Հօրն Գիւտ

1. Ամենեցաց 12 գաւառներուն երկու գլխաւորք, որք զերթիցեն ամենքն ալ երկու երեք անուն առեր են յեռին ժամանակներում. երկուքին մեկն կ'ըսուէր Միւռս Բաղք, և սա էր Փաշուհիք կոչուածն յետոյ:

տայ յայնմ վայրի, հակառակէին չինութեան երիցակայ. զոր լուեալ սուրբն Հօրն՝ եկն և համոզեաց գնոսա ի խաղաղութիւն. և սահմանեաց զպէտս նոցա ընծայել ի վանացն, ըստ չափոյ: Եւ ինքն որ ըստ օրէ գործակից լինէր չինուածոյն և զճաշ չինողացն յղէր, և այսպէս չինեալ տուն Աստուածոյ՝ յարդարէ զնա ի բնակութիւն հրեշտակապետն արանց:

Իսկ հայրապետան Մուշէ մտեալ ի վանս՝ ողջունէ զեկեղեցին, և բազմեալ՝ յղէ պատմագաւոր զորդի այրոյն ի Ջոխհանևուռ–վանաց, յԱբրագածոտանէ, որ էր սարկաւագապետ և դպիր հայրապետին, նմանապէս և իշխանքն և այլ ժողովք, և ոչ կարացին հաւանեցուցանել զնա: Այսպէս երթեալ կաթողիկոսին առ հայրն Երիցակ՝ ի պահ նորա, լի ցասմամբ, կնքեաց նշանաւ խաչին և ասէ. «Ընդէր այսպէս յամառեալ կաս. դեւ գոյ ի քեզ, սատանայ՝ Աստուած ի չարն և հալածեացէ: Ձայնեաւ ընդ բան սրբոյն՝ ել ծուխ թանձր իբր զփոթորիկ հողմոյ և վերացաւ ի տանէն. և ապա եկեալ երամք սպիտակ ազաւնեաց՝ իջին ի քիւս սրահին. և մին ի նոցանէ սլացեալ եկն էջ ի վերայ կաթողիկոսին, և վերացեալ ի նմանէ էջ ի վերայ Երիցակայ, և շրջեր ի վերայ խոշոր քուսիթային[1], և նուազ ձայնիւ խօսեր մարդկօրէն. «Արժան է, արժան է[2]»: Իսկ բազմութիւնն տեսեալ զայն՝ մեծապէս զոչէին միաբան, «Արժան է, արժան է»:

Զայն տեսեալ հօրն՝ ոչինչ իշխեաց ընդդիմանալ, այլ ի գուռն անկեալ առաջի կաթողիկոսին՝ արտասուաթոր կանխամբ ասէր. «Կամք տեառնդ լիցի, և ոչ իմս»: Այսպէս առեալ Տեառնն զձեռանէ, տանի յեկեղեցին. և հանեալ ի բեմն՝

1. Թանձր նիւթէ վեղար կամ գլխի ծածկոց:

2. Յայտնի է մեր եկեղեցւոյ ձեռնադրութեանց կարգը, յորում պաշտօնեայք և ժողովուրդն իսկ՝ Արժանի է կանչեն ձեռնադրուողին համաբ:

ածանէ զնա մեծապատիւ Սիւնեաց[1], և բերեալ նստուցանէ յաթոռն. և ինքն բազում մեծարանօք հրաժարեալ յամենեցունց՝ գնայ ի հայրապետական աթոռն՝ ի Դուին չահաստան: Իսկ երանելին երիցակ կալեալ զաթոռն ամ մի՝ փոխի ի վերինն երուսաղէմ:

ՃԿԹ

ՀԱԻԱՏԱԼՆ ՅԻԶՏԻԲՈՒԶՏԻ ՈՐ ԿՈՉԵՑԱԻ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒԻՐ

(Վ. ԿԱՄՑԱՐԱՆՈՒԹԻՒՆ)

Ընդ ժամանակս թագաւորութեան Խոսրովու որդւոյ Կաւատայ արքային Պարսից[2], առաւել զայրացեալ լինէր խռտումնութիւն որ առ Քրիստոս, և ոչ սակաւք նահատակեցան յաշխարհին Պարսից և ի գրան արքունի: Ցորում ժամանակի այր ումն Մահոչ՝[3] մոգ՝ ի նորին աշխարհէ, ի գաւառէն որ կոչի Բերշապուհ, ի գեղջէ որոյ անուն Քռնւարաստան. որոյ ծնողքն պաշտօնեայք էին կրակի, և ինքն ի մանկութենէ մոգութեամբ վարժեալ: Եւ էր զօրաւոր խրատու և գիտութեան հրապարակին և խորհրդոյ խմաստուն: Սա ի դիպուածոյ իմն եկն ի բանակ թագաւորին հասանէր, և պատահէր չարչարանաց սրբոյ վկային որումն, որում անուն էր Գրիգորիոս. հրաշացեալ ընդ համարձակութիւն նահատակին[4], և դիւրաւոյ բարւոք նախանձն նա-

1. Այն գարուն այդ մեծապատիւ կոչումն չկար ի Հայս:
2. Ա. Խոսրովն է, մականուանեալն Նուշիրվան:
3. Բնիկ անուն մոգին (Մէյլոշ) որ քրիստոնեացեալ կոչեցաւ ըստ Պարսից Եզեք-քուրդիս:
4. Սա իր ցեղին կամ երկրին անուամբ Ռաֆիկ կոչուի:

խանձեալ՝ ասէ ի սրտի իւրում. Տէր Աստուած քրիստոնէից, նայեաց յիս և ցոյց ինձ ճանապարհ՝ որով գնացից, և քայ ինձ գուսն ողորմութեան ընդ նահատակին քում. զի արժանի եղէց աքաջութեան քում, որ ակերդ ես երկնի և երկրի: Իսկ ի նմին գիշերի տեսիլ աքանչելի երեւէր նմա, որպէս թէ լինէր ինքն ի սուրբ եկեղեցւոջ. և այր ումն սպիտակազգեստ երեւեալ նմա ասէ. Երանելի ես գու, զի այսպիսի լուսաւոր եկեղեցւոյ եղեր արժանի, և հաւատասցես յայմ հետէ Աստուած արարիչն երկնի և երկրի և Յորդին համազօր և ի Հոգին համագործ, և ուսցիս զայդ յաւանդութենէ սրբոյ առաքելոցն: Եւ զարթուցեալ իմացաւ ըզտեսիլն, և հաւատայ բոլորով սրտիւ, և ասէ. Աստուածդն քրիստոնէից է ճշմարիտ Աստուած: Եւ յայնմհետէ զղջմամբ ունէր զմոգութիւն: Գայր անտի յաշխարհն Սիւնեաց, պարապելով յանկնդրուդիւն զրոց սրբոց. և լեալ անդ սակաւ ամիս՝ հասանէ ի Հայս. և եկեալ ՅԱյրարատ գաւառ՝ բնակէր յոստանին Հայոց՝ ի Դուին, յարեալ ի մոգս ուրումն Հայոց համակարի[1], որում անուն էր Խոսրով-Պերոզ, և արհամարհանօք զմոգութիւնն անցուցանէր:

Եւ լինէր ի ձմերային ժամանակի, ի մեհեկանին՝ ըստ Պարսկաց՝ ամանոյ սկիզբն[2], և ըստ սովորութեան իւրեանց զոհս ազտէզ[3] մատուցանէին հրոյն յապարանս համակարին. և երանելին Մահոչ կայր ընդ նոսա յառակի[4], պնդեալ զբերանն: Եւ բար-

1. Պարսից կոչմանէ զրուած հոգեղ կամ համբակալ:
2. Մահեկանեկ, ամանական և նոր ամիս նշանակէ:
3. Թուի իւզային նիւթեր կրակին վրայ լեցընէին, որ աւելի բորբոքի:
4. Ըստ կրօնից կրակապաշտ Պարսից՝ զոհելու ատեն բերանի կապ դնէին պաշտօնեայքն. և այնպէս կենալն ի պաշտամունն՝ թուի նշանակել յառակի կալն:

ձրայեալ բոյն ի ճարպոյն՝ հասանէր ի գարաւանդակ տանն[1] և բորբոքէր: Իսկ մոգուցն ժողովեալ զդոհելն՝ զհուրն փութացան չիջուցանել և ոչ կարացին, և արտաքս ընթացեալ պատմէին զիրսն: Եւ որ հազարապետան էր Հայոց՝ իբրեւ լուաւ զձայն ամբոխին, փութացեալ հասանէր ի դուռն եկեղեցւոյն, տեսիլէր զպաշտօնեայն առնուլ զսուրբ խաչն և բերել յայգարանն, զի թերեւս մեբժեսցի հուրն, որ առ նեղութեան ակամայ հաւատայր[2]: Եւ սպասաւորացն առեալ զնշանս սուրբ խաչին՝ արագ հասանէին ի տեղին. և հասեալ յանդիման սպառանիցն՝ սուրբ խաչն, և բոցն տարածեալ՝ չիջանէր առ հասարակ: Այս մեծ նշան եղեւ պատուական սուրբ խաչիւն յաչխարհիս Հայոց, ի խնդութիւն բարեպաշտից և յամօթ կռապաշտութեան: Եւ տեսեալ կնով համակարին՝ մեծ գոհութիւն առաքէ սպասաւորաց աքանչելագործ սուրբ խաչին:

Իսկ երանելին Մաժոլ իմացեալ զայսպիսի քաջանչելիս, զուռն[3] որովք հրամայէր՝ ջարդել ի բաց ընկենոյր, նոյնպէս և զբերանակապն. և մատուցեալ առնոյր զբուրվառն ի ձեռաց սարկաւագին և արկանէր խունկս առաջի սրբոյ խաչին, և յայտնէր զհաւատան զոր ունէր ի Քրիստոս, և յուզարկելով զսպասաւորս խաչին, ասէր. Խնդրեք յԱստուծոյ վասն իմ, զի և ես քրիստոնեայ եմ: Եւ տեսեալ մոգուցն՝ ասեն ցնա. Ընդէ՞ր գայդ իշխեցեր առնել: Ասէ երանելին. Ես ի բազում ժամանակաց հաւատայի քրիստոնէից, և խղճիւ մտէի. բայց արդ յայսոսիկս քարոզեմ զհաւատս որ ի Քրիստոս, և այլ ոչ եւս սպասաւորեցից հրոյն, զայդ ամենայն զարմանալիս տեսեալ:

1. Տանը կամ մեհենին ձեղունը, ներքին տանիքն:
2. Այս նեղութեան վասնզի առեն՝ հազարապետն Պարսից կամայ ակամայ հաւատայր՝ թէ քրիստոնէից խաչն կըընայ կրակը մարել:
3. Կաւեայ գլուխ գաւազան պաշտօնական:

Ի վաղիւ անդր երթեալ մոգուցն առաջի Հայոց իշխանին[1] որ կոչէր Նիխորական, և ամբաստանէին զերանելւոյն, և ածեալ զնա առաջի, ասէ պատասխանէր. Ա՛յ թշուառական, ընդէ՞ր զհայրենի մոգութիւնն թողուս, և յիմար և ուխտակոտոր լինիս: Պատասխանի ետ երանելին և ասէ. Ճշմարիտ ասեմ, ով դատաւոր՝ վասն իմ, զի քսան և հինգ ամ ունիմ՝ որով ընդ վայր ապանդաւորեցայ. իսկ այժմ ծանուցեալ զճշմարիտն Աստուած, ի հայրենի բազմաստուածութենէն հրաժարեցի. վասն այսորիկ ոչ այսուհետեւ կենցաղոյս պատրանք յայտ հաւատոց անձատեսցեն զիս. քանզի հանդերձեալ եմ տանել հասելոց տանջանաց: Եւ զայրացեալ իշխանն հրամայեաց հարկանել զերանելին երկոտասան կրկին, և կարեալ զմօրուսն և զհերսն, և գրեալ զհարցաւմն, կապէր զոտսն և զձեռս, և տայր ի բանտ: Եւ գաւառէր սուրբն իւր վշտակից զամն ի բանտին, որում անուն էր Ներսես, որ ի բազում ժամանակաց էր կապեալ ի բանտին վասն Աստուծոյ: Եւ ուսանէր ի նմանէ երանելին զսուրբ հաւատս և զսաղմոս քսան. և այսպէս անդադար պաշտէր զԱստուած և աղօթէր:

ՃՀ

ԿԻՆ ՎԱՐԴԱՑ ԱՐԾՐՈՒՆԻՈՑ Ի Ս. ԿԱՐԱՊԵՏ

(ՅՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ)

Ի ժամանակս իշխանութեան Մամիկոնէից Մուշեղայ, և Թոդիկայ վանականութեան, հրաշալի իմն գործեցան գործք ի վանս Գլակայ ի դուռն Ս. Կա-

1. Պարսից Իշռնէն գրուած մարզպան Հայոց:

բապետին[1]: Իշխանն Աբծրունեաց, որում անունն կոչիւր Վարդ պատրիկ, սա չինեաց բազում եկեղեցիս և վանորայս[2]. և ունէր կին բարեպաշտօն, Մարիամ անուն նորա: Սա առեալ զկին իւր էած առ հայրն իւր Մուշեղ, զի ինքն զէմ եղեալ էր գնալ ի Կեսարիա: Եւ թողեալ զկին իւր անդ, և յանձն արարեալ զգաւառն՝ այլոց ազատաց, և ինքն գնաց: Իսկ կինն նորա յոյժ փափաքեալ էր Սրբոցն՝ որ ի Գլակայ վանեն, և ուխտի Կարապետին: Յաւուր միում առեալ զփոքրիկ մանկիկն իւր անդրանիկն՝ որ էր ի տեառն[3], գայ բազում յօժարութեամբ ի դուռն Կարապետին: Աշաշէր բազում անգամ զկրօնաւորսն, զի թոյլ տացեն նմա մտանել յեկեղեցին. իսկ սպասաւորքն արգելուին զնա, բայց զփոքրիկ մանկիկին Յովհաննես առեալ ի գրկաց նորա, բերեալ առաջի սեղանոյն երկրպագեցուցին Տեառն, և բերեալ եառն ցմայրն իւր: Իսկ նորա առեալ՝ սկսաւ արտասուել, և ողբալով ասէ. Վա՛յ ինձ մեղաւորիս, որ զրկեալ եմ ի բարեաց. ողբացէք զիս ամենայն կանայք. տեղի տուք արտասուաց իմոց՝ ամենայն ձայնարկուք. ծածկեսցեն զիս լերինք, և ողորմեսցին ինձ բլուրք. գազանք եղկեսցեն զիս, և թռչնոց ազգք խիթասցեն ընդ իս. հրեշտակք սպասաւեսցեն զանձն իմ, և դեւք բռնեալ յարձակեսցան ի վերայ իմ: Ողորմեցարուք ինձ ո՛վ սուրբ սպասաւորք Կարապետիդ, և տուք տանել զիս ի տաճար անդր: Եւ գարձեալ ցմանուկն ասէր. Ո՛վ որդեակ, ընդէր բաժանեցար ի գրկաց իմոց. զի՞րդ ոչ ողորմեցար մօրս քո. ո՞չ ես ծնայ զքեզ, և ո՞չ ես անուցի զքեզ. և զիա՞րդ թողեր զիս միայն:

1. Տարօնոյ, կամ ըստ նորոց՝ Մշոյ անուանի Ս. Յովհ. Կարապետի վանքն, որ առաջին վանահայր՝ Չենովքայ մականուամբն՝ Գլակայ վանք կոչուէր:
2. Ըստ աւանդութեան՝ 1000 եկեղեցի չիներ է:
3. Թեև կաթնկեր զըրկի երախայ տղայ:

Եւ զայս ասացեալ կնոջն, հանեալ բազում անուշահոտ խունկ՝ տայր սպասաւորացն, և գանձս բազումս՝ ի սպաս սուրբ եկեղեցւոյն: Եւ պատգամս յղէր առ հայրն Թոդիկ, զի առեալ զիրան՝ և գնա թողցէ ի ներս: Եւ նա ասէ. Ոչ գայդ հրամանն առեալ եմք յառաջնոցն, և ոչ իշխեմք առնել. արդ, եթէ վանն հաւատաց ես, ընդունելի է քեզ այդ աշխատանքդ. արդ, մի՛ վանն պատասխանուսցն ձանձրանար ի մէնջ, այլ երթ ի խաղաղութիւն:

Իսկ նա ասէ. Ոչ այդպէս, արդ եթէ վանն իշխանութեան է, ես ոչ երկնչիմ ի ձէնջ. իսկ եթէ վանն թշնամութեան Կարապետին ընդ մեզ, և ո՛չ ինքն ի կնոջէ ծնաւ, և Տէրն ինքն ի կնոջէ է ծնեալ. և ո՛չ առաքեալք և մարգարէքն մայր ունէին: Արդ՝ ես մատնեմ, ով Տէր, և զմայրն քո բարեխօս ունիմ ինձ. մի՛ առներ յիս զպատուն բարեկութեան քո, զի մի՛ եղէց նշաւակ աչխարհի. զի եթէ դու զկնոջ կաթն արբեր, գոնեա և դիս տաճարիս արժանի արա: Եւ զայս ասացեալ՝ եմուտ ի տաճարն, և համբուրեաց զդրմ տաճարին և գնաց առաջի սրբոյ սեղանոյն, և ծունր կրկնեալ՝ ասէ. Տես, Տէր, զբեկեալ սիրտ իմ, և ողորմութիւն արա վերաւորելոյս. զի դու ոչ յիշեցեր յողորմութեան զբարկութիւն քո. արդ, օրհնեալ եղիցի անուն քո յաւիտեան:

Եւ իբրեւ ել անտի տիկինն, խաւսային, ոխացան և տրամեցան յոյժ ընդ իրն՝ սպասաւորք եկեղեցւոյն, և ոչ պատրաստեցին կնոջն կերակուր: Իսկ նորա հրամայեալ սպասաւորաց իւրոց՝ ճաշ առնել կրօնաւորացն, և զամենեսեան ի սեղանն կոչել. և էին արք երեքհարիւր ինսունն և հինգ: Եւ յօրժամ ճաշեցին, ասէ տիկինն. Ո՛վ սրբասէրք և փոյթք յաստուածային մշակութեան, ուրախ լերուք ընդ իս ի Տէր, զի ներեաց ինձ, և կատարեաց զփափաքումն սրտի իմոյ. արդ, օրհնեցէք զիս և սփոփեցէք ի խաղաղութիւն: Եւ յառաջ եղեալ գնացին:

Իսկ եկեղեցպանն և մի ոմն ի կրօնաւորացն գնացեալ առաջի սրբոյ սեղանոյն, ասեն. Ո՛վ Տէր, և դու ներե՛ս կնոջն՝ որ զայն գործեաց. և այլ կա-նանց զնոյն խրատ[1] համարձակեալ հատանեն. արդ, արա զնչան քո զօրութեանդ, զի վկայ լինիցի ազ-գաց, և վկայ և օրէն բազմաց: Եւ իրրեւ յուզար-կէին զկինն՝ ելանել ընդ փոքր դառ ի վերն՝ ի հա-րաւոյ կուսէ վանացն, որ ի գլուխ Նարդակայ, և հայել ի փոքր ամրոցն Մեծամօր՝ ներքոյ Նարգա-կայ, զոր Աղդակն կոչեն, եառս կլինն ի հիւսիսա-կան կողմանէն տեսութիւն զարմանալի. և ընկեց զմանուկն ի գայեակն, և ասէ. Տեառնեմ այր մի գիտաւոր ընդ ամպս որոտացեալ, և ելեալ յեկե-ղեցւոյն զայ առ իս[2]. տեսանեմ առ նա սուր սրեալ և թաքուցեալ և յարեան ներկեալ: Եւ ընդ բանն եհար զնա, և անդէն ոտատակեցաւ: Զոր տեսեալ ծառայիցն, ընթացեալ ազդ առնէին ազատաւորացն եկեղեցպանին, (որ) արտաքս եալ յայժ բազում ժամս արտասուեաց[3]: Ապա առեալ զպատառօրսն տարաւ ի տեղին, և կազմեալ գերեզման՝ եդին ի նոյն տեղ-ւոջն, և կանգնեաց խաչ քարեայ, և գրեաց ի նմա այսպէս.

Որ ոք յանդգնեսցի մարտնչել ընդ եկեղեցի Աստուածոյ, այս Սուրբ եղիցի ընդ նմա[4]:

Եւ հատատեալ կայ այս գրով ի նոյն տեղւոջն:

1. Ագռելաւած ճամբան՝ յանդգնելով կարեն կոխեն:

2. Երկնի՞ց թէ վանքին մոտ տմպերէն պատաղով իջեր է այդ պատկինեալ նախանձաւոր և վրէժխնդիր գիտաւորն. մանաւանդ եթէ պիտենք ուրիշ Օրինակի մի աւելցընելով ըսածը. «յեկեղեցւոյն՝ սեաւոտր ճանապարհէքէ գայ առ իս. և աւետ զէն սրեալ և թաքուցեալ»:

3. Լաւ եւս ուրիշ Օր. Թագկայ համար կ'ըսէ պատմիչն և նեղանալ եկեղեցպանին:

4. Ուրիշ Օրինակ մի ընդարձակելով գրած է. «Որ ոք մարտնչի ընդ եկեղեցւոյ Սրբոյ Կարապետին՝ անզգոյ մնալով, այս Սուրբ եղիցի նորա ոճոգին և մարմ-նոյն. զի ոչ կարէ իշխանութիւն մարտնչել ընդ Աս-

ՃՀԱ.

ՊԱՏԵՐԱԶՄ ՍՄԲԱՏԱՑ ՄԱՄԻԿՈՆԵՆԻ ԸՆԴ ՊԱՐՍԻՑ ԵՒ ԵՐԳ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

(ՅՈՎՀ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ)

Եկն եհաս Վախտանգն[1] ի գաչտ անդր, և առ վաղիւն պատրաստեցան ի պատերազմ: Իսկ Սմբատ կարեաց ի գիշերին երկու հազար այր ի հե-ծելոց, և անցոյց ի տեղի Թաքստեան զպարսկէն, յետուստ կողմանէ, և ի բլերն յայս կողմանէ երեք հազար. և յերկու կողմանէն ոազմ գաղտ կար-գեաց. և ինքն զութ հազար արձն բաժանեաց ի վեց ոազմն: Եւ ընդ առաւօտն կազմեցան. զի մի զգաղտ դարանն գիտասցեն, փութապէս ի գիմի հարեալ՝ չարժեաց զնոսա ի վերայ իւր:

Իրրեւ ճակատեցան ի պատերազմն՝ ընդ իրեարս, զառաջինն յաղթեցին զՍմբատ. իսկ նորա ի բլուրն ելեալ, ասէր. Ո՞ւր էք քաջք, յառաջ մատիք: Եւ յամենայն կողմանց ի վերայ յարձակեցան, և ի մէջ առին զզօրան Պարսից. և խմբեցաւ պատերազմն ընդ իրեարս, մինչ զի ոչ գոյր հնար ճանաչել զմի-մեանս, բայց միայն ի ձայն փողոցն և ի տեսս դրօշացն: Իրրեւ ի գիմի հարան Վախտանգ և Սմբատ, ասէ Վախտանգ. Կաց հարմարգի. թէ-պէտ և զրադումս չընկեցեր, սակայն այսօր չպըրծ-նուս ի ձեռաց քոչ արանցս, որ գէշ գէշ պատառեն

տուռծոյ. ապա թէ մարտնչիցի՝ կորիցէ որպէս այս կիւնս»: – Խոհեմութեամբ կ'ուսուցանէ ուրիշ Օր. մի. «Սակայն վասն կնոջն ասէր (Հայրն), թէ մարմինն » միայն պատժեցաւ վասն այլոց երկիւղի: Եւ թա-» գուցած յոյսն կոչեցաւ անուն տեղւոյն այն»:

1. Զօրավարն Պարսից՝ Հայոց վրայ եկած:

զձեզ սուսերք մեր: Եւ Սմբատ ընդ մէջ անցեալ, եհատ և կտրեաց զառնապանս բրթէից նորա, և կարեվէր խոցոտեաց, և մերձ տարաւ յընկենուլ զվախտանգ: Եւ նորա ձգեալ զտէգն, եհար ըզկուրծս նորա. և ցըցեալ, ի ներքս ոչ կարաց անցուցանել: Եւ Սմբատ ձայն արձակեալ, ասէր. Սո՛ւրբ Կարապետ, յայտնեա և այսօր զքեզ՝ ծառայից քոց. զի վասն քո մեռանիմք ի վերայ հաւատացելոցս Քրիստոսի: Եւ բախեալ սիգաւ ի թիկունս նորա, և անց ընդ զրահն ի ներքս, և եհան ընդ սիրտ նորա. և հանեալ զսուրն՝ կտրեաց զգլուխ նորա, և ոչ կարաց ունել, զի զրազում մարդկան վագեաց զգլուխն վախտանգայ:

Իսկ մի ումն ի ծառայիցն նորա էառ զգլուխն նորա, և փախեաւ. և հասեալ Սմբատայ՝ եհար մրճակիւ ի վերայ գագաթանն, և գոգեաց զաղաւարան, և գլխոյն ոսկրն փոսեալ՝ տեղի տայր սաղաւարան մրճին Սմբատայ, և հազիւ կարաց հանել: Եւ նորա հանեալ ընկէց զգլուխն, և ինքն մեռաւ: Եւ միւս այլ ծառայի առեալ զգլուխն փախեաւ. և Սմբատ զհետ մտեալ, ասէ. Պարսիկք, մի՛ անմտանայք. զի մինչեւ յայս անկաւ վախտանգ՝ որ սրատաւ, ծառայքդ զգլուխդ առեալ փախչիք. ապա գիտասջիք թէ ձեզ այդպէս պարտ է լինել: Եւ ձգեալ ծառային զգլուխն ի կուրծսն Սմբատայ, և ասէ. Տա՛ր խորովեա և կեր զդա. վա՛յ ձեզ, որ այլ վաղ ոչ ապանիք: Եւ Սմբատայ առեալ զգլուխն, և զհետ մտեալ ծառային, ասէ. Ա՛յ սիրատեաց պարսիկ, զգլուխդ քո ընդէ՞ր ոչ փոխանակեցեր տեառն քո. արդ, որովհետեւ սիրատեաց էք, ես բառնամ զգլուխ քո ի քէն: Եւ եհար գնա սիգաւն ի սիրտն, և անցոյց զտէգն յայնկոյս. և ընկեցեալ յերիվարէն, կտրեաց ըզգլուխ նորա. և դարձաւ մեծաւ յաղթութեամբ ի բլուրն:..

(Յետ յաղթութեանն) Հայք եկեալ իջեւանեցան ի վանսց գիւղն. ընդ առաջ եղեն նոցա պարա-

ւորքն, և երգս առեալ բազում ինչ իրաց՝ գովէին: Որ և յետոյ ի հառել գիսականցն և յորդնել, չեր[1] հանեալ՝ ասէին. «Կերան գազանք զմարմինս գիսականցն վաթապայ[2], և գիրացան. Կուզ կերեալ՝ ուռաւ որպէս զԱրջ. և Աղուէս՝ հպարտ եղեւ քան զԱռիւծ: Գայլ՝ քանզի չատակեր էր, պայթեաց. և Արջ՝ քանզի զոր ուտէն՝ չինայ առ ինքն, ի սովոյ մեռաւ: Անգեղք, քանզի ագահք էին, նոստան և այլ ոչ կարացին վերանալ. Մկունք, քանզի չատ կրեցին ի ծական, ոչն մաշեցան[3]»:

Զայս ամենայն ասացին, և ի դէպ էր վասն իրացն. որ և կոչեցաւ անուն գեղջն Շիրակաւիճ[4]:

ՃՀԲ

ՀՆԱՐՔ
ԳԱՅԼ ՎԱՀԱՆԱՑ Ի ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՊԱՐՍԻՑ

(ՅՈՎՀ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ)

Վահանայ լցեալ իմաստութեամբ, առեալ երկեբիւր կաշեայ ասպար, և արկ զհարիւր ջորեօք ամեհեօք, երկաթ մի յայս կոյս ասպարին, և երկաթ մի յայն. և գնաց մերձ ի բանակն Հոնին որ փոխանակ էր Տիգրանայ[5], և ունէր ընդ ձեռամբ իւր

1. Թամկական երգ. յորմէ և արբազան Շարակաւի:
2. Կամ վախտանգն է, կամ ուրիշ զօրավար մի.
3. Պատերազմողներըդ պէսպէս վայրի կենդանեաց նմանցընեն:
4. Իբր թէ այն տեղ շատ շեր երգուելուն համար՝ այնպէս կոչուի: — Յովհ. Մամիկոնենի պատմածնեբուն առուգութիւնը շատ զգուշութեամբ ընդունելու է, ինչպէս Պատմչաց կարգին այլ յիշեցինք:
5. Պարսից զօրապետն, որոյ փոխան անուանց առաջնորդ եղեր է Հոնաց ազգին մեկն:

բոլ ուխտ հազար այր, և բանակեալ էր մերձ ի Քարագուռին՝ որ հայի հանդէպ Տարօնոյ լերինն, և էր սա զատակաց յայլոց բանակացն: Արդ, առեալ Վահանայ զհարիւր ամեհի ջորեանն, և տաբաւ զնոսա յեղր բանակին, և ի տասն ջորիսն այր մի՝ որ զհետ երթայր: Եւ իբրեւ խթեցին ըզջորիան սրով՝ և արկին ի բանակն, և ինքեանք զհետ մտեալ՝ զփող պատերազմին հնչեցուցին, և առ ձեռն սկսան կոտորել. և կանչեալ՝ զարհուրեցան ժպըրհնցան[1] և ապմկեցան յոյժ: Քանզի և ջորիքն ընդ ձայն ասպարացն և ընդ զօրացն ապմկել, և ընդ փողոցն բարախէին՝[2] խրտուցեալ, յամենայն կողմանց լոկ արչաւէին ի բանակն: Եւ զօրքն կարծէին եթէ հեծեալ է, և ձայն առաջորացն ի կոտորելոցն է, իւրաքանչիւր ոք լոկ վայ ճչէին. ոչ պիտելով զհետս անձանց, քանզի Տէր պատերազմէր ընդ նոսա:

Արդ, քանզի այլ զօրքն ոչ կարէին անցանել, ալի էր մուխն, և մեր զօրքն լոկ սատակելով նեղէին, և զՔարագուռին բնաւ չկարացին յիշել· զի յիմարեցոյց զնոսա Տէր, ապա թողեալ զկարասին՝ դէմ փախստի ի Քարագուռին արարին. և սկսան ի վայր հասել ընդ ահաւոր վիմացն բարձրութիւն: Եւ ոչ ոք կարաց գիտել զերծն, մինչեւ պակասեցաւ ճիչ ազազակին, և ապա գիտացին զօրքն Հայոց թէ ընկղմեցան Պարսիկքն: Դարձան ինքեանք ի բանակեաղ, և զկարասին և զգանձն ժողովեցին և զերիվարսն և զուղտսն, և արձակեցին ի գաւառն Պաղունից: Եւ ընդ ձի և ընդ ջորի և ընդ ուղտ և ընդ էշ՝ գաւաւ ուխտ և տասն հազար, որ ծածկէր զերեսս գաւառին: Արդ, իբրեւ առաւօտ եղեւ՝ սկսան խնդիր առնել Տիգրանայ և որդւոյ նորա և ոչ գտին:

1. Ժպրհիլ՝ սովորաբար յանդգնիլ նշանակէ. սակայն Ծ. աւելի յարմար գրէ՝ ժխորեցան, իբր չփոթիլ, իրար անցնիլ:

2. Յատուկ ձայն փողոց, և ոչ բախել՝ ըստ այլ ՕՕ: Ուրիշ տեղ չեմք հանդիպած այս բառիս:

ՃՀԳ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄՕՐԿԱՑ Ի ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

(ԿԻՐԱԿՈՍ)

Զսա ասեն ի Հայոց յՕշական գեղջէ[1], և այլք թէ ի Տարօնոյ. ազգատոհմեան ազգաւ երթեալ ի Կոստանդինուպօլիս. և անդ ի դիպուածէ իմեք բարեբախտիկ եղեալ՝ թագաւորեաց, այսպիսի պատճառաւ: Եւ եղեւ մեռանել Տիբերի կայսեր. և մեծամեծք ընդ միմեանս հակառակեալք՝ ոչ հնազանդելով միմեանց, և էր մարտ անհնարին ի մէջ նոցա, որպէս թէ ո՛ յաղթեսցէ և թագաւորեսցէ: Եւ պատրիարքն ի մէջ անցեալ համոզեաց զնոսա արկանել վիճակս, և ում հասանիցէ՝ նմա ունել զթագաւորութիւնն, և այլոցն հնազանդել, և զայս երդմամբ ամենեցուն մուրհակաւ. և էր վիճակն այսպիսի: Ընդ լուսանալն՝ բանալ զաւազ դուռն քաղաքին, և զայր որ պատահեսցի անդ, թէպէտ և կարի յանարդացն իցէ՝ ածել ի պալատն արքունի, և իշխանացն նստել ի միասին, և յոյր ի գլուխն դիցէ զթագն՝ նմա լինել թագաւոր: Հաւանեցան ամենեքին և դադարեցան ի խռովու-

1. Աւանդութիւն քան առաջ պատմութիւն. կըրնայ հաւանական ըլլալ՝ որ իր նախնիքն որ Հռովմայեցի էին, զարերով ի կապադովկիա բնակելով՝ (ուր և ծնած է Մօրիկ յԱբարեսս քաղաքի, յամի 539), Հայոց հետ խնամեցած ըլլան: Մօրիկ 582 թուականէն Քրիստոսի մինչեւ ի 620, թագաւորած է փառաւոք. բայց դժբաղդ վերջ ունեցաւ, ծերութեան ատեն՝ դրեթէ բոլոր ընտանեօքն չարգուելով ի գազանաբարոյ փոկասայ, որ անոր գահն այլ կեանքն այլ յափըշտակեց· ինքն այլ յետոյ չարաչար սպանուեցաւ:

թենէ: Եւ իբրեւ եհաս ժամն ժամադրեալ, բա-
ցեալ զքաղաքին դուռն, և տեսեալ զՄուրիկ առ
դրան, ցօղուն ինչ առ ի վաճառել և ընդել զպէտս
իւր, և յափշտակեալ զնա զօրականաց՝ տարան ի
բաղանիս, և լուացեալ զնա զգեցուցին նմա հան-
դերձս ազնիւս. և տարան զնա յարքունիսն: Եւ
իբրեւ ասացին նմա վասն որոյ կոչեցաւ, և նա
պահանջեաց ի նոցանէ գիրս և երդմունս. զի մի՛
սպանցեն զնա մնացեալքն ի թագէն. և նոքա եր-
դուան նմա ասասին, զի յանհոդ լիցի յայնմանէ:
Բազմեալ էին ամենեքեան անառի յուսով, և ի-
րաքանչիւր անձին իւրում ասէր՝ թէ լիցի. կայր
աթոռն և թագ ի վերայ նորա, և կօշիկքն հուսկ
առ նմին: Անց Մօրիկն ի մէջ, և առ զթագն ի
ձեռն իւր, և սկսաւ չրջել ընդ բազմեալսն. իբրեւ
եկն առաջինն ուրախացաւ նա, բայց տրտմեցաւ
երկրորդն. և իբրեւ եթող զնա՝ կալաւ տրտմութիւն
զնա, և զընկերս նորա ուրախութիւն. և այսպէս
ըստ կարգի երկիցս և երիցս չրջեցաւ նա, տրտմե-
ցոյց զնոսա և ուրախացոյց: Անց նստաւ նա ի վե-
րայ աթոռոյն և եդ զթագն ի գլուխ իւր. և տե-
սեալ ամենեցուն՝ սխրացան: Բայց զի երդուեալ
էին նմա՝ թէ յայր և դիցես գլուխն մեք հնազան-
դիմք նմա, թոյլ եառն նմա: Մաուցեալ պա-
տրիարքն ազոյց զկօշիկս յոտս նորա, և երկիր ե-
պագ, նոյնպէս և ամենայն մեծամեծքն երկիր պա-
գին նմա, և ասեն. կեցցէ արքայ Մօրիկ:

Ասեն զամանէ, թէ առաքեաց առ հայրն իւր թո-
ղուլ զպանդխտութիւնն և դալ վայելել զփառս նո-
րա. և թէ ոչ՝ խրատ առաքել նմա, որով կարասցէ
վարել զթագաւորութիւնն: Եւ երթեալ սպասաւո-
րացն գտին զնա զի գարմանէր զպարտէզն. և ա-
սացին նմա զհրամանն թագաւորին: Նա պատաս-
խանի ետ և ասէ. Թագաւորի հայր ես ոչ վայելեմ:
Եւ ինքն սկսաւ զմեծամեծ կաղամբսն՝ որ ի պար-
տիզի անդ՝ արմատախիլ առնել, կարել զգլուխս և
ծածկել ընդ հողով, և զմանուսն փայփայել և յօ-

րինել: Եւ արանցն տեսեալ զայն՝ համարեցան զնա
բախած. Թողեալ զնա ի բաց գնացին, իսկ զոր
ինչ արար նա՝ զայն ոչ գիտացին: Եւ գնացեալ
առ թագաւորն՝ պատմեցին զամենայն. և զյիմա-
րութիւն զոր գործեաց ի պարտիզին: Իսկ Մօրիկ
իբրեւ լուաւ՝ ծիծաղեցաւ, և ոչ ինչ յայտնեաց. և
կալեալ զմեծամեծս՝ զոր կարծէր թէ սատան են
թագաւորութեան իւրոյ, երթարձ զամենեսեան, զի
մի գաւ ինչ լինիցի. և զիթքունս ած ի տեղիս նոցա
կարգեաց. և կոչեցեալ զարսն գայնոսիկ զոր առա-
քեաց առ հայրն, ասէ ցնոսա. Այս է խրատ հօրս
իմոյ զոր արար ի պարտիզին, և գուք ոչ իմանայիք:

Կէաք ասեն զնա յԱրիսաւուս գեղջէ Կապագով-
կեցւոց. զոր յետոյ քաղաք չինեաց զօրավար Տի-
բերի: Բայց Մօրիկ վասն խստութեան բարուց իւ-
րոց ազգաւ և արդեւովք ազդմատես մնաւուամբ
կործնչի յիւրոց զօրաց. քանզի յարեան ի վերայ
նորա զօրքն իւր՝ որոց առաջնորդէր փոկաս, որ
թարգմանի հաւր[1], և սպան զնա, և ինքն թագա-
ւորեաց ընդ նորա:

ՃՀԴ

ՄՈՒՇԵՂ, ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԵՒ ԹՈՍՐՈՎ ԱՐՔԱՅ ՊԱՐՍԻՑ[2]

(ՍԵԲԷՈՍ)

Հրամայէ (Թոսրով) գրել յետակար, և արձակէ
զմի ի սուրհանդակացն առ Մուշեղ. «Փութով եկ,
ասէ, գործ հասեալ է կարի կարեւորագոյն»: Եւ

1. Թուի ի լատին Fuocus բառէն թարգմանել:
2. Թոսրով Բ Փերվիզ (Պատուական) անուանեալ. իր թագաւորութեան առաջին տարիներուն:

հրաման ետ փուշտիպանացն[1] իւրոց և ասէ. « Պատրաստ լերուք, զի յորժամ եկեսցէ նա, և ես ձեռամբ նշանակեցից ձեզ, յանկարծակի զձեռս նորա յետս կալարուք և կապեցէք զնա. բայց պատրաստ լիջիք, զի այր քաջ է նա, և մի կամ թէ ինքն մեռանի, կամ զիս սպանանէ. և թէ իսկ ինքն մեռանի՝ ես պատասխանի տայ կայսեր վասն նորա »: Այնպէս և բարապանացն[2] պատուէր ետ, ասէ. Զգոյշ կացէք, զի յորժամ եկեսցէ Մուշեղ ի դուռն խորանին իմոյ՝ ի բաց լուծէք ի մէջոյ նորա զկամարն և զսուսերն, ասելով, եթէ, ոչ է օրէն զինու հանդերձ մտանել յանդիման թագաւորին:

Աւրդ, մինչդեռ առնէր նա համար հանդիսի ի մէջ զօրաց իւրոց՝ տեսանել զթիւ կենդանեացն և մեռելոց՝ որք անկան ի պատերազմին, եկն եկաց առաջի նորա սուրհանդակն և ասաց նմա՝ ողջոյն. և մատոյց նմա զթուղթն: Իսկ Մուշեղայ առեալ զթուղթն՝ ասէ ցնա, եթէ, Ողջո՞յն իցէ և խաղաղութիւն. պատասխանի ետ սուրհանդակն և ասէ. « Ողջոյն է և խաղաղութիւն, և զայլգդ ինչ ես ոչ գիտեմ, բայց միայն զի հրամայեցաւ ինձ փութանակի կոչել զքեզ »: Եւ անդէն վազվազակի պատրաստեցաւ նա՝ որպէս ի պատերազմ. քանզի ակն ի միտս իւր, եթէ գուցէ հասեալ ինչ իցէ գործ պատերազմի, կամ չնորհիցէ ինչ պարգեւս՝ փոխանակ վաստակոյն: Եւ առնու ընդ իւր արս երկու հազար ի սպառազինաց՝ յազատաց և յանազատաց, զորս գիտէր արժանիս պատուոյ, և վրատահ էր հնձելութեամբ:

Էր գրեալ վասն նորա և առ պատրիկն Յովհան՝[3]

1. پشتبان փիշտիպան ըստ Պարսից, թիկնապահ կամ օգնական զօրավարի: Մեր հին բառգիրք կ'ըսեն « Մարմնապահ կանայք Պարսից »:

2. Դռնապան:

3. Յունաց կոչմանէ իրենց վիճակած Հայաստանի մասին գրուած կոչնակալ Հայոց:

զի արձակեսցէ զնա. և նորա դարձեալ հրամանս ուսեալ նմա երթալ այնպէս պատրաստութեամբ և հրամայեաց ամենեցուն նոցա արկանել զանձամբ իւրաքանչիւր զսպառազինութիւն իւր. վառեցան և գնացին:

Եւ եղեւ իրրեւ մտին ի մէջ բանակին, և մերձ եղեն մօտ ի մաշկապերճանն արքունի[1]. և հրաման հասանէր ընդդէմ, մի երթալ այնքան բազմութեամբ, այլ բացագոյն նահատացանել զնոսա, և նմա սակաւ արամբք յանդիման լինել արքային:

Եւ նորա ոչ առեալ յանձին առնել այնպէս, այլ զնաց զօրութեամբ մօտ ի դուռն խորանին արքունի. և զօրն Պարսից կացին չուրջ զխորանատն սպառազինեալք. և իջեալ յերիվարէն՝ գնաց ի դուռն խորանին՝ յիւրն արամբք: Եւ զօրն կային այնպէս զինեալ իւրաքանչիւր երիվարօք: Զարհուրեցաւ արքայն և ամենայն զօրք նորա. և սկսան ծածկել զնենգութիւնն. և եղեւ իրրեւ եհաս ի դուռն խորանին, մատեան բարապանք զրանն և ասեն. « Լո՛յծ զկամարդ և զսուսերդ՝ ի միջոյ քումմէ, և մերկեա՛ ի քէն զսպառազինութիւն քո. զի ոչ է օրէն մտանել առաջի թագաւորին: Անկաւ կասկած ի սիրտս նորա, սկսաւ պատրաստել և կազմել զինքն յ'արձակումն. պատասխանի ետ բարապանացն և ասէ. « Ի մանկութենէ իմմէ անզգաստ եղեալ եմ թագաւորաց, ի նախնեացն իմոց և հաւուց, և այժմ հասեալ կամ ի դուռն արքունի, ի տեղի հանդիսի. ես զսպառազինութիւնն իմ յանձնէ իմմէ ի քո՞ց մերկացայց, և լուծի՞ց զկամարս և զգօտիս յանձնէ իմմէ. զոր ո՛չ երբէք լուծանեմ ի տան իմում յուրախութեան. և կամ ի՞նձ

1. Գրուած և Մաշկաւարզան, Մաշապերճան. Սերբիոսի ուրիշ օրինակ մեկնէ, « Դեսպակն ասկեղէն որ » կոչիւր ի նոցանէ (Պարսից) Դեսպակ (գահ, աթոռ) » փառաց »: Բայց գուցէ թագաւորական վրանին մաշկեղէն զրան զարգարուն վարագոյրն ըլլայ:

արժան իցէ գիտել զչարութիւնդ Պարսից»: Եւ հրաման ետ միում մանկանցն ընթանալ, զի յաւուրսն մատուսցէ զգօրն յօգնութիւն. և ինքն դարձաւ անդրէն ի գնալ:

Այդ եղեւ արքային, եթէ ոչ կամեցաւ այնպէս մտանել, այլ դարձաւ անդրէն և գնաց: Եւ սկսաւ թագաւորն ծածկել զչարութիւնն, և ասէ. «Թողցի արդ ի բաց խորհուրդն այն, թող եկեսցէ որպէս և կամեցայ: Քանզի ինքն մանուկ էր, և զօրութիւն զօրացն սուղ ինչ և սակաւ: Կոչեն անդրէն և ասեն. «Հրաման ետ մտանել որպէս և կամիս: Նա դարձաւ և ասէ. «Թող տեսից՝ եթէ զինչ բարի խորհեսցի տալ ինձ արքային արքայ»:

Եւ եմուտ ի խորանն՝ զառաջեաւ արքային եւթն արամբք, և խնարհեցաւ ի վերայ երեսաց իւրոց՝ երկիր եպագ արքային, և կանգնեցաւ: Եւ արքայ ոչ ձգեաց զձեռն իւր՝ որպէս երկն և յեռանդն՝ ընդունել զնա և ողջունել. այլ կայր այնպէս յամառացեալ. և անդ կացին այսպէս յամառացեալք:

Երկեաւ արքայ և զանգիտեաց, և ոչ կարաց տալ հրաման՝ որպէս խորհեալ էր, և ասել կամ մեծ կամ փոքր՝ յերկիւղէն: Եւ նա դարձեալ եկ փութանակի ի խորանէն. մատուցին նմա զերիվարն, հեծաւ և գնաց: Եւ եղեւ իբրեւ եաես զայն արքայ՝ յայժ երկեաւ, և կամեցաւ ծածկել զինաս իւր, յառն եկաց ի գահոյիցն և ընթացաւ ի դուռն խորանին, եկ արտաքս, և արձակեաց զձեռ նորա զոմն զլխաւոր նախարար. եւ տանել աղ կնքեալ՝ երդումն, և կոչել անդրէն, զի պատուով և մեծապանօք գնասցես, ասէ, ասեմ, և մի համարիր ի միտս քո խորհել վասն քո այլազգ ինչ: Եւ նորա ոչ կամեցեալ, այլ գնաց զճանապարհ իւր:

ՃՀԵ

ԱՏԱՏ ԽՈՐԽՈՌՈՒՆԻ

(ՍԵԲԷՈՍ)

Էր սա պատրիկ մեծ, վասն որոյ հրաման տայ թագաւորն[1] կոչել գնա ի պալատն, և գնացեալ ի նա եօթանասուն արամբք. և մեծարեալ չքեղապայց գնա և որ ընդ նմայն՝ ըստ արժանի վայելչական ընդունելութեան. եւ նմա անօթս ոսկիս և արծաթիս և գանձս բազումս յայժ: Եւ հրաման ետ երթալ ի Թիրակէ[2] առ զօրս իւր. և հրաժարեալ ի թագաւորէն և գնաց: Եւ մինչդեռ գնայր ի ճանապարհի՝ արկ նա ի միտս իւր ապստամբել, և գնալ առ թագաւորն Պարսից. և սաբրիւրեալ ի ճանապարհէն՝ գնաց ի ծովեզերն. և հանդիպեալ նաւի միոջ՝ ասէ նաւորդացն. «Անցուցէք զիս յայնկոյս, զի ի գործ կարեւոր առաքեալ եմ ես ի թագաւորէն: Եւ հրապուրեալ զնաւորդսն՝ անցուցին զնա. և գնաց փութանակի, ճեպեալ հասանէր ի Հայաստան երկիր»[3]: Եւ ոչ աք վաղագոյն իմացաւ զճանապարհ գնալոյ նորա, մինչեւ բազում օթեւանօք մեկնեալ՝ հետացաւ ի ծովեզրէն: Ապա ուրեմն իրապէկ լինելին գնալոյն. և ելեալ ընդդէմ նորա քաղաքաց քաղաքաց զօրք, և ոչ կարէին զդէմ նորա ունել, և ընդ ուրեւտառն տեղի արարեալ նորա պատերազմին՝ ի ճանապարհի, յաղթող ամենայնի գտանէր, թէպէտ և իւր զօրականն պակասեալ նուազէր. և այնպէս գնացեալ փութանակի

1. Կայսրն Յունաց:
2. Թրակիա գաւառ, սահմանք Կ. Պոլսի:
3. Թուի թէ Սեւ ծովու նաւահանգիստ մի եղած է, գուցէ ի Տրապիզոն:

հասանէր ի Նախճաւան, և ընկալեալ զնա Պարսից ի բերդն ամրանայր։ Յայնժամ ժողովէր զամենայն զօրս իւր սպասեալսն[1], և երթեալ պաշարէր զբերդն չուրջանակի զամէն։

Այդ լինի արքային Թոսրովու՝ եղեալ իրքն, և արձակէ ի վերայ նոցա զՊարսային պետ 2 հանդերձ զօրու։ Իրրեւ եկն մերձենայր զօրն, թողին նոքա զքաղաքն և գնացին. և նորա փութացեալ գնաց առ թագաւորն Պարսից։ իսկ նա սիրով ընկալաւ զնա. մեծացոյց պատուովք, և ետ նմա գանձս, և հրամայեաց առնիկ յարքունուստ։

ՃՀԶ

ՈՒԺԵՂՈՒԹԻՒՆՔ ՍՄԲԱՏԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՑ

(ՍԵԲԷՈՍ. ԺԲ.)

Սկսան միաբանել մնացեալ նախարարքն Հայոց, և խնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն Յունաց թագաւորին, և նստուցանել իւրեանց թագաւոր, զի մի և նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացւոց, այլ կեալ և մեռանել ի վերայ աշխարհին իւրեանց։ Եւ բանք խորհրդոց նոցա ոչ ունէր ըզմիաբանութիւն իրին յինքեանս հաստատեալ. այլ ոմանք ի նոցանէ չոգմոգութեամբ հասուցին ըզբանս խորհրդեանն յունկն թագաւորին, և ինքեանք այսր և անդր սոսկալով խուսափէին։

Յայնմ ժամանակի հասանէին դեսպանք արքունական[2] հրովարտակօք, և կալեալ զՄժբատ՝ հան-

1. Յունաց կայսեր իշխանութեան տակ եղած Հայաստանի մասին կը գլխակալէ։

2. Թուի յատուկ անուն՝ քան թէ պարզ Պարսից զօրապետ նշանակել։

3. Յունաց կայսրն Մօրիկ էր դեսպան զրկողն։

դերձ այլովք ոմամբք եւթն արամբք, և տարան յանդիման թագաւորին։ Եւ քննեալ զնոսա ի մէջ բազմամբոխ հրապարակին, հատաւ վճիռ ի վերայ նոցա՝ մերկացուցանել և ընկենուլ ի կիւրևիկն[1]։ Եւ էր սա այր անհեթեթ անձամբ և գեղեցիկ տեսլեամբ, և բարձր և լայն հասակաւ, և բուռն և ցամաք մարմնով, հզօր և պատերազմող, որ ի բազում պատերազմունս ցուցեալ էր զիւր քաջութիւնն և զբանութիւն։ Այս է զօրութիւն նորա. քանզի անցեալ սա ի ներքոյ անտառախիտ մայրեաց և զօրաւոր 2 ծառոց՝ ի վերայ յաղթանդամ և հզօր երիվարին, և յարձակեալ՝ զոտոց ծառոյն բուռն հարկանէր, և կծկեալ ուժգին երանաքն[3] և ոտիւք՝ զմէջ երիվարին, վերացուցանէր երանաքն ի գետնոյն. մինչ զի ամենայն զօրացն տեսեալ՝ ահարեկ լինէին ի զարմացմանէ։

Եւ արդ, մերկացուցեալ զնա և ազուցեալ անդրավարախս և ընկեցեալ ի կիւրևիկն, զի կուր լիցի գազանաց։ Եւ արձակեալ ի վերայ նորա արջ, և եղեւ իրրեւ պիտեաց ի վերայ նորա արջն, նա առազակեաց մեծաձայն, և ընթացաւ ի վերայ արջոյն, և զարկեալ բռամբ իւրով զճակատն՝ և անդէն սատակէր զնա ի տեղւոջն։ Երկրորդ անգամ, արձակեցին ի վերայ նորա ցուլ. իսկ նորա բուռն հարեալ զեղջերացն ցլուն, և զազազակ[4] հզօրին, և յօդնեալ ցուլն ի մարտին՝ գելոյր զպարանոցն, և խորտակէր զերկոսին եղջիւրան ի վերայ գլխոյն. թուլանայր ցուլն և յետս յետս գնալով ի փախուստ

1. Χυτικον, իբր չընոց, մահապարտաց բանտ էր ի Կ. Պոլիս, ուր գազաններ պահէին։

2. Թերևս վարսաւոր գրելի էր. կամ հատս ամուր ծառ նշանակէ։

3. Երկու ծնկաց մէջ սրմկլոյ՝ հեծած ձին վեր վերցընէր։ Անհաւատալի ոյժ։

4. Այս տեղ պակասէ բանն, ուրկէ պիտէր զազազակ բարձնել յօգնուբիւն, և այլն։

զառնայր. իսկ նորա զհետ ընթացեալ՝ բուռն հարկանէր յագին, և ի կռզակն ազդեր միոյ ոտին նորա. և թափեալ զկռզականն՝ միայր ի ձեռին նորա. և յուլն գնայր ի նմանէ փախստական՝ միով ոտամբըն բակ: Դարձեալ երրորդ անգամ, արձակեցին ի վերայ նորա առիւծ. և եղեւ ի վերայ նորա յարձակել առիւծուն, այնպէս իմն յաղողեալ նմա՝ ի Տեառնէ, բուռն հարեալ յականջ առիւծուն՝ հեծաւ ի վերայ նորա. և անդէն բուռն հարեալ զխռչափողին՝ խեղդէր զառիւծն և սպանանէր: Անդ ազաղակ բազում ամբոխին՝ զերկիրն լնուին, և խնդրէին ի վերայ նորա ողորմութիւն ի թագաւորէն:

Եւ նա վաստակեալ ի մարտին՝ նստէր ի վերայ առիւծուն մեռելոյ, զի փոքր ի հանգիչ: Անդ և կին թագաւորին անկեալ առ ոտս նորա՝ խնդրէր ի վերայ նորա առնել ողորմութիւն. վասն զի սիրելի էր յառաջն այրն այն թագաւորին և կնոջ նորա, և անուանեալ էր զնա իւր յորդեգիրս: Եւ նա զարմացեալ ընդ զօրութիւն և ընդ պնդութիւն առնն, և լսեալ պաղատանաց կնոջն և ամենայն պաղատողն՝[1] հրամայեաց առնել ի վերայ նորա ողորմութիւն:

Յայնժամ տարան զնա ի լուացուին ի բաղանիս, լուացին զնա և զգեցուցին, և կոչեցին զնա յընթրիս սքանչի, դարմանեցին զնա կերակրովք: Եւ զկնի սուղ ինչ անցելոց[2], մանաւանդ եթէ՝ ոչ ի չար ինչ կամաց թագաւորին, այլ ի նախանձորդաց չարախօսութենէ, հրամայէ հանել զնոսա ի նաւ և աքսորել ի կղզիս հեռաւորս. և ապա անտի հրամայէ անցուցանել յԱփրիկէ, և առնել[3] զնա անդ ի մէջ զօրացն՝ որ էին անդ ի բուն:

1. Այսինքն, պալատին մարդկանն ազնուականաց:
2. Այս տեղ եւս պակասի բան:
3. Թուի թէ ոչնչել կարդալոյ է, այսինքն պահել:

ՃՀԷ

ՄԵՆԱՄԱՐՏ ՍՄԲԱՏԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՑ ԸՆԴ ՓՈՒՇԱՆԻՆ

(ՍԵԲԷՈՍ. ԼՀ.)

Սմբատ ժողովէ զզօրն՝ և վերատին սպառազինէ, գումարէ և այլ զօրս բազումս յօգնութիւն իւր, և դիմեալ գնայր ի վերայ ազգին Փուշանաց և արքային Հեփթաղեայ[1]. և նա անտի մեծաւ կազմութեամբ ընդդէմ ելանէ նորա: Եկին հասին ի տեղի մարտին. և ճակատեցան դէմ յանդիման միմեանց: Այրդ, պատգամ յղէ առ Սմբատ՝ սքանչին Փուշանաց, և ասէ. «Զի՞նչ օգուտ է այսպէս խառնամբոխ մատնել ի պատերազմ, սպառել զօրս մեր. և կամ իւր ծանիցի իմ և քո քաջութիւնդ. բայց ե՛կ, ես և դու միայն մարտիցուք. ելեալ ես ոտի ախոյեան, և դու այդի, զի այսօր ծանիցի քեզ քաջութիւն իմ: Իսկ նորա ձեռն յանձին հարեալ՝ ասէ. Ահաւասիկ պատրաստ եմ ի մեռանել»: Եւ յարձակեալք ոտի և անտի մեծաւ ոտգնապաւ՝ ի միմեանս հասանէին. և ի մէջ երկուց ճակատացն մարտ եղեալ ընդ միմեանս կռուէին. և ոչ կարէին վաղվաղակի զմիմեանս յաղթահարել. զի արք ախոյանօրք էին երկոքինն, և կուռ սպառազինեալք: Այսպ ի վերուստ իմն հասեալ օգնութիւն՝ պատուռի վերատեսուստ բահլիկ[2] և կուռ զրահին ամրութիւն արքային Փուշանաց,

1. Հոնաց կամ Փուշանաց մէկ ցեղն այսպէս կամ Սպիտակ Հոնք կոչուէր, Ephthalites.
2. Վերա՝ մեռազէ հիւսուած զրահ. բայց այդ բառն թուի ըլլալ վերտիւ առնուր: — Բահդիկն այլ թուի իրրեւ չքեղ, պերճ, կամ Պահլաւի վայել:

ի նիզակէն Սմբատայ. զի հարեալ գնա զօրուքեամբ՝ դիաթաւալ յերկիր կործանէր: Եւ զօրքն նորա իբրեւ տեսին զարքայն իւրեանց՝ զարհուրեցան, և դարձան և գնացին փախստական. և սոքա գհետ արշաւեալ հասին մսպատակաւ մինչեւ ի Բահլ շահաստան Քուչանաց. և աւար հարեալ զերկիրն[1] ամենայն, զՀար, զվատագեա[2], զՑոխորուտայն ամենայն, և զՑաղական, առնոյր և զերդս բազումս, և գնոյնս քանդեալ աւերէր. և դառնայր յաղթութեամբ մեծաւ և բազում աւարաւ. և երթեալ բնակէր ի Մարգ և ի Մարգուտ[3] գաւառի:

Յայնժամ հրեշտակք աւետաւորք փութով հասանէին առ արքայն Խոսրով, լիով զեղեալսն պատմէին քաջութիւնս: Իսկ արքայն Խոսրով զուարճանայր զուարթանայր մեծաւ խնդութեամբ, և հրամայէր զարդարել փիղ մի մեծ և ածել ի դահլիճն. հրամայէ եւս հանել ի վեր զօրգի նորա (Սմբատայ) զվարազտիրոց, որ անուանեալ կոչէր յարքայէ ձաւխտևաի[4] Խոսրով: Եւ հրամայէ դանձս ցանել ամբոխին. և գրէր առ նա հրովարտակ մեծաւ պատուով և շքեղութեամբ:

1. Անշուշտ Թոռիաարիտաան կաշուած աշխարհն է:

2. Հար յանուն Հարի–ռուտ գետոյ. ասոր և Մուղրապ գետոյն մէջտեղն է վատգեան, հիմայ Պատկիս կոչուած. յիշուած է Ղեւոնդեանց նահատակութեան առեններէ: Տես երես 180· 190:

3· Մերվ–էր–ռուտ ըստ Պարսից, այսինքն Մերվ գետոյ առմանէն· հիմայ Մարուչաք կոչուած տեղն կարծուի: Այս տեղ մեր քաջ և Ս. Վարդանն՝ մեծ յաղթութիւն մ'ըրած էր ընդդէմ թշնամեաց Պարսից թագաւորին, զոր յիշէին պաշտօնեայք նորա՝ գառագէ Ս. Ղեւոնդէանց, ըստ պատմութեան Ղազ. Փարպ. խդ· «Զոր իւր իսկ (թագաւորն) իւրով աչօք տեսեալ » էր ի Մարվիռուտ, զնորա քաջասքանչութիւնն »:

4· Ձաւխտևան կամ Ձաւխտևանի, իբր Յաւիտենական, յաւերժ:

ՃՀԸ

ՍՄԲԱՏ ԿԱՐԳԻ ՄԱՐԶՊԱՆ ՎՐԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ

(ՈՒԽՏԱՆԷՍ· Բ, յա)

Գրեմ քեզ այժմ որ յաղագս մերոյ Սմպատայ պատմի յիշատակն. վասն զի յառաջ քան զայս յ'սկզբան առաջին ճառին՝ որ յաղագս բաժանման Վրաց, զանուանն միայն յիշեցաք, և որ այլ ինչ էր՝ ոչ ժամանեցաք: Արդ, էր սա այր քաջ ի պատերազմունս, արի և առաքինի, հզօր և զօրաւոր յամենայնի յամենայն ուրեք: Նա է ի մեծագնի և ի մերոց թագաւորացս[1], և ազգաւ բագրատունի, և սիրելի մեր՝ որպէս բնիկ և մերոց թագաւորաց արեանառու և հաւատոի հարազատ: Որ լեալ մարզպան Վրկան իշխանութեանն՝ ի հրամանէ Ապրուէզ Խոսրովու արքայից արքային Պարսից, յաշխարհակալութենէն Մօրիայ Յունաց թագաւորի. որ բազում պատերազմունս վանեալ և վանեալ ի Հայս, ի Յոյնս և ի Պարսիկս, որպէս ուսուցանէ քեզ Պատմութիւն Հերակղի[2]: Իսկ այժմ և յայժմու ժամանակս՝ հեզ և հնազանդ հարցն հաւատոյ և հաւան և հպատակ ուղղափառ հաւատոյ սուրբ հարցն և վարդապետացն և կարի պէտ և կարեկից ամենայն կարօտելոց, և գօրավիգ և օգնական Հայաստանեայցս, զօրացեալ յԱստուած և զօրացեալ Աստուծով, որ և յամենայն եւս նուագի և յանիշխանութեան Հայոց՝ ելից զթեբութիւն թագաւորին և զպակասութիւն հայրա-

1. Իրմէ գարեթով չատ վերջը եղած Բագրատունեաց թագաւորաց ցեղակից է:

2. Նախընթաց Յօդուածէ հեղինակ Սեբէոս պատմիչն է:

պետի[1]. զի խոհեմ և խորհրդական մտօք իւրովք խորհուրդ արարեալ խափանեաց զխարդախութիւն խորհրդոցն թիւրեալ եպիսկոպոսացն, և ուղղեալ հաստատեաց զմեզ միտս նոցա[2]։...

ՃՀԹ

ԳՐԻԳՈՐ ՍԻՒՆԻ ՔԱՋԱՑ ՆՈՒԻՐԱԿ· ԴԻՊԱՂԵՂՆ

(ՍՏԵՓ· ՕՐՊԵԼ· ԺԳ·)

Եղեւ օր մի յաւուրց, և խոսրով արքայ Պարսից՝ որդի Որմըզդայ, զոր ամենք Շահնշահ անուանեն, այսինքն թագաւորաց թագաւոր, նստոյ դաբեպաս արարեալ[3] ազատաժողով Աբեաց գնդին, կամեցաւ ի ճաշս խրախանալ։ Իսկ թաչնաքաշտ[4] մի մեծամեծ և սեւաթոյր՝ սլացաւ ի վերուստ ի վայր, եկն ի սեղան թագաւորին, և կամեցաւ յափշտակել ինչ ի սեղանոյն։ Եւ թագաւորն խրախտացեալ լի եղեւ ցասմամբ, որպէս թէ գուշակումն ինչ համարելով։ Եւ յայն ամենայն բազմութենէն ոչ ոք չարժեցաւ զկնի նորա. ապա Գրիգոր առեալ զհաստատուեսա աղեղն իւր՝ և լայնալիճ գրկօք կոթովակի փրթուցեալ զնետն՝ ի վեր յոյժ բարձրա-

1. Յետ մահուան Մովսէսի կաթողիկոսի՝ քանի մի տարի պարապ մնաց աթոռն, որոյ տեղապահ կարգեցաւ Վրթանէս Քերթողն. ասար վրայօք եւս գրած է Ուխտանէս. տես Հետեւեալ Յօդուածը։

2. Լսա կարծեաց հեղինակին (Սեբէոսի)։

3. Աբքունական հանդիսաւոր կոչունք, կերուխում։

4. Մանր թռչնոց սրսացող մեծ թռչուն սեւ, թերեւս ուրուր, եթէ ուղիղ է գրուածն և ոչ թռչնաքաղ։

գոյն, ընկէց զթռչունն ի վայր՝ առաջի թագաւորին, առ սեղանոյն։ Իսկ թագաւորն լցեալ խընդութեամբ՝ կոչէ յառաջ զԳրիգոր, և հրամայէ նմա զծանրագոյն խնդրել խնդիր. և Գրիգոր Սիւնեաց տէր՝ ասէ. «Տէր իմ արքայ, մինչ հրամայեցեր խնդրել՝ տացի դուստր արքայի ինձ ի կնութիւն»։ Եւ առ ժամայն կատարեցաւ խնդիրն, բազում և մեծամեծ պարգեւօք և բարձրագոյն փառօք։ Եւ խնդացին ամենայն տունն Սիսականաց։

ՃՁ

ՎՐԹԱՆԷՍ ՔԵՐԹՈՂ ՏԵՂԱՊԱՀ ԵՒ ԱՒԱՆԴԱՊԱՀ

(ՈՒԽՏԱՆԷՍ· Բ, ԻԸ·)

Կամիմ դարձեալ երկրորդել յաղագս Վրթանէսի Վարդապետի[1]. և զնորոգումն աթոռոյ Սրբոյն Գրիգորի, որում ինքն էր տեղապահ և աւանդապահ. ուրախ եղեւ յոյժ և գոհացաւ զԱստուծոյ, իբր արդարեւ երախտաւոր գոլ, որպէս էրն իսկ. յաւն կացեալ օրհնէր զԱստուած, զտուիչն այնպիսի բարեաց, ընդ նմին զհայրապետան Աբրա-

1. Իր Բ զրոց լդ գլխոյն մէջ արձն գրած էր. «Վրթանէսս այս վարդապետ եղեալ Հայոց, անեալ և » ուսեալ ի տան կաթողիկոսարանին, այր հեզ և » իմաստուն, հոգեւոր և հանճարեղ, երկիւղած և հո» գեւոր հաւատոյ հիմն, լի գիտութեամբ և ամենայն » չնորհօք զարդարեալ », և այլն։ Վրթանէսի նորալուր մականուն մ՚ալ ասյ, որ և անար թղթոց վրայ յիշուի, Հայոց Շարաւարար. թուի պարսկերէն ապաւար՝ զօրապետ՝ նշանակութեամբ. Սմբատ Մարզպան իր թղթին մէջ կոչէ զնա Շար–սապար, Հայոց Պետ։

համ, որ նորոգիչ եղեւ աթոռոյն Սրբոյն Գրիգորի, նոյնպէս և զսուրբ ժողով սրբոց Հարցն։... Արդ, օրհնեաց նա զնոսա և օրհնեցաւ ի նոցանէ, որպէս բարեկամ և սիրելի հաստարակաց։ Ապա այնուհետեւ բերեալ զաւանդն՝ որ ինչ նմայն էր հաւատացեալ ի Մովսիսէ Հայոց կաթողիկոսէ[1] ի ժամ մահուան իւրոյ. նախ, զիրկական և զկենսակիր Աստուծոյ Նշանն[2], և ապա զնշխարս Ա. Աքաքիոցն՝ զոր բերեալ էր Սրբոյն Գրիգորի ի Հռոմայ, զտուեալն նմա ի բարեպաշտէն Կոստանդիանոսէ. և յետ այնորիկ զԱքոռն և զԳաւազանդիանոսն՝ որ պատուով պահեալ էր և պաշտեալ, և զայլ ամենայն զպաս սրբութեան, զՄկիխին և Ըզգեստս սրբոյ սեղանոյն, և զվարագոյրս, և զխորհուրդս և զքուրմառս և զբշոցս, և զվակաս կաթողիկոսին մեռաքսեալ՝ կազմեալ յականց և յոսկոյ և ի մարգարտէ. և զայլ զգեղիսն և զարկանելիս քահանայիցն և սարկաւագաց, զբեհեզս և զծիրանիս. որպէս Մարգարէն ի թիւս արկեալ կարգէ՝ զեղրածիրանին և զՄիջնածիրանին, և որ առաջին և զկնի այսոցիկ ասի, և զայլ եւս պայծառ պատմուճանսն՝ պէսպէս զարդուց, դիպակաց և ծիրանեաց, գունակ գունակ և երիվն երիվն և երանգ երանգ ծաղկազարդ գունօք գործեալ գեղեցկապէս. նա և զբարեպաշտին մերոյ թագաւորին Տրդատայ պատուական Զգեստն, զոր տուեալ ի տուն Տեառն ի ժամս սրբութեան, զոր մեր սեսեալ աչօք մերովք[3]։ Եւ ապա յետ այնորիկ բե-

1. Վկայութիւն Հայոց գովելի հաւատարմութեամբ և պատուով պահելոյն իրենց Սրբոց և սրբազանից աւանդները։

2. Քրիստոսի խաչափայտին չափաւոր մեծութեամբ մաս մի պեսի ըլլայ, ալնիւ մեռոպէ զոհարաշարդ պահարանով։

3. Յանկալի և փառաւոր աւանդ Մեծին Տրդատայ, 700 տարի զգուշութեամբ պահուած, զոր հեղինակս

րեալ բազում գրեան զանազան և ազգի ազգի եկեղեցական և վարդապետական, այլ և մարմնաւոր իրք[1], գոյիւ չափ, բերեալ գրով առաջի կացուցանէր. և օրհնեալ լինէր ի հայրապետէն։ Եւ բազում երախտիս և չնորհակալութիւն ընկալեալ յամենեցունց. ի գայնքան անցելոց ամացն առանց առաջնորդի՝ ոչինչ թերեւ և թերի թողեալ զտեղապահութիւն իւր, այլ լի և կատարեալ զտիւ և զտատամնանաւ առնել իրաւունս և գործել զարդարութիւն յամենայն ժամ։...

ՃԶԱ.

ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՑ Ս. ՀՌԻՓՍԻՄԵԱՅ. ԱՌ ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՒ[2]

Յամի քսան և ութերորդի թագաւորութեանն Ապրուէզ Խոսրովու, քակեաց կաթուղիկոսն Կուրիոս զմտաուռ Սրբոյն Հռիփսիմեայ ի վազարշապատ քաղաքի, զի կարի ցած և մթին էր շինուածն, զոր չինեալ էր Սրբոյն Սահակայ հայրապետի Հայոց կաթուղիկոսի, որզուոյ Սրբոյն Ներսիսի։

Արդ, մինչդեռ քակէին զորմն մատրանն, երեւեցաւ յանկարծակի լուսաւոր և չքնաղագիւտ ար-

(Ուխտանէս) չատ հեղ տեսեր և անչուշտ չօշափեր է ի զանձատան կաթողիկոսարանին. ինչ եղեր է յետոյ։

1. Որպիսի և է ոչ եկեղեցական ծանրագին բան, զարդ, տման, կահ, թերեւս և գումարք դրամոց։

2. Սեբէոսի պատմութեան գրոց իբր իւր գլուխ դրուած է այս. բայց իր պատմագրութեան կարգին կապակից չէ. կամ պակաս բան կայ անոր մէջ, կամ օտար մէկին խառներ է զայս անոր գրոց։

քաղնական մարգարեան. այսինքն, կաթսական մարմին սրբոյ տիկնոջն Հռիփսիմէի: Եւ քանզի անդամ անդամ յօշեցին զնա յօշեալ ի միմեանց, և երանելի Սրբոյն Գրիգորի կնքեալ մատանեաւ իւրով, և մատանեաւ երանելւոյն Սահակայ Հայոց կաթուղիկոսի, զոր նա[1] ոչ համարձակեցաւ բանալ, և կնքեալ իւրով եւս մատանեաւ. որ արժանի իսկ էր կնքել զայսպիսի մարգարիտ երից հաւատարմաց երրորդ մատանեօք:

Ո՜վ մարգարիտ, որ ոչ ծովածին, այլ մարգարիտ՝ որ ծնեալ ի թագաւորական ազգէն, և անեալ ի գիրկս սրբութեան, և նուիրեալ Աստուծոյ, որում ցանկացեալ էին տեառնել զքեզ՝ արդարք, և խանդակաթ էր ի սէր քոյ երանելին Կոստիանոս: Զաւր հասակի էր երանելւոյն՝ ինն թզաւ և չորս մատուանս: Եւ դղրդեալ ամենայն կողմն հիւսիսոյ՝ պայր յերկրպագութիւն. և բազում ախտաժետաց լինէր բժշկութիւն ամենայն ցաւոց: Շինեաց զեկեղեցին. և վերանելին եթող ի բացեայ՝ վասն գիշերութեան որմոյն, մինչեւ ցամաքել կրոյն. ապա ամփոփեցաւ ի կայանս իւր: Վերացոյց և զփայտայարկս սրբոյ կաթուղիկէին. նորոգեաց և զխաչատուր որմոյն. շինեաց զբարայարկն: Այս եղեւ յամս Յովհաննիկաի՝ վանաց երիցու սրբոյ կաթուղիկէին[2]:

Ո՜վ հրաշափառ և երջանիկ վկայ՝ անբաժանելի

1. Կաթուղիկոսն Կոմիտաս:

2. Կոմիտասայ նորոգութենէն հազար և աւելի տարի վերջ, Փիլիպպոս կաթուղիկոսի օրով, յամի 1653, նոր նորոգութեան առեն, քակուած պատին մէջ գըտան Ս. Հռիփսիմեայ նշխարք և այլ հին գեղեցիկ արձանագրութիւնք, որ երեւի տեղ տեղ խանգարուած և խառնակիմաստ: Բայց հնութեանն և զրուին սքոյն համար՝ արժանի համարեցանք գաղափարել ըստ Աւաքել պատմչին, գլ Ե:

ծոցածին Հօր և համագոյգ Հոգւոյն, կամողին ընդ ստորինս ամեմ, անոխակալ երկնաւոր փեսային Հարսն, զրարեգործակ արքային ունող, գոլով զլուխ միշտ և անընդհատ յաղագս ծանօթ քեզ սպասաւոր Սուրբ Հոգւոյն: Ո՜վ Սրբուհի, աղաչեմ, յիշատակոդացս անուանքս բարեխօսութեամբ և անշուշտ ազօթիւք՝ լեր պահապան և անդիս? որով հանդիսասցիս ստորնոցս՝ լինել, Սուրբ կոյս, արագ ոգնական, որ և պատուապարան եղիցիս՝ յամենայնի յաղթող բարեբան:

† Յիշեա և զիս՝ զոր նուիրեցայց իսկապէս ըստ անուանս[1], վերստին ստոյգ ածագործողին կամահաճոյ յարկիս, զոհն մատնատիպս, որոյ չնորհօքն բաւականացայց ազաչեմ յանձն և յարաւնուն քեզ Հռիփսիմէ:

† Յակոբ քահանայ սուրբ կաթողիկէ արհեպիսկոպոսարանին

† Եւ Թոսրովիկ ծառայ սուրբ Հռիփսիմէի[2] սուրբ Ոդին

† Ստեփանիանոս:

ԱՁԲ

ՍՊԱՆՈՒԻՄՆ ԱՊՐՈՒԻԶ ԹՈՍՐՈՎՈՒ (Բ) ԵՒ ԹԱԳԱՒՈՐԻ ԿԱՒԱՏԱՅ[3]

(Ա Գ Ա Թ Ա Ն Գ Ե Ղ Ո Ս Բ, ԺԳ.)

Ականատեսք ինձ սակաւիկ մի, և պատմեցից կարճառօտիւք զխորագիտութիւն առնն, եթէ զիարդ

1. Անուանակից Սրբոյն Ս. Հռիփսիմէ մէկն է զրուին կամ առաջագրող:

2. Թանարհութեամբ զինքն Ս. Հռիփսիմէի առից կոչին ծառայ գրէ:

3. Փերվիյզ կոչուածն ի Պարսից, որ թագաւորեաց 590–628 ամաց միջոց:

կամ որով օրինակաւ կարաց արգելուլ ի գառա-
գեղն մահու՝ զահեղ որսորդն, զառիւծն արեւելից,
յորոյ ի գոչելն միայն՝ ապգք հեռաւորք դողային,
և մօտաւորք՝ յերեսաց նորա իրրեւ զմամ հալեալ
պակասէին: Նա այնպէս ի վայրկեան ժամանակի
գողացաւ զամենեցուն սիրտս, և յարեաւ ի վերայ
նորա իրրեւ յորոյ միոյ[1]. և առնելով զայս ամե-
նայն, ոչ զայլ թագաւոր և իշխան ի թիկունս կո-
չէր, ոչ զազգս և զերդուս հեռաւորս զօրավիգն օգ-
նականութեան առնուն իւրոյ ընդդէմ հօրն պատ-
րաստէր, այլ առաքէր միայն ծածկաբար առ կայսրն
Հերակլիոս՝ զեռեղանալ նմա անդէն, ուր էրն զօ-
րօքն իւրովք հանդերձ՝ աւուրս ինչ: Եւ հրամայէր
գրել հրովարտակս յերեսաց Կաւատայ առ մեծա-
մեծս և առաջնորդս գնդից գնդից մեծի դրան թագա-
ւորութեանն Պարսից, եթէ, «Բարձաւ ի հօրէ իմմէ
և ինձ տուաւ իշխանութիւն թագաւորութեանս.
պատրաստական լերուք սակաւ ինչ հեծելովք»:
Եւ կացուցանէր գնոսա առ խելս կամբրջին Տիգրիս
գետոյ՝ ըստ վեհ-Արտաշիր քաղաքի, յանդիման
դրանն Տիզբոնի[2], ուր էր հայրն նորա Խոսրով պահ-
պանեալ մերձակաց զօրօքն իւրովք: Եւ քարոզն
մեծաբարբառ աղաղակէր յայմմէ և յայնկէ Կաւա-
տայ, և ասէր. «Ով է մարդ որ սիրէ զկեանս և
կամի տեսանել զաւուրս իւր ի բարութեան, վազ-
վազեսցէ ընդ առաջ նորոյ թագաւորութեանս Կա-
ւատայ, զի սա է արքային արքայ»: Եւ բացին
զդրունս Անյուշն բերդի. և յախուռն կոչէր ար-
տաքս զամենայն կալանաւորս արքային՝ ի բաղում
ժամանակաց արգելեալս ի տուեալս մահու, անթիւ
բազմութեամբ յոյժ յոյժ. և ասէին ցնոսա. «Ե-
կայք ելէք, թշուառականքդ, սրտառուչք ի Խոսրո-
վայ. զի ձեզ բացան զդրունք կենաց ի նորընծայ
թագաւորէս՝ յորդւոյ նորա՝ Կաւատայ»: Եւ բե-

1. Իբրեւ որք փոքր ազգ մի համարելով:
2. Ասանեանց Պարսից մայրաքաղաքն:

կեալ իւրաքանչիւր ուրուք զղթայս իւր՝ դիմեցին
առ հաւատարակ արտաքս: Եւ ելանէր ձայն գոչելոյ
օրհնութեան նոցա յերկինս, որք օրհնէին զԿաւատա
և ասէին. Աւրքայ, յաւիտեան կեաց: Եւ մնալ
յընտիր ընտիր երիվարս՝ ասպատակէին ի վերայ
Խոսրովու. չղթայք իւրեանց ի ձեռս իւրեանց՝ հե-
ծեալք արշաւէին յայսկոյս յայնկոյս, արհամարհելով
զԽոսրով: Այսպս և բազումք ի գնդից գնդից՝ ի դռնա-
պահաց և ի թիկնապահաց, և յանուակրաց[1] զբ-
րանն Խոսրովու՝ առեալ զնչանս զրօշից իւրեանց,
դիմեցին առ Կաւատ որդի նորա: Եւ որք միացինն
անդրէն ի զրանն՝ ձեպէին զնոսա պատգամաւորքն
Կաւատայ, զգուշութեամբ ունել պահել զԽոսրով՝
ապա եթէ ոչ, մահու մեռանիցին: Այդ, իրրեւ
լսէր Խոսրով զբարբառ աղաղակին այնորիկ, ասէ
ցայնոսիկ որ մօտն կային. Ձի՞նչ են ձայնք կոչ-
մանցն այնոցիկ». և նոքա լռեցին, քանզի պատ-
կառէին պատմել նմա: Եւ խառնաձայնք փողոցն
եւս քան զեւս սոխրէին: Դարձեալ ասէ ցնոսա
որք մերձն էին. «Ձի՞նչ են անկարգ հնչմունք բար-
բառոցն». և նոքա ասեն. «Քանզի կամի թագա-
ւորել փոխանակ քո՝ որդի քո Կաւատ, և ամենե-
քին ընթանան առ նա. և ահա ճակատեալ յան-
դիման քաղաքիս առ եղերբ գետոյն, և արձակեաց
զամենայն կալանաւորս մեծի բանտին զարգելեալսն
ի հրամանէ քումմէ. և ցնծալով ամենեքեան օրհ-
նեն զնա՝ արքայ կարգալով»: Իրրեւ լուաւ զայս
ամենայն ազէտս գումիծն, մանաւանդ զարձակումն
կալանաւորացն, հայէր հառաչէր, վայէր, վարա-
նէր յանձն իւր. ոչ ի նստելն իմանայր և ոչ ի յառ-
նելն զգայր ամենեւին. քանզի եռեալ զօրն ահա-
գին հասեալ ի վերայ իւր: Եւ ելեալ հետեսաս
ընդ դուռն բուրաստանին իւրոյ, գնաց և թագեաւ
ընդ ծառովք, և կայր զօղեալ թաւեալ ոգի նորա

1. Ա՞նուռակիր, անիւ կրող? եթէ սխալ չէ, անյայտ է ինձ:

ի յանկարծ երկիւղէն. և փոխէին աչք իւր վերա-
նալոյ ի վերայ նորա անողորմ սրոյն[1]: Այս եկին
հասին ի վերայ նորա գունդք ամենայն չուրջ պա-
պարանաքն, և դէտ մտեալ խնդրակքն՝ գին գնա
ի տեղւոյն ուր նստէր վարանեալ. և ածեալ գնա
արտաքս քան զպարիսպն՝ մուծին ի սրահ մի, զոր
Քատակի հնդուկն[2] կոչեն, յապարանս Մարաս-
պանդ կոչեցելոյ: Եւ իրրեւ եմուտ՝ ստուգեաց զը-
տեղւոյնէն և զտանուտեառնէն. բախեալ գկուրծս՝
հեծելով ասէր. «Վայ ինձ, եղուկ եմ ես, ո՞րպէս
հրապուրեցայ ի կախարդացն, որք ըղձային ինձ ի
Հնդիկս՝ Մարասպան տեղւոյս ըմբռնեալ: Եւ արդ
ահա եհաս ինձ ըստ բանի նոցա՝ ցնորսք, այլ ոչ
ճշմարտութեամբ»: Եւ սպասեալ գնա առ այն օր՝
ի վաղիւն բառնային սրով զղլուխն, բարձեալ ըզ-
չարն ի միջոյ: Նոյնպէս և զեղբարս իւր՝ կաւատ
արքայ յոտից և ի ձեռաց անպիտանս արարեալ՝
կամէր խեղութեամբ չնորհել նոցա կեանս. ապա
յամբաւանութենէ բազմաց՝ բարձան և նոքա սը-
րով: Եւ ինքն կալաւ զտեղի Խոսրովու հօր իւրոյ
թագաւորութեանն:

ՃԶԳ.

ՀԱՑՈՒՆԵԱՑ ԽԱՉ

Գարձաւ (Հերակլ) յաշխարհն Հայոց, ունելով
զնչան խաչին առաջի իւր. և եկեալ բանակեցաւ
ի դաշտին Գևրատայ[3], մերձ ի քաղաքն Մանազտրուկ

1. Վախէն կարծէր թէ սուրն գլխոյն վրայ կ'իջնէ:
2. Թուի Հնդկի տուն նշանակել:
3. Վասպուրականի Արտազ գաւառին կողմերը:

Շաւարշայ[1]: Եւ եկն գարձեալ տիկինն Սիւնեաց[2]
ընդ առաջ արքային, և խնդութեամբ երկիր եպագ
արքայ Խաչին. և բերեալ պատարագս բազումս ա-
ւանել քան զառաջինն: Եւ ասէ ցնա Հերակլ ար-
քայ. Ո՞վ տիկին դու, (բազում) ծախիւք աշխատ
եղեր, և արդ խնդրեա յինէն և տաց քեզ փոխա-
րէնս: Եւ ասէ տիկինն Սիւնեաց. Ո՞վ արքայ, ոչինչ
պիտոյ է ինձ ի քէն: Եւ ասէ արքայ. Ո՞րչափ մեծ
իցես դու քան զիս՝ որ զաշխատութիւնս քո տա-
րայց զանձամբ իմով. խնդրեա յինէն աշխարհս
ինչ, և կամ գանձս ոսկւոյ և արծաթոյ, ձիս և ջո-
րիս: Եւ ասէ տիկինն. Ոչինչ առնում ի ձեռաց
քոց. այլ եթէ գոյ չնորհս առաջի քո, առացից
թէ ունմ նման ես դու կամ ես: Ասէ արքայ. Այո՛:
Ասէ տիկինն. Նման ես դու, արքայ, առն ճանա-
պարհորդի, և ես նման եմ օթեւանաւոր ասպնջա-
կանի, որ առեալ ընդունելի զեկեալսն յուղւոյ. և
զինչ և լինիցի պատրաստեսցէ առաջի նոցա, և յա-
մենայն զօրութենէ իւրմէ կերակրէ զուղեւորսն.
իսկ նոցա հանեալ ի մէթերից իւրեանց՝ տայցեն
ասպնջականին: Եւ արդ, տէր իմ արքայ, եթէ
գոյ չնորհս առաջի քո, ի պարգեւացդ քոց զոր
ունիս՝ տուր ինձ: Յուրախ եկաց արքայ և ասէ.
Ոչ կարեմ տալ քեզ զոր խնդրեցերդ. և յարեաւ
տիկինն յաջմէ եկաց առաջի արքայ նշանի խա-
չին, և երկիր եպագ արքայի, և գնաց զճանապարհ
իւր: Եւ ասէ արքայ ցմեծամեծս իւր. Այրի սիրտ
իմ յաղագս բարեաւոհմ և հաւատարիմ տիկնոջս
Սիւնեաց. քանզի բազում ծախս հանեալ ի դրան
իմում, և գարձեալ գնաց տրտում և ունայն: Եւ
անդ էր Յոհաննէս, այր փիլիսոփայ և սուրբ, և սիրէր

1. Սովորաբար Շաւարշան կ'ըսուի, համաձայնելով
շաւարշաւան. հին Հայկազանց մէջ յիշուի Շաւարշ
աղգապետ մի:
2. Այս տիկնոջ անունն Բիւրեղ կոչուէր, թերեւս
ըստ գրուանաց:

զնա արքայ. և ասէ Յոհան ցարքայ. Տէր իմ արքայ, զիաւդ ոչ կատարեցեր զՀայոցուածս նորա. և ասէ արքայ. Իսկ արդ զիաւդ կատարեցից. սուր մերձեցուցանել ի կենսակիր փայտ խաչին: Եւ ասէ Յոհան ցարքայ. Ա՛րա զոր ասեմն. դիր սուր ի պահարանի սրբոյ նշանին խաչի Տեառն. և ասա ցաիկինն, զի աղօթս արասցէ. եթէ կամք լիցի սրբոյ նշանին՝ տացես նմա մասն ձեռամբ Հոգւոյն Սրբոյ: Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի արքային. յղեաց և դարձոյց զկինն. և եկեալ եկաց առաջի նորա: Պատասխանի ետ արքայ և ասէ. Ո՛վ կին, մեծ հոգս եղեր ինձ դու, և արդ դնեմ սուր ի պահարանի սրբոյ նշանին Քրիստոսի, և դու առեալ զքահանայդ եպիսկոպոսիւք, և արասցուք աղօթս հսկմամբ գիշերոյ. և եթէ հաճոյ իցէ Տեառն Աստուծոյ՝ տացէ քեզ մասն, ըստ հաւատոց քոց: Եւ երկիր եպագ տիկինն արքային: Յայնժամ հրամայեաց արքայն բերել զնշան խաչին և բացեալ զարկղն ուր կայր փայտն՝ ի սկեւռինն[1] ոսկի, և եդեալ դանակ ի նմա կնքեաց զնա մատանեաւ արքունի: Եւ եղեւ ի մտանել առեւտն եկեալ առաջի սրբոյ նշանի խաչին՝ եպիսկոպոսունք երկոտասան և բազում քահանայք, միաբան բազմութեամբ, նա և Յոհան Մայրագոմեցի, և հսկեցին զգիշերն ամենայն խնդրուածովք և սաղմոսիւք, մինչեւ ցառաւօտն. իսկ թագաւորն բացեալ զոսկի պահարան խաչին, և ահա տեսանէր մատունս երկու հատեալ ի փայտէն սրբոյ. և հիացան զարմանալեօք ընդ հաւատս տիկնոջն. և ասէ թագաւորն. Ո՛վ կին դու, մեծ են հաւատք քո: Եւ երանէին ի վերայ եղելոցն, և ասէին միաբան. Երանի է վիճակի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի: Եւ առեալ գնաց տիկինն զոր չնորհեցաւ նմա Աստուածոյ զնշան խաչին: Եւ իբրեւ գնաց ընդ ճանապարհս, անցեալ ի

1. Σκῆπος, աման, իսկ սկեւռին թուի σκευόφορον, պահարան:

դաշտին որ Հացոռնեաց կոչի, և մինչդեռ երթային զճանապարհսն, յանկարծակի նստաւ ջորին յոռում էր նչան խաչին յոսկիապատ կառն. և ոչ եղեւ հնար շարժել զնա, նա և ոչ եպիսկոպոսունք և քահանայք: Ապա առեալ տիկնոջն զսկեւռինն ոսկի ի գիրկս իւր՝ յորում էր նչան խաչին, և ոչ կարաց շարժել ի տեղւոջէն, և յոգւոց հաներ և լայր, և յորդահոս հեղոյր զարտասուսն և ասէր. Տէր Յիսուս, ողորմեաց ինձ. և արդ զի՞ զրկես զիս ի ցանկալի գանձուցս զոր քեզէն աւանդեցեր ինձ. զի կամիմ տանել զնա ի բնակութիւն հարց իմոց: Եւ լուա լինէին իրրեւ ժամ մի, և ապա սկսաւ տիկինն լալագին ասել. Ով տէր Աստուած իմ, դու նոյն տէր ես, և այս սովորութիւն է քո որպէս ասացեր. Ամէն վաստակեացին և այլք կերիցեն զվաստակս նոցա: Եւ ահա եկն այր մի միայնակեաց, որ էր ի լերինն բնակեալ, և ասէ ցտիկինն. Ո՛վ բարեպաշտուհի, հրամայեաց Տէր Աստուած բնակել սրբոյ նչանիդ յայսմ տեղւոջս: Եւ ապա լուեալ ետ փառս Աստուծոյ. և չինեաց վայելուչ վկայարան ի տեղւոջն. և գնեաց զաւանն Հացուռնեաց և զՊաւնդ[1] աւանին, և ետ ի վանս նչանի խաչին, և ինքն գնաց յաշխարհն Սիւնեաց, և անդ պատմէր զմեծ աքանչելիսն Աստուծոյ և զօրութիւն սրբոյ նչանին. ամ յամէ ոտն մեծ մեծ կատարէր սրբոյ խաչին, ի փառս Աստուծոյ:

1. Թուի, աւանին չորս բոլոր սահմաններն:

ՃԶԳ

ՍԱՍԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՈՒՄՆ ԵՒ ԾԱԳՈՒՄՆ ԱՐԱԲԱՑԻՈՑՆ[1]

(Ը. ԿԱՂԱՆԿ. Բ. ԺԳ.)

Լերինք մշանջենաւորք և ծովք անդնդայինք սահմանեալք՝ հնազանդեալ կան բանին Աստուծոյ. քանզի վերնատաք հրամանն՝ յորժամ հայի յերկիր՝ դողացուցանէ զնա, և ի մերձիլն ի լերինս՝ ծխին: Որպէս և այժմ ահա, յերեսաց Տեառն՝ բարձրացեալ բլուրքն հարթեալ հաւասարեցան, և ալէփարթամ խորոյն ջրայեղց բանութիւնք՝ անդէն յինքեանս սուզան: Զի ահագին փառք Պարսից տէրութեանն՝ խոնարհեցաւ. զանբաւ խրոխտ բարձրութիւնս նորա՝ խորք ծածկեցին. լռեցին թեւաւոր արձանք խորոց՝ ի հողմուտոյց եռանդմանէ. և փուչք ագարակի՝ օգասլաց թռչմամբ եկեալ տաղաւարեցան ի վերայ մկանանց լայնատարած ծովուն: Զի, որպէս ջուրք բազումք կոհակաշարժ բանութեամբ ծովասոյզ առնեն զերկիր, նոյնպէս յերբեմն ժամանակի թագաւորք Հառմոց՝ ամբոխեալ զօրօք հիւածածուկ զընդհանրական աշխարհիս առնէին բազմութիւնս. իսկ այժմ այնր աթո-

1. Մատենագրով Սասանեանց չորս հարիւր տարի հզօր բանակալութիւնը և առանձին Հայոց վրայ, և աւելի հզօր սերտպետութեան մի (Արաբացւոց) զանունք նուաճելը, և Հառմայեցի կամ Յոյն կայսեր (Հերակլի) սասնցմէ վախելով՝ յետ քաշուիլը, չատ վսեմական կերպով զայն բացատրէ հեղինակս: Դիտելի է և ըզգուշութիւնն՝ յայտնապէս չանուանելու զԱրաբացիս՝ իբրեւց ծանօթ իշխանութեանն անուամբ, այլ միայն Հարաւացիներ կոչելով:

ռոյ ամբարձեալ զօրութիւնքն այնքան ի վեր ցընդեալ դիման, մինչ զի որք միանգամ ընդ ձեռամբ նորա էին մարդկային անտառք՝ գնացեալ յարեւեան ընդ հովանեաւ այնր, որ Գէդէոնեան դժնիկին էր պատաղիչ[1], զոր՝ ի նոսա բարձեալ բռնաւորաց չառաւիղքն՝ խլրտել անգամ ոչ կարէին: Զի իբրեւ հասս քօշն արեւմտեան[2], թէ դարձոյց Տէր զօգնականութիւն ի սրոյ նորա, և կինեն վայրենի գազանանալ փշրել զեղջիւր նորա, առեալ պղծումն ժամանակին ըստ կանխատաց մարգարէութեանն և խոստմանն Աբրահամու, եթէ. «Զեռք Իսմայելի յամենեսին, և ձեռք ամենեցուն ի նա»: և եթէ, «Աւազք նորա հուր ծախիչ և վերջ նորա բոց բորբոքեալ»: յայնժամ առեալ կայսերն Հառմոց զսինկքորան զօրացն՝ աճապարէր ընդ ծով և ընդ ցամաք՝ անցանել ի սահմանս հեռաւորս կղզեացն արեւմտից: Այն վեցերորդ ամ էր հարաւայնոցն[3] փոխելոյ զթագաւորութիւն իւրեանց յաշխարհն Ասորեստանի. զի թողեալ զերկիր ազախնոյն՝ արկանէին զաթոռ տէրութեանն ի Դամասկոս: Որոյ նստեալ անդ՝ սկսանէր չարչ զիւրեւս յալ և յահեակ ծծել զուղեղ երկրի. քանզի տուաւ նմա լայն և ընդդիմակաց զօրութիւն, աշխարհավար իմաստ, երկրավար քաղցրութիւն և հեզութիւն մարդկային. ուստի չորիւքս այսոքիւք չորից անկեանց աշխարհիս հաստարակապէս եկաց իշխան:

1. Գեդէոն Հրեից դատաւորին որդւոյն՝ Յովաթամայ առակը յիշեցընէ (Գիրք Դատաւ. ԺԹ. 15). Ծառերն ուզէին իրենց թագաւոր դնել. պտղաբեր ծառք հրաժարեցան. յանձն առաւ դժնիկն պատաղիչ, որ է բոյսերուս վրայ պղպեղ և խղդող փշատ թուփն, և կ'ակնարկէ Արաբացւոց պետութեան:

2. Յունաց կայսրն:

3. Արաբացւոց կամ Ամիրապետաց (Խալիֆայից) տէրութեան:

ՃՁԼ

ՀՈՆՔ ՅԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ, ԵՒ ԳՆԱԼՆ ԱՌ ՆՈՍԱ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՂՈՒԱՆԻՑ[1]

(ՄՈՎՍ· ԿԱՂԱՆԿԱՏ· Բ· ԺԴ·)

Իրրեւ անցին ընդ ձորս լերանց և թափեցան ի գեղեցկատես վայելուչ հարթհաւասար յուռթի դաշտըն Ուտի գաւառին, ոչ կարէին իմանալ նշմարել զտեղին ընդ որ անցանէին, յանթիւ բազմութենէն զօրացն Շաթայ[2]. այլ որպէս երբեմն ի մէջ կարմիր ծովուն, նոյնպէս և սահմանք անթիւ բանակին՝ մինչեւ ի հասանել նոցա ի դուռն արքայորդւոյն, պարսպէին զնա ընդ աջմէ և ընդ ահեկէ: Եւ գոյն զնա բանակեալ ի նմին գաւառի՝ ըստ հիւսիսոյ կողմանէ, մերձ ի մեծ քաղաքն Պարտաւ[3], ի մէջ յորգաբուղխ մօրձուրցն[4]: Անդ տեսաք ըզբազմութիւն նոցա ի գուճս ի վերայ ծնգաց, ըստ նըմանութեան փայտանգաց ծանրաբեռն ուղտուց· իւրաքանչիւր կանք մի լցեալ մսով՝ յանսուրբ անաստնոց, ըստ նմին և սկտեղք, յորում թանային յուտելն իւրեանց յաղագուր, և զբաժակս և զըմպելիս արծաթեղէնս՝ քանզակատնս յոսկի համակեալս, զոր բերեալ էին յաւարէն Տփխեաց· ընդ նմին և

1. Պարերով առաջ երեւցեր էին այս հիւսիսաբնակ բարբարոսք՝ մեր երկրին սահմանաց վրայ, բայց այս ի դարուս՝ չատ մեծ բազմութեամբ կոխեցին Վրաց և Աղուանից կողմերը· ուր ըրածնին և եղածն պատմէ երկարօրէն ժամանակակից պատմիչ մեր Մ· Կաղանկատուացի:

2. Հանաց իշխանապետն կամ թագաւորին որդին:

3. Երբեմն Աղուանից մայրաքաղաք, հիմայ այլ Ջանօթ Պերտակ կոչմամբ:

4. Ցեխոտ աղմախառն ջուրեր:

զըմրոյս եղջերեղէնս և զշորամաձեւս[1] փայտեղէնս մեծամեծս, որով զարգանակն լափէին. և նոքա պարարտակ անասնոյց[2] անլուայ աղտիւքն յախտուն յանզգայս, ի մէյ բաժակէ՝ երկու երկու կամ երեք երեք ի նոցանէ՝ զանապակ գինին կամ ըզկաթն ուղտուց և ձիոց՝ յանյագ որովայնս իւրեանց իրրեւ ի տիկս ուռուցիկս՝ լափէին: Ոչ օրինաւոր մատուռակք էին առաջի նոցա և ոչ սպասաւորք ի թիկանց կողմանէ, և ոչ անգամ որդւոյ թագաւորին, բայց գինաւորք՝ որք զգուռն նորա պահէին չօրջանակի, ասպարափակ նիզակախիտ զգուշութեամբ: Եւ իրրեւ մուծին գնոսա ի ներքս՝ ըստ մի գանապահն մինչեւ ցերկրորդն. և զընծայս ողջունին բարձեալ ի բակեայ մերոց՝ զկնի կաթուղիկոսին, ապա ընթացան ընդ առաջ նորա և հրամայեցին ամենեցուն՝ փոխել ոտն ոտն և երկիր պագանել երիցս անգամ. և զայլսն արգելեալ յերկրորդ զրանն. և փոխեալ ի նոցանէ զժխտսն ի բազուկս իւրեանց, տարան զկաթուղիկոսն միայն ի ներքսագոյնն, ուր նստէր արքայորդին: Եւ ի յանդիման լինելն՝ երկիր եղեալ կաթուղիկոսն ի վերայ երեսաց իւրոց և մատոյց նմա զպատարագն, նոյնպէս և մեծամեծացն ամենեցուն: Եւ ընկալեալ ի ձեռաց նորա, և յայժ բերկրեալ, ի տեսանելն զնա հանդերձ բազմութեամբն երթեալ առ նա, նստել հրամայեաց նմա մերձ առ ինքն ի խորանի անդ. և հայեցեալ ընդ երեսս կաթուղիկոսին իբրեւ ժամ մի՝ ասէ. «Հայր եմ ես դու, և տեսիլ քո իրրեւ զտեսիլ Աստուծոյ. և զի՞ յամեցար գալ առ իս, զի ոչ լինէր այդ չատ տագնապի ի զօրաց իմոց՝ աշխարհի քո: Եւ արդ ի գալդ քո՝ ելցեն հրամանք յերեսաց իմոց՝ առ ամենայն զօրս զօրութեան իմոյ, զի դարձցին անդրէն ի բանակս

1. Թաւի երկայն վըզով աման ջրոյ, որ խախաջէ կամ կարկաջէ անար մէջ:

2. Թէ ոչ սխալ՝ անծանօթ բառ մի:

իբեանց, և ոչ եւս ելցեն ասպատակ սփռել ըստ սահմանս երկրի քո. և բերանով քո հնազանդ լիցի ամենայն զօրութիւն իմ. և ես ուխտեցից քեզ երդմամբ յարեւ հօր իմոյ՝ Ջևրուհ Խաքանայ[1], զի զոր ինչ խնդրեսցես յինէն՝ անվրէպ կատարեցից։ Եւ արդ, պատուէր տալիր յամենայն իշխանութեան քո, զի դարձցին յիւրաքանչիւր տունս և ի վաստակս իւրեանց և ի գործս ձեռաց։ Եւ ասպատակեցից ես ընդ աշխարհս, որք չուրջ զքեզ. և բնաբեալ հանգուցից զաւարն և զկապուտն ի սահմանս քո. և փոխանակ միոյ բեկմանն՝ կրկին հատուցից քեզ՝ զլիութիւն մարդոյ և անասնոց. զի ստացաւ հայր իմ զաշխարհս զայսոսիկ երեսին՝ Աղուանից, Լըբինաց և Ջողայ[2], յիւր սեպհական ժառանգութիւն յաւիտենական»։ Յարեաւ կաթուղիկոսն և երկրպագեալ նմա՝ ասէ. «Ծառայ քո և հօր քո եմք՝ ես և ամենայն բնակիչք երկրիս. խնայեա այսուհետեւ յանձինս ծառայից քոց, և դարձո զսուր քո ի մէնջ, զի քեզ ծառայեսցուք և հօր քո, զոր օրինակ ծառայեցաք Աստուածականից։ Եւ զայս ասացեալ, զօրութեամբ սրբոյ խաչին՝ շինէաւ ցասումն բարկութեան գազանաբարոյ իշխանին և ամենայն նախարարացն և զօրացն. և եղեն զգօնացեալ իրբեւ զոչխարս և իբրեւ զգօրս երկիւղած Աստուծոյ, առ սիրելի եղբարս և առ համաչունչ քաջակիցս և դրացիս։ Եւ կարգային զանուն կաթուղիկոսին ըստ անուան արքայորդւոյն իւրեանց, Աստուած Շաթ և Աստուած կաթուղիկոս, և զանուանս երթևեղոցն ընդ նմա՝ Սիրելի եղբարս։ Այդպա հրամայեցաւ նոցա նստել՝ յատել ընդ ինքեանս. և իջուցին զնաւս ի վերայ ծնգաց, ըստ օրինի իւրեանց, եդեալ առաջի զամենս ի մսոյն զղծոյ. և

1. Խաքան իրենց լեզուաւ նշանակէր մեծ թագաւոր, կամ թագաւորաց թագաւոր, իբրեւ Խանից Խան կամ Շահան շահ։

2. Յիշուած են առաջ, տես 132. 116։

ոչ կամեցան ճաշակել, զի էին աւուրք պահոց քառասնորդացն. և թոյլ տուեալ ըստ կամաց ծառայիցն Աստուծոյ, բարձին զվիսն և բերին եդին հացս սակաւս անօսրուններ՝ խաբչեալս ի տապակի. և գոհացեալ զԱստուծոյ օրհնեցին, բեկին, կերան և հաճեցին զվիսս նոցա։ Եւ յարուցեալ յընթրեաց անտի՝ հրամայեաց յուզարկել զկաթուղիկոսն հանդերձ իւրայնովքն, զի երթիցէ ի քաղաքն և հնչուսթեամբ ազգի ի տան իւրում։...

ՃԶԶ

ԱՌՈՒՄՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԱՑՆ ՏՓՂԼԵԱՑ ԵՒ ՊԱՐՏԱԻԱՑ Ի ՀՈՆԱՑ

(Ր. ԿԱՂԱՆԿ. Բ. ԺԴ.)

Անկարծակի երկրորդեաց հնչեաց հոգմն հիւսիսային, և բախեաց զծովն մեծ արեւելեան. եկն եղ գազանն ապականիչ հանդերձ արիւնարբու կոբեամբն իւրով՝ Շաթն կոչեցեալով, որ նախ հաստատեր զերկոսս իւր ընդդէմ Վրաց աշխարհին՝ քաղաքին Տփղեաց. և ոչ զոք գտեալ ի ներքս յառաջին քալ արանցն, տեղի գտեալ սփռելով զոխան մ'ներեալս՝ սակս առաջին նախատանացն ի նոցանէ, պաշարեաց զքաղաքն և սկսաւ մարտնչել։ Եղեր զրնակիչն որ ի նմա, որք զարձան ընդդէմ նորա. և յայժ աշխատեալք որպէս յաւուրս երկուց ամաց, ի զուր ջանացին ընդդէմ հրամանի կատարածի[1] կենայ և հեղման արեան իբրեանց, որ անդ էր դիպելոց։ Յայնժամ գոչեաց գազանն առ հագին ի վերայ նոցա, որսացաւ և հեղձոյց բաւա-

1. Իբրեւ թէ ի զուր աշխատեցան՝ բաղդին դէմ, որ վճռեր էր իրենց կատարածը։

կան կորեանց իւրոց, եւ ի զմորիս իւր որսով[1], եւ զդօրս իւր՝ յափշտակութեամբ. որք վերացուցեալ զսուրս իւրեանց՝ առհասարակ դիմեցին ի վերայ պարսպին, ուր զմիմեամբք դիպանելով այնչափ բազմութեանն՝ վերանային քան զպարիսպն գեր ի վերոյ: Եւ անկանէր սուեր խաւարային ի վերայ եղկելի բնակչաց քաղաքին. լուծան յօդք անգամ նոցա, թուլացան բազուկք նոցա, մատնեցան ի պարտութիւն, անկան յետս ի պարսպէն, խուճապեալք որպէս ճնճղուկք ըմբռնեալք ի գործիս որսորդաց. ոչ ոք կարելով ժամանել ի տուն իւր՝ ձայն տալ աշագին գաւժին, հրամայել սիրելւոյ ամուսնոյ իւրոյ, գթալ ի ծնունդս որովայնի իւրոյ, կամ զմտաւ ածել ծնողաց գծնողական գութս. այլ պակուցեալք չանային ծածկել զանձինս իւրեանց, ամանք ի վերայ տանեաց, ամանք ի մէջ խաղողաց[2]. իսկ բազումք դիմեցին ի սուրբ յարկս եկեղեցեաց՝ բուռն հարեալ զեղջերէ սեզանոյն: Եւ ելանէր գոչիւն հառաչման նոցա՝ ըստ նմանութեան բազմամբոխ հօտից մաքեաց առ գառինս, կամ մօր առ մանուկ իւր. և գՀետ նոցա հնձողք անողորմք. որոց ձեռք իւրեանց հեղուին զվտակս արեանց. ոտք իւրեանց կոխէին զդիակունս, և աչք իւրեանց տեսանէին զդիւթաւալս իրրեւ զՀեղեղս կարկըտի:

Եւ յորժամ հատան ձայնք ողոց և վայից, և ոչ մնաց ապրեալ և ոչ մի, ապա գիտացին և նոքա՝ եթէ յագեցան սուրբ նոցա: Եւ ածին զերկոսին իշխանան, զմին պետ կողմնակալութեանն Պարսից, և զմիւսն՝ ի բուն բնակչաց աշխարհին Վրաց. որք իրրեւ ածան ձերբակալք՝ առաջի թագաւորին, հրամայեաց փորել զաչս նոցա. փոխանակ զի կոյր նկարեցին զպատկեր նորա՝ ի նախատինս դնա. և դառն չարչարանօք հնձամահ արա-

1. Իբրեւ գազան մի որ յափշտակէ, և սրսը բերէ իր ձագերուն՝ անտառաց մէջ:
2. Ջուր անցընելու չինծաւ նեղ ճամբայ:

բեալ զնոսա, ողջէն[1] վարեցին զմորթ նոցա յանդամոց նոցա, և պրկեալ կանգնեալ լցեալ զնոսա խոտով՝ կախեցին ի վերուստ զպարսպէն: Ցայնժամ ձեռս արկին յարկեղս գանձուց մթերեալս, և ծանրաբեռնեալ ամենայն բազմութեան զօրացն, բերէին դնէին առաջի բանաւորին իւրեանց՝ չեղջս չեղջս և կոյտս կոյտս. և այնչափ յաճախեալ բերին առաջի նորա, մինչեւ ձանձրացեալ հայել տեսանել զանհամար թիւ տաղանդաց ոսկւոյ և արծաթոյ: Իսկ զդարդս եկեղեցեաց զականակապ զմարգարտայեռ սպասուցն՝ ո՞վ իցէ բաւական առ ի պատմելոյ:

Աբդ, իրրեւ կատարեաց զկամս իւր և հրամայեաց բառնալ անտի զաւարն ամենայն, ինքն չուեալ հանդերձ գանձիւքն՝ դառնայ ի տեղի իւր. և թողեալ զօրս պատերազմողս ի ձեռս որդւոյն իւրոյ Շապայ, հանդերձ դասատիարակաւ՝ արամբք քաջօք, երթալ հրամայէր ի սահմանս Աղուանից: Եւ պատուիրէր նոցա զայս ինչ. Եթէ ելցեն մեծամեծք և առաջնորդ աշխարհին ընդ առաջ որդւոյն իմոյ, և տացեն ի ձեռս զաշխարհն իւրեանց՝ ինձ ի ծառայութիւն, և ընդարձակեսցեն զքաղաքս և զամրոցս իւրեանց և զմեծաւոս առաջի զօրաց իմոց, թողացուցէք և գուք նոցա՝ կալ և ծառայել ինձ, ապա թէ ոչ՝ մի թնայեսցէ ակն ձեր ի նոսա յամենայն հասակ արուի. և զմատաղատունկս աւրուացն և զազգս իգականացն՝ պահեցէք ինձ և ձեզ ի ծառայութիւն և յաղախնութիւն: Եւ մեկնեալ ի միմեանց զօրացն՝ արարին ըստ բանին այնմիկ:...

Յանկարծակի պատեաց մէկն և մեռանիցն զամենայն երեսս երկրիս մերում առ հասարակ[2],

1. Գիտենք որ դեռ ողջ էին՝ կաշինին քաշեցին հանեցին անոնց մարմնոց վրայէն:
2. Կաղանկատուացին քնիկ Աղուանից երկրէն ըլլալով, մեր երկիրը կոչէ զայն, ուր որ ասպատակեցին Հունք՝ յետ թալնելու և առնակոս ընելու զԿիլիկս:

զդաշտս և զղլուխս լերանց, զբլուրս և զխորս ձո-
րոց և ոչ ուրեք մնաց քայլ մի ոտին յամենայն
սահմանս երկրի մերում, ի չէնս և յագարակս, ի
տունս և յանցս ճանապարհաց: Բերան ամենեցուն
կարդայր վայ, վայ. գոչիւն բարբարոսացն ոչ լսէր.
և չէր՝ ուր ոչ ելանէր սատակիչ բարբառ չար թըշ-
նամեացն. և այն ի միում աւուր և ի միում ժա-
մու: Քանդի բաժանեցին յառաջագոյն վիճակաւ
ըստ գնդից գնդից զգաւառս և զչէնս, զհեղեղատս
և զգետս, զաղբիւրս և զմօրս, զլերինս և զդաշտս,
յամենեսին միապէս ըստ ժամադրին սիրեալ զաս-
պատակն աշխարհակալ. և ի ծագաց մինչեւ ի
ծագս գոգային սահմանք մեր: Ապա այնուհետեւ
անդ էր տեսանել նմանապէս կատարել բարբառոյ
մարգարէին, եթէ. «Ձոր սրինակ փախուցու մարդ
յերեսաց առիւծու և պատահեսցէ նմա արջ. և
գերծեալ ի նմանէ՝ անկանիցի ի տուն իւր, և յե-
ցուցեալ զձեռս իւր յորմն՝ հարկանիցէ զնա օձ».
այնպէս հասին ի վերայ մեր աւուրքն այնոքիկ:
Ձի յերեսաց սրոյն՝ որպէս յահեղ առիւծէ՝ ի մա-
գիլ գիշաքարշ բեկանող արջոյն, ի ժանիս սովոյն
մատնէին. ի միասին լքեալք, յօդալոյծք, սուա-
բեկք, ակամայ դիմեալք ի գերութիւն՝ որպէս ի
չարութենէ օձից, ի յահէ տեսլեան դառնաչունչ
թշնամւոյն՝ խածանէին:

Ապա ի ծածկել զմեզ ծովային ալեացն այնո-
ցիկ, զհետ մտեալ կաթուղիկոսին մերոյ (Վիրոյն),
հանին զնա ի տեղւոջէ ապառաժ վիմայատակ լե-
բանցն, ի գեղջն որ կոչի Կողբ—ագարակ. և թողեալ
նորա զկաճ և զկարասի իւր և զսպաս գանձուցն,
հեծեալ ի ձի՝ փախստական լինէր առաջի նոցա:
Եւ ոչ ոք կարաց ընդ նմա ելանել ի սպասաւորաց
իւրոց, բայց մի սմն յ'ապա եկաց աշխարհիս՝ ա-
նուն նորա Գադ—վըշնասպ, այր յաղթանդամ և
զօրեղ, ի տոհմէ գնդապետութեան ազգին իւրոյ.
նա միայն ժամանեաց ելանել ընդ նմա: Եւ ոչ
արգելին զարշաւանս թշնամւոյն՝ վիմախառն ձո-

րախիտ ապառաժք լերանց Աղցախական ամուր
գաւառացն. այլ գործեցին մեզ մեր առաջի նոցա՝
զդժուարինսն ի դիւրինս. առանց գայթակղութեան
էին գնացք ընթացից երիվարաց նոցա ի վերայ
գլխոց լերանց: Հասին զկնի կաթուղիկոսին թըշ-
նամիքն. լսեցին զաղեղունս ի վերայ նորա՝ յիրս
դառնութեան. յայնժամ աքանչելի չնորհք սուրբ
խաչին, զոր ունէր ընդ իւր, անկրպտեաց ի մէջ
նորա և թշնամեացն. և ոչ մխեցաւ ի նա ձեան
յաւուրն յայնմիկ: Եւ ի նահանջել աւուրն՝ գեր-
ծեալքն ահաւիկ խնդրէին գնաւար գիշերոյն ա-
ռաւել քան զլոյս տունկնեան. և ի գիշերին յայն-
միկ ընդարձակէր ճանապարհն փրկութեան մեծի
հայրապետին և ամենայն ապրելոցն:

ՃԶԻ

ՍՈՎ ԵՒ ՍՐԱՏՈՒԹԻՒՆ ՅԱՐՇԱՒԱՆՍ ՀՈՆԱՑ

(Մ. ԿԱՊԱՆԿ. Բ. ԺԶ.)

Պարտ և արժան է մեզ յիշել վասն ժամանակի
նեղութեան սովոյն, զի եկն եհաս եւաթոյց ի ներ-
քոյ ոտից մերոց զմուկն ծախող, և եկեր զամե-
նայն բոյսս և սպառեաց զամենայն պտուղս ան-
դաստանաց մերոց: Ապա ի մի վայր գումարեալ
սուկալի զօրավարքն երեքին՝ սովն, սուրն և մահն
գործակից նոցա, զոյգընթացեալք ընդ միմեանս
խուճապէին, անխնայ վիրաւորէին և դիաթաւալ
տարածանէին. ոչ արժանի լեալ հաղորդութեան
յեսին թոշակին քաւութեան. զի արգելոյր սուրն,
հեղգայր սովն [1], և հեղձուցանէր մահն: Ո՛հ գառ-
նութեան ժամանակիս այսորիկ. եղկելի են աչք
նոցա՝ որք տեսին զվիճն զայն մեծ: Թշուառացեալ

1. Անօթութիւնն երկար քշելով չարչարէր խեղճերը:

զերծեալքն աղերսէին լերանց, եթէ անկերուք ի վերայ մեր, ահաբեկեալք և ի տերեւոյ եւեթ խարխափելոյ՝ սրտաթափք: Եւ ի ժամանակի նեղութեան յաւուրս քառասնորդաց պահոցն՝ յախտէն անխտիր մերձեցեալք ի գէշ մեռելոտեաց անսրբոց, այլ և զարմատս բանջարոց, և հանեալ զկեղեւս ծառոց, և զծայրս ոստոց ծամէին, և ոչ լինէր օգուտ ուժի ինչ ուտելն զոյնս: Նա և զչոր խիզ խաղողոյ[1] տայր անձանց թշուառականացն ազալ և ուտել. առ որս բազմութիւն սովածացն ժողովեալ ի մի վայր՝ դիմէին ի վերայ այնպիսեացն, յափըշտակէին ի նոցանէ, պատուհասակոծ առնէին. և այնպէս սատակէին և նոքա ընդ չքաւորան. և միշտ քաղցեալ կային աչքն յագահել և ի հանել զընկերին: Լուայ ի հաւատարիմ մարդկանէ, եթէ տեսաք մեք զոմանս ուտել զմեռելոցն անդամս, զբազմաժամանակեայ մորթս արկառոց և զպարկս ծխակերս, նա և զօդս[2] կօշկաց հնացեալս՝ եփէին և ուտէին: Զայլ օրինակ մերոյ փորձութեանս ոչ կարեմք գտանել, բայց միայն զաւերն Երուսաղեմի ի Վեսպիանոսէ և ի Տիտոսէ. կոխեցաք զդիակունս սովամահաց՝ սեւացեալս և ուռուցեալս ընդ երեսս գաշտից՝ իբրեւ զքարինս հեղեղատի. առ որս կատարէր բանն մարգարէական, եթէ, « Զթաղումն իշոյ թաղեսցի, և հաց սգոյ մի՛ գոցի ի տան նորա »: Եւ ի ժամուն յայնմիկ ի խառնել գալարուցն՝[3] առաւել էր թիւ սատակելոցն քան զամենայն աւուրս ձմերայնւոյն:

Բայց որ կարեւոր է ի լսել և ի միտ առնուլ՝ այս է, զի մօտ ի վախճան ժամանակի կատարածի սոցա, այլ իմն ախտ հիւանդութեան տարածեցաւ ընդ սահմանս աշխարհիս, որ ոչ էր ըստ բնութեան

1. Անշուշտ խաղողի չորցած կուտերն: Ի Բժշկարանս յիշուի Խիզ Գաղի, բայց Գաղի խէժ նշանակէ:
2. Օդ և կօշիկ՝ երկուքն այլ ասից աման նշանակեն:
3. Խառնիլ? գալարուոյ. գուցէ սխալ ըլլայ առջի բառն, բայց իմաստն է, երբ սկսաւ գալար խառն երեւնալ ի գարնան:

այլոց ցաւոց. զի անկեալքն յախտէ անտի՝ անդադարեալք իրրեւ զաւուրս ամաոյ միոյ կամ երկուց՝ կատկատիլք կղէին գատամունս, յեղուին զաչս իւրեանց[1], ոչ գնչան հիւանդութեանն իմանային, և չուր խնդրել ոչ գիտէին. ամանք իրրեւ մոլեգին վարսամնահարս[2] եղեալք յանկողնոցն՝ մերկք և խայտառակք ընդ որմս խոսէին և ընդ հողմս կոծէին. այլք՝ զհիւանդապաշտս կսփէին[3]. և թէպէտ ցաւքն ժանտ էին՝ սակայն մահք ոչ գործեցան, զոր առնուանեցին Յաւ խելագարութեան. ծիւրէին սեւացեալք, հալէին մարմինք նոցա, լուծանէին յօդքն, ճաղէին[4] մազք հերացն և մուրուացն. որոց աղբալի սուգ առին զաւուրս բազումս ի վերայ անցից խայտառամահացն[5]. աղաչելով զամենողորմն Աստուած, զի յագուսմն արասցէ անտանելի հարուածոցն:

Ես Վիրոյ՝ Աղուանից և Լփնաց և Զողայ կաթուղիկոս, թողում՝ ասել զայլ ամենայն պէսպէս զաղբալիս, զմարմնոյ սեւութիւնս և զկնտութիւն գլխոց. զի յայսմ եւս յայնի լիցի բանն մարգարէական, եթէ, « Այծից ի վերայ ամենայն հասակաց գքուրձ. ի վերայ ամենայն գլխոց գկնտութիւն. և արարից նմա իբրեւ սուգ սիրելւոյ »: Այսպա իրրեւ ետ Աստուած կատարել զամենայն կամս իւր, յիշեաց գնոսա՝ իրրեւ գՆոյ՝ ի Չարչն հեղեղէ ի տապանի անդ. և գթացեալ ետ նոցա զխնդրուածս նոցա. առաքեաց գլիութիւն յանձինս նոցա, յագեցոյց ըզքաղցեալս, և գկարօտեալս լի արար բարութեամբ. զի վայելեալք զոյնս՝ յաւելցեն ի փառաբանութիւնս Աստուծոյ:

1. Աչուքնին այս կողմ այն կողմ գարձընէին:
2. Պերասաւ՝ պարսիկ բառէն, որ է կաւրծքի ցաւ:
3. Հիւանդք իրենց հոգացող գարմանողներուն գարնէին ծեծէին:
4. Մազերն թափթըփէին:
5. Թուի թէ կերպ կերպ չարչարուիլ և կիսամեռ ըլլալը՝ խայտառակ անուանէ:

ՃԶՔ

ՎԱՍՆ ՎԱՆՈՐԷԻՑ ՀԱՅՈՑ ՈՐ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

(ԱՆԱՍՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ[1])

Ի ժամանակս թագաւորութեան Տրդատայ և ի հայրապետութեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, մեծամեծ իշխանքն Հայոց չինեցին վանորայք ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. որոց անուանք վանորէիցն են այսոքիկ.

Պետրոսի վանքն, որ արտաքոյ քաղաքին է, ի կողմանէ Սելովամայ, որ կոչի Հառաչումն Պետրոսի. ընչիւք և ծախիւք արքունի չինեալ եղեւ:

Պանդայ վանքն, որ սուրբ Կարապետին է, որ յարեւելից կողմանէ ի Զիթենեաց լերինն կայ, նոյնպէս արքունի ծախիւք չինեալ, յանուն սուրբ Կաթուղիկէին որ ի վաղարշապատ քաղաքի, զոր Աղուանք ունին մինչեւ ցայժմ:

Մըժայ վանքն, որ յանուն Սուրբ Քառասնից, զոր այժմ Տաճիկք ունին:

Մերձ ի նա Բատին վանքն Շիրակացւոց, զոր կինդաւորաց վանք յեռայ անուանեցաւ:

Սուրբ Գէորգայ վանքն, ի նոյն կողմն է, զոր այժմ աւեր է:

1. Յօդուածիս վերջն քիչ մի ծանօթութիւն տայ այս գրուխս վրայ, ուրիշ մասամբ մեզի անծանօթ է. Երանելի կոչուիլն յայտնէ արժանաւոր անձ մի ըլլալը: — Յիշուած վանորէից անուանց պատճառքն և չինողներուն չատին այլ՝ անծանօթ են: Իրրեւ նշան մի մեր նախնեաց բարեպաշտութեան և մեծագործութեան՝ հրատարակեցինք զայս: Հայոց ցեղից և գաւառաց անուանքն կըրնան գտուիլ յաշխարհագրութիւնս Հին Հայաստանի, ՀԱՅՐԱՐԱՏ, Միսհական, և այլն. բայց յուշակիս մէջ յիշեալներէն ոմանք չեն ծանօթ:

Ներաւանք, մերձ ի գերեզման Եսայեայ մարգարէին, ի նոյն կողմն Զիթենեաց լերինն, զոր այժմ քակեալ են Տաճիկք:

Խադայ երանելւոյ վանքն, որ է ի Ձորն Յովսաափատու, մերձ ի Գեթսեմանի:

Սուրբ Պողիքարպոսի վանքն, չինեալ Ձորձորդացիսն Հայոց[1] ի հիւսիսոյ կողմն:

Աբծրուենեաց վանքն, որ յանուն Սուրբ Գէորգայ:

Զարեհաւանի վանքն, արտաքոյ քաղաքին:

Մամիկոնեանց վանքն որ յանուն Սուրբ Կարապետին:

Գուգարաց վանքն:

Բդեչխի վանքն չինեալ ի նոյն կողմն, որ կոչի Ս. Սարգսի և Բագոսի:

Սիւնեաց վանքն որ յանուն Սուրբ Գէորգայ, զոր Տաճիկք քակեցին:

Ըռըչտունեաց վանքն, որ ուրկանոց էր Հայոց վանորէիցն, նոյն կողմն:

Խոռխոռունեաց վանքն, ի նոյն կողմն:

Երիցավանք, որ ի Գաւթի գրան է, որ յանուն Սուրբ Աստուածածնի է:

Սուրբ Գևոնդեանց վանքն:

Կրաի վանք, Ձորձորդ Հայոց, յարեւելից կուսէ կայ:

Անձեւացեաց վանքն՝ որ յանուն Սրբոյն Անանեայ, որ է մերձ ի Բեդղեհէմ:

Եւ ի ներս ի քաղաքն՝ Աբշակունեաց վանքն, ի սուրբ Պրոպատիկէ կոչմանն:

Գաղաւունի վանքն որ յանուն Սուրբ Հռիփսիմէի և Գայեանէ, ի մէջ քաղաքին գրանն Յարութեան:

Կամսարականաց վանքն՝ զոր Աբշակունեաց կոչեն, որ յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:

Ամատունեաց վանքն, Սուրբ Սիոնի կողմն է:

1. Եթէ Ձորձորդ Հայոց (Ծոփաց) նախարարն չէ, մեզի անծանօթ է այսպիսի իշխանութիւն մի ի Հայս:

Ա՛յլ վանքն Ամատունեաց, որ հաւատաւորքն բնակէին ի կողմն Սիւնեաց:

Մամիկոնէից վանքն յանուն Սուրբ Կարապետին, ի նոյն կողմն:

Զորս վանք այլ ի Սելովմայ կողմն կայ:

Կարնացոց վանքն, զոր Սմբատ Բագրատունեաց է շինեալ:

Սահատունեաց վանքն, ի նոյն կողման է, զոր Քարուվանք կոչեն, որ է Տեառնեզբօրն՝ զոր ընկալաւ վէմն:

Պալունեաց վանքն, որ է ի կողմն Գալիլեայ լերին:

Ա՛յլ Աղեւացեաց վանքն, կայ ի նոյն կողման:

Զաղակունեաց վանքն ի նոյն կողման է, զոր այժմ Տաճիկք ունին[1]:

Սուրբ Քառասնից վանքն, ի նոյն կողմանն կայ:

Կատայեցոց (Կոտայեցւոց?) վանքն, ի կողմն Զիլենեաց լերին, յորում զինն երանելին՝ ուսոյց (Քրիստոս) աշակերտացն:

Վարաժ(ու)նեաց վանքն, ի նոյն կողմն տաճարին Սողոմոնի:

Վանանդացեաց վանքն, ի նոյն կողմն:

Զատեցացն՝ ի նոյն կողմն[2]:

Մոկաց վանքն՝ ի կողմն Գեղամայ:

Քաղբերունեաց վանքն, ի կողմն Գալիլեայ լերին:

Սահատունեաց վանքն՝ ի նոյն կողմն է:

Մազազեաց վանքն, որ այժմ Հռոմն ունի:

Սուրբ Յոհաննու վանքն, ի գրանն Յարութեան, որ այժմ Վրացիք ունին:

Կողաշ վանքն՝ ի նոյն կողմն, զոր այժմ Հռոմն ունի:

Սպանդունեաց վանքն:

Աչամունեաց վանքն՝ աւերած է:

Արեւելից կուսէ այլ վանք Հայոց:

1. Անծանօթ ազգատոհմ, գուցէ Պաղակունեաց:
2. Անծանօթ է ի պատմութեան և այս տոհմ:

Գերջանայ վանք:

Սիւնեաց վանքն յարեւելից կուսէ:

Ա՛յլ վանք Սիւնեաց ի նոյն կողմն:

Ա՛յլ վանք Սիւնեաց ի Զորն Սաթայի:

Զորրորդ վանք Սիւնեաց, ի Զորն Ցովսափաթու:

Հինգերորդ վանք Սիւնեաց՝ զոր Տաճիկք ունին:

Բատրոյ վանքն որ յանուն Սուրբ Աստուածածնի, որ առ աշտարակին Գաւթի է:

Կաղանդուաց վանքն, ի նոյն կողման է:

Սուրբ Գրիգոր Ամարասայ վանքն:

Արցախայ վանքն, ի հարաւակողմն:

Ա՛յլ երեք վանք Աղուանից, զոր այժմ Տաճիկք (Արաբացիք) ունին:

Ա՛յլ երեք վանք ի մէջ քաղաքին Երուսաղեմի:

Տաշրացւոց[1] վանք՝ որ յանուն Սուրբ Գէորգայ, Արշակունեաց չինեալ:

Եւ այլ չորս վանք մեծամեծք ի Մամիկոնէից չինեալ:

Ամենայն բովանդակ եօթանասուն վանք չինեալ եղեւ յիշխանաց Հայոց ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի տեղիս տնօրինականացն Քրիստոսի և յայլ աստուածակոխ տեղիսն: Եւ զմեծամեծ եկեղեցիքն, զԳողգոթա, զԱնուանդն, զՍուրբ Յակոբն, զՀրեշտակապետն, և զՓրկիչն, զվերնատունն և զՀամբարձումն, զՋաւերն[2] և զԹաչ գիւտն, զԹոբանն Լուսաւորչին, և զաստուածընկալ Գերեզմանն, չինեալ եղեւ ի թագաւորէն Տրդատայ և ի Սրբոյն Գրիգոր Լուսաւորչէ:

Եւ այս ամենայն վանորայքս յերուսաղէմ ի Սուրբ Լուսաւորչէն հաստատեցան. բայց յոլովս ի Ներսիսէ, զոր հրամայեաց չինել ի պատճառս ողջոյն ի փրկութիւն Հայոց: Զոր հայրապետացն տեղւոյն յետոյ ի նախանձ չարժեալ՝ խանգարեցին զամենայն կարգ վանորէիցն. վասն որոյ իշխա-

1. Յանուն Տաշիր փեսայ գաւառի Գուգարաց:
2. Գերեզմանոցի համար չինուածք:

նացն Հայոց եօթն կենդինարս տուեալ թագաւորին Յուստինիանոսի, որ լինի 70,000 դահեկան, թափեցին յիշխանութենէ հայրապետացն զամենայն հայ վանորայսն, եթէ արանց վանք, եթէ կանանց վանք, եթէ միանձանց խրճիթ, անդէն զինքեանս առնելով իշխեցողս[1]: Այս յետոյ անփոյթ արարեալ իշխանացն Հայոց և կաթողիկոսացն, որպէս և զայլ մեծամեծս ի պատուիրանացն անհոգ առնեն, և վանականք որ յԵրուսաղէմ՝ ծայլ և հեզգ եղեն, նոցայն տապալեալ քանդեցան: Իսկ որք պիտանիք և ժիրք և աստուածահաճոյ վարուք՝ զիրեանցն պահեցին սահման հաւատոյ և վարուց, նոցայն դեռ եւս չէն են և հաստատուն: Եւ զյոլով վանորէիցն մերոց՝ յօրժամ առաջնորդք վախճանէին և ոչ լինէր ոք հոգեբարձու՝ որ զայլ ոք կարգէր առաջնորդ Հայոց, ապա ամառպարէին պարբարգունք Երուսաղեմի և Հռոմի: Եւ զարձեալ ելին ինքեանք Հայ վանականքն, ի ծանրութենէ հարկաց Տաճկացն ճողոպրել կամելով, և զայլ իւրեանց վաներն որ ընդ ձեռամբ էր՝ ընդ պարըսպօք քաղաքին՝ կանանց վանքեր արարին և սարկաւագանիս կարգեցին, զի անհարկ լիցին և ազատ, որպէս և զայլ կանանց վաներն: Եւ ինքեանք վանականքն արտաքոյ քաղաքին ելին յայլ տեղիս. և փոխեալ զանուանս՝ զաւառացն և ազատացն ազգացն անուանեցին (յայլոց) անուանս, թերեւս ի նոցանէն գոցեն օգնութիւն և ողորմութիւն:

Այդ, բազումք յԵգիպտոս և յԱղեքսանդրիա և ի Թեբայիդ և ի լեառն Սինեական կային մինաստանք Հայոց. նա և ի սուրբ լեառն Թաբոր, և ի յեզր ծովուն Տիբերեայ և յայլ սահմանս Պաղեստինոյ. զոր յոլովս խնամին իսկ աչօք տեսեալ, զամս բազումս կայի լինելով յաշխարհին յայնմիկ. և ամենայն աստուածաշունչ և հոգեպատում պա-

1. Յայնք գրաւելով Հայոց վանքերը՝ անոնց տէր դարձան:

տուիրանք անպակաս գոյր ի հայկեան լեզուս, յամենայն մենաստանս Երուսաղեմի և որ նովաւ չուրջ զերուսաղեմաւ:

Երանելոյն Ներսէսի Հայոց վարդապետի՝ զրեալ զանուանս վանորէիցն Երուսաղեմի, ի խընդրոյ իշխանին Համազասպայ Կամսարականի Պալհաւունոյ, որ կամէր գնալ յԵրուսաղէմ, որ և գընաց իսկ և արժանացաւ աստուածակոխ սուրբ տեղացն, ընդ որս շրջեցաւ Տէրն Յիսուս Քրիստոս ի մարդանալն իւրում. և ի հայրապետացն Երուսաղեմի թափեաց զՀայոց վանորայսն, որք կամէին յեղափոխել զկարգս նոցա և զհաւատս՝ ըստ Յունադի քարոզութեան: Այլ և յետոյ բազում նեղութիւնս և տանջանս կրեցին Հարքն Հայոց և վանորայքն ի պատրիարգացն Հռոմոյ և այլոց որ զկնի նոցա նստան, սակս հաւանելոյ չորրորդ ժողովոյն Քաղկեդոնի և խոստովանութեան երկու բնութեանց: Եւ միաբան ժողովեալ ամենայն Հարքն և առաջնորդք մենաստանացն և խըրճըթաւոր միայնակեացքն, անձինք իրրեւ հինգ հարիւր, զրեցին առ երանելի կաթողիկոսն Յոհան[1] և առ այլ աթոռակալսն, եթէ զինչ պարտ իցէ առնել, հաւանե՞լ նոցա և ունել զտեղի բնակութեան իւրեանց, և թէ՝ թողուլ և ելանել անտի. զի հրաման թագաւորին խստանայր ի վերայ սրբոյ քաղաքին և հայրապետացն, զի մի բնակեցեն անդր ի Հայոց կրօնաւորաց և Յակոբիկ Ասորի կամ Յեգիպտացւոցն. այլ միայն որք ազգ ունին զհաւատս թագաւորին և զՅունադի սահմանադրութիւնն: Եւ զրեաց կաթողիկոսն Հայոց, թէ վասն հաւատոյ մասին մի հնազանդիք դուցա, այլ թողէք և արտաքս գնացէք ի քաղաքէ այսր: Եւ բազումք թողին զմենաստանս

1. Այս բաներս Տաճկաց (Արաբացւոց) տրբելէն առաջ եղած ըսելով՝ պատմիչս, երեւի որ Գ. Յովհաննէս կաթողիկոսն է դա, ի վերջ Զ. դարու և ի սկիզբն Է.ին:

իւրեանց և զինչս և ի բաց գնացին. և այլք բնակեցան ի Կեսարիա, և այլք չոգան յԵգիպտոս, և բազումք ի տեղւոջէ իւրեանց ոչ գնացին. այլ համբերեցին զանից և աւարառութեանց և նեղութեանց ի հայրապետացն Երուսաղեմի, մինչեւ տիրեցին Տաճիկք աշխարհին Պաղեստինոյ և Երուսաղեմի. և այնուհետեւ ոչ համարձակեցան բռնադատել զոք հայրապետաքն, զի քայքայեցան ի ձեռաց Իսմայէլացւոցն պատրիարգունքն և գերեցան, և հանգիստ առին Հայք և Աւորիք: Իսկ յետոյ ի ծանրութենէ հարկացն նեղացան և յաւերանացն երկրին Հայոց. զի ոչ բերէին զմուսա գեզարեաց[1] զոր պարգեւեալ էին թագաւորք և իշխանքն Հայոց. և նոցա ոչ կարացեալ համբերել՝ թողին զտեղիս իւրեանց. և ժԵ վանք միայն մնացին. և կէաք ի լերին Զիթենեաց և այլք մերձ ի Բեթղեհէմ, և Սիւնական[2] կրօնաւորք, և ի յեզր սուրբ գետոյն Յորդանանու, և ի լերինն Փորձութեան, յԱնապատ Փրկչին, և ի Թաբորական լեառն, և ի Հերմոն՝ հանդէպ Թաբորայ. և այլ եւս ի նոյն կողմանս Տիբերեական ծովուն, յայնմ կողմանէ ուր զօթն նկանակն եւ (Քրիստոս) հինգհարիւրոցն: Եւ այսոցիկ այսպէս եղելոց:

[3] Ի յերկիրն Հռոմոց Գաղատիա, որ մականուն կոչի Անգուրիա, ի Լուսաւորչին Գրիգորի յանուն եկեղեցի՝ գաւաք գիրք, յորում գրեալ էր դրուատս այս. որ Անաստաս անուամբ վարդապետ Հայոց գնացեալ էր յԵրուսաղէմ, և ականատես եղեալ

1. Դիւղորբէից, այն Հայոց գեղերուն որոց բերքն կամ արժէքն տարեւէ տարի պիտի խաբերէբէր յԵրուսաղէմ, վանականաց ապրուստի համար:

2. Թուի թէ Սինէական (լերին) կրօնաւորներն իմանալու է, և ոչ Ս. Սիմէոնի պէս սիւներու վրայ կեցողք և ճղնողք:

3. Այս վերջի հատուածս նոր է, Անաստասոյ գերբուածը գտնող անձին, որ թուի միաբան յիշեալ անուանի վանաց Անկիւրիոյ:

վանորէիցն. և չէն ամենայն վանորայքն Հայոց որ յԵրուսաղէմ՝ եօթանասուն վանք. և գրեալ զամենայն և բերեալ ի Յոփեայ գաւառն, որ այժմ կոչի Զմշկածակ. և մեր գտեալ զայս և օրինակեալ զամենայն կարգաւ:

ՃՁԹ

ՀԱՅՐՆ ԹՈԴԻԿ ԵՒ ԽԱՉՆ ՎԱՐԱԳԱՅ

(ՅՈՎՀԱՆՆԷՍ ՓՈՐԵՊԻՍԿՈՊՈՍ[1])

Ի ժամանակս վերջինս երեւեալ սքանչելեացն Աստուծոյ յաշխարհիս Հայոց՝ ի տանս Թորգոմայ, լերկրին վասպուրականի, ի լերինն Վարագ: Այր սուրբ որոյ անուն Թոդիկ ճանաչիւր, նմանեալ նահապետին Ենովքայ, յետ ամուսնանալոյ և որդիս ծնանելոյ՝ հրաժարեալ յերկրային կենցաղոյս՝ առ ի կատարել զքրիստոսական հրամանն, եթէ, «Ով ոք ոչ թողուցէ զհայր կամ զմայր կամ զկին կամ զորդիս կամ զտուն կամ զագարակս, և առնուցէ զխաչ իւր և եկեսցէ զհետ իմ, ոչ է ինձ արժանի»: Սա երթեալ բնակէր ի կատարս լերինն Վարագայ. և եղեւ միանգամեալ որպէս ճնճղուկ միայն ի տանիս, լեռնական, ընդակեր, անապատացեալ. յիշելով զասացեալսն ի Տեառնէ, թէ, «Որ սիրէ զիս, ես և հայր իմ եկեսցուք և օթեւանս առնեմս արասցուք»: Եւ ի ձեռն սորա այս լեառն Վարագ՝ աստուածընկալ փառօք նման եղեւ այնմ սինէական լերինն՝ ուր փողն հնչէր և բարբառ պատգամացն՝ աշգային տեսլեամբ:

Եւ այսպիսի փառօք փառաւորեալ առնն Աստու-

1. Յետագայ յօդուածն (190) յայտնէ՝ որ Ղ. գրաւ երկրորդ կիսաւմ էր հեղինակս այս:

ծոյ, բազում ժամանակս անցուցեալ հրեշտակական աքնութեամբ դասակցեալ լինէր ընդ հրեշտակս՝ անդադար փառաբանութեամբ: Եւ քաղաքավարեալ հառոյ Աստուծոյ, և բնակարան Հոգւոյն լինէր, արժանի պաշտաման ինչ խորհրդոյ ի վերուստ: Եւ առեալ գգիտութիւն յառաջագոյն վասն գալստեան Սուրբ Խաչին, տասնօրեայ աւուրբք և ահագին դարմացմամբ ըմբռնէր, չհամարելով զինքն արժանի վերին խորհրդոյն, կարծելով փորձանս ինչ հասեալ: Եւ այնպէս չերմեռանդն արտասուօք աղօթէր առ Աստուած, չղրկիլ ի խոստացելոց պարգեւացն. ոչ տայր քուն աչաց և նինջ արտեւանաց մինչեւ տեսանել զքաջնչելիան Աստուծոյ:

Եւ ի լնուլ տասնօրեայ պահոցն՝ լինէր բարբառ ինչ ահագին սաստիկ յոյժ, և թնդեալ երկիրն սաստկագին. և նորա եղեալ ի զարմացման՝ սրբատեսն հետեւելով իւրով[1] Յովելեաւ: Եւ ամբարձեալ ըզձեռս իւր ի վեր՝ ի բուն կատար լերինն տեսանէր զունդս հրեշտակաց լուսափայլս, զի կային երգելով քաղցրահնչիւն ձայնիւ զիւրեանց փառաբանութիւնն: Եւ ապա զկնի նոցա երեւեալ խաչն ամենազօր, և սաստիկ լուսով լցեալ լեառնն ամենայն, մինչեւ յաղթեալ լինէր արեգականային ճառագայթիցն: Այս սքանչելիքս ոչ միայն առնն Աստուծոյ երեւեալ, այլ և ամենեցուն որ չուրջ զտատրատով լերինն գիւղք և ագարակք, ելեալք ամենեքեան առհասարակ և դիմեալք ի դուրս՝ արք և կանայք, ծերք և տղայք, երիտասարդք և կուսանք, յայնապէս տեսանէին զսուրբ Խաչն և զլեառնն աքանչելի լուսով փառաւորեալ: Եւ այնպէս յերկարեալ լուսոյն մինչեւ ցվեցերորդ ժամ:

Ապա ցոլացեալ սուրբ Խաչն զկնի հրեշտակացն՝ եմուտ յարկս երանելւոյն Թոդկայ. և լցեալ տունն ամենայն սաստկութեամբ լուսոյն, և ի մէջ տաճարին բամ[2] առեալ գասուց հրեշտակաց երգէին

1. Իրեն նման կամ իր հետեւող աշկերտը:
2. Երամ, գունդ, ամէն կողմ բոլորելով պատելով:

ասելով սաղմոս զայս. «Գեղ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն, և քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ: Լուր աղօթից իմոց, զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ: Զի լցաք մեք ի բարութեանց տան քո, և սուրբ է տաճար քո աքանչելի արդարութեամբ», մինչեւ ի կատար սաղմոսին:

Իսկ երանելին Թոդիկ աչակերտուն իւրով Յովելեաւ ոչ կարացեալ հանդուրժել տեսլեան լուսոյն, յերկիւր խոնարհեալ՝ ոչ իշխեցեալ համբառնալ զաչս ի վեր, այլ ի վերայ ծնգաց կալով, արտաբեալ սկիզբն սաղմոսիս այսորիկ, «Լուր Աստուած աղօթից իմոց, զի նայեցար, Տէր, յաղօթս իմ», մինչեւ ի կատար: Եւ այնպէս սաղմոսելով ի կարգ գասն և եօթն սաղմոսն մինչեւ ցինն ժամն: Ապա փոխեալ Սուրբ Խաչին ի միւս եւս յարկն, որ էր տեղի հանգստեան իւրոյ, և լուսոյն զկնի երթեալ փոքր փոքր նուազէր մինչեւ ամենայն ծածկեցաւ, և դադարեցին երգքն հրեշտակականք:

Ապա յարուցեալ երանելւոյն աչակերտուն իւրով՝ եմուտ յարկն, և եղեալ արժանի սրբոյ խաչին ողջունի, առեալ ի ձեռն իւր բերկրեալ սրտիւ զուարթացեալ երեսօք մեծաւ ցնծութեամբ, ձայն աւետեաց մատուցանէր աչակերտին, կոչէր, աղաչակէր և ասէր. «Ի Տէառնէ եղեւ այս և է աքանչելի յաչս մեր»:

Եւ ի նմին ժամանակի ել լուրն ընդ ամենայն երկիրն Հայոց աշխարհին, մինչեւ ի սահմանս Վրաց և Աղուանից. և ապա դիմեալ գային աշխարհ ամենայն յիւրաքանչիւր տեղեաց, ի կողմանց ի գիւղից և ի քաղաքաց գունդք գունդք, դասք դասք բազմութեամբք մարդկանն, հանդերձ եպիսկոպոսօք և քահանայիւք, խնկօք և մոմեղինօք լուցեալովք և երգովք հոգեւորօք. ելեւէջս առնէին վիմիամբք: Եւ հասեալ ժողովրդոցն ի տեղի սուրբ Խաչին և յարկս երանելւոյն Թոդկայ, և լեալք արժանի ողջունի սուրբ Խաչին և օրհնութեան առնն Աստուծոյ. և միաբան գոչէին զգաւթեան երգսն ասելով զաղմոս զայս, Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր:

Յայնմ աւուր լինէին նշանք մեծամեծք ի ձեռն սրբոյ Խաչին՝ այսահարաց, անդամալուծից, գօսա-
ցելոց և ամենայն ցաւագնոտաց. վասն որոյ եւս առաւել յորդորէին ի պաշտօնն. և արարեալ երեկ-
օթս՝ կային ի հսկման գիշերին ամենայն՝ ձայնիւ
ցնծութեամբ, և օրհնէին զԱստուած՝ վասն նշա-
նացն եղելոց: Եւ հասեալք ի լոյս առաւօտուն՝ միա-
բան գոհացան զմարդասիրէն Աստուծոյ. և օրհ-
նեալք յերանելւոյն Թոդկայ՝ հրաժարեցին ի մի-
մեանց քրիստոսական ողջունիւ, և գնացին խաղա-
ղութեամբ և մեծաւ ցնծութեամբ յիւրաքանչիւր
բնակութիւնս:

Այս սքանչելիք եղեն յաւուրս բարեպաշտ թա-
գաւորին Կոստանդինոսի կացելոյ Հռոմայեցւոց
աշխարհիս, և ի հայրապետութեան Ներսեսի Հա-
յոց[1] աշխարհիս, և ի կոչնակալութեան վարդայ
Վասպուրականի Իշխունոյ, որդւոյ քաջի և առա-
քինւոյ աստուածասիրին Թեոդորայ Իշխունեաց
տեառն և զօրավարի Հայոց Մեծաց աշխարհին, որ
արիաբար քաջութեամբ վասն սրբոյ եկեղեցւոյ չի-
նութեանց՝ զամենայն աւուրս կենաց իւրոց ի մարտ
պատերազմաց անցուցեալ, և վանեալ սրով սու-
սերի իւրոյ զազգն խամայելեան՝ յաղթող լինէր
հանապազ վերին օգնականութեամբն: Այս վարդ
եղեալ քրիստոսասէր ի տղայական սիրոյ մինչեւ
ցկատարեալ ժամանակս, վարէր երկիւղիւն Աս-
տուծոյ, այր խորհրդական և հանճարեղ, լի իմաս-
տութեամբ և չնորհօքն Աստուծոյ, կեցեալ սրբու-
թեամբ և պարկեշտութեամբ, խոնարհութեամբ, և-
կեղեցասիրութեամբ, պատուիրանասիրութեամբ,
պաշտօնասիրութեամբ. գիւ և գիշեր ոչ պակա-
սեցուցանէր ի սան իւրում զերգս աստուածային
տաղմոսաց, կատարելով անխափան զևւթն անգամ
տաղմոսն օրհնութեան Դաւթի, քահանայիւք և դաս

1. Ներսէս Գ կաթողիկոսն է, որ եկեղեցիներ և յա-
տուկ Ս. Լուսաւորչին շինելոյն համար՝ Շինող կոչուի:

դաս պաշտօնէիւք գեղգեղելով՝ առաքեր գերեզ-
տակական երգս ի բարձունս:

Ա՛ս սա առաքեալ լինէր ի մեծ և ի հռչակաւոր
առնէն Թոդկայ՝ վասն գալըստեանն սրբոյ Խաչին,
և որպէս էր պատմեալ զամենայն գործսն ճշմար-
տութեան աքանչելեացն Աստուծոյ, գերեզտակացն
և զգալուստ սրբոյ Խաչին: Եւ մեծաւ խնդութեամբ
յոյն կացեալ բազմութեամբ ազատովքն առ նա
ժողովելոց՝ փութանակի հասանէր ի դուրս երա-
նելւոյն Թոդկայ. և եղեալ արժանի սրբոյ Խաչին
ողջունի, առնոյր հրաման զի տօնախմբեսցէ զօրն
զայն զենմամբ. և հրաման առեալ յիւր վաստա-
կոց արգարութեան ածել հասս ոչխարաց և ջոկս
զուարակաց բազումս. և բազմեցուցեալ դաս դաս
զբազմութիւն մարդկանն՝ լցուցանէր զամենեսին:
Որոց ընկալեալ զհամոյութեան օրհնութիւնն ի
բարերարէն Աստուծոյ, բնակէր ի խաղաղութեան
և տայր փառս ի բարձունս Ամենասրբոյ Երրոր-
դութեան, Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն. այժմ
և յաւիտեանս:

ՃԳ.

ՀԱՐՔ ՎԱՐԱԳԱՅ ԼԵՐԻՆ

Որք հաւատացին յԱստուած ճշմարտապէս և
հաստատեցան ի սէր արարչին, հատին անցին ընդ
ամենայն մահս և ընդ նեղութիւնս մարմնականս.
և եդին կնիք հեղով զարիւնս իւրեանց և առ ոչինչ
համարեցան զթագաւորս և զհոգս աշխարհիս: Որ-
պէս աստանօր բնակեալ սուրբ Հարքն ի Վարագ
և կատարեալ ի նմին այրի, յաղթեալք ախտից
մարմնականաց. զորոց զճգնութիւնս և զվարս ա-
ռաքինութեան նոցա տատանցն, ո՞վ կարէ պատմել
և արկանել ընդ զրով: Որոց գլխաւորն Տէր Ղև-

ռնդակ, յաղթէն Խոսխոռունեաց, վայելուչ և գեղեցիկ տեսլեամբ, լցեալ աւուրքդ, ծագկեալ հասակաւ ծերութեան, փոխեցաւ յաշխարհէս. և ոչ հրամայեաց զնչխարս ի հանգստանոցս դնել, այլ կառաւել քարամբք[1]: Եւ յաջորդէ Տէր Փիլիպպոս, նորան ձեռասուն, խրատեալ և վարժեալ աստուածային երկիւղիւ յաստուածաշունչ գրոց և ի վարս երանելի Հօրն, և հզնութեամբ և սրբութեամբ ոչ ինչ պակաս գտեալ եղեւ նոյն չնորհի արժանի, բժշկել զախտս և զհիւանդութիւնս և տեսանող հրեշտակաց. վարեալ այսպիսի սրբութեամբ փոխեցաւ ի վերինն Երուսաղէմ: Եւ յետ սորա առեալ զկարգ սրբութեան և պարկեշտութեան նոյն հաւատով և ճգնութեամբ, հրեշտակատեսք և հըզնաւորք և բժշկողք այսահարաց և ախտացելոց, որք էին լուսաւորք աշխարհի. որոց անուանքն էին այսոքիկ, Տէր Միքէ, Տէր Յովհաննու, Տէր Բուդատ, Տէր Մոշղոիկ, Տէր Ներսես: Եւ յետ սոցա Տէր Թոդիկ, աշակերտ նոցա յաւուրս Վարդայ Ոչսունեաց տեառն, որ հանդէր էր Աստուածոյ և մարդկան:

Այդ, տեառն Թոդկայ առաւել չնորհի արժանի լեալ, զոր և պատմագրեալ է Յովհաննու քահանայի[2], սակաւ ինչ ի բաղմաց, և զգալուստ սուրբ Խաչին յաղագս սորա ճգնութեանն և սրբութեան ի նոյն պատմագրին: Յետ սորա Տէր Յովհէ, նորին աշակերտ, և նորին չնորհի արժանի և հաղորդ, կատարեալ զպաչտօն, զխոնարհութիւն[3], ամս քառասուն նստաւ յաթոռ հարանցն, և փոխեցաւ առ Քրիստոս: Եւ յետ սորա Տէր Եղեվիա՝ կացեալ միաբնակեաց ամս քառասուն, և լծակցու-

1. Առանձին տեղ մի թաղուիլ կ'ուզէ, և վրան քարեր կուտել, հին ժամանակաց սովորութեամբ:
2. Նախընթաց յօդուածին գրող քորեպիսկոպոսն:
3. Կամ բան մի պակաս է, կամ ընելի էր գպաշտօն իսունարհուրեան:

թեամբ սրբոցն ոչինչ նուազ քան զնոսա, փոխեցաւ ի Քրիստոս, չնորհալից և բարի անուամբ: Յետ սրբոցս այսոցիկ ոչ զմտաւ ածեալ զրազում անօրէնութիւն իմոյ անարժանութեանս՝ կացի ի կարգի սրբոցս ես՝ յաքնամեղս Ցաձատ. վասն որոյ ազաչեմ զհաւատացեալս ի Քրիստոս առնել աղօթս վասն իմոյ անարժանութեանս, զի մի լիցի ինձ պատասպարտութիւն:

ՃԳ.Ա

ԱՆԱՆԻԱՅԻ ՇԻՐԱԿՈՒԱՑՒՈՑ[1] ՎԱՍՆ ՈՐՊԻՍՈՒԹԵԱՆ ԿԵՆԱՑՆ[2]

Ես Անանիա Շիրակուացի, որ բաւանդակեցի զգալութիւն մերոյ ազգիս Հայաստանեայց[3], և հմուտ եղեալ Աստուածաչունչ գրոց և օր ըստ օրէ լուսաւորէի զաչս մտաց իմոց, ըստ բանի սաղմոսերգողին[4]: Եւ ամենայնի լսէի գերանութիւն իմաստնոցն. և որք իմաստութեան են ի խնդիր, որպէս ի Սողոմոնէ էր հրամայեալ, թէ, Ստացիր զիմաստութիւն և զգիտութիւն. և յաւել, արգել զարքգիտութիւն, խաւար կոչելով զծնունդն. « Դու ըզգիտութիւնն մերժեցեր, մերժեցից և ես զքեզ »: Եւ ես զարհուրեալ յայսմ սպառնալեաց, և դարձեալ երանութեան կամէի ժամանել, գնալ փափա-

1. Ոմանք Շիրակացի կոչեն՝ յանուն գաւառին, այլք Շիրակաւանցի յանուն Շիրակաւանի:
2. Ըստ փռանկաց տեսակ մի Autobiographie է սա:
3. Որչափ գիտելիք կամ սովրելիք կար Հայոց մէջ՝ անանց տեղեկացաւ, ուզեց տալ ինչն գանել Յունաց քով:
4. « Օր աւուր բղխէ զբան, և գիշեր՝ գիշերոյ ցու- » ցանէ զգիտութիւն »:

գնացայ իմաստութեան: Եւ յոյժ կարօտեալ արուեստիս համարողական, խորհեցայ թէ ոչ ինչ յարմարի բան իմաստասիրութեան՝ առանց թուոյ[1], կարծելով զսա մայր ամենայն իմաստից: Եւ ի Հայս ոչ գտի մարդ՝ որ գիտակ էր իմաստասիրութեան, և ոչ գիրք արուեստիս ուրեք գտի յաչխարհիս: Ապա դիմեցի յաչխարհն Յունաց, և հասի ի Թէոդոսպօլիս[2]. և գտի անդ այր մի փառաւոր հմուտ գրոց եկեղեցականաց, որ կոչէր Եղիազարոս անուն. նա պատմեաց ինձ, թէ գոյ այր փառաւոր և համարող՝ յաչխարհին Զորրորդ Հայոց, Քրիստոտուտոր անուն[3] նորա. և չոգայ, արարի առնմա աւուրս վեցամեայ. և տեսի զի ոչ ունէր ըզբովանդակ արուեստն, այլ աստի և անտի ծայրագաղ: Եւ անտի գնացի ի Կոստանդնուպոլիս. և պատահեցան ինձ ի ծանօթից իմոց՝ որք անդ էին. և ասացին ինձ, Էր յանձն առեր այնքան ճանապարհ աշխատել. և Տիւքիկոս վարդապետն Բիւզանդացւոց՝ հուպ է առ մեզ, ի ծովեզերն Պոնտոսի, ի քաղաքն որ կոչի Տրապիզոն, այր լի իմաստութեամբ և գիտակ հայերէն դպրութեան, և երեւելի ի թագաւորաց: Եւ ասացի ես. Ոտաւ գիտէք զուք զայդ. և նոքա ասեն, տեսաք բազում ճանապարհորդս եկեալ առ նա վասն հզօր գիտութեան նորա. այլ և այժմ նաւակից եղեւ մեզ փեսագր սարկաւագն հայրապետին Կոստանդինուպօլսի, և բազում մանկունս ածէր առ նա յաչակերտութիւն: Զայս լուեալ փառաւորեցի զԱստուած՝ որ զփափաք ծառային իւրոյ լնու. որպէս և ասէ. Թէ, Հայցեցէք և գտջիք: Եւ երթեալ իմ գտի զնա ի վկայարան

1. Թուաբանութեան և չափաբանութեան:
2. Կարնոյ քաղաքն է, այն առեն Յունաց կայսրաց իշխանութեան ներքեւ:
3. Ունիմք Գանձեր Քրիստոտուտոր անուամբ գիտնականի, բայց չէ Անանիայի յիշածն, այլ ծի գալու գրիչ և երգող:

Սրբոյն Լեգինեայ[1], և պատմեցի զգալն իմ առ նա. և նա ընկալաւ զիս ուրախութեամբ, և ասէ. Զոհանամ զԱստուծոյ, որ առաքեաց զքեզ ի խնդիր իմաստից, առնել զարուեստս զայս ի վիճակ Սրբոյն Գրիգորի. և առաւել ուրախ եմ, զի յինէն աշակերտի աշխարհն այն. զի ես ի մանկութեան իմում չատ կացի ի Հայս, և տգիտութիւն էր ի նմա:

Եւ վարդապետն Տիւքիկոս որ գնացի առ նա՝ սիրեաց զիս որպէս զորդի իւր, և պարապեաց ի յիս զամենայն խորհուրդս իւր: Եւ ետ ինձ Տէր չնորհս, և ուսայ զարուեստս լիով համարողութեան. մինչ զի նախանձել ընդ իս աշակերտակցացն՝ որք ի գրունս արքունի: Եւ կեցի առ նմա զամս ութ, և ուսեալ հմուտ եղէ գրոց բազմաց՝ որք ոչ էին թարգմանեալ ի մեր լեզուս. զի (էին) առ նա այնչափ գրեանք գաղտնիք և յայտնիք և արտաքինք, արուեստականք և պատմագիրք, և բժշկականք և ժամանակագիրք. և թէ մի մի անուանիցեմ. քան զի չիք ինչ գիրք որ առ նմա ոչ գտանէր: Եւ թարգմանութեան այսպիսի ունէր չնորհս ի Հոգւոյն Սրբոյ. իրրեւ կամէր թարգմանել գյունարէնն գրեալսն ի հայ, ոչ դեգերուէին առնէր՝ որպէս զայլ թարգմանիչսն. որ ի հայերէն ընթեռնոյր լեզու՝ իրրեւ զհայերէն գրեալս: Եւ պատմեաց, թէ որպէս եղէ հմուտ հայ լեզուի և այս իմաստութեանս. ասաց. Թէ, Ես՝ ի Տրապիզոն քաղաքէ ի մանկութեան կացեալ ի դուրս Յովհաննու զօրավարին[2], դինուորեալ ի Հայս, և բազում ժամանակս կացեալ մինչեւ ի Մարիկ Թագաւոր, և ուսայ լեզու և դպրութիւն: Իսկ ի ժամանակի արձակման զօրացն Պարսից ի վերայ Յունաց, վիրաւորեալ ի պատերազմի փախստեայ անկայ յԱնտիոք, և ամենայն ինչք իմ առան յաւարի: Յայնժամ խնդրեցի

1. Ինչուան հիմայ ծանօթ է տեղի այս եկեղեցւոյս:
2. Կայսերաց դլուխն կարգեալ կողմնակալ Հայոց:

ՅԱստուծոյ զբժշկութիւն վիրացս, և ուխտեցի ա-
սելով, եթէ չնորհեացես ինձ կեանս՝ ոչ դանձեցից
դանձս անցաւորս, այլ զհետ ընթացայց գիտու-
թեան դանձուց, որպէս ասէ. «Ընկալարուք զխրատ
և մի արծաթ, զգիտութիւն՝ առաւել քան զոսկի»:
Եւ պարգեւեաց Աստուած զխնդրուածս իմ. գնացի
ողջացեալ ի քաղաքն Յերուսաղէմ, և անտի ՅԱ-
ղեքսանդրիա, և անտի ի Հռոմ, կացեալ ժամա-
նակս, և դարձայ ի Կոստանդնուպոլիս. և գտեալ
զվարդապետն Աբգենայ իմաստասիրաց քաղաքի՝
այր երեւելի, և կացի առ նա յուսման ամս ոչ սա-
կաւ. և կատարեալ իմաստութեամբ դարձայ ի տե-
ղիս, և սկայ վարդապետել և ուսուցանել[1]: Եւ
յետ ոչ սակաւ աւուրց վախճանեցաւ վարդապետն.
և ոչ զոք գտեալ համագումար յաշակերտացն, հրա-
մանաւ թագաւորին և իշխանացն՝ առաքեցին հրա-
ւիրակս՝ զի գնացեալ նացի յաթոռ. և նա ոչ ա-
յանձն ասելով, թէ, ես՝ ուխտեալ իմ երկնաւոր
թագաւորին՝ ոչ հեռանալ: Եւ անտի այնուհետեւ
գային առ նա ի յուսումն յամենայն աշխարհաց,
առ ծովածաւալ գիտութիւնն:

Եւ ես տրուպս ի Հայաստանեայց, ուսայ ի նը-
մանէ զհզօր արհեստս զայս, որ թագաւորաց է
յանկալի, և բերի յաշխարհն մեր, առանց ուրուք
ձեռնտու լինելով. միայն Յանուն օգնականութեան
Աստուծոյ, և աղօթիւք Սուրբ Լուսաւորչին. թէ-
պէտ և ոչ ոք եղեւ չնորհակալ և մեծարող իմոյ
աշխատութեանս. և ոչ սիրեն Հայքս զիմաստ զի-
տութեան, այլ ծոյլք են և ձանձրացողք: Զի իր-
բեւ եկի ի Հայս, բազումք եկին առ իս ի յու-
սումն, և սուղ ինչ խելամտեալ՝ ոչ մնացին կա-
տարման արուեստիս. Թողին զիս և մեկուսացան,

1. Ա.յս տեղ պակսի բան մի. Տիւքէկեան խօսքն
լմընցած կ'երեւի և Անանիա սկսի նորէն պատմել:
Ուրիշ անյարմարութիւնք այլ կան այս չարաղրու-
թեան մէջ, զոր պէտք է ուղղել լատագոյն Ձեռագրօք:

և սկսան ուսուցանել զոր աչն գիտէին, և ոչ էին
հասու. կեղծաւորք և անափառք, ցուցանել կեր-
պարանս գիտութեան. և կոչիլ ի մարդկանէ Ռաբ-
բի: Եւ ասեն ի վերայ իմ պարսաւանս՝ որ յինէն
էին յերիւրեալք. և ես ոչ թէ ունէի չարութիւն
իրրեւ զնոսա ի վարդապետել և ուսուցանել. բայց
զմտաւ ածեմ զերբունական բանս, որ ասէ. Իմ
է վրէժխնդրութիւն, և ես հատուցից նոցա: Եւ
դարձեալ, թէ, «Աբրկ զոսկին իմ ի սեղանաւորս,
և ես եկեալ տոկոսիւք պահանջեմ»: Այսպա ոչ ար-
գելի յուժեքէ՝ որք կամէին ուսանել, և ոչ այսու-
հետեւ արգելից: Այլ և գայս անմահ թողում ձեզ,
վարդապետք, որք յետ իմ գայցէք, ուսումնասի-
րացք և փափագողացք իմաստից և գիտութեան,
մի արգելէք. և Քրիստոսն որ ձրի չնորհատուն է՝
առնոյք զհատուցումն ի նմանէ:

ՃՂԲ

ՆՈՐԻՆ ԱՆԱՆԻԱՅԻ, ԲԱԽՃԱՆ[1] ՀԱՆԵԼՈՒԿՔ

Ա. Այսպէս լուայ ի հօրէն իմէ, եթէ ի ժամա-
նակի պատերազմաց Հայոց ընդ Պարսս, սաստիկ
քաջութիւնք լինէին ի Կամսարականէն Զօրակայ[2].
որպէս թէ ամսօրեայ աւուրքն՝ երիցս յարձակէր ի
վերայ զօրացն Պարսից. և հարկանէր յաւուրն՝
դիէս զօրուն, յերկրորդումն՝ զչորիր մասն, և յեր-
րորդումն՝ զմեծասանն. և ձեացեալքն անկանէին

1. Չաւաբեութեան համար զրուցուելիք. բայց սոսկ
միանգամայն ուսումնական առեղծուածք (Problèmes)
են. թէեպէտև վրայ տարակուսիմ, օրինակողներէն
այլայլած ըլլալու. թողում ճշդել հմուտ թուաբաններից:
2. Ի պատմութեան ծանօթ չէ սա մեզի:

փախստեայ ի Նախճաւան, ՌՃՁ (280)։ Գիտեա, թէ նախ ոչխափ էին։ — ՌՀԿ (1760) էին։

Բ. Ի ժամանակի ապստամբութեանն Հայոց ի Պարսից[1] և սպանանելոյն Կամսարականին Զօրապետ զՍուրէն, գեղեան արձակեաց սմին յազատաց Հայոց առ թագաւորն Պարսից, գոյժ արկանել նմա. և գնայր յաւուրն՝ Ծ (յիսուն, կամ ժ, տասն) մղոն. և զկնի հնգետասան աւուր իմացեալ Կամսարականին Զօրակայ, հետամտիկս առաքէր զկնի՝ ուսնել զնա, որ գնային յաւուրն (Ծ, 50 կամ ժ, 10) մղոն։ Գիտեա, թէ ի քանի աւուրս հասին։ — ձԽե (145) աւուրս։

Գ. Ներսեհ Կամսարականի Շիրակայ և Արշարունեաց Տեառն՝ բուն[2] կանգնէր առ ստորոտով լերինն՝ որում Արտիկ կոչեն. և ի գիշերի միում մտին երամակք ցըռուց բազումք. և ոչ լեալ առակք որսորդացն՝ ընթացեալք պատմեցին նմա ի գեօղն Թալին. և նորա իւրովի եկեալ հանդերձ եղբարբքն և ազատաքն, և մտեալ կոտրեցին զբլուխն։ Եւ եղեն կալեալք ի թակարդի՝ հասարակ[3] երէցն. և եղեն սպանեալքն նեսիւ՝ չորս մասն. և զմատաղ երէն ոչ կալան՝ որ եղեւ ԺԲ (12) մասն. և եղեն մեռեալք ի նիզակէ ՅԿ (360) երէ։ Արդ, գիտեա թէ ընդ ամենայն քանի՞ լինել էին։ — Եղեւ ընդ ամենայն երէն ՍՃԿ (2160)։

Դ. Ներսեհ կամսարական որդի Արշաւրի, առնուանակից և նախնի այնմ Ներսեհի, ի յաղթել պատերազմացն Բահդձացն[4], առնու գերի սաստիկ յոյժ, և հասեալ ի դուռն արքունի՝ ընծայեցուցանէ

1. Իբրև յամի 371։
2. Զօրաց կամ ծառայից բնակութեան տեղին։
3. Կէսն։
4. Բահլի կողմանց գաւառի բնակիչք։

թագաւորին Պարսից՝ զհասարակ գերւոյն. և թուեալ զհասարակն եւս՝[1] ընծայէ որդւոյ արքայի՝ զեօթն մասն. և հրաժարեալ ի նոցանէ դառնայ յաշխարհն իւր. և եկեալ ի տուն Գարիկպետի՝[2] յոյժ մեծարի ի նմանէ, ոչ որպէս զնախարար, այլ որպէս զմի ոք ի թագաւորաց. և սա տայ նմա զութերորդ մասն գերւոյն։ Եւ եկեալ առ ապայապետն զոր և խորովարին[3] կոչեն, և առաւել եւս ի նմանէ մայնեալ[4] տայ նմա զ'ԺԳ մասն գերւոյն։ Եւ եւս յառաջ եկեալ՝ հասանէ յաշխարհ իւր, և ընդ առաջ լինի նմա եղբայր իւր կրտսեր՝ Հրահատ, և տայ նմա զ'ԺԳ մասն գերոյն։ Եւ եւս յառաջ եկեալ՝ ընդ առաջ լինին նմա ազատքն Հայոց. և տայ նոցա զ'Թ մասն գերոյն։ Եւ եկեալ ի Վաղարշապատ՝ տայ ի սուրբ եկեղեցիսն զ'ԺԶ մասն գերոյն։ Եւ եկեալ Աահակ՝ աւագ եղբայր իւր՝ տայ նմա զ'Ի մասն գերոյն. և իւր մնաց ՇՕ (550) անձն։ — Արդ, գիտեա թէ ընդ ամենայն քանի՞ է լեալ։ — Լեալ էր ընդ ամենայն գերին ՍՄԽ (2240)։

1. Կիսոյն կէսն։
2. Թուի գործակալ, ի քեարի պարսիկ բառէ, որ է գործ կարեւոր, գուցէ և ֆարիկիյա كاريكيا, թագաւոր, պետ։
3. Կարծեմ Ապասապետ պիտէր, իբր մատակարար, հոգացող կերակրոց, ըստ իսր, իսրհ և իսրպար պարսիկ բառից։
4. Իմասան մեծարեալ նշանակէ, բայց բառն ուրիշ աեղ յիշուած չէ։

ՃՂԳ

ՆԱԻԱՄԱՐՏ ԱՐԱԲԱՑԻՈՑ ԵՒ ԲԻԶԱՆԴԱՑԻՈՑ

(ՍԵԲԷՈՍ)

Ժողովեցան ամենայն զօրքն՝ որ ի կողմանս ա-
րեւելից, ի Պարսից և ի Խուժաստանէ և ի կող-
մանէն Հնդկաց և յԱբուաստանէ և յԵգիպտա-
ւոց կողմանէ, առ Մաւիա[1] իշխան զօրուն՝ որ
նստէր ի Դամասկոս:

Եւ կազմեցին նաւս պատերազմականս յԱղէք-
սանդրիա և յամենայն քաղաքս ծովեզերեայս. և
լցին զինուք և մեքենայիւք զնաւսն. երեք հարիւր
նաւս մեծամեծս. առ մի նաւն հազար այր չընաիր
ընաիր հեծելոց. և հրամայեաց գործել նաւս թե-
թեւս հինգ հազար: Եւ գումարեաց արս սակաւ՝
վասն թեթեւութեանն, առ մի նաւ՝ արս հարիւր,
զի արագապէս ճախրեսցեն սլանալով առ մեծամեծ
նաւսք՝ չուրջանակի ի վերայ մկաճաց ծովուն. և
արձակեաց զնոսա ընդ ծով: Եւ ինքն առ զզօրս
իւր՝ որ ընդ իւր, և գնաց ի Քաղկեդոն:

Իբրեւ եհաս ի վերայ ամենայն երկրի, հնազան-
դեցան ամենայն բնակիչք ի ծառայութիւն՝ որ ըզ-
ծովեզերքն և լեռնականս և դաշտականս: Իսկ
բազմութիւն զօրաց Հռոմին չոքան մտին ի Կոս-
տանդնուպոլիս՝ պահապան քաղաքին:...

Յամի երեքտասաներորդի Կոստանդնու, կազ-
մեալ ունէր յեղր ծովուն նաւս բազումս թեթեւս,
զի յորժամ ծանրագոյն նաւքն հասանիցեն ի Քաղ-
կեդոնէն՝ նա փութանակի հասցէ յօգնականութիւն
նոցա: Եւ զթուղթ արքային իւրեանց հատուն տա-
նել ի քաղաքն, առ Կոստանդին:

1. Նախ զօրավար յեռոյ ամիրապետ Արաբացւոց
յամս 661–80:

Եւ առ արքայ զթուղթն, և եմուտ ի տունն Ա-
տուժոյ, և անկաւ ի վերայ երեսաց իւրոց, և ասէ.
«Տե՛ս, Տէր, զնախատինս՝ զոր նախատեցին զքեզ
Հագարացիքս այս. եղիցի ողորմութիւն քո, Տէր,
ի վերայ մեր, որպէս յուսամք ի քեզ: Լիցի զե-
բեսս նոցա անարգանաք, և խնդրեսցեն զանուն քո,
Տէր. ամաչեցեալ խռովեսցին յաւիտեանս յաւիտե-
նից, և ամօթալից կորիցեն, և ծանիցեն՝ զի անուն
քո Տէր է, և դու միայն բարձրեալ ես ի վերայ
ամենայն երկրի»: Եւ վերացոյց զպատկն ի գլխոյ
իւրմէ, և մերկացաւ զծիրանին՝ և զգեցաւ քուրձ,
և նստաւ ի վերայ մոխրոյ և հրամայեաց պահս
քարոզել ըստ օրինակին Նինուէի՝ ի Կոստանդը-
նուպոլիս:

Եւ ահա եկին հասին ի Քաղկեդոն նաւք մե-
ծամեծք յԱղեքսանդրացւոց կողմանէ, հանդերձ ա-
մենայն վոքր նաւովքն և ամենայն կազմուածովքն
իւրեանց, զի էր կազմեալ ի վերայ նաւացն մանջ-
ղիոնս և մեքենայս հրացանս և մեքենայս քարընկ-
ցս, աղեղնաւորս և պարսաւորս. զի յորժամ հա-
սանիցեն ի պարիսպ քաղաքին, ի վերուստ ի գլխոյ
աշտարակացն դիւրեաւ ելցեալ ի պարիսպն՝ անկ-
ցին ի քաղաքն: Եւ հրամայեաց զնաւսն կարգել
ճակատ առ ճակատ, և դիմել ի վերայ քաղաքին:
Եւ իբրեւ մեկնեցան ի ցամաքէն իւր երկու աս-
պարիզաք, անդ էր տեսանել զզօրութիւն աՀին
Տեառն. զի ակնարկեաց Տէր յերկնից՝ սաստիկ
հողմոյ բռնութեամբ. և յարեաւ հողմն և մրրիկ
մեծ, և զդրդեցաւ ծովն ի ներքուստ անդնդոց ի
վեր, և բարձրացեալ դիպանային ալիքն նորա իբ-
րեւ զկատարս բարձրաբերձ լերանց. և հողմն փո-
թորկեալ ի վերայ նոցա՝ ճայթէր իբրեւ զամպ և
գոչէր. և խոխոջիւնք յանդընդոց լինէին: Եւ ան-
կան աշտարակքն, կործանեցան մեքենայքն, քակ-
տեցան նաւքն, և ընկղմեցան բազմութիւն զօրացն
ի խորս ծովուն. և մնացեալքն ի վերայ տախտա-
կացն՝ ցնդեցան ի վերայ ալեաց ծովուն, և տա-

բաբերեալ այսր և անդր յելեւէջս ալեացն՝ կոր-
ծանեցան. զի երաց ծովն զբերան իւր և եկուլ
զնոսա. և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի:

Եւ ապրեցոյց Աստուած յաւուր յայնմիկ բար-
ձրացեալ բազկաւ զքաղաքն, ի ձեռն աղօթից աս-
տուածասէր թագաւորին Կոստանդիանոսի. և ոչ
դադարեաց հողմոյն բռնաւթիւնն՝ և ծովուն խառ-
նուածքն՝ մինչեւ ցվեց աւուրս: Եւ եղեւ իբրեւ
տեսին իսմայելացիքն զձեռն ահի Տեառն, բեկաւ
սիրտ նոցա. եւ ելեալ ի գիշերի ի Քաղկեդոնէ՝
գնացին ի տեղի իւրեանց[1]:

1. Սիմէոն Ապարանեցի այս դիպուածս առանձ-
նապէս վերածեալ՝ գրած է այսպէս.

Արգահատեալ մինչդեռ կային՝
Ծառայածին զօրքըն հասին.
Զմանկղիանոսըն լարեին
Եւ ըղնդացանս յօրինէին.
Ղեքարըննկեցաքն կանգնէին
Դէմ քաղաքին յարդարեին.
Անցեալ ընդ ալիս ամէհին
Զմկանս ծովուն նըւաճէին.
Զիր ասպարէզ լեզուիքին՝
Զովկիանոս մէջ առնուին.
Վառահացեալ ի զօրաւթիւնս՝
Ըզմիմեանս խրախուսէին:
Ոչ գիտեալ կայրքըն մըտօք՝
Թէ աստ է ձի ի փրկութիւն
Եւ յաղթանդամըն հակային.
Եւ ալ Տեառն է հավանի
Երկիւղածացն, ըստ Սաղմոսին.
Մինչեւ փորձիւ ըզգանն արբին.
Անդնդասոյզ կարեալ զնդին:
Քանղի յօրժամ խլըրտէին
Եւ յաղթութեան երգս երգէին.
Ակնարկեր Տէր ի յերկնից,
Խարք անդընդոց խըռովէին,
Ներքնատա ի վեր պըտուտակելով
Ելիւք ի ջուր ծածանէին.

ՃՂԴ

ՄԱՀ ՋՈՒԱՆՇԻՐԻ
ԱՂՈՒԱՆԻՑ ՏԵԱՌՆ, ԵՒ ՈՂԲՔ Ի ՆՈՑՆ

(Մ. ԿԱՂԱՆԿ. Բ. 1դ. 1ե)

Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ՝ խաղալ գնալ
մեծի իշխանին Ջիւանշիրի ի կողմանս լեռնակա-
նաց՝ ի զբօսանս, բոլոր տարեկան աւուրցն հրճուա-
կան երկրաչափութեամբ[1], և յոգնայարդար գու-

Հաղմոյն սաստեալ ովկիանուս՝
Նաւքն առ իրեար զեռելղէին,
Ըչտապելով ի կոհակաց՝
Ի չափ լերանց վերանային.
Եւ խախաջեալ ճայթմամբ ամպոց՝
Հետ հետ յատակս իջանէին:
Խորափոսին լերանացեալ՝
Ոչ յագենայր արեամբ նացին.
Մինչեւ զվեց որ տարուբերեալ
Եկուլ զամբոխն անհընարին:
Ապրեցուցեալ յաւուր յայնմիկ
Տէր՝ ըզքաղաքըն Բաւղային:
Այլ յայս լերկի այս խնդրոյին,
Երկուս լինել ըզդարձ ռազմին.
Մինն ընդ թռչին Հերակլոսին,
Երկրորդ՝ յաւուրըս Լեւոնին:
Մըրմռնեացն* զօրացեալ
Ի յԱսատմբօլ աթոռ արկին,
Յետ յալովից ժամանակաց
Կիւռ Մանուէլ թագաւորին**...

1. 30թ. երկաչափութեամբ:

* Էդբ–էլ–Մէ–է–դն, Ամիրապետքն Արաբացւոց:

** Կիւռ Մանուէլի՝ յանօթի թղթակցի մեր Շնորհալեանն
յայտնի է ժամանակն, ի Ռ. պոլսի վերջին կայսերաց
մին համարելի է այս տեղ յիշեալն, Թեոդոս Մանուել Բ.,
յամս 1391–1425:

սանօք, ուր և խոհականութեամբ նուաճէր զամենեսեան ընդ իւրովն իշխանութեամբ, և բոլորովին բարեբաստիկ եղեալ զերասացութեամբ իմն և խրոխտաբար զամենայն ինչ յօրինէր իմաստակիր քաջութեամբ: Բայց ապա՝ ըղձալի հռչակաւորն այն, զի ի ձեռն խարդաւանող ախտին ընդդէմ Աստուծոյ երկասիրէր պատուիրանին, թափուր և ունայն ի նորայն փառաց երեւէր. և ամենայն ինչ սարդի ոստայն եղեալ՝ վազվազակի չքնաղն այն քակտէր վայելչութիւն:

Զի ի ժամ տապակէզ աւուրցն՝ առեալ գերահրաշ պետականին զազատազարմ առիւծն, հանդերձ նամեսական գընդիւն[1], ի հովիտս բարձրաբերձ լերանցն՝ բերկրէր, և ծաղկատեսակ հանգըստեամբ ի գեղեցիկ մարգս յոլովէր զաւուրս բարեկեցիկ յղփութեամբ: Իսկ իրրեւ անցանէին աւուրք խորչակայեղց տօթոյն, ի ժամանել բարձրութեան տօնի նաւակատեաց Թաչին, համբարձեալ ի կողմանցն յայնցանէ՝ գայր անցանէր յԱւար գաւառ ի Պարտաւ քաղաք, յիւրական գեղազարգեալ տաճարն. և անդ պարգեւածիր մեծարանօք ի հանդիսաւոր տօնին՝ Աստուծոյ մատուցանէր երկրպագութիւն:

Եւ մինդեռ հանգուցեալ էր մեծաւ ուրախութեամբ մեծաշուքն Զիւանշիր, այր սմին տաքօրէն և վատանչան ի կայինեանն ընկղմեալ ախտ[2], ի հրապոյրս խարդախութեան զընկերս իւր համահաւանս արարեալ, որ ոչ զսէր նորա և ոչ զպատիւ տան հօրն իւրոյ՝ զոր գտեալ էր ի նմանէ մեծաւ պարգեւօք՝ յիշէր ինչ, մահ խորհեցաւ ի վերայ նորա, խորհուրդ վատ արկեալ ի միտս իւր. և հրապուրեալ զնա ի պատճառս բղխախոհութեան, փառատպարիր բանիւք հաւանեցուցանէր զնա ելանել ի զբօսանս խոհերականս: Եւ մինչ ի տաճարէ

1. Մթթէ կ'ակնարկէ Յունաց նեմէական տօնահանդիսից, որ անտառաց մէջ կատարուէին:
2. Կայենի եղբայրասպանութիւնը յիշեցընէ:

անտի ելանէր իշխանն՝ ընդ ճանապարհ պարտիզայար ծաղկոցացն, ի գիշերի յառաջին պահուն՝ անվահան, և թուր միայն ունելով, ուր սպառազինեալ սուրհանդակ պահապանացն ջոկք՝ անհոգ և անվեհեր ի դրունս պալատանն անկեալ կային ընդ քնով. առեալ չարաբարոյ Լիհիայ[1] զաւազանողին Վարազայի[2] զվարդն արքունական, զսուսերն պողպատիկ և զվահանն ոսկեխնձոր, գաւով յառաջապահ լինէր ի պատճառս՝ և ըստ օրինակի զինակրութեան. և ինքն անօրէն նենգաւորն ի ծածուկ վառեալ ագեալ էր զրահս ի ներքոյ պատմուճանին իւրոյ: Ապա իրրեւ հասանէին ի միջնավայր անդր բուրաստանին և մերձ էին ի պարսկ որմոյն՝ որ պարուրակեալ էր զայնատարած արքունական բայիւն[3], որպէս այլով ամենայնիւ իմաստայեղց էր անվկանդն Զիւանշիր, այժմ եւս գիտաց զնենգութիւն սպանողին՝ պիտակահայլ գաւոյն[4]. և ի հնչիւն ձայնի վառելոյ զրահին՝ պակուցեալ սրբատաբեկ լինէր, համարելով՝ թէ աշխարհախումբ խորհուրդ է վասն իւրոյ սպանմանն. և լսելեայն ի տաճարն կամէր դառնալ: Իսկ անօրէն սպանողն զսուսերն թերաքամեալ ունելով՝ յանկարծակի յիւտուստ կոզմանէ հարկանէր զիշխանն արի, սաստիկս վիրաւորեալ, զի մերկ էր ի զրահից. այլ չկարէր ստէպ[5] զնա յաղթահարել. որով և ամապարէր նա[6] որպէս առիւծ մնչող՝ ձեռն ի գործ արկանել սուսերաւն: Բայց զի զօրութիւն Բարձրելոյն հեռացեալ էր ի նմանէ, մատնելով զնա ի ձեռս ձեռ-

1. Յատուկ անուն? թէ այլաբանական օտարի անուն?
2. Այսպէս գրուած, բայց թուի վարազային:
3. Բայց՝ գազանաց որջ կամ տեղ նշանակէ. Բայ այլ գուշակուի որ որսալու կենդանեաց տեղն ըլլայ:
4. Խորամանկ, բազմահնար խաբէութեամբ գաւաճանող:
5. Շատ հեղ չաւասով նշանակէ ատեպն:
6. Զիւանշիրը:

նաւուն սիրելոյն նորա, յաւելնում նաւապին իբրեւ ի վերայ նորա յարձակէր սուսերաւն, նորա յասպարն առեալ ընդդիմամարտեալ արձանանայր. և իբրեալ զգէնն ի սերա վահանն՝ ոչ կարէր հանել զսուրն և անդրէն ամփոփել ամենեւին: Իսկ նա լցեալ վիրագային գազանութեամբ՝ զայրագնեալ վիրաւորէր զամենայն մարմին նորա, և իբրու զթիւնաւոր օձ խածանող՝ սրամտութեամբ նրանա-կոտոր և վազակաւոր խոցոտմամբ՝ անխնայաբար յերկիր ընկենոյր զիւր տէրն. և յոգւոյն ի ծոցն թափիլ՝ վարկանելով տիրապանին կիսամահ զնա արարեալ, զանխաբար արտաքս ելանէր՝ յիւրն երթալով տուն, կեղծաւորեալ ոչ տալ կարծիս, որպէս թէ յանգէտս ի տան ննջեսցէ:

Եւ ահա անդուստ ուրեմն իրագործ լեալ իրացն եղելոյ, գոյժ ազմկի խառնութեան հնչէր, և կառճառ ամբոխին բազմանայր. յորոյ մի ումն յեղբայրական հարազատաց վրիժապարտին՝ զեկուցեալ նմա զոճիրս իրացն զոր գործեալ էր, անդէն փութապէս հեծեալ նա յերիվար՝ փախստական լիներ:

Յայնժամ պատրիկ ումն քեռորդի իշխանին՝ առեալ զիւր ամեհականն [1] լեգէան գնդի յիմնեական, զկնի ելանէր մահապարտին. բայց ոչ զգացեալ հասանել նմա վասն նախափախուստ լինելոյն, ի վերնակոզմն երթային յՈրցախուռնեաց գաւառն, նմին իրաց քննախնդիր. և զսուն հօր նորա աւերեալ քանդեին հրդեհարոյ կիզմամբ, և զհետաքաղաքեչ և զկերպասանիւթ դիպակս և զգոյնագոյն կապերտս, զոսկի և զարծաթ և զընտիր ընտիրս կահուց և սպասուց՝ աւար առեալ. և ինքեանք ոգեւմագոչ արտասուօք անդրէն դառնային, լային զիշխանն և աշխարհին: Այլ զի դեռ չունէր նորա ի նմա կայր, սուղ ինչ աւուրս տեւէր կենդանի. և որպէս իւրոց

1. Եթէ առաջ յիշուած նամեականն չէ, (տես երես 237, ծանօթ. 2). ամեհի (Ձի) նշանակէ ուժով, կորիճ, կատաղի:

իւրաքանչիւրումն զգանձս և զպատիւս յայտ առնելով՝ կարգէր զնոսա ի բաժինս նոցին. և ի դժընդակ վիրացն պակասեալ վախճանէր:

Յայնմ ժամանակի ոչ սակաւ խառնութիւն լինէր աշխարհիս. զի կուտեալ զինեալ խուռն կաճառացն, և մեծամեծ նախարարացն ժողովեալ, և ամենայն երկիրն առհասարակ վայրիւք լի եղեալ՝ ողբային զիշխանն՝ կականաւոր և զժնդակ գոչմամբ. որ այնպէս անտանելի սուգ և անհնարին բեկումն աշխարհիս հասոյց:

Յայնժամ ճարտասան ումն ի մէջ անեցեալ, տեղեակ արհեստական իմաստից, Դաւթակ անուն կոչեցեալ, հնարագիւտական [1] վարժիւքն յաղողակ և վերծանական քերթութեամբ յառաջադէմ, յառատաբեր բանից պաճուճանացն ճարտարութեամբ և քաջապէս հրատարակող, լեզու ունելով նման երգագիր գրչի. սա յոլով աւուրք յառաջ ժամանէր ի գրան արքունի. և իբրեւ հասանէր օրհասական շշուկն ի վերայ արեւելից աշխարհիս, սակս յանկարծահաս սպանման մեծի զօրավարին, յայնժամ սկսաւ նա երգել ըստ ալփափիտաց գըլխակարգութեանց, զՈղբս զայս ի վերայ բարեացապարտին Զիւանշիրի, և ասէր այսպէս [2].

Ա՛ստուածային բանին արուեստաւո՛ր հոգի,
Յօրինեա իմաստս ի տխրական երգումնս.
Չի սըզալի ձայնիս անդադար ողբասցուք
Ի վերայ դժնդակ կորըստեան մերում:

1. Հնարագիտական՝ բանաստեղծական ըսել է. ոչ միայն ստեղծաբանել՝ այլ երեւի թէ և լաւ արտասանել զիտէ եղեր Դաւթակն այն:

2. Թէ հնութեամբն, թէ արուեստիւ, նաեւ իմաստիւք, նշանաւոր քերդուած մ՚է Ողբս այս, և յանձնմանից ի գպրութեան մերում. հին օրինակին մէջ թուղթ ինկած և վերջը պակաս մնալով, աւրիշ անձ մի թուի լրացընել ուզեր է՝ ձ գրէն վերջի տուներն, բայց անարուեստ և անյարմար:

Բնկաւին մեծ որ եղեւ արեւելից աշխարհիս,
Ի՛ ազգազակ կոթծանման հնչեաց ընդ երկիր.
Ագգք և ազինք լուիցեն զբարբառս իմ.
Երկրածինք ամենայն ողբասցեն ընդ իս:
Գլորեցաւ վէմն կենդանի և հզօր,
Եւ պարիսպն ամրութեան խորտակեցաւ.
Աչտարակն բանաւոր տապալեցաւ,
Եւ ցանկն չինութեան խրամատեալ քակեցաւ:
Դարձաւ ի դառնութիւն խաղաղութիւն մեր,
Եւ դրունք հինից տեղացին ի մեզ.
Չի մեծաւքանչ տէրութիւնն կործանեցաւ.
Հրաշալի պետութեանն չիմաս ճառագայթ:
Եկին հասին ի վերայ մեր անէծք,
Զոր կանխագոյն սպառնայր մարգարէն Եսայի.
Չի զաւուրս ոտնի տէրունեան Նչանին՝
Դարձուցին մեզ ի սուգ, ի լալիւն դառնութեան:
Զանգիւտ կորստեան փորեցին խորխորատ,
Չի գհովիւն բարի ընկլուզեցին ի նմա.
Հոգի մոլորութեան չնչեաց ի նոսա.
Ի նանիր թագուցին զորոգայթն մահու:
Էր նստեալ որպէս առիւծ ի մօրսղ,
Եւ լռեալ ի նմանէ սարսէին թշնամիք.
Տեարք տոհմից և իշխանք ամենայն՝
Երկիւղիւ և սիրով հնազանդէին նմա:
Ընդ ամենայն երկիր էլ համբաւ նորա,
Ի ծագս աշխարհի ծաւալեցաւ անուն նորա.
Չի գհնարիմաց զօրութիւն և գհանճարեղ իմաստն՝
Հանդիսաւոր հնչմամբ գովեցին տիեզերք:
Թագաւորն ցունաց և աշխարհն Հարաւոյ՝
Տենչանօք խնդրէին տեսանել զտէրն,
Յոգնամեծար ողջունիւ ընդունէին
Եւ փառաւք պսակեալ պատուէին մեծապէս:
Ժամանեցին առաժամայն չարիքն մեր,
Եւ անդեղ մոլորութիւն յանդիմանեաց.
Խարկացուցաք զԱրարիչն գործովք մերովք,
Եւ մատնեաց ի կորուստ զնախագահ տէրութիւնն:
Ի բաց մեկնեցան պահապանք (նորա),
Օգնութիւնք վերնայինք հրաժարեցան ի նմանէ.

Չի Տէր հեռացաւ յաւուր չարի
Եւ եթող զնա կոխան ժանտից:
Լարեաց զաղեղն իւր բանաստրկաւ թշնամին,
Եւ սրբեաց որպէս սուր՝ զնենգիչ սիրոյն.
Զարաչար խոցոտմամբ հասոյց ի վերայ՝
Որպէս յայգին Մովաբու՝ ի գիչերին՝ սատակումն:
Խարդաւանող խորհրդով տարեալ մեկնաւի
Անողորմ խոցոտմամբ վիրաւորեաց գվհատն...
Ծնունդն չար որ մեզաւ նմա,
Որդի անօրէնութեան՝ որ չարչարեաց զնա,
Անիծիւք պարսպեալ գնասցէ ընդ երկիր,
Եւ կայենի երերմամբ վարանեալ չրջեսցի.
Կապեսցին չաւիղք փախստեան նորա,
Եւ թռչունք երկնից ճախրեսցեն ի վերայ նորա.
Ագաւաք ձորոց ալասցին ի նմա
Եւ գազանք վայրենի ապաստեսցեն նմա:
Հուրն Հերովդէի առաքեսցի նմա,
Եւ ծնցին ի նմա որդունք և մկունք.
Աղեկէզ տոչորմունք բորբոքեալ ի նմա՝
Կերիցեն առաժամայն զոհրատապան մարմին նորա:
Զեռն՝ որ ձգեցաւ ի ապանանել զտէրն,
Ոտք որ կոխեցին զհրաչալի պատկերն,
Ուրիածին սխատիւ[1] հեռացմամբ գոսացեալ՝
Յարեսցին ի նա ցեղք չարակէզ խոցոտմամբ:
Ղազեալ հանդիպեսցէ ընդ հովանեաւ գժնըկի[2],
Եւ կորիւնք իժից մեզիցեն նմա.
Թոյնըք քարերից հեղցին ընդ նովաւ,
Սատակագոյն ուռուցմամբ հերձցեն զնա:
Ձրագ ճշմարիտ խաղաղութեան էր նա մեր,
Նաւապետ ցածուցիչ խռովութեան ալեաց,
Անձն քաջին Զիւանչիրի,
Որ զամենայն գերչաց փարատէր գյուզմունս:...

1. Բորոտութեամբ:
2. Որպէս զի գժնըկին փուչերն խոցոտեն զնա:

ԱՂԵ

ՎԱՋՔ ՇԱՀԱՆԴՂԻՏՈՑ
ԵՐԻՎԱՐԱՒՆ Ի ԽՈՐԱՋՈՐՍ ԲԱՂԱՑ

(ՍՏԵՓ. ՕՐՊԵԼ. ԼՋ.)

Էր դուստր մի վարազտրդատայ՝ Աղուանից գահերէց իշխանի, որում անուն Շահանդուխտ. և ունէր պատկեր[1] նոր և օտար, գեղ նորա յոյժ չքնաղ և զարմացուցիչ տեսողաց. որ և ոչ ումեք նիւթեղէն կարծիւր, այլ իբրեւ ի լուսատարր օդոյ և յանօսր չողից կերպացեալ. որ և խնդրեցաւ հարսն՝ ի տանէ Թորգոմեան: Եւ էլ նա յաշխարհէն իւրմէ ի հայրենի տանէ, և գնայր ի կնութիւն Հայկազուն իշխանացն. և մտեալ ի Բաղաց սահմանն՝ երթայր ի ճանապարհն՝ յանգոյթ տեղիս յատապարի մի, յորում էր փրթուած քարի մի սահագին խորութեամբ, որ իբր յանդունդս հայէր. հանդէպ մեծի հայրապետանոցին Տաթեւոյ[2]: Եւ ահա անդ զղեալ ծուարեալ[3] կային բազմութիւնք լեգէոնախառնեալ զօրաց սուսերամերկաց, որք վանն սխրալի գեղոյ նորա եկեալ էին ի Պարսից, և պահէին զանցս և զկիրճս ճանապարհացն՝ զի չփըշըտակեսցեն: Եւ նոքա անիրազեկ էին բանին. յանկարծակի յարեան ի վերայ նոցա, և սուր ի վեր կալեալ՝ սկսան յանխնայ կոտորել զքրիստոնեայսն: Ապա տեսեալ զայն մեծահասատ օրիորդին, զիտաց զպատճառն. և կնքեալ զինքն սէրուենան նշանաւն, մտրակեաց զերիվարն, և թռեաւ ընդ փրթուածս քարին[4]: Եւ զի զայս գտաք ի հնացեալ նամակի

1. Երեսին տեսքն:
2. Վանքն Տաթեւոյ, սուրբ և եպիսկոպոսարանն էր:
3. Կղկըտած, պաղաբատած:
4. Բանասաղծիցդ արդեօք թէ պատկերահանից

գրեալ իւրով իսկ ձեռամբն, որ էր այսպէս. «Ես մեղուցեալ աղախինս Քրիստոսի Շահանդուխտ, դուստր Վարազտրդատայ, երթայի հարսն ի տունն Թորգոմեան. և եկեալ ի սահմանս Բաղաց, ի գլուխ քարիս՝ ընդ որ անցանէ ճանապարհն, և ահա յանկարծակի պատահեցան ինձ Իսմայելացիք, որք վանն համբաւոյ գեղոյ իմոյ կամէին յափշտակել զիս. և սուր ի վերայ եդեալ կոտորէին զհետեւողսն որ ընդ իս. ապա լաւ համարեցայ՝ քան ի ձեռն այլազգեացն գայլապատառ կորնչիլ, վանն Քրիստոսին իմոյ գահավէժ մեռանել. և յիշելով զՍուրբ Աստուածածինն և զՍուրբ Հռիփսիմէ, յանձնեցի զիս Սուրբ Երրորդութեանն. և կնքեցի զողորմելի անձն իմ սուրբ խաչիւն, և գարձուցեալ զերասանակ երիվարին՝ թռեայ ընդ քարս. և ապա յահագին չնչմանէ հոգւոյ և աներեւոյթ զօրութեամբ իմոյ իբր կառաք ի խորութիւն ձորոյս, ես և երիվարն իմ անվնաս: Եւ գագարեալ անդէն՝ մեծաւ հիացմամբ՝ զոհութիւն մեծ վերառաքեցի այնպիսի փրկողին զիս. և իջեալ ի հեշտավայրն[1] նուիրեցի զանձն իմ Քրիստոսի. և ուխտեցի այլ ոչ եւևնել աստի մինչ ցվախճանն իմ:

Իսկ Իսմայելացւոցն տեսեալ զայն մեծաւ զարմացմամբ թողին անվնաս զզօրն իմ և գնացին: Եւ ես ասէն ի տեղւոջս չինեցի մատուռն մի և խցիկ մի. և կրօնաւորեցայ ի տեղւոջս զամենայն ժամանակս իմ. թէպէտ բազումս թախանձեցայ ի ծնողացն իմ և ի հարանցն, ոչ չարժեցայ ի տեղւոյս: Եւ կոչեցաւ զերանելի եպիսկո-

աւելի յարմար նիւթ նկարագրութեան, եթէ կարենան յաղթել այդ չքնաղին իսկագիր բացատրութեան: Դժուար է հաւատալ՝ թէ այսպիսի վայելուչ լեզուով շարադրած ըլլայ. բայց իր ձեռօք գրածն՝ զոր տեսեր է մեր ԺԳ դարու պատմիչն՝ անհաւանական չէ:

1. Անդունդին յատակն, սուրբ գետինն խորատուբորատ էր, այլ տափակ և դիւրակոխելի:

պոան Սիւնեաց՝ յանձնեցի նմա զիս, և զամենայն ինչս իմ եառու ի ձեռս նորա, զկէս մասն բաշխել ի կարօտեալս, և զկէսն տալ ի սուրբ եկեղեցին Տաթեւոյ։ Նա և զտեղիքս զայս աւանդեցի սուրբ եկեղեցւոյն, ամենայն ձորովս, որ ի Շնևերոյ սահմանէն ի վեր մինչ ի Գիլնական գետն »։

Ահա այս իսկ իրով ձեռամբն էր գրեալ Տաճատիւսոյ։ Եւ կացեալ ինքն անդէն, այլ եւս կուսանս ժողովեաց առ ինքն, և մեծամեծ ձգնութեամբ կեցեալ ամս երեսուն՝ վախճանի։ Եւ երթեալ եպիսկոպոսին՝ դնէ ի հանգստի ի նմին տեղւոջ զերանելի նշխարս սրբոյն։ Որոյ բարեխօսութեամբ խնայեսցէ Քրիստոս ի տունս յայս և ի վիճակեալ սեպհական հօտ սորա։

ՃՂՃ

Ս· ԴԱՒԻԹ ԴՕՒՆԵՑԻ

(ԿԱՊԱՅԱՔԱՆՈՒԹԻՒՆ)

Էր այրս այս ազգաւ ի տաճիկ տոհմէ[1], Յոհաննէս անուն կոչեցեալ, հաշակաւոր, ի մեծաց նախնեաց հայրենեաց։ Իսկ ապա ի ժամանակս իշխանութեանն մեծին Հաւազասպայ որդւոյ Դաւթի կուրապաղատի, երանելի նահատակն Քրիստոսի՝ ընդ զօրս Տաճկաց յերկիրս Հայոց հասեալ լինէր, յԱյրարատ գաւառ, ի կողմ Կոտիից նահանգին[2]. և չրջէր ընդ գեղս և ընդ աւանս, և տեսանէր զկարգս քրիստոնէից և զպարկեշտ վարս տատուածպաշտութեան։ Խորհուրդ գեղեցիկ զմտաւ ածէր՝ վերնական ձրիւքն Հոգւոյն Սրբոյ ազդմամբ

1· Այսինքն Աբաբացի, գուցէ և պարսիկ։
2· Երեւան քաղաքին կողմերն։

միշտ ի սրտի իւրում, կայր ի տուէ և ի գիշերի ի ճշմարիտ հաւատս որ ի Քրիստոս։ Հրաժարէր աշխուհեաւս յիւրայոցն ամենայնէ, զի զՔրիստոս չահեսցի, զի փրկեսցի նովաւ, զի ազատեսցի ի ծառայութենէ ապականութեան, նորոգմամբ վերըսին ծննդեամբն որ ի Հայր և յԱրդի և ի Հոգին Սուրբ. և ցանկայր լուսաւորութեան աւազանին, հեղձուցանել զաներեւոյթ փարաւոն ի ջուրն մկրտութեան աւազանին, և հայցէր մաղթանօք ի կուսին ընծայութեանն, և ոչ եւս յամենալ ի ծառայութեանն։ Եւ եղեւ այս ի ժամանակս Աննաստասայ Հայոց կաթողիկոսի[1] և յիշխանութեան մեծանուն Գրիգորի Մամիկոնենի՝ Հայոց պարկի։

Եւ քանզի յոյժ ցանկալի էր Սուրհան և բազմաց մեծարոյ, առեալ Գրիգորի իշխանին Հայոց մատուցանէր առ կաթողիկոսն Աննաստաս զՍուրհան՝ զի մկրտեսցէ։ Իսկ նա մեծաւ ցանկութեամբ և բերկրալից ուրախութեամբ մկրտեաց զնա՝ սրբոյ բանիւ աւազանին, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. որում յեղանակէր Գրիգոր պատրիկ զիւր հայրենի անուն՝ Դաւիթ կոչելով, ի ձեռն հայրապետին և մաքրութեան աւազանին. և վաղվաղակի օթեւան լինէր Ամենասուրբ Երրորդութեանն. որպէս խոստացաւ Քրիստոս, եթէ, Ես և Հայր իմ եկեսցուք և օթեւան առ նմա արասցուք. և Առաքեալ ասէ. « Զիք խաբէ ոչ Հրեի, ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի ». և թէ, « Որք ի Քրիստոս մկրտեցարուք՝ զՔրիստոս զգեցեալ էք ». և Եսայի ասէ. « Կոչեսցի անուն նոր զոր Տէր անուանեսցէ ». և լինէր հօթնաբուղխ չնորհօք Հոգւոյն Սրբոյ, և բառնայ զանուն ծառայութեան, և համբարձեալ հրաժարէ ի լեռնէն Սինայէ՝ որ է Հագար, որ ծառայ է որդւովք իւրովք հանդերձ,

1· Սոքա կաթողիկոսութեան ժամանակն համաձուի 660–7 տարիներում. Գրիգորի Մամիկոնենի իշխանութեանն այլ 662–80։

և վերադասէ զինքն յորդիս ազատին՝ ի վերինն Երուսաղէմ, որ է մայր մեր ամենեցուն. և ոչ իսմայելեան՝ այլ իսահակեան որդւոյն ազատի. և վերագոչէ ըստ Պաւղոսի. «Զեմ որդի աղախնոյն, այլ ազատին, որով Քրիստոս ազատեաց զիս ի ծառայութենէ ապականութեան՝ յազատութիւն փառաց Որդւոյն Աստուծոյ»: Եւ ի սոյն հաստատեալ բնակէ յաշխարհիս Հայոց՝ ի գաշտակողմանն, ի գետ մի՝ որում Ձագ անուն կոչէր: Եւ յետ սակաւ ժամանակի առացաւ իւր կին և որդիս, մաքրակէս վարուք, պարկեշտ և պատուական ամուսնութեամբ, ըստ խրատու. և կացեալ զամենայն ժամանակս իւր ի բարութեան, և հասեալ ի ծերութիւն, և յապահովացեալ ընդ ամրաժաժուկ աջոյն Քրիստոսի, յօրէնս Տեառն խորհէր ի տուէ և ի գիշերի:

Եւ հասեալ ի ժամանակս Սահակայ Հայոց կաթողիկոսի[1] և Մեսրոպայ բազրատունեաց Հայոց իշխանի, յորում Տաճիկք տիրեալ ունէին զաշխարհս Հայոց, և առաջնորդ զօրուն որ ի Հայս՝ Աբդլայ անուն, դառն և չարաբարոյ, որ միշտ հեղմամբ արեամբ անմեղաց զուարճանայր, յազգմանէ չարին: Յայնմ ժամանակի ըմբռնեալ լինէր երանելին Գասիթի ի ձեռն անօրինին Աբդլայի. զի չէր իսկ պարտ թաքչել ճշմարտութենէն: Խանդագեալ ընդ հաւատսն որ ի Քրիստոս՝ խորհրդակցութեամբ բանսարկուին, վարանէր առաստանայր[2] և զայրանայր, կրճտելով զատամունսն. խնդրէր պատճառ՝ խռնարհեցուցանել զարդարն յորոգայթ իւր. և բազում և պէս պէս հնարս հնարէր, ողոքանօք և խոստմամբք պարգեւաց. և դարձեալ սպառնալեօք՝ վասն տանջանաց և մահու. մարտ եդեալ կռուէր՝ ի բաց կալ ի Քրիստոսէ և դառնալ յառաջինսն, որ խոստանան գիտել զԱստուած, բայց ոչ ծանուցեալք զճշմարիտն Աստուած: Իսկ երանելին հաստատեալ

1. Սահակ Գ կաթողիկոս, 677–703 տարիներում:
2. Նախանձելով և սիրելով:

կայր ի հաւատս Սուրբ Երրորդութեանն՝ անչարժ խորհրդով և աներկիւղ պատասխանատուութեամբ, և ոչ հաւանէր կիսակրօն կարգացն:... Իսկ բռնաւորն զարմանայր ընդ համարձակութիւն ծառային Քրիստոսի. և հրամայէր կապել և դնել ի բանդ՝ զերիս աւուրս. խոշտանգեալ պէսպէս կտտանօք և հարուածովք, և քարշելով փետտել զհերան և զմօրուսն, առ ի հրապուրել զնա ի զեն իւրեանց: Իսկ նա ոչ առնոյր յանձն, այլ համբերէր քաջութեամբ, յուսով անապական կենացն և անդրաւ ուրախութեանցն և անթառամ պսակացն՝ որ ի Քրիստոս Յիսուս:

Ապա յերրորդ աւուրն ընդ այգն ընդ առաւօտն՝ հրամայէր ածել զերանելին առաջի իւր, և բացեալ զբերանն մահաչունչ՝ ասէր. Յանձն առ զհրամանս մեր և ուրացիր զՔրիստոս: Իսկ նա զեղեցիկ խորհուրդս հաստատուն յանձին եդեալ՝ ըստ արժանի հասակին, ըստ ծերութեան վեհութեանն, ըստ երեւելի վայելչութեանն, ըստ զուարթաժպիտ աչացն զուարճացելոց, ըստ զեղեցիկ ի մանկութենէ վինչեւ յատակութիւն սննդեանն, ամենայն կարգաւ լի ըստ երջանկին Եզիազարու[1], այսպէս արտաբեալ արհամարհէր զսպառնալիսն, և կշտամբեալ յանդիմանէր զամբարիշտն՝ իւրեանց բարբառոյն: Իսկ չարին խորհրդականն հրամայէր զսուրբ Նշանն ընկենուլ յերկիր, և ասիպէր կոփանօք՝ զի կոխեսցէ զյաղթութիւն պարծանացն և զառհատաչեայ կենացն՝ զսուրբ խաչն. իսկ նա ոչ առնոյր յանձն: Եւ ասէ նա ցբռնաւորն. Զեմ ինչ լսելոց կորստական քումդ հրամանացդ. զոր ինչ կամիս՝ արա վաղվաղակի: Եւ սա բարկացեալ՝ առ զսուրն, զի անդէն ի ներքս ի սենեկին սպանցէ զերանելին. իսկ հարցն՝ ճիչ բարձեալ յափշտակեաց զգ-

1. Մակաբայեցւոյ, որոյ նահատակութեան պատմութենէն առած է հեղինակս՝ այս քանի մի գովեստի առղերը:

սուրն ի ձեռանէ նորա, և ասէ. Ընդէ՞ր ի ներքս ի սենեկիս սպանանես. եթէ պարտապան ինչ մահու իցէ, արտաքս ելեալ մեռցի: Եւ ոչ ըստ կամս չարին լինէր, այլ ըստ Աստուծոյ. զի ամենեցուն յայնի լիցի վկայութիւն երանելւոյն վասն Քրիստոսի:

Ապա յետ այնորիկ առաջի եդեալ զկեանս՝ բըռնաւորն, եթէ հաւանեսցի, ապա թէ ոչ զմահ փայտի: Իսկ նա յանձն առ մեռանել վասն Քրիստոսի քան զկեանս խղճիւ. աներկիւղ համարձակութեամբ կայր, ըստ գրեցելումն, թէ, ի բաց կաց յանիրաւէ անտի, և դողումն ի քեզ ոչ մերձեսցի. և թէ, Արդարն ի մահուանէ ոչ երկիցի. մանաւանդ ըստ աւետարանին Քրիստոսի, թէ, «Մի երկնչիք յայնցանէ որ սպանանեն զմարմին, և զոգին ոչ կարեն սպանանել». վասն այնորիկ ընարեաց մեռանել վասն Քրիստոսի:

Եւ ապա ածեալ լինէր երանելին ի տեղի քաղութեան, յասպարէզ կատարմանն: Եւ կացեալ յաղօթս՝ զոհանայր ի վերայ անպատում չնորհացն որ տուեան նմա ի Քրիստոսէ, արժանի լինել մեռանել վասն անուան նորա: Եւ զիմեալ կամաւ ի փայտն՝ տարածեաց զինքն ի վերայ. և փայտն կանգնեցաւ ընդ հարաւ: Եւ առեալ սպանողին զգեղարդն՝ բերէր ի կողն, ահ արկանելով, թերեւս հաւանեսցի. իսկ Սուրբն Դաւիթ՝ ըստ աւազակին նմանեալ գոչէր առ Քրիստոս հառաչմամբ սրտիւ, ասելով. Յիշեա զիս, Տէր, յորժամ գաս արքայութեամբ քով:

Իսկ ժողովք բազմութեանն որ չուրջ կային, ոմանք քաղութեան բարբառս աւետարանէին նմա, և ոմանք պարտութեան: Կայր մօտ առ փայտին կին նորա, քաղաղեբէր զնա և յորդորէր բանիւք բազմօք, անշարժ կալ ի հաւատս որ ի Քրիստոս[1]:

1. Արաբն արիւնով կենդանի մարտիրոս, կին մեծ ազի: Ափսոս է որ չէ յիշուած ցեղն և անունն:

Իսկ երանելին Դաւիթ հաստատուն հաւատով ցանկայր ելանել ի մարմնոյն և մտանել առ Աստուած: Եւ անդէն եհար զգեղարդն ի սիրտն. և ընդ բըղխել արեանն աւանդեաց զհոգին, ի փառս Աստուծոյ. ըստ գրեցելումն, եթէ, «Հոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ են»: Եւ փայտն՝ զի էր ընդ հարաւ՝ յարեւելս դառնայր. այս հրաշալի նշան ցուցաւ հաւատացելոց և անհաւատից, զի յայտնի լիցի զօրութիւնն Քրիստոսի և պարտութիւն թըշնամւոյն: Աստանօր ուրախութիւն հրեշտակաց, զի զօրացան աշակողմանքն և յամօթ եղեն ձախակողմանքն: Այսպէս Սուրբն Դաւիթ վկայեաց վասն Քրիստոսի, արհամարհելով զմահ. կանգնեալ յերկրի զնչան անուան իւրոյ, և յերկինս՝ զանապական զփառս և զթագ արքայութեանն, ընդ ամենայն Սուրբս ի Քրիստոսէ ընկալաւ:

Եւ յետ այնորիկ փութով ի տեղին հասանէին՝ Մարգահ Աթաուռնեաց եպիսկոպոսն քահանայիւք և ուխտիւ եկեղեցւոյ, և Մուշեղ մամիկոնեան ըստպարապետն Հայոց, և Աբուսաւազդ նորին եղբայր, բազում ազատօք. և իջուցեալ ի փայտէն՝ տարան ի Սուրբն Գրիգոր[1] զնչխարս երանելւոյն Դաւիթ վկային Քրիստոսի: Եւ բերեալ պատուական հանդերձս՝ պատեցին զՍուրբն հանդերձիւ իւրոյ զգեստուն, և կազմեցին խնկօք և իւղովք. և տարան ի վերզմանն, հանդերձ սազմոսիւք և օրհնութեամբք և երգօք հոգեւորօք և պայծառ լուցմամբք, և եդին ի յարկս Սրբոյն Յիզիտբուզտի[2]. և զփայտ սրբոյ վկային յօրինեալ խաչ՝ կանգնեցին ի վերայ գերեզմանին: Եւ զգեղարդն որով խոցեցաւ, ընդ քսան դահեկանի[3] յինքն հայցեաց Մուշեղ սպարապետն, որպէս մամիկոնենի և մարզպետի, զի խաչ

1. Եկեղեցի Դաւին մայրաքաղաքի:
2. Աբժանաւոր գոյգք համանմանք, յայլազգեաց հայացեալք յեկեղեցւոյ մերում: Տես Յօդ. 169:
3. Իմացուի ոսկի դահեկան:

ձեւացուցեալ պատուեսցի, յիշատակ ազգաց յազգս տոհմի իւրոյ, ի փառս Աստուծոյ։

Եւ կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի Դաւիթ, որ օր քսան և երեք էր արեգ ամսոյ[1] յաւուր երկշաբաթիս, ի վեցերորդ ժամու, ձմեռնի խոստովանութեամբ ի Քրիստոս Յիսուս Տէր մեր. յորոյ ձեռն բարեխօսութեան՝ ոչ սակաւ լինին բժշկութիւնք հաւատացելոց, ի փառս և ի գովութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

ՃՂԼ

ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ՈԳԲԱ ՈՍՏԻԿԱՆ

(ՅՈՎՀ. ԿԱԹ.)

Ոգբա ոմն զօրապետ մեծ՝ հանդերձ զօրօք բազմօք չղջէր ընդ կողմամբք Վանանդայ. անդ ապա հասեալ ի վերայ Կամսարականն հանդերձ ազատօքն Վանանդայ՝ կատարէցին սպառապատս զզօրս նորա. և ինքն փախստեայ անցեալ գնայր առ ամիրապետն իւր։ Եւ անդ ապա բազում զօրս ընդ իւր գումարեալ՝ ի գէնս և ի զարդս և ի ամէն նիզակի, և անհնարին դառնութեամբ խրոխտանայր՝ գալ առնուլ զվրէժս ի Հայոց՝ զիւրոյ զօրուն հատելոյ. հրգեհել, քանդել կործանել զեկեղեցիս Հայոց, և առհասարակ գերել՝ և կերակուր տալ անօդորմ սրոյ։

Իսկ սուրբ կաթողիկոսն Հայոց Սահակ դեռ եւս կայր կենդանի ի Դամասկոս. իբրեւ լուաւ զանհնարին սպառնալիսն Ոգբայի, խնդրէր հրաժեշտ ի նմանէ՝ երթալ առ նա, թերեւս հնար լիցի զարձուցանել զնա յանհնարին դառնութենէ մտացն։ Իսկ ի հրամայէն նորա երթալ առ ինքն, իբրեւ չոգաւ ի Խառան, իսկ և իսկ հիւանդացաւ սուրբ կաթողիկոսն ի հիւանդութիւն մեծ. և ապա գրէ նմանակ ազաչանաց առ Ոգբա իբրով իսկ ձեռամբ, բազում թախանձանօք և ազերսալի պաղատանօք. յուշ եւս առնելով Ոգբայի՝ զհաստատակաց մահ մարմնոյ, և թէ՝ գինի գալոց է և նա ամենայն մահկանացուաց, և ի տապանի վաղվաղակի գնելոց. այլ և զանհնարին դառնութիւնն զժոխոց տարտարոսի՝ նմա ընդ յուշի կապեալ, դարձեալ և զօտարամահն իւր լինել՝ ի դաչնաւորութիւն նմա բերեալ[1]։ Եւ այսպիսի զղջացուցիչ բանիւք համոզեալ՝ ազաչէր զառնալ ի խորհրդոյ չարաց, և չառնել զայն ինչ զոր հանգերձեալն էր առնել, զապիրատ մոլորութիւնն ի վերայ Հայաստանեայցս։ Եւ ապա զայն հրովարտակն հրամայէ յետ վախճանի իւրոյ՝ դնել յաջոյ ձեռին իւրում, զի ինքն Ոգբա եկեալ առցէ ի ձեռաց նորա. թերեւս զըզջասցի չգործել զանօրէնն մատածութիւնն իւր։

Իսկ ոսոխկանն Ոգբա իբրեւ լուաւ զմահ սրբոյն Սահակայ, վաղվաղակի առաքեաց դեսպակս. հրամայէ ոչ թաղել զնա, մինչ զի ինքն իսկ երթիցէ։ Եւ իբրեւ չոգաւ, վաղվաղակի առ պիսպասիկ մարմինն առն Աստուծոյ մատեալ, ձեռն նմա չարժէր քան օրինին իբրեւ կենդանւոյ, և ողջունէր զնա ի լեզու իւր, Աիկամ ալէք՝ ասելով։ Իսկ ապա հոգւոյն ազդումն զձեռն սրբոյն՝ որ անշնչութեամբն էր խափանեալ՝ չարժեաց ընդդէմ ոսոխկանին, ի պատճառս ազերսանաց. ընդ որ յաւէտ ի զարմացման եղեալ, և առեալ զնամակն ի ձեռաց նորա և ընթերցեալ, ասէ. Այո, խնդիր քո կատարեալ է, պատուական սրբդ Աստուծոյ։ Եւ նամակ ի նախարարս Հայոց գրեալ, և հան-

1. Ըստ տոմարի՝ օրն այն տարի էր 23 յանուարի. Յայսմաւորք ասեն դնեն յ՚30 կամ 31 մարտի։

1. Ինչպէս ինքն Սահակ օտար երկրի մէջ մեռնէր, այսպէս դու այլ կարելի է յօտարութեան մեռանիս։

դերձ սուրբ մարմնով հայրապետին ի Հայս առաքեալ բազում պատուով, և թողեալ ի բաց զյանցանսն՝ զոր առ նա գործեցին. և ինքն ընդ կրունկն դարձեալ՝ դառնայ ի տեղի իւր:

Եւ այսպէս զմեռելութիւն նորա՝ պատուական արար Աստուած՝ քան զմեր կենդանութիւնս. և ի սադրելոյ ազօթից նորա փրկութիւն մեծ ծագեաց աշխարհիս մերում:

ՃԳ.Ը

ՎԱՐԴԱՆԱԿԵՐՏԻ ԿՈՒԻՆ

(ԳԵՒՈՆԴ.)

Գնացեալ (զօրքն Հայոց) ընդ եղր գետոյն Երասխայ՝ անցանէին ընդ սահմանս Ոզոյոյ[1] և հասանէին ի մեծ աւանն Ակոռի: Իսկ զօրքն Իսմայելի որ էին ի Նախջաւան քաղաքի՝ յարձակեցան զկնի նոցա, և ոչ մեկնեցան ի հետոց նոցա. քանզի էին աւելի քան հինգ հազար, և կամէին կենդանւոյն կալանել զնոսա: Եւ իբրեւ ազդ եղեւ զօրուն Հայոց վասն հինին՝ որ զարթուցեալ գայր ի վերայ նոցա, յարուցեալ անցին ընդ գետն Երասխ, և բանակեցան ի վարդանակերտն[2] աւանի. և զօրն Տաճկաց պնդեալ գայր զկնի նոցա: Իսկ զօրուն Հայոց պատգամ յղեալ առ զօրսն Տաճկաց, «Ընդէ՞ր, ասէ, պնդեալ գայք զկնի մեր. զի՞նչ ինչ մեզաք ձեզ. ահաւադիկ երկիրդ մեր առաջի ձեր է. ձեզ տուեալ եմք զբնակութիւնս մեր, զայգիս մեր

1. Ոզոյ կամ Ոզոն բերդաւոր գեղ մ'էր Մասիս լերան քովերը, որոյ բարձր կողից վրայ շինուած էր այդ մեծ աւանն, մեր օրերումս կործանուած մեծ ժամովն:
2. Չէ յայտ ա՛ր Վարդանն է շինող տեղւոյս:

և զանտառս և զանդաստանս մեր. արդ ընդէ՞ր և զանձինս մեր խնդրէք. թո՛ղլ տուք մեզ գնալ ի սահմանաց մերոց»: Եւ ոչ կամեցան լսել զօրքն Իսմայելի, զի ի Տեառնէ կարծրանային սիրտք նոցա, զի մատնեսցին ի ձեռս սրոյ: Իսկ զօրուն Հայոց ամրացուցեալ զփողոցս աւանին, կարգեցին ի վերայ պահապանս՝ մինչեւ ի լուսանալ առաւօտին: Եւ ինքեանք զգիչերն ողջոյն ի հակումն ազօթից կանխեալ՝ հայցէին ի բոլորեցուցեալ Տեառնէն զմեծագոյ աջոյն օգնականութիւն, և ուղղութեամբ գտեալ ի մէջ նոցա և թշնամեացն: Եւ իսկոյն ընդ ծագել առաւօտին՝ իբրեւ յանգիր պաշտօնն առաւօտին, մատուցանէր և հոգեւոր պատարագն, և արժանաւորք հաղորդէին մարմնոյ և արեան Տեառն, իբրեւ յեսին թոչակ զայն համարեալ անձանց. և առնուին սուղ ինչ կերակուր յաղագս զօրութեան մարմնոյ: Եւ նոյնժամայն յարուցեալ յարդարեցին զունդ առ գունդ և ճակատ առ ճակատ, խմբեցաւ պատերազմն: Անդ հասեալ յօդնականութիւն մեծագոյն Աստուծոյ՝ զնդին Հայոց, թէպէտ և նուազունք էին քան զթիւ երկուց հազարաց, սակայն զրազումս հարեալ սատակէին ի սուր սուսերի: Քանզի էին աւուրք ցրտաշունչ սառնամանեաց, և եւս առաւել սատակացեալ զառնաշունչ օդոյն՝ կասեցուցանէր զզօրսն Իսմայելի յարիւնարբու զօրութենէն իւրեանց. զի զգիչերն ամենայն ի վերայ ձեան օթագայեալ էին, և ընդ ծագել լուսոյն անկան ի ձեռս սրոյ: Եւ որք ի սրոյն փախեան՝ անկան ի գետն Երասխ. քանզի պաղացեալ էր ի խառնութենէ օդոյն. և իբրեւ ելանէին ի վերայ պաղին բազմութիւն զօրացն՝ անդէն վաղվաղակի խոցոց մատնէին, խորտակեալ պաղին, որք ի սրոյն զերծեալք էին, և այնպէս հեղձամահ վճարէին ի կենաց: Յորոց նուազունք ի փախուստ դարձեալ իբրեւ արք երեք հարիւր՝ ապաւինէին առ տիկինն Շուշան[1]: Զորոց զկնի հետամուտ եղեալ Սմբատ

1. Սիւնեաց տիկինն էր, մեծագի քան զՍմբատ:

որդի Աչառի՝ զօրօքն իւրովք, կամէր արկանել զպատերազմ ի սուր սուսերի: Որում ընդ առաջ ելեալ տիկինն Շուչան՝ բազում աղերսանօք և դաշամբք թափէր զնոսա մերկս և բոկս և հետեւակս և վիրաւորս. զորոց՝ առեալ պատէր զվէրս և ողջացուցանէր և զգեցուցանէր հանդերձիւք: Տայր և գրասա յիւրոց երամակաց, և առաքէր առ իշխանն Իսմայելի՝ Աբդի-վհիք. վասն որոյ և ի նըմանէ բազում չնորհակալութիւն ընկալեալ, և մեծամեծ պատիւս առաքէր նմա:

Իսկ զօրն Հայոց՝ յղփացեալ յաւարէ թշնամեացն, առաքէին առ թագաւորն Յունաց աւետիս պյաղթութեանն իւրեանց. տային տանել նմա ընծայս յաւարէ թշնամեացն, զընտիրս երիվարաց տաճիկ ձիոց, և զունչս դիականցն անկելոց հատեալ՝ առաքէին ընդ նմին ընծայի: Եւ կայսրն ընկալեալ զայն նուէր, մեծապէս զոհութիւնս մատուցանէր արարչին, և չնորհակալութիւն Սմբատայ և նախարարացն որ ընդ նմա և նոցին զօրացն. և տայր բերել նմա պատիւ կիւրապաղատութեան, ըստ օրինի թագաւորաց: Եւ նորա ընկալեալ զպատիւն ի կայսերէն՝ առնոյր զզօրս իւր և երթայր յաշխարհն Տայոց, մտանէր յամրոցն որում Թռռիւաբան[1] կոչեն. և զգուշանայր յորդւոցն Իսմայելի:

1. Հիմակուան Շաւշէթի կաչաւած վիճակին մէջ էր:

ՃՂԹ

ՈՂԲՈՒ ՎԱՍՆ ԶԱՐԵԱՑՆ ՈՐ ՀԱՍԻՆ ՀԱՅՈՑ ՅԻՍՄԱՅԵԼԱՑԻՈՑ

(Կ Ա Ց Ա Ր Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն)

Ահա մերկացաւ սուրն վաղակաւոր ի պատենին[1]. զոր տեսանող ակամբն յառաջագոյն սպառնացեալ՝ ողբայր մարգարէն: Սո՛ւր ծաւալի առ բեամբ՝ զարթեալ ի մեզ ազգն Իսմայելի, ընդ չորեսեան կողմանս երկրի գոչեալ առիւծաբար, կամ իբրեւ չորեքին հողմովք բաղխելով զծով, զաչխարհիս մեծութիւնս: Որ արդեւք թէ և առ Իսրայէլ լինէր մարգարէութիւն, զայն և առ մեզս առնու ձայնն[2]. մանաւանդ երուսաղէմ մինչեւ ի հիմն քակեալ լինէր, և մեր՝ բոլոր աչխարհս քակեալ աւերեցաւ: Զվայելչութիւն երկրիս՝ օտարապգիք կալան. և ազատութիւն և տէրութիւն և իշխանութիւն նախարարացն՝ անարգութեամբ յերկիր կործանեցաւ: Աննդ մանկունք տղայք զքարի հարեալք. և մերքս՝ առհասարակ ծնողք և մանկունք ի գերութիւն. որ և զմարցն առեալ ողբայր երեմիա, այն և մեզ իսկ դիպեցան ի դէպ ելանել:

Աբդ, որ եաղ մեծ և դիւրաշարժ առ խանդաղատանս, որ մինչչեւ առեղծեալ յորովայնի Աստուծոյ էիր ծանօթ[3], և յառաջ եկեալ՝ սրբեցար ճըշմարիտ օրինօք մերոյն Քրիստոսի, որ ի պահու ազ-

1. Հզօր հառաչանք այրած սրտի և ճարտար գրչի. և է սկիզբն վկայաբանութեան Վահ. Գաղթնացւոյ:
2. Այսինքն, Հրեից համար ըսուածն ի մարգարէից՝ չատ յարմարի մեզ ազգիս:
3. Երեմիա մարգարէին հետ խօսի՝ անոր Ողբովը որ դեռ չծնած՝ Աստուծմէ ընտրուած համարուի:

Խոհութեան զՀոգին Սուրբ ի քեզ կոչեցեր, և տաճար նմա եղեալ՝ մարգարէանայիր, որպէս և Սուրբն Ամբակում: Արդ, որպէս յայնժամ նոյնպէս և այժմ մեզ՝ ճանապարհքն Միութեան սգան. զի ապականեալ բարձաւ լոյս պայծառազարդութեան սուրբ սպասուց և զարդուց եկեղեցեաց. ուրախութիւն հոգեզարդ ոտնից և ցնծութիւն աստուածային հոգեւորական երգոց քահանայից և պաշտօնէից. և միանգամայն իսկ առհասարակ վայելչութիւն աշխարհիս: Վասն զի մերկ տապալեան տխրարեր չնչեալ սգոյն հարուաց, բարձ զառագաստն փափկութեան. բարձեալ զպատուականութիւն և զպերճութիւն լուսազարդափայլ ծածկութեան, որ փոխանակ դրախտին չնորհեցաւ մեզ, ի կենաց վայել խաչին Քրիստոսի, և յայտնեցաւ թխութիւն թանձրութեան կատարոյն. խաւարազգած թանձրութիւն անհնարին սեւութեանն. գոյն, որ ունելոց էր զամենայն աշխարհս Հայաստան երկրիս: Որպէս յառաջագոյն երեւեալ ի տեսլեան երանելի և մարգարէաշնորհ առնն Աստուծոյ Սերբոյն Սահակայ, յաւէտ խնամոյ հովուին բանաւոր հօտի և վերադիտողի աշխարհիս Հայոց. կամ որպէս յառաջագոյն տեսեալ աքանչելի լուսաւորութեամբ նորին նախնոյն՝ առաքելանման առնն՝ երից երջանիկ Սրբոյն Գրիգորի:

Ի ժամանակս բռնակալութեանն Տաճկաց, զոր յետ մահուանն առաջնոյ Մահմէտի, յութսուն և հինգ ամի իւրեանց գրեն, ի մի ժամանակս ի վերակացութեան Աբդլմէլիքեայ որդւոյ Մրուանայ, հուր ի մեզ վառեցին, սատանայի ի նոսա փչելով զբարկութիւնն. և աստ բան տալով անօրէնն խորհուրդ առեալ ի մեզ, թնդնիւք մահարեր չարութեամբ, յետ բազմաց եղելոց չարեաց. զի զզօրս և զզօրագլուխս, զպետս և զիշխանս, զազատս տոհմս և զնախարարազունս բնաջինջ կորստեամբ բառնալով սրափողոս խողխողմամբ սպառէին:

Այսպէս փութով դեսպանս արձակէին ի կողմանս կողմանս, ատահամբաւ փութով, զաւազական հաւանեցուցանող բանիւք և խոստմամբք, զամենեսին ի մի վայր գումարելով, յարքունեաստ բազում ձիրք և պարգեւք նոցա չնորհեցին, առատաձեռն տրօք բաշխելով նոցա զահեկանս, զտաբւոյն ատեանն[1] եւս. ներդպատուիր խարէութեամբ զպատճառէնան ի նոցանէ ի բաց առնուին, իբր թէ զինքեանս ամբաստանել ի նոցանէ՝ յերկիւղէ սրոյն, թէ, Դուք չէք որպէս զմեզ յերդումն հաստատուն: Եւ ածել զնոսա ի մի վայր՝ յերկուս տեղիս կացուցին պահեստիս. զոմանս ի քաղաքն Նախճաւան, և զկէսն ի յաւանն Չրամի[2]: Եւ վերակացու սմին նոցունց չարագործս՝ կասմ անուն, հաւատարիմ Մահմէտի՝ էր հրամանատար Հայոց՝ հրամանաւ Աբդլմէլքեայ:

Եւ ժողովեալ զնախարարս աշխարհիս ի նախաստացեալ տեղիսն, ի սուրբ եկեղեցիսն արկանէին, և զդրունս վերջ առեալ փակէին, և ասէին, թէ Մի ոք ելցէ յայս մեծ խորհրդոյ արտաքս. և ինքեանք ի ծածուկ դիմեալ վառեալք. իբրեւ իրագործք լինէին, ի դուրս դիմեալք. և նոցա ազիւսով ի վեր կալեալ զելիցն վայրս[3]: Իսկ նոցա ձայն առեալ զսուրբ մանկանցն որ ի հնոցին օրհնելով, և ապա զհրեշտակացն երգս ընդ հավիտեան փառաւորելին և զվերին զուարթնոցն: Եւ նոցա զվերնայարկսն քակեալ՝ լուցին հրով, և քան զքաղելոցին ի վեր բարձրացուցին այրեցական նիւթովքն: Անդ բռնութեան թագաւորին երկիւղ, և ատ լեզուն այսոց ի մարդիկ մտեալ՝ մոլեգնեցուցանելով, չուրջ

1. Խոելան, արաբերէն նշանակէ պարտք. տարեկան տալու հարկերնէն՝ ազատ ընել խոստանալին Հայոց:
2. Որ է Թրամ, Երասխայ ափին մօտ:
3. Եկեղեցեաց դռները՝ զըրսէն ազիւսով պատելով գոցեցին. և վերին ծածկը բանալով կրակ թափեցին, չուտ և չատ բռնկող նիւթերով:

ընթացուցանելով և զսուրան փայլեցուցանէին։ Անդ ապա, հօր որդեծնաց գութ ազիսն այրէր. և ի վերս ի ձեռուանէն անկանէր կրակն, և մանկանցն ի հանդերձան վառէր հուրն. հարքն ի բաց կորէին, զի առ նոցա ողորմմահութիւնն զիւրեանցն ոչ յիշէին. և զոյգ այրէին առհասարակ ամենեքեան։

Աւդ, ողբա՛ և զմեռս, սուրբդ Աստուածոյ, որ սպեիր. Մի՛ առաքեր զիս առ ժողովուրդսն. զի քոյդ ընդ գերեզմանական վայրօք փակեցար, և աչք քո ազբիւրանան արտասուօք վասն մեր։ Բա՛ց զբերան քո ի բարեխօսութիւն, զի զքո զմեռելութիւնդ՝ պատուական արար Աստուած քան զմեր կենդանութիւնս։ Սո՛ւգ ա՛ռ, երկիր, ողբա՛ երկին, յոգւոց հանէք առհասարակ. գնիչ բարձէք ընդ մարգարէին, զի ահա մէգ և մառախուղ ի ձեզ տարածեցաւ։ Աւրտասուօք բազմաց մի հոգար երեմիա, որ զաշս աղբիւրս խնդրէիր. ի մեր աչխարհս իսկ՝ ծովացաւ արտասուաց աղբիւրք։

Ըստ այնմ ամենայնի բազմավտանգաւոր հրոյն այնորիկ՝ ի նիւթական մարդկան ձեռաց բարձրացեալ, հրդեհակէզ եղեալ՝ առաստաղակալ փայտակերան այրեցեալ լինէր. հրկիզի մատն՝ ի վերս հոսեալ հանդերձ մխախառն հրովն, հեղձամղձուկ գառն պատուհասիւ զվախճան մահու ածելով ի վերայ նոցա ամենեցուն, ծածկեաց ընդ բազմութիւնն զայն անօգնական ի վերուստ։ Եւ նոցա անդադար զոհաբանութիւնն ընդ սպառեալ հոգւոյն դադարեաց։ Եւ գահճացն յապահովութիւն եղեւ յերկիւղէն, որ բաղում անգամ վատթարեալ լինէին ի նոցանէն. բաղումք՝ ի սակաւ քաջամարտիկ և պատուական նախարարացն, նոյնպէս և ամենայն երեւելի մարտիկ զօրացն՝ սրով գլխատեալ զփայտէ կախեցան. և այնպէս գործն գրաւեցաւ։

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм ССР
Ա. ԱՐՇԱՐՈՒՆԻ
A. Мясн

1783

2013